## Աբբայ Աւերիանոսի սեբաստացւոյն ։

Ծ · սեպ · 12 ։ Յ · Լ · սեպ · 9 ։ Ա՛ստղնտ · Ա · ստղ = ստղ · և Ր · յլ = յլ ։ Ռուլիանդեանն սոլսինգ · ՚ի Ֆ · հատ · սեպ · էջ · 355 = 364 ։ Ա՛ետափր · առ սուբ · ԼՀ ։ (1)

ՎՐԱՑԱՅԱՏ ԼԻՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ա-
ռաքելական ակնառուորն քրիստոսի Աւերիանոս կամ սևեռիանոս՝ որ զօրական ականաւոր յարքունի գնդին, որ ՚ի սեբաստիա քաղաք փոքուն հայոց, յաւուրս Լիկիանոսի կայսեր՝ ընձեռամբ մեծի զօրավարին, որ Լիւսիայ դքսին, ՚ի դասէ պատուաւորաց և խորհրդականաց, որ՚ի հուսվմայեցւոց կոչիւր ծոռոս աննպծոեռա, այն է կարգ ծերակուտական (2) ։ Այլ և ՚ի բանտարկիլ՝ երց քառասնից՝ սա ինքն սևերիանոս այր լի հաւատով՝ այց առնէր նոցա պատճառաւ նօք յայտնի և ծածուկ, և զարման տանէր նոցա և այլ ևս կապելոց, և քաջալերեալ սրտանդեր ՚ի հաւատս ։

Լոկ յետ մրցանաց և վկայական նահատակութե՛ երց քառասուն վկայիցն այնոցիկ՝ որք կատարեցան ՚ի նմին սեբաստացւոց մայրաքա-

քաղաքին, այն լինչ տակաւին զօրացեալ կայր հալածուածն ի վէր քրիստոնէից՝ մանաւանդ և սպառնալեօք շարժեալ ի բանտարկութիւն աղդմանէ, ծաղկէր յայնմ ժամանակի ածպաշտութեամբ պանծալի նահատակն քրի սևերիանոս՝ պայծառացեալ յոյժ սիրոյն ՚ոյ. մինչև ի զարմացման լինել ամ տեսողաց ընդ համարձակութիւն նր. քանզի բազում ողբերին զնա ձողոպրել զանձն յերեսաց դառն ժամանակին, և ոչ ցհամարձակութեն ի կիր արկանելով մատնիլ ի վտանգ, և յայտ յանդիմանի ի տագնապ չարչարանաց մտանել։

Լսակ քաջն սևերիանոս ասէր ցնա. ոչ զանգիտեալ խորշիմ ես ի հելլենացւոց անձից, և ոչ տամ պարծիլ ամպարշտաց ի վէր իմ. այլ յանդիմանեմ բանիւք և արդեամբք զնոցա անձն մոլորութեին. զի քրի մի զինուորն զօրեղագոյն ես քան զամպարիշտ թագաւորս նոցա։ Եւ ասելով համարձակութեք զբանս զայսոսիկ հրապարակաւ ի քաղաքին սեբաստիոյ՝ պատուիրեր տայր ոմանց ի ծանօթից գաւառին իւրոյ՝ որ անդն կային, զի յետ կատարման իւրոյ առեալ զնշխարս նր՝ ամփոփեսցեն ընդ օրինին։

Ընդ չարախօսել լինելոյ ընդ առ դուքսն լիւսիաս յոմանց՝ ասելով. սևերիանոս մի ի զինուորաց՝ որ ընդ ձեռամբ ձերով կարգեալ է ի պատու սենատորաց, արհամարհէ զհրամանս ինքնակալին և զձեր՝ ասելով զինքեանէ քրիստոնեայ գոլ. որ և մահու պատճառ եղև քաղաքացեաց

ցեալ

ցեալ զմիտս նոյ ոչ հաւանել հրամանաց Թա-
գաւորին. և այնպէս փարթամ գտանի, զի
յինքենէ կերակրեր զնա և զայլս՝ որ ՚ի բան-
տին արգելեալք էին։

Ո այս լուեալ իշխանին լիւսիայ ՚ի պաշտօ-
նէից իւրոց մոլորուեցեն՝ ահագին սաստիճ
հրամայեաց փութով առաջի կացուցանել
զսևերիանոս։ Եւ լուեալ նմին՝ լի եղև խըն-
դութ, և արիութի ընդ խոհեմութեն խառ-
նեալ՝ ինքնին յանդիման լինէր. և մտեալ
յապարանսն՝ ասէ ցդուքսն. ահաւասիկ հա-
սեալ կամ առաջի քո խնդրեալս ՚ի քէն. զի
ցուցից քեզ գործովք, թէ ոչ քանից պիտս
ունի յանդիմանուե ձեր ամպարիշտ անկար-
գութիդ. զի յանդիմանեաց զձեզ փորձիւ
առաջնոց վկայիցն համարձակութեին. մին չ
զի և խափանեցան ՚ի ձեռն նոցին համբերու-
թեն ամ հնարք տանջանաց ձերոց. և ո՛չ կա-
րացիք փոփոխել զբարե պաշտ կամն նոյ դառն
և այնչափ տանջանօք՝ զոր ածիք ՚ի վր նմ.
այլ դուք և երկրպագեալքն առ ՚ի ձէնջ
դևքն յամօթ եղէք [3], և նոքա պսակեցան
՚ի քէն։

Յայնժամ դուքսն լիւսիաս ոչ բերե լուռ զհա-
մարձակութի նոր վկային՝ մտնչեաց ոպ զա-
ռիւծ. և հրամայեաց մերկացուցանել զնա
և տարաժանել, և չոր արջառաջլօք հարկա-
նել։ Եւ նա ասէր ՚ի տանջանսն. զթիկունս
իմ հարին մեղաւորք, և երկայնացուցին զա-
նօրէնութիս իւրեանց։ Եւ յետ վաստակե-
ցոյ և տկարանալոյ պաշտօնէից անօրինին՝

հրամայեաց բառնալ զնա ի գետնոյն. և ասէ ցնա. տես սբ. Աւետիսն, թէ որո՞յ իրաց առիթ եղեն քեզ տարաժամ յանդգնութիւդ քո, և ի քո՞ն քո վստահութիւդ։

Նա ալինի սուրբ Աւետիսն և ասէ. եթէ աչս ունիկիր տեսանողական, ցուցանիկիք քեզ զիրն՝ որոյ առիթ եղև ինձ տարաժամ անզգամութիւն, որպ դուդ ասես. բայց այժմիկ կոյր ես, և զառաջիկայ պատրաստեալ ինձ բրաբիոնն տեսանել ոչ կարես. և յայսմիսկ տեսցես աստուստ, զի ի նոյն անդր վերակնեալով՝ ի կրել անդ զտանջանս՝ հոգւով վերացեալ լինիմ. և ի տանջիլ մահկանացու մարմնոյս՝ հոգիս փոխի ի տեղի հանգստեան, ի սիրելեանս խոստմանցն փրկչին մերոյ յի՛ք պատսպարեալ։

Ցիսիաս դուքս ասէ. պաճուճիս պարծանօքդ սուրբ Աւետիսն, և զանիմաստս ընդ քեզ յափշտակես. բայց զիս ոչ կարես. այլ այնչափ հարուածովք տանջեմ զքեզ, մինչև խոստովան լիցիս զնորուքդ ըստծոյն։ Պէնին ետ ընդ վկայն, և ասէ. զա՞մ տեսակ տանջանաց, զոր ինչ և կամիս հասուցանել ի վրէժխմ, մի՛ հեղգար և մի յերկուանար. զի իմաց եալ ծանիցես զզօրութիւն քոյին իմոյ՝ տեսցես զգոյն գտանելով զիս քան զա՞մ անդամանդեայ. և մանաւանդ դու լքանիցիս զմոռաւածելով զտանջանարանն՝ որ վ՛ս իմ, քան եթէ ես կրելով զաս ի քէն հասեալ ինձ չարչարանս։

Պուքսն ասէ. ո՞չ գիտես երիցս թշուառա-

կան և եղկելի, եթէ զինուոր ես դու՝ ոչ ի նոցանէ, որ ըստ ձեւամբ իմով անկեալ են, և ըստ իշխանի խօսիս՝ քո արեանդ իշխանութիւն ունողի. և այդպէս համարձակութիւն չունիս դիմել առ Աւերիանոս ասէ. համարձակութիւն տայ ինձ բարեպաշտութիւն քո[4] ինոյ. զի այնպիսի ածծ պաշտեմ ես, որ արհամարհել տայ ինձ զամպարիշտ թագաւորս, և զիշխանս նոյնպէս առ ոչինչ համարել՝ որք օրինօք ոչ քաղաքավարին։ Ա. Այլ նախատես զիս, վ՚ր զի զինուոր եմ ըստ քոյով իշխանութիւն կարգեալ. բայց իմացեալ ծանչիցես զբարետուհմութիւն աղատութիւն իմոյ՝ որ ի քո է. յայն՝ որ վերստին ծնաւ զիս առ բեամբ իւրով, և քան զթագաւորս պայծառագոյն և արիագոյն զիս արար, և պատուական քան զիշխանսդ[5]. վայ և այժմ իսկ իբրև ըստ սինկլիքոր ծառայի կամ իբրև ըստ անբան անասնոյ զբուցատրելով խօսիմ ըստ ձեզ՝ յուսով իմով, որ ի քո. որ և զնամ հրաժանս կենցաղոյս՝ հաւանեցոյց ինձ՝ իբրև զաղքատարկանել։ Ա. Ըդ մի կարծեր զարհուրեցուցանել զիս քոյովդ ամբարհաւաճութիւն. այլ եթէ խրոխտաս ի վեր իմ, և մեծամեծս խորհիս՝ իբրու իշխանութիւն ունելով արեան իմոյ, զայդպիսի իշխանութիւն և աւազակք իսկ ունին՝ որ շրջին ի լերինս. քանզի յորժամ ըմբռնեն զոմանս յուղևորութենէ ձանապարհի, զան հարկանելով՝ սրախողխողս իսկ առնեն, և ի բայ կորզեն՝ զոր ինչ և գտանիցեն առնա, և առնեն զինչ և կամին. և դու այժմ

մին մի պարծիր և հպարտանար ՚ի վէր իմ առ նօրէնութէն սրովդ քո վարեալ. քանզի զօրի նաւոր իշխանութիդ փոխեալ ՚ի գոռոզուէ՝ զշունն և զմարդասպանս անպատիժ թողուս, և զպատուհասն՝ որ նոյ վայելէ, բարեպաշտաց հասուցանես։

Իսկ դուքսն սրտմտեալ չարութէ և եռացեալ ցասմամբ՝ հրամայեաց կախել զնա և քերել. Յայնժամ պաշտօնեայք սմբալշտին պաշարէլ զերանելին յամ կողմանց՝ կախեցին զնա զփայտէ, և չարաչար քերեցին. իսկ երանելին յաղօթս կայր և գոհանայր զնոյ [6]։ Ապա արկին զնա ՚ի բանտ. և զկնի հնգից աւուրց հրամայեաց դուքսն ածել զառաջեաւ զնըն. և ասէ ցնա. զգաստացար արդեօք առաջին տանջանօք և նեղութէ բանտի. արդ հաւանեա այսուհետև և զոհեա զծծոցն, զի մի անկցիս ՚ի նորանոր տանջանօք։ Ասէ ցնա նա վկայն քրի. ոչ տեսանես ահ երից թշուառական, զի թէպէտև վաստակէէ մարմինս իմ յառաջին տանջանաց, սակայն և այժմ զօրարէ և պայծառ դիմօք՝ յօժարութէ կամ առաջի քո ատենիդ, պատրաստ գոլով առ հանդերձեալ չարչարանս՝ զոր դու ինձ խոստանաս. մինչև կատարեցից զընթացս և զջանս իմ գերլեցիկ, ակն ունելով յուսոյ կենացն յաւիտենից՝ որ կայ և ինայ ինձ, զոր ընտրելոց եմ առ ՚ի տէր մերմէ յիսուսէ քրիստոսէ։

Յայնժամ ևս առաւել սրտմտեալ դուքսն՝ հրամայեաց անօրէնն դահձաց քարամբք հար-

կանել զբերան նորա , ասելով ցնբ վկայն . ընդ յիշելովքո զանուն խաչելոյն՝ պղծեցեր զապարանս իմ : Այս քնի նահատակն ծիծաղելով ասէր . ով անմիտ և լցեալդ ամանութեամբ , զծծան քո յիշելով՝ որ դևք են , ոչ թուի քեզ պղծել զապարանս քո . և զքո՝ որ ե արարիչ և Թագր երկնի և երկրի , յիշելով՝ասես պղծիլ ապարանիցդ . և ոչ դիտես, զի լսելով զահաւոր անուանն՝ տանջիս և հարուածիս հոգւով :

Այնժամ ասէ . ես կարծէի հեզագոյն քեզ լինել առաջին տանջանաւքն , և այնուհետև հաւանիլ մեզ . այլ վա՛ղ զի կաս և մնաս ի նմին յամառութեամբ՝ վիճաբանելով ընդ մեզ , և յօժարիս դարձեալ տանջիլ , զի անաւիատութեամբ պարծեսցիս առ քրիստոնեայսն , և ես հաւանեցուցից զքեզ՝ Թէ ոչինչ շահեսցիս յայնմանէ՝ յոր յուսացեալն ես : ԵՒերիանոս ասէ . եԹէ վա՛ղ մարդկան համբերեի այսոցիկ , եղկելի արդեօք և Թշուառական էի քան զնոսա քո . այլև ոչ հանդուրժել իսկ կարեմ մինչև խոպառ՝ կրելով զայսոսիկ . այլ մեծագոյն քան զաշխատուիս զիմոխարէնան գիտելով յիս՝ արհամարհեմ զմարմնոյս պատուհան : Ապրդ այսուհետև մի՛ ինձ այլ լոկ բանիւք սպառնար , այլ միսանգամ բուռն հար զտանջանաց , զի զփորձ առցես զօգնական կանխն իմմէ , և հաւանեալ ծանիցես դու , եԹէ ոչ իբր՝ի սնոտի իրս յուսացեալ եմ ես : Պօղքան ասէ . կախեցէ՛ք զդա զփայտէ , և սուսերաւ ծակոտեցէ՛ք զկողս դորա : Այս իբրև

րև կախեալ լինէր նա ՚ի փայտին , ասէ ցնա իշխանն . սեբեբիանէ խոստովանեա զոհել ճծոցն նախ ՚ք զսկսանիլ տանջանացն . տես զքանցուածն կողից քոց , և ողորմեա եղկելի անձին քումմ ։ Ա.յլ ուստի՞ է ձեզ քրիստոնէից՝ ասա՛ ինձ , այնչափ անգթութի՞ն անողորմութե՞ն հակառակ անձանց ձերոց . կամ ո՞ւմ հնար է ողորմել ձեզ , որք անձանց ձերոց ոչ կամիք ողորմել ։ Պինդ է ետ ՚ք վկայն քո . լա՛ւ ո՛վ դատաւոր . ո՞չ գիտես դու զեղանակ մարդասիրութե՛ , և զիա՞րդ ասես ինձ ողորմել . յայնժամ ընդ հս խոստովանիցիմ քեզ , յորժամ մեհեանդ զիս դատապարտիցես . զի բազում բարութե՛ց առիթ ինձ լինիցիս , և երկնային գանձուցն ժառանգորդ զիս արասցես ։

Ո՛ այսոսիկ լուեալ իշխանին՝ վաղվաղակի հրամայեաց հանել զնա ՚ի վե՛ր պարսպացն և ձկտեցուցանել , և կախել քարինս մեծամեծս ՚ի պարանոցն և յոտսն ։ Եւ իբրև կախեցին , այպն առնէր զնա դուքսն , և ասէր . Ջանա՛ ջանա՛ սեբեբիանէ , զի մեծագոյն վարձս առցես ։ Նոքա՛ ընդ ո՛չ ետ նմա պինդ , այլ աղօթէր և ասէր այսպէս . Ա՛ծ յաւիտենական՝ որ զնա՛մ ինչ գոյացուցեր ՚ի ձեռն միածնի որդւոյ քո սիրելւոյ և հոգւոյդ ընդ . առ քեզ կարդամ , որ եադ նո՛ր կենդանեաց և մեռելոց . լսե՛լ արա զնա՛մ օրհնուիս , և ընդհեա՛ ինձ զերկնային յաղթութի՛ն քո . զի մի պարծեսցի ՚ի վե՛ր իմ անօրէնն լիւսիաս . այլ տո՛ւր փառս անո՛ւն քո նո՛ր ։

Եւ յասել Տէրն զայսոսիկ՝ մինչդեռ ի կա-
խաղանի անդ էր առ պարսպովն , աքանչա-
նայր դուքան ը համբերուն նր . և ասէ ցնա .
ասէին ինձ վ՚ա քո ամենեքեան , եթէ ռամիկ
այր ես դու և առանց դպրուե . այլ ես առն
հռետորի և իմաստասիրի քաջաբանութիւն
տեսանեմ՚ի քեզ : Ա՚ն ասէ . և ո՞ր հռետոր
կամ իմաստասէր կարող է հաւասարիլ այնմիկ՝
որ յիսն խօսի՝ քնին իմոյ . արդ մի՛ կարծեր՝
եթէ ես եմ, որ բարբառիմ զայսոսիկ . զի ռա-
միկ և շինականագոյն եմ՝ ը զամենեսեան ,
ոպ և լուեալ իսկ ես վ՚ա իմ . այլ ընդհակն այ
ջանակից ինձ լինել՝ պատրաստեաց զիս
խօսել զայսոսիկ :

Եւ զայս ասացեալ՝ դարձեալ սկսաւ աղօ-
թել , և ասէլ . Տէր ամէ , գոհանամ զքէն , զի
զանարժանութիս իմ արժանի համարեցար
անապական բարութեանդ քոյ . մեծացիր ամէ ի
մարմնի իմում և ի հոգւոջս . զի կեալն իմ
դու ես , և մեռանելն վ՚ա անուճանդ քո փա-
ռաւորելոյ՝ անանց կենդանութի՛ի կեանն
յաւիտենից : Ո՞վ քէզ քո որդի այ կենդանւոյ
յաւիտենից յանձն առնեմ զհաւատացեալքս
զայսոսիկ , որ հալածեալք են վ՚ա անուճանդ
քո մեծի և սքաւորի . լեր սոցա օգնական ,
և տուր համբերուի և համարձակութի՛ . զի
վաստաւորեսցեն զանուն քո՝ ոբ յաւիտեանս
յաւիտենից : Եւ կատարեալ՝ ոբոյ վկային զա-
ղօթսն՝ աւանդեաց զոգին ի ձեռս ոն , ը
գրեցեալսն՝ թէ հոգիք արդարոց ի ձեռին
այ են : (7)

Եւ

Եւ ի վաղիւ անդր՝ քանզի ընկեցեալ էր ի քաջի Մարմին ծբյն արտաքոյ քաղաքին, ժողովեցան արք պատուականք և երկիւղածք ի տնէ, որոց յառաջագոյն յանձն էր արարեալ ծբյ վկային, և բարձեալ զնա նշխարս նր ի գիշերի՝ տարան ի հայրենի գեօղ նր, որ ոչինչ հեռի էր ի սեբաստիոյ. և ի գալ նց և մերձ լինել ի տեղի վաճառի գեղջն, ազդ եղև ամենեցուն գալուստ նշխարացն։ Նսկ ծառայ ծբյն՝ որ բնակեալ էր ի գեօղն, վախճանեալ էր յաւուր յայնմիկ. և էին քնակիչք տեղւոյն ժողովեալ յողբութիւն և ի թաղումն մեռելոյն։ Իբրև լուան զգալուստ սբյն, ժողեալ արտաքոյ գերեզմանին ըզմեռեալն՝ հանդերձ ամուսնաւ իւրով և որդւովքն, գնացին ի հանդիպումն ծբ նշխարացն օրհնութիւք և երգովք հոգևորօք և լապտերօք բորբոքելովք և անուշահոտ բուրմամբ խնկոց։

Յայնժամ շուրջ զնովաւ հայեցեալ կինն մեռելոյն, ոչ զոք ետես յողբակցաց իւրոց. քուռն եհար զվախճանելոյ առնէ իւրմէ, և ասէր ողբալով ցնա. արի՛ վաղվաղակի, զի և մեք ժամանեսցուք սրագապէս զկնի այլոցն ի հանդիպումն սբյն այնորիկ՝ ետն մեռոյ. զի եկեսցէ նա պատուով, և մի արհամարհօղք երևեսցուք ծբյ վկային։ Եւ ևս յոլովագոյն քանս յաւելոյր յողբսն, ոչ օրէն է սգացելոցն։ Եւ յասել զայսոսիկ կնոջն՝ մեռեալն նստաւ յանկարծակի ի վեր դագաղացն, ունելով զոտն երիզապնդեալ կտաւ

ւօքն . և ՚ի քոյ ձգեալ յանձնէ իւրմէ զգե-
ըեզմանական պատանան , կենդանի եղեալ
վազելով գնայր ՚ի հանդիպումն նմին , որ մե-
ռեալ էր վնասէն , ինքն ՚ի մահուանէ ՚ի կեանս
փոխադրեալ վնս մեռելոյն մաղթանացն :
Եւ աւետանեալ գնա աւքսէն ամբոխն ամ յարուցեալ
եաուն փառս ոյ , այնմ՝ որ ՚ի ձեռն բարե-
խօսութե սրբ վկային ընտրեաց զյարութի
մեռելոյն : Եւ սոյն սա այր՝ ծառայ աբէյն՝ ե-
կեաց յայնմհետե այլ ևս ամն հնգետասան ,
սպասաւորելով աբէյ գերեզմանին ՚ի կենդա-
նութե իւրում պնս փլկութե հոգւոյ իւրոյ .
և յետ այնորիկ վախճանեաց զաստի կեանս :
Ա.այլ ՚ի ժամու թաղման աբէյն պատմի և այլ
սքանչելիք . քանզի հոգ մեծ էր ժղվրդեանն ,
թէ յորմէ տեղւոջ արասցեն զհանգստա-
րան նշխարաց աբէյն . և ասէին . եկայք մա-
նեսցուք պսակ ՚ի ծաղկանց , և դիցուք ՚ի վէր
մահճաց վկային . մինչև ցուցցէ մեզ զաեղին՝
զոր պատրաստեալ է աբէյն . և արարին այն-
պէս . և մատակարարութիւնն այ եկեալ արծ-
ուի մի՝ թռչէր ՚ի վէր մահճացն . և առեալ
զպսակն՝ երթայր առաջի : Ո՛յն տեսեալ ա-
մենեցուն՝ երթային զկնի պսակաձարձ արծ-
ուոյն հանդերձ նշխարօք աբէյն . մինչև հա-
սեալ արծուոյն ՚ի տեղի ուրեք՝ անդ եդ
զպսակն , և ոչ ևս երևեցաւ : Սակ տեսօղքն
սքանչացեալ՝ փառաւոր առնէին զայծ , որ
ազդեալ եցոյց զտեղին՝ ուր պարտ էր հանգ-
չել սակեաց աբէյն . և հանդերձ մեծաւ փա-
փաքանօք կատարեցին զհանդիստն : Եւ առ-

հեր

ներ ՝ած ՝ի տեղւոջն սքանչելիս յայմ ժամա-
նակի անխափան , և զայմ ցաւս բժշկեր քա-
րեխօսութ՚ք փառաւորե՚ վկային Քրիստոս ՝ըզյն
սև ե՚րիանոսի ։ որոյ նահատակուին եղև յամ
սեանն սեպտեմբե՚րի , որ օր ինն էր (8) , յա-
մի ՝ին իբր 316 , այն է իբրու վեց ամսօք զկնի
կատարման ՝ըզոց քառասնից ։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## Ծ Ա՚Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք ։

(1) Ա յս վկայաբանուե՚ի գտե՚ր յերկուս ձառընտիրս մե՚ր՝ սկսանի այսպէս ։ * Ձե՚տ մրցանաց և վկայական ,, նահատակուե՚ սո՚ց քառասուն վկային այնոցիկ , որ ,, վկայեցին ի սեբաստացւոց մայրաքաղաքին՝ յաւուրս ,, ժամանակաց ամպարշտ Թագ՚ոսի || ևն ։ Ջնայն նոյնօրինակ գտե՚լ է և յօվհաննէս ստե՚լնագ քաղաքացի յերկուս ձեռագիրս յունականս արքունի գրատանն փարե՚զու , ՝ի մատեանն ՃՀԶ , և ոչՃԲ ։ սկիզբն ունե՚լով նոյնպէս , * Ձե՚տ մրցանաց և նահատակուե՚ն ,, սո՚ց քառասուն վկային , որք կատարեցան ՝ի քաղաքն ,, սեբաստիա հայոց՝ առ լիկանոսիե՚ թագաւորաւ || ևն ։ զոր և ամբողջ թարգմանե՚ սահակնդ ՝ի լատին , և տպագրե՚ հանդերձ յունականաւն ։ ուր սեսանե՚մք բառական միաձայնուե՚ի բազում մասամբ ։ այլ ուրե՚ք ուրե՚ք պակասին հատուածք ինչ բանից , ոչ՚ թե քաղուած հայմարիկ յունականին առ ՚ըարձակուե՚ն օրինակին մերոյ ՚ը ձառընտից ։ յայս է թե ըստգոյն և հնագոյն աղբիւր ձանալն սկզբնագիրն թարգմանուե՚ն մերոյ քան զօրինակն գտե՚լ ՝ի փարե՚զ ։ բայց զի և զնոյն ունին վաւե՚րականուե՚ի յայմ , ոչ՚ յայս է որոյ բազդատե՚ն ծագե ՝ի ծագ ։

Ա՚յլ է և մետափրաստե՚ան վկայաբանուե՚ին առ սուրիոսի ։ որ թե՚պէտև ոչ ՚ը բառից , այլ ՚ը խոստից է հեռանալուե՚ի առաջնոցն , սկիզբն առնե՚լով այսպէս ։ * ՝ի թագաւորե՚լ լիկիանոսի ամպարշտի , լուսխաս՝ որ ո յայնժամ գուբս էր , փութայր գալ հասանե՚լ ՝ի կէ-

սա-

սարիոյ ի սեբաստիա։ Եւ՝ Զսորա ևս գլուխարբէն օրինակն յառաջ քերեալ ի լուսնէ ալլաւիոսէ՝ ի ձեռն ուղիղ ասէ սուլպիտիոս, զոր եղև առանձաւ նահատեաց մերոց բոլանդեանց ի մեսիական մասեանէ. բայց ոչ կամեցայ ասէ տպագրել, զի զլաւագոյնն ժառանգեմ, իմա զաղքեր նր զնախանձառակեալ օրինակն աղքերացեալ յօրինակէ մերմէ. վայ և ի գովուրեի նորին տայ վկայուրեի մեծ սուլպիտիոս՝ յասելն. * ՚ամ հանգամանիք ,, ցուցանեն լինել գործ ժամանակակից գրչի։ և գրձէ թէ * այս ՚ամ այսպէս կարէր գրել յումմինէ՝ որ ա- ,, ռաքելոյ լեալ էցէ իրացս, կի առեալ միքիմիջէ ի ,, ներկայ եղելոցն. քանզի և ի կարլ ծառը հալածանս ,, իսկ քրիստոնեայք ոմանք խառնէին զանձինս յօրէնին ,, ի տեսանել զնահատակուրեի վկայից։ Բայց արդ՝ ,, եթէ ի գործոց նօտարաց, և եթէ յայլմէ ումեքէ ա- ,, կանատես վկայէ, եթէ ի պատմելոյ ներկայ եղե- ,, լոց, և եթէ այլով իւիք օրինակաւ գրեալ էցէ վկայ- ,, աբանուիս, ՚ամ հանգամանիք իրաց հաւատարմացու- ,, ցանեն՝ եթէ հեղինակ վկայաբանուրեիս քոյ տեղեկա- ,, ցեալ էր զ՚ամ անցս ի ք միջէ ։

Բարւոք և իմաստուէք. արդ եթէ այսպէս գովէ ստիւ տինգ զօրինակ իւր, յայտ է թէ առաւել գովէր զաղքեիր նր՝ զօրինակ մեր ասեմ. և յայնժամ փարատեին այլ ևս կարծիք նորա առանձնականք. յորոց առաջինն է, զի կարծէ՝ թէ մեռափրատես յայնմ ՚ամի, որով տարբերի յօրինակէ իւրմէ, ք մոի յաւելուածովք խոսիցի. և երկրորդն է՝ թէ նոյնպէս և վերջին աքանչելիքն կրկին, որք պակասին յօրինակի իւրում, ի վկայուրեիւն մեռափրատեսի ևեթ էցեն ապատատ։ Բայց մեք զհակառակն տեսանեմք առացուցիչ. զի Թոդ զտարքերուրեի ոՀոյ մեռափրատեսի ի ձեռ տեղնախօսուէց և այլոց բանից, նորայն ընթացք ուրեք ուրեք համառօտագոյն են քան զմերն. և ոչինչ կայ բան գոյացս- կան առ նմա՝ որ չէցէ առեալ յօրինակէ մերմէ. զնոյն իմա և զաքանչելեացս երկոցունց՝ որք առեալ են ի մեր վկայաբանէս։ Եւ ոչ ունի ոք ասել, թէ մերս օրինակ հեռևեալ էցէ մեռափրատեսի. զի ծայրէ ի ծայր է նոյն վկայաբանուրեի՝ զոր այնչափ գովեաց տիւրինէ իբրև գործ ՃԱկակից գրչի. և այս է տարբերուէ օրինակի նորա ի մերմէս, զի ուրեք ուրեք կարճէ զբանս ինչ. ք նմին և ի վերջոյ զանց արարեալ է գրիչ նորուն զաքանչելեացք. և այն հատուածք՝ որք առաւելուն ի մեզ ,

մեզ, յունին բնաւին զաճ մեռափրասուեան, այլ են յար և նման բանդակ ընթացից բուն վկայաբանին. մինչ զի երևի կրճատութիւն ի սուրբ ընդ ընթերցուածս, այլ ի մեզ ոչնչ բան կարկատուն. եթէ ոչ կամիցիմք միօրինակ կարկատանս նշմարել և ի գովեալ օրինակն սուրբ գրեան. զոր նա չէ իմացեալ, այլ մեզ չէ օրէն ծածկել։

Յարմանալ արժան է, զի երևելի և երկայն հատուածք ինչ պղծեին և աւերնախօսուեցի՝ հանդերձ հանգամանօք քերականաց և բանասիրութեան, նոյն այն էին ի վկայաբանութեան սուրբ հայրապետին, որ ինչ եգեալ ի մէնջ ըստ ճառընտրացս ի վարս գործիսոյ հարիւրապետի. Հոփ. Աէ. էբե. 429. 430. Ե 431. զի որպ և ոչ համարձակեցաք երկարագել զնոյն ձև բանից ասա ի վարս սուրբ հայրապետին. Եթէպէտև միօրինակ գտանէին ի ճառընտիրս մեր, և ի յունական օրինակն սուրբ գրեան (իմա միշտ զմեր երկայն աւետ), և զնորայն աւետ կարճ), ըստ իմիք և առ մեռափրասուեսի. և զայսոսիկ Թէոփիլոս մեր ասատուսա՝ ոչինչ պակասութիւն սեռանէմբ վկայաբանութեան. ոչ լինէր ոչ սակաւ պակասութիւն, եթէ Թէոփափիլոս չընթացից վկայաբանութեան գործիսոյ։ Աւրդ որոշզուածքն իրացս յայնժամ ի վեր ելանէ, յորժամ գացի և յունական օրինակ նոյն վկայաբանութեան գործիսոյ, որ կայ ի ճառընտիրն մեր Ա. երես. մէ. ոչ գտեալ է սուրբ գրոնական օրինակ վկայաբանութեան սուրբ հայրապետին հատուածադրին, որոյ լուագոյնն կայ ի նոյն ճառընտիրն մեր Ա. երես. չղբ. Եւս և ի Բ. յԼ։ Պատճառ չիսնամանե երևի լինել, զի ոչ գործիսոս, նոյնպէս և սուրբ հայրապետս էին ի կարգէ զօրականութեան, և ժամանակակիցք և սահմանակիցք գաւառաւ, ըստ գործիսոս ի կեսարիոյ, և սուրբ հայրապետս ի սեբաստիոյ. և երկոքեանն եւս առ լսկիանոսիւ կայսերաւ նահատակեցան, մին ըստ ձեռամբ ագրիկոլայոսի, և միւսն լուսիայ, միասոհ և համագործ չարչարողաց սըգ քառասնից և այլ բազում վկայից. զոր գրիչք ոմանք ի վաղուց ետուեալ նեալ են գհատուածս նոյն ի վարուց միոյն ի վարս միւսոյն։ Բայց անաչառ իսօսելով առաւել անայլայլակ գտանեալ լինի վարք սուրբ հայրապետին քան զգործիսոյ։ Սակայն՝ որ անգէտ է իրացս, չգտեալ զայլ նիւթ վկայաբանութեան՝ միսի յայլ ինդիր կարևոր ոչ ըստ սեղ. ասս, այլ ի պատճառս սեբաստացի վկայիս սուրբ հայրապետին՝ ըստ սեղոյն, ուր արկան ի լծ քառասուն մանկունք

կունք սեբաստիոյ. և իրաւամբք կշռամբէ զսիլլեմոնիս
վր՝ ջանալոյ նր խախտել զմիաբան աւանդութիւն հարց և
վկայաբանից յաղագս կատարման նց՝ ի լճի։

(2) ճ. Լ. գլխ՝ ի գունդն սենեսարոսաց. Բ. ի
գունդն սենոտրոսաց. որ պարտի լինել՝ ի գաստս սե-
նատրաց. ոմք գնի՝ ի չն. են գաւոխ սենոփօռօն. այն է
ըստ լատին ոմանց, օռօքինիս սենոփօռիէ.

(3) Ասպես է և՝ ի չն. վըմ վրիպակ է լատին թարգ-
մանութենն սահմռինգայ. * այլ գուք, և որք գիշաց
ձերոց երկիրպագանէն, յամօթ եղիք ||։

(4) Ե ոճ յունական. փոխանակ ասելոյ, բարեպաշտու-
թենն առ քեն իմ։

(5) Յն. է այսպէս. * քան զձեզրս արար զնս թեզրա-
գչն, և քան զնչնանս զօրագունդն ||։ Լակ ուր մեք եգաք՝
սինկլիքոր ծառայ, կամ անբան անասուն (յորոյ զերկ-
րորդն գրեն ճառընտիրք), յունական բառն է անպրա-
ֆօփօն, որ ստուգաբանի առնոպն կմ ոպնայր. և ասի զըս-
տրուկ ծառայից։

(6) Զանց արարաք զազօթիւք ընչն՝ ի կախաղանի և
զայլ քանի մի բանիւք. որք գտանին և՝ ի վարս ընչն գոր-
ծոսի. ոմք յիշեցաք՝ ի (1)։

(7) Իրաւամբք ուղղագրէ սահմռինգ զայլ վկայագիրս,
որք փոքր մի այլազգ նկարագրեն զվերջին տանջանս ընչն.
և՝ ի վր բերէ. * Տիլլեմոնտիոս և՚ս ( հպտ. է. էրէս,
* 511. պէտ է) հեռագոյնս խոտորեցաւ՝ ի ճշմարտութէ,
* զայսօրինակ գրելով զմահուճանէ սընչն։ " յետոյ ու-
" րեմն հրամանեաւ կապել զքար զպարանոցէ նր, և մի-
" և՚ս զտիցն, և այնպէս յայն գիրս՝ ի գագաթանէ
" պարսպի իրիք՝ ի վայր գահավէժ առնել հրամայեաց "։
* Բաղդատեցէք զայսոսիկ ընդ և կամի՝ ըստ բանս գրելոյ
* առ սուրիոսի, որոյ անուանն նշանակի՝ ի լուսանցս.
* (և սակայն նա համաձայն վկայաբանութենն՝ կախեալ
* ասէ զպարսպէ). և տեսցէ թէ սակաւ կարեմք վստա-
* հիլ՝ ի մեկնաբանու թենս այսր մատենագրի (ըստ տիլ-
* լեմոնտի), որովհետև սոյնպիսի սխալանս յաճախա-
* կի գտանեմք՝ ի նմա ||։ Սակաւագոյն սխալեր և լինքն,
եթէ միշտ այսպէս սակաւ վստահէր՝ ի տիլլեմոնտ։

(8) Սեպտեմբերի ինն գրի՝ ի ճ. Բ. համաձայն միւսմ
օրինակի չն. և մեսափր. և այլոյ բազմաց. ապա վրի-
պակ է գրեալն՝ ի ճ. Ա. * յամենեանն հոկտեմբերի,
որ օր ինչ էր ||. ոմք և եգեալն՝ ի միւս օրինակն. չն.
* նոյեմբերի. Թ ||։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Աբէն Բաբելայ ծերոյն, և ձէ աշակերտաց նորին։

Ի. յուլիս. 4։ Ը. ժամագր. սեպտ. 5։ Ո՛ասո ընտիր. Ա. ճլէ = ճլէ. և Լ. նղա = նղէ։ Բուլանդեանդ՝ է յնվ. 24. և՝ է սեպտ. 4։ (1)

ԱԲՐԱՅՈՒԹԻՆ

Երկնիկ դպիր՝ աշակերտեալ երկնաւոր վէպին՝ որ ծերունին բաբելաս (որ և բաբիլաս, կամ ուղղագոյն ևս՝ բաբիւղաս), իմաստուն դաստիարակ և հոգեւոյ վարժապետ բազմուե մանկանց անմեղաց աշակերտելոց՝ ի դպրոցն քաղաքական, էր՝ ի նիկոմիդեայ քաղաքէ բիւզանդացւոց՝ յաւուրս դիոկղետիանոսի կայսեր, և աթոռակցի նոր մաքսիմիանոսի հեթակլեայ։

Այս եղև՝ զի մաքսիմիանոս թագաւոր մտեալ՝ ի քաղաքն նիկոմիդեայ՝ զոհեաց ապողոնի. և իբրև կատարեաց զպաշտօն պղծութեանն, յելանելն՝ արտաքս՝ ի տաճարէ կուռցն՝ մատեան առ նա արտեմիոս և փիլիանոս քուրմք քըն ապողոնի, և ասեն. Տէր ինքնակալ թագաւոր, դու լաղում յօժարուեր փուլթաս

՝ի

'ի զոհ ածոյն, և զբազումն զայլս ընդ քեզ
ջանաս ձգել 'ի պաշտօն նոյ. յաղագս որոյ 'ի
խաղաղութեն բնակեալ ես ցմեզ, միշտ և
հանապազ զյաղթուն պարգևելով նոյ Թա-
գաւորութեդ քումդ: Այս արդ՝ են ոմանք 'ի
քաղաքիս, որք քրիստոնեայք կոչին, և ամ-
բարշտութեքն իւրեանց ոչ հնազանդին օրի-
նաց Թագրութեանդ ձերոյ. այլ՝ հայհոյեն
զաստծն, և երկիրպագանեն խաչելոյ ումեմն՝
զոր ած անուանեն. և ասեն՝ Թէ յերկինս
ունի զբնակութի իւր, և իշխէ ամենեցուն՝
որ յերկրի իցեն. և այսպէս խաբեն զբազումս.
և ոչ զոհեն աստծոյն մերոց, և ոչ պատուեն
զտօնս մեր. այլև հպարտութեքն բերին հա-
հառակ Թագրութեդ քումդ, և աղօթեն փո-
փոխումն լինել իշխանութեդ ձերում:
Այս առաւել ևս ատ ծեր ոմն ժպիրն՝ բաբե-
զաս անուն նոր, որ հպարտութեքն իւրով միշտ
չարախօսէ զաստծոց մերոց. և գրով ձեռաց իւ-
րոց զբազում մանկունս աշակերտէ յուսումն
չարաչար վիշապուէ իւրոյ. և պատրէ զմիտս
նոցա՝ մի գնել միտս կրօնից աստծոցն, այլ միայն
հպատակ կալ օրինաց խաչելոյն, և յանուն
նորա երդնուլ, և ոչ 'ի զօրութիւնս դիցն:
Այս փոխանակ հեղհեղնացի ուսմանցն՝ որով
մանկանցն վարդապետութիւնն յորդի, ա-
ռաստպելս իմն ուսուցանէ մանկանց, զորս
երգս սքա և սաղմոս անուանեն քրիստո-
նեայքն մոլորութեքն իւրեանց. և յայսպիսի
ուսումն ամ անդգամ կանայք կրթեն զման-
կունս իւրեանց 'ի ձեռն առնն այնորիկ. և
այն

այնչափ զօրացաւ մոլեգնութիւն ծերոյն այն, մինչ զի ոչ արուս մանկունք միայն ընթանան յուսումն նր, այլև աղջկունք ևս անգամ կանխեն՝ի վիճպանոցն նր։ Եւ արդ դուս ինր ինքնակալ մի տար թոյլ զօրանալ մոլորուենն այնմիկ. ապա թէ ոչ՝ յանարգանս ըծոցն և յարհամարհուի թիւրուեդ քո լինիցի։

Օ այս ամէնքեան լուաւ թիւրն՝ի քրմաց անտի, լի եղև սրտմտութիւք. և առաքեաց վաղվաղակի զինուորս՝ըմբռնել զբաբեղաս հանդերձ մանկամբքն. և զամենեսեան զնս արգելուլ անդէն՝ի վիճպանոցն, և զգուշութիւք պահել, և զբաբեղաս միայն ածել առաջի նր. և զինուորքն կատարեցին զհրամայեցեալն. և այնպէս ածաւ երանելի ծերն ձեռս յետս կապեալ առ թագաւորն՝ որ նստեր առաջի դրացդ տաճարին ապողոնի։

Իբրև ետես թագաւորն զնա, խոժոռ դէմս նայեցեալ ընդ նա՝ ասէ. դո՞ւ ես բաբեղասն՝ որ արհամարհես զզօրութիւն անմահից ըծոցն, և ոչ զոհես նոցա. և ոչ այս միայն, այլև զմանկունս անմեղս յափշտակես՝ի յանզգայ կանանց, և քարբանջանս իմն ուսուցանես նց, զորս և ածային երգս անուանես. և ոչ յօրինաց մերոց պատկառիս, և ոչ՝ի ոպառնալեաց մերոց զանգիտես. այլ նստիս՝ի հրապարակս, և զօղանջես զբանս քո՝ի լսելիս այնորիկ՝ որ զչարաչար տանջանս՝ի վէր ածէ ընդնոցացն զնս։ Այժմ թէ ոչ լցէ լսելիս քո, թէ որպիսս որք քոյին յիմարութեդ տենչօղք եղեն, զանաչաւ դատաս-

տաստանս կրեցին ՚ի դատաւորաց մերոց . ո՞
մանք հրոյ և ոմանք սրոյ մատնեցան , և կէսք
՚ի ծով ընկեցան . և այլք գազանաց կերա-
կուրք եղեն . որ և ոչ դերեզմանաց արժանի
գտան դժուարաբախտ դիակունք նոց :

Եւ արդ դու զի՞նչ ասես առ այս ոմն չարա-
գլուխ ծեր . զի մեր կամք այս են , փուխ-
խեսցի՛ս դու ՚ի յիմար կրօնիցդ քոց , և պաշ-
տեսցես զանմահ դիսն , և երկիրպագցես
նոց : Եւ յաղագս մեղանչելոյդ նոյ՝ տուեալ
է քեզ ՚ի հանգարտ ներողութիւնէս մերմէ , զի
հաշտեցուսցես զնա ՚ի ձեռն զոհից . և լինի-
ցիս բարեգործ ալեաց քոց , և ՚ի հանգստեան
և ՚ի փառաւորութեն բնակեսցես : Եւ ոչ այս-
չափ միայն , այլև ՚ի դիմաւսական գանձուցն՝
որ պարգևին քեզ յառաստաձիր թշերութէս
մերմէ , բազում հարստութիս ընկալցիս . ոմն
զի մի ասիցես , եղէկ ծեր եմ , և ոչ կարեմ
այսուհետև ընձեռել անձին իմոյ զսպետս
կենցաղոյս , և վ՚ն այնորիկ յօժարիմ՝ ՚ի մահ .

արդ զի՞նչ ասես առ այս :

Եւ սկինի երանելին բաբեղաս , և ասէ .
Ես ոմն թագաւոր ՚ի մանկութէնէ իմմէ պաշ-
տեմ զՔրիստոն Աստ , և նովքին կրօնիւք հա-
սի մինչև ՚ի խորին ծերութիս յայս՝ յորում
տեսանես զիս նովքին բարեպաշտութէ վա-
ռեալ . և արդ անցաւոր կենցաղոյս ցանկա-
ցեալ ուրացայց զԱստն իմ և զՔրը , զայն՝ որ
ստեղծ զիս յորովայնի ողորմութէն իւրով .
և քարանց և փայտից ՚ի ձեռաց մարդկան ե-
ղելոց և մեռեալ տեաց անշնչից երկիր պագից :

Ասաքսիմանոս ասէ. ոչ ևս ներեցից քումմ
զօղանջանացդ՝ որով ընչնամանես զանմահ
դիոն, այլ հրամայեմ փշրել զոսկերս քո քա-
րամբք. զի գոնեա այսպէս իմաստնասցի խե-
լագար ծերուիդ քո, եթէ ուրպէս պարտ
է խօսել առաջի թագաւորաց։ Այլ ետ հրա-
ման նոյնժամայն քարամբք հարկանել զը-
ծնօտս նր. մինչև ջախջախեալ մանրեցան
ոսկերք այտից, և հոսեր իջանէր արիւնն
ի ծնօտան և ի բերան նր։

Յոկ երանելի ծերն աղաղակեաց ձայնիւ մե-
ծաւ, և ասէ. Զոհանամ զքէն քո ած իմ,
զի այսպէս քարեհաճեալ լիս՝ զօրացուցեր
զծառայս քո՝ի նախկի մրցմանս յայսմիկ, ա-
րիաբար մարտնչել ինձ՝ի հաւատոյ պատե-
րազմիս ընդէմ անօրէնն Թագրիս. զի ահաւա-
սիկ ամենազօրութիւ քո իբրև զձիւնեղի կա-
նաչագեղ՝ նորակերտ դալարացեր զկնի հա-
տանելոյն, և կի իբրև զծաղիկս մատաղա-
տունկ դրախտիդ, այնպէս համարիմ զպարկ-
ուճաճս քարանցս՝ առ՝ի նորոգութիւն փառաց
հնացեալ և ծերացեալ անդամոց մարմնոյս
իմոյ. վն զի հաւատամ նորոգ ընդունել զսա
՝ի փառաւորեալ գալստեանդ քո։

Յոկ Թագրն իբրև ետես զնա, զի այսպէս և
՝ի տանջանսն գոհանալով կարդայր զքէ, ա-
սէ. ով պիղծ և յանդուգն ծեր՝ և դեռևս
զխաչեաճն կարդաս մարտակից քեզ. և ոչ իւ
մանաս զչախջախումն ոսկերաց երեսաց քոց.
և ոչ տեսանես պարձանահոս կարկաջումն
արեան քո՝ի բերանոյ քումմէ։ Այ և այլ

բունագոյն տանջանս ածից՝ ի վէր քո. զի գիտեմ այնու ծանիցես, թէ այն՝ որ՝ ի քէն ածէ առ քեզ, ոչ կարէ օգնել այնոցիկ՝ որ՝ ի թշնամեաց դատապարտեալք լինիցին։

Այլ զայս ասացեալ՝ հրաման ետ և զշղջանակս նոր, այս է զարուն, ոպ և զկողս նոր և զթիկունսն և՛ս առաւել հարկանել նովին քարամբքն։ Իսկ երանելին բաբեղաս զայս ամ տանջանս ընդունելով՝ ոչինչ ցաւոյր. այլ հեզ և անխռով ձայնիւ այսպէս սաղմոսէր. Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց, զի՞նչ արասցէ ինձ մարդ. տէր է իմ օգնական, և ես տեսից զթշնամիս իմ. բարի է յուսալ՝ի տէր՝ քան յուսալ՝ի մարդիկ. բարի է յուսալ՝ի տէր՝ քան յուսալ յիշխանս։

Ապա խրատ առեալ՝ի վրկուէ ածոցն երդոնէալ՝ոչ սուտ խօսեցան զքէն արտեմիոս և փիբիանոս, եթէ առաստել լիմն՝ի բերան առեալ՝ երգս սքօս և սաղմոս անուանեալ՝ կարգայ հնացեալն այն, որով զառամիկան և զանզգայն կարօղ է պատրել. արդ աւասիկ և՝ի լսելիս մեր այսպիսի խորամանկութիւնս յառաջ բերէ բարբանջէ, և զմեզ ևս պատրել կամելով՝ նովին երգով հեշտացուցանէ զլսելիս մեր։

Այլ երբն հայեցեալ՝ի նա՝ ասէ. բարւոք ասէ ածային գիրն, եթէ յիմարն զյիմարութիւն խօսի, և սիրտ նր զնանիրս իմասցի. և երբ վէր դու ոչ իմանաս ով թագաւոր, եթէ մեծ և հզօր է ածն քրիստոնէից, և յոչինչ համարեալ են առ ըստքէ հեթանոսաց, որոց դու

ասա-

սպասաւոր լինիս՝ ի կործանումն Թշնամեացդ քո. վ՚ն զի ամ կուռք հեթանոսաց՝ սակ գիր, դևք են. այլ ես զերկինս արար։

Յայնժամ մաքսիմիանոս բարկացեալ՝ ետ զնա՝ ի ձեռս պրիսկեղայ կամ պրիսկեայ դատաւորին, և հրամայեաց դնել անուր ծանր՝ ի պարանոց նր, և զոտս նր սնդել՝ ի փայտի։ Եւ իբրև տարան զերանելին բա՜ բեղաս՝ ի բանտ, ահա հրաման ետ Թագաւորն ածել զնա՝ ամ մանկունն զաշակերտեալս նր առաջի իւր. և վաղվաղակի կատարեցին սպասաւորքն զհրամայեալն. և իբրև զգաւ նամոլս զամենեսեան ջոլորեալ կացուցին առաջի Թագաւորին. որք էին Թուով ութ՜ սուն և չորս՝ ըստ արու և ըստ էգ. (Հեթանոսացն մանկունք, և չորեքտասան աղջկունք.) ո՜ րոց անուանքն են այսոքիկ։

ա. Յովհիլոս։ բ. պետրոս։ գ. փիլիպպոս։ դ. սերապիոն։ ե. սևերիոս։ զ. զոյիանոս։ է. աղեքսանդրոս։ ը. ագաթոն։ թ. մոկիտոս։ ժ. սարգիսնէոս։ ժա. տիբրանէոս։ ժբ. արտեմիոս։ ժգ. մաքսիմոս։ ժդ. ամմոնիոս։ ժե. սերապիոս։ ժզ. նէոփիտոս։ ժէ. տորիոն։ ժը. պիկկղիանոս։ ժթ. կինաբիոս։ ի. բիտոն։ իա. դոնատոս։ իբ. բիքտորիոս։ իգ. դուղկիտիոս։ իդ. դրոմեդոս։ իե. եւտիքիոս։ իզ. փիլիպպոս։ իէ. զենոբիոս։ իը. եւգրաբիոս։ իթ. անտոնիոս։ իժ. քրիստարիոս։ լա. պիբիոս։ լբ. անտիգոնոս։ լգ. դեմեթղիոս։ լդ. սքողաստիկոս։ լե. Թէոդոս։ լզ. փղորենդիոս։

լէ . գղիկերիոս : լը . կեղսիոս : լթ . պատ-
րիկիոս : խ . սաեփաննոս : խա . բամբիա-
նոս : խբ . ուղղաղենդինոս : խգ . Թէոդո-
րոս . խդ . եւտիքոս : խե . եւփսեբիոս : խզ .
եւագրիոս : խէ . սեւերիանոս : խը . ղևոն-
դիոս . խթ . մարկիսիանոս : ծ . փոտիոս . ծա .
փիղիկիրոս : ծբ . դիոմեդիոս : ծգ . նէոփի-
տոս : ծդ . իպատիոս : ծե . ակակիոս : ծզ .
զոտիկոս : ծէ . փիմինոս : ծը . պանքարիոս :
ծթ . մարկոս : կ . արքեղիոս : կա . իրինոս :
կբ . հուպեղիոս : կգ . ասկանիոս : կդ . եղև-
Թերիոս : կե . այետիոս : կզ . ամոլսիոս :
կէ . դոնատոս : կը . անտիգոնոս : կթ . իպա-
տիոն : հ . պերմոն : հա . Ալիւրիա : հբ . սո-
փի : հգ . եւսեբիա : հդ . Թէոդոտի : հե .
փաւստուհի : հզ . մաղիկիս : հէ . Թէոդու-
ղէ : հը . Թէոփիլուհի : հթ . պատրիկուհի :
ձ . Թէոդորա : ձա . դիոնիսուհի : ձբ . սիմբ-
ղիա : ձգ . տրիփեննա : ձդ . դոմնա :

Արդ սոքա ամենեքեան իբրև ածան առա-
ջի Թգրին , գալով զկնի նոցա և մարցն իւ-
րեանց՝ արտասուօք քաջալերէին զնոսա , զի
հաստատուն կացցեն ի հաւատս վճռին իւ-
րեանց : Այլ իբրև ետես զնա մաքսիմիանոս ,
ժպտեցաւ ընդ ամենից . և խորամանկուԹեամբ իւ-
րով քաղցր ձայնիւ սկսաւ ասել ցնա այսպէս .
Արդեաւկ իմ լուարուք ինձ , ոպ զի կեցջիք
և՝ի բարուԹեն վայելեսջիք . վասն զի Թէպէտ
և վճռեալ ձեր՝ որ ուսուցանէրն զձեզ , անա-
գան և հալիւճ ծանեաւ զձշմարտուԹիւն ածոցն ,
սակայն յետոյ երկիւղ եպաղ նոցա , ոպ և ամ-

մալ-

մարդիկ. այլ վա՛ղ ի խմայեալիմ, թէ հարկանէր զձեզ և տանջէր յանդգնաբար՝ հանապազօր պահանջելով՝ ի ձէնջ զհամարս նահնիր ուսմանց գրոցն քրիստոնէից, յաղագս այնորիկ բարկացեալ՝ ի վէր նը՝ արկի զնա՝ ի բանտ. զի մի՛ այլ ևս հանդերձեացի հարկանել զձեզ։ Արդ մտեալ՝ ի տաճար ածոցն՝ երկիր պագէք նմ։ և անցեալ գնասջիք խաղաղութե՛ առ մարս ձեր. վա՛ղ զի տեսանէք՝ թէ որպէս ողորմագինս կականին կողկողեալ զկնի ձեր։

Ա՛ռ այս ամ ողոքական բանս Թէգրին ոչ ետուն սլինի՝ որ մանկունքն. բայց միայն իրաքանչիւր ոք՝ ի նոցանէ սկսաւ ասել, ես քրիստոնեայ եմ։ Յայնժամ բարկացեալ Թէգրն՝ հրամայեաց՝ ի բաց տանել զնա յերեսաց իւրոց. և ապա ընտրեալ՝ ի նոցէ տասն մանկունս՝ որք քան զայլսն ուշիմ երևէին առ՝ ի կարօղ լինելոյ նմ առ հարցմունս նը տալ սլինի, ետ ածել կացուցանել առաջի իւր. և ասէ ցնս Մաքսիմիանոս։ Վկայէք որ դեակք, եթէ վա՛ղ որո՞յ իրաց ընտրեցի զձեզ յամ ընկերաց ձերոց՝ իբրև զմանկունս իմաստունս, և կացուցի առաջի իմ. արդ՝ մի նմանիք սպիրատուքե՛ վէպին ձերոյ, այլ մատուցեալ երկիրպագէք ածոցն. և բազում պարգևս ընկալջիք յինէն՝ գանձս ոսկւոյ և արծաթոյ. և ուրախութե՛ մեծաւ արձակեսջիք յինէն՝ ի տունս ձեր, կամ լինիջիք ընդ մե՛զ՝ ի պալատան. ապա եթէ ոչ կնաւ զանդիք ինձ, հրամայեմ հատանել զգլուխս

ձեր , և արկանել չանց զդիակունս ձեր ։ Ոչինչ եւս մի ունի՛ ի նոցանէ , որում անուն էր ամոմս կամ ամմոն , և ասէ . մեք քրիստոս նեաչք եմք , և դիւաց պղծոց երկիր ոչ պագանեմք . զոր ինչ կամիս՝ արա վաղվաղակի . զի աւասիկ պատրաստ եմք ըստ օրինակի վարդապետին մերոյ ։ Ա՛նաքսիմանոս ասէ . առէք զդա և հարէք զթիկունս և զկողս դորա . ոչ զի ուսցի՝ այրանայս , և ոչ տղայաբար խօսել առաջի թագաւորի ։

Եւ իբրև տանջեցաւ նա այսպէս , յառաջ մատուցին զմիւսն՝ որում անուն էր դոնատոս . և ասէ ցնա մնաքսիմիանոս . տեսեր զաշակերտակիցն քո , եթէ ոչ պատրաստ էր հաւանել ինձ՝ յանհնարին տանջանս մատնեցաւ . արդ դու մի նմանիր նմա անմտութեն , այլ հնազանդեա ինձ , և պաշտեա զաստծան . և անցեալ գնասջիր առ ծնօղն քո խաղաղութեբ . վա՛ղ զի գիտես՝ թէ ոչպէս այժմ տրտմեալ լինին նք վա՛ յամե լոյդ քո ։ Եւ պինդ դոնատոս , և ասէ . ես քրիստոնեայ եմ , որպէս և ամովսիոս աշակերտակիցն իմ . և ոչ խաբեցայց ի փաղաքշանացդ քոց , և ոչ երկեայց ի ըստպատուհասացդ քոց , և ոչ ուրացայց զաստծն իմ և զտէրն ։

Յայնժամ լի եղև բարկութբ մաքսիմիանոս , և գոյն երեսաց նր շրջեցաւ . և ասէ . առէք և զդա , և ըստ առաջնոյն օրինակի կրկնապատիկ տանջեցէք . վա՛ զի սա ևս ըմբռնեալ է՛ի պատրանս ծերոյն այնորիկ ։ Եւ իբրև տանջեցին զնոբ մանուկն սպասաւորք թագ-

գաւառին անողորմ, մինչ զի հասեր լրջաներ
ասիւն նոր յերկիր, նա ոչինչ տայր պանծ առ
բռնաւորն, այլ միայն աղաղակեր և ասեր.
Ես քրիստոնեայ եմ:

Եւ հրամայեաց Թէկղն ընկենուլ զնա և Թո-
ղուլ ի յատակս տանն, և եւս աճել և զայլ
ևս ընկերս նր, և ասէ ցնա. Որպէս կամիք,
հաւանիլ ինձ, և պարգևօք և ուրախութիւ
մեծաւ երթալ ի տունս ձեր, եթէ անհա-
ւան գտանիլ, և զայդպիսի տանջանս կրել,
ոչ տեսանէք զընկերս ձեր: Ասէ ցնա ման-
կունքն իբրև լուան զբանս նր, ի բաց ըն-
կեցեալ զձորձս իւրեանց՝ միաբան աղաղա-
կեցին և ասեն. աւասիկ պատրաստ եմք առ
տանջանս քո, ոչ նր եղբարքս մեր՝ որք ան-
կեալ կան ի յատակս տանս առաջի մեր ա-
մովսիոս և դոնատոս. և ոչ երբէք դադա-
րեմք ի կոչելոյ զանձինս մեր քրիստոնեայս,
և խոստովանելոյ զնածն մեր. ոչ ուսոյց մեզ
երանելի վէրպն մեր:

Յայնժամ յարեաւ վաղվաղակի մաքսիմիա-
նոս, և գնաց բարկութիւ մեծաւ ի պալատն
իւր. և եւս հրաման պրիսկիլիանոսի դատա-
ւորի արկանել միանգամայն զնմա մանկունսն
ի բանտ, և աւուրս ինչ անսուաղ պահել.
զի Թերևս ասէ ի սովոյ նքօղեալ՝ ուրացին
զխրատ վէրպին իւրեանց. ապա թէ ոչ՝ հան-
գերձ վէրպաւն իւրեանց ընկալցին սրով ըզ-
վախճան մահու:

Ասէ դատաւորն ընկալեալ զայսպիսի հրա-
ման՝ իբրև փորձեաց զնա, և եգիտ անդրդ-

ուՀելիս ՚ի խորհրդոյ իւրեանց , եւ ածել առաջի իւր զերանելին բաբեղաս Հանդերձ ուղեւսուն և չորս մանկամբքն . և ասէ ցնա . զի՞նչ կամիս ոմ բաբեղաս , զգաստացար ՚ի փոխելութենէ յիմարութեդ առ ՚ի զոհել ՚ածոցն և կեալ , եթէ արդ և ս ՚ի նմին յամառութենէ կայցես , և չարսչար կորիցես դու և աշակերտեալքդ քո . ոմն և ինքնակալն հրամայեաց : Նա պինդի երանելին և ասէ . պարտ էր իմանալ քեզ ոմ դատաւոր զհաստատութիւն հաւատոցն մեր յառաջին մրցարանէ անտի , եթէ զիարդ՝ զոր ոչ չարաչար ջախջախումն ոսկերացս ծնօտիցս իմոց ուժացոյց զիս ՚ի չայն իմոյ , արդ այլով իւիք տանջանօք հաւանեցուսցես զիս ուրանալ ՚ի նմանէ : Նդրդ արա վաղվաղակի , ոմն հրամայ ընկալար յինքնակալէն քումմէ . վ՚ա զի ես պատրաստ եմ յամ տանջանս մտանել վ՚ա բարեպաշտուե , զոր ընկալայ ՚ի մանկութենէ իմմէ , և պահեցի մինչև ՚ի խորին ծերութենիս յայս :

Նոկ դատաւորն իբրև լուաւ զայս , ասէ . ես ակն ունէի , Թերևս ողորմեացիս դու ինքնին Թշուառացեալ աչեաց քոց , և այդոցիկ այդքանեաց մանկանցդ , որ վ՚ա քո հանդերձեալ են կորնչել . դու արդ ևս տակաւին ՚ի նմին յամառութենէ կաս . արդ ես աւասիկ կակղեցից զխստասպարանոցութիդ քո : Նա եւ հրամայն պարզել ձգել զնա ՚ի ջրից կուլմանց , և արջառաջլօք հարկանել զթիկունսն և ըզներքանս նր , յանդիման մանկանց աշակերտաց նր առհասարակ .

Նոկ

Լսակ ոքն ոչինչ գրեր պատանջանս, այլ միայն համբարձեալ զաչս մտաց իւրոց յերկինս՝ ակսաւ ասել այսպէս. փա՛ռք քեզ զուգահաւասար ոք երրորդութե՛ն, հայր և որդի և հոգի՛ ոք. փա՛ռք քեզ հայր ոք, որ զօրացուցեր զտկարուն իմ զօրութի՛ն ընդ հոգւոյդ ոքյ, և նորոգեցեր զապականուն ծերութես իմոյ չարչարանօք քո՛ի քո. և արդ զի՞նչ տաց տրիտուր քեզ ըստ ամի՝ զոր ընդ հնգեցեր ինձ. այլ միայն գոհացողական ձայնիւ օրհնեցից և փառաւորեցից զանբաժանե լի և զանխմանալի զօրութիւն քո՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Նա յասել ոքց մանկանցն զամէնն՝ ետ հրամանն պրիսկիղիանոս դատաւորն զամենեցուն գգլուխն հատանել. ոմն և հրամայեցաւ ի թագաւորէն։ Նա դահճացն առեալ զայսպիսի հրամանն՝ նախ հատին զգլուխ ոքյն քահեղաստայ, և ապա զերանելի մանկանցն մի ըստ միոջէ՝ միանգամայն զուարթսուն և չորից. որոց ամենեցուն զքրիստոնեայ անուննն ի վէր իւրեանց դաւանեալ՝ կատարեցան ի քո։

Նա առեալ զմարմինս նոցա արանց երկիւղածաց՝ զոյգ ըստ ծնօղս նոցա, հանին արտաքոյ քաղաքին, և արարեալ երիս դիրս ի նշանաւոր տեղւոջն՝ որ կոչի իզանդիոք (զոր և ոմանք կարծեցին անտիոք, և այլք բիւզանդիոն), եդին անդ գնչխարս նոցա, տան մեծ կատարելով զօր յիշատակին նոցա յամենայն աստուածբեղի, որ օր չորս եր ամօղն։ Նա դարձ սուքա այսպես կատարեցան (յամի տեն իբր 300), ի հիւ-

հիւպատոսն դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի երկոցունց հեթանոսական թագաւորացաց (ասէ վկայաբանն՝ ժամանակակից կարծեցեալ). իսկ ըստ մեզ թվերելոյ ոմն մերոյ յիւրոց միածնի որդւոյն ։ այ. ընդ որում հօր՝ միանգամայն և հոգւոյն ։ բոյ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ։

(1) Այս ևս գեղեցիկ և ցանկալի վկայաբանութիւն ընծայեցին մեզ երկոքին ճառընտիրք մեր Ա. և Բ. յորոց երկրորդն է առաւել ընտիր և անսխալ և լրագոյնզի առաջինն զանց առնէ գրել զանուանս միոյ միոյ յուԹասուն և չորս մանկանց, և ուրեք ուրեք հարԹէ և այլափոխէ զբուն չարագրութիւն Թարգմանչին. ոմք յայտ է՝ ի բազդատութենէ երկուց օրինակացս. որոց սկիզբն է. * Մաքսիմիանոս Թագաւոր մեռեալ՝ ի քաղաքն Նիկոմիդեայ՝ զոհեաց ապուլոնի ||. ևն։ Ջնոյն վկայաբանութեան քաղէ և Հ. և Ց. ժմ։

Գեղեցիկ ասեմ վասն պարզ և անպաճոյճ ոճոյ հաւատացեալ գրչին. և ցանկալի, զի առ մեզ միայն գտանի. իսկ առ այլս պակասի յայժմու ժամանակի. և այս այնչափ, մինչև՝ ի վարանս անկանիլ բոլանդեանց և՝ ի յոյզս մտաց անբերելիս, ՝ի յունվարի 24. ՝ի վարս բաբելայ անախոքայ հայրապետի, և՝ ի 24. սեպտեմբ. ՝ի կարգի նոցա՝ զորոց չունին զբաւական տեղեկութեն։ Մինչ զի խոսոզն յայտ վայրի ասիլտինգ ոչինչ այլ գործէ, բայց զտալակոյս իւր առաջի առնել. ՚ի արդեօք մի միայն (ոմք վարկաւ բարոնիոս), եթէ երկու վկայք իցեն բաբելաս անուամբ. և երկոքին ևս եպիսկոպոս իցեն, Թէ մին ևեթ. և ակամայ կամօք առ անգիտութենէ բերի՝ ի նոյն յայտնի սխալանս բարոնիոսի. և իշխէ չնչին պատճառօք հաստատել, Թէ մի միայն իցէ բաբելաս վկայ, և այն անտիոքացի եպս. որով զսկամայ սխալն կամա-

ւոր գործէ։ Շփոթեալ է զբոլանդեանս ոչ միայն յոլ-
նէն՝ի ձեռին վկայաբանութեի բաբելայ ծերոյս նիկո-
միդացւոյ, այլև հոմաձայնութեի ինչ և սխալագրութեի
դաեալ՝ի քաղուածն նորուն՝ որ՝ի ժամագիրս յունաց·
ուր՝ի սեպտ· 4· զկնի վարուց և պաշտամանց բաբե-
լայ հայրապետին անտիոքայ, գրի վ՚ն բաբելայ ծերոյն
այսպես· * Յայսմ աւուր սքն բաբիւլաս՝ որ յանտիոք
վ՚ն, հանդերձ որ ը նուաւ ուխտսուն և չորս մանկամբք՝
սրով կատարի ||· ուր զանուն տեղւոյ Թաղման սքոյս, որ
կոչէր իղանդիոք կամ իսանտիոք ը հին վկայաբանիս մե-
ծում՝ի կողմանս նիկոմիդեայ, շփոթեալ են ոմանք՝ի
գրչաց ընդ անտիոքայ· բայց սակայն նոյն իսկ ժամա-
գիրքն յայտ առնէ անդանօր ճախագոյն՝ յարևնման ճառ-
ընտրայ՝ զնահատակել սքոյս առաջի կայսեր՝ որ նստէր
՚ի նիկոմիդիա· Թող զի անդրէն զնոյն անուն տեղոյն
իղանդիոք՝ կամի նոյնացուցանել ը բիւզանդիոնի, գրե-
լով ոչ դիտեմ յորմէ՛ի աւանդութէ վ՚ն Թաղման բա-
բելայ ծերոյն և ձ՚ աշակերտաց նորա այսպէս· * Իսկ
,, հաւատացեալք ոմանք բարեպաշտք եկեալ՚ի գիշե-
,, րի, և զնշխարսն՚ի մակոյկ բարձեալ՚ի բիւզանդիոն
,, քերթն, և՚ի հիւսիսային կողման արտաքոյ պարսպաց
,, յերիս գլուս (կամ՚ի տապանակս) եդեալ, ուր է մն-
,, նի գիւղն մականուանեալ, փառս և օրհնութիս ա-
,, վերառաքեցին ||· որ եթէ ունիցի ինչ հիմն, տակա-
ւին զկատարումն սքոյ՚ի նիկոմիդիա ենթադրէ լինել,
և ոչ յանտիոք· Թող զի չէ հաւանելի՝ Թէ ծնօղք այն-
չափ բազմութէ սքոյ իսկևիսկ Թողացուցեալ իցեն տա-
նել զմարմինս նց՚ի բիւզանդիոն· գուցէ յետ Թաղելոյ
մօտ առ իւրեանս յիզանդիոք՝ յետոյ փոխադրեալ իցեն
յայլևայլ տեղիս։ Մնով բանիւ· գանձ մեծ ընծայեալ
լինէր բոլանդեանց վկայաբանութիս մեր, որ բառնայ
զամ տարակոյս, և լոյս մեծ տայ ամ քննչաց։

Ոչինչ փոյթ կալաք նշանակել զդուշնաքեայ տարբերու-
թիւնս ընթերցուածոց կրկին ճառընտրաց մերոց· այլ
մեք առաւել պահեցաք զշարադրուն Բ· ճառընտրին·
ուր և ուղիղ նշանակի կատարումն սքոյս՚ի չորս սեպ-
տեմբերի, յորում տօնեն և յոյնք, իսկ՚ի Ճ· Ա· վրէ-
պակաս եդեալ էր՚ի իջ սեպտեմբերի։

Ի քանի մի նոր տօնացոյցս (ը լեհացւոց) զկնի բա-
բելայ ծերոյ և ձ՚ աշակերտաց նր գրի· * և սքոյն յո-
հաննիսի (կամ յովհաննու) նոր մարտիրոսին ||· որ ան-
ծանօթ է մեզ։

# ՎԿԱՅԱԿԱՆ ԹՈՒԹԻՒՆ

Աբ ծերունւոյն Աւարայրամու կիմ Աւարայրամու անտիոքացւոյ ։

Ա. Յովհ. 22 ։ Յ. Յով. 16 ։ Ի. Յով. 19 ։
Ա՝ասբնա. Ը. ձԼԸ = ձՆՔ. Ե Գ. ՃՀԷ = ՃՅԷ ։
Աբն բառեղ. Ե Ոսկէբ. ի Ներբող բարեպատմա ։ (1)

## ԱՌԱՔԵԼԻ ԵՒ ՀԱՒԱՏԱԿԱՆ

և անպարտելի վկայն քրիստոսի ծերունին բարեպատմ, (որ առ նախնիս մեր գրի բարեպատմ, և ըստ այլոց բարեպատմ կիմ բարեպատմ,) առ հաստատմանէ նորին եղեալ կոչման՝ որ է ըստ յովհաննու բառնէպէս, ոչ միայն քահանայ, այլև եպիսկոպոս արծեցւոց. բայց ըստ սոյգ տեսութեանն եր այր ծեր, հին և շինական, բայց լի հաւատովք, արգար և երկիւղած ի տէրն, փայլեալ առաքինութեամբ ի կողմանս անտիոքայ ասորւոց՝ յաւուրս հալածանացն նուսմերիանոսի կռապաշտ կայսերէ հռոմայեցւոց. որոյ հրամանաւ եղև գալ անօրէն իշխանին պռոխիանոսի ի կողմանս կիլիկեցւոց, և ի մայրաքաղաքն երկրին ասորւոց ի մեծն անտիոք, առնել զեպարքոսական իշխանութեանն նահանգին այնորիկ, քննել և մահուամբ դատապար-

պարտեալ զնոսա և զայդ անդ ՚ի հաւատացեալսն ՚ի նոր ։

Որդի պատահեցար ընդունել արբանեկայ նոր ըստ այլ կանանաւորսն քրիստոնէից և զերանելին բարեպատ, և ՚ի բանտ արգելուլ ՚ի քաղաքին անտիոքացւոց ։ Որ յետ ասելոյ ինչ առ պառաւն իշխանն հրապարակաւ նստեալ յատենի ՚ի վերայ դատողական բեմի՝ ասէ ցառաջիկայ զինուորսն , ածէք այսր զաղաւրտեալ ծերն զայն . և վաղվաղակի կացուցին առաջի նոր զերանելին ։ Որ ասէ ցնա իշխանն . զինչ անուն է քո ։ Նա պինդ եւ ասէ . եԹէ վերստին ձնհարիւր անուանեմ իմոյ հարցանես , կատարեալ անուն իմ քրիստոնեայ է , որպես և կոչիմ իսկ . այլ ՚ի ծնողաց իմոց կոչեցայ բարեպատ ։

Իշխանն ասէ . բարւոք կոչեցաւ անուն քո բարեպատ . քանզի կարօղ է անուանդ այդ հաւատարիմ զմեզ առնել , Թէ անուանդ և ծերուեդ հասակ ՚ի բազում հասուցանէ զքեզ յանզգամութիւն . ( զի Թերևս յունարէն ստուգաբաներ զանուն ՝ որպէս ասաց , ՚ի ծանր ամս ) ։ Բարեպատ ասէ . ես զանուն և զքաղաքավարութիւն դեղեցկագոյն ունիմ , քանզի խոստովանիմ զքո՝ ՚ձծ յոյդ ծնեալ նախ քան զամ յաւիտեանս , և մարմնացեալ ՚ի վերջին աւուրս ։

Բարկացաւ դատաւորն ըստ համարձակ խոստովանութեն երանելւոյն , և ասէ . անզգամ ոչ հարցի զքեզ վասդորիկ . այլ Թուի ինձ , Թէ իբրև տղայ անուղղայս բարբառիս ըստ ոչ հա-

հարցմանս, թէպէտև ծեր իցես: Կարղամ ասէ. մի բարկանար ինձ ոմն իշխան. քանզի սիրելով իմ զքո՝ զայդ եւս քեզ պիտի, թէ պէտև ոչ առի հրաման՝ի քէն: Պատասխանի ասէ. ես ամ ստուգութիւն և ճշմարտութիւն կամիմ հարցանել զքեզ ըստ կարգի. քանզի և ամբոխս՝ որ շուրջ կան զմեօք, զճշմարիտ հարցուածն կամին լսել, և զքոյդ տեսանել գլամառուածն: Յայնժամ և ամբոխն ասեն. աւասիկ եմք ամենեքեան՝ի լսել զբանս քո իբրև առն ծերագունի առանց հակառակութիւն. զի մեր կրօնքս բռնութիւն ոչ է: Եւ դատաւորն ասէ. արդ պարտ է քեզ ըստ կարգի տալ պինդ, և ոչ նախադրաւ ձեռներկցուբ բարբառել. և այսուհետև գիտուն լինի քեզ, զի եթէ արտաքոյ հարցուածոց իմոց տացես պինդ, չարաչար վկենցաղոյդ քո վախճան ընկալցիս: Կարղամ ասէ. ես ամ իրօք ցանկամ, զի և դու ճշմարտութիւն հարցցես, և ես ամ ստուգութիւն տայ քեզ պինդ. զի կամիմ և զհասեալ ամբոխս՝ և մանաւանդ զքրիստոնեայս՝ տեսօղս լինել լինել. քանզի գիտեմ, եթէ զիարդ յառաջագոյն պատմեալ եղև քեզ՝ի չարախօսացդ հակառակ ճանապարհին քրիստոնէութեանդ. և կամիմ զքեզ հաւատարմացուցանել ըստուգութիւն, թէ որպէս իրաւացի են օրէնք մեր. և դատաւոր յայսմիկ լինի հայրն քոյ: Կարդ եթէ ճշմարտութիւն լսօղ լինել կամիս, առաջին ճշմարտութիւն՝ խոստովանութիւն գքո է. և ապա մաքուր քաղաքավարութիւն կենցաղա-

վա-

վարիլ. հանդարտութեն, հեզութեն, սէր, քաղցրութեն, արդարութեն, երկայնմտութեն, բարեգործութեն. և զոր ինչ ատեայ ոք՝ ընկերին ոչ առնել։

Ո արմացաւ դատաւորն ընդ խմաստուն բանսն ընդին, և ասէ. երդնում յածման և՛ի բախտ ինքնակալին, զի զայս ինչ բարւոք ասացեր, թէ չհմարտութեն և ուղիղ կենցաղ՝ յեղանակ է աղատութեն. այլ զայս ինչ ոչ հարցի ցքեզ. այլ գիտել կամիմ, թէ զո՞ պաշտես, և ո՞ւմ ցուցանես զանձն երկիրպագանել։ Առակաց ասէ. ես հօր երկիրպագանեմ, և որդւոյ՝ որ՛ի նմանէ ծնեալ է, և ընդ հոգւոյն՝ նորոյն էակցի և միշտնջենաւոր փառակցի։ Պռիմիանոս դատաւորն ասէ. ոչ ասացի քեզ, թէ ծերութեն հասակիդ քո՛ի շաղփաղփութեն է զառածեալ, և՛ի խելայեղուն կրթէ զքեզ. ոչ թուին քեզ ածք գոլ՝ զորս պաշտէ ինքնակալն։ Առակաց ասէ. երդնում՛ի յո՛ որդին ընդ, որ ամաչեմ զգլուխս ամբառնալ և հայել՛ի քեզ, տեսանելով՝ զի զձեռագործս մարդկան կամ զարարածս ընդ՝ ածս անուանես. քզի ես ոչ հաւանիմ զարարածս պաշտել և նոյ երկիրպագանել. այլ յայմ ժամ խոստովանիմ զքո զորդին ընդ, որ՛ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս ծնեալ։

Պռիմիանոս իշխանն ասէ. անպարտելի ինքնակալքն հրամայեցին, զայն՝ որ ոչ երկիր պագանիցէ ածոցն, և ոչ հետևեսցի նոցա հրամանացն, կենդանւոյն այրել։ Առակաց ասէ. պատրաստ եմ տալ զմարմինս իմ, զի սրաց-

ցես՝

ցես՝ զոր կամիս. քանզի ես ոչ միայն ի ձեռն սակաւ տանջանաց, այլև բազմից՝ հաւանեցուցանեմ զքեզ, թէ արարածոց և ձեռագ կերտաց երկիր ոչ պագանեմ: Դատաւորն ասէ. կան և մեռեալ քեզ պատուհասք. սակայն յառաջիկայս եկեսցուք վ՚ն ամբոխիս՝ որ շուրջ զմեզ են. արդ ասա, որպէս հայր որդի ընկալաւ, կամ երբ:

Խարղամ ասէ. ոչ է հնար այնմ՝ որ յառաջ քան զյաւիտեանս էր, ընդ ժամանակաւ ստորանկիլ. զի ասէ, յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ. և զիարդ յաղագս այ հարցաներես, թէ որպէս կամ երբ: Խնամեն պրիմիա նոս ասէ. ես քանզի լուայ ի քէն, թէ ածն քո որդի ունի, վ՚ն այնորիկ հարցի զքեզ՝ եթէ այս որպէս իցէ. ապա թէ ոչ՝ ես ածողն երկիրպագանեմ, ոչ տեարքն իմ Քրիստոսիկաւ Թէլքն հրամայեցին. և կամիմ, զի և դու զնոյն արասցես. Խարղամ ասէ. և ես կանխաւ ասացի, և այժմ դարձեալ զնոյն ասեմ զքեզ ոչ հրաժարեմ, եթէ որդւոյն այ երկիր պագանեմ, այնմ՝ որ անժամանակաբար ծնեալ է. այլ զարարածս և զձեռագործս մարդկան ոչ երբեք կալայ առ ածն, և մի՛ այլ լիցի ունել, թէև զամ փորոտիս իմ ի բաց հանցես, և կամ զմարմինս իմ յօշ յօշ կոտորեսցես:

Դատաւորն ասէ. ոչ ևս ներեմ քեզ վ՚ն շաղփաղփուեդ քո և յամառ կամացդ, այլ յարաչար հարուածովք պատուհասեցից զանզգամութիւդ քո, և դանդաւանդիւք մա-

ջեցից զկարծրութիւն կշակաց քոց. զի հաւա-
նեալ կատարեսցես զկամն հրամանաց ինք-
նակալ մերոյ Թագրաց. քանզի քանիւք ողջ
քանաց կամեցեալ իմ դարձուցանել զմիտս
քո յիմաստութիւն, և խնայեալով՝ի ծերութիւն
քո՝ հարցափորձեցի զքեզ. այլ դու ստէպ
ինացեր՝ի քոյին մոլար[ա]միտ անզգամութեդ։
Խարլամ ասէ. մի բարկանար ինձ ո՛վ դա-
տաւոր, քանզի մարմնոյս իմոյ ունիս իշխա-
նութիւն դու. իսկ հոգւոյս ած ունի՝ արարիչն
համայնից. յոր հաւատացեալն եմ, և կամ
հաստատուն՝ի խոստովանութիւնէ նր մինչև՝ի
վախճան. և ո՛չ երբէք զսահեցից դից քոց մոռ-
նեաց, և ո՛չ երբէք երկիր պագից խոսլ և
կոյր դիւաց. որք խաւարին տանջանաց մատ-
նեն զհոգիս այնոցիկ՝ որք մոլորեալ հաւա-
տան և երկիրպագանեն նոյ։

Ասէ դատաւորն. կարծես դու՝ թէ՝ի կար-
ծոյ զրաւեցից զքեզ՝ի կենացս. այլ ընդ փո-
քու փոքու և առ սակաւ սակաւ խոշտանգե-
ցից զքեզ մինչ անդամն մարմնոյ քո՝ի ցոյցս առե-
ցուն. և տեսցո՛ւք՝ եթէ օգնէ քեզ որդին
այ քո, զոր դուդ ասես։ Խարլամ ասէ. և՛
օգնեաց ինձ, և՛ օգնեսցէ. և ո՛չ թողուցու
զիս հեռանալ՝ի կամաց իւրոց և՝ի սիրոյ, և
պաշտօն տանել ձեռագործոց մարդկան՝
անօտիապատիր ձուլածոյ պատկերաց։ Դա-
տաւորն ասէ. ահաւասիկ ածեմ՝ի վէր քո
տանջանս չարաչարս՝ որոց ակն ոչ ունիս, ընդ
քում անզգամութեդ. զի՝ի ձեռն տանջա-
նաց հպատակ լինիս ինքնակալացն, և զոհեա-

ցես ածօղն ։

Խարղամ ասէ . ով իշխան , եթէ ոչ քարկաս ցիս , ես զՀմարիան յայտնի ասացից քեզ . ստուգապէս՝ երկրպագուքն արարածոց ածն անուճանելոց յիմարեալք են . մի զի ածն Հմարիտ յաւիտենական է . իսկ ձերոց ածօց արարօղքն գլխովին անյայտ և համառօտ ժամանակաւ վախճանին . և զիարդ առ՛ի սոցունց արարեալքն իցեն յաւիտեան ։

Յայնժամ սրտմտեալ դատաւորն՝ ասէ . Հապ բնք զնա անխնայ կաշեցք անփեղթիւք , ըմ արջառաջղօք [2] . զի դուն՝ որ ընդ դմա չորչ , Հատանե՞ս անսայեցե՞ մեզ ։ Իսկ բարզամ ասէ՝ ի տանջանս անդ . ասացի քեզ յառաջագոյն , թէ ես մի ՚ած պաշտեմ , որ արար զամ , և նման երկրպագանեմ . վայ ոչ երկնչիմ՝ ի սպառնալեացդ քոց . զի առաջի աչաց իմոց ուր նելով զերկիւղն այ՝ ինացից առանց սասանելոյ . և ոչ միայն ես , այլև ամենեքեան՝ որ օրինացս և կրօնիցս այսոցիկ հետևին ։

Պաւիմիանոս իշխանն ասէ . զիարդ առեր ՚ի ձեռն տանջանարանացդ ։ Խարղամ ասէ . երդնում՝ յորդիս այ , զի ոչ զդացի քոյին տանջանացդ , առաջի աչաց ունելով զածն իմ . և առաւել քան զ տանջանս՝ զ անպատմելի ձեր վշտագնեալ լինիմ . զի գկռեալս և գկռիեղս մարդկան ած անուճանէք . վայ ըզձամ փութապէս ազատիլ յառաջիկայ կենցաղոյս , և ոչ լսել զայդպիսիսդ ՚ի բերանոյ քումմէ ։

Դատաւորն ասէ . զի՞նչ առես բարզամ . Հա-

ւանեա ինձ և զոհեա. վ՚ը զի պատկառեմ՚ի պատուհական աչեաց քոց, և՚ի վայելուչ գեղոյ պատկերի քո. և խնայելով՚ի քեզ՝ կամիմ շատանալ տանջանօքդ, զոր ընկալար։ Առաքեալ ասէ. ես տանջանացս քնաւ ոչ առի զգայուն. վ՚ոյ պատրաստ եմ տալ զմարմինս իմ՚ի տանջանս խստագոյնս, ուրչափ և ածես՚ի վ՚ը իմ. և հաւանեցուցանեմ զքեզ՚ի գործոյ իմոյ, թէ չ՚ած հաւատամ, և դիւաց ոչ զոհեմ. զի սէրն քրիստոսի ոչ թողացուցանէ զիս մեկնիլ՚ի նմանէ. և եթէ ոչ բարկանայիր, ասէի քեզ քանս համառօտս զմեր մէ բարեպաշտութէնէ. ներեա արդ երկայնմտաբար։ Իշխանն ասէ. ասա՛ զոր ունիս ասել. այլ ո՞ զքեզ յիմաստնոյ ոչ գիտէ, եթէ քանք ձեր առասպել՛ք են պառաւանց, և դուք ստուէ հետևօղք. սակայն ասա՛, գուցէ կարիցես քրիստոնեայ զիս առնել։ Առաքեալ ասէ. ըղձամ առ ած, զի ոչ դուն միայն լինիցիս քրիստոնեայ, այլև ամենեքեան՝ որ ասեն զհաստուճածս և զձեռակերտս ած գոլ. զի զլջացին և խոստովանեսցին զորդին ոյ ձշմարտապէս ծնեալ՚ի հօրէ։ Այլ յաղագս իմոյ ձշմարիտ հաւատոյս առցես ստուգութէն՚ի փորձոյ տանջանացդ, զի ոչ իւիք հնար ես ինձ մեկնիլ՚ի քեզ. ոմն և՚ի գրելոյն յայտ է, զի ասէ. ո՞ մեկնեսցէ զմեզ՚ի սիրոյն քրիստոսի. նեղութէն, թէ անձկութէն, թէ սով, թէ մերկութէն, թէ հալածանք, թէ վիշտք, թէ սուր։ Լուեալ զնա իշխանն, և ասէ. բազում ան-

գամ անսացի քեզ՝ կարծելով, եթէ օգտա-
կարագոյնս ինչ խօսեսցիս. այլ դուք անու-
սումնութիւն ձերով զայդպիսիսդ ղօղանջել
շաղիսաղիկք՝ ի լսելիս անիմաստ և տգէտ
մարդկան։ Յայնժամ հրամայեաց առաջի-
կայ զինուորացն քուռն հարկանել զերանել-
ոյն, և կախել գլխի՛ վայր, և քերել զնա.
և նոքա արարին զհրամայեալն. մինչև քան-
ցեալ մերկացան ամ մարմինք նր։

Նա ասպա ասէ քառնաւորն ցնքն. արդ ցո՛յց
մեզ, եթէ օգնի՞ քեզ ածն քո և հաւատքդ։
Խարղամ ասէ. օգնեաց և օգնեսցէ, ո՛չ մի-
այն ինձ, այլև ամենեցուն՝ որ կան և մնան
՝ի խոստովանութիւնս յայսմ. քանզի աստա-
նօր յայսմ ծի ընունելութեան և պատուոյ
արժանասցին, և՝ի հանդերձել յաւիտենին
զարքայութիւն երկնից ժառանգեսցեն։ Ին-
խանն ասէ ցսպասաւորսն. շա՛տ է արդ. առ
այժմ՝ի բանտ արգելուլ հրամայեմ. զի ըզ-
պարապումն առեալ՝ հղօրեղապէս տանջե-
ցից զդա։ Խարղամ ասէ. և այժմ իսկ նոյն
ածն է՝ որ եղև ինձ օգնական. և յորժամ
կամիցիս չարչարել, պատրաստ եմ ես. զի
ո՛չ թողու զիս ածն մեկնիլ՝ի սիրոյ իւրմէ, և
յանսպառ բարեացն՝ որ կայ և մնայ յուսա-
ցեալոցս՝ի նա։ Նա տարան զերանելին՝ի
բանտ։

Նա յետ աւուրց սակաւուց դարձեալ նստեալ
անօրէնն ինխանն պռիմիանոս՝ի վէր բարձրա-
գոյն բեմի՝ի մէջ քաղաքին, և ամ ամբոխ
քաղաքին շուրջ զնովաւ, հրամայեաց զնո-
ւոր

ոճորացն ածել զերանելին բարեզամ զաւուրս ջեաւ. և նոքա հանեալ ածին զնա կապանօք յատեան հրապարակին։ Յայնժամ ասէ ցնա իշխանն. հաւանեցուցեր զանձն քո այսուհետև ազատիլ ի ծնացեալ առաջիկայ տանջանացն։ Առակ ասէ. բազում անգամ լուար յինէն, եթէ ոչ եմ զառանցել յիմաստից, և ոչ զոհեմ դիւոց, և ոչ կարեմ ուրանալ զածն իմ և արարածող երկիրս պագանել. և այժմիկ զնոյն ասել քեզ ոչ դանդաղիմ. արդ արա վաղվաղակի՝ զոր ինչ և կամիս։

Իշխանն ասէ. կախեցէք և քերեցէք զդա երկաթի եղնգամբք. (այլք ընթեռնուն. քանցեցէք զեղնգունս դորա). զի դևն չար՝ որ ըմբռնեալ է զդա, ելցէ ի դմանէ։ Առակ ասէ. ես դև ոչ ունիմ. այլև ոչ ամենևին իմանամ զտանջանս քո։ Իշխանն ասէ. արդ ձանձրացայ ես, և պաշտօնեայքդ իմ վաստակեալ՝ ի բաց եղեն ի քէն, և դու ոչ հաւանիս. արդ տարածեսցի դա յոտից ի մէջ երկուց ծառոցդ և ձգտեսցի։ Եւ արարին զինուորքն վաղվաղակի, ոպ հրամայեաց բռնաւորն։ Ասէ բարեզամ ասէ. Ձչմարիտ ասեմ ի ձէն իմ յո քո, եթէ բնաւ ինչ ոչ թուէիցան ինձ տանջանարանքդ մեքենաւորք հնարից քոց, այ թերեւսացուցանելով ինձ զնոսա։

Պատմեալ ասէ իշխանն. զինչ ասես բարեզամ, զոհեսն և ազատիս, եթէ ոչ։ Առեզամ ասէ. ոչ գիտես, եթէ զինչ ե սէրն

քեի . վ՚ոյ սահպ յերկերես զհարցուճածս անարժանութեե : Յիսուն ասե . հաւանեա՛ ինձ . քանզի յերկար կախմանեդ փականք բերանոյ քո թողացեալ են , և յօդք մարմնոյդ քակեալ են . վ՚ոյ խնայելով՚ի քեզ՝ ողորմիմ ալեաց քոց , և ողոքեմ զքեզ՝ զի զոհեսցես և ազատեսցիս : Յարղամ ասե . ՚Ով իմով՝ որ յերկինս ունի զբնակութե , և յերկրի օգնական է նահատակաց իւրոց , ասեմ , ո՛չ լմացայ զտանջանսդ , և ո՛չ զոհեմ ապականացուճաց անոտեաց ընծոց . զի գրեալ է այսպէս , ՚Ածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին , կորիցեն ՚ի ներքոյ երկնից :

Յիսուն ասե . պարզեցէ՛ք զձեռս դորա , և ներքոյ դիք բազնին . և կնդրո՛ւկ արկէք ՚ի ձեռս դորա , և ջահ վառեալ մատուցէ՛ք ( ՚ի ներքոյ ) . եթէ անշարժ մնասցէ ձեռն դորա , տեսցուք . ապա եթէ թափէ՝ զոր ինչ ՚ի ձեռինն է՝ առաջի բազնին , զոհեաց : Ա՛յլ արիագոյն զինուո՛րն քեի կայր՝ ՚ի վեր ուղղեալով զձեռան , հեռացուցանելով՚ի բազնէն . և զաչս ՚ի յերկինս համբարձեալ ասեր . Վա՛ղ հօրդ , և քեի քո տայ զմարմինս իմ . հայեաց հաշտ ակամբ՚ի պատրաստ քնակութե քումմէ ՚ի ցրուե՛ալ և ՚ի վարատեալ ժողովուրդս քո , և զհեղումն արեան իմոյ՚ի մաքրութե սոցա համարեա՛ : (3)

Եւ այնպէս առաքինաբար ժուժկալեալ երանելին՝ ո՛չ արկ զկնդրուկն առ բազնովն . այլ՚ի վառմանէ հրոյն ձեռք նը առաւել հաւաքեալ և կծկեալ լինէր . քանզի տոչորեալ խո-

խորուվքը կայծակն զմարմին ՝ըզյ վկային , և զբարն ՝ի միասին ՝ի միմեանս ժողովքը . մին- չև ծակեր ՝ի միս կողմանէն ձեռքն (4) . և այնպես հանգուցեալով սիրոյն որ առ ՝ած նահատակ վրկչին , աւանդեաց զհոգին , վկայեալ յամսեանն նոյեմբերի իբ , յամի ՇՌն 283 , կամ 284 , ՝ի մեծն անտիոք յամն նու- մերիանոսի թագաւորի , յիշխանուԹենն պռոխիա- նոսի հիգեմոնի ( այ պատասխանի ) , ՝ի փառս անուանն վրկչին մերոյ յի քի , և ՝ի պայծա- ռուԹի եկեղեցւոյ նր ՝ըզյ ։

Օ քաջ նահատակս զայս պանծալի գովուԹիք ներբողեցին ՝ըզն բարսեղ ՝ի կեսարիա , և ՝ը- ոսկեբերանն յանտիոք . յորոց ՝ի բանից գոյզն մի Ճաշակ տացուք վկայասիրաց ՝ի կարգի ծա- նօԹուԹեց ։ (5)

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ՃԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ֆ։

(1) Յերկուց նշանակեալ Ճառընտրաց առաք վկայա- բանուԹիս ողջոյն , զլրԹնուԹիս և զմԹուԹիս ինչ բա- ռից և բանից պարզելով ևԹ մերով մասամբ ։ Վեր- նագիրն էր ՝ի Ա։ * ՎկայաբանուԹի սբոյն բարղամու , որ ,, վկայեաց յանտիոք մայրաքաղաքն ասորւոց ։ իսկ ՝ի Ճ։ * ՎկայաբանուԹիւն սբոյն բարղամու անտիոքացւոյ ։ ,, նոյեմբ։ իբ ։ որ և զնոյն օր ամսոյ երկրորդէ ՝ի վախճանի . և այսմ ՃայնակոչԹին յայսմաւուրք ամ ազգաց, որք ՝ի նոյեմբեր ամիս յիշատակեն զայս վկայ . վշ վրԹ- պակ Ճանաչէ գրեալն ՝ի Ճ։ Ա։ վ կատարման սբոյն ։ * յամենայն դեկտեմբերի , որ օր քսան և ուԹ էր ամ- ,, սոյն ։

Սկիզբն վկայաբանուԹիս է ըստ Ճառընտրաց . * Եւ եղև ,, ՝ը աւուրսն ( կամ ՝ը ժամանակսն ) ՝ը այնոսիկ Թագա-

,, ւորել հռովմայեցւոց՝ նոմէրիանոսի ամպարշտի. և
,, յերկրորդում ամի արքայութե իւրում (կամ Թագրուէն
,, իւրոյ) հալածանաց յարոյց ի վր եկեղեցւոյն ոյ ||ն։
Ընդ սա Թագրեաց ը եղբօր իւրում կարինոսի ի միջոց
երկուց ևեթ ամաց. վ̃ն երկրորդ ամ̃ն անկանի յամ
ն̃ն 284. որ է սկիզբն Թագրութե յայլորդի ն̃ր դիոկղե-
տիանոսի։

Զնոյն վկայաբանութի քազէ և Յ. բս. և ժմ. իսկ Հ.
առաւել ևս համառօտէ՝ զվերջին տանջանս ևեթ յիշե-
լով ը ոսկեբերանի։ Ընդ այն է կարևոր գիտելին, զի
ոչ Յ. նոյնպէս և Հ. զանուխք ասորւոց յիշեն համա-
ձայն ձառընտրաց. և յաւելու Յ. ժմ. յիշել և զայն,
թէ զսա * պատուական ոսկեբերանն ներբողնիւ պատ-
,, ուհեաց ||։ Ոչ և սուրիոս չկարացեալ ի ձեռս բերել
զբուն վկայաբանութի մեր՝ շատանայ ի մէջ բերել զլուկ
ներբողեան սբ̃ն ի մեծէն բարսղէ կեսարացւոյ։ Ուս-
տի մտեալ է և յայտնի վրիպակ ի Լ. ոչ թէ ի կե-
սարիա նահատակեալ էցէ սբ̃ն բարսղաւ, գրելով այսպէս.
* ի կեսարիա կապադովկացւոց՝ սբ̃ն բարսղաւոյ վկայի-
,, որ թէպէտև չինական և տխտար, խոստուութբ̃ն քո̃ի
,, զօրացեալ յաղթեաց բռնաւորին. և դեր ի վերոյ խակ
,, գտաւ քան զհնար ամրութբ̃ հաւատոյ. յորոյ ի փոխ-
,, մանն աւուր սբ̃ն բասիլիոս մեծն խօսեցաւ ձառ հրա-
,, շակաւոր ||։ Ընդ զայս սխալանս դիւրաւ ուղղէր բա-
րոնիոս, եթէ տեսեալ էր և զձառն ոսկեբերանի խո-
սեցեալ յանուխք. և չէ մարթ այլևայլ բարսղաւ գնել ի
կեսարիա և յանուխք. վ̃ն զվերոյ վկայէ խօսին հարք և
վկայաբանք առ հասարակ։

Ի նոյն հարց և ի վկայաբանից ուրեմք իմաստասիրել,
թէ երբն բարսղաւ ոչ էր եպս կի քահանայ, այլ՝ ծեր ոմն
Ծական. վ̃ն և վրիպակաւ եդեալ է ի ժամացոյցս մեր
եպս. ապաքէն մեկն գրէ և Հ. * սբ̃ վկայն քո̃ի ծե-
,, րոնէին բարսղաւ ||. և Յ. բս. * Բարսղաւ վկայն...
,, ծեր հասակաւ ||. կամ Յ. ժմ. * երէց հասակաւ ||.
որ յունարէն ասի. բռնովիէռս դէն էլդէան. զոր թեր-
ևս ընթերցեալ ոմանց դէռ էգգլիսէաս. համարեալ են
երէց եկեղեցւոյ, և կի խառնելով ը բաբելայ անուխ-
քայ հայրապետի զբարղաւ անախոքացի՝ անուանեալ են
եպս. զր և յօրինակի միւսմ Հ. սևերիանոս սեբաստա-
ցին կոչի եպս՝ յայտնի սխալանօք։ Ի լուսանցս ժամա-
ցուցի միոյ՝ փոխանակ բառիս էպս, ուղղագրութբ եդեալ
է ծէր. որոմ ոչ հաւանեալ այլոյ՝ ի վր ածել է կրկին

զբառդ

ղբաստ հայրապետ։

Ա յսչափ տարբացեալ սխալանաց ուղղագրութեն անկ է առաջնորդն ազգին, որ քաջ քննութեբ հոգ տանել կամ ցն տօնացուցին, ոչ ըստնուին այլափոխելով, այլ ըստնագոյն աւանդս հաստատելով։ Եւ չօգտէ ինչ ասել. թէ վկայաբանութեն սբյն բարեմտութ և պանծալի յատենախոսութիւնս իբրեւ ի բերանոյ ճշմարտան վիպի, ոչ և աղօթք նը ի կատարման՝ իբրեւ ի բերանոյ առաջնորդի. զի դժուարաւ այլ ևս հոգւով սբվ և աչխոյժ փառացի՝ կարի իսկ քաջ բարբառեր զայնպիսիս։ Զէ ինչ տարբերութեն հնչմանն անուճան սբյն. որ ի Հ. և ի տպագրեբ տօնացոյցս դրի բարեպատ. իսկ ի Ճառընտիրս և յայժմ ձեռագիր տօնացոյցս բարեպատ. որ առաւել մերձենայ առ յունականն բարեպատ։

(2) Ջնչանակութեն հին բառիս՝ որ ի Ճառընտիրս, կըղէօփ կիճ կաչէօփ անէղբէօփ, բացատրեցաք ըստ Յ. բս. և ժմ. ուր դնի վանէ՛լիօ, ըստ աղքատաչէօփ։ Ա յժմ թէ որ ընթերցուածն ի կարգի այլ տանջանաց սբյն լցէ ուղղագոյն. արդեօք աչն, որ ասի ի ճԺ. * երկաթի եղէնգամբք || . ըստ եղնգամբք՝ քանզի մարմին սբյն, եթէ այն՝ որ գրի ի Յ. բս. և ժմ. * և եղնգունքն քանզի || սբյն, այլոց թողութեմբ քննել. զայս գիտեմք, զի թէ յաւելցես ի չն. զնախադրութեն՝ պէս, ըստ է չէ՛ն, նոյնանայ ընդ ըստ ճԺ։

(3) Յայս ակնարկէ ասելն սբյն բարեպատ ի գովեստ սբյն բարեպատու. * Ո՛չ հայի ի վիշտս, այլ ի պատկառ վկայի. ոչ խորհի ի հարուճածոց, այլ ի թիւր արկանէ զբարեբիոնս. ոչ հայի յորս ի սատրև գահիճս տանջողականս, այլ յորս ի վերուստ բարեհամբաւիչ հրեշտակս վերակնէ. ոչ նկատէ յառաժամանակեայ անցս տանջանաց, այլ ի վարձուցն սքանչելեաւորութեն։ Պայծառ և առ մեզ արդէն զբրաւականն գրաւեն, առ ի յամենեցունց ճշմարիտն բարեհամբաւութեբ հռչակեալք, և բիւրաւորս առ գերեզմանս իբրեանց համախմբեն ժողովուրդս ||։

(4) Հ. և Յ. ասեն ըստ ոսկեբերանի, թէ հուր և կընդրուկ վիճակաւոյն եղան ի ձեռս սբյն. ըստ որոյ եղաւ և ի Ծաղկին մեր. բայց այսու ամիճ համաձայն Ճառընտրացդ դնէ բարեպատ զհուրն ի ներքոյ ձեռին, կամ ի վերոյ և ի ներքոյ. ըստ այսմ նկարի և պատկեր սբյն ի Յ. այսպէս. Ա ուստի բազմին, ըստ սեղանոյն՝ յորում կայ կուռք բազմեալ, վառեալ կայ հուր. և ոմն ի զինուորաց բռնի կա-

կալեալ զձեռն սբյն բարլաամ (ոգի թէ կնդրուկ կայ ցե ինձա), ձգե գեպ ի հուրն. իսկ նա վերեաս ի կոյմն մի ջրջեալ՝ արձանագիր կայ անշարժ: Յօրինակին Ճ. Ա. գրի. * և ի ներքոյ (ձեռին) տարածեցեք հուր ||. և ի Գ. * ջահ վառեալ մատուցեք (ի ներքոյ) ||. որ է նոյն:

Այսոքիկ չեն ինչ. այլ այն է արժանի գիտելոյ, զի ոսկեբերանն զայս ևեթ ասացնա առնու ի գովեստի՝ գրի թէ բացասելով զայլ ասելոյն, ոչ և Հ. զայն միայն ասէ. և սակայն բարեպէտ զայլ ևս ասելոյնս նկարագրէ համաձայն վկայաբանութեանս. յորմէ իմանաս, թէ պակասական և բացասական ձեռնարկք ի հնումս ինչ ոչ զօրեն. զի ոմն զայս, և ոմն զայն ի բաց թողու: Վասնի այս և ապացոյց, թէ ոչ երկուս սբեք են, և ոչ միոյ վերպէս ճառք երկուս ի վր նոյն սբյ. այլ ճառք երկուց վերպատ ի վր մի և նոյն սբյ. յորոց ժամ է քաղել ինչ ինչ յօգուտ լսելեաց:

## Ծաղկափունջ ներբողական ճառից բարսղի և ոսկեբերանի ի վերայ սբյն բարլաամ:

(5) Ի գործս մեծին բարսղի կեսարացւոյ. փպ. յն. և լփ. հապ. է. երես. 138. ճառս խե. մակագրի. * Ճառ ի բարլաամ վկայն ||. ուր յօրինակս ինչ ի վերայ բերի, * որ յանտիպ վկայեալ ||: Եւ ունի բանն այսպէս. * Յառաջագոյն սբեցն մահք՝ ողբովք զարդարէին, և արտասուօք. ողբաց յոյժ յովսեփ զյակովբ վախճանեալ. և ասաղ. . . իսկ այժմ սբեցն կատարմամբ խրախանամբ. վասն զի արամականացն՝ զկնի խաչին՝ յեղափոխեցաւ բնութիւն. . . զի քուն է արդարոց՝ մահն. մանաւանդ թէ ի լաւագոյն կեանս չոր. ուստի խնդայտն ի զեն. ման վկայք. վ՞ զի երանագոյն կենաց ցանկութիւն զսպանմանն ցաւ մեռեալ կացուցանէ. ոչ հայի ի վիշտս, այլ ի պակաս՝ վկայն. . . (և յերկրի իսկ փառաւորի): Սոյն այս ընդ առաքինին այսօր բարլաամ գործեալ (տեսանի). . . մեռաւ առաքինին բարլաամ, և համամեալ զամենաժողով ժողս. լուծանի ի գերեզմանի, և հրաւիրէ զամենեսեան ի կոչունս:

Այժմ է մեզ ժամանակ գոչելոյ. ո՞ր խմաստուն, ո՞ր գուխիր, ո՞ր քննիչ Տիս այսորիկ: Ընկեր մեզ այսօր՝ անպարտելին բարեպաշտուհին վկ. զոր ձգեր զբանս

,, բռնաւորն իբրև դիւրըմբռնելի որս. այլ ծանեաւ
,, զկնի փորձոյ սպառազէն (գՀ) անձեռնարկելի. զը-
,, րով ծիծաղեր իբրև զանպատշաճ խօսելեաւ, այլ զա-
,, հի՛հարաւ՛ի հրեշտակակերպ ըղբացելոյն. զի ոչ բաղ-
,, բարոսանայր զոյդ ը գործարանի լեզուի և եղանային,
,, և ոչ ը փաղաւուեցեց խեցեղեկացոյն երևէր և մաս-
,, ծուեցին. այլ՝ էր երկրորդ պօղոս՝ ընդ պօղոսի բաղ-
,, բառելով. թէպետև տգէտ (կիմ ոմանկ լսեմ) բանիւ,
,, այլ ոչ գիտուեցը :
,, Ամբրեցան գահիճք տանջողականք, այլ առոյգագոյն
,, վկայն գաւառն. քերողացն վաստակեին ձեռք, այլ
,, քերելոյն խորհուրդ ոչ խոտորեր. ղջլացն՝ հարուճածք
,, լուծին զմիաբանուեցիւն, այլ հաւատոյն սերտագոյն
,, պնդեր ամրուեցն. քանցեաւ կողք վանեցին, այլ խո-
,, հականուեցեն ծաղկեր խմաստասիրուեցի : Մարմնոյ
,, նր առաւելն մեռեալ էր. այլ ոչ թէ չև մրցանաց
,, սկիզբն արարեալ՝ բարգաւաճ գտաներ. զի յորժամ
,, բարեպաշտուեն տեղ զոգին նախագրաւեր, զնմն նա
,, պատերազմաց ծաղկէ զաեսակ. և ամենեքին՝ ոյք զնա
,, խոշանգեն յաղագս տեղագս ասելոյն, զուարճացուցա-
,, նեն առաւել՝ քան տանջեն. ( զր առաքեալք գնացին
,, յերեսաց ատենին խնդալով. են ) ...
,, Ասպիսի է և մեզ այսօր վնասուցս գրոհասեր. ու-
,, րախուեցն զանջնան համագեալ, վարդիւք ոմամբք
,, չուրջ արկանիլ վարկուցեալ հարուճածովք գանից ...
,, իբրև ը պահակ՝ ը վիշտն պարեալ. վիրաք ոչ պատ-
,, ուճովք խնգամաեալ. խոտագոյն կտտանօք՝ ոչ պայ-
,, ծառագոյն բրաբիոնօք հրճուեալ. զատերս քամա-
,, հեալ մերկեալս. զձեռս գահճայ իբրու քան զմամ
,, կակղագոյնս ընկալեալ. զտանջողական փայտն իբրև
,, փրկական ողջուներալ. փակարանօք բանտին իբրև
,, դաշտավայրիւք զուարճացեալ. նորահնար տանջանօք
,, ոչ գուներակ գուներակ ծաղկօք հեշտացեալ :
,, Քան զհուր բռնագոյն աչ սացեալ. որ վերջինն նմին
,, առաջն եգաե մեքենայ՛ի պատերազմոյց ... (և յետ
նկարագրելոյ զպատմուեցին համաձայն վկայաբանուե՝
յարե. ) Քանզի հուր ընդ ձեռին բաղևեր՛ի մարտ, և
,, հրոյն լիներ՛ի պարտուել մատնիլ. ը բոց և ը վկայիս
,, աչ յարդարեալ լիներ բռնամարտուել, այլ եր աչոյն
,, նոր ինն յաղթուեցի մրցանաց. զի բոցն ը մեչ ձեռին
,, անցեալ՝ անկանէր, բայց ձեռն տակաւին ձգել կայր՛ի
,, բռնամարտ. ո՞ ձեռին յաղթականի ը զհուր. են...
,, Զի՞նչ

,, Զի՞նչ զքեզ աւվ քաջ քա՛ր զօրականդ յորջորջեցից ։
,, անդրի՛ կոչեցից .... եթէ երկաթի անուանեցից ...
,, Ա՛յլ զի՛ե ինձ մանկականօք նուճասացուցանել զքաջն
,, Թոխոմանօք ... արիւք ինձ արդ աւվ ճարտար կենդա-
,, նագիրք նահատակական արուեստից , զզօրականիս խա-
,, թարէ՛ պատկեր ձերով զծագուցէք արհեստիւք ։
,, զնաեմագոյն զառ յինէն գծագրեալս պատկառո՛ ձե-
,, րումդ խնամուէ պայծառազարդեցէ՛ք երանգօք ...
,, գրեսցի՛ ի տախտակի անգ և մրցանացս հանդիսա-
,, գիրն քո ։ որում փառք յաւիտեանս ամէն ։

Ուր ծանօթ ասէն յունականս գառնիկեր բնիկ գիկաեան առ ։ * Ոչ ոք ժխտէ զայս ճառ լինել չքնաղ և պանծա-
,, լի ։ այլ թէ բարսղի՛ իցէ, եթէ ոսկերբանի , մարթ
,, է ոստիք երկբայիլ ։ և ի յառաջաբանական քննուիս
այսպէս սկսանի խօսել ։ * Ա՛յս ճառ ներբողենի բար-
,, զամբ վկային՝ թէպէտև համառօտ , այլ այնպս գե-
,, բասանդ և չքեղ գաղնի , մինչ զի հեղինակ նո՛ր ։ ո՛ ոք
,, և իցէ, երևի արգեամբք ոտնել զդերագոյն տէղի ի
,, մէջ հռետորաց ։ և ի՛ մէջ բերեալ զայլևայլ կարծիս
քննչաց՝ յորոց ոմանք բարսղի , և ոմանք ոսկերբանի
կամին ընծայել , ինքն ևս չանայ ստահականել ոսկերբ
րանի ։ Ա՛յլ մեք ոչինչ բաւական պատճառ տեսանեմք
ժխտելոյ բարսղի զգործն՝ որ զանուն նո՛ր բարձեալ բե-
րէ ի սկզբանէ հետէ ։ Թող զի կայ առանձին ճառ ոս-
կեբերանի՝ որ ոչն չատ միաբանի ընդ սմա ։

Եւ ծալբսական Թոռէի ենթադրութիւնն այն կրնխտացս
բաղմաց , ոչ թէ ի գնել զայս ճառ լինել գործ բարսղի,
գնելն իցէ նահատակութիւն բարսղամբ ի կեսարիա կա-
պադովկացւոց ընդ Լ։ ուր այդպիսի հեռաւորութիւն ոչ բատ
ինչ ան զօրէ , և ոչ ի ճառէ ատսի քաղի ։ զօր եթէ ի
քաղաքի իւրում, և եթէ այլուր խօսել իցէ բարսղն ,
չէր խոր ։ զի նկարագրէ զտեղի կատարման սիրն ա-
ռանց յիշելոյ տրոշակի՝ ոչ քաջածանօթ ամենեցուն էր
նեղ յանախորդ ։ Ա՛յլ մեք լռելոյ և զգոյեցա սիրն ,
զոր խօսեցաւ յանախորդ ներսին ոսկի ։

ի կարգի գործոց յովհ. ոսկեբերանի ։ պա. յն. լթ. հապ.
ը. երես. 681 ։ կայ հարազատ ճառ նորա մակագրեալ ։
* Ներբող ի նո՛ր վկայն բարսղամ ։ և սկիզբն և ընթացք
նո՛ր է ըստ օրինակիս ըստ այսիկ ։
* Համախմբեաց զմեզ ի սէր այս յամենաժողով տօն է-
,, րանելին բարսղամ. ոչ զի զնա գրոհատեցուք , այլ զի
,, նմին նախանձաւոր լինիցիմք ։ ոչ զի լսելիք լինցուք
,, ներ-

,, ներբուղենի, այլ վի նմանօրք եղկոյք նորին ուղղու-
,, թեցն։ Գիտեմ, զի ոչ հալածանաց է ժամանակս,
,, այլ մարախրոսութ ժամանակ է։ Նոյնպիսեաց մրցա-
,, նաց չէ ժամանակս, այլ պատկաց ժամանակ է։ ոչ
,, հալածեն մարգիկ, այլ հալածեն գիք։ ոչ տեսանես
,, կայծակունս առաքեալս, այլ տեսանես զբոց ցան-
,, կուե վառեալ։ Ա՛չ երբեք ունիմք դադար ի մար-
,, տէ առաւ։ ոչ երբեք է մեզ պարապորդութեի յառա-
,, ջնկայս կենցաղ, այլ հանապազօր մրցումն։ զի և պայ-
,, ծառ պատկն լինիցի։
,, Ջոր օրինակ երանելի և առաքինի նահատակն քրիս-
,, բարեպատ արար ի վր ձեռին իւրոյ, զբոլորն յաղ իւր
,, բարձեալ զնարոյկ։ և առ ցաւսն ոչ ընկճեալ, այլ
,, քան զարձանս անչարչար ցուցեալ։ մանաւանդ թէ
,, ցաւագինէր և չարչարիւր, զի մարմին էր՝ որ ի ներ-
,, քոյ կայր, և ոչ երկաթ։ այլ ցաւագնեալ և չարչա-
,, րեալ՝ զանմարմնին զօրութեց ի մարմնի մահկանացուի
,, վնասատարութեն ցուցանէր։
,, Ապարեզ (կամ վարժարան) վկային բանսն էր, և
,, անգ առանձին ըզ ած խօսելով, առ ի նմանէ զմրցանս
,, ուսանէր բովանդակ։ զի ուր կապանք այնպիսիք,
,, անդ և քո առընթեր կայ։ արդ ելանէր գայր՝ հզօրա-
,, գոյն եղեալ յերկարագոյն բանսն բնակուէ։ և զոր
,, էրն՝ ի մէջ ածեալ բանսարկուն ի ձեռն պաշտօնէից
,, իւրոցն անօրէնուէ, ոչ ի փայտ կապեաց, ոչ շուրջ
,, պատեաց դահճօք։։։ այլ օտար և նոր մեքենայ ան-
,, ակնկալ մատոյց յաշտարակ անդր, գիւրագոյն առ-
,, նել զնարաւոր զանկուածն։։։ Ջձեռն հրամայեալ
,, ձգել շղթան ի վր բազկին՝ կայծակունս ի վր եդին,
,, և կնդրուկ ի ձեռն։ զի թէ ցաւագնեացի և չքնեացե
,, զձեռն, զոհ նմին և ուրացութեի զնրան համարեսցին։
,, Տեսանէր, զնարդ չարարուէսաս է բանսարկուն։ այլ
,, ոչ զնամբդ որ ըմբռնէն զնմասատունս ի խորագիտու-
,, թեն իւրեանց, անկործ արար զնր մեքենայն, և զնոր-
,, հրդոյն առաքինուեի և զչարարուէսաուէ հնարս՝
,, ածուածն և առաւելուեի մեծագունի փառաց պատ-
,, րաստեաց լինել վկային։։։
,, Քանզի եկաց ոճաց երանելին բարեպատ՝ անխոնարհե-
,, լի և անգարձ պահեալ զձեռն, իբրև յերկաթոյ ձու-
,, լեալ ունելով։ Թէպէտև եթէ դառնայր իսկ ձեռն,
,, և ոչ այնպէս չանցանք էին վկային։։։ այլ սակայն
,, ոչ այնպս գործեցաւ։ զի առաւելուեի ուսանիցին,
,, եթէ

,, եթէ ոյ ընդհն էր մատակաց և զօրավիգն նահատա-
,, կին, և բնութեն պակասութեն ուղիչ. որ ոչ գիւրան
,, կրեաց յայսմ մասին, այլ ոյզ անդամանդեայ բնաւո-
,, րեալ ձեռն այն՝ այնպէս անդառնալի ճաց . . .
,, Դէսանն ունէին ի վերուստ հրեշտակք, նայէին հրեշ-
,, տակապետք. պայծառ էր տեսարանն, և գեր ի վեր
,, ամիւ քան զմարդկեղէնս բնութեն. զի ո՞ր ոչ ցան-
,, կանայցէ արդեօք տեսանել զմարդ ճգնեալ, և ոչ
,, կրեալ զմարդկայինս. զնոյն ինքն զոհարան և զոհ և
,, քահանայ եղեալ. վայ և կրկին ծուխ ի վեր դիզա-
,, նայր, կնդրկի վառելոյ, և մարմնոյ հալելոյ. և էր
,, այս ծուխ ք զայն ախորժագոյն, և այս անուշահոտու-
,, թիւ քան զայն գերագոյն . . . Ա՛յրէր աջն, այլ ոչ փա-
,, ղաղէր հոգին. վասնէր մարմինն, այլ ոչ ծախէր հա-
,, տաքն . . . կայծակունք ը՛ մէջ ձեռին ծակէլոյ ի վայր
,, անկանէին, այլ արուեցեալ ոգւոյն ոչ կործան անկա-
,, նէր . . . . .
,, Վայ և զձեզ ի գերս սէից վկայիցն ածաք, զի և ի տե-
,, սութէ առջիք զաղօթս իմն առաքինութեն, և ի նոյն
,, նահանձ վառեալք . . . . Չի յորժամ տեսանիցես
,, զայր այսահար զգերեզմանաւ վկային անկեալ, և պա-
,, տառեալ տէպ անձամբ զանձն, ոչ ինչ այլ՝ ը՛ եթէ
,, զգլուխ չարին հատեալ տեսանես . . . . Ասէր արդ
,, զմրցանս, զի յաղթութեն նմանօզ լինիցիս. ( և այլ
,, իսրատք աքանչելիք ) . . . . . զօրական ես քո՝ սիրե-
,, լի, սպառազինեցիր, և մի պշնիր. նահատակ ես ա-
,, ռաքելի, այրացիր, մի զարդարիր : Ա՛յսպէս նմա-
,, նեացուք սէից այսոցիկ. այսոյն պատուհասցուք զքաջա-
,, պատկառուրս, զնոյ բարեկամս. և զնոյն ընթանալով
,, ը՛ նո՛ն ճանապարհ՝ նոյն պակաց նոցին հասանիցեմք.
,, որոյ լեցի մեզ ամենեցուն հանդիպել շնորհք և մաղ-
,, թասիրութիւ՛ն մերոյ Յի՛սի քի՛. ը՛ որում հոր փառք՝
,, հանդերձ սո՛ւրբ հոգւո՛վն, այժմ և միշտ և յաւիտեանս
,, յաւիտենից. ամէն ||։

## ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՏՕՆԻ

### Աջց Աւօթն Մանկանցն Եփեսոսի։

Ո պատմուէ՛ն սոյա գիպեա յաւաչնոմ կարգէ
■ ՝ տօնէ էրեանց ընդ Էդոդոսէ Ելեալ է՛ հարկն
ապայէց · ու՛ր և նշանակէցաւ յերես · 157 · ղպա-
ճառ կրկնուէ՛ տօնէ նոցա հաւանական՝ առ մեղ և
առ այլս , զէ գուցէ մեն հայէ՛ է՝ նանչուն նոցա , և
դեան՛ է յարուէ՛ն · Լո՛ղ զէ և այլ պէսպէս պատ-
ճառանօք լինէ կրկնուն տօնէց ոմանց ոմանց՝ է ա՛ց ։



# ՎԱՐԴԱՆԱՆՈՒԹԻՒՆ

Աքէն Պետիանոսի հռովմայ հայրապետին, և քահանայիցն և սարկաւագացն և ժողովրդոցն :

Ի. նոյ. 3 : Յ. Լ. օգոստ. 2 : և ևս Լ. յուլ. 26. օգոստ. 1. և 15 : և հոկտ. 31 : Ընդլանդեանն պատէոս. ի ա. հատ. օգոստ. էջ. 112 = 149 : Ա էպոֆէր. առ սուրբ. հատ. ք. էջէս. 497 = 502 : Ընտասաս գրպէպ : Ընարունէոս յամի. 259. և այլք : (1)

## ՊԱՏԿԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Աքէն Պետիանոս հռովմայ հայրապետ, որ ըստ հին վկայաբանի Ճառընտրայ մերոյ՝ ոչինչ նուազ էր ըստ աթոռոյն օրինակի նմանօղ եղեալ առաքինութեամբ և վկայութեամբն՝ պետրոսի գլխաւորի առաքելոցն, էր ազգաւ հռովմայեցի՝ որդի յուլիոսի (կամ յովլիոսի, կամ յովիոսի), սարկաւագապետ եղեալ երկուց ծայր քահանայապետաց՝ կուռնելիոսի և ղուկիոսի. որք յաւուրս քան զկատարումն իւրեանց վկայական մահուամբ՝ ի նա յանձն արարին զիւր ինչս եկեղեցւոյն : Եւ ապա ընտրեցաւ ի յաջորդութեան գահին նոյ յամի ՀՈՆ

253 կի 254։ քսաներորդ երրորդ եպս եղեալ
Հռոմայ զկնի Պետրոսի ։

Ի սկզբան քահանայապետութենէ սորա՝ ի մեռանիլ գաղղոսի և վղուսիանոսի կռապաշտ կայսերաց Թշնամեաց Հաւատոյ , յորժամ նստաւ Եմիլիանոս եռամեայ ժամանակաւ , փոքր մի դադարեաց Հալածուածն եկեղեցւոյ ։ և իբրև նստաւ վաղերիանոս կայսր՝ աթոռակից ունելով զորդի իւր գաղեանոս , զառաջինն իբրև զամս երիս խաղաղութիւն էր ընդ քրիստոնեայս ։ Ի ոյ և ստեփաննոս Հայրապետ դիւրաւ տնաներսէր զամ իննամն ի վր Հօտին քոյ ընդ Հոգևոր և ընդ մարմնաւոր պիտոյից անգամ ։ և այն մինչև ի հեռաւոր վայրս աստուծոյ և արտաքացւոց , ընդ վկայելոյ Պետրն դիոնեսիոսի աղեքսանդրու Հայրապետի ի Թղթի անդ իւրում առ սա ինքն ստեփաննոս ։ ( ոյզ կ տեսանել ի պատմութենէ եւսեբի կեսարացւոյ ։ է ։ 5 ։ և 10 ) ։

Եւ զոր օրինակ զմօտաւորս բանիւ բերանոյ իւրոյ , նոյնպէս և զբացակայսն գրովք մխիթարէր և հաստատէր ի ճանապարհս ճշմարտութենէ ։ և զխոտորեալսն գուն գործէր յուղղութիւն ձգել ։ յորոց սակի իբրև անուղղայ գտանէր զմարկիանոս արեւելեան եպս ի գաղղիա զղառաածեալն ի հերձուածն նովատիանոսից , ի բաց ընկենոյր յաթոռոյն , և զայլ ոք ի տեղի նր կարգէր , ընդ բողոքարկութենէ թղթոց լմաստուն առաջնորդաց , ընդ որս և ոբյն կիպրիանոսի եպսին կարքեդոնայ ափրիկեցւոյ ։ Ոսկ զբաւսիլիդես և զմար-

տիաղէս եպսունս սպանիացւոց՝ որք մերժել էին յամօռւոց իւրեանց՝ ի ձեռն եպսաց Հին իբրև յանցաւորք, ՚ի դիմել նոցա առնս և յարդարացուցանել զանձինս, և առաւել՝ ի ցուցանել զզեղջ և զդարձ ՚ի գործոյ ինչ դայթակղութեանէ, հաստատեաց անդրէն յիւրաքանչիւր աթոռս. բայց քանզի գաւառականքն կացուցեալ էին զսաբինոս ոմն ՚ի տեղի բասիլիդեայ, և զփեղիքս ՚ի տեղի մարտիաղէսի, եղև խռովութիւն ՚ի միջի. և նոր ձեռնադրեալքն գնացին առ Ծբն կիպրիանոս, և ՚ի նմանէ և աւելին հաստատութիւն բարեաւութեանէ իւրեանց, և անարժանութեանն անկելոցն. ոպ թէ նք սուտ զղջմամբ շահեալ էին զսիրտ ստեփաննոսի հայրապետին:

ԿԱՅ մինչև եր լուծել այս կնճիռն դժուարին (որոյ կատարածն անյայտ է ՚ի պատմութենէ), յարեաւ այլ երկպառակութիւն մեծ յեկեղեցւոջ վ՚ն խնդրոյ մկրտութենէ հերետիկոսաց. քանզի Ծբն կիպրիանոս յափրիկէ, և մեծն փերմիլիանոս արքեպս կեսարու կապադովկացւոց յարևելս, ձայնակից գտեալ ինքեանց զոչ սակաւս յեպսաց ժամանակին՝ ՚ի կենդանեաց և ՚ի վախճանելոց, սնդիկին՝ թէ որոց միանգամ ընկալեալ էին զմկրտութենէ՚ի հերետիկոսաց կամ՚ի հերձուածոց արտաքոյ կաթուղիկէ եկեղեցւոյ, զայնպիսիսն պարտ է վերստին մկրտել յեկեղեցւոջ ուղղափառաց: Եւ յայս վրիպական կարծիս այնպես հաստատեալ եր կիպրիանոս և վա-

ռեալ

ռեալ նախանձայուզութիւք , մինչև երկիցս
ժողով գումարել եպասց Տին իւրոյ ի կար֊
քեդոն , որ և կարեաձիկն , յամի 255 , և
256 . և հաւանութիւք նոյ գրել առ երանե֊
լին ստեփաննոս Հռոմվայ Տայրապետ՝ միա֊
բանիլ ընդ իւրեանս ի նոյն միտս , ասելով՝ թէ
* այս է բարեպաշտ՝ միանգամայն և Տշմա֊
րիտ վարդապետութիւն ։

Լսակ ոք Տայրապետն ստեփաննոս՝ որ իրա֊
գէտ էր , թէ այն է վարդապետի օտար ի բա֊
րեպաշտութենէ և ի Տշմարտութենէ , և Տաստա֊
տուն ունէր զառաքելական աւանդութիւն՝
թէ չէ օրէն զիմանգամ մկրտեալն օրինօք ընդ
կերպի ուղղափառաց յումեմէ և ի նոյն կրկին
մկրտել , և արՏամարՏ ցուցանել զանչինչ
Տնէք քՏական խորՏրդոյն , զնեցյաւ իբրև
քաջ Տովիւ և վարդապետ Տշմարտութեանց կար֊
ծեաց կիպրիանոսի և ՏամախոՏից նոր ։ և
գրեաց կոնդակ Տայրապետական՝ առաքե֊
լական իշխանութիւք առ կիպրիանոս և առ
արևելեայս , պատուիրելով նմ իբրև եպս
եպասց և ոչ յաջորդ պետրոսի վիմին Տաստա֊
տոյ՝ ի բաց կալ յայնպիսի նորաձայն վար֊
դապետութենէ . և ի վերայ Տած՝ ասելով .
* Արդ եթէ ոք յորմէ և իցէ Տերձուածոյ
,, գայցէ առ մեզ , ոչինչ նորաձևուն գործեաց
,, յն . բայց միայն՝ ընդ որում աւանդեցաւն՝
,, ձեռն դիցի ի վերն նոր յապաշխարութիւն . ուր
,, և նոքին իսկ տիրապէս հերետիկոսք՝ զառ
,, ի միութենոյ եկեալն առ ինքեանս ոչ մկր֊
,, տեն , այլ Տաղորդեն ևեթ ։ Ո այսոսիկ

գրեալ՝ ստացաւ միանգամայն եւ բանիւ առնել ղորս միանգամ անլսօղ գտանիցին ա-
ռաքելական աւանդից ։

Ընդ որ ծանեաւ այս բան Հայրապետին ի լսելիս կիպրիանոսի եւ փերմելիանոսի, եւ
եւս քան զեւս զայրացաւ երկպառակութիւնն աւելի ք զամ ի. քայց յետոյ եւ մեջ մտեալ
սբն դիոնեսիոս աղեքսանդրացի եւ այլք յա-
ռաջնորդաց՝ հաւանեցուցին զսբն ստեփան-
նոս հռովմայ հայրապետ քաղցրութիք ամո-
քել զանգիտութիք սխալեալսն, քան խստու-
թիք յանդիմանել. եւ այնպէս լուծին խափա-
նեցան առաջիկայ չարիք պառակտման եկե-
ղեցւոյ. իսկ ողջամիտ վիշտուն ոչն ստե-
փաննոսի վ՚ն անկրկնելի գոլոյ մկրտութիք՝
ինքնին արմատացաւ յամ եկեղեցիս ուղղա-
փառաց, եւ էանց ի սահմանս յետագայ ժո-
ղովոց ։

Ընդ հանդարտիլ ներքին խռովութիք եկե-
ղեցւոյ՝ դարձեալ միւսանգամ յարեաւ ար-
տաքին խռովութի սաստիկ հալածանաց յե-
րեսաց հեթանոսաց. քանզի վաղերիանոս
արքայ հռովմայեցւոց՝ որ յառաջագոյն ոչինչ
հակառակ ընկն քրիստոնէից ցուցանէր,
այլև կարի եւս սիրելի՝ խորամանկութիք իւ-
րով, ապա պատրեալ ի կախարդաց եւ ի
քրմաց, եւս առաւել չարեացն դըր-
դեալ՝ զոր կեղծաւորել ունէր, սկսաւ հա-
լածել զհաւատացեալս քն՝ զարս սբս եւ
զարդարս. զի տայր ըմբռնել զնս ընդ ամ տե-
ղիս, եւ խոստմամբք եւ սպառնալեօք հրա-
պու-

պուրել՝ ի մոլորութեն կռոց. և զորս ոչն ան-
ասային անօրէնն առաջարկութեն՝ դառն տան-
ջանօք կորուսանել հրամայէր։

Յայնժամ երանելին ստեփաննոս հայրա-
պետն Հռոմայ ժողովեալ զնմա ուխտ եկե-
ղեցւոյն՝ ասէ. Աղաչեմք իմ, այս մի լինի՝ ի
ձէնջ ծածկեալ, զի՝ ի ձեռն շրթանց բռնա-
ւորաց նոյն ինքն բանասարկուն խօսի, և ածէ
զքրիստոնեայս յանձողոպրելի տանջանս և
պատիժս. և զոր ինչ հալածիչքն մոռացեալ
էցեն, դևն օրըստօրէ յուշ առնէ նոցա. նաև զմե-
ծուն և զփառս՝ որով յաղթին քեզմէ՝ ի թուլա-
ցեալոց, թէ լադրուեալ չտրին առաջի արկանեն
բռնաւորք. այլ դուք ոմն սիրելիք իմ, մանա-
ւանդ թէ ըստ աւետարանական քարոզութեն
և հոգևոր վերստին ծննդեանն՝ որդիք հա-
րազատք, եկայք՝ ի բաց թօթափեսցուք զեր-
կրաւորս յերկիր, և թեթևացեալք հոգւով՝
վերաբերեսցուք յարքայութեն երկնից. և
մի՛ երկիցուք՝ ի մարմնական տանջանացս՝ որ
առժամանակ մի է, այլ յայնմանէ՝ որ զհո-
գի և զմարմին տանջէ, որ յաւիտենականն է։
Յայնմ վայրի՝ որ քահանայն բռվէնոս (այս է
պօնտաս, որ՝ ի բարբառ հռոմայեցւոց էառէ
լսի) եղև բերան բազմութեն, և փոխանակ
ամենեցուն ձայն բարձեալ ասէ. Ա՛հ ոմն
որ վաղու ևս՝ ի բաց լքեալ թողաք զաղգս
և զփառս և զմեծութեն և զոր ինչ այնպիս
էր. և յայսմհետե՝ քեզ ըզօրացուցանելովըզ-
մեզ՝ յօժարութեք հեղգութ զարիւնս մեր վա՛
անուճան նը, որ վա՛ մեր մեղաւորացս երեք

զարիւնն իւր ՝ըք . միայն զո՝ըք աղօթիւքդ և
քնաստեր վէրպուէրդ մի դադարեր առ՝ի հաս-
տատել զմեզ ։

Օ այս իրրև ասաց նա , ՝ամ դասք կղերիկո-
սացն աղաչէին զքահանայապետն ՝այ , զի
որք՝ի ժողովրդեանն անկատարք էին՝ ՝յե-
րախայից կարգի , որոց և ուսեալ էր զվար-
դապետութիւն խորհրդածուքն ՝ր , կատար-
մանն և սա արժանի լինիցին վերստին ծնըն-
դեամբ սբ՝յ աւազանին ։ Եւ ՝ըք քահանայա-
պետն անյապաղ փութով հրամայեաց առ
վաղիւն ժողովել զամենեսեան՝ի գեանա-
յարկին նե պոտեան կոչեցեալ, և լուսաւորեաց
զն՝ ՝ըք մկրտութիւք՝ ոգիս հարիւր և ութ . և
յաւել հաւատարիմ բանիւ՝ վէրպութե՝ հաս-
տատել զն՝ , և օրհնեաց զն՝ ։ Եւակ՝ի միւ-
սում աւուրն՝ զորս կային պատրաստեալ
յընդունելութի՝ ձեռնադրութե՝ , ձեռնա-
դրեաց քհնյապետն ՝այ , երիս քահանայս ,
և եօթն սարկաւագունս , և այլ ևս արս վէր-
ստասան յայլ աստիճանս սպասաւորութե՝ ։

Օ կնի այսորիկ և բազումք՝ի հեթանոսաց
քնակչացն հռոմայեցւոյ լուեալ զքարոզուի քա-
րեպաշտութե՝՝ի ՝ըք հայրապետին ստեփան
նոսա՝ մկրտեցան՝ի նմանէ ։ Որոց և այր մի
իշխանութե՝՝ տրիբունն կամ դեմարքոս , այն
է ժողովրդապետ կամ զօրապետ [2] , նեմե-
սիոս անուն ՝ր , առաջի եկեալ քահանայա-
պետին միամօր դստերբք իւրով՝ որում ա-
նունն էր ղուկիլլա , կոյր՝ի ծնէ՝ քաց ունե-
լով աչս առանց լուսոյ , խնդրեր զբժշկութի՝

և

և զլուսաւորութիւն որ մկրտութեանն ։ Յակ քա-
հանայապետն այս ասէ ցնա . եթէ հաւա-
տաս բոլորով սրտիւ քովյաւիենանոր երրոր-
դութիւն , երեք անձինք միով բնութիւ և աճուրդ
դաւանեալ . և յետ այսորիկ ի փրկական
մարդեղութենին քոմի , ոչ առ աչօք , և ոչ այլ-
ուստեք , այլ Ճշմարտապէս ի մերմէ զանգ-
ուածոյս , ի յերկուց մի եղեալ , հաւատա-
րակից հօր և որդւոյն ։ Այս նա խելա-
մուտ լինէր , և խոստանայր պահել զնոյն
դաւանութիւն , ոպէս վէպեցաւ ի սրբոյ քահա-
նայապետէն ։

Այս եղև ի ժամ մկրտութենն՝ յորժամ գնե-
մեսիոս և զդուստր նր վերաբերեցին յաւա-
զանէ անտի [3] , յայնժամ ղուկիլլա բարձրա-
գոյն ձայն արձակէր՝ ասէ . ահա տեսանեմ
այր մի փայլակնացայտ , զի մերձեցաւ յաչս
իմ. և յարփիական նշուլիցն՝ որ շուրջ զնովա՝
ընձեռեաց ինձ զնմա երևելիս տեսանել ։
Յակ քհնյապետն այս ինքն ձեռամբ իւրով
ընկալաւ յաւազանէն , և կրկին զհայրական
գութն հաստատեր ի նա ։ Այազութ և այլք
յարանց և ի կանանց՝ ոգիք վաթսուն և եր-
կու՝ յաւուր յայնմիկ սրբոյ մկրտութենն արժա-
նացան , և թողութիւն մեղաց . և եր այնու-
հետև բազմութիւն յոյժ հաւատացելոցն . ո-
րոց քարոզեր սրբ հայրապետն ի գետնա-
յարկս վկայից . և անդ պատարագեր ։ Այս
ձեռնադրեաց երանելին զնեմեսիոս՝ սարկա-
ւագ ի սպասաւորութիւն սրբ եկեղեցւոյն ։

Այս քանզի երևելի և յայտնի եր այրն , ոչ

եղև ծածկել ՚ի զօրագլխաց անտի հաւատոք նր և սիրտուքինն և վերատեսչութի սարկաւագութենն . մինչև ծանուցանէին Թագաւորին : Յայնժամ կոչեաց Թագաւորն զվաղերիոս [4] և զմաքսիմոս զօրագլուխս՝ որք առաւել էին մերձ կռոցն մարտի կի սրեսի չայն պատերազմաց , և հրամայեաց նոցա երթալ ըմբռնել զնեմեսիոս . և նախ հարկանել զնա ապտակմամբ , և ապա ածել առաջի դատաւորական բեմին :

Յոր ժամ նեմեսիոս ածային հնարհօք զօրացուցեալ զքրիստոնեայսն՝ բաշխեր նոցա զինչս իւր ըստ իւրաքանչիւր պիտոյից , և ՚ի գիշերի միում յերթալն նր ըստ ձանապարհն , որ կոչիւր ապպիա , և ՚ի բաշխել զսովորական ողորմութին առ կարօտեալսն , իբրև մերձ եղև ՚ի սաձար կռոցն արեսի , ետես զվաղերիոս և զմաքսիմոս , զի զոհս պղծութե մատուցանէին կռոցն . և զօրացեալ ածային նահանձու ծունր եդ և խնդրեաց յն , զի ամբարիշտքն անդ՝ ուր զսանդգնուի կռապաշտուե գործէին , պատժեսցին ըստ անօրէնութե իւրեանց՝ յահ և ՚ի խրատ այլոց : Եւ մինչդեռ աղօթք նորա ՚ի չրթունսն էին՝ մանաւանդ թէ յերկինս , առաժամայն կալաւ զմաքսիմոս դիւաց ապտակումն . որոց մտեալ ՚ինա՝զարկուցանէին զգետնի և լլկէին յոյժ . և գոչէր ՚ի մէջ գնուե անդ այսպէս . քրիստոնեայ ոմն անուն նեմեսիոս անցանէ արտաքոյ տաձարին , և աղօթիւք իւրովք կիզէ զնս . ժամանեցէք նմա , մինչչև հեռացեալ

է .

է. կալէք և ապատակեցէք զնա։ Այլ առաքա-
մայն պաշտօնեայք մեհենին ըմբռնեցին զը-
նա, և ըստ դիւցածն խրատու ապտակեցին զե-
րանելի սարկաւագն. իսկ պիղծն մաքսիմոս
խեղդեցաւ յայսոյն պղծոյ։ (5)

Յայնժամ սպասաւորքն կալան ջոքննեմա-
սիոս, և ածին ՚ի պալատն առ դատաւորն
կոչեցեալ վաղերիոս կիմ վաղերիանոս. (որ
թուի նա ինքն ընկեր մաքսիմոսի, բայց յո-
մանց կարծի լինել ինքնին իսկ թէրն). ո-
րոյ տեսեալ զնա՝ ասէ. Ընդէր արդեօք ի-
մաստութիւնդ քո անպէտ գտաւ, և որ՚ի
խորհրդականս ժողովարանին քան զամենե-
սեան ընտիր էիր, արդ զանմտութիւն ընկա-
լար, և զծածոյ սէրն կորուսեր ատելութիւդ
առնես. զիարդ յայդպիսի մեծ անօրէնութիւն
և յանմտութիւն անկար՝ թողուլ քեզ զծածն,
զոր՚ի խանձարրոց պաշտեալ պատուէիր, և
երթալ զհետ պաշտամանն՝ զոր ոչ են ծանու-
ցեալ առաջին հարքն քո։ Այլ արդ յայսմ
հետէ՝ եթէ ոչ արագ դառնաս, ուստի ան-
կար, և սպառիս՚ի խելագարութէդ, փու-
թապէս օրինք գատաւորաց հասցէ՚ի վերս քո,
այն որ այդպիսի պաշտօնատարաց և պատ-
րաստեալ. զորոց և զդատաստանս դու լինք-
նին քաջ գիտես։

Իսկ երանելին նեմեսիոս զառաջինն ոչ ետ
նմա պինդ. զի յորժամ յիշատակեցաւ առա-
ջին մոլորութենին իւր, և ծնողացն որով նէ
՚ի կռապաշտութենէ կորեան, յորդահոս ար-
տասուս հեղոյր. և ապա արդելեալ զարտա-

սուս

ասաս իւր՝ ասէ . Ա՛յդ՝ զի զմնլորութիւն իմ
իմաստութեի կոչես ոմն դատաւոր , և յառաջ
բերես զառաջին վարս ծնողաց իմոց կորու-
սելոց , և զնոսին՝ որ յանգիտութենն մեղանչէի ,
և զբազումս ի ներջոյն դատապարտեալ պատ-
ժէի , տայ ինձ լալ և կոծել . և այսու առա-
ւել զորբոքիմ ի սէրն քոյ . քանզի գիտեմ ,
թէ նա է քաւութեի առաջինն ամբարշտութենն
իմոյ : Ասէ արդ եթէ զառաջինն ամբարշտու-
թինն այսքան ապաշաւեմ , որչափ և աս առա-
ւել՝ յորժամ զձշմարտութիս ընկալայ , զնմ
վատթարութեի և զանաճառութենն խելագարու-
իբրև մանգաղաւ ի բաց հատանեմ : Վասր-
ձեալ այս քեզ յայտնի լինի , զի չիք ինչ՝ որ
բաժանել կարիցէ զնս ի սիրոյն քոյ , ոչ մե-
ծութի , ոչ փառք , ոչ դատաւորաց սպառնա-
լիք , և ոչ գործիք տանջանարանաց . զնոյն
համարձակութիք ասեմ՝ վստահացեալ ի զո-
րութինն քոյ , և վե դատերն իմոյ՝ թէ ոչ ոք
կարօղ է մեկնել զնա ի քէ . որովհետև
մերկացաւ զնաւար հագուոյ և մարմնոյ վերա-
տին ծննդեամբ ե աւազանին ի ձեռն քա-

Հանայապետին նոյ սրբոյն ստեփաննոսի :

Օ այս իբրև լուաւ բռնաւորն , անհնարին
քարկութիք լի եղեալ՝ ասէ . ոչ է մոռացեալ
առ իս , թէպէտև մարդասիրութիք կամեցայ
բերել առ քեզ , զի դու քոյին կախարդութիք
զգօրագլխակիցն մեր նախ տանջեցեր , զար-
հուրական ինն ցաւօք լլկեալ , և տարաժամ
մահուամբ զկեանսն նր բարձեալ[6] . և այժմ
հակառակ մերոյ դենիս գիտութիւն ինն հրա-

հան-

հանգեաւ՝ դժնդակագոյն ձառս յառաջ բերելով։ Յայնժամ հրաման ետ զինչս տան նոր՝ ի բաց կողոպտել, և զդուստր նոր մատնել՝ ի ձեռս կնոջ՝ ուրումն անառակի և ամպարշտի մաքսիմոս կոչեցեալոյ (Ձերևս մաքսիմոսին պատուհասելոյ)։

Նա ածել և զսերեպիոն (ըստ այլոց՝ զսեմբրոնիոս), որ էր մատակարար տանն նեմեսիոսի, և ետ զնա՝ ի ձեռս ոլիմպիոսի տրիբունի, զի քննեսցէ զնա հաւաստեաւ։ Իսկ ոլիմպիոս իբրև էառ յինքն զսերեպիոն, ասէ ցնա. երկուս իրս առաջի եդեալ ես քեզ՝ ի հրամանէ դատաւորին. զոր կամիս կատարեա՛ նախ քան՝ ի տանջանս մտանել. կամ զինչս տուն քո զնեմեսիոսի՝ ի մէջ ածէ, և կամ զոհեա՛ կռոցն։ Ասէ ցնա սերեպիոն. զինչս տուն իմոյ մի՛ զդատաւոր՝ յառաջագոյն ժամանեալ քո ընկալաւ. քանզի՝ ի ձեռս աղքատաց բաշխեաց զամ[ենայն] ինչս տուն իմ. այլ զոհել փայտից և քարանց՝ աղօթս առնեմ զի մի՛ և դու իսկ ինքն յանձն առնուցուս երբեք, և ո՛չ քնաւ այլ ոք, որ ստեղծո՛ւած և պատկեր է նոյ։

Յայնժամ ոլիմպիոս հրամայեաց սաստիկ հարկանել զնա բրօք ստուարօք, և քարշել՝ ի վե՛ր երեսաց իւրոց, և ածել՝ ի գալշէլի տաձարն արեսի. և հրամայեաց նմա խնկօք զոհ մատուցանել ոսկիապատ կռոցն։ Իսկ երանելի վկայն քո՛ս սերեպիոն կայեալ յաղօթս՝ խնդրէր յոյ ցուցանել զզօրութիւն իւր առ՝ ի կործանումն դիւ՛ական պատկերացն. և

և առաժամայն անկեալ կործանեցան կուռքն։ Որ տեսեալ ոլիմպիոսի՝ ի հիացման եղեալ զարմացաւ յոյժ ըստ զօրութենն քում. և զվկայն քում զսերեպիոն առնեալ ցտերտիւղոս վերակացու տանն իւրոյ՝ ինքն փութանակի գնաց ի տուն իւր, և պատմեաց զսքանչելին հնոջ իւրում էքսուպերիայ, և որդւոյ իւրում Թեոդուղոսի։ Նա ևս եթող զմիտս նմա՝ իմանալ զձշմարիտն Աստ. վասն կոչեալ ի դիշերի զՔրիստոս սերեպիոն ի ներքսագոյն տուն մի առանձինն՝ սկսան խոստովանել զմոլորութենի իւրեանց՝ որ յանգիտութենէ. և ի ղղջման եղեալ լային դառնապէս, և յանձն առնուին ապաշխարել. միայն զի փրկութենէ արժանասցին։

Նա ապա մտեալ ոլիմպիոսի ի յարկն՝ ուր լցեալ կային կուռքն իւր զանազան զարդուք զարդարեալ, եհան արտաքս զամենայն, և եդ առաջի սերեպիոնի. և ընա կացուցանէր ևս ամ կենաց իւրոց։ Ապա նա զփայտեղէնս և զքարեղէնս և զկաթեղէնս ի կռոց հրամայեր ոլիմպիոսի իւր իսկ ձեռօքն խորտակել, և զոսկեղէնսն և զարծաթեղէնսն հալել և մանրել և տալ աղքատաց։ Նա ի կատարել նորա արագապէս զնաւն հանդերձ ընտանեօքն, ձայն եղև յերկնից՝ որ յայտնի լսելի լինէր ըստ ամենայնի, զի ասէր. Երանի ե ձեզ, յայսմհետէ ի ձեզ հանգիցէ հոգի իմ. և զկատարեալն ընդունիցիք զփրկութենէ վերստին ծննդեամբն։ Որ լուեալ ոլիմպիոսի և ընտանեաց նո՝ առաւել հաստատե-

տեցան՝ի հաւատս. և աղաչէին զսերեպիոն, զի արժանասցին նոքա միանալ։

Իսկ սերեպիոն՝ի ձեռն հաւատարիմ արանց ծանուցանէ զայս ամ՝ ոն իւրում նեմեսիոսի սարկաւագի, և նեմեսիոս՝ մեծի քահանայապետին ստեփաննոսի։ Այս նա ուրախութիւք լի եղեալ՝ առանց յապաղելոյ եկն՝ի տունն ոլիմպիոսի. և տեսեալ զհաւատս նոցա և ըզփոյթն, և զխորտակումն կռոցն, վաղվաղակի միաբանացն զնա, և որդեգրեաց հօրն երկնաւորի. ընդ նոսին և զամ բնակիչս տանն, որք արժանի եղեն լսել զերկնաւոր ձայնն հնչել՝ի տան անդ։

Այս յորժամ այս գործեցաւ, զկնի երից աւուրց համբաւ հասանէր վն այսց իրաց առ վաղերիոս դատաւոր. և նա ծանուցանէր գաղենոսի թիգրի որդւոյ վաղերիանոսի արքայի. իսկ նա հրամայէր զերանելին նեմեսիոս հանդերձ լուսաւորել դատերքն իւրով սպանանել։ Որդ յորժամ տարան զերանելին՝ի տեղի սպանման՝՝ի մէջ երկուց ձանապարհացն, որ կոչին ապպիայ և լատինայ, խորհուրդ առեալ անօրինացն՝ նախ զդուստր նր կամեցան սպանանել. քզի ասէին, եթէ յաղագս խանդաղատելոյ զթոյն խարշին աղիքն. թերևս յողոքանս դարձցի։ Իսկ երանելին նեմեսիոս զմահ դատերն իւրոյ ևս առաւել մխիթարուէին վասրկանէր. վայ և յորժամ ետես զնա սպանեալ, ցնծայր ուրախութիք մեծաւ, և դոչէր առ ի լսել. ընկալ քո զբանաւոր պատարագս՝ զոր յօժարութիք

քեզ

քեզ մատուցանեմ զառաջին պտուղ որովայնի իմոյ · ըստ նմին օրինակի և զնա ապանին ի նմին տեղւոջ : Օ որ լուծեալ մածի քահանայապետին ատենիանոսի՝ եկն գիշերի , և զոք և զնաւիրական մարմինս նշ զսպեալ՝ եդ ի պատշաճ տեղւոջ ի ձանապարհի անդ լսեալ՝ ոչինչ հեաի ի քաղաքէն հուովմայ , զարժանաւոր օրհնութիս այ կատարելով ի վր նշ ըստ սնափիւռոսական յարգի · և ի գալ առաւօտին գնայր ի տեղի իւր :

Լսակ ի վաղիւ անդր հրաման ետ բռնաւորն վաղերիոս զբանակն սերեպիոն ածել առաջի իւր · յայնժամ գահիճքն ըստ հրամանի դատաւորին կապեցին զնա երկաթի կապանօք՝ մեքենայ ինչ և գեալ ի պարանոցն · և այնպես ածէին առաջի դատաւորական բեմին վաղերիոսի՝ յանդիման գաղենոսի աքքայի : Եւ թէպայր զնա բարեպաշտութեն վճռին իւրոյ և զինուորն քրիստոսիոս՝ հանդերձ կնաւ իւրով եքսուբերիաւ , և որդւովն իւրեանց թեոդուղոսիւ :

Եւ իբրև կացին առաջի , ասէ դատաւորն · վն եղ ի փրկարար ածոցն մերոց ապստամբեցիք , և զայլ ոմն օտար քան զնոսա նախապատիւ արարիք՝ երկիրպագանել նմա : Լսակ երանելին սերեպիոն յառաջ մատուցեալ՝ ասէ · մեք անարժան ինչ ոչ գատաւոր ոչ գործեմք , այլ աստուածկ՝ որ իբրև ըզքեզդ են · որք թողեալ զիոյ և զնշմարտին այ զպաշտօն՝ երկիրպագանիք դիւահարց պղծոց , և նոցին պատկերաց՝ որք կազմեալ են

են ՚ի փայտից և ՚ի քարանց և ՚ի խեցեղէն անօթոց. իսկ մեք ոչ կարեմք սեղանակատուտք լինել օրինաց և մերոյ փրկութենն, և զսրբութիս մեր պղծութիք կուռցն ապականել. և Թողէ զՀռիմարիտն և զանակիղեն և զմիջնորդենաւորն ՝ած՝ առաժամայն եղելոցդ և արագ կորստականացդ երկիրպագանել. քանզի ՝ած՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն։

Այս քանզի Թէոն գաղենոս բարձրագոյն գահոյիւք նստեր յատենին, և ՚ի ձեռն վաղերիոսի գատաւորի կատարեր զդատաստանն, գարձաւ ՚ի յոլիմպիոս, և ասէ. այլ դու որովհետև ՚ի սկզբանէ և այսր հասու գտաննիս լաւուճ ՝ածոյն, որ և զբազում առանց յամեզ իսկ հարցանելոյ ածէիր ՚ի պաշտօնս նոյ, այժմ ընդէր ոչ ՀանաչԷս զնա։ Յոլիմպիոս ասէ. ես զայն քաջ գիտեմ, զի բազում պղծութիք և աղտեղութիք զոհէի երբեմն անչընջոց, և պարտաւորէի և տանջէի զարս ՝ելս և անմեղս, և պղծէի զոգիս իմ, և զայնոցիկ՝ որ ինձ լսէին. սորին աղագաւ հառաչանօք և արտասուօք պաղատիմ ՝ոյ, զի լուսաւոցէ և մաքրեսցէ զիս յառաջին աղտոյ մեղացիմոց, որով գառնապէս աղտեղացուցի զիս անգիտութիք։ Իսկ այժմ որովհետև գիտացի զՀռիմարիտն ՝ած, և ՚ի նմանէ ողորմութիւն գտի, յայսմհետէ ոչ բան կամ գործ տանջանք կիմ գառն մահ կարասցէ զիս մեկնել ՚ի սերոյ նորա, և գարձեալ յայնպիսի վիճս կորստեան արկանել։

Յայն-

Յայնժամ Թէքլն մրմռեալ իբրև զգազան վայրենի՝ խորհուրդ արար ընդ վաղերիոսի դատաւորի, կամ ընդ վաղերիանոսի կայսեր, և վճիռ եհատ ի վերայ նոցա, զի կենդանւոյն այրեսցին. և արագ հրամանին կատարեր։ Զդէմ յորժամ արկան ի հուրն չորեքին քաջ զինուորքն քրի՝ սերեպիոնէն, ոլիմպիոս, էքսուբերիա և Թէոդուղոս, սկսան փառաւորել զնա, և ասէին. փառք քեզ զուգահաւասար երրորդութե՛ն աբ, որ արժանի արարեր զմեզ՝ բոլորապտուղ քեզ ընծայիդ մատուցանել զանձինս ողջակէզ բանականս՝ հրով կատարեալ. արդ ընկալ զոգիս մեր ի հոտ անուշից. և զայս ասացեալ՝ հատուցին զոգիան։ Իսկ ի գալ գիշերին, երանելի քահանայապետն այ ստեփաննոս՝ որ միշտ իբրև անքուն ականջ հոգայր վասն հօտին քրի, առեալ արս երկիւղածս ի ժառանգաւորաց եկեղեցւոյն՝ եբարձ զմարմինս բարեյաղթ վկայիցն գաղտաբար. և զօրինաւոր սրբաբանութե՛նն կատարեալ՝ թաղեաց զնա մերձ ի տեղի ատենին և ամփիթեատրոնին, ուր կայր պատկեր արեգական, միով մղոնաւ հեռի ի Հռոնատարհէն լատինաց։

Յետ այսորիկ ապա համօրէն իսկ հալածումն շարժեցաւ ի վեր քրիստոնէիցն. և խնդրեցին զստեփաննոս զեպիսն և զնմա դասս կղերիկոսացն. և եթէ ոք զեկուսցէ, ինչս բազումս խոստանային։ Նա յետ ոչ բազում աւուրց ըմբռնեալք արք երկոտասան ի նոր կղերիկոսացն՝ սրով կատարեցան, պսակ-

ւորեալք՝ ի քո . որոց անուանքն են այսոքիկ .
Ղուկիոս , վաւստոս , մաւրոս , պրոմիտիոս
( կամ պռիմիտիւոս ) , կամիսիոս ( կամ կալուս-
նիոսոս ) , յովհաննէս , եքսուպերանտիոս ,
կիւրեղղիոս ( որ և կիւրղոս ) , թէոդուղէոս
( կամ թէոդոսիոս ) , բասիլիոս , բասոս , կաս-
տոս ։

Ո՛ սոցա զձգնաւորական զմարմինս առեալ
ոմն՝ , որոյ անուն էր աւերտիւղոս ( ըստ այլոց
տերտուղղինոս ) կատարեալ հաւատովք ,
մեծավայելուչ պատուով թաղեաց՝ ի ձանա-
պարհին ղատինայ , ուր կատարեցան մօտ՝ ի
ջրմուղս ։ Իսկ վկայասէրս այս տերտիւղոս
էր մատակարար տանն ոլիմպիոսի . որ և ընդ
նոսին լուսաւորեցաւ՝ յաւր մկրտուքեն . և սպա-
սաւորէր՝ նոր վկայիցն . յետ սակաւ աւուրց
ապա և ինքն հետևեցաւ նոցա ։

Ռձին եպարքոս ոմն յեպարքոսական դասուցն
( ըստ ոմանց մարկոս անուն ) կալեալ զվկայա-
սէրն տերտիւղոս՝ տարաւ զնա առաջի վաղե-
րիոսի դատաւորի . զոր իբրև ետես բռնա-
ւորն՝ զգեմոն իւր այլայլել՝ ասէ ցնա . զինչ
ոլիմպիոսի ՚ն քո կամօք քո՝ ի բաց տուր ա-
ւանց տանջանաց և չարաչար լլկանաց ։ Տեր-
տիւղոս ասէ . եթէ զինչս ՚ն իմոյ ստուգա-
պէս խնդրես , երանի՛ է քեզ . միայն թէ կա-
րիցես զայն քեզ սեպհականացուցանել . քան-
զի այնպիսի գանձանակ է այն , զոր չէ հնար
յայլ ումեք առնուլ , եթէ ոչ ինքնին ան-
ձին իւրում ոք ընձեռեսցէ . վա՛ զի նա յեր-
կինս ունի զանկողոպտելի գանձն՝ ի ձեռս

սղքատաց քաշխեալով զինչս իւր , և ՚ի ձեռն հրոյ զինքն պատարագ մատուցանելով ՝այ . և արդ դու ո՛վ դատաւոր՝ եթէ լուծանես զվիշտս անանկաց , և փախչիս ՚ի դիւաց գարշելի պաշտամանէն , առ ձեռն վաղվաղակի

գտանիցես զգանձս ՝ան իմոյ ։

Յայնժամ ե՛ս առաւել բարկացեալ վաղերիոս՝ հրամայեաց գալար բրօք հարկանել զնա սաստիկ յոյժ ։ Իսկ նա առ ոչինչ համարելով զտանջանսն՝ մեծապէս ուրախութիք գոհանայր և փառաւորէր զՔ . և ո՛րչափ յաւելուին ՚ի տանջանսն՝ ե՛ս առաւել սրբոտապնդէր արիանալով ՚ի բարեպաշտունին ։ Իսկ ՝ածամարտն և՚ի վէր վիրացն հրամայէր ջահս լուցանել . բայց երանելին այնչափ ջեռեալ էր ՚ի սէրն ՝այ , և հոգւով ՝ըվ զօրացեալ, մինչ զի և երեսք նր ոչ այլայլէցան . ուր բռնաւորն ոչինչ վիրաւորեալ՝ յանհնարինս տանջէր , յորժամ տեսանէր զանփոփոխելի միտս վկային ։

Ապա առաքէ զնա առ սապրիկիոս կի՛ սապրիկոս , որ էր եպարքոս քաղաքին (7) , զի ՚ի ձեռն հնարից փորձեսցէ զնա , որպէս զի ՚ի ձեռն խոստմանց կամ տանջանաց զՔ՚ն սցէ կռոցն , և տացէ զինչս ՝ան իւրոյ ։ Իսկ սապրիկոս նստեալ ՚ի բարձր բեմի յանդիման ՝ամ հրապարակին՝ սկսաւ հարցանել զվկայն զանուն նր և զբախտ ։ Նա պ՚նի եւ , և ասէ . եթէ զանուն իմ կամիս գիտել , քրիստոնեայ եմ . իսկ եթէ զբախտ , մեղաւոր ծառայ եմ ծառայիցն ՝այ ։ Ասէ դարձեալ է-

Եպարքոսն . ծառայ եմ , եթէ ազատ ։ Նոյն
Երանելին . ասացի միանգամ , եթէ ծառայ
եմ ծառայիցն ես . արդ եթէ զյառաջագոյն
պինդին ի միտ առնիցիս , երկրորդ հարցումնդ
ընդհէր է . ապա եթէ զառաջինն ի միտ ոչ
առնիս , զուր ուրեմն փուճաս կեղծաւորիլ ։
Պապրիկոս ասէ . զոհեա կռոցն , և հատո
ինձ զինչս ունիս քո . և ի բաց վճարեա զքեզ
ի տանջանաց , և փառաց և պատուոյ ար-
ժանաւոր լինիցիս ։ Նոյն Երանելին քամա-
հեաց զբանս նոր՝ դէս կոչելով զդիւս նոցա և
մոլորեցուցիչս ։ Յայնժամ Եպարքոսն զյա-
րատեալ՝ հրամայեաց քարամբք ջախջախել
զբերան նոր ։ Նայց նա առ ոչինչ համարե-
լով և զայն ևս տանջանսն՝ զոհութիւն ևեթ
մատուցանէր ։ Այ յաղագս արժանի լինելոյ
վե անուանն նորա յարչարիլ ։ Եւ ապա հրա-
մայեաց բռնաւորն տարածել զնա ի վերայ
փայտի տանջանաց , և զջիղս նորա ստուար
ջալոտիւք ձաղկել , և հրով ևս խանձողել ։
Նոյն քաջ վկայն քրիստոսի և զայն ևս տանջանսն
ծաղր արարեալ՝ և ոչ հայել անգամ ի բրո-
նաւորն արժան համարէր ։ Յորմէ ետես սա-
պրիկոս զինքն յաղթել յերանելւոյն՝ եհատ
ի վե՛ր նր վճիռ սրով սպանանել զնա . և առ-
ժամայն հատաւ գլուխ բարեյաղթ վկային
քրիստոսի՝ յայնմ տեղւոջ , ուր տէրն
իւր երանելին ոլիմպիոս իւրովքն կատարե-
ցաւ ի Ճանապարհին լատինայ ։ Նոյն զմար-
մին նր տէր քահանայապետն այ ստեփաննոս
ըստ վկայական պատուիրին արժանաւոր կալ-

զօք Թաղեաց՝ ոչ Հեռագոյն՝ի տեղւոջէ կատարմանն։

Յետ ոչ սակաւ աւուրց ըմբռնեցաւ և նոյն ինքն երանելին ստեփաննոս մեծ քահանայապետն ՚ի, Համնաման գտեալ նախաւկայեան իւրումն անուճանակեի, և նախաշաւիղ բազմաց առ երկնային պսակն. և որոց առաջնորդ եղև, նոցին և բարւոք յղարկաւոր՝ իբրև զանուշահոտ պատարագ ՚ի մատուցանելոյ. ապա և ինքն հետևեաց զկնի հետոց նոցա։

Ընդ՝ իբրև ածաւ առաջի դատաւորական բեմին վաղերիանոսի արքայի (8), և ընդ նմա այլ բազմութիք քահանայից և սարկաւագաց՝ հանդերձ այլ սպասաւորօք եկեղեցւոյն, հայեցեալ ՚ի նա բռնաւորն լի յաստմամբ՝ ասէ. դո՞ւ ես ստեփաննոս՝ որ շարժեիր զհռոմայեցւոց քաղաքս, և յանծոյն սպասաւորութենէն ՚ի բաց խոտորեցուցանէիր զժողովուրդս բազումս։ Պէտքն ի՞նչ է երանելի հայրապետն, և ասէ. ես ոմ՞ Թագաւոր՝ ոչ միայն Թէ չշարժեմ զհռոմայեցւոց քաղաքս, այլև յարաժամ հաստատեմ. վ՞ր զի հանապազ պաղատանս մատուցանեմ՝ զշարժեալ խռովութիս դիւական ամպարշտուե բառնալ. և Ձանաչել ամենեցուն զիայն Ձշմարիտն ՚ած, և զորդի նր միածին, և զՀոգին նր Համազօր հօր և որդւոյ. և զայս դաւանութենէս ոչ երբէք դադարեցի ամենեցուն յայտ յանդիման քարոզել, և այլ ոչ ևս դադարեմ. և յայսմ խոստովանութէ հաստատեալ,

տեալ,

տեալ, Թէպէտև բիւր մահս ածցես ի վերայ, զնամ առանց դժուարութեան ընդունիմ։ Յայնժամ ածամարտն վազերիանոս հրամայեաց ածել զերանելին բռնութեամբ ի դարձնելն տաճար կռոցն, և անդ բռնադատել, զի Թերևս զոհեսցէ. ապա Թէ՝ ոչ հաւանեսցի, սրով բառնալ ի կենացս։ Իսկ նա եթէ հայրապետն իբրև մերձեցաւ ի պատկերս կռոցն, ամբարձ զաչս իւր յերկինս, և ի լսելիս ամենեցուն աղօթեր այսպէս. Տէր ածխիմ, որ ի քաղանէ զաշտարակն խախտեցեր, և զորս միաբանութեամբ ամբարտաւանեալք ածամարտ լինել խորհէին՝ ի ձեռն խառնակման լեզուացն խափանեցեր ի գործոյ անտի, դու նոյն ինքն այժմ խափանեա զդիւական մոլորութեամբ կռապաշտութեամբ սոցա՝ յայտնելով զամենազօր զօրութիւն քո կործանմամբ կռոցն. որք ոչ միայն խորհրդով ամբարտաւանութեամբ ընդիմանան ամենազօրիդ, այլև յայտնապէս ածամարտ լինին, փոխանակ արարչիդ՝ արարածոց երկիրպագանելով. արդ ամաչեցո զնոսա քոյին անքննելի իմաստութեամբդ. զի Թերևս ծանիցեն զքեզ միայն Աստուած ածս։

Եւ մինչդեռ նա զայս աղօթեր, ձայն եղև ահագին որոտմանց, և Թնդմունք սաստիկ շարժմամբ, և սարսափելի ինն փայլատակմունք հրացանութեամբ. ուստի և մանն տաճարին կռոցն շարժեալ կործանեցաւ հանդերձ դիւական արձանօք։ Իսկ զինուորքն զարհուրեալք յահագին շարժմանէն՝ Թողին զնա,

և ՚ի բաց վախեան ։

Յայնժամ բարեյաղթ վկայն քրիստոս զքահանայապետն անցեալ գնայր ՚ի վկայարան սբեղն ղուկինայ աշակերտուհւոյ առաքելոցն . և ժողովեալ զամբոխատունեայն՝ որ էին ՚ի քաղաքին , մխիթարէր զնա բանիւք բարեպաշտութեան , յուշ առնելով նոցա զհրաւնական բանն . մի երկնչիք ասէր յայնցանէ՝ որ զմարմին սպանանեն , և այլ աւելի ինչ ոչ կարեն առնել . այլ պարտ է յայնմանէ երկնչիլ , որ զհոգի և զմարմին կորուսանէ ՚ի գեհենի ։ Ա այս և առաւել քան զսոյն խօսեր ընդ հօտն իւր . և անդէն ՚ի տեղւոջն սկիզբն առնէր կատարել զխորհրդական պատարագն՝ հանդերձ սպասաւորութեամբ սբեղ քահանայիցն և սարկաւագացն որ ընդ նմա էին . զի ոչ եթէ հոգեւոց վշտպուքն միայն սրտապնդէր զաշակերտեանն իւր , այլև կենդանարար մարմնով և արեամբն յն քրիստոսի զանձն իւրաքանչիւրոցն , և հաստատէր ՚ի հաւատս ։

Ո՛զդ եղև այս ամ յաւանջս վաղերիանոսի կայսեր . վասն հրամանաւ նորա եկեալ գինուորք զսբ քաղմաց սպառազինեալք՝ շրջապատէին զտաճարն այ , յորժամ սբ հայրապետն զպատարագն մատուցանէր . և այնչափ աղաղակս հնչէցուցանէին շուրջանակի , և զսուսերսն շողացուցանէին , մինչև համարել նմա՝ որ ՚ի ներքս էին , թէ շարժի տաճարս այ ։ Ոսկ ե՛ բանեալ քահանայապետն այ առ ոչինչ համարեր զձայն աղաղակին , այլ բոլորով սրտիւ զսբ խորհուրդն կատարեաւ՝ ձաշակեր

ինքն ,

մայ-
նադրեցաւ յաթոռ Հայրապետութեան Հռոմ-
բազմութեան և ընտրութ Հոգւոյն սրբոյ ձեռ-
տեան [10]. ) : Եւ փոխանակ նր՝ կամօք ամ
չեցաւ կիւմետրիոն , այր քաջարան՝ կաղլիս-
նին ղուկինեայ ( ի տեղւոջն՝ որ յետոյ կո-
ղեցին զնա ի գետնայարկի նոյն վկայարա-
արժանաւոր ըս վկայական պատուոյն՝ թա-
զորբութի իւրեանց . և արարեալ նմա դիր
երանելւոյն՝ ողբերգական ձայնիւ լային
առեալ բազմութենն զպատուական մարմին
միայն ունէին հրաման սպանման : Յայնժամ
բազմութին՝ ի բաց գնացին . քանզի վն նր
սի մահուամբ , Թողեալ զինուորացն զայր-
ի ժամանակի կենարար չարչարանացն , թէ
ոչ դու հայր յիս , և ես ի քեզ , այսպէս և
սք ի մեզ լիցեն : (9)

Եւ յորժամ կատարեցաւ՝ զի այրն այ այսպէս
լինքն , և բաշխեր ամ քրիստոնէիցն ի մեղ-
սաքաւիչ խորհրդոյն :

Եւ մինչդեռ չևևս էր քայջ վկայհուրդն ա-
ւարտել , խորտակեցին զինուորքն զդրունս
եկեղեցւոյն . և մտեալ ի ներքս՝ բարձին
սուսերաւ զգլուխ սրբոյ հայրապետին . և ան-
դէն խառնեցաւ վկայական արիւնն ընդ անա-
պական արեանն քրիստ . որ և հրաշալի իմն խոր-
հուրդ ցուցաւ հաւատացելոց , և մեծաց բա-
րեաց առհաւատչեայք . քանզի յայտնի եղև
ամենեցուն , եթէ որք վն անուանն քրիստ չար-
չարանս և մահ ընդունին , ոչ միայն նման նոք
լինելոց են , այլև ընդ նմա միանալոց են , ըս
լինքեան իսկ ասն ձայնի , զոր ասէր առ հայր
ի ժամանակի կենարար չարչարանացն , թէ
ոչ դու հայր յիս , և ես ի քեզ , այսպէս և սք
ի մեզ լիցեն : (9)

Եւ յորժամ կատարեցաւ սրբ այրն այ այսպէս
սի մահուամբ , Թողեալ զինուորացն զայր-
բազմութին՝ ի բաց գնացին . քանզի վն նր
միայն ունէին հրաման սպանման : Յայնժամ
առեալ բազմութենն զպատուական մարմին
երանելւոյն՝ ողբերգական ձայնիւ լային
զորբութի իւրեանց . և արարեալ նմա դիր
արժանաւոր ըս վկայական պատուոյն՝ թա-
ղեցին զնա ի գետնայարկի նոյն վկայարա-
նին զուկինեայ ( ի տեղւոջն՝ որ յետոյ կո-
չեցաւ կիւմետրիոն , այր քաջարան՝ կաղլիս-
տեան [10] . ) : Եւ փոխանակ նր՝ կամօք ամ
բազմութենն և ընտրութ հոգւոյն սրբոյ ձեռ-
նադրեցաւ յաթոռ հայրապետութենն հռոմ-

մայեցւոց՝ սբն քսեստոս, որ էր Հիմարտաձև արժանաւոր սբյն ստեփաննոսի յաջորդու-

թեն՝ վիշապութիւք և առաքինութիւք։

Իսկ այր ոմն երանելի՝ ի պաշտօնէից եկե-ղեցւոյ՝ տարսիկոս կամ Թարսիկիոս անուն՝ գալտաբար սպասաւորէր Հիգնազգեաց մարմնոյ երանելւոյն ստեփաննոսի։ Եւ յետ սա-կաւ աւուրց անցանելոյ կատարման սբյն՝ խորհուրդ արարեալ կռապաշտից՝ կամէին՝ ի քաց առնուլ զնա մարմնոյն. (ուր այլք ի-մանան զնա խորհուրդ մարմնոյն քո[11], զոր տանէր ուրեք գաղտ տարսիկոս). և ըմբռնեալ զերանելին տարսիկոս՝ նեղէին զնա ցուցանել նոցա. իսկ նա անարժան համարէր արկանել զպատուական մարգարիտն առա-ջի խոզից. և այնքան դժնդակ հարին զնա արիւնարբու կռապաշտքն բրօք, և քարամբք ջախջախեցին, մինչև առժամայն ի ձեռս նոցա նուճաղեալ աւանդեաց զհոգին ի քո. և եղեն սքանչելիք ի տեղւոյն. զի Հեպէտև մեռաւ, սակայն իբրև զկենդանի պահապան եղև սբյն (կամ սրբուհի. զի ըստ այլոց՝ ոչ գտին զնա խորհուրդն, որ էր ի ձեռին նոր), ոչ տալով ի ձեռս անօրէնն. քանզի ահագին արհաւիրք անկաւ ի վր անօրինացն, և Թո-ղեալ ի քաց գնացին. իսկ վկայասէրք ոմանք ի քրիստոնէից զՀիգնազգեաց մարմինն տար-սիկոսի առեալ Թաղեցին օրհնութիւք յարժա-

նաւոր տեղւոջ ի նմին վկայարանի։

Ընդ այսպէս վկայեաց երանելին ստեփան-նոս հռոմմոյ հայրապետի ջորրորդ ամի քա-

հա-

Հանապատեսուէ իւրոյ՝ յամի տեառն 257, հանդերձ նախընթաց և զուգընթաց նահատակօք իւրովք յամ վիճակի եկեղեցական և Յակոբեանց. զորս ոչ կարի յոյնք, նոյնպէս և ոմանք՝ ի լատին վկայագրաց միահամուռ յիշատակեն յօգոստոսի 2. և յայսմաւուրք մեր՝ ի նոյեմբերի 3։ Իսկ՝ ի վկայագիրն հռոմէական կատարումն սքանչն Ստեփաննոսի դնի յօգոստոսի 2. և միով աւուրբք յառաջ քան զնա՝ նահատակութիւն ժբ քահանից Նորա. և վեց աւուրբք յառաջ՝ ընդ ի յուլիսի 26. կատարումն չորից վկայից հրով. այլ յիշատակ Նեմեսիոսի և դասեր նոր՝ որք կատարեցան յառաջ քան զայլս, լինի՝ ի հոկտեմբերի 31. որ է օր փոխադրութեանն նշխարաց նոցա առ քսեստոսիւ, ոմն և՝ ի մեզ յայնմիջոց անկանի տօն սքանց։

Իսկ նշխարք սքան Ստեփաննոսի հայրապետի, որք զառաջինն ամփոփեցան՝ ի գետնայարկ դամբարանի՝ սքան կալիստոսի առաջեալ, յորոյ վէր շինեալ է եկեղեցի սքան Ստեփանոսի, ընդ հարաւակողմն՝ ի Ճանապարհն ապպեայ՝ երկու մղոնաւ հեռի՝ ի քաղաքէն Հռոմայ, յետ ժամանակաց փոխադրեցան՝ ի ներքս՝ ի քաղաքն. քանզի յաւուրս պատերազմաց ոտնակոխ լինէր յօտարաց և դամբարանն այն վկայից. մանաւանդ յուխտերուդ դարու յերեսաց լանգոբարտաց. ուր իբր աւերակ էր դարձեալ, և ամայացեալ, նմին իրի քննչապետն պօղոս առաջին՝ որ յաջորդեաց Ստեփաննոսի երկրորդի յամի 757,

757, եւ չինել՝ի մէջ քաղաքին՝ի սեպհականն տան իւրում նոր վանս եւ եկեղեցի՝ի հիմանց՝ յանուն երկուց մեծանուն հայրապետաց Հռոմայ, Յ. սըբոյն ստեփաննոսի առաջնոյ, եւ սըբոյն սեղբեստրոսի. որ այժմ պարզանի՝ըբ սեղբեստրոս կոչի՝ի մարտեանս համ յարեսեան դաշտի. եւ անդր փոխադրեաց մեծաշուք հանդիսիւք զերկոցունց նոյ զպատուական նշխարս ըստ երեւելի մասին, յամի 761։

Ա.ՅԼ յետ անցանելոյ դարուց՝ յամի 1596, յորժամ առ կղեմաւ ուղիերօրդիւ նորոգեցաւ՝ի հիմանց տաճարն այն, գտան նշխարք սըբց հայրապետացս՝ի ներքոյ աւագ բեմին, եւ դարձեալ անդանօր պատուով ամփոփեցան. եւ պատուական գլուխք նոցա՝ սեղբեստրոսին ամբողջ, եւ ստեփաննոսին կիսամբողջ, եդան՝ի զանազան գլխաձեւ անօթս արծաթիս ձարտարապուծս։ Այլ մանր ինչ՝ի նշխարաց սըբոյն ստեփաննոսի՝ որ կայր յաւագ բեմի եկեղեցւոյ սըբոյն սեբաստիանոսի, ոսկի եւ աթոռ նր արիւնանեղուկ, փոխադրեցաւ յամի 1700, ՚ի պիզա քաղաք եարու, ըհոյ յերկրին տոսկանայ. ուր կայր եւ կարգ ասպետաց յանուն սըբոյն. Թող եւ զայլ մանր նշխարս սիրեալս յամ տեղիս. յորոց գոյր եւ մասն տարեալ՝ի բիւզանդիա. ուստի միւսանգամ եւս բերեալ եղեւ յարեւմուտս։ Ա.ՅԼ զայսցանէ ձոխագոյն են քանք առ յիշատակարս՝ հանդերձ պէսպէս սքանչելեօքն նշխարաց սրբ հայրապետին ստեփաննոսի։

Ծ.-

XXXX

ի ցեկալ՝ զմարթութիւնսն բարբառին չահկին ||։ Իսկ կատարածն ասարան պատմուԹիՀ ձեռնադրուԹիՀ սիՀն քահանայի ի տեղի սիՀն սահմանսնոյ։ Ամիւ նոյն է և միւս օրինակն. զոր բերէ սուրիոս երբեք ի մեռսվերսա սխալ, բայ ի ԹարգմանուԹիՀ սարբերուԹ։ Թ որում երբեմն ի լատինի ի լոյն, և անգրկեն ի յունէ ի նոր լատին վերածեալ։ Եշ ԹեպԷսաև ասես մերս է Ք կրկին Թարգմանուբ անկեալ, զի բնագիրն երևի լատին, յորմ մեզ վերծալ է ի լոյն, և անաի ի հայ. բայց ընտիր քան զիւսն. և ոչ կարծեմբ, ԹԷ է սա ի պէտս յոհանան օրինակաց, զոր ի լոյս յիշատակին բոլոհեդանք՝ չուեալ ի ձեռն զդրձն ամբողջ. ՚ր է օրինակն կոսանդնուպոլսական հին, կԷ վկնգորսեան։

ԸնտրուԹի մերոյս օրինակի քան զսովորական լատինականին յայտնի է ՚ր երկոց գլխոց։ Նախ՝ զի առաւել նշանակբ հետևԷ կան ի մերսւմն։ ոչ սեսանեն՝ որք բազում առեին։ Երկրորդ՝ զի զոր ինչ գՀուարսուԹիս հաղեն քննիչք՝ ի վերայ լատին օրինակին ՚ր Ձիվադրական ձանօթուԹենէ, կԷ ՚ր պարագայիկ գործոցն։ ի մերս գրեԹէ և ոչ մի ունի զաեպ։ Եշ երկրորդ՝ զի ԹեպԷսաև էուԹիՀ պատմուԹիՀ և առնախօսուԹեանց է չերբ կասին նոյն, բայց մեծաւ մասամբ մերս է առաւել վայելական։ վայ և մեք գմերս հատառաւոն պահէցաք, և գոն ուրեք քան մի բառս ի փոխ առաք յայլոց առաւել բացայայտուԹիՀ, կամ յուզադրուԹիՀ յայտի սխալանաց գրչի։ Եշ ևԹԷ ուրեք ուրեք առաւել հաշոյ ԹուէԷր մեզ ընԹերցուած լատին օրինակի ՚ր գմերն, ոչ իշեցաք եակ և եակ Թողուլ գմերն, և Էեաւել այնմ. մինչև գայլ և այլ օրինակ օրաշէլ և սատկիլ։ որովհետև՝ ոմն ասի, այլուսաեք հաւատացուԹիՀ մերս հնաց գոյն վկայաբանի երևի գործ։ եակ միւսն փոքր մի յետնագունեի։ Զնմ սարբերուԹիՀս ձնիսգոյն հաւաքեալ էր մեր։ այլ մի ձանձրացուցոցը գրանեաբս, առաւել ի բազմոց նշանակեմբ։

(2) Ձառքնաբն պահէ զսովնական բառն գեմարքոս, որ է սրմարքոս։ զորոյ գմեզարսուԹիՀ գնէ Հ։ ուղիղ, ՚ր Ժողովգադաեա։ Ի լատինն եգեալ էր սրմարքն զորաց։ բայց սպանիս պարզապես սրմարքն ասէ։ որ անխարհ նշանակէ գժսղովգադաեա և գզօրապետ։

(3) Զկ հաձոյ քննչաց՝ իբրև նորաչէն երկար բացատրուԹիՀ սկզբանէ, որ կայ ի լու։ այսպէս։ * Իմոյց (կԷ եգ) զնեմեսիոս ի Քաղբն՝ ասելով։ յանուն Հոր և որդ։ և սրդ։

, ւոյ և հոգւոյն սրբոյ մկրտեմ զքեզ։ Հաւատամ ասէ
, յած հայր ամենակալ. և եա պինի. հաւատամ։ Եւ
, 'ի քո ասէ յն որն մեր. և եա պինի. հաւատամ։ 'Ի
, Թողութիւն մեղաց. պինի եա. հաւատամ։ 'Ի մարմնոյ
, յարութիւն. նա եա պինի. հաւատամ որ || . զորս
զջրոյն սոյ իմանալ մեզ ընծերցուածք 'ի նախընթաց
վիպոյթէ սրբոյն առաքեանոսի, զոր այլազգ բացատրէ
լատին օրինակն։

(4) Փոխանակ վաղերիոսի՝ 'ի Ճ. գրի ուղերիոս. և 'ի
Հ. ուղերիանոս. ոչ և զկնի փիլիկ վաղերիոսի կայ վա-
ղերիանոսի Ճ. միշտ գրեթէ գրէ ուղերիանոս. յայտ է
թէ վրիպակ փոխագրութիւն առ 'ի յունաց, յորոց ի զի
ուռաղերիանոս, և ի զի վաղերիանոս գրի։ Ա՛յս չէ ինչ-
այն է մեծն, զի կամ լատին օրինակն շփոթէ զթիւրն ըս
դատաւորի, և կամ մեր զդատաւորն ըս թիւրի. յորոց
միւն վաղերիոս, և միւսն վաղերիանոս թուի կոչել։ Ա-
ւոյն օրինակն յայտ առնէ սատ, թէ վաղերիանոս կայսրն
խօսեր ըս գաղէնոսի և մաքսիմոսի հիւպատոսաց. որ
չէ ըսունել քննողաց՝ հայելով 'ի տարեգիրս հիւպատո-
սաց ժամանակին. ապա բարւոք գրէ մեր օրինակ,
թէ զօրագլուխք էին վաղերիոս և մաքսիմոս։ Իսկ 'ի
յետագայ բանս՝ յորս մեք ընծեռնուք վաղերիոս կայ
ուղերիանոս դատաւոր, լատինն ընծեռնու վաղերիանոս
թիւր. արդ զոր կամի ոք՝ ընտրեսցէ յերկուց։

(5) Ա՛իօրինակ գրի 'ի մեզ և 'ի լա. այսպիսի պատու-
հաս մաքսիմոսի սքանչելապէս. ուր իրաւամբք ասէ
պոսքիոս բոլանդեան. * Տիլեմոնտիոս ուսեալ 'ի
, պէարոնեայ այլափաւէ ըս վայր հարկանել զնշանս
, սքանչելաց, զայս ևս կծանէ 'ի մէջ այլոց յետ նր։
, Ինձ ոչ այնչափ անտուղոր երևի, ոչ թէ յայս սակս
, չնչէ գիւրաւ հաւատալն. և ոչ այնչափ հարկեցու-
, ցիչ, զի վե այսր պարտ նչէ ըզեմ զննել գոյացուե
, վկայաբանուե ||։ Երկար վնճի պոսքիոս ըզեմ այլա-
փառայ ոմանց, ևս և ուղղափառ անուամբ զակատե-
լոց զկնի բանից նց, զր են աւլլեմոնտ և նմանիք իւր,
որք ջանացան յերկբայս արկանել և՛ զվկայաբանուէն
և՛ զնահատակուէն սբոյն առաքեանոսի և սրոց ըս նմա,
ըզեմ ամ եկեղեցեաց։

(6) Ճ. զօրագլխակից մեր՝ ասէլով, յայտ առնէ՝ թէ
գաւառն էր նա ինքն վաղերիոս կամ վաղերիանոս զօ-
րագլուխ. բայց քանզի լա. ենթադրե զվաղերիանոս
թիւր, նմին իրի այսպէս գրէ. * զհիւպատոս ազատու-

,, ԹԷ ՀՄԱՔԱԻՄՈՍ ԱՊԱՆԵՐ ՔՈՒՆ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՐ-
,, ՀԵԱՍԻՔ ||:

(7) Ա՛ՅՍ ՁԵ ԲԱՆԻՑ Ճ. ԵՊԱՐՔՈՍ ՈՄՆ ՅԵՊԱՐՔՈՍԱԿԱՆ ԳԱՍՈՒՑ, ԳԵՂԵՑԻԿ ՈՒՂՂԱԳՐԵ ԶԼՍԱՒՆ ՕՐԻՆԱԿՆ՝ ՈՐ ԲԱՑԱՌԱԿ ԲՈՒՔՓԷՓՈՍ ԴՆԷ Ի ՆՇԱՆԱԿ ՔԱՂԱՔԱՊԵԱՒ. ՎԱՅ ՉՀԱՒԱՆԻՆ ՔՆԻՉՔ, ԶԼ ՅԱՅՆԺԱՄ ԶԱՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՆ ՈՒՆԷՐ ԱՍԱՆ ԱՅԼ ՈՉ: Ի ԴԷՊ ԳԱՅ ԱՅԺՄ ԵՒ ԸՆԴՈՒԱ ՁԵ ԲԱՆԻՑ ԱՅՆ ԿԻՍՐԻԱՆՈՍԻ Ի ՐՈՄԸՆ. ՅԲ. ԳՐԵԱԼ ՅԱՄԻ 258. ԱՌ ՍՈՒԿԵՈՍՈՍ. * Ա՛ՅԺՄ ՀԱԼԱԾԱՆԱՑ ՁԵՐ ՀԱՆԱՊԱՋ
,, ՈՐ ՈՒՆԻՆ ԵՊԱՐՔՈՍՔ (ԲՈՒՔՓԷԳԴԻ) Ի ՔԱՂԱՔԷՆ ՀՌՈՎ-
,, ՄԱՅ. ԶԼ ԹԷ ՈՔ ԲԵՐՑԻ ԱՒ ՆՈ || ԼԻՆ. ՅՈՐՄՔ ՅԱՅՏ Է ԹԷ ԱՊԵՍՊԷՍ ԵՊԱՐՔՈՍՔ ԿԱՑ ԲՈՒՔՓԷԳԴԻ ԼԻՆԷԼԻՆ՝ ԲԱՑ Ի ԲՈՒՆ ՔԱՂԱՔԱՊԵԱՒ: Ա՛ՂԱՅԱ Է ՄԵՐՈՍ ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԵՒ Ի ԳԺՈՒԱՐՈՒԹԻՆ ԱՆԱԿ, ՁԵՐ ՆՇՄԱՐԵՆ ԱՅԼՔ Ի ԼՏ. ՎՐ ՔԱՀԱՆԱՅԱՆԱԼՈՑ ԱԵՐԱԽԻՂԼՈՍԻ ԿԱՑ ԱԵՐՏՈՒՂԻՆՈՍԻ:

(8) ՅԱՅՍՄ ՎԱՅՐԻ ԼԱ՝ ԴԱՏԱՒՈՐ ՊԼՆԱԼ ԷՐ Ի Ճ. ԱՅԼ ՀԵՒԵՒԵՑԱՔ ԼԱԻԻՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ՝ ԴՆԵԼՈՎ ԹԱՊԱՒՈՐ, ՈՅՔ ԴՆԷ ՅԱՅՏՆԱԱՊԷՍ ԵՒ Հ. ԹԷՍՂՈՆԻԿԷՍ ԶԼ ՈՒՂԵՐԻԱՆՈՍ ԵՒ Է ԶԼ ԱՒՐԵՂԻԱՆՈՍ ԳՐԷ՝ ՓՈՒՔ ԳՐԵԼՈՑ ՈՀԱՂԵՐԻԱՆՈՍ ԿԱՑ ՎԱՂԵՐԻԱՆՈՍ:

(9) ՁԱՅՍ ՎԱՅԵԼՈՒՉ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՆ Ճ. ՁԵՐ ՊԱՀԷ ԵՒ Հ. ՈՉ ՈՒՆԻ ԼՏ. ԱՅԼ ԸՆ ՀԱԿԱՌԱԿՆ ԵՒ ՁԱՓԱՐԱԳԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՆՆ ՓՈԽԷ, ՈՅՔ ԹԷ Ի ՆԱՏԻԼ Ի ՎՐ ԱԹՈՌՈՑ ԵՒ ԿԱՑ ԱՌՔՆԹԵՐ ԱԹՈՌՈՑ ԳԼԽԱՏԵԱԼ ԼԻՑԷ ԱՔ ՀԱՅՐԱՊԵՏԱՆ. ԵՒ ԱՅՆ ԱԹՈՌ ԱՐԻՒՆԱՆԵՐԿ ԱՍԷ ԹԱՂԵՑԱՒ ԸՆ ՄԱՐՄՆՈՑ ՍՔՅՆ Ի ԳԵՆԱՓՈՐ ԳԱՄԲԱՐԱՆԱ. ՁԵՐ ԱՅՍՊԷՍ ՊԱՐԱՏ Է ՄԻԱԲԱՆԵԼ ԸՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑՆ ՄԵՐՈՒՄ. ԼԵՐ ԶԼ ՍՈՎՈՐՈՒԹԻՆ Է ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՀՌՈՎՄԱՅ Ի ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՌՆԵԼ ՁՃԱՇԱԿՈՒՆՔ Ի ՎՐ ԱԹՈՌՈՑ ԿԱՑ ԱՌՔՆԹԵՐ ԱԹՈՌՈՑ՝ Ի ԲԵՐԵԼ ՆՄԱՆՈՒԹԻՆ ԱԵՐՈՒՆԵԱՆ ԸՆԹԵՐԵԱՑ:

(10) ՁԿԱՂԻՍԱԵԱՆ ԳԱՄԲԱՐԱՆԻ ԱՆՈՒՆՆ Ի ՓՈՒՔ ԱՌՍՔ Ի ԼԱՏԻՆ ՕՐԻՆԱԿԷ. ՈՐ Է ՆՇԱՆԱԿ՝ ԹԷ Է ԲԱՑԱՌՈՒԹԻՆ ՅԱՒԵԼԵԱԼ ՂԿԻՆ ԳԱՐՈՒՑ, ՈՅՔ ՅԱՅՏ Է Ի ՔՆՆՉԱՑ:

(11) ԹԷՊԷՍ ԿԱՐՑ ՊԱՏՄՈՒԹԻՆ Ի ԴԷՊ ԳԱՅ ՄԱՐՄՆՈՑ ՍՔՅՆ ՍԵՓԱՆՈՍԻ ԼԸ Ճ. ԲԱՅՑ ՍՏՈՅԳ ԵՒ ԵՐԵՒ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՆ ԼԱՏԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՑԵԱԼ Ի ՎԿԱՅԱԳԻՐՆ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՅՕԳՈՍՏ. ԺԵ. ՈՐՈՑ ԵՒ ՆՇՄԱՐԱՆՔ ԿԱՆ Ի ՍԱՒՆ ԸՆԾԱՅԵԱԼ ԴԱՄԱՍՏՈՍԻ ՊԱՊԻՆ. ԵՒ ՉՈՑՆ ՊԱՀԷ ՆԱԵ Յ. ԲՍ: Ա՛ՐԴ ԼԱՏԻՆ ՕՐԻՆԱԿՆ ՈՒՆԻ ԱՍՍ ԱՅՍՊԱՆ:

* ԻՍԿ Ի ՄԻՒՍՈՒՄ ԱՒՈՒՐ ԳԱՒԻՆ ՁՕՐԱԿԱՆՔ ՀԵԹԱՆՈՍԱՑ, ՁԱՓԱՐՏՈՆԵԱՅՆ ԹԱՐՍԻԿԼՈՍ ԱՆՈՒՆ, ՈՐ ԲԱՐՁԵԱԼ ԱՍ-
, ՆԷՐ ՁՔՈՒ ՄԱՐՄՆՈՅՆ ՁԼՈՐՀՈՒՐԴ. ՁՐ ԿԱԼԵԱԼ ՀԵԹԱ-

, ՆԱ-

, Նոսաց՝ զննելն, զի ցուցցէ՝ Թէ զինչ տանի · բայց
, Նր անարժան համարել խոզից մատնել զմարգարիտս՝
, ոչ լմբիք յանձն կառ մատնել զնք խորհուրդս · զոր
, բրօք և քարամբք այնչափ խոշտանգեցին , մինչև փչել
, զոգին · և զոչ չքնեալ զանշունչ մարմին նր՝ ոչինչ կա-
, բացին գտանել ի ձեռս նր և ի հանդերձս սեղանա-
, կապուտ խուզոզքն · և Թողեալ զմարմին նորա՝ ահիւ
, փախեան ։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Պետրոսի Առաքելոյ եպիսկոպոսի , և Յովսեփայ քահանայի , և Աբգարայ սարկաւագի ։

Ի · նոյ · 4 ։ Յ · ի Աստ · նոյ · 3 ։ Լ · ապր · 22 ։ Ա՛ստուծոյ · Ա · խբ = կ ։ Պետրոս Տարսոնացի առաքեալ · Եւոդիոսի ասորեմանեայ · Տաճն · ա · էրես · 168 = 210 ։ Պողոմեոս · Բ · 10 ։ Յուլիանդեանն հենուկենիոս ի Գ · հայ · ապր · էչ · 19 = 29 · և դարչեալ · Գ = Բ · ի Մեսափրասոխէ ։ (1)

Ա ՈՒՐԱ ԱՐԱՐՉԱՆԱՅ

քաջայաղթ վկայիդ մեծամեծք ի խոր ծերութեէ արիական հատակք՝ էին յաչէն պարսից ի հալածանս շապհոյ կամ սաբիւռոսի արքայի երկայնակեաց կոչելոյ ։ Պետրոս եպիսկոպոս (2) Յովսեփ քահանայ և Աբգար սարկաւագ ի փա-

փակայ [3], այլեւր պատուհասական՝ անցեալ զուարճասունամեանիւք. բայց ժիր և առողջ մարմնով, և փառացի անձամբ, յազնուհականն ծնողաց սերեալ. ողորմած առ աղքատս, յանձանձիչ և ապաւէն կարօտելոց: Եւ ՅԾ այլին ընդհօք՝ որ բնակեալ էր ի նմ, բազումք ի հեթանոսաց գառնային առ ՅԾ ի ձեռն վիպուրեանն նր և անբիծ և ճշմարիտ քաղաքավարուրեանն. քանզի էր բանիւ կատարեալ, և հոգւով լցեալ. և հանապազորդ էր յԾայինսն միտամբուն աղօթիւք. և ձնշէր զմարմին իւր պահօք՝ որ բնուրեք էր թանձրամիս. և ունէր ընդհս արտասուաց, որովք թանայր զերկիր յաղօթել իւրում: Իսկ ՅԾն յովսէփ քահանայ՝ էր երէց գեղջն բեթկաձուբայ՝ ի գաւառին ադիաբենայ, ծերունի եօթանասնամեայ, երկիւղած յՅ և քաջ նախանձաւոր փառաց ՅՆ, պատկառելի յաչս ամենեցուն վ՚ս առաքինի և իմաստուն քաղաքավարուրեանն իւրոյ: Եւ ՅՆն այլ Թալաս սարկաւագ՝ էր ի գաւառէն բեթնուհադրայ, կամ՝ ի քաղաքէն նահարդայ (որ ասի լինել յՅՆն բաբելացւոց առ եփրատաս), այր ծեր՝ անցեալ զվաթսնամեանիւք, ձարտար՝ ի բանս և հզօր՝ ի պինասատուրիս. միանգամայն և պարկեշտ և ընդհալի անձամբ՝ սիրելի ամենեցուն, և վառեալ՝ ի սէրն քրիստոնէից:

Ընդ՝ ի բորբոքիլ միաբանգամ հալածանացն շապհոյ ընդեմ քրիստոնէից՝ մօտ՝ ի վերջին ամն թագաւորուրեանն նորա, զոր ՅՆն մարուրեաս

առաջնորդ վկայաբանութեաս կոչէ երեսնե-
րորդ եօթնեւրորդ ամ Հալածանաց մերոց ,
յայնմ ժամանակի հօտապետք և առաջ-
նորդք հաւատացելոց համարձակուբ և ա-
ներկիւղ պաշտէին զքրիստոնէութիւն . և ոչ
թաքուցանէին զանձինս յերեսաց սպառնա-
լեաց մոգաց և մոգպետաց , որոց առեալ էր
իշխանութիւն դատել զնա մահուամբ : Այլ
յաձախէին զնոցանէ ամբաստանութիւնք առ
դատաւորս , եթէ ամ փոյթ նոյ բերել ի գե-
րև հանել զդենն պարսկական . քանզի զմի
և եթ ոճ ուսուցանեն պաշտել , և ոչ երկիր
պագանել արեգական և հրոյ . զջուր պղծեն՝
լուանալով զաղտեղի իրս . արգելուն կա-
նայս առնուլ և որդիս ծնանել , զինուորիլ
արքայի , և սպանանել զոք . ուր զանասունս
անխտիր թողացուցանեն ղենուլ , և ի հող
թաղել զդիակունս մարդկան . և զամ զե-
ռուն և զսողուն ինքնակար՝ ի բարերարէն
նոյ ստեղծեալ ասեն , և ոչ ի սատանայէ . և
զյօրիվս պատրանօք ձգեն՝ նաև յարքունի
սպասաւորաց՝ ի կախարդասար վէպութիս
իւրեանց , զոր ինքեանք գիրս սքս անուա-
նեն :

Ա. Յսպիսի բանիւք և ս քան զևս բորբոքեալ
դատաւորաց ընդդէմ գլխաւորացն քրիստո-
նէից՝ արձակեցին զինուորս ուրքունի հրա-
մանաւ ունել զնա . ընդ որս և զնոր եպս ակեփ
սիմաս : Ա. յլ նախ քան զգալոստ զինուո-
րացն առ նա , ի միում յաւուրցն դէպ եղև
մանկան միոյ՝ որ էր մի յեղբարց , որ ի միան-

ձանց կամ՝ ի պաշտօնէից եպիսկոպոսին, և ա-
նուն նոր պատ, մաքրել զգլուխ ակեփսիմեայ
սանտրով (4). և անդէն համբուրեալ զգա-
գաթն նոր՝ ասէ. ահա երանելի գլխոյս, որ՝ ի
ձեռն վկայութեան քոյ կատարեցոյ է: Այս
եպիսն ակեփսիմաս ողջագուրեաց զպատ, և
ասէ. իցէ քեզ կատարեսցի ուրդեակ գուշա-
կութիւն քո. զի հաձեսցի ածել ընծանել ի առ-
նել զբանդ, և պարգևել ինձ զայնպիսի բա-
րեմասնութիւն:

Ասէր անդ ընդ ակեփսիմեայ և այլ ոմն ե-
պիսկոպոս. որոյ ժպտեալ ասէ ցպատ. որով-
հետև գուշակ հանդերձելոց էրացոյ եղեր՝ ի
միջի մերում, ածէ ասա և զոր ինչ անցք ընդ
իս անցանելոց իցեն. և նա ասէ. և դու՝ ի
մտանելն՝ ի գաւառն խառան՝ զձիհոյն վախ-
ճանիս (5): Այս կատարեցաւ բան մանկանն
՝ի վեր երկոցունց. զի եպիսն այն մեռաւ՝ ի
ձիհորդութիւնէ իւրում. և երանելին ակեփ-
սիմաս եպիս՝ ի նոյն աւուրս ըմբռնեցաւ՝ ի
հալածչաց, և կապեալ երկաթի կապանօք
ձգեցաւ յատեան:

Այս մինչդեռ գայր անցանէր ընդ դրունս տան
իւրոյ, ոմն յայնցանէ՝ որ ընդ նմա էին, ասէ
ցնա. ահա երանելդ՝ի վկայս՝ ահաւասիկ մեր-
ձեալ է ժամանակ ելից քոց. պատուիրեա
վասն տան քո և ընչից քոց, զի մի աւար հար-
կանիցեն. Այս նոր տարածել զձեռս՝ի վեր՝
ասէ. տուն այս ոչ է տուն իմ, և ժառան-
գութիս այս ոչ է իմ ժառանգութիւն, այլ
տուն իմ և ժառանգութի իմ քո է. զի ոչ

սիր

սիրեցի զոք քան ՚ի նմանէ ։

Ասդ՝ առեալ տարան զինուորքն զերանելի եպիսկան ՚ի քաղաքն արբիլ, որ և արբեղայ. և կացուցին առաջի մոգպետին, որոյ անուն էր աղրաքուսիթ կիմ ատրքուրքաշար նախապար [6]. և նա եհարց զնա մեղմով, և ասէ. քրիստոնեայ ես ։ Պատասխան ետ եպիսկոպոսն ձայնիւ մեծաւ, և ասէ. քրիստոնեայ եմ, և երկիւղ պագանեմ միոյ և ճշմարտին աստուծոյ՝ հօր և որդւոյ նր, և հոգւոյն նր սրբոյ ։ Ասէ մոգպետն. ապա ուրեմն ճշմարիտ են աստուածքն վասն քո, զոր լուայ, եթէ ուստուցանես զմարդիկ հաւատալ կալ օրինաց մերոց, և արհամարհել զհրամանս արքայից արքայի ։

Ասէ եպիսկոպոսն. զոր միանգամ պատմել են քեզ զայդպիսիսդ զնամ վասն իմ, արդարև այդպէս են. զի զնի ածէ ճշմարիտ քարոզեմ մարդկան, և խրատեմ զի զղջասցին և դարձցին առ նա ՚ի չար ճանապարհացդ իւրեանց՝ առնել զհաճոյս նր յամ ժամ, ոչ և զիարդ գրեալ է յածապատում կտակարանս մեր ։ Մոգպետն ասէ. լուայ ես վասն քո, թէ այր իմաստուն ես դու. և տեսանեմ զքեզ այր լի աւուրբք և կատարեալ ամիս. և զիարդ ոչ մանուկ մոլորեալ՝ ոչ երկիւղ պագանես արեգական, և ոչ պատուես զհուր և զջուր [7], ոչ պատուեն և պաշտեն զնս թագաւորք պարսից և ճն արևելից ։ Այր եպիսկոպոսն ասէ. բազում յիմարուք լեալ է երկիրս պարսից. զի թողեալ զարարիչն իւրեանց զնա՝ երկիւղ պագանեն արարածոց

նը . քանզի դուք նախ մոլորեցայք , և մոլորեցուցիք զայլս չար և անօրէն վէպուԹիւնբ ձերով՝ ի Թիւր արկեալ ասծս բազումս , որ են արարածք միոյ արարչի . և նը մշտնջենաւոր զօրուԹիւնբ և վերին տեսչուԹիւնբ հաստեցաւ ձեռ ամ մասամբք իւրովք ի սկզբանէ , և նովին տնօրինեալ լինի ամն յաւմ ժամանակի :

Ասասեայ ի նա մոգպետն , և ասէ . ով չարագլուխ ծեր և արժանի կորստեան , չար և անօրէնն կոչես զՀմարիտ ուսուցին մեր , որով ի հաստատուԹենէ կայ ամեայ այսպիսի ԹիւրուԹեան յաղԹական ամ ԹիւրուԹենէ որ ի վէր երկրի : Ասէ ենպան . զնր ուղղուԹեան ունի ուսուցին ձեր , որ ահաւասիկ ուրանայ զՀմաքտուԹին , և համարի Թէ յարարածս և ի ստայուածս կայցէ ինչ բնուԹիւն՝ ասծային պաշտամանն և երկրպագուԹենէ արժանաւոր . և զանշունչ տարերս խոստովանի իշխան բանաւորաց , և տնօրէն ամի՝ որ գործին յՀն : Մոգպետն ասէ . առաժամայս Թողեալ զայսոսիկ՝ լուր ինձ , և երկիրպագ արեգականն ըս հրամանի Թիւրին , և կեաց և Ճողոպրեա ի տանջանաց՝ որ կան և պահին քեզ . քանզի խնայեմ ես ի ծերուԹիւնդ քո , զի մի իջանիցես արեամբ ի դժոխս : Ասէն ակնփսիմաս ասէ . խիղճ զամենամսպարիշտ բերան քո , և մի յաւելցես խօսել և երկրորդել առ իս բզբանդ անօրէնուԹենէ ով բռնաւոր . քանզի ես ի մայրական խանձարրոց և ի մանկուԹենէ իմմէ մինչև ցայժմ՝ ի հաւատս յայս մնեալ եմ

եմ և պարզացեալ. իսկ այժմ՝ ի ժամանակի
ծերութենէ առաւել պարտ է ինձ քաջութիւն
և բարիոք խոստովանութիւն հաստատուն կալ
և ճշալ ի ձշմարտութենէ, զի պատկեցայց ի
ձշմարտէն Այ իմմէ. վնյ և զոր ըստ հակա-
ռակն հաւանեցուցանել ինձ հնարիս զամ-
պարիշտ մտածութիւնս, առ ոտն հարկանեմ։
Յայնժամ բռնաւորն լցեալ սրտմտութիւն՝ հրա-
մայեաց յորսայս արկանել զնոքն ի վէր երկ-
րի, և պրկել զնա չարաչար շղթայիւք քառա-
կուսի յոտից և ի ձեռաց. և ապա այնչափ
հարին զնա անխնայ հարուածովք, մինչև
պատառոտիլ մարմնոյն, և պատուհասան ա-
րեան նր ոռոգանել զերկիրն։ Նա յայնմ
վայրի ասէր ամպարիշտն ցնոքն. ոնր ուրեք
յածի այժմ Ածն քո. ազէ եկեսցէ և փրկ-
եսցէ զքեզ ի ձեռաց իմոց։ Իսկ երանելին
ետուն ակնփսիմաս ասէ. Ամ ուրեք գոյ Ածն
իմ, որ կարօղ է փրկել զիս ի ձեռաց քոց.
և դու մի պարծիր բանիւք քո սնոտուվք.
այլ ի միտ առ, զի Թարշամելոց ես երբեմն
զծաղիկ վաղանցուկ ի վայրի անյիշատակ.
մանաւանդ այժմն իսկ մեռեալ զքեզ ծա-
նիցես, զի ոչ վայելես օրինօք յԱծատուր
կեանսդ. և զայն ևս յորժամ կողոպտիցէ ի
քէն յեղակարծ մահն ժամանակեայ, հուր
մշտնջենաւոր փոխանակեսցէ, և անչափ ցա-
ւօք լակեսցէ զքեզ այն՝ զոր Ածացուցեր. զի
հուր անշէջ պահն ձեզ փոխանակ կրակիդ՝
զոր պաշտեք, տոչորել զհոգիդ ձեր և զմար-
մին՝ արդար դատաստանաւն Այ։ Յայնժամ

բարկացեալ մոգպետին՝ եւ տանել զնա, և պահել՝ ի խաւարչտին բանտի ծանր շղթայ-
լուք :

Ի նոյն աւուրս անկեալ էին՝ ի ձեռս հալածչայ և՝ որք քահանայն յովսէփ և՝ որք սարկաւագն սիլիաալաս, և ածել՝ ի նոյն քաղաքն արբեղայ . վշտ և՝ ի վաղիւ անդր կացուցին և զնոսա առաջի մոգպետին այնմ : Ասել սկսաւ ընդ նոսա, և ասէ . այ չարագլուխք և պատժապարտք, վասն ի՞ր պատրէք զպարզամիտս և մոլորեցուցանէք զկնի կախարդուե ձերոյ : Զոր պինդ երանելին յովսէփ և ասէ . չարաբուէստ մոգուածէ և կախարդուե ատեցօղք եմք, քանզի քրիստոնեայ եմք . այլ ողջամիտ վճռպուռ դաստիարակեմք ըզմարդիկ, զի թողեալ զպաշտօն մեռեալոտի կռոց՝ սկսցին գոնեա անագան կեալ զՀնմրիտ կեանս : Մոգպետն ասէ . և արդ այլ ասա՛ ինձ անմիտ, որ օրէնք Հնմարիտ իցեն . ասէ՝ զոր ունի արքայիդ արքայ և մեծամեծք նր, և ազատ որեարն և՝ամ Հոխք և պատուական, եթէ զոր դուքդ ունիք սինլքեէք ոմանք, աղքատք և վատատոհմիկք և անմարդիք :

Պինդ եւ երանելի երէցն յովսէփ, և ասէ ցնա . ածն մեր ոչ Հաճի ընդ մեծուածի և ընդ ամբարտաւանուի, այլ ատեայ զամբարտաւանս, և սիրէ զխոնարհս . վշտ և մեք կամաւ կատար նր լինել կամեցեալ՝ արհամարհեմք զմեծուածի ձի և զփառս, և սիրեմք զաղքատուածի . զի անանց փառացն արժանի լինցուք

և

և կենացն յաւիտենից , որ հինն ի վեր տա-
պալէ և ցրէ զաղցաւորս զայս կենցաղ ։ Ո՛ոզ-
պետն ասէ . վ՛ա զի ո՛չ է ձեզ գործել և վաս-
տակօք ապրել առ հեղգութենէ և վատութենէ
ձերոյ , այլ շրջիլ տանէ՛ի տուն և մուրանալ ,
մնայ պատճառանս յօգել և աղքատութիւն
պարծել ։ Արանելին յովսէփ ասէ . և վ՛ա զի
նախատեցեր զմեզ կոչելով հեղգս և վատս
և ծոյլս , դիտեա՛ զի եթէ կամեցեալ էաք
վաստակոց և ձեռագործաց զհետ երթալ ,
մեծք և փարթամք լինէաք քան զձեզ , որ՛ի
յափշտակուէ և՛ի զրկանաց աղքատաց էք
մեծացեալ . այլ մեք զոր լինչ ժողովէէաք ,
քեի նուիրեցաք՝ աղքատաց բաշխելով զայմ .
իսկ դուք վ՛ա ագահութենէ կողոպտէք զաղ-
քատն և զտնանկն ։

Ընծայեցաւ մոգպետն և ասէ . ամ մար-
դոյ ցանկալի է և սիրելի ձոխութի , և ոչ
ոք է՝ որ ատեայ զնա . և որպէս արդեօք հա-
ւատասցուք՝ որոց ասենն , մեք քրիստոնեայքս
ատեամք զմեծութիւնս ։ Յովսէփ ասէ . վ՛ա զի
խմացեալ ծանեաք ձշմարտութիւնք հաւատա-
ցեալքս՛ի քո , եթէ լինչք կենցաղոյս ոչ փո-
շի յանցս ձանապարհաց են սփռեալ , և դիւ-
րաւ ցրուին . վ՛ա զի ո՛չ մնայ ումեք մեծութիւն
իւր , զի և մեզ ցանկալի լինիցի , այլ իբրև
ստուերք խուսափէ , և որպէս զանիւ հոլովի .
քանզի՛ի բաց վախչի ձեռով մեծուն՛ի մե-
ծատանց , և իշխանութիւն յիշխանաց , և թա-
գաւորութիւն՛ի թագրաց . վ՛ա զի առ հասա-
րակ հանգոյն ամ հողածնելոց ընդ մահու ան-

կեալ ուրուք՝ ՚ի հոգ դառնան և կոխան լի-
նին ոտից. վա՛յ այն և մեք ոչ ցանկամբ ան-
ցաւորիս, այլ յաւիտենականին. զոր ակն
ոչ ետես և ունկն ոչ լո՛ւաւ, և ՚ի սիրտ մար-
դոյ ոչ անկաւ. զոր պատրաստեաց Աստ սիրե-
ղեաց իւրոց։

Ա՛ոգպետն ասէ. Թո՛ղ զայդ ամ աւելորդ
շաղփաղփանս և զառաստպելս անմիտ մար-
դոց. և զոր հարցանեմ՝ ասա՛ ինձ. առնե՞ս
զկամն և զՀրամանս արքայի՝ երկիր պագա-
նել յոտ արեգական մեծի, եթէ՝ կամիս չա-
րաչար մեռանել։ Վասն եւ Աբն յովսէփ (8)
և ասէ. Մի՛ մոլորիր ո՛վ ամպարիշտ, և մի՛ ակն
ունիր՝ եթէ ես երկիրպագից արեգական,
որ միշտ ուսուցանէի ամենեցուն, թէ ան-
շունչ տարր է արեգակն, և անմտան չա՛ծա-
կան զօրութիւնէ։

Յայնժամ յաստուցեալ մոգպետն Հրամայեաց
պարզել զյովսէփ ՚ի գետին, և հարկանել
զնա արանց տասանց փոխանակաւ՝ հաստ գա-
ւազանօք նռնենեօք. մինչև կարծէին զնա-
հատակն յոտիս ապաստան։ Ապա նա զաչս
յերկինս ամբարձեալ՝ լուիկ ի՛նքեր օգնուի
և զօրութի՛ն ՚ի նմանէ. և շուրջ հայեցեալ յա-
րիւնն աղբերացեալ յա՛մ կողմանց մարմնոյ
իւրոյ՝ ասէ մեծաձայն. գոհանամ զքէն յան-
չափս քո՛ որդի Աստ, որ արժանի արարեր զիս
այսպիսի մեծի չնորհաց կրկնակի մկրտուե՛ա՝
՚ի լո՛ւանալ միւսանգամ զանձն իմ, և մաք-
րել զաղտեղութի՛ս յանցանաց իմոց։
՚Ի բանից աստի յառաւել կատաղուի բերէ
դահ-

գահՃայ՝ Եւս խստագոյն հարկանեկին զնա ։ մինչև չինալոյ ողջ տեղւոյ ի մարմնի նը ։ և այնպես լուծեալ ի տանջանաց՝ արկաւ կապանօք ի նոյն բանտ, յորում էր ակեփսիմաս ։

Յետ այսորիկ ի քննուԹիւն ածեալ զառաքինի սարկաւագն զայիԹալաս՝ ասէր ցնա մոգպետն ։ սուղ բանիւ կամ ես ինձ վՃարել զքո դատաստան ։ երկիւղած արեգական, Ճաշակեա՛ յարենէ, ա՛ռ քեզ կին, և հնազանդ լեր արքայից արքայի ։ և այնուհետև ամ ինչք քո քեզ լիցին, և զանձն քո ապրեցուսցես ի տանջանաց և ի դառն մահուընէ, որ սահմանեալ է ընդեմ քրիստոնէից ։ ՊՃիւ եւս այԹալաս համարձակաձայն բարբառով, և ասէ ։ լաւ է ինձ մեռանել՝ զի յաւիտեան կեցից, քան եԹէ կեալ՝ զի յաւիտեան մեռայց ։ այս խորհուրդ խորին հաստատեալ է ի սրտի իմում ։ իսկ զարիւն դուն կերիցես՝ շուն անյագ, և արեգական դուն երկիրպագցես այր խելագար ։ որովհետև ոչ տեսանես զգերապայծառ լոյսն՝ որ վաղուանս երևեցաւ մեզ յերկրի, և անուն նը ես հասծագաց ի ծագս ը ամ տիեզերս ։

Ասէ մոգպետն խորամանկեալ չարուԹը ։ ցաւ է ինձ ի վը քո, որ մահու ցանկաս իբրև լաւագունի քան կեանս ։ և ո՞ հաւանեցի քեզ՝ որ ուսուցանես ատել զկեանս և սիրել զմահ, եԹէ ոչ որ կամիցի մոլիլ ոչի ըզքրիստոնեայսդ ։ Ասէ ԹաԹալաս ասէ ։ մոլեգնեալ դուն զքեզ ծանիր և զամ համակզենս

քո

քո անճանաչ՝ գլխովին ի ձմարտութիւն .
մեր վիշն երկնաւոր զԸնդհէմն ուսմանդ ձե-
րոց ուսոյց մեզ՝ սիրել զկենաս , զոր դուդդ
մահ անուճանէք , և խորհիլ ի մահուճանի անե-
տի՝ զոր դուք կենաս կարդայք ։

Յայնժամ ասա Թափեաց ի նա բռնաւորն
զմ Թերս բարկութե իւրոյ . հրաման ետ պահ-
ձաց կապել զերանելին վկային զձեռս ընդ
ծնդովք չետոյ կողմանէ , և գերան մեծ ի
Թիկանց կուսէ անցուցանել ը մէջ բազկաց
և քամակին . և արք երկոտասան ձնչէին
աստի և անտի զծայրս գերանին . որով ձար-
ձատեր մարմին նոյ ծերոյն , և յիմ անդամն
նը տիրեր ցաւ անհնարին . և յաւելին անօ-
րէնք գան և հարկանել զնա յերկար ։ Այլ
երանելին սքանչելի համբերութե տարեալ
ամի՝ համարձակ յանդիմաներ զբռնաւորն ,
մինչև կոչել զնա պիղծ շուն լափլիզող ա-
րեան , և գարշ ագռաւ չաղղակեր ։

Իսկ բռնաւորն կրձտեալ զատամունս իւր՝ նա-
խատեր զդահիճս իւր իբրև զկնամարդիս ,
զի չկարացին չաղթել քաջ նահատակին , և
Թողացուցին նմա խօսել իսկ ։ Այլ ին իրի և
դահիճք այնչափ հարին խստագոյն զչիթա-
լաս , մինչև խախտիլ ոսմ անդամոց նը և ան-
պիտանանալ . և այնպէս հարկ եղև այլոց
բառնալ զնա և տանել ի բանտ , ուր կային
ակեփսիմաս և յովսեփ ։

Յետ աւուրց հնգից ետ հանել մեզպետան ի
բանտէ զվկայն , և նստեր ի պարտիզն (9) ,
խօսել սկսաւ ը նմ , և ասէ . չէ՞ ի քաց ե-

դիք արդեօք զկարծիս յիմարուե ձերոյ ոմն
չարարուեստ կախարդք , կամ թէ տակաւին
չնչիք հաւան այ թշուառականք հնազան-
դիլ արքունի հրամանաց ։ Պետրոս եւս միա-
բանութիք վկայքն , և ասեն . մի ։ խորհուրդ
եւեթ ունիս ամենագով . և մի կամք անկեղծ ,
և մի հաւատք ուղղութիե . և որչափ այսպի-
սի յոյզս խնդրոց մեքենայեսցես ընդէմ մեր ,
և՛ պնդագոյն և անդրդուելի զմեզ գտցես
՚ի նոյն ՚ի միտս . քանզի հաստատեալ ։ մեր
չանսայ հրամանաց անօրէնն Թագաւորի . իսկ
դու ըստ քումդ բարձրամտութիե և խստասըր-
տութե արա ընդ մեզ զոր կամիս և զոր կարես ։
Յայնժամ հրաման ետ բռնաւորն , և արկին
դահիճք զվկայն ՚ի գետին , և պրկեցին ա-
ռասանօք . և եդեալ ՚ի կրնկունս ոտից նոցա և
յոլոգս և՛ ի կողս ի մի ձողս՝ ոլորեցին պնդա-
պէս , մինչև քայքայիլ ոսկերաց նոցա և ձռնչել
ձարձատմամբ . և յայնպիսի տանջանս ստէպ
հարցանէին զնոսա արքանեակք չարին , եթէ
կամիցին յանձն առնուլ զհրաման Թագաւորին
և կենալ . իսկ քաջ նահատակքն զուարթ ե-
րեսօք և համարձակ բարբառով գոչէին . ՚ի
մի ածմք հաւատացեալ և յուսացեալ . ոչ
լսեմք հրամանի Թագաւորին ։ Եւ այսպէս
յաղթօղ լինէին ընդէմ բռնաւորին արիա-
կան սէր վկայքն . և ածմ փառաւորեալ լինէր
՚ի նոսա ։

Իսկ դահճացն բարձեալ զնոսա իբրև զմեռեալս՝
միւսանգամ տարան ՚ի բանտն . ուր յերկա-
րեալ յաւուրս բազումս՝ օր ըստ օրէ տանջեալ
լին

լինէին երանելիքն յանողորմ դահճաց գանիւք, հանդերձ սովու և ծարաւու, գեհենական լինելով և մերկութ, և աղգի աղգի տառապանաւք. զի և չէր իշխանութի մտանել ումեք առ նա, և դարմանել մարմնական կերակրովք կամ վերարկուաւք. և հրամայեաց սաստիկ էր եղեալ՝ի մոգպետէն, զի թէ ոք մտցէ առ նա, իբրև յանցաւոր ըմբռնեսցի, և հարիւր թաւշով գան արբցէ, և՝ի ձեռաց և յընչաց կամ յականջաց ծայրատեսցի։

Եւ այնպէս մնացին երանելի ծերունիքն՝ի բանտին զամս երիս անտանելի ձգնութիւք՝ հանդերձ ամ յօժարութիւք վա սիրոյն քրի։ Այլ առ սաստիկ նեղուէ սովոյն՝ գթացեալ՝ի նա որք ըն նա կալանաւորք կային՝ի բանտին, ելանէին ընդ կապանաւք՝ հանդերձ պահապանաւք՝ տանէ՝ի տուն, և մուրանային վա նոյ կերակուր դուշնաքեայ՝ ըն ներելոյ բանտապահաց. որոց տեսեալ զանհնարին նեղութիս վկայիցն քրի անցելոց զաւուրբք, և զողորմելի կեանն՝ կարեկից լինէին, և աշխարէին իբրև զընտանիս։

Լսեալ վկինի երից ամաց չարչարանաց սքոյ վկայիցն՝ լու եղև, եթէ արքայն Հայկեալ է յԱն մարաց՝ի գաւառն կոչեցեալ Խդաբխդմադան կամ բնթմադա (այն է տուն մարաց). յայնժամ մոգպետն՝ որ իշխան էր տեղւոյն և չարչարէր զսքեան, արձակեաց զնա՝ի կապանաց, և ետ տանել՝ի տուն արքունի ապարանից։ Եւ էր տեսանել զերանելին այլագունեալ և տկարացեալ յոյժ. զի՝ի բազում նեղուէ

տան-

տանջանաց և կապանաց էինն նման դիականց. մինչև անգութ հեթանոսացն լալ և աշխատել զնոսա։

Եւ իբրև տարան զնա յարքունի պալատն, կացուցին առաջի մեծի մոգպետին, որ էր իշխան ամ մոգուց և նախարարաց արևելեայց. ձին առ հասարակ. և անուն նր առ շապուհ կիմ դերսաբուռ. և առ նմ նստեալ էին մեծամեծք աւագանոյն ձին պարսից և մոգք բազումք։ Եւ մտեալ սքեցն առաջի նր՝ կացին խոնարհութ. այլ ոչ կամեցան երկիր պագանել[10]։ Եւհարց զնա իշխանն և ասէ. ասացէք, թէ որոյ պաշտաման ծառայէք, և կամ թէ ոչ լսեմ՝ քրիստոնեայ էք դուք։ Պետրոս եպիսկոպոսն արիագոյն վկայքն քան. քրիստոնեայք եմք, և միոյն ամ Աստուծոյ արարչի և նոն տիեզերաց պաշտօն մատուցանեմք։ Իշխանն ասէ. ոչ տեսանեմ զձեզ, արք ծերք էք, և զբազմ ձգանաց զփորձ առեալ էն անձինք ձեր. վասն խրատ տամ ձեզ իբրև զբարեկամ ձեր, լուարուք ինձ յայսմ հետէ, և խնայեցէք յանձինս ձեր, և մի տարապարտուց մեռանիք. այլ հնազանդ լերուք օրինաց թագրին, և երկիր պագէք արեգական. ոչ զի զօգուտ ձեր և զկեանս շահեսջիք. քզի վճիռ մահու սահմանեալ է՝ ի վր ամենեցուն՝ որ կամակորութ

Թէ գնան՝ ի Հանապարհս քրիստոնէից։

Պետրոս եպ. երանելին ակնփսխմաս. բազում աշխատութ քեզ պէտք էն, զի կարօղ լինիցիս որսալ զոք՝ ի մէնջ՝ ի կամս մոլորութ

քո. գիտեմ զի բազում փոյթ յանձին ունիս

դու

դու վրէժ խնդիր լինել ածոյն քո՝ զոր պաշտես. արդ մի՛ յամեր և յապաղեր յանօրէնն խորհրդոյդ՝ զոր խրոխտացեալ ես՝ ի վէր մեր. զոր ինչ առնելոց ես՝ արա՛ վաղվաղակի. զի ոչ զարհուրիմք՝ ի սպառնալեաց քոց, և ոչ երկնչիմք՝ ի տանջանաց քոց. զի հաստատուն է յոյս մեր առ քեզ՝ ով մերոյ. և զհրամանն անօրէնն Թէվորին ոչ առնումք յանձն։ Ա. սէ ցնոսա բռնաւորն. գիտեմ զի զմահ խնդրէք դուք քրիստոնեայքդ, զոր և հանգիստ կոչէք. և ոչինչ էն զարմանք, զի մահ լուծանէ զպատիժս պատժապարտից. այլ զոր ցանկայքդ՝ ոչ արարից վաղվաղակի. և մինչեւ սրով բարձեալ զգլուխս ձեր՝ նորահնար տանջանօք կտտամահ արարից զձեզ. զի՞մ կախարդասար քրիստոնէից լուծեալ զարհուրեցին, և ուսցին մի՛ և ս հակառակ կալ օրինաց արքայի։

Ա. սէ երանելի եպան. ի զուր սպառնաս՝ զորս չեն մեզ երկիւղալի. զի ոչ ի տանջանաց քոց, և ոչ ի սրոյ քումմէ, և ոչ ի դժնդակ մահուանէ զարհուրիմք. վասն զի որ զօրացուցանէն զմեզ՝ նա՛ծ է. և ոպես մինչեւ ցայս ժամ նա եւ մեզ զօրուն ժուժկալուէ՝ տանել վշտաց և նեղ ղուեց, զարձեալ և այժմ նա է՝ որ օգնէ մեզ, ոպէս յուսացեալ եմք. և արդ փորձեա՛ զտկարութիւն ծերուես մերոյ՝ որ՝ ա՛վ զօրացեալ. և ծանի՛ր զհանդէս աՀուէնն՝ ով Թշուառական, զի յամօԹ լինիցին յերեսաց համբերուէ յուսոյն մերոյ ունայն խորհուրդք քո, և յանդիմանեսցի մոլորուէն քո՝ի ձեմարիտ հաւատոցս։

Յայն

Յայնժամ անօրէնն իշխանն լի եղև սրտմտու-
թիւ , և հրամայեաց բերել ՚ի հրապարակէ
ջալոտիս և արջառաջնեալ նորա՝ չորեքտասան ։
և ասէ ։ երդուիմ ՚ի մեծ աջն արեգական ,
և ՚ի ձակատագիր մեծ արքայից արքայի շապ-
հոյ , զի թէ ոչ առնէք զկամն Թագաւորին ,
սպականեմ տանջանօք զմարմինս ձեր , և
Թաթաւեցուցից արեամբ զալիս ձեր ։ և ոչ
ամենևին խնայեցից ՚ի ձեզ , մինչև ՚ի ձեռն
չար տանջանաց աւանդիցէք զհոգիս ձեր ։
Ա. Կեփխիմաս ասէ ։ վա՛ զի երդուար յարե-
գակն , տրտմեցայ՝ զի ո՛չ է ՚ուժ ։ նոյնպէս և ՚ի
Թշուառական բախտ բռնաւորին ։ երկնչիմ
եթէ ոչ կատարեսցես զերդմունս քո , և լի-
նիցիս օրինազանց և սուտ ։ ապա թէ ոչ՝ ա-
հաւասիկ ասացաք , եթէ կեանս խոստանայ-
ցես , և եթէ մահ սպառնայցես , մեք զՔրիս-
տիբ հաւատս՝ յոր կամք հաստատուն՝ ո՛չ ու-
րանամք ։ այլ մատնեմք զմարմինս մեր ՚ի
ձեռս քո տանջանաց ։ իսկ զոգիս մեր՝ ՚ի ձեռս
Նորա աւանդեմք՝ որ ետ զսա ։ զոր ինչ առնե-
լոց ես՝ մի յապաղեր , այլ կատարեա վաղվա-
ղակի ։ զի մեք պատրաստ եմք ։
Յայնժամ աղաղակեաց բռնաւորն ցասմամբ
մեծաւ , և հրամայեաց դահձացն քառակու-
սի պարզել ՚ի գետնի զերանելին՝ ձգելով
զնա երեսուն արանց՝ հինգ հինգ ՚ի կողմանց
կողմանց ։ և հրաման ետ երկուց արանց զօ-
րաւորաց տանջել արջառաջլօք զորովային նը-
և զթիկունս ։ մինչև արիւնախառն մարմինն
պատառ պատառ յերկիր անկանէր ։ Այս ամ

բոխ

բոխ մարդկանն աղաղակէին առ վկայն. կա-
տարեա՛ զկամն Թէգրին, և ապրեցո՛ զանձն
քո՛ ի տանջանացդ։ Իսկ քանզ նահատակն
ձայն արձակեաց՝ մինչդեռ կարօղն էր բար-
բառիլ, ասէ ցբազմութիւնն. ես՛ ի մանկու-
ւսայ առնել զկամն նոյ. և՛ ոչ զկամն անօրէնն
Թէգրի և բռնաւորացդ։

Նա իբրև՛ ի սաստկութէ տանջանացդ ոչ ևս այլ
կարէր խօսել, ընդէմ չար խրատուոյ նշա-
նացի առնէր գլխովն՝ թէ ոչ լսեմ ձեզ. և
այնպէս աչօքն՛ ի վեր նկատէր, և՛ ի սրտի իւ-
րում աղօթէր. մինչև՛ ի տանջանս անդ ան-
պարտելի համբերութէ և կատարեալ խոստո-
վանութէ աւանդեաց զհոգին։ Նա սակայն
յետ վախճանելոյ իսկ նէր փոխեցան հարկա-
նօղ դահիճքն, և տակաւին տանջէին զմե-
ռեալ մարմինն. մինչև փշրեցան ամ ոսկերք
նէր. և ընկեցին զնա՛ ի բարձանց՛ ի խոնարհ,
և քակտեցաւ պարանոց նէր. և քարշեալ ըն-
կեցին զնա՛ ի փողոցամէջս քաղաքին կիսար-
տաքոյ՛ ք զպարկոպն. և պահապանքն շուրջ
նստեալ պահէին։ Նա զկնի երից աւուրց դո-
ղացան զպատուականն նշխարս նէր գաղտա-
բար՝ հրամանաւ Թէգրազինն դստեր Թէգրին
հայոց, որ ըստ այն աւուրս կայր՛ ի պատանդի
յամուրն մարաց (11)։ Նոքդ կատարեցաւ երա-
նելին ակեփսիմաս եպս՛ ի տանեըորդ ա-
ւուր ամենեանն հոկտեմբերի։

Ո կնի վկայական մրցանաց սքնի ակեփսի-
մեայ՝ ածեալ լինէր յերբ քահանայն յովսէփ
առաջի անօրէնն իշխանին ատրշապհոյ. և ասէ

ցնա Իշխանն. տեսեր արդեօք զանմիտ և զամբ
պարիշտ ընկերն քո, թէ որպիսի անարգ մա-
հու և տանջանօք մեռաւ՝ ոչ կամեցավ հնա-
զանդել օրինաց մերոց և հրամանաց Թէրին.
և արդ խրատ տամ քեզ զգոն լինել, և մի
կալ հակառակ հրամանաց մերոց. այլ վաղ-
վաղակի հաւանեալ երկիրպագ արեգական.
զի փրկեացես զքեզ ի տանջանացն՝ որ պատ-
րաստեալ է քեզ։

Պինն ետ սքեն յովսէփ և ասէ. արեգական
ես երկիր ոչ պագանեմ, զի չէ՛ ած, այլ՝ ա-
րարած այ. և հրամանաց Թագաւորին ոչ
հաւանիմ, քանզի անօրէնն անօրէնս ուսու-
ցանէ, և հեռացուցանէ յարդար օրինացն
այ. արդ զոր ինչ խորհեալ ես վնաս իմ, արա՛
վաղվաղակի։ Յայնժամ ցասուցեալ Իշխանն՝
հրամայեաց երեսուն արանց ըզ օրինակին ա-
ռաջնոյ լարիւք պարզել զվկայն ի չորից կող-
մանց. և հարկանել զնա գահճաց փոկովք.
և այնչափ հարին անխնայ զթիկունս նորա
և զկողս, մինչև յերեսաց հարուածոց վիրա-
ւորիլ բովանդակ անձինն միապաղաղ, և
յարիւն թաթաւիլ։ Յայնժամ որք մերձն
կային, աղաղակ բարձեալ ասէին ցնա. ողոր-
մեա՛ց քեզ ով Թշուառական, և արա՛ զկամս
Թէրին. զի բարձցի ի քէն տանջանքդ,

ասէրեացիս։

Եւս երանելին համարձակ պինի առնէր ի
լուր ամենայն ռամկին, և ասէր. ես ոչ զոք խոս-
տովանիմ ած բաց ի միոյն այ մշտնջենաւո-
րէ և ճշմարտէ. մի հաւատաք դիտեմ. և մի

ՀՀմարտուն . զոր պինդ ունիմ և դաւանեմ
ըստ նահատակիցս իմ. երեք ընկերք եմք ,
և ՚ի մի կամ և ՚ի միտս կամք : Նոքա իբրև
բազում հարուածովք տանջեցին զնա , մինչ
զի և ՚ի սաստկութէ տանջանացն անբարբառ
և անշշունչ երևէր , այնուհետև համարե-
ցան զնա մեռեալ . և քարշեալ ընկեցին զե-
րանելին կիսամահ արտաքոյ պատսպաց ՚ի փո-
ղոցամիջի անդ . այլ իբրև իմացան՝ թէ դեռ
ևս ոչ է մեռեալ , ղգուշութիւն պահէին զնա
պահապանքն :

Յետ այսորիկ հրամայեաց իշխանն յառաջ
ածել զերանելին այիթալաս սարկաւագ , և
ասէ ցնա . արդ անսա ինձ դու յայսմհետէ ,
և մի պնդեր ՚ի նմին յամառութեդ և ՚ինանիր
խորհուրդս , որպէս և ընկերք քո՝ որ դառն
տանջանօք եկին յՅէ և զրկեցան ՚ի կենաց .
այլ մատուցեալ երկիւղած արեգական , և
արա զկամս արքային . և փառք և պատիւ
ընկալցիս ՚ի նմանէ :

Պատասխանի ետ սքեն այիթալաս , և ասէ
ցնա . սքանչանամ յոյժ հնութեամբդ և կու-
րութի քո ոմն հեգդ և թշուառական . զի իբ-
րև անբան և անզգայ խօսիս , և ոչ հայիս և
նկատես աչօք մտաց քոց զՀՀմարիտ և վէպ-
կանն ՚Ա՛Ծ , զոր մեք պաշտեմք . և չար բանիւք
կասիս պատրել զանձն իմ իբրև զմանուկ տըխ-
մար . քանզի ՚Ա՛Ծ ենք՝ որք ծերագոյն քան զիս
էին հասակաւ և տկարագոյն մարմնով , քա-
ջութիւք յաղթեցին տանջանաց , և կամաւոր
մահուամբ որ վ՚ա՛ յ ՚ժառանգեցին զփառս
երա-

երանելի և յաւիտենական կենաց , և՛ առա-
ւել եւ՝ որ կրսերագոյնս եմ քան զնա , պըն-
դուք համբերեմ՝ամ նեղութեանց և չարչարա-
նաց , և հաստատուն ինամ՝ի ձգնարտութե
հաւատս , ոչ աւանելով զկամս անօրէն թա-
գաւորին , որ հակառակ է ամ իրաւանց և
արդար օրինացն ՝ով , և օտարացեալ՝ի լուսոյ
կենացն յաւիտենից :

O այս իբրև լուաւ ամպարիշտ իշխանն, խոր-
վեցաւ յոյժ , և՛ի դողման եղեալ ամ անդա-
մօք իւրովք՝ լցաւ սրտմտութ և բարկութ , և
շրջեցաւ գոյն երեսաց նր : Յրամանն ետ ա-
րանց քառանեից զօրաւորաց պարզել զնա
քառակուսի ձգմամբ՝ի բազկաց և յոտից ,
և հարկանել զնա խոտոտգոյն վայրենի փշե-
ղէն մահակօք , կիճ ըստ այլոց Թարմ ջալոտիւք
կամ փոկովք . մինչև արիւնն՝ որ իջանէր՝ի
նմանէ , ոռոգանէր զերկիրն : Նոկ առաքինի
վկայն աղաղակեալ ձայնիւ մեծաւ ասէ . ծուլ
սիրտ և անմաքուր , հէգ և թշուառական
քան զամ մարդիկ , որպէս դու անզօր ես և
թոյլ , նոյնպէս և տանջանքդ քո և սպասա-
ւորք՝ տկարք և անոյժք են . որք ոչ կարացին
յաղթել ինձ . արդ եթէ ունիցիս այլ չարչա-
չար տանջիչս խոտոտգոյնս քան զառաս , այնո-
ցիկ հրամայեա՝ միւսանգամ չարչարել զիս .
զի՛ի ձեռն առաւել տգոյն տանջանաց յաւել-
ցին ինձ զօրութիւնք՝ի նմանէ , և մեծագոյն
վարձս ընկալայց յարարչէն իմմէ :

Յայնժամ որք բազմեալն էին ընդ իշխանին ,
զարմացեալ՝ի վր համբերութե և համար-

ձակութիւն սէր վկային՝ ասէին. զի արդ ա-
ղանդաւոր քրիստոնեայքդ միշտ ծարաւի են
մահուան և չարչարանաց, որ ոչ հացի և ջրոյ
կարօտանայ: Ս. սէր իշխանն ցնա. քանզի կա-
տարեն գործովք զգրելն՝ի գիրս իւրեանց,
որք և առասպելաբանեն՝ թէ գոյ այլ կեանք
անվախձան, և հատուցմունք անսպառ՝ որ
ոչ անցանէ:

Ասէ՝ի սաստկութիւն տանջանացն անդամք
սէյն քակտեալ լինէին՝ի միմեանց, և մանր-
բեալ ոսկերք զօդուածոյն յանհնարին և՝ի
դառն հարուածոյն. և ապա բարձեալ եր-
կուց արանց՝ բերին զնա առաջի իշխանին:
Ս. սէ ցնա ստրշապուհ. արդ յայսմ հետէ
հնազանդ լեր, և արա զկամս արքայի. և ես
կոչեցից բժիշկս՝ զի ողջացուսցեն զվէրս քո:
Վշխի ետ երանելին սյիլթալաս, և ասէ ցնա.
ծաղուս են արժանի խրատք քո, որ սասցեր
ինձ՝ի ձեռն բժշկաց առողջանալ, որք դե-
ղոց կարօտին առ՝ի տալ զբժշկութիւնս յա-
ւուրս բազումս. բայց թէ և բանիւ քո մի-
այն առժամայն զնս խոստանայիր բժշկել և
առողջացուցանել, սակայն ոչ մեկնեի ես՝ի
սիրոյն քումէ, այն՝ որ արար զերկինս և զեր-
կիր. և չառնուի յանձն երկիրպագանել ա-
րեգական՝ որ կարգեալ է յայլ մերմէ՝ի սպա-
սաւորութիւն մարդկան:

Ս. տրշապուհ ասէ. զայդպիսի յամառուն և
վհատարտութիւն մատց Թողեալ՝ արա զկամս
Թագրին, զի Թողցին քեզ հայհոյութիւնք դա-
տաստանքն. և եթէ ոչ լսես մեզ, այժմ ա-

րա-

բարկ զքեզ առակ նշաւակի ամ քրիստո-
նէից չարաչար հարուածովք, զի մի այլ ոք
համարձակիցի թշնամանել զնածն և զթա-
գաւորն։ Ա. Յիսուս ասէ. ով երկայն թըշ-
ուճառական, ուստի՞ կ քեզ այդ՝ զի ակամայ
մարգարէացար, զի օրինակ բարի եղէց քրիս-
տոնէից՝ ոչ անտես առնել նոցա զարիաբար
համբերութիւնս իմ, այլ զի քաջալերեսցին և
նք, և կոխան արասցեն զամբարհաւաճու-
թիւնս ձեր. և անուն և յիշատակ բարեաց
Թողից որք գալոցն են զկնի իմ՝ զհամբերու-
թիւնս իմ, և զնահատակութիւնէ պատերազմ
և զյաղթութիւնս՝ զոր կրեմք ես և ընկերք իմ
ծերունի մարմնովք. և զանապական և զա-
նեղծուածս պսակն ժառանգեմք՝ի գալստեան
նորն մերոյ յի քն։

Յայնժամ դենպետ իշխանն ատրշապուհ
կոչէաւ ինքն զմոգպետան ատրքուրքաշար
որ իշխանն էր նահանգին ադիաբայ, ասէ
ցնա. եթէ դեռևս կենդանի կայցեն մոլո-
րեցուցիչքն այն, տար զնոսա՝ի հայրենիս
իւրեանց՝ի քաղաքն քո արբել, և ժողովեա
զքրիստոնեայս՝ որ՝ի նմա. և թէպէտև ոչ
կամիցին, սպառնալեօք և ցասմամբ հրա-
մայեա նոցա քարկոծ առնել զսոսա. վճռ ոչ
ետու դոյ զվէիս մահու սրով ըզունել։ Նո-
վաղվաղակի հրամայեաց պատրաստել եր-
կուս գրաստս, և դնել զյովսէփ և զայրիթա-
լաս՝ի վրն նոցա, և շուրջ պնդել յամ կողմանց,
զի մի՝ի վայր անկցին. զի լուծեալ էին ամ
անդամք նոցա և փշրեալ ոսկերք. (նմին իրի

ամանք գրեցին՝ ՚ի սայլ բարձել) : Ասկայո-
ժամ հասին զՅանապարհայն ՚ի տեղի մի օ-
թևանացն , անուճ զինուորքն ընկեցին զնա
յերկիր իբրև զբեռինս փայտից կիմքարանց .
և յայմ դնացս Ձիգհացն այնպես անխնամ և
անողորմ տանջանօք տանէին , մինչև եկել
հասին ՚ի քաղաքն արքեղայ՝ որ և արտաւիլ՝
՚ի սահմանն եդնէզ . և արգելան ՚ի խաւար-
չըտին բանտին . յորում տեղւոջ անկեալ
դնէին երանելիքն իբրև դիակունք անշարժք
շարաւալից և արիւնաթաթաւ . և նստեալ
զինուորքն սահէին գնա , զի մի ոք ՚ի քրիս-
տոնէիցն մտցէ առ նա :

Կին ոմն էր ՚ի քաղաքի անդ արքեղայ , որում
անուն էր յեզանդուխտ՝ որ և յստրնատուխդ
կիւ եազատունդուխտ , որ Թարգմանի դուստր
ևս , բարետոհմ՝ քրիստոնեայ հաւատով .
որոյ յիշատակ լինի դովութիւն և ՚ի վարս այ-
լոց նահատակաց ըստ յայսմաւուրքս : Այս
երանեալ տանէր ամ խոստովանողաց և վկայից
և ամ կալանաւորաց , որ արգելեալ էին ՚ի
բանտի վ՚ոքին , շուրջ գալով և գտանել-
լով , և կերակուր և աղպէտ մատուցանելով :
Իբրև լուաւ նա վ՚ոքին յովսեփայ և այլ-
Թալայ , եթէ յոյժ նեղեալք են ՚ի բանտին ,
առաքեալ կոչեաց զբանտապանն , և ետ
նմ ոսկի բազում . և աղաչեաց զնա , զի մտել
լինքնին տեսցէ զնոսան . և եթէ այսմ անհնար
է լինել , գոնեա Թողացուսցեն ՚ի տուն իւր
բերել զնա ՚ի միում գիշերի :

Ասկ նոքա ահիւ մեծաւ զարհուրեալք մուծա-
նել

նել զնա ՚ի բանտն՝ խոստացան նմա առնել
զկամս նը զմի միայն գիշեր . վասն առաքեաց
քոնասեր կինն զաղախնայն իւր ՚ի գիշերի .
և բարձեալ զերանելին վերամբարձ՝ բերին
զնա ՚ի տուն նը : Իբրև եհաս զնոսա յեզան-
դու խոտ այնպես չարաչար վիրաւորելն տմար-
դի հարուածովք , առեալ կտաւս բարակս
և մաքուրս մաքրեր զարիւնն և զթարախն .
պատեր զվերս նը , և համբուրեր զլուծեալ
անդամս և զվերս նը , և օծաներ անոյշ իւ-
ղովք . և լայր դառնապէս գգիշերն ամ . և
այսպէս կայրնոքքն անշշունչ՝ իբրև անզգայ-
ացեալք ՚ի ցաւոցն :

Ա պա ՚ի միտս եկեալ նոյն յովսեփայ , և տե-
սեալ զկինն՝ զի լայր , ասէ . ընդէր այդպէս
դառնապես ողբաս կինդ դու . և ոչ մանա-
ւանդ ուրախանաս իբրև քրիստոնեայ առա-
քինասեր մտօք ընչարչարանս մեր և ընմահն
որ վն քոնի : Կինն եւս առաքինի կինն , և
ասէ . ոչ վն մահուընէ ձերոյ լամ ես ով նը
վկայք քոնի . ուր ցանկալի էր ինձ բազում
գոհութնք խնդակից ձեզ լինել՝ վաղվաղակի
տեսանելով զձեզ կատարեալս վկայութնք .
այլ վն այնուհետև հառաչեմ և լամ դառնապես
ցաւակցութնք , զի տեսանեմ զձեզ թողեալ
յայդպիսի չարաչար նուճազութնէ և ՚ի տան-
ջանս , և մղձկիմ թախծութնք սրտի իմոյ :
Կինն եւս նըն յովսէփ նուճազ ձայնիւ , և
ասէ ցնա . ով քոյր իմ մի՛ տրտմիր . քանզի
նուճազութիւս այս՝ զոր տեսանես այժմ , ե-
թէ հաւատաս , ուրախութնէ և ցնծութնի է

'ի հանդերձեալ երկրին . ոմք և ասաց փրկիչն մեր քո, Թէ նեղ և անձուկ է ճանապհն՝ որ տանի 'ի կեանսն յաւիտենից , և սակաւք են՝ որ մտանեն 'ի նա . և դարձեալ Թէ՝ որ համբերին իսպառ , նա կեցցէ : Այս երանելի առաքեալն ասէ , Թէ երիցս ձաղկեցայ , և միանգամ քարկոծ եղէ . և դարձեալ ասէ . ինձ այսպէս Թուի , Թէ ոչինչ են արժանի չարչարանք ժամանակիս այսորիկ հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց է 'ի մեզ : Արդ դու ով կին հաւատացեալդ 'ի քո՝ յորժամ տեսանիցես զոք հաւատացեալ՝ 'ի նեղութիւն և 'ի չարչարանս մատնել վասն քեզ և համբերեալ նեղուիլն , ցնծա և ուրախ լեր մանաւանդ , և գոհացիր զնմա . զի որչափ նեղին և համբերեն , նոյնչափ առաւելուն պսակքն և հատուցմունքն :

Եթէ այսորիկ ընդ այգանալ առաւօտուն եկեալ պահապանացն՝ առեալ տարան զնա անդրէն 'ի բանտն . և արարին նոքա անդ այլ ևս ամիսս վեց մինչև ցամիսն ապրիլ , կապեալ յարգելանս բանտին մեծ և դառն նեղութ , զոր ոչ ոք կարէ 'ի մարդկանէ ձառել բանիւ : Այս 'ի միջոցի անդ ժամանակին մեռաւ կիսկ 'ի քաց գնաց յիշխանութենէ մոգպետն , որ դատէր զվկայն . և փոխանակ նը եկն այլ ոմն մոգպետ՝ զիրուդ կիսկ զարուշատ անուն , չար և դառնագոյն բարուք քան զնա . և էր նը հրաման առեալ յարքայէ՝ առաւել կտտանօք չարչարել և նեղել զվիշտս հաւատացելոց , այլև վասն Յիսուսի քրիստոնէից պատուիրեր

ա-

առեալ էր նը , զի ակամայ կամօք հաղորդակից լինիցին անօրէն հեթանոսաց և մոգուց ՚ի քարկոծել զքահանայս և զառաջնորդս քրիստոնէութեան ։

Յայնժամ խռովութիւն մեծ և տրտմութիւն անհնարին անկանէր ՚ի մէջ հաւատացելոց և երկիւղ յոյժ վը այսպիսի հրամանաց , որ էլ յերեսաց անօրէն Թէրէին . վայ քրիստոնեայքն ցրուէլ լինէին ՚ի լերինս և ՚ի յայրս և ՚ի փոսպարս , Թերևս կարասցեն ապրեցուցանել զանձինս իւրեանց յայսպիսի անտեսի գործոց . զի մի ՚ի հարկէ հաղորդիցին անօրինացն՝ ըստ նը քարկոծելով զնը վկայսն քսի ։

Ա.րդ երբև եհաս ՚ի քաղաքն սրբեղայ մոգպետն զարուշատ , ՚ի մտանել նը ՚ի տաճար հրոյն յերկրպագութիւն՝ ասէն ցնա սպասաւորք ատրուշանացն . են աստ արք երկու գլխաւորք յաղանդոյն քրիստոնէից արգելեալք ՚ի բանտի , և այս երեք ամք են , և ամիսք վեց , զի բազում անգամ տանջեաց զնը ատրքուրքաշար մոգպետն՝ որ յառաջ քան զքեզ էր . և ոչ կարաց ամենևին Թուլացուցանել զնը , և տալ հնազանդիլ օրինաց մերոց , և լսել հրամանաց Թէրէին ։

Ո այս լուեալ մոգպետին՝ հրամայեաց զառնջեաւ ածել զնը . սկսաւ խօսել ընդ նա հարկութիւբ , և ասէ . ո՛վ ազգ յանդուգն և խստասպարանոց և ամբարտաւան . զի դեռևս ոչ հիացոյց զձեզ սպառնալիք և ահ Թէրէին մեծի՝ շահկոյ արքայից արքայի , որ հնազան-

դե-

դեղոյցն զնմա ի թշուառին ազգաց և ըմբռնեաց զքաղաքս մեծամեծս և զբազումս. և դուք հպարտացեալք բնակիք յերկրի նր և և՛ի քաղաքի, և անարգեք զնա և արհամարհեք զլրհնս նր, և առատն Կարկանիք զնրա մնաս նր։

Պղնի ետ երանելին յովսէփ [12], և ասէ. եթէ արդարև զթիւղոն քո արհամարհեմք ատամբակութիւն՝ ոչ և ասացեր, և թշնամիք և ոսոխք նր եմք, զի՞ է՝ զի ոչ սպառազինեցաւ ի պատերազմ ընդ մեզ հանդերձ կազմուքն զինուց և զինուորաց, որ ընդ այլ թագաւորան՝ զորս դու յուշ արարեր. այլ զքեզ զհեգդ և զթշնամառականդ և զտկարդ քան զնմա՝ մարդիկ առաքեաց, որոյ դողայ սիրտդ և՛ի տերևոյ շարժելոյ՝ ի հողմոյ. և ոչ պատերազմ տեսեալ ես քո, կամ գոնէ ընդ քաջ արս յորս երկոց եղեալ յանտառս. այլ ամ գործք քո պղերգութիւք և ամօթալի աղտեղութիւք ընդ կանայս ես. վո՜ որոյ ամաչեմ ասել զնմն. այլ դու անամօթ լրբութիւք եկիր այսր ոչ յաղթել մեզ, այլ՝ յաղթիլ՝ի մէնջ. զի որք զնմարտութեն այ հաւատացեալք են, և զլրութիւք նր զինուորեալք, ոմն կարիցէ նոցա յաղթել. վայ եկիր դու ոչ զառ՝ի թիւղորէ ապստամբս նուաճել, այլ կարծելով մնլրեցուցանել զմեզ՝նման քեզ առնելով թշնամառականս և որդիս գեհենին. այլ մեր յոյն հաստատուն է առ ածն մեր և ինր, և առ սէր նր համբերեմք ամ տանջանաց՝ որ գան՝ի վրր մեր. և արդ մի լինիր ժամա

վա

վաճառ, զի բանք քո լի թունիւք դառնուէ
ոչ մտանեն յականջս մեր։
Ասպպետան ասէ. ոմ աղանդաւոր և ամպաւ
ըիշտ կախարդ, ես երկայնամիտ լինիմ առ
քո Թշնամանս և անարգանս՝ զոր Թափես
ի վերայ իմ. քանզի դուս ակնունիս, զի ի
սրտմտուէ շարժեալ՝ փուԹապէս վՀիռ մա
հու հատից ի վէր քո՝ բառնալ սուսերաւ ըզ-
գլուխ քո, ոչ զի ազատեսցես ի պատրաս-
տեալ քեզ տանջանաց. ոչ այդպէս. այլ առ
փոքր փոքր չարչարանօք մաշեցից զմարմին
քո, եԹէ ոչ ի ղաստուԹի եկեսցես, ոչ
հրաման ընկալայ յարքայէ։
Յովնէփ ասէ. գիտեմ ՁնմարտուԹիւն, զի
լցեալ ես սիրտ քո դառնուԹիւն ի ներքոյ, և
նենգուէ չարին բովանդակ մարմին քո ներ-
կեալ ես՝ վիշապ ապականիչ, որ ծարաւեալդ
ես արեան անմեղաց. սրդ յայտնեա այսօր
հետև գնենգուԹիւն քո, և ցոյց զղօրուի իշ-
խանուէ քո. մերկացո զվաղակաւոր քո ոմ
արիւնարբու, և խողխողեա պատենազին
սուսերաւդ. և զտրտմուԹիւն քո փարատեա
իմով անպարտ մահուամբ. զի դատապար-
տեսցիս իրաւամբք յաւուրն դատաստանի,
և ի հուր գեհենին մտանեսցիս յաւիտեան.
և զմեզ առաքեա ուրախուէ և փառօք յար-
քայուԹիւն երկնից, առ որ ունիմք զյոյսն
մեր. նա ինքն խորտակէ զժամանակաւորս և
զանցաւորս ԹշնամուԹիդ ձեր և զլինչանուիդ։
Յայնժամ սրտմտեալ յոյժ անօրէնն՝ հրա-
մայեաց կախել զնա զծայրից մատանց ոտից
գլխի

գլխ'իվայը. և զբռվանդակ մարմինն հարկա-
նել և քանցել արջառաջլօք և փոկովք և այլ
փշալից գաւազանօք. մինչև 'ի թիկանց սքին
և 'ի կողից և 'ի լանջաց հոսեր արիւն շարա-
ւախառն իբրև զվտակ. և չհանդուրժեալ
այնպիսի տեսլեան սմբռին՝ որ շուրջ կային,
արտասուս հեղեալ 'ի վեր նը լային գաւնա-
պես: Յայնմ վայրի մոգքն շնջկին յունկն
վկային՝ ասելով. ահաւասիկ ամ ժողովուր-
դըս գթայ 'ի վեր քո, և խրատե յետս կալ
'ի յամառութենէդ. և եթէ ամօթ համարիս
զեղջ յանձին ցուցանել առաջի բազմութենէ,
առեալ տարցուք զքեզ 'ի ծածուկ 'ի տաձար
հրոյն. զի երկիւղապատես անդ, և աղաւես-
ցիս 'ի տանջանացդ:

Նոկ երանելի վկայն յամ զօրութենէ իւրմէ
աղաղակեաց, և ասէ. 'ի բաց կացէք յինէն
ամ մշակքդ անիրաւութենէ, որ գործէք զա-
նօրէնութենի. զի 'ի հուր գեհենին մատնելոց
էք դուք՝ որք կամիք կորուսանել զիս երկըր-
պագուբ հրոյ. դուք արծարծեցէք զհուրն
և ծառայեցէք նմա, որ չաւիտեան ունի տո-
ջորել զձեզ: Նա այնպէս կայր՝ որ ծերունին
կախել զոտիցն, և քրաժեծ առնէին զանձն
նը 'ի կախաղանի անդ մինչև յերրորդ ժամ
աւուրն. և նա ուրախ էր յոյժ վ՚ս չարչարա-
նացն այնոցիկ:

Նա ապա հրամայեաց մոգպետն իջուցանել
զնա 'ի կախաղանէ անտի, և ասէ ցնա. քայց
արդ հաւանեա այժմ և կեաց, կատարելով
զհրամանն արքային արքայից ոմ աղձատեալ
ծեր:

ծեր ։ Ա կայն ասէ . այդու կենաքդ՝ զոր դուք կեայք , մի լսեցի երբեք լինել ։ Ա՛ոգեաեան ասէ . եթէ տաց քեզ զվճիռ մահու , ախորժեսցիլ յանձն առնուս , եթէ դժկամակ լինիս ։ Ա՛ն ասէ . մահն՝ զոր ի ձեռաց քոց ընդունիմ, այն ինձ և որ իբրև զիս քաջասիրտք են՝ կեանք են յաւիտենականք . ուր եթէ կեանս լինէ տայրը , մահ համարիմ զայն ։ Ա՛ոգեաեան ասէ . ահա մարմինդ քո ապականեցաւ խոպառ . և եթէ զհոգիդ՝ որ միայն ի քեզ , կորուսից ի քէն՝ բաժանելով ի մարմնոյդ , ոչ ևս կարէ դառնալ ի դա ։ Յովսէփ ասէ . հոգւոյս իմոյ ոչ ունիս իշխանութիւն ոչ դու և ոչ թշնամն քո առ ի կորուսանել . քանզի գրեալ է ի ձեռ աւետարանին մերում, եթէ մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին , և զոգի ոչ կարեն կորուսանել . այլ երկերուք յայնմանէ՝ որ կարօղ է զհոգի և զմարմին կորուսանել ի գեհենի ։ Ա՛ւ արդ՝ որոյ դու իշխանութիւն ունիկիր , քո է մարմնոյս , զայս ի ձեռն տանջանաց կորուսեր . իսկ հոգւոյս իմոյ ոչ և ոչ ունի իշխանութիւն կորուսանել և կեցուցանել յաւուրն գալստեան իւրոյ յերկնից . և ահա մեզ հաւատացելոցս և յուսացելոցս ի նա գանձեալ պահի անճառ բարութիւն ի միւսանգամ նորոգութենէ մարմնոցս . իսկ ձեզ ամպարշտացդ պատրաստեալ է հուրն անշէջ և որդն ապականիչ և կրճատումն ատամանց և խաւարն աթոռաքին ։

Եւ ասացեալ Մոգպետն այսպէս արարեալ զբանս՝ Յակ անօրէնն

նիւք սէյն՝ ասէ. եթէ արդարև այդպէս կայ, զի անդ պատակք և պատիժ միանգամ քեզ, ապա երախտիք բազում են իմ առ քեզ, զի հաստուցի զքեզ այդպիսի մեծի բարութեց. ապա թէ ոչ՝ զո՞ր պատիժ ունիս տալ ինձ՝ ի վրէժ ցաւոդ։ Նրանելին յովսէփ ասէ. ոչ այդպէս է, որպէս դու զմտաւ ածես՝ չէին յայնմիկ, զո՞ր օրինակ այժմ աստ առնեն ողորմութիւն կիմաստելոյն ը ընկերի խարամ. այլ հաստուցումն բարեաց և անապական կեանք է՝ բարեաց. և չարաց հատուցումն՝ ի հոնկ ը գործոց նոյ։ Ասէ յիծախատում գիրն մեր գրեալ է բանիւ ամենահեզ փրկչին մերոյ և այ, թէ աղօթս արարէք՝ ի վեր այնոցիկ՝ որ հալածեն և լկեն զձեզ. վայ ես աղօթեմ վասդո, զի դարձցիս դու՝ ի մոլորութենդ յայդմանէ, և հաւատասցես յիծ Աշմարիտ յայտ արտե քումմէ, զի ընկալցի զդարձ քո, և թողցէ քեզ զնմ յանցանս քո, և անանց բարութեցն արժանի արասցէ։

Ասէ անօրէնն. առ ժամայս թո՛ղ անդր զայդպիսի խնդիրդ, և երթ յհին յայնմիկ խոսեւոյ զայդ ամ, յոր ակնունիս երթալ. այլ զայս գիտեա՛, զի թէ ոչ արասցես զկամս Աստուծոյ, բազում տրտմութիւք և նեղութիւք առաքեմ զքեզ անդ։ Յովսէփ ասէ. և իմ փափաք յանկուճ այն է, զի վաղվաղակի առաքեսցես զիս անդ. և վասն այնր յուսոյ համբերեմ չարչարանացս։ Ասէ պետն ասէ. այժմ ոչ արարից զայդ՝ զոր խնդրես դու. այլ՝ ի ձեռն զանազան և անկարծելի տանջանաց՝

զոր

զոր ածելոց եմ՝ ի վէր քո, զարհուրեցուցանեմ զնեմ զնա քրիստոնեայս, զի դարձցին՝ ի մի օրէնս Թագրին մեծի։

Պէտրոս եւ սքեն յովհէփ, և ասէ. զչարչարանս՝ զոր ածիք՝ ի վերայ իմ դու և որ յառաջ քան զքեզ էին բռնաւորքն, ըստ հնոցհելոյ զօրուն այն իմոյ՝ տարայ և համբերօղ գտայ. և զոր այլ խոստանաս ածել՝ ի վէր իմ քով չարիմաց դառնութիւդ, ընկալայց սիրով. զի ունիմ դարձեալ զնածն իմ օգնական, որ զօրացուցանէ զիս, և պարգևէ ինձ համբերուիլն. որով հակառակն գործի խորհրդոց քոց. վասն զի տեսանելով զիս քրիստոնէից՝ մեծաց և փոքունց՝ ծերուիթեաս իմով այսպէս համբերօղ լեալ չարչարանաց, մեծապէս օրինակ առեալ զիս՝ զօրանան արհամարհել զսպառնալիս ձեր, և կոխան առնեն զամբարտաւանութիւն ձեր, և զանօրէնն օրինադրին ձերոյ, որ այն ինքն է բանսարկուն. որում յաղթեցի յանձին քումդ զօրութիւն փրկչին իմոյ, և նոքա յաղթօղ գտայց մինչև՝ ի մահ։ Յայնժամ հրամայեաց բռնաւորն զինուորաց տանել զնա՝ ի բանտ վերամբարձ, զի ոչ կարէր գնալ ոտիւք իւրովք։

Ա. պատ եւ ածել զառաջեաւ զայիթալաս, և ասէ ցնա. ասա՛ դու ցիս. զեռևս՝ ինձմէն յառմառուե՞կաս, եթէ հնազանդիս մեզ, և երկիր պագանես արեգական, և ապրիս՝ ի տանջանաց։ Այթն այիթալաս ասէ. կենդանի է քեան իմ որդին այ կենդանւոյ, յոր յուսացեալ եմ՝ ձշմարտուիթ, և վա՛ն եր համբերեմ այսմ

ամի

ամի՝ զոր ածիք ՚ի վէր իմ. զի ոչ փոխեցից զա-
մենեցուն արարիչն ըստ արարածոց, և ոչ մա-
տուցից նոցա երկրպագութիւն: Յայնժամ հրա-
մայեաց վաղվաղակի կախել զնա գլխիվայր,
և տանջել սաստկապէս. և նա յերկար տան-
ջանսն աղաղակեր ասէպ ՚ի ձայն մեծ, և ա-
սէր. քրիստոնեայ եմ, քրիստոնեայ եմ.
լուր լիցի առ ամենեսին, զի քրիստոնեայ
եմ, և վասն քրիստոսի այսպէս չարչարիմ:

Ապա ինքեցի ումն կայր անդ կապեալ ՚ի բան-
տին. զոր հրամայեաց մոգպետն ածել ա-
ռաջեաւ. իսկ գայիթաղոս հրամանն ետ իջու-
ցանել ՚ի կախաղանէն, զի տեսանիցէ զուրա-
խութիւն մանիքեցւոյն, և լիցի նմանօղ նմա:
Ընդ իբրև տանջեցին զմանիքեցին, և սաւ-
պէին ուրանալ զհաւատս իւր և զոհել, նա
զառաջինն ընդհմացեալ՝ ոչ զոհէր. իսկ յոր-
ժամ սաստկացաւ տանջանքն ՚ի վէր նր, աղա-
ղակեալ ՚ի ձայն մեծ՝ նզովէր զհաւատն իւր և
զվիպութիւն մանեայ: Եւ ածին առաջի նր
մրջիւն բազմ, զի սպանցէ զնա. քանզի մանի-
քեցիք զմրջիւնս պատուհէին իբրև զաստուած
կենդանիս, և ամ և ածական պատուոյ արժա-
նիս. իսկ նա վաղվաղակի սպան զնա: Յայն
ժամ ասէ մոգպետն գայիթաղոս. տեսեր,
թէ որպէս վաղվաղակի ուրացաւ մանիքեցին
զհաւատս իւր:

Իսկ քաջքն երբ վկայն տեսեալ զմոլորա-
միտ զառն զայնորիկ վաղվաղակի ուրացու-
թիւնն, և զինքեան ՚ի վէր ձգմարտութեն զհամ
բերուէ, ուրախանայր յոյժ ՚ի սր. և ՚ի քա-

զուամ [illegible] իբրև վարդ պայծառ երևէին դեմք նր, կամ իբրև զնշայս արեգական. և ուրախութիք գոհանայր զնոյ. և ասէր. վաշ մանեայ, թշուառական մանիքեցին յաղթեցաւ, և սպան զայծ իւր. այլ երանելի եմ ես, և երիցս երանելի, զի յաղթեցի, և յաղթեաց ինև յիս՝ որպին մարիամու, որ և որդի նոյ իմոյ բարձրելոյ, նա կենգանի՝ նախ քան զյաւիտեանս՝ի հօրէ ծնեալ։

Իբրև լուաւ զայս անօրէնն մոգպետն, փոխեցաւ գոյն երեսաց նր՝ի սրտմտութէ բարկութիեն. և հրամայեաց միւսանգամ տանջել զնա չալոտիւք. մինչև համարէին զնա մեռեալ. և ոչ կարէր յառնել՝ի սաստկութէ տանջանացն, զի լուծեալ էին բազուկք նր՝ի թիկանց նորա. յայնժամ քարշեցին զնա մերկ և կիսամահ, և ընկեցին յանցս ձանապարհին՝ ըստ որ երթային և գային ամբոխք քաղաքին։ Եւ տեսեալ զնա ոմն՝ի մոգուց անտի, զի այնպիսի ալևոր և պատուական այր՝ չարաչարուկ և մերկ դնէր, ախտակցեալ գթացաւ՝ի վրդ նր. և մերկացեալ յիւրմէ ըղվերարկուն իւր՝ ծածկեաց զանձն նր։ Իսկ չարաբարոյք ոմանք՝ի մոգուց անտի իբրև տեսին զայն, բարկացան, և ձգեալ զայրն՝ ածին յատեան մոգպետին. և նա հրամայեաց տանջել զնա. և էարք այրն գան երկերիւր թուով մինչև՝ի նուաղիլ։ Ապա ետ մոգպետն հանել զայրն յերեսաց իւրոց [13]. և զայնթաւասն հրամայեաց բառնալ՝ի տեղւոջէն, և արկանել անդրէն՝ի բանտ։

Իսկ յետ աւուրց հնգից լուր եղև, թէ Թամ շապուհ եկեալ է յաւանն բեթ Թաբահ. յայնժամ հրամանաւ մոգպետին հանին ՚ի բանտէ զերկուսին վկայն՝ զյուլեկի քահանայ և զայլեթալաս սարկաւագ, և յանդիման կացուցին Թամշապհոյ, որ էր ոտն գլուխ դատաւորաց. և նա ասէ ցնոսա. կերայք յարբենէ, և արձակեմ զձեզ. քանզի խնայեմ ՚ի ծերութիւն ձեր։ Իսկ նոքա ասեն. ձեզ մոլեկան դաշտանացդ ՚ի դէպ է արիւն ձգաշակել, որոց հեշտալի է արիւնհեղութիւն։ Իբրև ոչ կարաց իւիք հաւանեցուցանել զնոսա, հրամայեաց գան հարկանել։

Յայնժամ ոմանք յորոց շուրջն կային՝ գԹացեալ ասէին ցնա. կամիք զի բերցուք ձեզ խորտիկս արիւնանման. կամ զմուզ խաղողոյ չորացեալոյ Թանձրացեալ արիւնանման, և արբէք առաջի իշխանիդ, և սովիմբ զերծեալք ապրեսջիք. և մի ՚ի տարապարտուց մեռանիք։ Իսկ նոքա աղաղակեցին և ասեն. քանւ լիցի մեզ պղծել զձերութիւնս մեր, և վտ երկիւղի մարդկան ուշառութ անկանել ՚ի բարձրութէ հաւատոյս մերոյ, և ստել Աստուածմարտուն։ Ա՛յ տանջեցին զնոքան՝ տուժել միոյ միոյ քառասուն հարուածս։

Տեսեալ բռնաւորին՝ Թէ ոչինչ օգտի, ասէ ցնա. կամիք, զի բերցեն ձեզ միս՝ որ ուչ է հեղձուցիկ և ուչ ՚ի զոհից. կերայք զայն, և արձակեմ զձեզ։ Նոքան ասեն. Ա՛մ՝ որ հրամանաւ քոյ բերցի, ուչ է ՚ոբ. զի և լսելն իսկ քոց բանից՝ զամ յինքն բերէ պղծութիւն

և

և ամպարշտութեն. վայ ոչ եմք լսելոց քեզ.
արդ վձիռ ասուր մեզ որպէս և կամիցիս՝ վա-
մահուան մերոյ։

Յայնժամ խորհուրդ արարեալ մոգպետին
և թամշապհոյ և այլոց իշխանացն՝ ի միա-
սին՝ հրամանն հանին ժողովել զբազմութեն
քրիստոնէիցն արանց և կանանց՝ աղատաց
և ծառայից և ռամկաց, զի քարկոծ արաս-
ցեն զվկայս։ Եւ յոչ առնուլ նոցա յանձն՝ հար-
կանել բռնութեբ անօրէն զինուորքն զվա-
ւատացեալսն՝ արկանել քարինս՝ ի վեր սբ[ց]ն։
Ի մբռնեցաւ ըբ այլ քրիստոնեայն և նախա-
յինշատակեալ աղնուական և առաքինի կինն
յազդունդ ուխտ, կամ կին մի ազատ դան-
դուլ անուն. որ ոչն առնոյր յանձն զհրա-
մանս դառնուլ, այլ խնդրեր զաղօթս սբ[ց]ն։
Յայնմ վայրի կամէին միւսանգամ տանել
յանդիման առնել իշխանին զնբբն յովսէփ.
և զի ոչ կարէր ինքն նբ վկայն ոտնփոխ լի-
նել, բռնեն հարեալ՝ ի ծառայից՝ ածաւ մօտ
յատեանն. ուր յեցեալ՝ ի մին՝ ի սպասաւո-
րաց՝ ակնարկեաց մոգպետին գալ առ նա.
և նա հանդերձ փութով և ըղձարթութբ յա-
րեաւ յաթոռոյն և եկն առ նբն՝ համարե-
լով թէ արասցէ զկամս իւր։ Իսկ նբյն
լցեալ զբերան իւր խխով՝ ըբ մերձենալ մոգ-
պետին եթուք յերեսս նորա, և ասէ ցնա.
պիղծ և անմաքուր՝ ոչ ամաչես, զի գրեա՛
թէ մեռեալ եմ, և դարձեալ յատեան կո-
չես զիս՝ ի քննել. տակաւին ոչ գիտացեր,
զի այսքան չարչարանս ընկալեբ՝ ի քէն՝ ան-

սասանելի պահեցաք զհաւատս մեր, և համբերեցաք և համբերեմք մինչև ցօր մահուան մերոյ։ Յայնժամ թամշապուհ և որ ընդ նմա նստեին մոգքն և ամ իշխանքն՝ ծաղր առնէին զմոգպետն այսպանելով, նախատէին և ասէին. ո՞հարկ արար զքեզ գնալ մերձ՚ի նա, և կրել զայդպիսի անարգանս. և նա ամաչեաց յոյժ։

Եւ ապա էլ հրամանն քարկոծման տալն յուսեփայ [14]. զոր հանեալ դահձայ արտաքոյ քաղաքին՝ վարեցին զհետ նր բռնութեբ և զքրիստոնեայս ասս և կանայս իբրև հինգ հազարս հանդերձ լալով և ողբալով. և բրեցին տեղի մի փոս, և կապեալ զվկայն՝ նստուցին անդ. և ատիպերին զժողովեալսն՝ քարաձիգ լինել՚ի նա։ Եղեկին ընդ նոսա և զկինն զայն զառաջաստացեալ՝ արկանել քարինս՚ի՚ի վր նր. իսկ նա մեծաձայն աղաղակեր և ասեր. ո՛չ երբեք կանայք պատերազմ վանեցին, կիսարս սպանին, ոչ դուք զմեզ ատիպէք առնել. և ձեր թողեալ զպատերազմելն ընդ թշնամիս՝՚ի քաղաքացիս անդր դարձուցանէք զեղենս. և զձի խաղաղուն բարձեալ՝ խռովութբ և արիւնհեղութբ ընդ զգաւառս։

Իսկ անօրինացդ լուեալ զայս՝ մատուցանէին՚ի ձեռս կնոջն եղեգն ասղանաճայր, և ասէին. եթէ ոչ կամիս քարինս արկանել՚ի վր դորա, գոնէ հար այսու եղեգամբ ըզգլուխ առնդ. զի ծանուցցուք արքային արքայից զի ոչ կամիս զհպատակութբ քո։ Իսկ սքանչելի կինն ա-

ասէր . քաւ լիցի ինձ առնել զայդ . մանաւանդ զսիրտ իմ պատրաստ եմ վիրաւորել այդու՝ քան եթէ զքո նահատակն քեզ . եթէ իշխանութեանդ առիթ՝ ի վէր իմ սպանանել զիս , ահաւասիկ պատրաստ եմ յօժարութեամբ մեռանել . այլ ոչ երբեք հաղորդ արեան արդարոյ ։

Այսու օրինակաւ ազատ պահեաց զանձն առաքելն կենդանի . յորում վայրկեան այլ ևս քաղցրութիւնն ակամայ կամօք քարկոծելոյն զքեզ քահանայիս յովսէփ ծերունի . և բարձրացան դիւղացիքն ի վէր նը ի խորափոսն անդ մինչև ի գլուխն . և զի տակաւին կենդանի կայր , մին յիշխանաց ոմն եթէ գիտացեալ զի տագնապիլ նը յերկար ի հոգեվարս՝ հրամայեաց գահճի միոյ վիրգ մի առնուլ , և հարկանել զգլուխս սրբոյն . և այնպէս վաղվաղակի աւանդեաց երանելին զհոգին ։

Եւ նստեալ պահապանքն պահէին զնշխարս նը զաւուրս երիս . և յաւուրն երրորդի կոչ յորորդի եղեն շարժմունք և ձայն մեծ որոտման և կարկուտ և հողմ . մինչև զարհուրեցան ամենեքին և զդողանի հարան . և իջեալ հուր յերկինից՝ կիզեաց զոմանս ի պահապանաց . և քարինք բագնացս տաճարին կործանեցան (15) ։ Եւ յայնպիսի պահու նշխարք նը աներևոյթ լինէր ի տեղւոջն . մինչև չգիտեալ ուստք՝ եթէ գինչ եղև , եթէ չիցէ գողացեալ ի վկայասէր անձանց ։ Ուր այսպէս գրէ Ճառընտիրն մեր . * պատառեալ տեղւոյն՝ ծածկէր զնշխարսն , զի մի

այրեսցի ‖ յանօրինաց ։ Իսկ քաղքենական վկայաբանն կիմնըն մարուխաս ասէ ։ *յայ՞ արդեօք , եթէ ի մարդկանէ ծածկեցաւ ընդ հողով , անգիտելի է մեզ մինչև ցայսօր . զի և ցարդ ոչ գտաւ տեղի գերեզմանին նր ‖ (16) ։ Վատարեցաւ նը վկայն քրի յովսէփ քահանայն յաւուրն վեցերորդի առաջին եօթնեկի պենտեկոստէին , ըստ կ յինանց . ( որ լինի երկաւուրը յառաջ քան զնոր կիւրակէն ) , յամի տն 380 ։

Յետ կատարման սբյն յովսեփայ առեալ դահձաց հրաման ի թամշապհոյ և ի մոգպետէն վ՚ոբյն այլոցն սարկաւագի՝ տալ զնա ի գաւառն բեթնուհադրայ կամ բեթնադարայ ի մարդաշատ գեօղաքաղաքն դաստակարայ (17) . և ժողովեցին նոյնպէս և անդ արս և կանայս քրիստոնեայս՝ յազատաց և ի ծառայից , հանդերձ գլխաւորաւն՝ որ ի հաւատացելոց անտի էր . և հանեալ զնր ի լեառն կիմ՚ի տեղի մի բարձր՝ կապեալ ոտիւք և ձեռօք , նեղէին յոյժ զժողովեալ քրիստոնեայն՝ քարկոծ առնել զնա . և նր ակամայ կամօք բերեալ յայն գործ անարժանութեանն՝ արկին ի վր նր զբազմութիւն քարանց , մինչև առնել կարկառակոյտ մեծ . և այնպէս դառն տանջանօք աւանդեաց երանելին այնթալաս զհոգին ի ձեռս ՚ի՚ ի յորդորդ աւուր վերջին եօթնեկի պենտեկոստէին , ըստ կ յինանց (18) . այն է ի մայիսի 27 . ( թէպէտև ոմանք յունիս գրեն , և այլք յունիսի ժէ ) ։ Նշանաւէ պահապանքն պահէին զնր

զԲԵ մարմին վկային մինչև ցաւուրս երիս :
Յետ այսորիկ եկեալ քրիստոնէից գողացան
զնշխարս Ե՛ՐԵՑ , և պատեալ պաստառակա-
լօք եդին ՚ի գերեզմանի յանքոյթ տեղւոջ
ոչրեք :

Այս եղեն սքանչելիք ՚ի տեղւոջ կատարման
սրբոյն . քանզի առ ժամայն բուսաւ անդէն
ծառ մի ձիդարենի , այս է մրտենի . յորոյ
տերևոցն բժշկուէ լինէր ամ ցաւոց . մինչև
զկնի հինգ ամաց ՚ի նախանձ թերեալ անօ-
րէն մոգուցն՝ հատին զծառն և խլեցին յար-
մատոց : Այս դարձեալ ոչ հաստատէին քա-
զումք յարժանահաւատ անձանց մինչև ցա-
ւուրս Ե՛ՐԵՑ մարտիրոսի քանիցս պատմողի ,
տեսիլք զարմանալիք երևեցան Ննջ մօտ ՚ի
տեղի քարկոծման Ե՛ՐԵՑ այրիձալայ սարկա-
ւագի . քանզի ասէին , եթէ յայտնապէս տե-
սանէաք ՚ի գիշերի գունդս հրեշտակաց , որք
իջանէին յերկնից , և ելանէին անդրէն յեր-
կինս , և ՚ի ձայն սաղմոսաց օրհնէին և փա-
ռաւորէին զՔԾ . որոյմ վայելէ փառք , իշ-
խանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից . ամէն :

Այս ամէն եղև յերեսներորդ եօթներորդ ամի
հալածանաց շապհոյ մինչև ցամն քառասնե-
րորդ . զի քառասնամեայ ժամանակաւ հա-
լածեաց շապուհ զքրիստոնեայս . այս է ա-
սէն Ե՛ՐԵՑ մարտիրոսի . * Յերեսներորդ ա-
ռաջնորդ ամի իւրում սկսաւ զհալածանս ,
և յեօթանասներորդն ինքն վճարեցաւ ՚ի
կենաց . զարդասցաւ ՚ի մէջ կոտորածից , և

կոտորածովք եհաս ՚ի ծերութիւն և ՚ի լրումն ծերութեան ‖ . և թէ՝ * սուր ամբարիշտ արքային ՚ի տան շմաւոնի բերշաբայ ( պարսից եպիսկ ) սրեցաւ , և ՚ի տան ակեփսիմեայ և ընկերաց նոր բնթեցաւ ‖ : (19)

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք:

(1) ՚Բաւեակ գլխաւոր օրինակք կան վկայաբանութեան աբգ ակեփսիմեանց . քաղդեարէն , հայերէն , յունարէն և լատիներէն , և պարզ յունարէն , այլևայլ ոճով , նովին իմաստիւք :

Առաջինն՝ ամբիւր այլոցն՝ համարեալ է գործ աբգն մարտիրոսութեան նախկերպաց եպիսկ , զրեալ քաղդեացի բարբառով՝ որ չէ ինչ ընդատ յասորի լեզուէն . զոր և լատին թարգմանութիւն զոյգ ընթերցին տպագրեալ առ փանոս եւտիւս առաքեման : Սկիզբն է Ձառ ներբողական՝ այսպէս . * Ահաւասիկ ժամ է ինձ այսօրհետև պատրաստ ,, լինել անցանել ընդ ահագին ծով համատարած , ‖ և նոր զերեսին աբգն ակեփսիմեանս նմանեցուցանէ երից իմաստուն Ճարտարապետաց , որք չինեցին նաև ՚ի ծրութիւն զատս մարմնոյն վկայական տանջանաց իւրեանց , և անընդատ հասին ՚ի նաւահանգիստն երանութեան հանդերձ մեծագանձ վաճառուք առաքինութեանց . * Ա՛յր ՚ի Ճառել (առէ) զմեծահարուստս Ճոխութեանց նոր և զառաքինի քաջութեանց ըստ արժանւոյն՝ նք թերևս իցեն բաւական , որք ( ըստ սաղմոսողին ) լքանեն ՚ի ծով նաւք՝ անցեալ ընդ ջուրս բազումս . նք տեսին զգործս նոր , և խոստպոյն հարցափորձն տարան ընդ նս ՚ի խոստովանութիւն հաւատոյ . և ահա լընկերաց անտի աբգ վկայիցս եհաս մինչև առ մեզ սատպ գիտութիւն գործոյ մարտիրոսութեանն նոր ‖ : Եւ յետ այլոց բանից հինից արկանի բուն վկայաբանութիւնն այսպէս . * Յերեսնեւրորդի ամի հալածանաց մերոց՝ անուղղիմ և դժնդակ հրամանն հրատարակեցաւ ընդեմ քրիստոնեայ անուանելոց համօրէն , և պատուէր ՚ի վր եգաւ իշխանաց անխնայ տանջանօք լվհել զհաւատացեալս ,

՚ ըրօք

, բրօք հարկանել, քարամբք կոչկոճել, և անարգանօք
, թիւճառասցուցանել ։ եև ։

Երկրորդն է օրինակն ձառընտրին մերոյ մեծի, ուր
Թէպէտև Թուղթ մի պակասի յընթացս, և 'ի տեղիս
տեղիս առ հնուԹէ և փառուԹէ անվերծանելի ինան
տողք ինչ կիսբառք, բայց ուր ուրեք ամբողջ գտանի՝ է
յարևնման առաջնոյն ըստ պատմական մասին՝ ոչ միայն
ըստ խմաստից, այլև դոգես ըստ եղերաց. միայն յառաջա-
բանն ներբողական է տարբեր՝ օրինակ ցայս. * Ապան-
, չելի է ձծ 'ի վր սբց խրոց. այսպէս ձծահայր մար-
, գարէն՝ բնակարան հոգւոյն սբյ՝ արքայն գաւԹ. և
, դրձ՝ պարծեսցին սբք փառօք, և ցնծասցեն 'ի հան-
, դիսաս իւրեանց ։ Ընդ ես վկնի նորին բանից հետևե-
, լով, և նոճառա մտօք առ խորս ծովացեալ անբաւ և
, մաստից նր նրբաձայն լեզուով բարբառ արձակեցից,
, լինելով դրիչ հոգւոյն սբյ արագագիր գպրի ձար-
, տարի. և այսպէս աղաղակելով ասեմ, ԹԷ սքանչելի
, է ձծ 'ի վր սբց խրոց ։ Ընդ օրինակի է բանս. զի ԹԷ
, ձծ սքանչելի սբվք իւրովք, և յորժամ ոչ գոյին սբք՝
, ոչ էր սքանչելի. 'ի բաց տար զբան ապիրատուեգ.
, այլ յորժամ սքանչելիս գործէ ինքն 'ի ձեռն սբց իւ-
, րոց, յայնժամ անուն նր փառաւոր և սքանչելի եր-
,ևեալ լինի 'ի մէջ սբց իւրոց ։ Որպս և 'ի ժամանակս
, նաբուքոդոնոսորայ արքայի՝ յորժամ կամեցաւ հա-
, կառակ ձայ կանգնել զպատկերն ոսկի, յորդորեաց (ըստ
, Թուղացոյց) զնա ձծ հրով փորձել զերիս մանկունան.
, զի զայն՝ զոր ինքն ձծ պաշտէր, տեսանէր արհամար-
, հեալ...(անվերծանելի), և այնպէս սքանչելի...իւր։
, Ա՛յլ ես որ տր...ցուն, և տգէտս 'ի պ...ատից,
, աղաչեմ զերանելին ակեփսիմաս, զի տացէ ինձ զ...և
, զայնԹաւսաս՝ընդհնել պարզուն մտացս. և զնբն յովսէփ՝
, զի օժանդակեսցէ սկսրուԹես իմոյ, գրով յօրինել
, զձառս պատմուԹե... նոցա. և զձեզ աղ... զար-
, Թուցանէք զական..ձերոց՝ առ'ի լսել յօժա...նա-
, հատակուԹիս նոյ, և փառաւորել զնձ՝ որ փառա-
, ւորէ զփառաւորիչս իւր ։

Ապա անբմէջ սկիզբն լինի պատմուեն այսպէս. * Յե-
,, րեքհարիւրորդի ( փոխանակ գրելոյ զ այլոց՝ Յերես-
,, ներորդի ) եօԹներորդի ամի հալածանաց մերոց՝ զկնի
,, անձառ ծագման բանին նոյ ( այս հաստատէ զերեք-
,, հարիւրորդն ), եկ հրաման գառնուէ յարքայէն չափ-
,, հոյ, և տոճառ իշխանուԹի մագաց և մոգպետաց 'ի վր
,, ամ

„ ամ քրիստոնէից . ոչ զի ամ օրինակաք ասնջանաց պատ-
„ ժէսցին և չարչարեսցին հաւատացեալքն , և սպան-
„ մամբ չարչարանաք զվճիռ մահու ընկալցին || ևն : Ա՛ր-դ
քանզի այսուհետև միօրինակ ընթանայ ձառընտիրս մեր
ըստ առաջին օրինակին սէյն մարդութեայն , մեք հաստարակօ-
րէն պահեցաք զբարադրութիւն ձառընտրին ի վկայաբա-
նութիւնս մերում . և միայն զպակասութիւնս լցուցաք , կամ
զնշանակս պարզեցաք և կամ զսխալանս ուղղագրեցաք՝
ի միս օրինակէ անտի : Իսկ տարբերութիւն ձառընտրին
ի քաղդէականէն երևի պատճառեալ ըստ երկուց . մի՝ զի
հելինակ ի հելինակէ առեալ՝ նորոգ է չարադրեալ ըստ
իւրում ոճոյ . և միս ևս՝ զի մերս ոչ է անմիջական թարգ-
մանութիւն ի քաղդեացւոյն կամ յասորւոյն , այլ ի յունա-
կանէ . և այն ևս՝ հնագոյն քան զմետափրաստէս . զի սա
ի նախընթաց օրինակաց առեալ՝ յայլ ևս վերածէ իւ-
րով ոճով . զորմէ ժամ է ասել : Ա՛յս՝

Երրորդ օրինակն է այն՝ որ կրէ զանուն մետափրաստե-
սի , լասինեբէն ևեթ յառաջ բերեալ ի սուրիոսէ , և
յունական բնագիրն յաւելեալ ի հենաբենիոսէ բոլոն-
գեան՝ ըստ մեսիկեան կոչեցեալ մասենի արքունի գրա-
տան փարեզու . զորոյ և մեք զերիս այլ օրինակս գտաք
ի վենետիկ ի դրատան սէյն մարկոսի՝ ի յունագիր մա-
տեանն յԾա , յԱՀ , և ՀՃԳ . և սորա սկիզբն է այսպէս .
* Ա՛ոլեգնեբ ըզեմ քրիստոնէից չապուհ ( որ գրի սա-
„ ւօռիոս ) պարսից արքայն . և մոգուց մասն եղելոց
„ պարսից զըզեմ նոցա հրամայեբ զհալածումն . որք և
„ խստագոյն՝ ևբրև նախանձաւորք հայրենի սովորու-
„ թեց՝ լսկաւ զհալածեալսն , հրոյ և արեգական պաշ-
„ տօն մատուցանել քառնագատէին || . ևն :

Զայս գործ՝ զոր այլք ընդ ալեքսիոսի ընծայեն մետա-
փրաստէսի , եւոգիոս ժխտէ լինել նոր՝ յայն սակս ևեթ ,
զի կարծէ թէ որք ասեն զսա լինել գործ մետափրաս-
տէսի՝ նովին իսկ առաջին հելինակ առնիցեն զմետափրաս-
տէս վկայաբանութեանց ակեփսիմեանց . որ է սուտ և ան-
հիմն ենթադրուի . զի մետափրաստէս և ոչ միոյ վկայա-
բանութեանց հելինակ գտանի , այլ միշտ հետևող հելինա-
կաց և հաւաքօղ ևեթ . ոչ և առաջնակաս գործ նոր է
հետևողուն նախընթաց երկուց օրինակաց՝ ըստ սէյն մա-
րութեայն և ձառընտրին մերոյ . մինչ զի գրեթէ ոչինչ
նոր լոյս կամ տեղեկուի ընծայեցաւ մեզ ի մետափրաստի-
սէ . այլ միայն սատար եղև ի հաստատել երբեմն զըն-
թերցուածս մեր , և երբեմն զընթերցուածն եւոգիոսի :

Զոր-

Զորրորդն է այն, զոր դրձել գոսաք յունարէն լեզուի ի գրատան սրբոյն մարկոսի՝ որ ի վենետիկ, ի մատեանն Յիսուի, այսպիսի սկզբնաւորութեամբ. * Յամի երեքհարիւր ,, տրդի (տրիգօրէօ, փոխանակ գրելոյ արդեօք՝ տրէ- ,, գօրէօ, երէսանէրտէ, յարևմտեան կարծեցեալ սխալանաց ,, ճառընտրին մերոյ) և եօթնետորդի՝ որ ընդդէմ մեր ,, հալածանաց, եւ հրաման ըստ ամ երկիր՝ որ ըստ ձեռամբ ,, պարսից, զամենեսեան՝ զորս և գացեն քրիստոնեայս ,, կացեալ մնացեալ ի դենի անդ, սկսապէս և աղգի աղ- ,, դի տանջանաք նեղել, և վճիռ մահու ի վր ածել։ ,, Աստ ի զօրանալ հալածանացն՝ ժանտութիւն կոչեցե- ,, լոցն առ նա մոգուց, զի նոցա էր ընձեռեալ՝ որ վա ստ- ,, ելին իրաց նշանաւոր՝ առ ի յայնժամ թագաւորեալն ,, շապհոյ, ոչ սակաւք բանիւ այսր հրամանի հանդիսա- ,, կեալք՝ պատկառ վկայութիւն ի ձեռն համբերուն զոր- ,, գարեցան. քանզի տեսեալ մոգպետացն՝ եթէ արհա- ,, մարհել է հրաման թագրին ||, ևն։ Ուր թէպէտև նմա- նուն յոյժ տեսանի ըստ ճառընտրի մերում, այլ յընթացս է երկարաբան՝ հանդերձ աղգի աղգի պարզաբանութիւք և տեղեկութիւք զհանգամանաց պարսից, և զառաջիկայ անցից պատմութեան. որ է գործ կամ ժետափրաստեսի, և կամ այլոց ուրուք հետևողի նախադրեալ օրինակաց. զի գոյացութիւնն է նոյն. զոր և ոչ հարկ համարեցաք ծագէ ի ծագ մանր կրկտել. ոչ և ոչ զայլ օրինակաց առաքերութիւնս թեթևս վերածեմք ի կարգ ծանօթու-

թեաց, բաց ի քանի մի կարևոր գիտելեաց։

ի չորից աստի աղբերաց վտականան և աւանդութիւք յայսմաւուրաց ամ աղգաց. յորս ըստ պէսպէս քաղուած ծոյ բովանդակութեամբ գտանին և ինչ ինչ վրիպակք։ Այլ որ առաւելն է, Լ. ՟ի յայսմաւուրք լատինացւոց միա- ցուցանէ ըստ ակեփսիմեանս և զայլ վկայս պարսից, ըստ որոյ և հենաքեննիոս բոլլանդեան զբաղմութիւն վկայից բուռն հարկանէ խօսել աստանօր. ուր և յուշ առնէ զվրիպակն՝ որ մտեալ է առ լատինս ի բանից սողոմե- նոսի, որ զայնթաչաս սարկաւագ՝ քահանայ առնէ, և խօսի զնմանէ իբրև զընկերէ յակոբայ քահանայի վկայե- ցոյ ի պարսս. ևն։ Ծանիր և զայն, զի Յ. ժմ. ի նոյեմբ. 3. յետ գրելոյ զպատմուն ակեփսիմեանց վկայ- իցս՝ ի վր բերէ և զվիճաստակ ակեփսիմեայ ուրումն նշանագործ ճգնաւորն և քահանայն առ մեծն թէո- դոսիէ։

(2) Ըստ եւտիխոսի ասսեմանոյ՝ * Ակեփսիմաս է անուն ,, քաղ-

,, քաղդէական՝ բարդեալ յերկուց բառից. որ Թարգ-
,, մանի անուանաքննիչ կամ խուզարկու անուան ||. (ոչ
Թէ ռաւկօրէն ասել, ածէպ լսամի նէ՞) : Իսկ այլեթալաս
բարդեալ 'ի ձայնից, այլեմի և ալահա, սուտ գաբանի՝
էած այսր ած. կամ ածաբերեալ, և կամ ածաստեղծ:
Ճառընտիր մեր հատուածն այլոց գրէ հնդկօրէն ակեփ-
սիմաս. իսկ 'ի Հ. և 'ի ոճնացոյցս առաւել գրի ակիփ-
սիմաս կամ ակիպսիմաս: Ոչ և որ գրի 'ի Ճ. զոյգ ընդ
առաջ. և մետափր. այլեթալաս, 'ի ոճնացոյցս հնդկօ-
րէն դնի այլաթալաս. այն է ը սիմնի առաջմանայ՝
այլեթալաչաս. և ը եւոդիոսի առաջմանայ՝ այլեթիլա-
հաս: Յայտնի վրիպակ է գրելն ոմանց 'ի լա. իբր երկ-
բարբառ՝ էյլեթալաս:

(3) Ձգիտեմ զնա՛րդ առ սուբիոսի կամ մետափր. դնի
անուն քաղաքի նահապետն՝ փոխանակ հոնիտայ քաղաքի
և փակայ գեղջ միանգամայն: Իսկ փոկ ուղիղ գրուեաս
քեթիկաթուբ, կամ ալէքքաթուպ, որ Թարգմանի տուն
գպրի, վրիպակաւ ունին ոմանք՝ ալէքլաւուպ կամ ալէք-
լապուպ:

(4) Ուր եւոդ. դնէ սանտրել, և Ճ. մաքրել զգլուխն,
պարզաբանել է առ մետափր. այսպէս. * մանուկ ոմն
,, յարգարէր զգլուխս նր՝ մաքրելով 'ի նեղացուցիչ ոջ-
,, լաց. և ողջագուրեալ՝ ասէ. երանի է կուռնդ գլխոյս
,, այսմիկ, քանզի հերաթափ էր, որ վե քեի ուռնի մար-
,, տիրոսանաչ||: և Հ. այսպէս. * սնուցեալ էր որք մի
,, ի ամաց. և յաւուր միում սափրէր պատանին զգլուխս
,, սրբոյն. և մարգարէացաւ ասելով. երանի է կուռնդ
,, գլխոյս այսմիկ, զի վե քեի մարթիրոսանայ||:

(5) Ձխառան գաւառ ասորիք և քաղդէացիք կոչեն ա-
գրա. յորմէ բաղադրեալ է առ մետափր. գիւղն ագրա-
տառան կամ էգրատարան:

(6) Ի եւոդ. ասա և 'ի վայր, ատրքուրքաշար նախարար
կամ իշխան. Ճ. ասա, ագրաքուսիթե մոգպետ, և 'ի վայր՝
գեաքոքաւ կամ որսորքար: Մետափր. ագրաքուս մոգ-
պետ. և 'ի վայր՝ առաքէ: և Յ. ժմ. անդրաքուսքաւ
արքիմաղևրօս, փոխ գրելոյ՝ արքիմաղօս, իբր մոգպետ:

(7) Յն. բս. փոխ հրոյ գրե հրաւ, կամ արէս, որ և
մարս. զոր վրիպակ համարի եւոդիոս. բայց յայտ է
Թէ հրաւիւ իմացեալ լինի չաճճն հրոյ:

(8) Յայտ վայրն է պահաստան ԹերԹի միոյ 'ի Ճ. ակսէլ
'ի պինեղոյ ասաի սբյն յովսեփայ՝ մինչև ցեղս սբց 'ի
բանտէ և ցմիւսսնդամ բանտարկուսին. զորոյ զԹերլին
ընդ-

ընուամբ յԵւոդիոսէ. ոյզ և Մեսափր" ընոյն իմասս երկ-
րորդէ ։

(9) Ա Մեսափր. զպարսկերգ անուն՝ որ և՛ ի պարսկականն
և յայլ լեզուս է նոյն, բացատրէ որպէս զտեղի ինչ
յայն անուն. * ածին (ասէ) ՚ի տեղին՝ որ կոչիւր բա-
,, րսաիսոս ։

(10) Ճ. դրէ, երկիրպագին նմա. բայց Եւոդ. բացա-
սաբար. * չառնին յանձն երկիրպագանել նմա ։ ըորոյ
զնմանն տեսանեմք և՛ ի վարս անաստասայ պարսկի և
այլոց. զի Թերևս երբեմն երկրպագուին կարէր լինել
նշանակ յանդգնութենէ և Թոզութեի խնդրելոյ, և կի
յարգուն տալոյ ըստ պաշտօնէից նաև դից. ապաթէ ոչ՝
յայլ նուճապս տային վկայք զպատիւ արժանի աւադաց ։

(11) Ա՚ի օրինակք յիշեն զդուստր Թէրին հայոց. ոյզ և
ոմանք յաւելուն զպատանդն լինել. յիշէ և սողոմենոս՝
Թէ՚ի ձեռն պատանդից հայոց Տին բարձան նշխարք
սբյն ակեփսիմեայ ։ Իսկ որ գրի՚ ի Հ. * զմարմին սբյն
,, մանը կորատեցին, և ընկեցին արտաքս ։ , պարտ է
իմանալ՝ վն փշրելոյ ոսկերացն նր և ջախջախանացն ։

(12) ՚Ի Ճ. աստանօր փխկ յոլսեփայ գրել էր այնթա-
լաս. զոր ուղղագրեմք ըստ Եւոդ. և Մեսափր. ոյզ և ըն-
Թացք պատմուԹենն պահանջէ ։

(13) Եւոդ. խրև բանիւ սբյն մարուԹայի գրէ զառ-
նէս զայսմանէ. * Եւ վն այսր բանի կարծեմ, Թէ գը-
,, տեալ էին նր ողորմուԹի ինչ ։ որ չէ՚ ի Ճ. և՛ ի
Մեսափր ։ Բայց՚ ի Ճ. պակասին և քանի մի տողք՝ որ
վն գալստեան Թամչապհոյ. զոր Մեսափր" կոչէ շապուհ
գատաւոր ոմն մեծ ։

(14) Վրիպակաւ գրչի՚ ի Ճ. դնի աստ՚ ի միասին եր-
Թալ և քարկոծիլ երկոցունց սբյց. ըորոց՚ ի կարգին
ուրոյն ուրոյն խօսի՝ հանգոյն այլ օրինակաց. իսկ Հ.
հետևեալ է առաջնում սխալանաց, և ոչ յետագայ ուղ-
ղախօսուԹենէ ։ Ա՚ր Թողից զմեծ վրիպակ Յ. բս. և ժո-
յոռս առ համառօտուԹենէ շփոԹեալ են տանջանք սբյն.
ոյզ Թէ գլխիվայր կախմամբ քարկոծեալ էին յովսէփ.
և այնԹալաս նոյնպէս գլխիվայր կախեալ առանց քար-
կոծման սւանդեալ էին զոգին. ըստ սխալանաց բանին
և պատկերքն են նկարեալ՚ ի Յ. բս ։

(15) Ջկործանուցին քարանց բագնի ցիշէ Եւոդ. այլ
միայն Ճ. զորոյ զբանս այլազգ ընԹերցեալ Մեսափր.
և Հ. նոր իմն գրեն, ոյզ Թէ քարակոյտն քարկոծման
ցրուեալ և՛ ի փոչի դարձեալ էին ։ Գեղեցիկ է յաւել-
ոՀածն

ոՀաճՆ Հ. վասն քարկոծելոյ սբ֊ոյ ՚ի քրիստոնէից. * և
,, սբ֊ոքն աղաչէին զնծ, զի մի համարեսցի քրիստոնէիցն
,, այն ՚ի մեզ ‖. զի յակամայս բռնագատեցան առնել։
(16) Մետափր. համաձայն սբ֊ին մարսուԹայի խօսի վր
անգիտելի լինելոյ իրացս։
(17) Աստ և զգաւառն և զքաղաքն միացուցեալ՝ պատ֊
րհաս գիւղ կոչէ մետափր։
(18) Եւոդ. ծանուցանէ, Թէ ասորիք՝ հանգէտ յու֊
նաց՝ պենտեկոստէ ՔՀիանէրորդ կոչեն զմիջոցս լինանց.
զնոյն նչանակէ և ՚ի մեզ բառդ լինուՆք, ոՀ Թէ լիանե֊
րորդք կամ լիանակք աւուրց՝ ՚ի զատիկ մինչև ՚ի հոգե֊
գալուստ։
(19) Կամէաք ստուգել այլուստ կի որոչ և պիտէ լզ֊
գրեալն աստանօր ՚ի Հ. Թէ յետ ժամանակաց յայտնե֊
ցան նչխարք սբ֊ոյն ակեփսիմեայ, յովսեփայ և այլնԹա֊
լայ. և զպատուական գլուխս նոյ տարան ՚ի բիւզան֊
դիա, և չինեցին ՚ի վր վայելուչ եկեղեցի։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Աբջն Պղատոնի վկային անկիւրացւոյ :

Ի . Նոյեմբ . 14 : Ց . Նոյ . 18 : Լ . յոյլ . 22 : Ձմռանդ . Ա . կիր = կյճ : Բուլղանդեանն պե-
նէտս . ՚ի Ե հատ . յոյլ . ԷՀ . 226 = 235 : Լ եպո-
տանոս . Նոյ . 18 : Աւրբէոս . յոյլ . 22 : (1)

ՐՈՄԱՆՈՒՍ ԼԻ

Նշանագործ վկայն քրիստոսի Պղատոն՝ էր ՚ի քաղաքէն անկիւրիոյ գաղատացւոց , որդի հաւատացեալ և բարեսիրիկ ծնողաց՝ որք մնացեալ ՚ի նոցէ , և ըստ ոմանց՝ եղբայր փառաւորեալ նահատակի ուրումն անտիոքոս կոչեցեալոյ (2) , մինուկ հասակաւն՝ գեղեցիկ յոյժ , և լի իմաստութեամբ աճմային գրոց , անուճանի ըստ ամ գաղատիա՝ յաւուրս հալածանաց մաքսիմիանոսի կայսեր : Վասնզի վառեալ պղատոնի ՚ի սէրն քրիստոսի , և ձեպեալ ՚ի բրաբիոն նահատակութեան՝ լինքնին բաշխեր աղքատաց զինչս , զոր Թողուն նմա ծնօղքն նր . և ամ կարօտելոց ՚ի Թիկունս հասանէր , բարերար լինելով բազմաց ՚ի պետս հոգւոյ և մարմնոյ . մինչև ձգել և զոմանս ՚ի հեթանոսաց ՚ի հաւատս քրիստոսի : Եւ քանզի անպատկառ քրիստոնեայ զանձն Թոս-

խոստովաներ հրապարակաւ, մատնեցաւ ի նոցունց իսկ՝ որք երախտաւորեալ էին ի նմանէ: Ապրդ իբրև կալան զերանելին պղատոն, նստեալ յատենի ազրիպպինոս դատաւորն անկիւրիոյ՝ որ և բեկար (այ փոխանորդ) գլխաւոր ի կողմանէ հրոմայ, առաջի ապարանից իւրոց յանդիման մեհենին արամազդայ, հրամայեաց գօտեկոյծ առաջի իւր կացուցանել զնա. և եմոյծ զվկայն ի ներքս իբրեւ կիմ բիւկենտիոս գահձապետն. և ասէ. ահաւասիկ առաջի քոյոյ բեմիդ ներ իմ թշնամանօղն Ածոց, որ պարծի ի կրօնս քրիստոնէից:

Եւ դատաւորն իբրև եհես զպղատոն, ասէ. Ամ տիեզերք ի խաղաղութեն վարին. իսկ դու ընդ յայդչափ մոլորութիւն յամառիս, և զբազումս ընդ քեզ մոլորեցուցանես ի պաշտօն խաչելոյն: Նորն ասէ. ոմն դատաւոր՝ դուք եք մոլորեալ, որ թողեալ զարարիչն երկնի և երկրի՝ քարանց և փայտից երկիր-պագանէք: Դատաւորն ասէ. Մանկութիւդ քո յանմտութիւն զքեզ ածէ. և ոչ կարծեմ, բազում տանջանաց մատնէ զքեզ. արդ ասա վաղվաղակի, թէ որոյ կրօնից ես, յորմէ քաղաքէ, և զինչ անուն կ քո: Նորն ասէ. եթէ զկրօնս իմ կամիս ուսանել, քրիստոնեայ եմ՝ անեալ ի քաղաքէս յայսմիկ. և անուն իմ պղատոն կոչի ի ծնողաց իմոց, այլ և ծառայ քրիստոսի յորովայնէ մօր իմոյ:

Դատաւորն ասէ. ոչինչ օգտէ զանունն քեզ ի վէր քո կոչել. վա՛ ըզ քազումք՝ որք խոստո-

վանեցին յանուանն յայն, մահու մատնեցան. իսկ որք ուրացանն, մեծամեծ պարգևս ընկալան ի Թիւրացն. և արդ ես Թելադիր եղեց քեզ, հաւանեա ինքնակալացն, և մեծամեծ շահս շահիս, և ի մեծամեծ տանջանաց ղերծանիս։ Պղատոն ասէ. ես Թագաւորին իմոյ քեզ հաւանեալ եմ. վ՚ա զի նա իշխէ ժամանակիս և յաւիտենականին։ Թագաւորն ասէ. մի այդպէս պէտք տար, այլ ի մաստուէք խորհեա զօգուտն քո. վ՚ա զի պատուական հրամանն ինքնակալին եղաւ ի վ՚ա համ քրիստոնէից՝ կամ զոհել, կամ մեռանել։ Պղատոն ասէ. այլև հրաման եղաւ յայլ ի վ՚ա մեր՝ նմա երկիրպագանել։

Յայնժամ բարկացեալ դատաւորն հրամայեաց ջորից զինուորաց զնոքն պարզել, և արջառաջլօք հարկանել. և այնչափ յերկար տանջեցին զնոքն, մինչև զինուորքն երկոտասան զմիմեանս փոփոխեին ի հարկանելն. իսկ նա միայն զոհանայր և խոստովանէր զանունն քրիստոսի։ Ասէ դատաւորն. այ Թշուառական՝ փութա ի մահուանէ ի կեանս։ Նքն ասէ. բարիոք խրատես ով դատաւոր. վ՚ա զի և ես այսպէս կամիմ, փախչել ի յաւիտենական մահուանէն, և ի միտնջենաւոր կեանս մտանել։

Դատաւորն ասէ. այ Թշուառական՝ և երկու մահք իցեն, և երկու կեանք։ Նքն ասէ. այո։ Դատաւորն ասէ. և ո՞ր այն իցեն երկուքն։ Նքն ասէ. մի առժամանակեայս, և միւսն յաւիտենական։ Դատաւորն ասէ.

սէ. մի շատախօս լինիր, այլ մատիր զոհեա ածոցն, և զերծիր ի տանջանաց։ Աբեն ասէ. զոր ինչ կամիս, արա վասնզի ոչ իս. վա՛ զի զիս ոչ հուր և ոչ սուր, ոչ գազանք և ոչ այլ ինչ տեսակք տանջանաց կարեն հեռացուցանել յայն իմմէ յաւէտ քան, որ մեռանիս վա՛ մեր և յաւրեաւ։ Յայնժամ հրամայեաց դատաւորն տանել զնա ի բանտ. և ասէն ուսուցանէր զամենեսեան՝ որ երթային առնա։ (3)

Ա՛յլ եւս վեց կիրեսէին աւուրց (4) հրամայէր դատաւորն միւսանգամ առաջի իւր ածել զերանելին, կազմ և պատրաստ ունելով զիմ տանջանարանս առ ի զարհուրեցուցանել զնոքն։ Ա՛յլ ասէ. աւասիկ այս ամ տանջանարանքս վա՛ք ձեր պատրաստեցան. բայց եթէ կամիս, ոչ միայն զերծանիս ի նոցանէ, այլև բազում պատուոյ և փառաց հասանես. վա՛ զի ես իմ դուստր միամօր (5), գեղեցիկ երբեւ զքեզ, զայն տաց քեզ ի կնուճ, և բազում վարձանս ընդունիս, և եղիցիս իմ որդի փեսայացեալ. միայն մատիր զոհեա ածոցն, և ձաշակեա ի նուիրակաւն զոհիցն։ Պ՚ետ ասէն և ասէ. սպասաւոր լեգէոնիի և թշնամի քո՝ նմանեալ հօրն քումմ սատանայի, մեքենայիւք կամիս պատրել զիս. այլ ամ իմով ոչ ի պատրանաց քոց խաբիմ, և ոչ ի սպառնալեաց քոց երկնչիմ։

Արտմոեէ դատաւորն ագրիպպինոս՝ ետ բերել մահիճս պղնձիս, և պարզել զնոքն ի վերն, և ի ներքոյ մահճացն խարոյկ արկանել,

նել, և հեղուլ ՚ի վէր սբ֊ն ձէթ և ծծումբ և կուպր և մոմ[6]։ Յայնմ վայրի սուրբ֊ն Իոան բանտապետն յորդորեր զվկայն՝ հնազանդ լինել իշխանին, և ազատիլ յանբերելի տանջանաց անտի. իսկ նա յանդիմանեաց զայրն, և մերժեաց զչար խրատ նր։ Այլ երբեմն այսպէս պատրաստեցաւ տանջանարանն, և ըստ պատուիրանացն լուսոյն զհուրն ընդ հրամանի դատաւորին, ամբարձ երանելին պղատոն զաչս իւր յերկինս ՚ի վէր հրեղէն մահճացն՝ կամ կասկարային, և ասէ այսպէս. Տէր իմ յ֊ն քն՝ ածդ հրեշտակաց և ամանուէնն անուանելոյ, դու ես՝ որ ամ ուրեք զծառայսն քո զօրացուցեր, և համբերուն յուսացելոցն ՚ի քեզ ընտրեցեր. դու և ՚ի բաբելոն զզօրութիւնն ածուելոցն քո ցուցեր՝ փոփոխելով զհուրն ՚ի ցօղ. արա և այժմ առ իս զնշան սքանչելեացդ քոց, և առաքեա զհրեշտակ քո, և ցրուեա զբոց հրոյս այսորիկ. ոչ զի ծանիցեն ամենեքեան՝ որք մոլորեալ են ՚ի կուռս, եթէ դու միայն ես Աչմարիտ ածդ՝ միշտ փառաւորելի ես հօր և սբ հոգւոյն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Այս յերկրորդել բազմութենէ քրիստոնէից՝ որ մնաց կային, զամէնն, նոյնժամայն հուրն շիջաւ. և լոյս սաստիկ ծագեաց ՚ի վերայ սբ֊ն[7]. և բուրեաց հոտ անուշուէ։ Յայնժամ ամ ամբոխն սկսաւ աղաղակել, մեծ է ածն քրիստոնէից. և նա միայն է ած, և այլ ոք չիք։ Իսկ անօրէնն դատաւորն ՚ի վէր այսոր ամի ոչ ծանեաւ զՀշմարտութիւնն. այլ կու֊

բացեալ՝ի լուսոյ յայտնի սքանչելեացն՝ տա-
կաւին կախարդութեի զեղեալսն կարծեր ։
Այս հրաման, և իջուցին զնահատակն՝ի
պղնձի մահճացն, և կացուցին առաջի նր ։
Ասէ ցնա դատաւորն. երդուիեալ՝ի յաստ-
ղոն ածն իմ, ոչ ապրիս՝ի ձեռաց իմոց, ե-
թէ ոչ ուրասցիս զխաչելեալն՝ զոր դու ածծ
կարդաս ։ Ասէ ցնա պղատոն. ոմն սիրտ Թմբ-
րեալ և միտք կուրացեալ, զի՞նչ է զոր խո-
սիս զհայհոյութի. ՚ի վէր այսր ոչ ածաս-
նեար զզօրութիւն այ իմոյ, այլ տակաւին
լրբիս ։

Այս առաւել բարկացեալ դատաւորն՝ ետ
հրաման պրկել զնա յորսայս, և ըստ չափոյ
հասակի երկայնութե նր փոկս փոկս հանել
՚ի նմանէ՝ քերթելով և մորթեզերծ առնե-
լով զմորթ մարմնոյ նր՝ի թիկանց կուսէ և
՚ի կողից նր (8) ։ Այս իբրև սկսան անողորմ
դահիճքն առնել զայս այսպիս, ձգնազգեաց
վկայն քրի ոչինչ տայր պիտի առ հարցուածս
անօրինաց. բայց միայն սաղմոսէր և ասէր.
համբերելով համբերի տն, նայեցաւ առ ինս,
և լուաւ ձայնի աղօթից իմոց ։

Դայեցեալ դատաւորին յանտանելի համբե-
րութի սրբոյն՝ առաւել զբարեցաւ, և ետ կա-
խել և քերել զլանջս նր, այլև զոտսն ան-
գամ և զծնօտս նր. մինչև ոչ մնաց ամենևին
տեղի ողջ. և այնպես հոսեր իջաներ արիւն
վկային, և առուգաներ զվայրն ։ Պա յետ
այսորիկ ետ հրաման իջուցանել զնա՚ի կա-
խաղանէ քերանաց, և ետ քերել գունտս

եր-

երկաթիս , և ջեռուցանել զնոսին և շան-
թացուցանել՝ի քուրայս դարբնաց , և դնել
յանթս նը և՝ի վը սառեանց . և այսպէս այ-
բեցին խորովելոյն զմնացեալ մարմին նորա :
Այս ապա՝ի վը այսը ամի ետ հրամայեաց բըռ-
նաւորն սրկանել զերանելին՝ի բանտ , պատ-
ուէր տուեալ բանտապանացն ոչ թողացու-
ցանել զոք՝ի քրիստոնէից մտանել առ նա՝ի
բանտն . բայց միայն օր ըստ օրէ նոքին խոհ
տային նմ ունկի մի հաց , և բաժակ մի ջուր :
Լսակ երանելին պղատոն կացեալ այնպէս՝ի
՝ի բանտին աւուրս տասն կամ տասնևուրթ
անսուաղ , ոչինչ առնոյր՝ի բերան , այլ մի-
այն յաղօթս կայր զցայգ և զցերեկ . և այն-
պէս կերակրեր հոգւով՝ յիշելով զբան վրկ-
չին , թէ ոչ հացիւ կեցցէ մարդ , այլ՝ ամ
բանիւ , որ ելանէ՝ի բերանոյ ՚ոյ :
Այս յետ աւուրց այնոցիկ ետ հրամայեաց դա-
տաւորն ածել զվկայն անդրէն զառաջեաւ .
և հարցեալ զնա իբրև զառաջինն՝ ամենևին
ոչ կարաց հաւանեցուցանել զնըն . ապա եղ
՝ի վը վճիռ մահու՝ բառնալ սրով զգլուխ
նը : Այս դահճացն առեալ հանին զնա ար-
տաքոյ քաղաքին՝ի տեղի մի դաշտավայր [9] .
անդ աղաչեաց նըն զդահիճն , ոմն զի նե-
րեսցեն սակաւ մի կալ յաղօթս . և նը թո-
ղացուցին նմա :
Այս ամբարձեալ զձեռս իւր յերկինս ընդ ա-
րևելս՝ եկաց յաղօթս առ Տէր ՚ած՝ի միտս
իւր հարուստ մի ժամ [10] . և ապա՝ի կատար-
ման աղօթիցն փառս տուեալ , և զամէնն

առացեալ՝ աղաչակաց և ասէ, ՚ի՛ր յո՛ւ լինի կալ զոգի իմ խաղաղութի՛ւն. և զայս ասացեալ՝ խոնարհեցոյց զպարանոցն. և ձգեալ դահձին զսուրն՝ անդէն եհատ զգլուխ նորին. և այսպէս կատարեցաւ նոր վկայն քրիստոնէից ՚ի փառս նո՛յ՝ յամենայնի նոյեմբերի, որ օր ժո՛ղովն էր ամենայն, յորմէ ետուն իբր 300 կամ

303։

## Ի՚ Ն Ե Ղ Ո Ս Ի Ա Ն Ե Ա Ց Ե Ա Ց Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ի Ն Ա Ղ Ա Փ Ո Ն Ի Վ Կ Ա Յ Ի Ն։

Ետ կատարման սո՛ր՚ին ՚ի դաշտին անկիւնոյ՝ գողացեալ հաւատացելոց զպատուական մարմին նո՛ր և զգլուխն՝ եդին ամ՚ պատուով և զգուշութի՛ւն ՚ի տեղւոջ ուրեք. մինչև զկնի ամաց ինչ առ մեծն կոստանդիանոսիւ շինեցաւ վկայարան ՚ի վե՛ր տապանի բազմայաղթ վկային. և սկսան լինել զօրութի՛ւնք և բազում սքանչելիք, որովք ցուցաւ սո՛ր՚ն պատոն մի ՚ի նշանաւոր և ՚ի նշանագործ վկայից. զոր բազում գովութի՛ւն պանծացուցանէ սո՛ր՚ն Նեղոս աբբայ որպս քաղաքակից՝ ՚ի Թեսղէն առ Հեղիոդորոս սիւեննտիարիոս, կի՛ւ լուսակեաց. որ և վերծանեցաւ ՚ի Հանդիսի Եօթնեւրորդ ժողովոյն, այն է երկրորդ ՚ըստ ժողովին Նիկիոյ, ՚ի գործն ե՛. արդ այս բանք են Նեղոսի ՚ի ե՛ գիրս. Ընդ. կե՛. երես. 492։

* ՚Ի՛ ձեռն՝ որոց ըստ տեղւոյ և տեղւոյ ըստ ժամանակս ժամանակս անցնիւրաքար եղելոց սքանչելեաց՝ ՚որն զսակաւահաւատս և զանհա-

հաւատոց գլխովին՝ ի հաւատս հաստատուն կոչէ, և զհաւատացելոյն զհաւատս առաւելապէս՝ և գլոյսն աճեցուցանէ, և ամրակուռ և անշարժելի ներդործէ զկոհականութիւն ։ Այլ արդ կամիմ քեզ զմի՝ ի բնութեց պղատոնին մերոյ քաջայաղթ վկայն յայժմուս ձառել. այն՝ որ ոչ միայն՝ ինաճանդի մերում, այլև յամ քաղաքի և՝ ի գաւառն, որոց՝ ի ձեռն նոր հոյցեն գնած, ամենասպատակաստաս պարգևէ զընծորն, և զնորահրաշ յուցանէ զօրութիւն ։

«Բանզի՝ ի լեառն կոչեցեալ սինայ՝ ուր մովսէս զօրինան ընկալաւ յայ, միայնակեացք բնակեին՝ կ՝ որ յերկրէից անտի, և կ՝ որ յեկաց. և մի ոմն այր գաղատացի ազգաւ՝ հանդերձ որդւով իւրով՝ զմիայնութիւնէ յանձին կալեալ զվարս՝ քաղաքավարեր անդանօր, կրթեալ՝ ի ձգնութիւնէ մոյանս զբազում ժամանակս յանապատին ։ Այս յաւուր միում յանկարծակի յարձակեալ՝ ի լեառն անդր բարբարոսք ոմանք՝ հեթանոսք ըստ կրօնի և գարշելիք, ըմբռնեն զնորաւ զ՝ի պատրաստի գտեալ միայնակեացս հանդերձ որդւով ծերոյն գազատացւոյ, և վարեն՝ ի գերութի. զորս և կապեալ ձեռս յետս՝ ըստ յոլովս անցանեն ամայի օթևանս, սովեալս և մերկս տանելով զնոսա, բռնս և առանց խրիք ազանելեաց, ըստ անմխիթար և անչքդի և դժուարըստ վայրն՝ բռնի և հարկաւ յածեալս, և անհուն ահիւ պաշարեալս ։

Այլ միայն ծերն՝ ի ծածուկ փապարի ուրեք

ղղեաւ՝ կոծելով հաչէր՝ չհանդուրժեալ ը
բաժանումն ածասեր որդւոյն . և զնոր թա-
խանձեր քո՛ ի ձեռն պղատոնի հայրենակից
վկայի զիջանիլ՛ ի գութ ։ Օ Նոյն և որդին
՛ի ձեռն նորին ամենաթոյ մարտիրոսի աղաչէր
զհօ՝ կասեալ՛ ի գերութէ , ողորմիլ նմա ,
և կատարել զաքանչելիս ։ Այս իբրև երկո-
ցունց ևս աղօթք լսելի լինէին , հօրն՛ ի փա-
պաս լերին , և որդւոյն՛ ի գերութեան ,
ահա յանկարծակի մերս պղատոն՛ ի վե՛ր հա-
սաներ , երևեալ՛ ի ձի աշտանակեալ , ունե-
լով և զայլ երիվար պատրաստական . և ցու-
ցել զանձն իւր մանկան , որ կայր յարթնու-
թե , և ձանձրեր զսա՛ ի բազում անգամ
տեսանելոյ զվերադարձս հեծ-
նուլ՛ ի նա ։ Այս անդէն լուծանն կապանքն
իբրև զսարգի ոստայն . և նա միայն աղա-
տեալ վերակարգալովն ( ջրեն ) յոգնակա-
նուլե՛ , և ակնարկութեն ոչ յարուցեալ ,
նստի յերիվար , և ընթանայ զհետ առաջ-
նորդողին՝ սէյ վկային՝ անվհեր և խնդա-
միտ ։ Այս՛ ի սուղ ժամու և արագութէ երկո-
քեանն՝ ձեն պղատոն և երիտասարդ միայ-
նակեացն իբրև թևաւորք հոսանեն՛ ի քնա-
կութե՛ ծերոյն , որ յարթնեալ կայր և ողբայր .
և ողջամբ յանձնեալ քաջայաղթ վկայն հօրն
սրտիւ ցաւագնելոյ զցանկալն որդին՝ եղև
աներևոյթ ։

Այս զայսպիսի արագահաս զօրուն՛ ձե վկային
պղա-

պղատոնի քաջ գիտելով սա լինքն երանելին նեղոս՝ քանիցս պատմօղ, համարձակ վստահ հուքք գրէ յայլուս նամակի · ՀԲԲ · Ե · ԸՂԸ · ՃՀԸ · ԷՐԲ · 210 · առ տաւրիանոս ոմն հեթանոս բռնաւոր, թէ դու՝ որ իշխեցեր * պապաւինեալս ՚ի տուն պղատոնի բարեյաղթ վկային զբարեխոհս՝ յանդգնուքք և անբերելի բռնուքք յափշտակել, և ՚ի բանտ արկանել հրապարակաւ .... ծանիր արդ, թէ ոչ դիւրին է արհամարհել զամենաքո վկայն, և պատրաստեա զանձն քո ՚ի կրել զպատրաստեալն քեզ դժնդակս · և նախ զբարկուքքն մահկանացու թշնամեաց · որով և հարկաւորեալ ապաստան լինիցիս ՚ի սեամն անդր պատկառելիս՝ որ ՚ի քէն թշնամանեցան և անարգեցան · և ապա զխօթուքքիւն ծանր և դժուարին ՚ի վէր անձին քո և ամ սիրելեաց քոց · և յետ ամի այսորիկ զկապտուքն յամ մեծուքքեց քոց ցանկալեաց ‖ · իսկ ՚ի հանդերձեալն ասէ յայտնի են մշտընջենաւոր կապանք և յաւիտենից խաւարն սանդարամետին ։

Այս ոչ եթէ յանկիւրիա միայն պատուհեալ էր ընդ պղատոն, ոլ և յանաստասուպօլիս գաղատիոյ՝ ուր շինեցաւ ՚ի հին դարս այլ վկայարան յանուն նըմին, այլև ՚ի կոստանդնուպօլիս · ուր անաստաս կայսրն ՚ի սկիզբն վեցերորդ դարու եաւ շինել յանուն նը տաճար հոյակապ, բերեալ անդր տասն սիւնս քանդակադործս ՚ի Թեսաղոնիկեայ ։ Այս գայս եկեղեցի ընդն պղատոնի՝ որ մերձ էր ՚ի

'ի հրապարակն կոստանդիանոսի , իշարձա-
կեաց և ևս պայծառ յօրինեաց մեծագործ
կայսրն յուստինիանոս . և արար զերկրորդ
նաւակատիս նը 'ի ն աւուր դեկտեմբերի՝
հանդերձ նախատօնակաւ և հակամէտ նա-
խընթացս գիշերոյ : Այլ յետ ժամանակաց
'ի վանդիլ չինուճածոյ յերեսաց սատանւոյ՝
նորոգեաց և ամրացոյց զայն վասիլ կայսրն
արշակունի : Ոչնչ և զվիւս վիայարան սբեայն
պղատոնի 'ի բիւզանդիա 'ի գաւիթս դոմնիկ-
նոսի :

Յակ 'ի վենետիկ քաղաքի խտալիոյ հանդի-
սացաւ առանձին պատիւ սբեայն պղատոնի վը-
կայելն , յորմէ հետէ բերեալ եղև անդր պատ-
ուական գլուխ սբեայն 'ի վաղ ժամանակաց , և
եդաւ 'ի հռչակաւոր վանս սբեայն լաւրենտիու
սի . որ 'ի սկզբանն էր մենաստան արանց ,
իսկ յինն երորդ դարէ և այսր եղև կուսաս-
տան ստացուհեաց . որք առանձին պաշտա-
մամբք կատարէին զտօնախմբութի սբեայն պղա-
տոնի 'ի 24 յուլիսի , և դնէին զգլուխ սբեայն
'ի բաղմոցի 'ի յարգութի ժողովրդեան . զոր
և մեզ եղև տեսանել առանձինն ըս փափաք-
մամբ մերում : Ի տարին յամի տեր 1801 . և 'ի
թուին մերում , ռամծ , 'ի սկզբան ամենայն
սեպտեմբերի երթեալ անձամբ՝ ետուս բե-
րել կուսանաց զգլուխն զայն՝ իբրև իրա-
ւամբք քաղաքակից լինելոյ սբեայն . և եդին
առաջի իմ ըս վանդակ պահարանին արծա-
թի սկսեղբ . և տեսի՝ զի էր գանկն ողջոյն
պատեղ կարմիր թաւշոնքաւ յո խատիփեթիւ ,

բայց

քայց քանց Թողեաւ վերնակողմն Ձակատուն ։ ուստի երևէր ողորկ ոսկր Թևսագոյն վերուստ ՚ի վայր գծաւոր իբր Ձեղքել ։ և ոչ գանկն շուրջանակի զարդարեալ էր մարգարտայեռ յօրինուճածով, նոյնպէս և ՚ի Ձակատն կոյս պրեալ մարգարտով անուն վկային լատի-

ներէն՝ սէ Պղատոն ։

Օ այլ նշխարաց սէյն չիք որոշ տեղեկուբ ։ այլ ՚ի ժամադիրս յուշաց ընարձակ են յոյժ ներբողանի պանծալի յօրինեալ իբրև շարա-կան ՚ի Թէոփանեայ երգաբանէ ։ ուր սկզբ-նատառաք երգոյն յօդեն զայս բան ։ * Ի զ-քոյոց դրուճատեաց, ով Պղատոն, նուճագեմ արձակավայր ||, կի հրապարակ ։ որ յուշարկն ասի Բլատօս ։ ոչ և պղատոնն՝ Բլատօն ։

xxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxx

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք։

(1) Օ պանծալի վկայիս պանծալի ունիմք վկայաբա-
,, նուԹեՀ ՚ի մեծ Ճառընտիրն մեր, մակագրեալ ։ * Վկայա-
,, բանուԹեն սէյն պղատոնի, որ վկայեաց ՚ի քալաքին
,, անկիւրացւոց ||, սկիզբն ունելով այսպէս ։ * Ի քա-
,, ղաքին անկիւրացւոց նստեալ յատենի ագրիոս ( իմա
,, ագրիպպինոս ), հրամայեաց առաջի իւր կացուցանել
,, զերանելին պղատոն ||։ որ և գրի պղատոնեայ՝ ան-
խախիր ՚ յունդլական և ՚ի հոդուվական ։ Ա յս օրինակ ե
անջուշա՝ կամ առաջին աղբիւր այլոց վկայագրաց, և
կի յառաջին աղբերե բղխեալ անայլայլակ ։ ըստ որում
տեսանի ՚ի նմա անպաճոյճ և հաւատարիմ ատենախո-
սուԹեն ՚ի դիւանական մատենից հանեալ ՚ի ձեռն ժա-
մանակակից գրչի ։ վայ և մեք առաւելապէս զսոյն օրինա-
կեցաք՝ բայց ՚ի յառաջաբանական տեղեկուԹենէ, և ՚ի
բա-

քանի մի մանաւոր բանից և բառից՝ զոր յայլ օրինակաց առաք։

Քանզի են և այլ չորս օրինակք առ յոյնս և առ լատինս. որք ոչ իբիք իբիք տարբերին յիրերաց, նոյնպես և առ հասարակ զանազանեալ են ի մերմէս ձեռով ձևախաբանութեան. որ սկիզբն ի օրինակի առ բոլանդեանս լոկ լատիներէն տպագրեալ՝ ունի այսպէս. * ՈՒՀ են ,, օտար կամ անծանօթ յամ բնակչացն անկիւրիոյ, և ուր ,, ի մերձակայ տեղեաց առ հասարակ, եթէ արպէս ,, գժնդակ և խիստ հալածուածն եղև ի ժամանակս մաքսի- ,, միանոսի ինքնակալին Յովն գալատացւոց ընդեմ կրօնից ,, քրիստոնէից. մինչև եղբայր զեղբայր, և հայր զորդիս ,, իւր, և բարեկամք զբարեկամս և զդրացիս՝ որք զքե ,, խոստովան լինէին, հալածէին և ի մահ մատնէին։ ,, Յորում ժամանակի երանելին պղատոն Թողեալ եղև ,, ի ծննդոցս մանուկ փոքր հանդերձ մեծաւ հարստութ ,, և առատութեամբ բազմաց. զի յերևելի և յայնուհետև ,, ազգէ էին։ Եւ էր նա գեղեցիկ տեսլեամբ, և լի ,, հոգւով սրբ անգամին ի տայուէ .... Եւ իբրև պղտ ,, եղև ագրիպպինոսի դատաւորի, հրամայեաց առեան ,, յարդարել ||, են։

Նոյնօրինակ ականն և միւս վկայաբանուն ի, լոկ յու- նարէն, զոր գտաք ի գրատան սրբն մարկոսի ի վենե- տիկ՝ յերիս մատեանս՝ չծ. չծբ. և չծգ. ինոյեմբ. 18. զոր գրագետն ի ցանկի իւրում դնէ ընդ անուանմբ սի- մէոնի մետափրաստեայ՝ հետևելով կարծեաց լէոնի ալ- լատիոսի ի գիրսն յալագս սիմէոնից. էրէս. 125. և սա է առաւել ճշմարտաբան ընդ ոճսն։

Եւս առաւել բազում մատամբ երկարագոյնս գտա- նի օրինակն ի. նովին սկզբնաւորութեամբ, զոր սուրիոս ընդ լեզումանոսի բերէ լոկ լատիներէն յանուն մետա- փրաստեայ։ Եւ քան զսա երկայնաբան գոլ վկայեն բոլ- լանդեանք զօրինակն ի, զոր գտեալ են ի յունական մատեանս վատիկանու։ Մինչ զի եթէ սեռանէին բոլ- լանդեանք զմերս օրինակ, իրաւամբք նախատպատիճ առ- նէին քան զնա։ Այլ արպէս և լոկ՝ ուչ միայն էութեն պատմուճէ նոյն է յամենեսեան, այլև մեծագոյն մասամբ ընդ բառից անգամ միաձայնին. վասն չէ հարկ զնուեթա- կան տարբերութիւնս ոճոյ կամ զընդլայնումսն միոյ միոյ ի նոցանէ նշանակել։ Այլ թէ կայցէ ինչ կարևոր՝ ծա- նօթութեամբ արժանի, ուչ զանց առնեմք ի կարգիս։

(2) Զեղբայր սրբն պղատոնի զանախոհոս վկայն ուչ գտա-

նեմք

Նեմք յիշատակել և ոչ ՚ի մէջ ՚ի նախանշանակեալ
վկայաբանուեց ։ այլ միայն ՚ի մանաւանդ ոմանց յոյն
և լատին վկայագրաց ։

(3) Վկ. ՅՈ. և ՟Ի. գրեն՝ Թէ նաև զձնանապարհային քա-
ջալերեր սբն զհաւատացեալս ։ և ՚ի մէջ բերեն զնոսա
՚ի բերեանս սբյն՝ նման և աննման իրերաց ։ ոչ և զբանս
պօղեից նր ՚ի բանաի ։

(4) Ճ՝. յետ վեց աւուրց ասէ ։ իսկ վկ. ՅՈ և ՟Ի. ոչ և
ժամւրգուածի կուսաստանի սբյն լաբենաիոսի՝ յետ
եօթն աւուրց գրեն ։

(5) Ա յսպէս է ՚ի Ճ՝. իսկ այլք ըմբ վկ. գրեն ։ * միա-
մօր գուսաց եղբօրն իմոյ ։։

(6) Ճ՝. և վկ. ՅՈ. յոհաննէն զձեռն և զծծումբս ևն, ար.
կեալ ՚ի վր սբյն ։ քանզի ենթադրի պղնձի մահճէն իբ-
րև կասկասալ ։ ըմբ որոյ վանդակս անցանել ունէր բոցն
և բոցակիզել զմարմին սբյն ։ բայց մարթի է իմանալ՝
արկեալ և ՚ի վր հրոյն ։ ոչ երևի յոհաննէս ՟Ի. ուր
և ասի, Թէ հալեցան մանգամայն զսբն բարակ գա-
ւազանօք ։ ՚ի ժամւրգ ։ լաբենաս, երկաթի մահճէ ա-
սբյն ։ իսկ զսոփրոնիոս բանասացս յիշատակեցաք ըստ
վկ. ՅՈ. և ՟Ի. որ պակասք ՚ի Ճ՝ ։

(7) ՚ի ժամւրգ ։ լաբենաս փոխանակ լուսոյ գնի երև-
ումն հրեշտակի ։ զնոյն յոհաննէս և վկ. ՅՈ ։ որ և զոյդ
ըմբ է ՟Ի. ասէ, Թէ զերկս ժամս եկաց վկայն յոյն տանջանա
պղնձի մահճից ։

(8) Ոմանք գրեն, Թէ զբովանդակ մարմինն մորթեցին,
և ապա ՚ի փոկս փակս կարատեցին ։ Եւ բաղումք յաւե-
լուն ըմբ վկ. ՅՈ. Թէ առեալ վկային զմ ՚ի փոկիցն ՚ձգեաց
յերկնս գառաւորին ։ որ երևի առեալ ՚ի վարսից սբյն
բասիլիոսի քաջնախյ անկիւթացւոյ ։ և այլոց ոմանց՝
որ զնոյն գործեցին ։ Դարձեալ գրեն, Թէ սբն ՚ի կշռամ-
բեալ զգաստաւորն ասացեալ էցէ ։ բարւոք կռնեցար ա-
նուն քո ագրիպպինոս ։ ՚ի վայրկենական գազան ։ (որ ա-
ռաւել յարմարի սխալ կալածելեալ գրչութենէ Ճ՝ ։ ուր
գառաւորին անուն է ագրիոս ։ իսկ ՚ի՞ղէիօ յոհաննէն
վարդապետ լսի ։ ) Ոյ և յերկար խօսակցութենէ՝ որ ընդ ՚ի Ճ՝.
գրեն ասեալ գառաւորին ցվկայն ։ * Ահա զպղատոնի
,, փիլիսոփայի վնասասարսռանդի ունկնդիր, ոչ խնայեմ
,, ՚ի քեզ ։ այլ համբերեմ մ ՚ի կրելոյ քո զանուն նր ։ և
,, սբյն ասէ ։ զանուն ունիմ զպղատոնի, այլ ոչ զմտա-
,, րութիւն նր ։։ Սմին նման խօսի և Հ. առեալ ՚ինոյն
պնեսի ըարձակ գրչաց ։ Ջոր օրինակ ի վկ. նաև ՚ի յա-
ռա-

ռաջաբանի ասացեալ էր. * զի ոչ այնմ՝ յորում ան-
,, ուանակիցն նր պղատոն, կրթեալ էր յիմաստասիրու-
,, թե, և ոչ ՚ի նմին վիպասացե էր իմաստասիրել. այլ
,, գերազանցեալ էր յամ իմաստութե բանի, և հաւա-
,, տովք գեր ՚ի վերոյ լինէր՝ քան զորս եղենն երբեք ||։
Ա՛յլ այսպիսի բանք՝ ճառաբանից են անկ, քան հարա-
զատ վկայաբանից։

(9) Ճ. գնէ անորոշ՝ արտաքոյ քաղաքին ՚ի տեղի մի. բայց այլ ևս ամ օրինակք յաւելուն և զբաւդ գաշտ կամ դաշտավայր, կէսք իբրև յատուկ անուն տեղւոյ, և կէսք հասարակ առմամբ. որ եթէ հայիցի ՚ի տեղին անմիջա-պէս արտաքոյ պարսպին, ՚ի դէպ գայ տեղւոյն՝ որ այժմ կոչի ռամկօրէն հէռաբ էօնիւ. ապա եթէ արտաքոյ արուարձանին դիցի, հայի ՚ի մեծ գաշտն դերեզմանոցի. և գուցէ յայս միտ գրեն ոմանք, * տարան արտաքոյ քաղաքին ՚ի տեղին կոչեցեալ դաշտ վուարձալի ||։ Թուղղի զի և անուն սբոյն Թարգմանի հրապարակ կամ դաշտ. վասն գուցէ ուխտատեղին սբոյն անխտիր կոչեր բլադօն կամ բլադօս։

(10) Վկ. ա. և բ. յօրինեն զաղօթս ՚ի բերանոյ վկային, զի ենթադրեն ՚ի ձայն աղօթել. այլ մեք ոչ ՚ի յուլով տեղիս՝ նոյնպէս և աստ առաւել ըստ մերը ընթերցուածք հաճիմք։

# ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

*Հայրապետացն բիւզանդիոյ՝ Աեւտրոփանոսի, Ղեքսանդրոսի, և Պօղոսի խոստովանողի. և սքեց նօտարացն Արիկիանոսի և Արտիւրոնի։*

Աեպտեմ. ի. յունիս. 4։ Ղեկտ. ի. յունե. 4։ Յ. մմ. օգոստ. 30։ Լ. օգոստ. 28։ Պօղոս խոստ. ի. Յ. նոյեմբ. 6։ Լ. յունե. 7։ Լօփատ. ի. Յ. Լ. հոկտ. 25։ Նո-ւեմբ. Ղ. ոեե = ոլ. և Ր. ոեգ = ոլա. և Օ. եե = խե։ Բուլղանդեանդ. ’ի ա. հայս. յունիսի. ԷՂ. 384 = 395. և ’ի ձ հայս. օգոստ. ԷՂ. 195 = 198։ Աուբէոս ’ի յունիսի 7. և ’ի հոկտ. 25։ Վասէք. սուքրատ. սոզոմ. գելասիոս կեսարիացի. և այլ ընդ բարոնիոսի։ [1]

## ՎԱՐՔ ՆԻ ՊԱՆՕՒԼՅ

*’ի հարս՝ առաքելանման և մարգարէաշնորհ սբ հայրապետն Աեւտրոփանոս կամ միդրոփանես, ըստ աւանդութեանէ բիւզանդացւոց՝ ելը ’ի Թագաւորական զարմէ ’ի տանէ հռովմէական ինքնակալաց. քզի ասի՝ Թէ եղբայրն պրոբոսի կայսերի դոմետիանոս կոչ դոմետիոս անուն՝ այր իմաստուն և առաքինի՝ ծանուցեալ*

ցեալ զստուերիւն կռոց, հաւատաց ՚ի քո, և մկրտեցաւ հանդերձ երկու որդւովք իւրովք, որոց անուանք էին պրոբոս և մետրոփանոս. և դէմ եդեալ նոքօք հանդերձ՝ եկն ՚ի բիւզանդիոն քաղաք. ուր կալաւ մտերիմ ընտանութի՛ ընդ սբ եպսի տեղւոյն, որ կոչիւր տիմոթէոս կիմ տիտոս և կիմ տրատոս. և կալ գեցաւ ՚ի նմանէ ՚ի դասս պաշտօնէից եկեղեցւոյ. և յետ ննջման նր նստաւ փոխանակ նորա յաթոռ եպս բիւզանդացւոց ամս իբր ի՛ը ։ Ա՛ւ յետ նր եղև եպս քաղաքին որդի նր պրոբոս ամս ժ՛ը ։ Ա՛ւ յորժամ հանգեաւ պրոբոս ՚ի տր, կալաւ զաթոռ նր եղբայր նր երանելին մետրոփանոս ամս ՟ը, կիմ ժ՛ը, և կիմ ժ՛ե ։

Ա՛ւ սորա աւուրս մեծն կոստանդիանոս թագաւորն հռովմայ՝ յետ հաւատալոյն ՚ի քո՝ գնայ ՚ի պատերազմ ընդէմ լիկիանոսի փեսային իւրոյ ՚ի նիկոմիդա բիւթանացւոց. և հանդիպեաւ ՚ի բիւզանդիա սքանչելի մետրոփանոսի՝ հաւ զաղօթս նր, և երթեալ քաջալիս յաղթեաց լիկիանոսի. և իբրև դարձաւ անդրէն ՚ի բիւզանդիա, անդր փոխեաց զթագաւորութի՛ն ՚ի հռովմայ. և մեծացոյց զբիւզանդիոն քաղաքն՝ ամրացուցեալ պարսպաւ. և անուանեաց զայն նոր հռովմ. իսկ այլք անուանեցին ըստ անուան նր կոստանդինուպօլիս, այր կոստանդիանոսի քո՛ք ։ Ա՛ւ յայնմ հետէ սկսաւ մեծանալ նաև պատիւ եպսին բիւզանդացւոց կիմ հայրապետին կոստանդինուպօլսոյ. զի քաղաքն այն՝

զոր յառաջագոյն էր լուկ եպիսկոպոսն՝ նուճատաւագոյն քան զմերձակայ աթոռս սրբեպսակաց և մետրապօլտաց , եղև աթոռ գլխաւոր մետրապօլտի , ՚ի գիտապետի մայրաքաղաքին մեծի . վ՚ո որոյ և ոմանք զնոքն մետրոփանոս հաշուեն իբրև առաջնին պատրիարգ կոստանդնուպօլսոյ . իսկ պապրիարքն անուն՝ հայրապետ թարգմանի . մանաւանդ զի ինքնակալն կոստանդիանոս հայր իւր անուանեաց զնոսա հայրապետս մետրոփանոս , և եղև նմա յորդեգիր վ՚ո ծերոյն հասակին և պատկառելի սրբութեն : (2)

Յաւուրսն յայնոսիկ երևեցաւ ամպարիշտն արիոս եգիպտացի՝ աւազերից աղեքսանդրացոց եկեղեցւոյն , որ հայհոյեաց զնոքս երրորդութին՝ ասելով ոչ գոլ զորդի՚ի քնութէ հօր , և ոչ համագոյ և միասնական , այլ՝ արարած և յետ ժամանակի գոյացեալ . վ՚ոյ գումարեցաւ ՚ի բիւթանիա մեծ և տիեզերական ՚ի ժողովն նիկիոյ . ուր հերքեցաւ մոլորուն չարին , և սահմանեցաւ հաւատք ուղղափառուե :

Ընդ քանզի յայնմ ժամանակի երանելին մետրոփանոս ծերացեալ էր յոյժ և տկարացեալ մարմնով , ոչ կարաց գնալ անձամբ ՚ի նոքս սիւնհոդոսն նիկիական , այլ՝ փոխանորդ իւր առաքեաց զաւագերէց եկեղեցւոյն իւրոյ՝ զայր գիտնաւոր և առաքինաշարժ , Կ. պոլսոյ անուն . զոր և ընկալան ամենայն հաւատովք զնոյն ինքն մետրոփանոս : Եւ յորժամ արձակեցաւ ժողովն , առեալ

աղեքսանդրոսի զտուսմար նը ժողովոյն ուղ-
ղափառ խոստովանութիւք՝ գայր ուրախութիւք
՚ի կոստանդինուպոլիս . և զձանապարհայն
՚ի քաղաքս և ՚ի գեօղս քարոզէր և հաստա-
տէր զուղղափառ դաւանութիւնն ։ (3)

Եւ հասեալ առ երանելին մետրոփանոս՝ ետ
զտուսմար հաւատոյն ՚ի ձեռս նորա . և նորա
առեալ ընթերցաւ և ընկալաւ , և ձեռնա-
դրով իւրով հաստատեաց . և զարիոս նզո-
վեաց , և զհերձուածն նր արմատախիլ արար
՚ի վիճակէ իւրմէ ։ Ապին իրի անդրէն առա-
քեաց զաղեքսանդրոս երիցապետ , ընդ նմին
և զպօղոս դպիր հայրապետանոցին՝ շրջիլ
ընդ ամ տեղիս գաւառաց իւրոց , և յեկեղե-
ցիս ամ կղզեացն կիկղադայց , և քարոզել
զուղղափառութիւն . զի մի իւիք տեղի գտա-
նիցէ ուրեք մոլորութիւնն արիոսի ։

Նսկ ածասէր Թէքլն կոստանդիանոս զամ
եպսոսնս նը ժողովոյն նիկիոյ հրաւիրեաց ՚ի
նորաշէն քաղաք Թէքլուէ իւրոյ ՚ի կոստան-
դինուպոլիս իբրև ՚ի հանդէս նաւակատեաց .
և նոյ եկեալ օրհնեցին զքաղաքն և զթագա-
ւորութիւնն բարեպաշտ ինքնակալին ։ Ապա
մնեալ միաբան նը հարցն ՚ի հայրապետա-
նոցն առ երանելին մետրոփանոս հանդերձ
Թէքլաւն , գտին զհայրապետն ՚ի մահիճս
անկեալ ՚ի յոյժ ծերութենն . և առհասարակ
երկրպագեալ ողջունեցին զնա իբրև զկեն-
դանի նը . նոյնպս և Թէքլն երկրպագեաց և
ողջունեաց . և օրհնեալք ՚ի նմանէ նստան .
և պատմեցին նմա զամ եղեալսն ՚ի նը ժո-
ղովն .

ղոմէն. և նա գոհանալով ցայ՝ օրհնեաց անդրէն զնա:

Լսակ Թէքրն անկեալ՝ի վէր՝ դարձեալ համբուրեաց զնոքա աչ նէր և զգլուխն, և ասէ. ահա հայր իմ երջանիկ՝ յոյժ ծերացար, և ցաւք և տկարութիւնդ քո զփոխուսն քո գուշակեն. արդ հրամայեա, եթէ զկնի քո ոմն իցէ արժանի յաջորդելոյ զաթոռ քո՝ վերըն դունակ լինել քահանայապետութենէ և վարդապետութենէ եկեղեցւոյ քո: Այլ նա տարակծեալ զձեռս իւր՝ ասէ. օրհնեա՛լ ես դու՝ որդեակ իմ և աթոռակիցդ իմ, զի ոչ եմ դադարեալ առ՝ի խնդրելոյ յայ վնս այդը խընդրոյ. և եղոյց ինձ տէր՝ եթէ ոմն է նստելոց յաթոռ իմ փոխանակ իմ:

Այլ նք դարձեալ հարցին, եթէ ոմն է՝ զոր յայտնեայց քեզ դու: Այլ նա ասէ. աղեքսանդրոս աւագերէց եկեղեցւոյս, զոր առաքեցի փինակ իմ՝ի ներ ժողովն. որ և այժմ մեծաւ աշխատութիւնք շրջի ընդ ամ քաղաքս և ընդ գիւղս գաւառիս, և քարոզէ իմով հրամանաւ, և ուսուցանէ զուղղափառ հաւատս սըբոյ առաքելական եկեղեցւոյ քոյ. և զարիոսի պիղծ հերձուածն յայմ տեղեաց հալածական առնէ: Այլ նք ասեն. արժանի է: Այլ դարձեալ հարցին ցնա և ասեն. ասա մեզ, եթէ զկնի նր ոմն է: Ասէ ցնսա մետրոփանոս. պօղոս է՝ ընթերցօղն և դպիրն իմ: Այլ ապա դարձաւ առ աղեքսանդրոս հայրապետն աղեքսանդրացի, և ասէ. եղոյց ինձ տէր և որ զկնի քո նստելոց է յաթոռ քո: Այլ

նա եհարց, թէ՝ ո՞վ իցէ։ Ասէ մեծոփանոս. ասէ ցանասիոս նախասարկաւագն քո, նա հովուէ զեկեղեցի ուղղափառութեանդ զժողովուրդն ա-ղեքսանդրացւոց. և բազում աշխատութեանց և հալածանաց հանդիպեսցի՝ կցորդութեանդ դպրի իմոյ պօղոսի։

Այս զայս ասացեալ՝ հրամայեաց, և բարձին զնա մահճովքն կիսպատգարակօք, և իջուցին յեկեղեցին. և կալեալ՝ զբ եպասցն՝ կանգնեցին զնա՝ի վերայ ոտից իւրոց. և մատոյց զաճ-ային՝ զբ խորհրդական պատարագն. և հաղորդեցաւ ինքն, և ապա թէքւորն և ամ եպսունքն՝ի ձեռաց՝ զբյն. և ուրախացեալք գոհացան զայ ըստ միաւորութեանն հաւատոյն և ըստ հերքումն արիոսի։ Իսկ երանելւոյ եպիս-կոպոսապետին մեծոփանոսի մերկացեալ յինքենէ զձև հայրապետութե հանդերձին՝ դնէր՝ի վրն՝ զբյ սեղանոյն այ, և ասէր ցե-պիսկոպոսունան. ահա եղբայրք և աթոռա-կիցք իմ՝ ժամանակ դարձի իմոյ փոխման յն՝ մերձեալ է, և կոչէ զիս հովհ՝ապետն քն, և գնամ զճանապարհ հարց իմոց. աղա-չեմ զձեզ զամենեսեան սիրով՝ն մերոյ յն քն, անսացէք աստ զկնի ննջման հանգըս-տեան իմոյ ցաւուրս լինն. զի մինչ յայն օր հասեալ լինի այսր աղեքսանդրոս. ձեռնա-դրեցէք զնա, և դուք ինքնին նստուցէք յա-թոռ իմ. և ապա երթիջէք և դուք խաղա-ղութ՝ի վիճակս ձեր և յաթոռս։

Այս զայս ասացեալ՝ աւանդեաց զհոգին իւր առ ած՝ի յունիս ամսոյ՝ի չորս, ըստ ոմանց

՝ի

'ի նմին իսկ ամի ժողովոյն, ըստ յաւմի ոմն 325։ և ըստ այլոց ուղղագոյն և՝ 'ի յաջորդ ամին 326։ Այս ամ եպիսկոպոսքն հանդերձ թագաւոր սաղմոսիւք և օրհնութիւք և երգովք գովաբանութեանք և արտասուօք հանգուցին զպատուական մարմինն 'ի քնարան տապանի սրբոյ հարցն. այս է 'ի շիրիմ եպիսկոպոսաց նախորդաց նորա, 'ի տեղւոջն՝ որ եղև տաճար յանուն նորին Եւթրոփանոսի. ուր և տօն նորա կատարիւր՝ մօտ 'ի վկայարան Եւթրոփանոսի մեծի վկային յԵօլիենաստիձան անուանեալ վայրի։

Այդ ձկնի հանգստեան Եւթրոփանոսի՝ 'ի կատարման իննօրեայ յիշատակի նր՝ եկն էհաս աղեքսանդրոս 'ի քարոզուէ. և ձեռնադրեցին զնա ամ հայրապետքն միաբանութիւք եպիսկոպոս կոստանդնուպօլսի յաթոռ Եւթրոփանոսի. և այնպես ծանուցաւ երանելին աղեքսանդրոս իբրև առաջին պատրիարգ Թագրական քաղաքին՝ ըստ կարծեաց ոմանց 'ի յոյն մատենագրաց. յորոց առեալ գրեն և Ճառընտիրք և յայսմաւուրք հայոց, թէ որ երբեմն եպիսկոպոս էր բիւզանդիոն, յայնժամ եղև պատրիարգարան, 'ի կարգել աղեքսանդրոսի եպիսկոպոս Յամուտ դրանն 'ի յԱթը հայրապետացն. զի թէպէտև այս պատիւ պատրիարգութիւն այնր աթոռոյ տիրապես հանդիսացաւ 'ի յաջորդ ժողովն կոստանդնուպօլսոյ առ մեծն Թէոդոսիւ, այլ սկիզբն փառաւորութիւն նորին եղև առ մեծն կոստանդիանոսիւ յաւուրս ժողովոյն Նիկիոյ։ Պա-

նստուցեալ Հարցն Տեզոյ յաթոռ հայրապետական զերանելին աղեքսանդրոս, և ողջունեալ զտապան Տեզոյն մետրոփանոսի, գնացին յիւրաքանչիւր տեղիս։ (4)

Իսկ երանելին աղեքսանդրոս հովուէր զեկեղեցիսն ոյ՝ ի վիճակի իւրում ուղղափառ վիպուքն՝ ըստ սահմանելոյ կանոնական հրամանի նիկիոյ՝ զի ժողովոյն. և քաղաքավարեր առաքինի սրբուքն և ճգնաւորական հանդիսիւ. մինչ զի աղօթիւք նր զոյգ ըստ աղօթից սբոյն յակոբայ մծբնայ հայրապետի ե, զև անկարծելի սատակումն արիոսի. զի ոչ գրէ Տեզն աթանաս (՝ի նուաղլն առ սրապիոն), ըստ նմին և Տեզն եպիփան (հերձ. կն. 10), և սոզոմենոս և սոկրատ՝ այլովքն հանդերձ, յետ Տեզոյ ժողովոյն նիկիոյ՝ իբրև անցին ամք տասն, ժանտն արիոս՝ որ արտասահմանել էր յաքսորս, սուտ կղզումն և ապաշաւ երևեցուցեալ՝ խնդրեաց զդարձ, և միջնորդութիւք արքանեկաց իւրոց՝ յորս երևելի էր եւսեբիոս նիկոմիդացի, ընկալաւ հրամանի՝ ի մեծէն կոստանդիանոսէ՝ գալ՝ ի կոստանդինուպոլիս։ Նազմօք ըդեմ եկաց այսմ երանելին աղեքսանդր հայրապետ կոստանդնուպոլսոյ, բայց ոչ կարաց յետս դարձուցանել զարքունի հրամանն։

Իբրև եկն ածամարտն արիոս, և յանդիման եղև ինքնակալին, ետարց զնա թէ՞ր, եթէ հաւանիս պահել զհաւատս կաթուղիկէ եկեղեցւոյն ոյ. և նա երդմամբ հաստատեաց հաւատալ այնպէս, և ետ և զիր խոստովա-

վանուլեն 'ի վերին երեսս համաձայն դա-
սուց ուղղափառաց : Յայնժամ ասէ ցնա
Թէգրն . Եթէ ուղիղ լսեն հաւատք քո , ուղ
ղութ և երդումն . ապա եթէ ամպարշտութ
խորհիս՝ և տակաւին երդուաս , ած ինքնին
տեսցէ զդատ քո ըստ երդման քումմ :

Ա. Երդ սովին երդմամբ անօրինին՝ հանդերձ
Թախանձանօք եպսասցն արիանոսաց՝ զնջալ
հոստանդիանոս . և կոչէ առ ինքն զաղեք-
սանդրոս եպսասպետ Թէգուրեաց քաղաքին՝
պատուիրեաց նմա ընդունել այնուհետև զա-
րիոս 'ի հաղորդութեն եկեղեցւոյ : Իսկ երա-
նելին աղեքսանդրոս աղաչէր զԹէգրն՝ չպատ-
րել 'ի կեղծաւոր բանից արիոսի , և տեսեալ
զԹէգրն դժկամակեալ ընդունել բանս իւր՝ եղ-
սաց նմա ըսուԹէ :

Յայնժամ արիանոսք՝ որ և եւսեբեանք՝ խոր-
հեցան բռնի մուծանել զարիոս յեկեղեցի .
իսկ աբ Հայրապետն աղեքսանդրոս պնդէր ,
Թէ անմարթ է զհերետիոփապետն յեկե-
ղեցի ընդունել : Այլ եւսեբեանք ասեն ցնա
Յոխորտանօք . զոր օրինակ ընդդէմ քո կա-
մացդ տուաք բերել այսր զարիոս արքունի
հրամանաւ , այնպէս և 'ի վաղիւ անդր՝ Թէ-
պետև չկամիցիս դու , արիոս ընդ մեզ լինիցի
եկեղեցւոջ աստ 'ի պաշտօն ած ային . և
էր շաբաթ , յորժամ զայս այսպէս խօսեցան
արիանոսք :

Ոյն լուեալ երանելւոյն աղեքսանդրոսի ,
լի եղև տրտմութեբ . և մտեալ եկեղեցի՝
տարածեաց զձեռս իւր առ ած , և հեղեալ

արտօսր՝ անկանէ ի վերայ երեսաց իւրոց, և կայր յաղօթս։ Եւ նմա էր և մանկարիոս, որ աղօթէր ընդ նմա, և լսէր զբանս աղօթից նր, ոչ և յետոյ բերանով իւրով պատմեաց աշխանասի. զի այսպէս ասէր երանելին ա-ղեքսանդրոս յաղօթել իւրում. Տէր, եթէ արիոս վաղվընն մտանելոց իցէ յեկեղեցի, զիս զծառայ քո արձակեա ի կենաց աստի. և մի կորուսանիցես զբարեպաշտն ընդ ամբարշտի. ապա եթէ ողորմիս եկեղեցւոյ քում, և ողորմեացիս իսկ՝ ոչ քաջ գիտեմ, նայեաց ի բանս եւսեբեանց, և մի տար յասպակա-նութիւն և ի նախատինս զքո ժառանգութիւն. այլ բարձ ի միջոյ զարիոս. զի մի՛ ի մտանել նր եկեղեցի՝ հերձուածած նր ընդ նմա երևեսցի մտանել, և այնուհետև ամբարշտութիւնն ոչ բարեպաշտութիւն համարեսցի։

Օ այս աղօթեալ հայրապետին՝ դարձաւ ի հայրապետանոցն. և ահա սքանչելիք ի նմանէ ցուցեալ լինէր. զի մինչդեռ արիոս ելեալ յարքունի պալատանէ՝ մեծաբանութիւք պարծէր առաջի համախոհից իւրոց՝ մտանել ի վաղիւ անդր եկեղեցի, ընդ երեկս նախ քան զմտանել արևուն ներքեալ ի կարեաց քնոյ՝ հանդերձ սոսափմամբ արհաւրաց իրիք, առանձնացաւ ի խորշի՝ ժօտ ի հրապարակն կոստանդիանոսի ասացեալ, ուր էր արձանն ի պորփիւր քարէ. և անդէն վաղվաղակի վայթեցան աղիք նր. և սատակեցաւ գարշելին ի գարշելիս անդ։ Եւ յայտնի եղև ամենեցուն վրէժխնդրութիւնն այ, որ եհաս

ի

ի վեր ջարին՝ ի զօրաւոր աղօթից՝ զոր ին աղեք-
սանդրոսի. ոմն և քաղցմամ դողուրք յիշատա-
կէ զսոյն և գրիգոր Ծաբաբանն՝ ի սկզբան իւր
Ճառի իւրոյ առ կոստանդնուպօլսեցիս։
Յաւուրսն յայնոսիկ՝ (ըստ պատմելոյ սոզոմե-
նեայ. ա. 18) եկին առ կայսրն կոստանդիա-
նոս՝ ի բիւզանդիոն ոմանք՝ ի հեթանոս փի-
լիսոփայից, և մեզադիր լինէին նմա վասն ք-
ղոլոյ զպաշտօն հայրենի դից, և յարեղոյ՝ ի
քրիստոնէուէ. և եթէ տաս մեզ ասեն հրա-
ման, ՝ի պայքար մտցուք ընդ առաջնորդի քա-
ղաքիդ վասն դենից և կրօնից. քզի կարծէին
յաղթել նմա ձեռնարկօք իմաստակօք։ Ի-
րև յանձին կալաւ թագաւորն, մտին առա-
ջի աղեքսանդրոսի հայրապետի կաճառք փի-
լիսոփայից, և կամէին առ հասարակ մխիլ՝ ի
վէճ։ Ոսկ ծեր հայրապետն ասէ ցնոսա. ըն-
արեցէք զոմն՝ ի ձէնջ առաւել գիտնաւոր,
որ բերան լիցի ամենեցուն, և այլքն նստցին
լռութիւն։ Եւ իբրև յառաջ մատեաւ մի ոմն
՝ի նոցանէ յանդգնագոյն յամենեսին, ասէ
ցնա երանելին աղեքսանդր. յանուն Յի՛ քի՛
հրամայեմ քեզ չկարել խօսել. և ընդ ասել
նը զայս՝ զօրութիւն անուանն ետն կապեցաւ
լեզու առնն, և համրացեալ պապանձեցաւ.
և այնպէս լի ահիւ և ամօթով մեկնեցան
փիլիսոփայքն յերեսաց հայրապետին և թա-
գաւորին։ Այլ ի՛ զոր արար նման սմին ընդ
սպիրիդիոն յատենի նիկիոյ ժողովոյն. զոր
շիտակեաւ ոմանց՝ ասացին, թէ զայս արա-
րեաւ ևս աղեքսանդրոսի՝ ի նիկիա։

Այցոյց երանելին աղեքսանդրոս և զայլ գործս առաքինի և քաջ հովուէի՝ ի պաշտամանն իւրում. մինչ զի յաւուրս նորա միշտ նկուն էին հեթանոսք, և արիանոսք, և ոգիք ամբ ուղղափառաց կախեալ էին զնմանէ. և այնպէս լցեալ զաւուրս իւր՝ ի փառս այ՝ վախճաներ ամաց իննսուն և եօթանց կամ ինննսուն և ութից, յամի տն իբր 336. ըստ այլոց 339 կամ 340։ (5)

Ա.յլ՝ի փոխիլն իւրում յաճէս՝ յանձն արարէ կարգել յաթոռ իւր զընտրելն յայ ըստ յայտնութեանն սրբոյն մետրոփանոսի՝ զդպիր նորա և զիւր՝ Պօղոս Թեսաղոնիկեցի. զոր ինքն խակ աղեքսանդրոս մնուցեալ էր և ուսուցեալ և ձեռնադրեալ քահանայ. և հաճոյ եղև ամբ ուղղափառաց դասուն. և նստուցին զերանելին պօղոս յաթոռ հայրապետութեանն կոստանդնուպօլսոյ. քանզի և ծանուցեալ էր յաչս ամենեցուն այր բարեպաշտ և երկիւղած յայ, և ածային գրոց հմուտ յոյժ։ Զամբ էին արիանոսաց նստուցանել յայն աթոռ զմակեդոն համախոհ իւրեանց. քայց ոչ յաջողեցաւ՝ի ժամուն. և ձեռնադրեցաւ երանելին պօղոս ենթ յեկեղեցին կոչեցեալ եւռինէ՝ այս է խաղաղութիւն, որ մերձ էր տաճարի սրբոյն սոփիայ։

Զամ թագն կոստանդ՝ որ և կոստանդիոս որդի մեծին կոստանդիանոսի, յետ հօրն վախճանին պատրեալ՝ի դաժան արիանոսաց այլափառաց՝ եթող զուղիղ դաւանութիւնն սրբ և տիեզերական մեծի սիւնհոդոսին նիկիոյ, որ

որ եղև՛ի հրամանէ քրիստոսէր, և ամբաստա-
կեալ հօրն իւրոյ, և զհետ գնաց ձախողա-
կի օրինաց չարափառ արիանոսացն. և՛ի սա-
դրելոյ նոյ յարոյց հալածանս՛ի վեր համօրէն
ուղղափառ և առաքելական եկեղեցւոյ, է
զի գաղտնածածուկ հնարիւք, և է զի յայտ-
նի հալստահարութիւք. մինչև հրաման ետ
ժողովել և ս լինել յանտիոք քաղաքի՝ պատճա-
ռանօք նաւակատիս առնելոյ անդ եկեղեց-
ւոյն շինելոյ՛ի հօրէն, ըստ կամս արիանոսաց
ընդդէմ սահմանի նիկիական՝ զի ժողովին՝
առ եղծանել զխոստովանութիւն համագոյ-
ութիւնէ, և՛ի բաց ընկենուլ յաթոռոց զպօ-
ղոս և զաթանաս և զձայնակիցս նոցա։ Այս ոչ
եկին՛ի չարաժողովն յայն աթոռակալքն
մեծ քաղաքացն. ոչ յուլիոս հռովմայ հայ-
րապետ, և ոչ մաքսիմոս եփեսին. ոչ աթա-
նաս աղեքսանդրու, և ոչ պօղոս կոստանդի-
նուպօլսի. ոչ գնացին և ոչ ընկալան զժողովն
անտիոքայ։

Յայնժամ բարկացեալ թագաւորն՝ ընկեց յաթո-
ռոյ զմեծն աթանասիոս, և կացոյց փոխա-
նակ նր յաղեքսանդրիա զգէորգիոս արիո-
սեան. նոյնպէս և զպօղոս խոստովանօղն ըն-
կեց յաթոռոյն կոստանդնուպօլսոյ՝ յետ նըս-
տելոյ նր զամիսս վեց՝ ՚ի նմին իսկ տարւոջ
յամի տն 340. պատճառեալովնոտի քաղքա-
ղայս, ոչ թէ առանց գիտակցութեան իւրոյ
նստեալ լոյծ, կամ թէ չիցէ ձեռնադրեալ՛ի
մերձաւոր աթոռոց հերակլիոյ և նիկոմի-
դեայ, այլ յեպիսց ոմանց գտեալոց՛ի ժա-

մուն

մուն ՚ի կոստանդինուպօլիս . և նստոյց փո-
խանակ նորա զԵւսեբիոս արիոսական զնի-
կոմիդացին :

Այլ յետ երկուց ամաց ՚ի մեռանիլ Եւսե-
բիոսի՝ դարձեալ նստուցին ուղղափառք զպօ-
ղոս՝ յորդորանօք ասկղեպայ եպիսկոպոսին գազայ
պաղեստինու : Այլ զկնի հինգ ամաւոյ ըն-
կեցին դարձեալ չարափառք զերանելին պօ-
ղոս , կիսզայլ ոք հակառակ աթոռոյ նոր կար-
գեցին . քանզի ժողովեալ արիանոսաց ձեռ-
նադրեցին զմակեդոն հայհոյիչ , և նստու-
ցին յաթոռն կոստանդնուպօլսի՝ ոչ ՚ի մեծ
եկեղեցւոջն պատրիարգարանի , այլ՝ յայլ
եկեղեցւոջ , որ կոչի պօղոսի : Այս մակեդոն
ոչ միայն եր քահամարտ իբրև զարիոս , զի ոչ
ասեր զորդի էակից հօր , այլև եր հոգեմարտ.
զի հայհոյեր և զսբ հոգին , և ասեր զնա օ-
տար յածուխէ , և ոչ էակից հօր և փառա-
կից որդւոյ . այն իսկ եր շառաւիղ դառնուե
արիոսեան աղանդոյն :

Նոյնպէս կոստանդ կայսր՝ որ եր յայնժամ յան-
տիոք , եղեալ ՚ի բանս արիանոսաց՝ հաւանե-
ցաւ ընդունելոյ մակեդոնի . և առաքեաց
զերմոգենէս մագիստրոս զօրաց ՚ի կոստան-
դինուպօլիս՝ ՚ի քաց վարել զպօղոս : Այլ
խաւնիձաղանձն ուղղափառաց ՚ի վէր հա-
սեալ ապրեցուցին զհովիւն իւրեանց . այրե-
ցին զապարանս մագիստրոսի , և զնա ձեր-
բակալ արարեալ՝ կապեցին չուան զոտիցն ,
և քարշեցին ընդ փողոցս , մինչև մեռաւ : Ո՛ այն
լուեալ կոստանդեայ՝ եկն ՚ի կոստանդինու-
պօ-

պօլիս , և արտասահման արար զերանելին պօղոս կապանօք , և եւս վարել զնա մինչև ՚ի միջագետս ասորւոց և ՚ի քաղաքն եմեսու ։ և եւ տուգանս ՚ի վէր ուղղափառաց քնակ- չայ կոստանդնուպօլսոյ զսակն արքունի , զոր Թողացուցեալ էր հայր նր ։ բայց և ոչ զմակեդոն տիրանալ հաստատեաց յաԹոռն , այլ միայն Թոյլ ետ ժողովրդեան գնալ յե- կեղեցի նր ։ Ա.յլ՚ի հասանել համբաւոյ ՚ի հռոմ, եկն հրաման ՚ի կոստասայ ինքնա- կալէն արևմտից և ՚ի յուլիոսէ հայրապե- տէ ։ և դարձաւ պօղոս յաԹոռ իւր ։ (6)

Իբրև եհաս լուր առ կոստանդ՝ որ չէր յայն- ժամ ՚ի Թագաւորեալ քաղաքի , եԹէ եկն և նստաւ անդրէն պօղոս , և յարեցաւ ՚ի նա ժողովուրդն, պատուէր յղեաց առ փիլիպպոս եպարքոս քաղաքին՝ մերժել զպօղոս յեկե- ղեցւոյ , և դնել յաԹոռն զմակեդոն ։ Իսկ փիլիպպոս երկուցեալ ՚ի ժողովրդենէ յայտ- նի արտաքսել զպօղոս , խորհեցաւ հնարս ։ գնաց ՚ի բաղանիս՝ որ կոչէր զեւքսիպպայ , և անդ կոչեաց զպօղոս՝ որպէս Թէ ունիցի ինչ կարևոր ասել նմա ։ և յայտնեալ նմա զհրա- ման կայսեր՝ ետ բանալ զմի դուռն բաղա- նեաց , և տանել ընդ այն զպօղոս ՚ի պալատն ։ զի շուրջ կային զմիւս դրամբ ամբոխն ։ և ՚ի պալատանէ տարեալ եդին զերանելին ՚ի նա- ւակ , և աքսորեցին ՚ի Թեսաղոնիկ , հրաման տուեալ գնալ և յայլ քաղաքս լիւրիկեցւոց , այլ ոչ յարևելս ։ Իսկ ապա եպարքոսն բըռ- նութեամբ զինուց՝ զբազումս սպանանելով՝ նըս-

տոյց

տոյց զմանկեդոն յաթոռ եպիսկոպոսութիւնէ :

Իսկ խոստովանօղ Հայրապետն պօղոս գտեալ զպարապ , և ցուցեալ երթալ՝ի Թեսաղոնիկէ կեայ՝ի կորնթոս՝ չորաւ յիտալիա մինչև՝ի հռոմ. և եգիտ անդ զաթանաս , որոյ կանխաւ հասեալ էր անդր , և. ծանուցեալ յուլիոսի հռոմայ հայրապետին զնմա անցս եկեղեցւոյ . զնոյն լուեալ առաւելութիւն յուլիոս և՝ի բերանոյ պօղոսի . և վեկոյց զնմա միրատիոջէ կոստասայ արքային հռոմայ : Յայնժամ եղև ժողով՝ի միտուլէ . և իբրև յայտնի եղև անմեղութիւն և ուղղափառուն պօղոսի և աթանասի , գրեաց կոստաս փութանակի առ եղբայրն իւր կոստանդ արքայ արևելից՝ դարձուցանել զպօղոս և զաթանաս յաթոռս իւրեանց , և ժողով առնել՝ի սարդիկիա՝ առ՝ի քննել զչարախօսս նոցա , և առ՝ի հաստատել զնիկիական հաւատս : Այս կոստանդ առ ահի կոստասայ կատարեաց զառաջարկուն նմա , և յանձն էառ զգումարումն ժողովոյն :

Այս ժողովեցան յամի 347 . յարևմտից երեք հարիւր եպսք , և յարևելից եօթանասունև վեց . ուր արևմտեան եպսունքն կամեցան , զի և պօղոս և աթանաս մտցեն՝ի ժողովն . իսկ արևելեանքն ոչ կամեցան . և այնպէս հերձան՝ի միմեանց, և գնացին արևելեանքն՝ի քաղաքն փիլիպուպօլեայ , և արարեալ անդ ժողովակ ընդ անուանմբ ժողովոյն սարդիկեայ՝ մերժեցին զպօղոս և զաթանաս , և նզովեցին զայնոսիկ՝ որ համագոյ խոստովանէին

զնա

զնոր երրորդումն . իսկ արևմտից ենայսունքն երեքհարիւր ժողովեալքն ի սարդիկիա՝ քաղեցին համագոյ զնոր երրորդումն , և յամս տեղիս թղթովք հաստատեցին զնիկիական դաւանութեն . և զպօղոս և զաթանաս արդարացուցին . որք յայնժամ ըստ ոմանց էին ի հռովմ, և ըստ այլոց առաջնիկայ ի ժողովն անդ սարդիկեայ ։

Կայր քանզի ՚ի հրուանդանն արևելից եր ի ձեռս կոստանդեայ , նա անդրէն ի քանս լեալ ապրիանոսաց՝ ոչ եթող պօղոսի և աթանասի նստիլ յաթոռս իւրեանց , և ոչ դադարեաց ի նեղել զուղղափառս ։ Յորմէ ստուգեաց զայս ամ կոստաս ՚ի հռովմայ , գրեաց առ եղբայրն իւր կոստանդիոս սպառնալիս . եթէ ոչ դարձուսցես զպօղոս և զաթանասիոս յաթոռս իւրեանց , զսէր եղբայրութեդ լուծանեմ ասէ , և գամ զօրօք պատերազմիլ ընդ քեզ ։ Յորմէ լուեալ կոստանդեայ՝ երկեաւ յեղբօրէն , և հաստատեաց զպօղոս յաթոռ կոստանդնուպօլսոյ՝ յեկեղեցւոջ՝ որն եւթնեայ , զոր հին կոչէին , զի կայր և միւս այլ նոր կոչեցեալ . նոյնպէս և զաթանաս յաղեքսանդրիա յաթոռ իւր՝ յամի իրր 348 ։

Այլ յետ սակաւուց , իմն երկուց կամ երից ամաց , յորժամ մագնենտիոս՝ որ և մաքսենտիոս քաղաւոր սպան զկոստաս արքայ հռովմայ , զայն լուեալ արիանոսաց ժողովոյն՝ որ ի կոստանդինուպօլիս , ուրախ եղեն յոյժ , և սկան միւսանգամ շարժել զկոստանդ Թէր ի բարկութէն ի վէր պօղոսի և աթա-

նաս

նասի ։ Այլ եղև դարձեալ հալածումն ուղ-
ղափառ եկեղեցեացն ըստ ամ երկիրն . և ընկե-
ցին զարքունի հրամանաւ զաթանաս յաթա-
ռոյն աղեքսանդրու . իսկ զերանելին պաղոս
զՀայրապետն կոստանդնուպօլսոյ արտա-
սահմանեալ աքսորեցին ՚ի կուկիսոն քաղաք
փոքուն Հայոց . ուր նա սկսաւ քարոզել հա-
մարձակ զնիկիական հաւատս . և հնչէր համ
բաւ քարոզուածն նր և սրբուածն ըստ ամ տե-
ղիս ։

Ընդ որ զյարեալ արիանոսայ՝ որ ՚ի թագա-
ւորեալ քաղաքին , ժողովեցան առ փիլիպ-
պոս եպարքոս քաղաքին . և նա ՚ի սադրելոյ
դաժան արիանոսացն գրեաց առ իշխանն կո-
կիսոնի կորուսանել զպաղոս ։ Յայնժամ փա-
կեցին զերանելին ՚ի շրջաբնակուածն տաճա-
րին ՚ի խաւարին և յանձուկ վայրի , և թո-
ղին անսուճաղ զնի սովամահ կորնչել . և ապա
զնկնի վեց աւուրց գտեալ զնա դեռ կենդա-
նի , զի կայր ՚ի գիշերային պաշտաման , և
յարուցեալ սկիզբն առնէր մատուցանելոյ
զկենդանարար նր պատարագն , խեղդեցին
զնա ՚ի ներքսագոյն սրբուն տեղւոյն առա-
ջի նր սեղանոյն , արկեալ զոմնիփորոնն ՚ի
պողն . և այնու պարապնդեալ զնիպողն ՚ի
խեղդամահ արարին զնա՝ յամի ՟ռն 350 կամ
351 ։ ՚ի վեցն նոյեմբերի ։ Այլ վա՛ այսպիսի
փառաւոր կատարման ՚ի վա՛ր ձգմարտուածն
Խոսրովիանոյ կոչեցաւ նր Հայրապետս պաղոս՝
քաջ հովիւն և առաքինի նահատակն . որ ըս
գրեալ ունի ծին աթանասի՝ չորից արտասահ-
մա-

մանեցաւ. նախ՝ի պոնտոս (որ կարծի լինել յառաջ քան զեպեսուԹին). ապա՝ի սինգեր կամ՝ի պրուձ միջագետաց. ապա յեմեսա. և ապա՝ի կոկիսոն կապադովկիոյ յանապատս կոյս տաւրոսի. Թուղ զհինգերորդն՝ որ՝ի Թեսաղոնիկէ. և վախճան ընկալաւ վկայական՝ի կոկիսոն ։ Իսկ զաԹոռ նր՝ի բիւզանդիա՝ կալաւ անդրէն հոգեմարտն մակեդոն. և յայնժամ բաղում հալածանս և նեղուԹիս անցուցին արիանոսքն ընդ ուղղափառս. զի և ինքն իսկ մակեդոն ոչինչ ընդհատ՝ի բռնաւորացն հեԹանոսաց տայր չարչարել զուղղափառսն ։

Եւ էին յաւուրսն յայնոսիկ՝ի կոստանդինուպօլիս երկու եղբարք՝ աշակերտք և նօտարք պօղոսի խոստովանողին. մին կիւասարկաւագ Մարկիանոս անուն, և միւսն դպիր՝ որ կոչէր Մարտիրիոս, որ և մարտիրիոնն կամ մարտիրոն, աղք զօրաւորք բանիւ և գրով, և համարձակ քարոզք ճշմարտուԹե։ Որոց լուեալ զխոստովանողական կատարումն երանելւոյ վէրպին իւրեանց՝ պնդագոյն և սկսան ջատագովել հրապարակաւ զուղղափառ խոստովանուԹին ընդեմ արիանոսաց, և յանդիմանել զասիրատուԹի եպարքոսին և զհամախոհից նր՝ որք մինչդին զձեռս յանպարտ արիւն եդ հայրապետին պօղոսի ։

Յայնժամ բարկացեալ փիլիպպոս եպարքոսն՝ ետ ունել զերկոսեան զնս, և արկանել՝ի բանտ խաւարային. ուր նեղէր զնս սովու և ծարաւու՝ յետս կոչել զվէպուԹի

իւրեանց, և միաձայնիլ ընդ արիանոսս։ Այլ
նք ոչ տանջանօք զիջան, և ոչ ստացուա-
ծովք պատրեցան. այլ հաստատունք յա-
պաշտուածն ընդ ուղղափառ վէպուն՝ ի բրա-
բիոն վերին կոչման փուլթային, որ միայն նց
առաջի կայր։ Յակ եպարքոսն իբրև եգիտ
զերանելիսն անդրդուժելիս ի հիմանէ հա-
ւատոցն Ձշմարտուածն, ի մահ դատապար-
տեաց զնս. հրամայեաց ետ հանել ի վէր պա-
րսպին կոստանդնուպօլսոյ, և սրով խող-
խողել։

Յայնմ վայրի զաչս և զձեռս ի վեր համ-
բարձեալ նօտարացն՝ այսպէս կացին յա-
ղօթս. Տէր ամենայն հաստիչդ առանձինն
սրտից մերոց, որ գիտակդ ես ամ խորհրդոց՝
բանից և գործոց մերոց, ի խաղաղուե զքո
ծառայից ընկալ զհոգիս. զի վասն քո և վասն
փառաց միածնի քո համադոյակցի մեռա-
նիմք, և ոչ ոչնարք սպանդից համարեալ
լինիմք. և խնդամք՝ զի զայսօրինակ մեկ-
նիմք յաւուրսկայ կենացս, և յոր առ քեզն
է՛ի կեանս յօժարաքայլ ընթացուք վերաբե-
րիմք։

Ո՛յ այսոսիկ առ նձին թոլորից աղօթեալ, և
զամէնն ասացեալ, հարուածոյ սրոյ ներքոյ
արկին զպարանոցս իւրեանց. և այնպէս ըզ-
մարտիրոսականն ընդունի վախճան մարտի-
րիոս ընդ մարկիանոսի՝ իքսանևհինգ ամեանն
հոկտեմբերի, միով ամաւ զկնի՝ զհետ եր-
թեալ սո՛ր վէպին իւրեանց պօղոսի խոստո-
վանողի։ Յակ զպատուական նշխարս նց ո-

մանք

մանք յուղղափառաց բարձեալ, և պայծառ յօրինեալ՝ սաղմոսիւք և օրհնութիւք ամիս փեցին ՚ի նշանաւոր տապանի առ պարսպաւ քաղաքին։

Նոյնժամայն մեծ ուղղափառաց դասուն զամս քառասուն (7), յորս կալան արիմնոսք և հոգեմարտք զաթոռն կոստանդնուպօլսի և զայլ ոչ սակաւ եկեղեցիս՝ յաւուրս կոստանդեայ և յուլիանոսի և վաղեսի. մինչև Թէոդոս մեծ. առ որով եղև ՚ի ժողովն կոստանդնուպօլսոյ, և հաստատեցաւ խաղաղութի, և ուղղափառ խոստովանութի՛ եկեղեցւոջ. և ՚ի ժողովի անդ պայծառացաւ անուն սրբոյն պօղոսի հայրապետի խոստովանօղ վկային քրի։

Ա՛ն որոյ յետ կարգելոյ յաթոռ նորա զկնի գրիգորի ածաբանի զնեքտաւիոս տարսոնացի պատրիարգական պատո՛ւով՝ ձեռնադրել ՚ի հարց անտի ժողովոյն, առաքեաց մեծն Թէոդոս առս հաւատարիմս՝ եպսունս և քահանայս ՚ի խնդիր սրբ նշխարաց երանելւոյն պօղոսի, որ յայնմ ժամանակի փոխադրեալ եր ՚ի կոկիսոնէ հայոց յանկիւրիա գաղատացւոց. ուր եկեալ բարձին զայն մեծաւ պատո՛ւով՝ բերել ՚ի թէրեալ քաղաքն և յիւրականն աթոռն ՚ի կոստանդինուպօլիս։ (8)

Նոյն իսկզբան եկին հասին յեզր ծովուն, և եդին ՚ի մակուկի՝ հանել ՚ի ցամաք բիւզանդիոյ, լուսաւոր թագաւորն Թէոդոս և նեքտաւրիոս պատրիարգն, և հարք ժողովոյն՝ որոց էր արձակեալ ՚ի տեղիս իւրեանց, և ելին

ը առաջ սբ[illegible] նուաւակօք մինչև՛ի քաղկեդոն՝ ամ բազմութ[illegible] քաղաքին, իշխանօք և եկե-
ղեցական դասուք և միաբանեցօք՝ հանդերձ
մանղինօք լուցեալք, քահիւք և լապտերօք
բորբոքեալք, և քուրմամբ անուշահոտիւն-
կոց։ Այս այնպես մեծաւ փառօք պատուհեցին
զնա նշխարս երանելւոյն պօղոսի խոստովա-
նողին քրի. և բերեալ հանդուցին մատ՛ի պա-
լատն արքունի յեկեղեցւոյ հնոյն եռինեայ,
ուր եդեալ էր նա զհայրապետական աթոռ-
իւր, և անտի էր արտաստմանեալ։

Այնդ ձգիչերն՛ի գլուխ հանել՛ի հսկմունս
տնտախմբութ[illegible] և հոգևոր ուրախութ[illegible], ի
վաղիւ անդր նովին հանդիսիւ բազմութ[illegible]
՛ի ձայն երգոց և օրհնութ[illegible] բերին զնշխարս
նոցա՛ի վկայարան մեծաշէն և հոյակապ ե-
կեղեցւոյն՝ որ պօղոսին կոչեցաւ (9)։ զի զոր
մակեդոն հոգեմարտ հալածիչ սբ[illegible] չկնե-
ր էր իբրև ամենը պարիսպ չարուն իւրոյ՝ ուղ-
ղափառաբ նուիրեցին զայն յանուն նորին խոս-
տովանօղ[illegible] հայրապետին, մատ՛ի սրբոյն հնչն
անաստասիա՝ ՛ի Թաղն մասրիանու, ՛ի ներ-
քոյ[illegible] սեղանոյն առնելով զդիպս հանգըս-
տի վկային։ Ուր և կատարեն՝ ասե վկայա-
գիրն ճառընտրաց՝ զտարևոր յիշատակ նորա
ամ յամէ՝ հաժողով բազմութ[illegible] տնտախմբե-
լով յամենայն նոյեմբերի, որ օր վեց է. որ
համարի օր նահատակութ[illegible] նորա. կիրակ այ-
լոց՛ի կիրակէն, որ մերձ է վեցերորդ աւուր
նոյեմբերի։ Ոսկ փոխադրուին նշխարաց նորա
ասի լինել՛ի յունիսի 7. յամէ տն 381. իբր

քսան-

քսանևհինգ կամ երեսուն ամօք յետոյ քան
զկատարումն :

Նա ինաց անդ պատուական գանձն ըստ դարս
բազումս . մինչև ՚ի յետին ժամանակս՝ յամի
ՏՌՆ իբր 1226 . փոխադրեցաւ ՚ի լատինացւոց՝
որք թագրեցին ՚ի կոստանդինուպօլիս , ամ-
բողջ մարմին սքանչելի ՚ի վենետիկ քաղաք իտա-
լիոյ . և եղաւ յեկեղեցւոջ սքանչելի լաւրեն-
տիոսի՝ որ ՚ի վանս աղնուականաց կուսանաց .
ուր յետ կալոյ դար մի և երկու՝ առժամա-
նակ մի յանծանօթս եղև տապան սքանչելի . մին-
չև վերստին գտաւ ՚ի նմին տաճարի՝ յամի
1493 . ՚ի տանեղորդ աւուր ապրիլի : Օ ՚ի
՚ի կամել կուսանաց տալ նորոգել զմի ՚ի խո-
րանաց տաճարին՝ որ մերձ ՚ի վանդակս , յոր-
ժամ քակեցին զհին խորանն , ՚ի վեր երևե-
ցաւ տապան կճեայ . և ՚ի յիշատակարանս
վանացն գտաւ արձանագրեալ, թէ յայնմ խո-
րանի եդեալ է տապան սքանչելի պօղոսի եպսի
և վկայի : Ապա ըստ հրամանի պատրիարգի
քաղաքին՝ որումն անուն էր Թովմաս դոնա-
տոս , շինեցաւ շիրիմ նոր ՚ի վեր միոյ ՚ի խո-
րանաց նոյն տաճարին . և անդր փոխադրե-
ցաւ մարմին սքանչելի յառաջնումն աւուր մայիսի :
Նա դարձեալ զհինի դարու ՚ի վեր անցանելոյ՝
յամի 1617 . փոխադրեցաւ յայլ նոր տապա-
նակ ապակափեղկ , և եղաւ հանդիսապէս
՚ի վեր խորանի նուիրելոյ յանուն նորին սքանչելի
պօղոսի խոստովանողի՝ ՚ի փետրվարի 1 : Ուր
և կայ մինչև ցայսօր գրեթէ ամբողջ
մարմինն . զի այնպէս յարմարեալ են առ մի-

մեծանս կազմուԹիք ոսկերաց սիրեն, ոՀ ԹԷ ողջանդամ երեւիլ բաց ի դէղն մասանց պա-
կասելոց : Յայժմուս ի վէր արտաքին պա-
Հարանի տապանին գրոշմեալ կայ լոկ անուն
Տիրն • այլ փոքր մի յառաջ ընդարձակ բանիւ
գրեալ էր յիշատակարանս այս • * Սիրն պա-
ղոսի՝ կոստանդնուպօլսոյ եպիսկ, որ յարեա-
նոսաց սպանաւ յամի ՀՀն 355, մարտին ե-
դեսիայս տապանակ՝՝ի կաղանդս փետրվա-
րի յամի ՀՀն 1617 • ըստ վենետիկեան սովորու-
ԹԷ, յաւուրս պատուական ուսադուհւոյն եւ
աբբասուհւոյն ազրիանայ գոնԹարինեայ ||:

xxxx

զի մի ժամավաճառ լինցուք ըստ օրինի նոր քննչաց կրկը-
տեսլասումնէաս զևւրաքանչիւր աւանդս . որ ուր ՚ի մեզ
յայժ ծեր ասի մեսրոպիանոս , և ըստ փոտայ ՝ ղէ ամաց
կամ հարիւրամեայ , ոչ կամին ոմանք տալ աւելի քան
զամս ձգ . որպէս և վարանի յաննինդ բոլլանդեան՝ թէ
զիարդ լինիցի պրօբոսի կայսեր եղբայր ոք դոմետիոս
կամ դոմետիանոս անուն , երբ չգիշեն զայն կայսերական
պատմուճեանք . այլ յայտ է թէ այսպիսի ձեռնարկք սխա-
կասականք և բացատականք ինչ ոչ սահանեն աւանդու-
թեց : Այլինչ ըստ հատ են ՚ի ստացանէ և այլ քննութիւնք , որ
ոչ հային առ մեզ :

(3) Բազմոք հաստատէ յաննինդ բոլլանդեան զայս ա-
ւանդ ճառընտրացի մերոց՝ համաձայն գեղատիոսի և այ-
լոց , ( զորմէ կախեալ է և յետագայ պատմուճին , ) թէ
յաւուրս ժողովոյն նիկիոյ աղեքսանդրոս էր պարզքա-
հանայ , և ոչ եպս . ուր ըստ վայր կամի երկուքանալ ստիլ-
պինդ բոլլանդեան ըստ այլոց՝ թէ գուցէ յայնժամ վախ-
ճանեալ էր մեսրոպիանոս , և աղեքսանդրոս յաջորդեալ
էր նմա եպսուքեան . և ոչ գիտէ՝ թէ սովին ակարանայ
կշտամբուն իւր , զոր առնէ ըստմէմ փոտայ՝ ասողն , թէ
աղեքսանդր էր նախագահ ՚ի ժողովն նիկիոյ . զի թէ
արդարև աղեքսանդր եկեալ էր ՚ի ժողովն իբրև եպս
Թագաւորեալ քաղաքին , ապաքէն ՚ի պատիւ մեծին կոս-
տանդիանոսի ըստ նախագահս համարիւր նա , կամ գոնէ
իբր այնպիսի հռչակեին զնա յոյնք . և գԺողովրդն էր
այնուհետև ստել զայն համբաւ :

(4) Կրկին ևս յաւելուն ճառընտիրք գրել աստ այսպս .
* Բիւզանդիոն՝ որ յառաջն եպսարան էր , զկնի չինե-
,, ցոյ վերատին զքաղաքն , և անուանեցոյ նոր հռոմ ,
,, եղև պատրիարգարան . քանզի աթոռն սբ՚ յաւետա-
,, րանչին յովհաննու՝ որ յեփեսոս , ՚ի կոստանդինուպո-
,, լիս փոխեցաւ ՚ի հրամանէ թագաւորին || : որ է մաս
նաւոր զրոյցք ոմանց ՚ի յունաց՝ փոխանցեալ ՚ի հայս
հանդերձ անհիմն զրուցաբանութեբ , զոր պատուհաստէ
յովհաննէս կթղիկն՝ թէ վը զի նչխարք յովհաննու աւե-
տարանչի փոխադրեցան յեփեսոսէ ՚ի բիւզանդիա . և
զիարդ փոխադրիւր՝ երբ ոչ գտաւ երբեք ՚ի վը երե-
սաց երկրի մարմին սբ՚ աւետարանչին :

(5) Սոկրատ և սողոմենոս գնեն , թէ աղեքսանդրոս
նստաւ զամս իգ . զոր այլք վրիպակ համարին , ոչ թէ
պարտ էր գնել . ԺԳ , կամ ԺԹ . մեք ոչինչ որոշել կա-
միմք , զի և ՚ի պատմութեան ազգիս յայնմ դարու տան-

ամեայ՝ և ևս աւելի յերկարաձգուն ժամի տեսանելիք, որ ոչն միաբանի ընդ նոր ժամագիրս։ Ա՛ւ այժմ սակայն է ումանց, թէ գուցէ վերջին ամք մեծարժանոյն ընդ ծոյլին մասամբ գործակցի նր աղէքսանդրեան։ Զարմանալի թուէի ոմանց և միաբան գրուածին սակրաւոյ և սոզոմենոսի, որք պատմեն՝ թէ սբն աղէքսանդրոս առաջարկեալ էրգէ Ժողովրդեան ընտրել զմի յերկուց զինի իւր յաջորդն։ Եթէ ինդրելք ասէ զայր առաքինի և իմաստուն՝ որ գիտէ ընդ այ քարոզել, ահա ձեզ պօղոս։ սակս եթէ կամիք զայր ընդ արաքնոյն պերճ և ճառս՝ որ գիտէ ընդ մեծամեծս Տի խօսել, ահա մակեդոն։ Բայց չեն ինչ զարմանք, եթէ արգարև այսպէս խօսեալ էրգէ։ մի՛ զի չէ էր ի վեր երևեալ աղանդն մակեդոնի։ և միւս ևս՝ զի այդ էսկ ձև բանից յայտ առնէ, թէ չէ պարտ ընտրել զմակեդոն, այլ՝ զպօղոս։ բայց քանզի երկպառակ և երկմտա անձինք կային ի միջի, այսպիսի ճարտար բանիւք հաւատառուց զընտրուն պօղոսի։ Ա՛յլ յայսր ասի վըր՝ ոչ գրէ սակրատ, յետ վախճանելոյ աղէքսանդրոսի եղև խռովութիւն ոչ սակաւ։ զի համադոյականք ի ուղղափառք զպօղոս կամէին։ իսկ արիանոսք զմակեդոն։ այլ յաղթեաց կողմն պօղոսի՝ յորում կայր և հաւանութիւն աղէքսանդրոսի վախճանելոյ։ և ձեռնադրի պօղոս եպս յեկեղեցին եռնեայ։ զոր ձա ռըսիրն կոչէ հին և նոր, փոխանակ ասելոյ՝ ոչ այլք գրեն, հին անուանեալ առ որոշելոյ ի նորոյն։ կի՛ թէ որ երբեմն նորն էր՝ յանցանել ժամանակաց հին ան

ուանեցաւս։

(6) Ժամանակ պատրաստից և դարձի երանելոյն պօղոսի յաթոռն, որպէս և երթ նր ի հռոմ, բազմաբնական քննութեց նէրքոյ անկեալ է առ հին և նոր մատենագիրս։ և գրեթէ ոչ ոք է՝ որ միաձայն խօսեսցի ընդ այլոսն։ յայտ է թէ վն բազմապատիկ գործոց եղելոց ի սակաւ միջոցի՝ անկարծելի փոփոխութ։ յորում մասին և ժամակից գրիչք սխալին։ մեք ընդ կարի միաբանելով զայլևայլ կարծիս՝ յայս համառօտս բովանդակեցաք։ Թող զառաւելն եկեղեցական պատմիչք ասացեն, եթէ լաւ ինչ գոցեն քան զնարբոտաց ասանդուածին, որ բազմեք ասասար լինի տուգադրի ասանդից։

(7) Ճառասուն ամն ասէ Ճ։ միաբան ընդ սակրատայ և սոզոմենոսայ։ ելիս հարուածելով յամէ ամն 340։ յորում զառաջինն ընկեցաւ յաթոռոյ երանելին պօղոս, և բռնաւոյս եւսեբիոս նիկոմիդացի (որ ի Ճ։ վերակաս ար

դեօք

դեռք եւ դոքսիոս գրի), և այլք յալանդաւորաց՝ ցամ
ան 380. յորում Թէոդոս գալծոյց զեկեղեցիս ի ձեռս
ուղղափառաց. բայց քանզի ոչ միշտ երեցին չարափառք,
այլ մերթընդ մերթ ուղղափառք զօրանային, նմին իրի
ամանք զբռնակալութեն արիանոսաց դնեն լինել զամս
30, այս է՝ առաւելապէս յամէ ան 350 ցամն 380։

(8) Ճ. ոմն և սուրիոս, անընդհատապէս ի կոկիսոնէ հա
մարին քերեալ զմարմին սբյն պօղոսի, առ համառօտու
թեն թողեալ զկանխաւ փոխադրութենն յանկիւրիա. ոմն
և զբերութեն մարմնոյ սբյն նախ յեկեղեցին եռինեայ չէ
չէ Ճ. այլ ի կարճոյ գրէ, *քերեալ հանգուցին յեկե
ղեցւոջ վկայարանի ի մատրանն՝ որ պօղոսին կոչի ||։

(9) Ծանուցանէ սոզոմենոս, թէ յաւուրս իւր կիսաո
փոքրն Թէոդոսիւ այնչափ հռչակեալ էր վկայարան պօ
ղոսի խոստովանողի, մինչև անգիտացեալ ոմանց զըս
տոյգ աւանգութենն՝ համարէին, թէ յանուն պօղոսի
առաքելոյն կոչի տաճարն այն։ Եւ որ մեծն է, ըստ այսմ
վրիպակ կարծեաց Թուրի լեալ այն, զի յետ ժամանա
կաց ի ժէ դարու այր ոմն հռոմէ եբեր ընծայ առ Թա
գուհին գաղղիացւոց զգլուխ ինչ սբյ, որպէս թէ իցէ
գլուխ սբյն պօղոսի առաքելոյ բերեալ ի կոստանդի
նուպօլսոյ։ Զոր լուեալ հայրապետին հռովմայ՝ կղե
մայ չորրորդի, արար պինդ առ գաղղիացիս, թէ գլուխ
առաքելոյն պօղոսի ոչ է այլուր, բայց միայն ի հռովմ.
վոյ և գաղղիացիք հաւաստի համարեցան, թէ բերեալն
առ իւրեանս իցէ գլուխ պօղոսի խոստովանողի. բայց
և սորայս գլուխ է ըստ մարմնոյ նոր ի վենետիկ. նմին իրի
հարկ է ասել, թէ այլոյ ուրումն համանուն սբյ է
գլուխն տարեալ ի գաղղիա. զի ոչ պակասին սբյք պօ
ղոս անուամբ յեկեղեցական և կրօնական կարգէ յայլևայլ
դարս։

Կարևոր է և ծանուցումն բայերտոսի բոլանդեան (մա
նաւանդ առ լատին վերծանողս) վն երանելւոյն պօղո
սի հայրապետի. զի ասէ. * Յասելն խոստովանող՝ մի լի
,, ցի քեզ իմանալ նշանակութիւն ձայնիս ըստ
,, այսմիկ, ոմն թէ գիմաբաժանիլ ըստ մարտիրոսի. այլ՝
,, ըստ հին սովորութե, որով վերատառութիւնս այս ընծայիւր
,, յեկեղեցւոյ նաև մարտիրոսաց. մանաւանդ եթէ աք
,, սորանաց և այլ թշուառութեց տարեալ էին յառաջ
,, քան զմեռանիլն ||։

# ՏՕՆ ՍՐՐՈՑ

Երեշտակապետացն՝ Գաբրիէլի, և Միքայէլի, և ամ երկնային զօրացն։

Ի. Յ. Նոյ. 8։ Ի. պեպո. 29. և Մայիս. 8. Բուլլանդեանն սպիլէնգ՛է ը հապ. պեպո. էջ. 4 = 123։ Ի արտ և մէնոէլ։ Ը Նորհ. Ներբ. հրեշտ։ Ի աւրոնէոս յամէ 330. և 493. ետե։

## ՆԱԽԱՃԱՌԵԼԻՔ։

ԻՆՉ ՏԱԿՈՒՆ ԱՆՈՒՆ սեպհականեալ երկնաւոր զօրացս հոգեղինաց, թարգմանի պատգամաւոր կամ դեսպան, զոր որում առաքմամբ յայ աւ մարդիկ՝ ծանօթացան մարդկան. և վախճան առաքմանն նոյ այն իսկ է, զոր առաքեալն նշանակեաց՝ յայտնաբանելով զբնութեն և զգործ նոցա միանգամայն. քանզի ասէ. * Որք ապաքէն հոգիք են հարկաւորք, որք առաքին՝ի սպասաւորութիւն՝ վասն այնոցիկ՝ որ ժառանգելոց են զփրկութեն ‖։

Աստի գեղեցիկ իմաստասիրել ունիս՝ նախ, թէ հրեշտակք են հոգիք պարզք, այ անմարմին գոյացութիւնք՝ իմանալիք և իմացականք,

գե-

գերադոյնք ՚ի բանաւոր արարածս. վճռ և
անդրանիկ եղբարք մեր անուանին, կամ դասք
անդրանկաց։ Արկրորդ՝ թէ ոչ միայն կար-
դեալ են ՚ի պաշտօն արարչին իւրեանց, վճռ
և պաշտօնեայք կոչին հարկաւ, և արարողք
կամաւ ղկամս նոն, այլև սպասաւորք միջնոր-
դութեանց և մարդկան տահմանեալ ՚ի պետս
փրկութեան հոգւոց մերոց, ոչինչ ընդհատ ՚ի պա-
տականնայ՝ որովք լինի այլոց մատչիլ առ
արքայ, լսել զպատգամս արքունի ՚ի բերա-
նոյ նոյ, և զաղերս իւրեանց մատուցանել ՚ի
ձեռն նոյ առ Թագն, և նոքօք ընդունել զկա-
տարումն հայցուածոց իւրեանց. ոմն և բազ-
մօք յայտ առնեն զծածուղն տարբ։

Արրորդ՝ թէ թէպետև ամ մարդոյ գտանի
մի մի հրեշտակ պահապան, ղի զամ մար-
դիկ կամի՝ զի կեցցեն և ՚ի գիտութիւն ձշմար-
տութեան եկեսցեն, բայց ոմն ըստ առաքելոյն՝
որն ասի փրկիչ ամ մարդկան, և մանաւանդ
հաւատացելոց, նոյնպես և հրեշտակք են մա-
նաւանդ պահապան հաւատացելոց և կար-
գեալք ՚ի կեանն յաւիտենականս. ըստ բա-
նակք հրեշտակաց ին շուրջ են զերկիւղա-
ծովք իւրովք. կամ ըստ այլում ընթերցուածոյ՝
հրեշտակ ին բանակեալ ի զերկիւղածովք
նը. և թէ՝ հրեշտակաց իւրոց պատուիրել
է վասն ՚ի պահել զքեզ յամ ձանապարհս
քո։ Լիբ։

Ա՛ս այս ոճրիսի պատիւ մերումն յետնուեն՝
ունել զգերաբուն էակս հոգեղենս՝ ածա-
մերձս և ածանմանս՝ վերակացու և դաս-
տիա-

տիարակ , պահապան և պաշտպան , ձեռնկալու և միջնորդ և բարեխօս : Այլ ոչինչ են զարմանք առ անքաւ մարդասիրութիւն այ . զի եթէ ածորդին ինքնին եկն , և մարդ եղև որի զմեզ , և պաշտեաց զմեզ՝ քան եթէ պաշտեցաւ ի մէնջ . ըմ , որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ , այլ պաշտել , և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց . և թէ՝ ես եմ՝ ի միջի ձերում իբրև սպասաւոր . քանիօ՞ն և պաշտօնեից այ անկ ի հրամանէ և յակնարկուէ նը՝ պաշտել և սպասաւորել մարդկան , որք կարգեալ են ի ժառանգել զկեանս ։

Ասեայ և եթէ մեզ արժանապէս ընդունել զմեծահարուստ պաշտօն սպասաւորութիւն նդ ի մեր օգուտ , և ոչ ունայնացուցանել զՅոգեղէնն աշխատութիւնս նդ . զի մի և զմէնջ բողբոջեցեն , բժշկեցաք զբաբելոն , և նա ոչ բժշկեցաւ . այլ առաւել չարգել զվաստակս նդ , և ի գուբ շարժել զնա ի վէր մեր . ոչ և արգահատեն առաջի այ բարեխօսութիւք վերն մեր . ողորմեա , դու ստեղծեր , մի կորուսաներ . միանգամայն և փոխատրէ նդ առ ի մէնջ զպաշտօն մեծարանաց և գլարգ պատկառանաց՝ իբրև վերհագուսից և գերադուստից բնութիւն և հնարօք և փառօք . զի թէպետև պաշտօնակիցք և ծառայակիցք գտանիցիմք նդ առաջի մեծափայլութեն այ , բայց մեծ է խոիր ընդ մեզ և ընդ նա , ոչ ընդ արքայազունս և ընդ սինկլիքորս , ոչ ընդ աւագանի և ընդ սոսկական , ընդ քաղաքացի և ընդ հնական . և

Լ՛ս առաւել անհամեմատ օրինակաւ. զի նոքա բարձունք երկնաւորք, մեք ստորինք երկրաւորք. նոքա հոգեղինք, և նմանութք՝ լուսեղինք, հրեղինք, ջոցեղինք, մեք մարմնաւորք և հողեղինք. նոքա հզօրք զօրութք, մեք տկարք և անպիտանք։

Եւ արդ՝ զի՞ր օրինակ պարտապան եմք ընդ ամ երօք՝ յաղագս խնամարկելոյ նմ սիրով զմերս անարժանութիւն, և զինջանելոյ ի մեր տկարութիւս և յանձանձելոյ և պաշտպանելոյ և լուսաւորելոյ յամ ժամ, պարտ և արժան է մեզ հանդիսապէս փառաւորել զնա արժանաւոր տօնախմբութիւք ի յերկրի. ոչ զի և յերկինս արժանասցուք տօնակից լինել ընդ նմ յաւիտեան։ Այլ զի կան և կրկին և երեքկին պատճառք առանձին տօնի հանդիսին հրեշտակաց, և յանուանէ՝ սքեց հրեշտակապետացն գաբրիէլի և միքայէլի։

Առաջին, զի որով բանիւ տօնեմք զնոսա ի մարդկանէ, ոչ վասն յաղթօղ լինելոյ նոցին ընդդէմ աներևոյթ թշնամւոյն, և պատկելոյ յաջոյ բարձրելոյն՝ ոչ վկայ, ոչ խոստովանող, ոչ առաքինի՝ նոքա և արդար, և միացեալ ընդ ամ, և առաւել այս ամ ձիրք ձրից գերօրինակ բովանդակեալ տեսանին ի նոսա հրեշտակս. որով հետև եղեն նախագրաւ յառաջամարտիկ բանակք ամ՝ վանիչք բանսարկուին և ամ հրեշտակաց չարաց, որք հակառակ կացին ամ, վէպ և սատանայ անուն ընկալան. ուր բարի հրեշտակք կացեալք մնացեալք ի հնազանդութիւն արարչին՝

էին՝ հաստատեցան ի չնորհս, և պահելին զկայանս իւրեանց, և անպատուհաս փառօք բարձրութեանն պսակեցան յանմահ արքայէն՝ անարիւն մարտիրոսութեամբ, տիրապետս խոստովանութեամբ, առաքինի քաջութեամբ, և ամ արդարութեամբ և սրբութեամբ. և այս ըստ վիճակաց ձահագրութեանն՝ ի նմին իսկ աւուր և ի ժամու, գուցէ և ի վայրկենի ստեղծման իւրեանց՝ ըստ արարչութեանն լուսոյ աւուրն առաջնոյ, կամ ըստ ստեղծագործութեանն երկնի և երկրի. զի իմանալեացն ներգործութիւնք են վայրկենականք՝ արագ քան զթարթել աչաց՝ ըստ շարժման լուսոյ:

Ներկրորդ, զի թէ զխումբս բազմութեանն սրբոց առնուել հնար հանդիսիւ արժան է գերահռչակել, որ զվկայիցն երկուց բիւրուց, կամ զտասն հազարաց և երկերիւրոց, կամ զհազարաց և երեսուն և վեցից, զի՞նչ պարտ է ասել զանթիւ բազմութեն սրբոց հրեշտակաց, որք ի դիրս նշանակին հազարք հազարաց և բիւրք բիւրուց՝ ի նշանակ անհամար թուոյ համարոյ նոցա, զոր այլ միայն է գիտել. զի թէ մարդիկ գրին ի համար բազմութեն աստեղաց և աւազոյ ծովու, հրեշտակաց չիք օրինակ ի նիւթականաց բազմաւորութեանն. ուր մարդկութիւնս առաջի բազմերամ հրեշտակաց կոչի մի ոչխար մոլորեալ ի հօտէ հարիւր ոչխարաց մակաղելոց յերկնից անապատի:

Նչրորդ, զոր օրինակ ոմանք ոմանք ի սրբոց են առաւել քաջածանօթ մեզ կամ մերձաւոր

և

և վաստակաւոր , որ առաքեալք՝ համօրէն տիեզերաց , և որք լուսաւորիչն՝ Յիս Հայաստանեայց , և կամ նշանաւորք ք զայլս ի սոցա՝ եթէ պատուով աշխարհին յեկեղեցւոջ , և եթէ գերապանծ փառօք առաջի այ և մարդկան , և ըստ նմին՝ առաւելապունի արժանաւորք գովուիլնե և տօնախմբուիլնե , ըստ դմին օրինակի և՛ի դասուց անտի հրեշտակաց՝ գաբրիէլ և միքայէլ մեծք՝ ականաւոր գտանին ըստ նշանակելոյ գրոց սոցա՝ առաջի այ իբրև մերձակացք և յանդիմանակացք աթոռոյ աճուիլնե , և առաջի մարդկան իբրև ընտանեգոյն խնամածուք , ծանօթք յանուանէ , և յանուանէ տօնախմբելիք ։ Վասն միքայէլ՝ որ թարգմանի այր այ , կամ ածք իմ հզօր , քանզի զամ զուարթունս երկնից ծանօթագոյն ցուցաւ առ ազգ մարդկան՝ ստէպ պատգամաւորուիլնէ՝ի հին և՛ի նոր օրէնս , ոչ գործակալ և դեսպան երկնաւոր արքայի՝ առաւելապէս՝ի փրկական խորհուրդս տնօրինուիլնէ այ մարդացելոյ ։

Միքայէլ՝ որ թարգմանի , ոմն կ որպէս ածք (մեր) , զօրավար երկնից ցուցեալ լինի բազմօք՝ի կրկին կտակարանս , միանգամայն և վերակացու և պաշտպան եկեղեցւոյն այ՝ որ՝ի հնումն և՛ի նորումս . և առանձին սորայս աքանչելիք՝ի դարս դարս՝ առիթ ետուն տօնախմբուեաս մեծի , որ՝ի պատիւ սոցա հրեշտակապետաց և սմա երկնային զօրաց . զոր փոքր՝ի շատէ նշանակեսցուք ըստ աւանդուիլնէ առաքելեայց և արևմտեայց ։

՚Ի

Ի ժամանակս դարձի մեծին կոստանդիա-
նոսի՝ յորժամ շինեցան ի նմանէ ի կոստան-
դնուպօլիս այլևայլ եկեղեցիք և վկայա-
րանք, ըր են սքեն սոփի՝ կամ տաճար իմաս-
տութե, սքե եռինէ՝ կի տաճար խաղաղութե,
և տաճար առաքելոց, և վկայարան մովկի-
մայ քահանայի, և ագաթոնիկոսի, և մի-
նասայ, և ակակիոսի, հուշակաւոր եղև և
տաճարն՝ զոր ետ շինել ի պատիւ սքեյն մի-
քայելի հրեշտակապետի ի վոսփորն՝ ըր ի
նեղուցն բիւզանդեան, ի տեղին՝ որ կոչե-
ցաս սոսթենիան, այս է փրկաւէտ կի տաճա-
տարար. այն է առ կողմանք եուշա լերին՝
ըր մէջ եօրուսի և արձիրծնի. քանզի ասէն,
եգիտ անդ ՅԾծասեր կայսր՝ առնապատկեր
Թեաւոր, (ըր ոմանց՝ յաւուրց անտի արգո-
նատորդաց կանգնեալ ոչ անծանօթ պատ-
գամաւոր երկնից՝նիզակակից յաղթուԹե),
այն էր արձան երիտասարդի Թևաւոր արծուոյ՝
ի ձև զօրավարի, ըր օրինակին՝ որով սովոր
էին քրիստոնեայք նկարել զնմանուԹե մի-
քայելի հրեշտակապետին. և ի զարմանալ
Յծծասեր Թագրին ըր այն՝ Թե ոչր իցէ պատ-
կերս, երևեցաւ նմա ՅԹն միքայել, և հրա-
ման ետ կանգնել ի տեղւոջն տաճար, ուր
եղիցի տեղի ուխտի հաւատացելոց՝ առ ի
գտանել յոյ բարեխօսուԹե երկնային զօ-
րաց զՅմէ պիտոս հոգւոյ և մարմնոյ։

Օրմէ այսպէս գրէ սոզոմենոս ի յաջորդ
դարուս. (գէր. Ե. գլ. 2.) Տեսլեամբք ասէ
հաստատեաց ՅծՅ զեկեղեցիս շինեալս ի կոս-

տանդխանոսն՝ գոլ նա և վրկարար. յորոց
մին կառուցեալ ի տեղին՝ որ երբեմն եստիա
կոչիւր (յանուն եստեան կուսանաց հեթա-
նոսաց), այժմ կոչի միքայէլեանց՝ մեծապէս
պատուեալ յայնմ օրէ և այսր յօտարաց և
ի քաղաքացւոց. որ ի ընկ աջմէ (կամ ընկ ահե-
կէ) նաւելոցն ի պանտոսէ ի կոստանդնու-
պոլիս. և ի հեռւէ ի քաղաքէն՝ եթէ նաւա-
կաւ երթիցես, լե՛ ասպարէզ. ապա եթէ ընկ
ցամաք ծոցոյն շրջան առնուցուս հետևակ
կամ հեծեալ, ես։ Այս զայս անուն էառ տե-
ղին ասեն՝ վասն երևելոյ անդ միքայէլի հրեշ-
տակապետի. և ես իսկ՝ որ ոչ սակաւ երախ-
տիս գտի ի տեղւոջն, ամենեւին ստոյգ դաւա-
նիմ. զոր և յայսց յանդիման կացուցանեն
քեզմ նշանք անդանօր գործեցեալք. զի որք
հաւատով յաղօթս կացին անդ առ ինձ, են
որ ի ծանր ծանր արկածից և ի վտանգից,
և են որ ի հիւանդուէնց և յանհնարին ցաւ-
ոց և ի թշուառութենէ ապատեցան. զորս
յերկար լինի միջամիջոյ նշանակել։ Այս սա-
կայն գրե իբրև ականատես զբժշկուի յան-
բուժելի ցաւոյ՝ ակունիկնոսի առն երևել-
ւոյ ի քաղաքին. նոյնպէս և զոր եղևն առ
պրոբիանոս պալատական։ Այդպէս տաճար ե
ընդ միքայէլի, զոր յետ աւուրց սոզոմենոսի
նոմոզեաց յուստինիանոս կայսր՝ ըստ գրելոյ
պրոկոպիոսի. և իգնատիոս պատրիարգն յա-
ւել շինել զվանս միքայէլին. ուր և ասի
գաւեալ սեղան վիմափոր՝ յանուն միքայէլի
երկնից զօրավարի, իբր կանգնեալ յանդ-

բնաւս առաքելոյ ։

Պրեն և յայսմաւուրք , Թէ յորժամ զառաջինն պատարագ մատչէր առ կոստանդիանոսիւ ի տաճարի անդ Ոզջն միքայէլի սուրհանին կամ սուրհանեայս կոչեցեալ , և հայրապետան վերացուցանէր զնզբ խորհուրդն , պատանեակ մի ի ծնէ խուլ և համր յառաջեաց քան զսարկաւագն , և ասէ բարձր ձայնիւ . պրօսխուսին . և ապա ասէ՝ Հայրապետան . ի սրբուձի՝ ասց ։ Ընդ հնոցս կոստանդիանոս և այլ եկեղեցի ի Թագաւորէ քաղաքի յանուն՝ Հրեշտակապետացն գաբրիէլի և միքայէլի ։

Ա՛յլ վասն պրօսխուսին յաւելուս բանիւ հան յայսմաւուրքն յունաց ( ի նոյեմբ . 8 . ) Թէ յորժամ քանսարկուն սամսիլ ապստամբէ՝ այ՝ անկաւ իբրև զփայլակն , միքայէլ զօրավար երկնից ասաց ցհրեշտակս . Եթող ինձն , ար զի՞նչ լիցուք , կամ ո՞ւր կալցուք . ոչ Թէ՝ ոչ երեքսրբեան օրհնութիւն , նոյնպէս և պրօսխուսին՝ խորհրդաբար ի հրեշտակաց եցէ մուծէ ի սուրբ Թէ եկեղեցոյ ։ Վարձեալ միաբան գրեն յայսմաւուրք հայոց՝ աստանօր , և յունացն ի 6 . սեպտեմբեր , Թէ ի քաղաքն խանաս կիւխանն՝ որ յառաջն կողասա կոչիւր , քնակէր այր ոմն երէց հիւղած յոյ՝ արքիսպոս անուն , մատ ի ջուրս բղխեալս սքանչելիօք զզօրավարին երկնից . և ի ձեռն նշանաց եղելոց անդ դարձուցանէր և մկրտէր զազգսն . իսկ հեթանոսք բարկացեալ ընդ այն՝ դարձուցին անդր զերկուս

կուս գեաս՝ ողողել և անհետ առնել ըզ-
լուսաղբիւրն զոյն հանդերձ եկեղեցեաւն.
այլ՝ ի դիմել արքեպիսկոպոսի յօդնականութի՛ն
սբ՛յն Միքայէլի, իսկոյն երևեցաւ նմ՛ հրեշ-
տակապետն գաւազան՛ի ձեռին, և բախել
զվէմն՝ ընկղզել՛ի տեղւոջ զգեստն ոսկի հա-
լեալ և մաշեալ. յորմէ և տեղին կոչեցաւ
յայնմհետէ Խ՛ոնէ, ոսկի թէ հալոց կիսբովք։
Ա՛նդրէն և այլ բազմապատիկ նշանք՝ զորս
արար ա՛ծ՛ի պահպանութի՛ն քրիստոնէից՛ի
դարս դարս յերեսաց արշաւանաց այլազ-
գեաց, բարեխօսութի՛ք և նիզակակցութի՛ք
երկնաւոր զօրաց, և միքայէլի երկնից զօ-
րավարի. յայտնի են և օրինակք՛ ա՛ր գրոց՝՛ի
պատմութե՛ յեսուա՛յ, եղեկիայ արքայի, մա-
կաբայեցւոց, և դանիէլի։

Ա՛նդրէն և արևմտեայք, թէ՛ի վախճան
հինգերորդ դարու հռչակելի եղև իբրև ուխ-
տատեղի հաւատացելոց քարանձաւն լերինն
գարգանայ յատուկ ի տաճարի իտալիոյ՝ վ՛ա
երևելոյ անդ ա՛ծյն միքայէլի հրեշտակապե-
տի. և յառաւելուլ օրքան զօր նշանաց և
սքանչելեաց՝ կարգեցաւ ամ՛ենամ տօնա-
խմբութի՛ն՛ի տեղւոջ անդ՛ի պատիւ ա՛ծյն
միքայէլի, և տարածեցաւ յայմ արևմուտս։
Ասէ՛ զի ասի, թէ՛ի հռոմ վաղագոյն կար-
գեալ էր տօն՝ վ՛ա երևելոյ անդանօր երբեմն
միքայէլի հրեշտակապետի բազմութի՛ք երկ-
նաւոր զօրաց. և չեն ինչ զարմանք, զի և ո՛ր
մանց ոմանց, ոսկի և աշակերտին եղիսէի՛ բա-
ցան երբեմն աչք հոգւոյն, և տեսին նաև

մարմնաւոր աչօք զբանակս անմարմին զըբ-
Հարքինոց . յայտնի են և յակոբայ նահա-
պետի տեսիլք հրաշալիք . իսկ մանաւոր ե-
րեւումն հրեշտակաց՝ յաձախեալ է՛ի հին և
՛ի նոր կտակս , և՛ի վարս ամենեցն :

Ա. ձեռն պատրաստ են և ձառք և ներբո-
ղեանք հարց և վիճակաց վերոյ հրեշտակաց
և հրեշտակապետաց , որոց կամք լցեն զե-
գերիլ՛ի նոյնս . զր և յոբ հայրապետն մեր
ներսես կլայեցի՛որ՛ի հրեշտակաց ասի Հնո-
հալէ կարդայեալ , ( ոչ երբեմն դանիէլ՝ այլ
ցանկալի անուանեալ՛ի մեծէն դաբրիէլէ , )
արար՛ի ոճա Թուխականիս հայոց՝՛՛ի խնդրոյ
եղբօրեւրոյ նորն գրիգորիսի կաթղիկոսի՝ արձակ
բանիւ ներբողական ձառ հրեշտակաց , յա-
ւելուածով ձ տուն ոտանաւորի՝ ըստ Թուոյ
հարիւր ոչխարաց , զոյգ ըստ պանծալի շարա-
կանի հրեշտակաց . յոր հայի ասելն ընդհալ-
ւոյն . * յորմէ խնդրոյ զնչեալ ես իս , յար-
մարեցաւ շինուածձ ձառիս . և եղանակ շարա-
կանիս՝ առ՛ի պատիւ մեծի տօնիս ‖ : Ա.յլ
մեք յարեսցուք՛ի կարդի աստ զդուշնաքեայ
բան յորդորական առ ջերմեռանդն պաշտօ-
նասէրս ըզ հրեշտակաց , պարզ և դիւրիմաց
ձևով :

## ՃԱՌ ՅՈՐԴՈՐԱԿԱՆ

### Ի պատճառ սրբոյ Հրեշտակաց։

Որդիք մարդկան՝ հողածնեալք, եղկելիք և թարմատարք, (այսպէս ինձ թեւաւորեն որդիք ոմն՝ զի հրեշտակք՝ մուտ առնել ճառիս ի զարթուցանել զձեզ)։ Որդիք մարդկան ասեմ, վայրաբնակիչք ստորին գաւառիս, երկրապիշք՝ գետնամածեալք՝ Յասերք, ամբարձէք զաչս ի բարձունս՝ յՅն վերին, ի հրաշակերտս հայել ոմ՝ որ ի վերնաքաղաքն եկեմ, ի ժողովս անդրանկաց՝ ի հոգեղէն պարս պալատականս վերին արքունեաց։ և տեսանիցէք հրաշատեսիլ զարդս երկնից իմանալիս անզուգական և անհամեմատ փառազգեացս՝ զի զգալի դիրս աստեղաց և զարդուց երկնից։

Այնթէ երևելի արեգակն՝ յոր զօր ոմ ակնարկէք, անօթ սքանչելի բարձրելոյն ձեզ ճանաչի, լուսատունցուղ, ակնապարար և գեղեցիկ, և լուսին աստեղօք հանդերձ՝ գեղազուարճ տեսարան անյագելի, զի՞նչ աներևոյթ զօրութիք ինչն երկնից՝ իմանալիք անիմանալիք։ Այր երկինք՝ ի հին երկինս այսօր ձեզ յանդիման լինին ի տօնիս։ Այր արեգակունք ճառագայթեալք յաղբերէն լուսոյ՝ որպէս վտակք յորդեալք յանսպառ աղբերականէ, լուսաճաճանչ հոյլք լուսեղինաց՝ հրեղինաց՝

զուարթնոց հոգեղինաց լուսերամից ։ Ա՛ու սինք լրացեալք յանդիմանակացք էական արփւոյն . լուսացեալք առ՛ի նմանէ , և լուսատուք ձեզ ենթալուսնեայց . ոգիք զուարթունք զուարթացեալք հոգւովն այ , և միխթարք տառապելոց հոգւոց ձերոց ։ Ա՛. ստեղք անմոլարք՛ի հաստատութենէ երրորդ երկնից՝ դասաւորեալք յինն եակ կամարս իմանալիս . բևեռեալք՛ի սերն այ անշարժութք , և միաբան միտաշարժք յաւաջին շարժողէն յայմ՛ի բարին . ջահք միտապայծառք՝ լուսով ուղղացեալք ածականաւ՝ անշիջելափառ և անուղտ խոստման ։ Վեսք՛ի թագազարդ պսակաւորայ՝ յոգւոց անտի երջանկաց՝ ՛ի սպաս կան պաշտամանն երկնաւոր արքային՝ շուրջ զաթոռով քնարակելոյն ՛ի լոյս անմատոյց . վեսք՛ի ծիրանափայլ լուսազգեցիկ՝ բարապանք վերին առաքաստի անհպելի արքայարանին . այլք բազմաչեայ դէմք և ոսաւիկանք քաղաքին այ՝ միտապատրաստք յակնարկուի կամաց արարչին . այլք վեցթևեան արտաքին սուրհանդակք՝ սլացեալք որպս զարծուիս՛ի լսել ձայնի պատգամաց բարձրելոյն ։ Ամանք զօրավարք և զօրագլուխք երկնաւոր զօրաց անբաւութենէ՝ ձակատեալք ընդ մէջ երկնի և երկրի՝ ընդեմ անմարմին թա-

նա-

հնակաց խաւարի՝ ապստամբաց սանդարամե-
տականաց. ոմանք իշխանք և դատաւորք՝ ա-
տենակալք արդարութեանց, զարժանն հատու-
ցանել բարեգործաց և չարագործաց՝ որպէս
պաշտօնեայք արդար դատաւորութենն ՚ի
աստ և՚ի հանդերձեալումն, այժմ և յաւուրն
ահեղի։ Այլ առհասարակ արթունք և զըգ-
նարթունք՝ հզօրք զօրութիք՝ ժիրք և գոր-
ծօնեայք ակնարկուք երեքսրբեան մի ՚ուրու-
թիւն. որով երկինք և երկնից երկինք վայե-
լեն յանապատ պարզութիւն երկնաւոր խա-
ղաղութիւն, և երկիրս խնամարկի բազմօրի-
նակ տնտեսութի՚ի յարափոփոխ շրջանս ան-
ցաւորուն, մինչև լինիցի փոխել յանփոփոխ
վիճակ յաւիտենից։

Պարձեալ այլք՚ի դասուց դասուց հոգե-
ղինաց՝ անդադար փառաբանիչք ՚ի՝ հոգե-
ղէն ըղձաձայնութիւն և անհատական բարբա-
ռով, և այլք նուիագածութիւն իմանալիք ըստ
բազմայեղանակ հոգևոր հնչմանց. և այլք
առհասարակ ձայնակիցք և պարակիցք միա-
բանութիւն ձայնից արուեստականաց և երգոց
երաժշտականաց՝ անլռելի օրհնաբանութիւն.
զոր ունկն մարդոյ ոչ լուաւ։

Այլք խորհրդածութիւք խորոցն ՚ի՝ և յայտնիչք
գաղտնեաց սքանչելոյն՝ առ խորհրդական և
խնդակատար պաշտօնակիցս, լուսաւորեալք
և լուսաւորիչք. ունիք լուսատուք որոց ըստ կար-
գի՝ վերուստ՚ի վայր մինչև ցվերջինս՚ի հրեշ-
տակս՝ ուսուցիչս և դաստիարակիչս մարդ-
կան. ոմն իւրք՝ զի իջանէ՚ի գլուխն և՚ի մ-

րուան ահարոնի, և՛ի մօրուացն մինչև՛ ի դրա-
պանս զգեստու նորա։ Ամէն զնուրաքանչիւր
դասուց սեպհական զգիտուիս անձառելիս
և զխորհուրդս Թաքնուէ, ըն նուրաքանչիւր
աստիճանի իմանալի բարձրուէ և ածամերձ
կայանից, և ըն չափու դէմ յանդիման տե-
սուԹէ երբեակ լուսոյն անչափուէ. յորում
ամ գանձ իմաստուէ և գիտուԹէ ծածկել
կայ, անբաւելի և անսպառ, անսահմանելի
և անբովանդակելի. և Հաղորդի միոյ միոյ ըն
պայմանի բնուԹէ և շնորհաց և փառաց. և
ամ քաղցրուԹի և վայելք զմայլման բղխ-
սու ամենեսին՛ի խորոց անտի անսահման
ծովու երանուէ. որ՛ի սիրտ մարդոյ ոչ ան-
կաւ։

Ա՛ն ըստ այսմ գերահրաշ դասակարգուԹէ՛
հրեշտակ քան զհրեշտակ սուաւելն փառօք.
ուստի և փոքր՛ի շատէ մեզ ծանուցեալ այն
անուանք ինննեակ դասուց քահանայապե-
տուԹէ երկնից, ՚ր սրբազնապետուԹէ կա՛
նը կարգի նոցունց. յորում է իմանալ աղգի
աղգի ձիրս մեծամեծս ու քան զմի՛ ՚ի վեր
քան զտեսուէ հողեղինաց։ Ո՛ի Թէպետև
խորհուրդք անուանցն առեալ ՚ի պօղոսէ և
յաշակերտէն ՚ի դիոնեսիոսէ արիսպագա-
ւոյ՝ պէսպէս այլաբանին ՚ի սքեց վէՊաց,
ոմն ասԹուք՝ հանգիստ անախտ քնուԹէ, սե-
րովբէք՝ սէրարփիք հրացայտք, քերովբէք
բազմաչեայք, և որ այլ ևս պետական և իշ-
խանական և տիրական յորջորջմունք երկ-
նային զինուորուԹեց, յորս զօրուԹիք՝ հա-

սաւ

սարակաց և մանաւոր դասուց են անուանակոչութիւնք, որպես և հրեշտակապետք՝ առանձնաւորաց, միանգամայն և դասուց, և հրեշտակք՝ ոչ վերջին դասու, նոյնպես և համօրէն հոգեղինաց՝ սեպհականելք այլ իսկութեի պատուոյ նոցա և աշխատանաց՝ անըմբռնելի մեզ քննաբէն յաստիս. որք զերկրաւորս և զերկինս իմաստասիրեմք, և զանիւթականս նիւթեղէն ձևով զմտաւածեմք, ոչ և ըստ իմիք երևութացան՝ ի կերպարանս կերպարանս նշանակաւ հոգեղէն ներգործութենէ իւրեանց. մինչև հասցուք՝ ի կայանս երկնից՝ ի դասակցութի ոգւոցն երջանկաց՝ երից և բիւրից երանելեաց մի՛ք զմի գերազարդ փառօք ձոխացելոց. և յայնժամ իմանալ մարթասցուք զցանկալի ցանկալին մեծութիւնն նոցա զքնաւորականս և զգերբնաւորականս։

Ասակ՝ ի ժամուս զինչ. ոչ այնչափ պէտք են մեզ ձկտիլ հասու լինել կատարելութե քննութե և շնորհաց և փառաց նոցա, որչափ գիտել վայելել՝ ի հոգեղէնս և՝ ի հոգեպորով խնամարկութիս նոցա՝ ի վերջ երկրաւորացս, զորս փութան հնարին ձգել յերկրէ յերկինս, քանզոր դարանին չար հրեշտակք՝ դևքն ասեմ՝ ձգել զմեզ՝ ի խորս երկրի։ Օ՛ի թէ փոյթ չարացն յառաջագոյն՝ ի չար նախանձուն առաւելուէ՝ ածատեաց և մարդատեաց մտօք, քարի հրեշտակացս փոյթ յառաջ եկեալ՝ ի քարի նախանձաւորուէ փառացն ոյ և փըր-

կու-

կուէ մարդկան՝ ՃՃասեր և մարդասէր մտօք, գեր ի վերոյ գտանի և զօրագոյն յոյժ յոյժ. մանաւանդ զի բարիքն յայ սահմանեցան ի սոյն պաշտօն հարկաւորութէ վա ժառանգաւորացս փրկուէ, իսկ չարքն յանձանց մեքենայեցին զչար սպասաւարկութէ ի գայթակղութէ մեզ. բարիքն զՃծ ունին գործակից, իսկ չարքն յանդիմանին միշտ յայ, և կշտամբին և ստէպ ի բարի հրեշտակաց. ըմ, սաստեսցէ ի քեզ ՏՏր: ՏՏեզ միայ միայն ընտրել զմեր բարին, և կամակից լինել բարոյն, և ոչ չարին: Այս արդարև սպառութէ ե արժանի, եթէ զիաղդ լինիցի մեզ ոգի և ե իսկ սովորական խակամտութէի մեր, անսալ չար հրեշտակաց՝ որք խնդրեն զմեր կորուստ միանձնեաւոր, և անսաստ լինել բարեաց՝ որք խնդրեն զփրկութէն մեր յաւիտենից. բաբէ յետին խոտորնակութեես. աւաղ անչափ անմոռութես, և գժնդակ ապիրատութէանն:

Այայց արդ՝ ծն եկայք աւուրս ընորհիւ, բարեխօսութէ ասեմ սրց հրեշտակաց տօնախմբիմ բեզոց յեկեղեցի ՏՏ, զգաստացուք ոմ մանկունք սիոնի՝ յայսմ օրե և առ յապայ. և միլիցուք տղայք մտօք, այլ ի չարեաց տղայացուք. ոգի և յիմ ժամ ազդեն մեզ ներքուստ ի ներքս հոգեսէր այն հոգիք զոհարթունք, խոտորիլ ի չարէ, և առնել զբարի. զգօն լինել և խմաստնանալ ըՏ ՏՏ, և գնալ զՃանապարհս ՏՏ ըՏ գեղեցիկ առաջնորդութէ իւրեանց՝ անստերիւր և անսայթաք:

Յանպատ տեսցէ իւրաքանչիւր ոք՝ ի մէնջ յայսմ
հետէ հլու ընծայել զանձն առաջի հրեշ-
տակացս այ , և առաւել պահպանողական
հրեշտակին իւրոյ գործավարութեն խնամակալ-
ութեն . զի որ առ նո՛ա անհնազանդութեն լինի՝
ածելոյ ասպատմչութեն ձանաչի . ոչ որ
զայսպիսեացս արհամարհէ զթագաւորին,
զթիկն գլխովին թշնամանէ . մինչ զի գեղե-
ցիկ արդարացել է և հրունեանն առած՝ ոմն
յառաջնորդս , նոյնպես և՛ ի՝ ոք հրեշտակս
մեր . այն՝ թէ , որ ձեզ լսէ՝ ինձ լսէ . և որ
զձեզ անարգէ , զիս անարգէ ։

Յիշեսցո՛ւք անմոռաց զբարեացապարտ և զբ-
քազմերախտ հոգաբարձուս հոգւոց և մարմ
նոց մերոց՝ զՀոգեղէն իշխանս փառաւորս՝
համօրէն լրութեք բանակի նո՛ր , և առանձինն
յականէ յանուանէ՝ զորս ձանաչեմք՝ի գրոց .
և առաւել իւրաքանչիւր ոք զիւրոյ հրեշ-
տակի յոյշ կալցի զյիշատակ անմոռաց , ո-
րով արդարև լինի և նմա հրեշտականալ ։
Յայեցեալ՝ի լուսոն անթիւ բազմութեն զո-
րաց երկնաւորաց՝ վառեսցո՛ւք Հոգւով նմա
նօդ լինել հրեշտակային քաղաքավարութեն
նո՛ր յերկինս՝ յարաժամ առաջի այ կալով , և
նախանձաւոր լիցուք ընորհս նո՛ր և ածառնդ
ընտանութեն , Հայելատիպ ջինջ և անարատ
որքուե նո՛ր , անխիրհելի աչօք և զուարթուն
մտօք անդադար փառաբանութեն նո՛ր , ոյզ և
անդիմադարձ և յօժարափոյթ հնազանդութե
նո՛ր առ ակնարկութեն կամաց արարչին . յոր
միտ լման լինձ զասելն՝ի հրունական աղօթս՝
զոր

զոր միշտ երկրորդեմք . եղիցին կամք քո՝ ոգի յերկինս , և յերկրի :

Խայեցեալ՝ի գաբրիէլեանցն աւետաբեր սո-վորութեի՝ ուշ կալցուք ելս դնել՝ի մարի՝ի հովտես տրտմութե , պատրաստ լինելով զոր ամէնեթաւ ըս հրաւիրանաց ըզ զուարթնոցն՝ի կոչունս երկնաւոր թագերին նոյ և մեր : Նա-արդարև եթէ այս փոյթ պատրաստուե իցէ զմեօք զօրհնասպաս , հրեշտականամբք վա-րուք և յերկրի նախ ըզ զնուէլն՝ի յերկինս . որ է ըս տիրական աւետեաց իբրև զհրեշ-տակս լինել տիրապես :

Խայեցեալ՝ի միքայէլեանցն արիական զին-ուորութե և յաւաքինի շահատակուի՝ մըշ-տայողթե և անպարտելի աջով հզօրին , զչեց-ցուք նոր զօրութե և ոգի նոր՝ ընդայնին սպա-ռազինուըս հաւատով՝ յուսով և սիրով , որով զամ նեաս մուխս չարին չիջուցանեմք . զի ընդ ըս մեզ է . ըս մեզ է և զօրավարն երկնից , շուրջ են զմեօք և բանակք երկնաւոր զօրաց , զօրացուցիչք մեր յամ վիշտս վտանգի , առ անվեհեր միջամուխս լինել յամ կիրս մնջու և մահու խաչի : Խայս օրինակ մեր մար-դացեալն ընդ ընդ մերս ասեր՝ի ժամ նահատակուե իւրոյ . միթէ ոչ կարե մ աղաչել զհայր իմ , և հասուցանիցէ ինձ այժմ այսր աւելի ըս զեր-կուասան գունդս հրեշտակաց . ոգի և մարդ-կապէս յանձն առնայր՝ զի ևկեցցե հրեշտակն՝ի զօրացուցանել զնա՝ի տագնապի արեանցն քրտանց՝ի պարտիզի . զի մեք ուսցուք , թէ

ոչ երբէք պակասին մեզ նիշակակցունք երկ-
նային զօրաց , միայն թէ մեք մի պակասե-
ցուք մտադիւրութիք կալ յաղօթս , և սաղա-
մէլ հայրն երկնաւոր՝ զի ընդ մեզ իցեն միշտ
հրեշտակք ։

Յայեցեալ ի ռափայէլեանցն հաւատարիմ
ուղեկցութիւն՝ աներկիւղ և անկասկած ըն-
թացուք ընթացս առաքինիս մինչև ի կէտ
նպատակի կոչման մերոյ ի վերինն Երէմ. զի
թէ զտոքիա այնչափ գորովանօք յանձան-
ձեաց ռափայէլ ընդ ամ Ճանապարհն , մինչև
ոչ միայն խաղաղութիք հասուցանել ի դէմ
եգեալ տեղին , ընդ զամ պակասուի սպա-
սաւորութեն նր , ազատել զնա ի յարձակմա-
նէ վիշապ ձկան, և դարձուցանել ողջանդամ
ի տուն հօր իւրոյ , այլև զկին նորա զսարա
բուժել յայսոյն պղծոյ , և զհայր նր զտո-
բիթ լուսաւորել , զի՞ չ ոչ առնիցէ որոյ ու-
ղևորիմք ընդ դժուարագնալի Ճանապարհ
յերկրէ յերկինս , և ունիմք իսկ պէտս կա-
րևորս հանապազորդեան ազատութե ի պէս
պէս փորձանաց և ի փորձութե , և ի ձեռաց
դիւաց և ի կուրութէ հոգւոյ ։

Յայեցեալ և ի պահպան հրեշտակաց մե-
րոց ի հոգատարութիւն՝ հոգ յանձին կալցուք
զմի , լինել աեմ նոցա սան հաւատարիմ և
հնազանդ . և եթէ այս լինիցի , ոչ միայն այ-
նուհետև մեզ այլ ինչ հոգս . զի այնպիսի
ունիմք դաստիարակս և վերակացուս՝ որ հո-
գան վ մեր զամ պէտս հոգւոյ և մարմնոյ
ըստ գեղեցիկ տեսչութե և առնտեսութե վերնա-

խնամոցին այ : Նա ոչ այսչափ միայն , այլև կարեկցեալ մերումս տկարութե և տգիտութե , որոց առաջի եմք ոչի մանուկ տխմար , բարեխօսեն առաջի այ՝ դեմ ընդդեմ չարախօսին մերոյ . բարեխօսեն տալ մեզ թողուի մեղաց , և առատութի շնորհաց և ողորմութե . բարեխօսեն գովելով զհպատակութի և զբարեպաշտութի սանից իւրեանց՝ առաւելուլ ի նե զաճումն շնորհաց և փառաց . և միշտ ուսուցանեն զսանս իւրեանց՝ ազօթել հրեշտակօրէն , կեալ հրեշտակօրէն , և անցանել ի դասս հրեշտակաց :

Ընդ մի սնասցի այսչափ վաստակ նոցա վե մեր . տացուք նոյ պարզերես լինել վե մեր առաջի նո , և ցնծալ ընդ փրկութի մեր . և արդարև եթէ յայս փոյթ ձգնեսցուք , նք և սա բարեխօսութ իւրեանց տացեն մեզ պարզերես հանդիպիլ ատենին այ , և դասակարգեալ ընդ անմարմնական բազմութե երկնաւորաց՝ փառաւորել ի մի ձայն անպատում ուրախութե հոգեղէն սրբասացութ զերբեքերեան մի երրութի հօր և որդւոյ և հոգւոյն սբոյ յաւիտեանս յաւիտենից . ամէն :



ՎԱՐՔ

# ՎԱՐՔ ՍՐԲՈՑՆ

## Մելիտոսի անտիոքայ հայրապետին։

Յ. Ճառընդ. և ճաշոյ հին. նոյեմբ. 12, ՀՇ 11. և կամ փետր. 13։ Յ. բա. օգոստ. 23։ Լ. և Յ. ՃՀ. փետր. 12. ՀՇ 14։ Ա՛ռաջնդ. Լ. Ճաո. Ճառ նախատօնին։ և Ա՛. Պ. ա՜ն. ՚ե պչենոբայ. և ևս Ա՛. Պ. ա՜ն. և Օ. յՀԵ = նԵ. յոսկեբերան։ Խուլիանոս յովհաննէս ՚ե Ե հայր. փետր. էջ. 585 = 602։ Պոլսպ. սոլոմ. ընդդրբեպ. ՚ւեշ։ (1)

Ա ՆՇՈՒՊԱՅՈՒԱՒ ՀՈՂՄՈՑ

եկեղեցւոյ լուսաւոր վէպս՝ անշէջանելի յերեսաց հողմոց հակառակաց, իմա՛ ի հալածանաց թշնամեաց և ընտանեաց հաւատոյ; քանզի լինի՛ ի հարս՝ ոբ հայրապետն Մելիտոս՝ որ և Մելետիոս (այս է մեղրաւէտ), եր հայրենեաք՛ ի Մելտինոյ փոքուն հայոց, և ըստ պատմագրոսի՝ նաև ազգաւ հայ, ծաղկեալ առաքինի վարուք և իմաստութիւք, և հռչակեալ յոյժ՛ ի մէջ ուղղափառաց և այլափառաց՝ յաւուրս կոստանդեայ արքայի որդւոյ կոստանդիանոսի. և այս այնչափ, մինչ զի առ կենդանութիւք իսկ նոր քազում գովութիւք

դրոշա-

դրոշատեղ զնա՞ցն եպիփան. և այլք յեկեղեցական մատենադրաց կոչեն զնա այր ածականն և սքանչելի ։

Այս վճռ այսպիսի բարեհամբաւուեն նը միաբան համ հաւանութեաբ ուղղափառաց և արիանոսաց ձեռնադրեցաւ եպս սեբաստիոյ . և զի արիանոսք զօրացեալ էին յայնժամ ի հողմանն յայնոսիկ, բամբասասէրք ոմանք յուղղափառաց թշնամիք սըբոյն հաւատոյն զնա յայլափառաց ձեռնադրեալ , որպս թէ զաոաջինն կուսակից լեալ իցէ նմ . այլ ճշմարիտն այն էր ը ստուգապատում դրչաց , թէ արիանոսք անգամ կամակից եղեն ի ձեռնադրութեբ մելիտոսի՝ կարծելով զայն ոյ յինքեանս ձգել . նմին իբի և փութացան հետզհետէ յառաւել պատիւ ամբառնալ զնա . այլ ի դերև ել խորհուրդն նմ . որպս և կարգ պատմութեբն յայտնի կացուցանէ ։

Զրդ կացեալ մելիտոսի զժամանակ ինչ յաբեթոն սեբաստիոյ , իբրև ետես զհանապազ զորդեան աղմուկ եկեղեցւոյ յերեսաց հերձուածոց ժամանակին , և զըմբռնոտութեբ անխրատ ժողովրդեան , առանձնացաւ ի բերիա ասորւոց , և ետ զանձն հանդարտուեն հոգւոյ ։

Յաւուրսն յայնոսիկ բռնացեալ ունկը զաբեթոն անտիոքայ եւդոքսիոս արիոսեան . որ յետ բազում անկարգութեբն և խռովութեբ մերժեցեալ յանտիոքացւոց՝ դիմեաց ի կոստանդնուպօլիս , և կալաւ զեպսկոպոսութեբ թագաւորեալ քաղաքին զկնի մակեդոնի հոգեմարտին ։

տին ։ Յայնմ ժամանակի կոստանդ արքայ
եր յանտիոք քաղաքի՝ եկեալ անդր ՚ի պատ-
ճառս պատերազմաց պարսից . և յետ առնե-
լոյ ընդ նա առ ժամանակ մի հաշտութիւն խաղա-
ղութիւն՝ ձախողակի խորհրդով կամեր և խա-
ղաղութիւն արկանել ՚ի մէջ եկեղեցւոյ , ոմն
թէ միաբանել կամելով զարիանոսս ընդ ուղ-
զափառս , և զուղղափառս ընդ արիանոսս ։
Ա՝յնմ երբ ժողովեալ անդր զբազմութիւն ե-
պիսկոպոսաց՝ ստիպեր զնոսա քառնալ ՚ի միջոյ
զկարծեցեալ պատճառս երկպառակութիւնն
զդէմընդդէմ ձայնս կոչոգոյ , և այլոգոյ . յո-
րոց զառաջինն պինդ ունէին ուղղափառք ,
և զերկրորդն չարափառք ։ Նոքա ժողովեալքն
առաջի արկին արքայի՝ նախ ընտրել հովիւ
զոք աթոռոյն անտիոքայ , և ապա հանդերձ
նովաւ միով ՚ի բնդիր հաւատոյ ։ Եւ ՚ի յա-
ռաջ մատուցանել յերկոցունց կողմանց ուղ-
զափառաց և այլափառաց զայլևայլ անձինս՝
չմիաբանէին և ոչ ՚ի վեր միոյ ուրուք ՚ի նոցանէ ։
Յայնժամ ակակիոս եպիս կեսարէայ պաղես-
տինոյ՝ աշակերտ եւսեբի կեսարացւոյ , այր
լի խորամանկութիւք՝ զակատեալ զհետ արիա-
նոսաց , միանգամայն և հետամուտ հաճոյ
լինելոյ ուղղափառաց , խրատ ետ թագաւո-
րին ընտրել զմեծանունն մելիտոս եպիս սե-
բաստիոյ ։ Եւ նոյն խորհուրդ միաբանեցան
և այլք եպիսկոպոսաց արիանոսաց՝ ակն ունելով
որսալ զնա ՚ի կողմն իւրեանց ։ Ա՝տադիւր ընդ-
կալան զընտրուելն նոր և եպիսկոպոսք ուղղափա-
ռաց , յորս երևելի էր սքեն եւսեբիոս եպիս

սամոստիոյ . վ՚ը զի քաջ իրագէտք էին ողջա-
միտ վիճակուն երանելւոյն Մելիտոսի , և ա՚ծա-
մերձ առաքինութենց նր ։

Ա՚յ միախոհ հաւանութիւք և հաստատուն
դաշամբ երկոցունց կողմանց գրեցաւ նա-
մակ ընտրուն Մելիտոսի . և յետկար նամա-
կին տո՚ւաւ ի ձեռս նորին եւսեբի սամոս-
տացւոց եպսի՝ իբրև հաւատարիմ աւանդա-
պահի . և առաքեցան հրաւիրակք ի Թէրէն
բերել պատո՚ւով և արքունի երիվարօք զՄելի-
տոս՚ի բերիոյ կի՚ի սեբաստիոյ , ո՚ւր և գտա-
նիցեն զնա ։

Այ՚ս ըստ հնչեալ էր համբաւ ա՚ջն ի լուր ամե-
նեցուն , ել՚ մերձենալ նր յանտիոք՝ ել՚ առաջ
ելին նմա ա՚մ քահանայք և պաշտօնեայք ե-
կեղեցւոյ՝ եթէ՛ յուղղափառաց և եթէ՛ յա-
րիանոսաց , հանդերձ բազմութիւք քաղաքաց-
ւոց՝ ո՛չ միայն քրիստոնէից , այլև հրէից և
հեթանոսաց , կարօտեալք տեսոյ մեծահրա-
շակ առն ա՚յ ։ Այ՚ս այնպէս բերել նստուցին
զՄելիտոս յաթոռ հայրապետութե՛ անտիո-
քացւոց՝ յամի տն 360 ։

Այ՚ս անդէն վաղվաղակի ժողով եպսացն միտ
եդեալ խնդրոյ հաւատոյ՝ ոյր վ՚ը գումարել
էին , նախ զառաջինն ա՚ծային լսել՚ի Մելիտո-
սե՝ զի՛նչ ի՛նչ խօսիցի ։ Ա՚ւսկ երանելի հայրա-
պետն իբրև իմաստուն բժիշկ և առաքելանը-
ման քարոզ կենաց՝ յառաջնում անդ ատե-
նախօսուե՛ իւրում առ եկեղեցականս և առ
ժողովրդականս պատահատեալս և հերձեալս՝
ո՛չինչ բան՚ի մէջ արկ զխնդրոյ հաւատոյ .

այլ

այլ առ ժամայն քուռն հալեալ զուղղուէ և զբարեկարգուէն վարուց՝ սկսաւ ազդու բանիւք վառել զորքորքել զունկնդիրս ՚ի փոյթ առաքինուէն՝ բարձմամբ մոլեկան ախտից հոգւոյ , և առաւելապէս յորդորել յաճախ ըուն և յեղբայրսիրուէն , որովք ևեթ լինի և պահի խաղաղուէն եկեղեցւոյ : Այս ապա ոտն առ ոտն յառաջ մատուցեալ՝ զուղղափառ հաւատոց զՀնմարտուէն յայտնաբար բառ քարոզէր . նախ զայլազգուէնն արիւսեանց անհետ առնէր՝ առանց նշանակելոյ զանուանս նոյ . և զնմանագուէնն որդւոյ ըէ հօր՝ զոր կիսարիոսեանք ըուննէին , և եւնոմեանք ուրանային , անժխտելի ցուցանէր . և առ նմին զհամագուէնն տիրաբաներ ըէ նիկիական դաւանուէն՝ հաստատելով , թէ բանն ոչ է արարած , այլ՝ ծնունդ հօր Հնմարիտ , ած յայ . ըէ որ ակնկորեալ ճնային դասք այլափառաց :

Այս եղև ՚ի միում նուճագի հրամանն եւ արքայ , զի յարուցեալ ոմանք յեպիսց՝ ոչ և զնայրդ գիտենն՝ խօսեացին յատենի եկեղեցւոյն զվէպուէն հաւատոյ , թարգմանելով զմիտս խորհմաց բանին առաքայ . ՚ի որ ստացաւ զիս ( զոր այլք ընթեռնուին , ՚ի որ ստեղծ զիս , զի միով տառիւ է զանազանուէն ՚ի յոյն բարբառ ) ՚ի սկիզբն Հանապարհայ իւրոյ ՚ի գործս իւր . և կարգեաց նօտարս՝ գրել զասացեալսն ՚ի նոցանէ : Յառաջ մատեաւ նախ անամօթաբար գէորգ եպս լաւոդիկեցւոյ . և չարաչար մտօք կամակորեալ զգիրս՝

պարիսպն Ժայռաքեղաց մոլորութի՛ւն ի լսելիս ամենեցուն ։

Եւ ետ նո՛ր ակակիոս կեսարացի պատ՛ի պատ բանիւք մեկնաբանեաց . զի թէպետև ոչ միսեցաւ՛ի հայհոյութի՛ւն հերետիկոսական , բայց և ոչ զուղղափառականն ձառեաց Ճշմարտութի՛ւն ։ Յայնժամ ապա յարուցեալ մեծն մելիտոս՝ իմաստուն կարգաբանութի՛ւն սկիզբն առ լար ուսուցանել զօրինաւոր կանոնս ծածկաբաւ նեղոյ յաղագս ծածուկ մեկնութե՛ն և անօրէնութե՛ն բա նին այ . և զողջամիտ վէ՛պութի՛ն կաթողիկէ եկեղեցւոյ ըստ մաքգարէական և առաքելա կան քարոզութե՛ն հաստատ՛ին քանիւք եղ ա ռաջի , ոչ յայլ և ոչ յահեակ խոտորեալ յար քունական պողոտայէ Ճշմարտութե՛ն ։

Յայնմ վայրի սկսաւ ժողովուրդն առ հասա րակ յայտնաբարբառ գովել զառ՛ի նմանէ ասացեալսն , և աղաչել զնա՝ զի հակիրճ բա նիւք բովանդակեսցէ զիմաստ Ճշմարտութե՛ն առ՛ի հեշտեաւ պահելոյ նո՛ր՛ի մտի զծածու ացեալ վէ՛պութի՛ն նո՛ր ։ Ընդ որ զչարեաւ սար կաւագապետի եկեղեցւոյն անտիոքացւոյ՝ մատեաւ առ հայրապետն , և ձեռամբ իւ րով խնայր զծածաբան բերան նո՛ր՝ դադարել՛ի խօսելոյ զայնպիսիս , զորս ոչ ախորժէին քազ մութի՛ւք եղիպտոյ՝ որք էին յարիանոսաց , և ոչ Թագաւորն ինքնին գլխովին՝ որ՛ի նո՛ր կողմն հակամիտեաւ ։

Լսեալ երանելին մելիտոս ձգեաւ զձեռն իւր առ ժողովեցեալն՝ փոխանակ բերանոյ ձեռամբ յայտնի և ուսուցանէր ժողովրդեան զինդ-

բե-

բելին . նախ զերիս մատունս արտաքս ձգել ցուցանէր . և ապա զերկուսն ամփոփել՝ զմի և եթե եցոյց . զորոյ զայսմանէ դիտաւորութիւն իմացեալ սարկաւագին՝ եթող զբերան նր , և զձեռն կամեցաւ արգելուլ ։ Յայնժամ ած մելիտոս արձակ լեզուաւ՝ի վերայ էած զիսորհուրդ մատանւոյն ցուցելոյ՝ երրեակ և մի . երեք են ասէ՝ զորս իմանամք , այլ իբրև զմիոյ խօսիմք . յայտ արարեալ՝ եթէ մի է բնուն համագոյական՝ ած երրորդութե ։

Ի եղեն ուրախութիւք դասք ուղղափառաց , և օրհնէին զած՝ի մէջ տաճարին ձայնիւ ցընծուե , և մեծապս գովէին զնոր հայրապետն իւրեանց ։ Ապա արիանոսք զամենի հարեալ առհասարակ՝ գլխակոր ելին յեկեղեցւոյ հանդերձ ծիշրաւն . զի խաբեցան՝ի յուսոյ իւրեանց , և ըմբռնեցան՝ի խորագիտուե իւրեանց ։ Եւ այնուհետև խորհուրդ՝ի մէջ առնուին՝ փութով՝ի վայր ընկենուլ յաթոռոյ զմելիտոս . զի ոչ որպես կարծէաք ասեն՝ ելք իրացն վճարեցան ։

Եւ նախ արքունի հրամանաւ հանին զմելիտոս յեկեղեցւոյ՝մի և ևս վիպել ժողովրդեան. յետոյ կոչեցին զնա և յորդորէին՝ զի զհակառակն ասացելոց իւրոց խօսեսցի առ ժողովուրդն , և ցուցցէ զանձն զղջացեալ ընդառաջին բանս իւր ։ Ապա քաջ նահատակն և առաքինի քարոզն ձշմարտուե անդրդոյնելի կայր՝ի նիկիական խոստովանութե , և ոչ դադարեր՝ի զնոյն քարոզելոյ , և՝ի յանդիմանելոյ զխոտորեալսն ։

Ա Յ միաբանել արհնանոսաց՝ չարախօս եղեն առ Թագաւորն զմելիտոսէ, թէ նա զսաբէլլին խորհի խառնակուն դիմաց՝ միայուցանելով զերիս անձինս. և այսպիսի պատճառանօք եւ հրաման յարքայէ ընկենուլ զնա յաթոռոյ յետ երեսուն և եթ աւուրց հայրապետութեն. և այնպէս գիշերայն հանին զերանելին յանտիոքայ, և աքսորեցին ՚ի հայրենիս իւր ՚ի մելտինէ քաղաք. և նստաւ ՚ի աեղի նր անարժանն եւզոյոս՝ որ մի էր ՚ի գլխաւոր արբանեկաց արիոսի: Նայց եկեղեցին անտիոքացւոց՝ որ ամենօրեայ ժամանակ մի վայելեաց ՚ի վերպուելէ սբյն մելիտոսի, եկաց միաց այնուհետև հաստատուն ՚ի նիկիական հաւատս. և այս եղև մի՚ի մեծամեծ և ՚ի պանծալի գործոց երանելոյն մելիտոսի՝ ասէ սբն եպիփան:

Յետ այսորիկ գուն գործէին արհանոսք առնուլ ՚ի ձեռաց սբյն եւսեբի սամոսատացւոյ զնամակն ընտրուելէ սբյն մելիտոսի, և պատուհասել. այլ ոչ կարացին, քանզի երանելին եւսեբիոս խոյս ետ յերեսաց նոցա ՚ի սամոսատիա: Եւ թէպէտ արիոսեանք հաւանեցուցին զթագաւորն՝ արձակել սուրհանդակ զկնի, զի առցէ ՚ի նմանէ զթուղթն. բայց եւսեբիոս արար պինդ առ արքունի սուրհանդակն, թէ ոչ կարեմ տալ ուրեք զայն գիր, եթէ ոչ իցեն ՚ի միում վայրի նք ամենեքին՝ որք ետուն ինձ զայն թուղթ հաւատոյ:

Օ յն լուեալ թագաւորին՝ բարկացաւ, և անդրն

ըէն յղեաց զսուրհանդակն հանդերձ հրո-
վարտակաւ , յորում սպառնայր հատանել
զալջնր , եթէ ոչ տայցէ զգիրն ։ Նայց երա-
նելին եւսեբիոս ոչինչ զանգիտեալ՝ ձգեաց
զերկոսին ձեռս իւր միանգամայն , և ասէ
ցսուրհանդակն . ածղ ո՛չ միայն զալջ իմ, այլև
զձախին հատցե՛ս. զի ո՛չ տամ ես զգիրս վճռոյն,
որ ի յաւերժական կշտամբիչ ամպարշտուե
արիանոսաց ։ Նբրև եհաս բանն առ թագն ,
զարմացաւ և գովեաց զեւսեբիոս . և դադա-
րեաց՝ ի խնդրելոյ զգիրն ։

Ա՛յլ կէտ այսչափ յայտնի տարացուցի ան-
մեղուե և ողջմտուե երանելոյն մելիտոսի՝
հասին՝ ի վե՛ր նր՛ հալածանք յայլափառաց և
յուղղափառաց միանգամայն ։ Ո՛ր ուր կէսք
յուղղափառաց անտիոքացւոց հաստատեալք
նովաւ՝ ի նիկիական հաւատս՝ զնր՛ կողմն ու-
նէին , և ոչ հաղորդէին ընդ եւզոյի արիոսեան
եպսկ, այլ երթային յեկեղեցին՝ որ՝ ի թաղն
արտաքոյ քաղաքի՝ հին կոչեցեալ , կային և
այլ դասք ուղղափառաց՝ ի քաղաքի անդ՝ որք
եւստաթեանք կոչէին յանուն սրբոյն եւստա-
թեայ անտիոքացւոյ . արդ սո՛ք՝ ոչ խորշէին
յեւզոյոսէ , նոյնպէս և. ոչ կամէին հաղոր-
դիլ նաև ընդ մելիտեան ուղղափառս , պատ-
ճառելով՝ եթէ մելիտոս յարիանոսաց լոյծ ձեռ-
նադրեալ , և մելիտեանք՝ ի նոցունց խոկ ա-
րիանոսաց լոյեն մկրտեալ . և այնպես յերկուս
բաժանեցան յանտիոք դասք ուղղափառաց ։
Ա՛րդ՝ զայնու ժամանակաւ յամի տեն 361 .
եղև մեռանիլ կոստանդեայ կայսեր՝ ի ստորը

ջանօք ըստ օտարանալ իւր ի շաւղաց ճշմարտիդ հօրն իւրոյ կոստանդիանոսի. և տիրեաց հա- մօրէն կայսերութեանն ուրացօղն յուլիանոս. և եհան հրաման, զի ամ ոք՝ որ էին աքսորեալ ի հրամանէ կոստանդեայ կայսեր, դարձցին ի տեղի իւր և յաթոռ իւր. յայնժամ դար- ձաւ և նեքն մելիտոս յաթոռն անտիոքայ. այլ ոչ եգիտ խաղաղութիւն:

Օ՛ի մինչև հասեալ էր նոր յանտիոք, սաստ- կացեալ էր անդ երկպառակութիւն քաղաքայ- ւոց ի պատճառս նորոյ եպսկ եդելոյ պատ- ճառանօք խաղաղութեանն: Վասնզի երկուք ո- մանք յարևմտեան առաջնորդաց, այր սքեն եւ սեբիոս եպս վերկեղայ իտալացւոց, և լու- կիփեր կալարիտացի եպիսկոպոս սարդենիայ կղզւոյն, որք աքսորեալ էին ի կոստանդեայ արքայէ ի թեբայիդ եգիպտացւոց, ի դա- նալն իւրեանց խորհուրդ արարին ընդ մի- մեանս՝ նախ քան զերթալն յարևմուտս արկա- նել խաղաղութիւն ի մէջ արևելեան ուղղա- փառաց երկիրեղկելոց յիւրերաց ի զանազան տեղիս. եւսեբիոս դէմ եդեալ գնաց յաղեք- սանդրիա առ մեծն աթանաս խորհել ընդ նմ վա սոցին իրաց ժողովական քննութիւն. իսկ լուկիփեր մեկնեալ ի նմանէ՝ եկն յանտիոք. և անձամբ անձին վձարել կամեցեալ զերան՝ սկսաւ զերկոսին կողմանս պեւստաթեանս և զմելիտեանս յորդորել ի մի միաբանութի սի- րոյ. և տեսեալ՝ թէ եւստաթեանք պնդել կան ի բաժանման իւրեանց, անխորհրդա- բար ի բանս նոքա եղեալ՝ ձեռնադրեաց զգլխա-

աւորն

ւորն նոյ զպաւլինոս երէց՝ եպս ՚ի վր նոյ իւր-
րև ՚ի վր առանձին հօտի զատուցելոյ ՚ի միւս
դասէ ուղղափառաց . որով հաստատեցաւ
յանտիոք կատարեալ հերձուածք երկոցունց
դասուց . որ տևեաց զամս ութսուն և հինգ՝
պէսպէս հակառակուբք ։ Ա՛ւ վ՛ա այսր բանի
եւստաթեանքն կոչեցան այնուհետև պաւ-
լինեանք , ևս և լուկիփերեանք . որ էր ա-
նուն խիթալի . զի կարծիք եղեն զլուկիփե-
րոսէ յարուցիչ լինել և այլ մոլորական հերձ-
ուածոց . թէպէտև տօնելի եղև յիւրում վր-

Ձակի ՚ի սարդենիա ։

Յետ եպսանալոյ պաւլինոսի եհաս յաղեք-
սանդրիոյ յանտիոք՝ զր եպան եւսեբիոս վեր-
կեղացի . և տեսեալ զյետին պատահարումն
երկոցունց դասուց ուղղափառաց՝ թէպէտև
տրտմեցաւ յոյժ , և դժկամակ եղև ընտ-
րուելի պաւլինոսի այնու օրինակաւ , բայց
զի մի թուհեսցի յանցաւոր ցուցանել զձեռ-
նադրօղն՝ լուռ եկաց , և զդուշացաւ հաղոր-
դել այսմ կամ այնմ կողմանն , զի մի բամբա-
սեսցի ՚ի միւս կողմանէն . մինչև մարթասցի
զելս խաղաղութե տեսանել ՚ի ձեռն ժողո-

վոյ եպսաց ։

Ա՛ւ մինչդեռ նա յանտիոք էր , եհաս անդր
սքն մելիտոս հարսպատ հովիւ աթոռոյն ան-
տիոքացւոց՝ յամի տն 362 . յոր խսկ և խսկ յա-
րեցան՝ ոյք միայնին նմա , այր են մելիտեանք .
խսկ պաւլինեանք օտարանալին ՚ի նմանէ ։
Տեսեալ սքն մելիտոսի զվարատումն հօտին
և զչարաչար բաժանումն յերկուս դասս , ոչ

գի-

գիտեր՝ Թէ զինչ գործեսցէ . բանի յինքն ձգել զհօտն բովանդակ՝ ՚ի բաց վարելով զպաւլինոս , անմարթ էր . և Թողուլ առանց հովուի զկես ժողովրդեանն և ինքնին ՚ի բաց գնալ՝ չար Ես . վ՚ոյ լաւ համարեցաւ վարել զառաջնորդուն իւր ՚ի վէր կիսոյն այնմ՝ որ աստաքոյ պարսպին , և ԹոյլԵտ պաւլինոսի առաջնորդել այլոց՝ որ՚ի մէջ պարսպին , ուր նստէր և եւզոյոս արիոսեան :

Ա՚ՀԴ այսու օրինակաւ եղեն ուղղափառաց յանտիոք երկու հօտք և երկու հովիւք . և Թէպետև հովիւքն էին անձինք երկիւղածք ընդ այ , բայց ժողովուրդքն ոչ միայն ՚ի կարգի երկիւղածութենէ . զի բաժանումն հօտի սկիզբն է ամ անկարգութենէ . նմին իրի և անպակաս էին ՚ի նա հեռ և նախանձ և չարախօսութենէ զիրերաց . մինչ զի և երևելի երեւելի անձինք յեկեղեցականաց Թեկնածուք այսմ կամ այնմ կողման՝ ընդ ակամբ հայէին ՚ի վէր միմեանց . յորում մասին մարդկային ինչ կրեաց և սքանչելի այրն այ հերոնիմոս դաղմատացի , որում եղև առնուլ ձեռնադրուն ՚ի պաւլինոսէ , և կծանել զմելիտոս և զմելիտեանս :

Այս եղև յետ կալոյ սքին մելիտոսի յաԹոռ իւր յայս նուճաղ՝ ոչինչ աւելի քան զտարի մի , կամ և նուճազագոյն , եկն յանտիոք յուլիանոս ուրացօղն ՚ի խաղալն ՚ի վէր պարսից . և զի ՚ի նոյն աւուրս ապաւինեալ էր առ սքն մելիտոս մանուկ ոմն որդի քրմի՝ խնդրելով զնա մկրտուԹենէ , և մելիտոսի փախուցեալ էր

զնա

ընա գաղտ առ ՝ըն կիւրեղ հայրապետ ե-
րուսաղէմի , իբրև զգացուցին զայս յուլիա-
նոսի՝ զայրացաւ յոյժ . և եդեալ՝ի վեր սքէն
մեկիտոսի զայլ ևս բարբանս՝ ետ արտասահ-
ման առնել ընա . և այնպէս երկրորդ ան-
գամ վտարանդի եղև քաջ հովիւն յաթոռոյ
իւրմէ ։

Ա.յև յետ սակաւուց սատակի յուլիանոս ՝ի
պարսս . և ՝ի թագրել բարեպաշտին յովիանո-
սի փոխանակ նը՝ յամի 363 , դարձան հրա-
մանաւ նը ամ աքսորեալքն ՝ի յուլիանոսէ ՝ի
տեղիս իւրեանց . ընդ որս և ՝ըն մեկիտոս դար-
ձաւ պատուով յաթոռ իւր յանտիոք . ուր էր
յայնժամ և ինքնակալն յովիանոս . որ գի-
տակն էր սրբութե և իմաստութե մեկիտո-
սի , և պատուէր զնա իբրև այր ՝այ . որում
և ետ հրաման՝ առնել ժողով եպիսց ՝ի քա-
ղաքի անդ , և հաստատել զուղղափառ հա-
ւատս ընդ նիկիական դաւանութե ։ Յայնժամ
հարկեցան նաև եպիսունք արիանոսաց՝ յորս
գլխաւորն էր ակակիոս կեսարացի , միաձայ-
նիլ ընդ ուղղափառս , և ընդունել զձայնն նիկիոյ
համադոյակից . վ՚ը ղի երկիւղ ՝ի թագաւո-
րէն կայր ՝ի վեր , և ակնածութե ՝ի սքէն մե-
կիտոսէ՝ որ սիրելին էր արքայի . վ՚ոյ և ին-
քեանք ևս ձեռն եդին սահմանի ուղղափառ
հաւատոյ զկնի ՝ըն մեկիտոսի և այլոց ուղ-
ղափառ եպիսց ։

Յայնժամ յաւել թագն ընդհարել մեկիտոսի
իբրև հարազատ հայրապետի քաղաքին զմեծ
եկեղեցին անտիոքացւոց զկինեաւն ՝ի կոս-
տան-

տանդիանոսէ , և զկոչեցեալն Տրուենիք ասկեղէն , ուր յառաջն բռնացեալ էին արիանոսք . և յայնմհետէ առաւել համարձակ վարեր մելիտոս զպաշտան հովուութենէ իւրոյ , և քարոզեր զհաւատս Ճշմարտութենէ ընդէմ հերձանոսաց և հերեսիովտաց : Ոմն և եպիսկոպոսին՝ որ իբրև առանձին եպս նստեր ի քաղաքի անդ՝ ունելով զսեպհականեալ ժողովուրդ իւր . զոր թէպետև կարօղ եր մելիտոս յինքն առարկանել ի ձեռն կայսեր , այլ ոչ կամեցաւ տրտմեցուցանել զպաւլինոս : Յայնմ ժամանակի յանտիոք քազումք յերեւելի արանց աշակերտեցան Եզնի մելիտոսի . և դաստիարակեցան պէսպէս օրինակաւ . յորոց սակի ձեռնադրեցաւ ի նմանէ ի սարկաւագութենէ բասիլիոս , որ յետոյ եղև եպս սեբաստիացւոց , նոյն կարծեցեալ յոմանց վերին պաշաւ ընդ մեծին բարսղի կեսարացւոյ . զի երկոքեան ևս մտերիմք էին Եզնի մելիտոսի : Այլ առաւել քան զամենեսին ձեռնասուն աշակերտ եղև մելիտոսի բերանն ոսկի Եզնի յովհան տիեզերալոյս վիքսն . որ և ի նմին իսկ ի մելիտոսէ ընկալաւ զմկրտութենէ ի չափս հասակի . ( ոմն և մայր նէ անթուսա՝ ըստ ոմանց ) : Այս զի ոսկեբերան ընկղմեալ էր յարտասրին գայրութիւնս , սա ինքն երանելին մելիտոս ձգեաց զնա յուսումն ճշմարիտ հաւատոյ . զոր թէ չէր արարեալ նէ , ոսկեբերանն հանդերձեալ էր յաջորդ լինել լիբանիոսի իմաստասիրի ի հելլենական գպրոցի . և այնպէս զրկեր եկեղեցին յայնպիսի լու-

սա-

սաւոր վէրպէ ։ մինչ զի որքն մելիտոս Ճանաչէի իրաւամբք սկզբնաւորի՛ն ամ քառեաց՝ որք առ Թեցան կաթուղիկէ եկեղեցւոյ ՚ի ձեռն ոա կեբերանի ։

Պատեաւ սիրն մելիտոսի յաթոռն անտիոքայ զայս նուագ իբրև զամն հինգ ամ վեց , դարձեալ երրորդ անգամ աքսորեցաւ ՚ի վաղեսի արիոսեան արքայէ մի ուղղափառ վէրպուէ ։ զի թէպէտև վաղէս զառաջինն ՚ի կողմն ուղղափառութէ էր , այլ յետոյ թէպէտ զինի ալանդոյն աբիանոսաց գարձաւ խսպառ ՚ի նոյ կողմն , և յաղոյց հալածանս ընդ ուղղափառաց ։ և արտասահմանեաց զամ գլխաւոր էպսկոպոսս նոյ ։ Ընդ որս և զքեզ մելիտոս ընկեցէ յաթոռն անտիոքայ՝ ետ վարել յհայոց յամ իբր 370 ։ այլ ըստ գեղեցիկ ասից ոսկեբերանին՝ ո՛չ միայնակ վարեցաւ մելիտոս , այլ ոմն թէ զամ քաղաքս անտիոքացւոց ասէ առնել ընդ ինքեան զնաց ՚ի հայս ։ զի սիրտ ժողովրդեանն էր զհետ քո հովուին իւրեանց ։ և թէպէտև մարմնով մեկնեցան ՚ի նմանէ , այլ հոգւով ընդ նմա էին ։ ոմն և հոգ սրտի նոր էր հանապազ ՚ի վր հօտին իւրոյ նաև ՚ի բացակայն լինելն ՚ի նոցանէ ։

Ամանք ՚ի ոաւիկն անտի առ յոյժ զժկամակութեն կամէին քարկոծ առնել զքաղաքս պետն , որ նստեաւ ՚ի կառս՝ տանէր ընդ իւր զմելիտոս յաքսորս ։ բայց զի հայրապետն արգել զնա ։ և զգետաւոք իւրովք ծածկեաց և պաշտպանեաց զանձն քաղաքապետին ։

զոր պանծալի նկարագրէ բերանն ոսկի ՚ի
ներբողեանն Մելիտոսի։ Այս մինչդեռ ՚ի հայս
եր սքեն Մելիտոս՝ հանդարտեալ յապարակի
միում իբրև յառանձնութիւնէ , եկին յողջոյն ներ
մեծն բարսեղ հայրապետ կեսարու , և մինչ
Թարակիոյ եղև նմա իբրև ձշմարիտ բարե-
կամ ըստ այմ ։

Այս եղև՚ի վախճանիլ վաղեսի չարաչար օրհա
սաւ յամի 378 , յայնժամ գրատիանոս բարե
պաշտ կայսրն՝ յորդորանօք հանդերձ սպա
րապետին իւրոյ Թէոդոսի մեծի ( զոր և զկնի
արար իւր գահակից) , հրաման ետ ամ եպիս
կոպոսաց ազգսորելոց ՚ի վաղեսէ դառնալ յա
Թոռս իւրեանց . և այնպես դարձաւ նաև սքեն
Մելիտոս յանտիոք ։ Այլ և յայնժամ ոչ է
գիտ զխաղաղութիւն յերեսաց երկպառակուե
ողղափառաց . զի տակաւին միաբանեալքն
ըստ պաւլինոսի ոչ կամէին հաղորդիլ ընդ նմ. և
այնչափ առաւել , զի ուր սքեն Մելիտոս խոս
տովանող հայրապետն հալածանօք և աքսո
րանօք վտարանդի շրջէր , ևս քան զևս զօրա
նայր պաւլինոս եպս յեկամուտ առաջնոր
դուե անտիոքայ . և ստանայր իւր Թիկունս
յարևմտեայց ՚ի ձեռն զօրաւոր դրչի մեծին
հերոնիմոսի ձեռնադրելոյն յիւրմէ . որ ըստ
վկայելոյ բոլանդայ ՚ի բանս եղեալ չարա
խօսայ՝ ոչ ունէր ուղիղ կարծիս զմելիտոսէ .
մինչ զի և հռոմայ հայրապետն սքեն դամա
սոս առաւել ձեռն տայր պաւլինոսի՝ քան մե
լիտոսի , միամտե՛ ՚ի զոյցս՝ զոր տային հե
րոնիմեանք և այլ արևմտեայք քննակեալք

յայն-

յայնժամ յարևեալս. զոր և անկեղծուԹիւն խոստովան լինի բարոնիոս կարդինալ։ *յայտ է (ասէ) ՚ի վկայուԹենէ սրբոյն բարսղի, զի ՚ընդ դամասոս, ոչ սովոր է հանդիպել, պատրեալ եր իւիք իւիք սուտ պատմուԹիւք, որք հաստանէին յունկն նր ‖. ապա Թէ ոչ՝ այլ ՚ամաԹուռք և մեծամեծ հարք ո՛չ Ճանաչէին զպաւլինոս, այլ՝ զմեղիտոս միայն արժանաւոր հովիւ անտիոքացւոց. զր էին ՚ընդ աԹանաս աղեքսանդրացի, ՚ընդ եւսեբիոս սամոստացի, ՚ընդ գրիգոր ՚ածաբան, ՚ընդ բարսեղ, և եղբայր նր ՚ընդ գրիգոր նիւսացի, ՚ընդ ամփիլոքիոս իկոնիացի, ՚ընդ կիւրեղ եչմացի, ՚ընդ սեղաքիոս լաւոդիկեցի. և այլք ընդ[2]։

Ա՚րդ սոքա ամենեքեան Թէպետև միաբան ընդ սրբոյն մեղիտոսի կարօղ էին ՚ի բաց Ճանել զպաւլինոս, բայց խնայէին ՚ի նա իբրև ՚ի բարի այր ծերունի. միանգամայն չկամէին և զարևմտեայս խռովեցուցանել՝ որոց ձեռն տուՀէէր ՚ի նա. և սակայն չկարէին ևս տանել աղմկաց յուզելոց յարևելս յերեսաց կուսակցացն պաւլինոսի, որք խորշէին ՚ի մեղիտեանց ոչ ՚ի հերձուածողաց, և բանախրն դրբք լինէին ՚ի հաստատել զհերձուածն. մինչև զօրանալ ատելուԹէ յերկուց կողմանց, և կոչել զմիմեանս անուամբ հերետիկոսաց արիոսեանս և սաբէլեանս. զի մեղիտեանք առաւել վարէին զձայնս երեք իբօստասիս՝ նշանակուԹ անձնաւորուԹե. և պաւլինեանք առաւել զձայնս մի իբօստասիս՝ նշանակուԹ գոյացուԹե. ուր միտք ամենեցուն էր ուղիղ,

այլ

այլ միտք նոցա ի վէր մնոցա ընկերին չէր ուղիղ, այլ արմատ ամ հակառակութեանէր բաժանումն երկուց աթոռոց ի միում քաղաքի։ Որին վճռ բազումս աշխատ եղեն ջընն մեկնտոս և ջընն բարսեղ, և յղեցին և ս պատգամաւոր հանդերձ գրովք առ հայրապետն հռովմայ և առ եպսունս արևմտից՝ բառնալ ի միջոյ զայս կրձիմն հակառակութեան։ Այս յետ բազում անցից անցելոց՝ յայնմ միջոցի փոխեցաւ ի կենաց մեծն բարսեղ յառաջնում աւուր 379 տարւոյն. և յետ լինն ամսոց ի սկզբան առաջնկայ հոկտեմբերի եղև ժողով եպսոց յանտիոք։ Ակեաւ էր անդր և շապուհ առաքինի զօրավար՝ կարգել ի կայսերէն ի սանձել զյանդգնութիս արիանոսաց, և ի սանձահարել զխռովարարս ի մէջ եկեղեցւոյ։

Ընդ իբրև բազում բանք եղեն ի ժողովի, ի պնդել մեկտեանց՝ թէ մեկտոս է հարազատ ժառանգ աթոռոյն անտիոքայ, իսկ պաւլինոս եկամուտ, և պաւլինեանց՝ թէ պաւլինոս է յուղղափառաց ձեռնադրեալ, իսկ մեկտոս յարիանոսաց, ոչ գոյր վախճան կռուոյն կամ լուծումն կնձռոյն։ Յայնժամ ընդ գրելոյ թէոդորետոսի՝ երանելին մեկտոս հեզն քան զամ որդիս մարդկան՝ քաղցրութեամբ խօսել սկսաւ առ պաւլինոս օրինակ զայս. Ընդ որովհետև ևս ինձ յանձն արար ձերն ըզհոգս ոչխարացս այսորիկ, և դու զմասին նոցա զհոգն յանձին կալար, իսկ ոչխարքս միաձայն են ձգմարտութեանդ ի խոստովանութեան բարե-

պաշտուԹԵ, օՆ առեալ միաբանուԹԸ՝ի ՄԻ ջոդեսցուք զՀօտ ՅՈՆ ոմՀ քարեկամ, և զՆդդրը գահասկրուԹԵ՝ի միջոյ՝ի քաց արասցուք. և միով հոգւով հաւասարուԹԵ սրաԾեալ զՀօտս՝ միօրինակ խնամ կալցուք քարեկաւգուԹԵ ՆՐ։ Այս եԹԷ աԹոռս՝ որ՝ի մերում միջի կայ, երկպառակուԹԻ ծՆանի՝ի յաջորդս, ես զայդ ևս հնարեցայց առնել անՀետ. զի ահասոյիկ դնեմ՝ի վէր ՆՐ զաւետարանն ՅԾայելն, և վկայուԹԻ դնեմ, զի ոչ ոք՝ի միՆջ Յոր լինի աԹոռոյն, այլ յերկուց կողմանց ՆՐ նստցուք երկոքեանս։ ԱյԹԷ ես վաղքան զքեզ փոխեցայց յՀԷ, դու միայնակ ՀովՀԵաս այնուՀետև զՀօտս. ապա եԹԷ քեզ Հասցէ վախճանիլ, ես իմովքանն խնամարկեցից Հօտիդ։

Այն կանոնի իմաստուն և գեղեցիկ առաջարկուԵս միաբան գտան ամ՛ ժողովեալքն. և ատիպեցին ևս երդմամբ զոմանս ոմանս՝ յորոց վէր գոյր կարծիք յաջորդ լինելոյ յաԹոռն անտիոքայ, զի՝ի կենդանուԹԵ միոյ յերկուց անտի՝ յետ վախճանի միւսոյն, ՅՐ կամ մելիտոսի և կամ պաւլինոսի, ՄԻ ոք այլ լեցի եՅս միոյ մահին ժողովրդեան։ Այայց սակայն ծերունին պաւլինոս հրաժարեալ յիւրոցն՝ ոչ կամեցաւ յանձն առնուլ զառաջարկ մելիտոսի խաղաղասիրի, այլ պնդեր՝ ԹԷ լինի և յաջորդայ իմոյ առանձին անկ է քուն աԹոռն անտիոքայ, զի յուղղափառաց եղև իմ ձեռնադրուԹԻ։

Յայնժամ բարկացաւ շապուհ զօրավար, և

ը արքունի իշխանութեն՝ զոր ունէր, յանձ-
նեաց զեկեղեցիս անտիոքացւոց՝ի ձեռս մե-
ծին մելիտոսի. և պաւլինոս միաց իբրև ա-
ռանձին եպս՝ տեսուչ մասին ժողովրդեանն
զատուցելոյ: Նոկ ժողովեալ եպսունքն թէ-
պէտև ոչ կարացին բառնալ իսպառ զվէճ ա-
թոռոյն, բայց զամ փոյթ՝ի մէջ առին՝ պա-
կանել խաղաղութէ և սէր՝ի մէջ երկուց
դասուց ուղղափառաց՝ մելիտեանց և պաւլի-
նեանց. և այնպէս յայնմհետէ ոչ ևս խոր-
շէին այր յեղբօրէ իւրմէ իբրև՝ի հերձուա-
ծողէ, այլ կային իբրև ոչխարք՝ի ներքոյ
այլևայլ ողջամիտ հովուաց միաբան սիրով:
Ի՝ինչդեռ այսոքիկ իրագործէին, ՚ի նմին
ամի 379. մեծն թէոդոս՝ բարեպաշտ և ա-
ռաքինի սպարապետն գրատիանոսի՝ յետ խոր-
տակելոյ զբարբարոսս՝ եկն անձամբ առ
կայսրն՝ տալ զաւետիս յաղթութէն. և մինչ-
դեռ ընդ ինքնակալին էր՝ եաես՝ի տեսլեան
գիշերոյ զայրն այ զմելիտոս անտիոքայ հայ-
րապետն, զի արկանէր զնովաւ քղամիդ ար-
քայական, և սպակ դնէր կայսերութէ՝ի
գլուխն. և յարուցեալ ընդ առաւօտն պատմէր
զայս միւսմ կիսերկուց յընտանի բարեկամաց:
Նա ահա յետ սակաւ աւուրց ստուգեալ գրա-
տիանոսի և յայլոց զյաղթութէնն՝ զոր արար
թէոդոս, արար զնա իւր գահակից. և թա-
գաւորեցոյց զնա՝ի վերայ արևելեան մասին
ինքնակալութէ՝ ՚ի տեղի վաղեսի հօրեղբօր
իւրոյ:

Նա իբրև եկն թէոդոս թագաւոր՝ի կոս-
տան-

տանդինուպօլիս յամի տն 380. կամեցաւ ժո-
ղով գումարել տիեզերական վ՛ն բառնալոյ
զմնացուածս արիոսեան մոլորուե՛, և զնոր-
ընձիւղ աղանդ մակեդոնեանց հոգեմար-
տից, միանգամայն և վ՛ն հաստատելոյ զդրւ-
դոր ճշմարտին յաթոռ պատրիարգուե՛ Թա-
գաւորեալ քաղաքին։ Այլ՛ի կոչել անդ ըզ-
բազմուե՛ եպսց յամ կողմանց, առանձինն
ինն մեծարանօք հրաւիրեաց՛ի ժողով անդր
զնոսն մելիտոս իբրև զայր առաքելանման՝
զծանուցեալն՛ի տեսլենէ, և ո՛չ՛ի տեսոյ.
որ և եղև իբրև պսակ՛ի գլուխ հալիւր և
յիսնից՝ոբ հարց ժողովելոց. քանզի ամե-
նեքին հայէին՛ի նա իբրև՛ի սիւն եկեղե-
ւոյ և՛ի ջահ ուղղափառուԹե՛ խոստովանո-
ղական արդեամբք փայլեալ, և սրբուե՛ վա-
րուք պայծառացեալ. զոր ոչ յագի գովելով
ճծաբանն գրիգոր, ՛ի կոչել անդ իւրում
զնա հովիւ՛ քաջ և առաջնորդ առաքինի,
պարզ սրտիւ՛, անկեղծ վարուք, լի հոգւովն
Ա՛յ, շնորհալի և պատկառելի դիմօք. յորոյ
յերեսաց սիրէր ասէ՛ի տեսօղս զեղումն
հոգւոյն. և որպէս անուշամբ՝ նոյնպէս և ար-
դեամբք մելիտոս՝ մեղրաւէտ։

Ա՛սայց եղև՛ի սկզբան ժողովոյն և այս ինչ
սխրալի. զի ըստ որում գրէ Թէոդորեատոս, ՛ի
դալ ժողովիլ եպսց՛ի կոստանդինուպօլիս՝
պատուէր ետ ինքնակալն Թէոդոս, զի մի՛ ոք
ասասցէ ինքեան՝ Թէ ո՞՛ի նոցանէ իցէ մե՛ն
մելիտոս. վ՛ն զի կամէր ինքնին ատուգել՛ի
կերպարանաց անտի՛ որ երևեցաւն նմա՛ի

տեսլեան ։ Ա՛րդ իբրև մտին ՚ի պալատն ամ
բաղմութիք եպատաց յոգւոյն ինքնակալի , շուրջ
հայեցեալ արքայի զամենեքումբք՝ եւթող զա
մենեսին , և ընթացեալ առ՚ն մելիտոս՝
գիրկս հարկ խանդաղատանօք իբրև որդի
հարազատ հօր իւրում . համբուրեր անյա
պաքար զաչս սքին և զշրթունս , և զգլուխն
և զանձն և զձեռս . և պատմեր ամենեցուն՝
եթէ զիարդ եղև նմա տեսանել զերանելին
մելիտոս ՚ի տեսլեան ։ Ա՛ւ ապա ողջունեալ
զամ՚ն եբ հարս՝ աղաչեաց ՚ի խորհուրդ մտա
նել վ՚ն կարևոր խնդրոց եկեղեցւոյ , ոյր վ՚ն
ժողովեալ էին ։

Յայնժամ յառաջ քան զամ՚ հայրապետք
եբ. ժողովոյն ունելով գլուխ և առաջնորդ
խորհրդոյ իւրեանց զսքն մելիտոս՝ նաւու
ցին զնծաբուխն գրիգոր յաթոռ պատրիար
գուե կոստանդնուպօլսոյ . բայց նա ՚ի վախ
ձան ժողովոյն ինքնակամ հրաժարեր ՚ի պատ
ուոյ անտի վ՚ն յաչազանաց ոմանց . ոմք պատ
ճեցաք ՚ի վարս նր ։ Ա՛րդ մինչդեռ տակաւին
ժողովն եբ պսրատակեր ՚ի քննութիւն խնդրոց
հաւատոյ ընդեմ հերձուածոց ժամանակին ,
հիւանդացաւ երանելին մելիտոս . և զի ար
դէն անցեալ էր զաւուրբք , ՚ի սակաւ աւուրս
յաղթեալ ՚ի ցաւոցն՝ փոխեցաւ յանցաւ և
յանանց ՚ի կեանս , յաւերեալ առ՚ն եբ հայրա
պետս՝ լի տոհմականօք առաքինի արդեանց

յամի տն 381 ։

Ա՛ւ այս եղև սուգ մեծ ամ հարց ժողովոյն
և ինքնակալին . ապա արարին նմ մեծաշուք

հան

հանդէս յուղարկաւորութեան բազմութիւնք եպիսկոպոսաց հանդերձ թեդրաւն և ամբնակ ջոք թագաւորէ քաղաքին. քանզի քաղաքն ամ լայր ընդ զրկուածն յայնպիսւոյ կենդանի ազգ. և այնպիսի դղրդումն և ամբոխ երևեցաւ յաւուր յայնմիկ՝ ի կոստանդինուպոլիս, մինչև ասել մարդկան առ միմեանս, եթէ այսօր՝ ի վեր երևեցաւ՝ արչափ բազմութիւն քնակչաց էջն՝ ի քաղաքիս։

Նոյնժամայն ժողովոյն Թոդեալ աւուրս քանի մի զքննութիւն իրացն առաջիկայից՝ ոչ յայլ ինչ պարապէին, բայց՝ ի դովել յատենի զնոքն մելիտոս ներբողական ճառիւք, և՝ ի կատարել զկոծ նոր գերեզմանական և արձանական ատենախօսութիւք. զի ոչ մի կամ երկու՝ ի հարց անտի ներբողեցին զնոքն մելիտոս՝ ասէ Թէոդորէտոս, այլ ամենեքին՝ որք միանգամ յաջողակք էին բանիւ։ Այր ոմն երևի, զկնի ածաբանին գրիգորի, և զնոյն ամփիլոքիոսի յաջորդին բարսղի, խօսեցաւ զնոյն գրիգոր նիւսացի զայն ճառ իւր պանծալի. որոյ ըսկիզբն և ընթացքն ունի այսպէս.

* Ա՛ձեցոյց մեզ զնոր աւազբելոյն նոր աւազբեալս, որ ծնուեցաւ ի մեռեալսն աւազբեալն (կամ դասեցաւ ընդ աւազբեալսն). ձգեցին սքքն առ ինքեանս զնմանօրինակն, զնահատակն նահատակքն, զպսակեցն պսակեալքն, զնոքն հոգւով մանկունքն արտիւք, զքարոզն քանին սպասաւորք քանին։ Այլ երանելի է հայրս մեր՝ առ աւազբելական խոբանակցութիւնն և առ քո՛ի վեր ելանելոյն.

քայց ողորմելիք մեք . մինչ զի վաղահաս որ-
բութիս մեր ոչ թողացուցանէ երանել զբա-
րեմասնութիւն հօրն : Այս լաւ էր լուծանե-
լովն՝ ըստ քոյ լինել, բայց մեզ ծանր և չարա-
չար՝ որոշիլ ի հօրն հովանաւորութենէ . վա՜ զի
ահա խորհրդոյ ժամանակ , և խորհրդատուն
լռեալ կայ . պատերազմ շուրջ զմեօք մա-
ծեալ , պատերազմ հերձուածողական . և
որ զօրավարն լինի՝ ոչ ոք է . վտանգի հասա-
րակաց հիւանդութիք մարմին եկեղեցւոյս ,
և զբժիշկն ոչ գտանեմք : Տեսանիք , յորպի-
սի իրս մերքս կան :

Այո՛, եթէ ոչ կարողութիւն է , պնդելով
զիմ տկարութիս՝ ելանել ի վերոյ քան զծան-
րութիւն թշուառութես , և արձակել քան ար-
ժանաւոր ախտիս . ոչ առաքինիքն այնոքիկ
արարին ( ի որ յառաջ քան զիս խօսեցան զար-
ձանական Ձառս նը ) , մեծաձայն ի վեր հօրն
թշուառութեան ողբալով . այլ զի՞նչ կրե-
ցից , զիարդ բռնադատեցից զԼեղուս ի սպա-
սաւորուի բանի , որ օրինակ լիմն իբրև ծանր
կապանօք՝ թշուառութիս է կապեալ . . . .
Ա՛վ չար նաւաբեկութիս . զիարդ ի նա-
ւահանգստի անդ յուսոյն մերոյ նաւաբեկե-
ցաք . զիարդ բիւրաբարձն նաւ նուիրն իսկ
լիութիք սուզեալ՝ մերկս զմեզ զերբեմն հա-
րուսաս եթող : Ո՛ւր պայծառ առագաստն
այն , որ հոգւով սքով միշտ պարզիւր . ո՛ւր ան-
քոյթն հոգւոյ մերոյ ղեկն , որով ըստ երեքա-
կեանս և հերձուածողականս անվտանգ նա-
ւարկեաք . ո՛ւր անայլայլակն հանձարոյ խա-
րիսխ ,

բիսխս , յոր ամ՝անեբկևանուբք վաստակեբքս
Հանդչեսք ։ ոբր քաջ զեկավարն , որ առ վե-
բին Ժայռն ուղղեր զնաւակն .....
Նա արդ ծանեբուք , ոմ՝ոք եր այրն . քարե-
տոհմ յարևելից , անարատ , արգար , ձշմա-
բիտ , ճճապաշտ , մեկնեալ յամ՝ իրաց չա-
բաց ։ զի և ոչ նախանձեսցի մեծն յովք , ե-
թե նորայն վկայութիբք և նմանօրն նր զարդ-
արեսցի ... Նա որ յածի ընդ Հս ( սատանայ ) ,
և առ մեզ չբերեցաւ ... ոչ վիրօք մարմնով զգ-
գայուհեան դառնացոյց , այլ՝ի նմին ինքն՝ի
գլխոյն զմեզ կողոպտեաց , և ընդ գլխոյն ան-
ցեալ գնացին պատուհականագոյն մեր զգայ-
ուութիքն ։ և այլն՝ որ՝ի կարգի ։

Այր՝ի նկարել զգովելի գովելի Հանգամանս
երանելոյն մելիտոսի՝ գումարեալ էին ասէ
յանձին սբբոյն ձիրբք դաւթի , սողոմոնի , մով-
սեսի , սամուէլի , յովսեփայ , դանիէլի , մե-
ծին եղիայի և յովհաննու մկրտչի , և պօղո-
սի առաքելոյն ։ Թող զայլ Հանդիսս առաք-
քինուբնե , երբիցս արտասահման լիներ ասէ
վ՛ս ձշմարտուբ , զի յիմի փառաւոր արասցէ
զամենայնբք երբորդուբնին ։

Արդ՝ եղև փոխումն նբ Հայրապետին մելի-
տոսի՝ի փետրվարի ժբ , կի ժբ . և չետ ա-
ւուրց կատարման սգոյ նր՝ հրաման ետ քա-
րեպաշտն Թէոդոս , և բարձին զպատուհական
մարմին նբոյն , և Հանեալ՝ի Թբերական քա-
ղաքէն փառօք մեծաւ՝ տանէին յաթոռ իւր
ընդ ըղձման Հօտի նր , և յամ՝ քաղաքս՝ ընդ որ
անցանէին , լիներ նոր յուղարկաւորուբնե՝ի

ձայն երդոյ և օրհնուեց . մինչև բերել Հա-
սուցին յանտիոք , և թաղելին առ շիրմի ծըն
բաբելայ անտիոքայ Հայրապետին ։ Որ և
ի հինգերորդ ամի փոխադրութե մարմնոյն ,
այն է յամի ՚ռն 386 . խաւեցաւ ՚ձեն յովհան
ոսկեբերան ՚ի քահանայութե իւրում զՀառ
իւրներջողական ՚ի մեկնութս , որոյ սկիզբն է .
* Ինդ ամ սեռական ժողովրդեանս ( կամ ընդ
ամ կողմն ՚ձե երեսից ) շրջեցուցանեմ զաչս
իմ , և զամ քաղաքս սատ եկեալ սեռանեմ .
և ոչ ունիմ՝ ելիլ զիմ երանեմ յառաջագոյն .
զսոնիըն մեկնութս՝ որ այսքան և այսչափ վար-
ելիլ ՚ի պատիւ զկնի մահուանն իւրոյ , եթե
զսերդ ձեր՝ որ այդչափ զկնի վախճանի նորա
յաղագս Հօտատուիչն ձերոյ յուցանեք քա-
րեմտութե ։ ։ ։ ։ Ուանզի ահաւանիկ նման
իսկ հինգ ամ անցեալ է , յորմէ հեռ սա
իւր փափագելին չը երթեալ գնաց Հայրա-
պետան ձեր , և իբրև թե երկիւղ կամ եւանդն
զնա տեսեալ լք մարմնով կենդանի , այնպես
ջերմեռանդն զթալի սիրով ընդառաջեցիք
նմա ։ ։ Ոչ զի յանդիման ատապան ՚ձյն հա-
սեր , ասէ ՝ * երանելին մեկնուս ՚ի պահա-
րանիս յայսմիկ ծածկեալ կայ ։ ։

Ընդ քաց ՚ի բազմապատիկ գովեստից սըկն՝
յուշ առնեմ և զայս ինչ զարմանալի , թե ա-
կենդանութե և կեաս մահուան այնչափ էր
սիրելի Հովիւն Հոգի իւրում , մինչ զի * մարք
մանկանցն զանց առնելին զանուշամարք Հարց
իւրեանց՝ զՀաւատս և զնախնեաց , և զանուն
զերանելոյն մեկնուսի զնելին ծնեալց իւր-
բեանց

Եանց որդեկայ . քանզի յաղթեր քնութենն՝ երկիւղածութենն պարծանք ... և այնքան քաջութեամ եղև այս , մինչ զի ամ ուրեք՝ և ՚ի մուտս և ՚ի փողոցս և յագարակս և ՚ի Հանապարհս , զի ամուստեք շրջահնչեալ ունիցիք զանուն սքեան ։ Եւ ոչ եթէ միայն առ անձանն կրեցիք զայս , այլև առ օրինակ և նշան մարմնոյն . զի զոր վ՚ա անուճանն արարիք , զնոյն և վ՚ա պատկերի նորա արարիք . քանզի ՚ի յուսպս և ՚ի մատանիս և ՚ի սեամս և յորմս առաքաստի և ՚ի սենեակս , և ամ ուրեք զնք պատկերն նկարեցին քաջութք ։

Ո այս հատուածՀ ՚ի մէջ առնու և եօթնե- րորդ նբ ժողովն ընդեմ պատկերամարտից . նոյնպէս և գամասկացին յովհան յերկրորդ Հառն յաղագս պատկերաց . ուր զնքն մեկնե- տոս՝ մարտիրոս կոչէ , վ՚ա չարչարագործաց վա- րուց նորա և խոստովանողական արդեանցն զամաւուրս կենաց իւրոց . ըստ որում և նիւ- սացին նահատակ կոչեաց , և պատկեալ կեր- կինս ։

Այլ և այլ ներբողեան համառօտ , բայց գե- ղեցիկ և խորհրդաւոր լի՝ յօրինեալ ՚ի զենոբայ ուսեցեան , Թերևս ծովակից եպսկ , ՚ի նզն մեղիտոս . որ գտանի միայն ՚ի Հառընտիրս մեր . և սորա սկիզբն է . * ( )րհնել է այն , որ յառաջ քան զնկարեցն յոլովայնի գիտէ զարդարն , և մինչեև եղեալ են յարգանդ՝ ընտրեալ են նմա անօթք պատուականք ՚ի սպաս պաշտամանն նորա ։ Եւ զի ՚ի ներբող- ղեանս Հարց՝ զոյգ ըստ եկեղեցական մատե-

նա-

նագրութեց բովանդակի պատմութեի սբյն մելիտոսի, վ'ոյ յայսմաւուրք մեր ոչ'ի մէջ բերեն առանձին վարս գնմանէ. ոմք և ձառընտիրք գներբողեանս և եթ. առաջի գնեն՝ եթէ առ մեզ և եթէ առ այլս. այլ մեք ըբոլանդայ քաղեցաք զվարս և զանցս սբյն'ի սոկրատայ, 'ի սոզոմենոսէ, 'ի թէոդորետոսէ, և 'ի գործոց ժողովոց և'ի բանէց հարց. որպս և յայտ է'ի գրելոցս'ի փառս ՟այ և'ի պատիւ սբց և'ի շահ լսողաց։

XXXX

գեղեցիկ աշխատասիրութիւք քաղեաց Ծոխագոյն զվարս սքին յեկեղեցական պատմուչեց. և մեք զնոր զհետ գնացաք, ինձա ապատան ալարեալ զծանօթութիւնս պէս պէս։ Մինչ թէ բոլանդ զներքոզեանս ոսկեբերանի և նմանացուսն գիտէ, այլ անգէտ է ներքոզենին զինքեան, որ կայ առ մեզ։

(2) Զոր մեզ անկ էր նշանակել զտարադէպ կողմնասիրութիւն ումանց ումանց յարևմտեան մատենագրաց, որք յայտ մնալն սխալանաց հերոնիմոսի լինին ջատագով, փոխան մեր փոքր ի շատէ յուշ առնէ նոցա հաւատարիմ այրն բոլանդ, գրելով ասա, թէ սքն մելիտոս վասն խոստովանութիւն ուղղափառ ճշմարտութիւն հալածեցաւ և աքսորեցաւ՝ առանց իրիք յանցաւորութիւն, և ի վեր բերելով այսպէս. * Որովհետև այս ամ այսպէս գործեցաւ, իրաւամբք ունի ոք զարմանալ, թէ զինարդ սքն հերոնիմոս զայս օրինակ գրէ ի քրոնիկոնն. ,, Մելիտոս եպս սեբաստիոյ հայոց՝ յակակիոսէ և ի գէորգեայ արիանոս եպսաց փոխաբերի յանտիոք. և յետ ոչ բազում ժամանակի ի վեր անցանելոյ՝ որովհետև ընկալաւ զերիցունս, զորս ի քաց ընկեցեալ էր նա խորդի նր եւդոքսիոսի, անկաւ ըստ ամենայնի դատ տիւ աքսորանաց՝ յեղակարծ հաւատափոխութեքն ''։ ,, Եւ ընդդէմ սէ յաւել ( հերոնիմոս, ասէ իրաւամբք ,, բոլանդ) ըստ ակակիոսի և ըստ գէորգեայ զեւսեբիոս և ,, զայլ ուղղափառս, որք միանգամ եղեն յընտրութիւն նր։ ,, Եւ զի եւդոքսիոս արիոսեան յայտնի խաբէութք ըզ ,, բուամբ ածեալ էր զաթոռն անտիոքայ, զի՞նչ զար ,, մանք են՝ եթէ զգործս ինչ նր ունայնացուցեալ իցէ ,, յաջորդն նր (ուղղափառն մելիտոս)։ Կամ զմրս ար ,, դեօք յերիցանոյ հաւատասցուք, թէ ընկեցեալ էր նա ,, (եւդոքսիոս), եթէ ոչ զհաստատիչս ողջամիտ վերպու ,, թէ, յորոյ յեզծուածն ինքն նկրտեր։ Այլ և՛ս գառ ,, նագոյն է նեան, զոր ձգէ ի մելիտոս ժամկագիրն ա ,, զեքսանդրեան. ընդ ի՞նչ. ե՞. ի ա ամի յուլիանոսի, ի ,, հիւպատոսն մամերտինոսի և նեբեւտայ, յասել անդ ,, իւրում. ,, Արդ այսու օրինակաւ մելիտոս, որ գա տասպարտեալն էր յաղագս ամպարշտութիւն իւրոյ և այլոց սպիրատուութեց, գարձ արարեալ յանտիոք՝ յափշտակեաց զառաջինն աթոռն ''։ Այլ այսոքիկ և ,, որ այլ ևս սասյօդ բանք՝ յարիանոսաց անտի հնարե ,, ցան, և գուցէ նաև յուղղափառաց պաւլինեանց. յո ,, րոց առեալ իցէ զայն և սքն հերոնիմոսի՝ քահանայ

,, ձեռ

,, ձեռնադրելոյ ի պաւլինոսէ. ըստ որում է համատասխ-
,, րել ի բանից սրբոյն եպիփանու, որ այսպէս գրէ. Է
,, հերձ. հգ. 35. ,, Բայց են ոմանք, որք ոչ գիտեմ, ա-
, տեսուք արդեօք ընդեմ նր (այ սրբոյն մելիտոսի) չար-
, ժեալք, եթէ նախանձու գրգռեալք, և կի թէ ցնս-
, բայինս գերասաւիճան բարձրացուցանել կամեցեալք,
, ինչ ինչ ընդանէ ձախողակի համբաւեցին. ոմն թէ ոչ
, ի ուղղափառ հաւատոյ յարուցեալ էին ընդեմ նր
, այնպիսի աղմուկք, այլ յաղագս եկեղեցական իրաց
, ինչ և գժտութեանց եղելոց ընդ նա և ընդ ուխտ եկեղե-
, ւոյն. և թէ ընկալեալ էին նր զոմանս, զորս կան-
, խաւ ի բաց էր ընկեցեալ և նզովեալք դատապարտեալ:
, Ա՛յլ այսոցիկ ոչ ամենևին ունկնդիր լինիմք. մանա-
, ւանդ զի ի խմբի անդ՝ որք յարեալ էին ինա, յայնմ
, հետէ միշտ և հանապազ՝ ոմն յառաջն անացաւ, բար-
, գաւաճեցաւ գաւանութեն ուղիղ հաւատոյ'' : Ջայ-
,, սսիկ եպիփան: Եւ սակայն (զգոն չփոթէ եպիփան
զվերջեալսն յեւգոքսիոսէ, որպս թէ ի մելիտոսէ էին
մերժեալ. յարէ բոլլանդ) զնարդ մարթ էր ի միջոցի Ը
,, աւուրց, ասել՝ թէ կանխաւ ի հալորդութէ որոշեալ
,, էին նր զոմանս, և յետոյ անդրէն ընկալեալ. զի ձայնդ
,, այդ բաւէ, կանխաւ, ի վաղ ժամանակաց, երևի զվեծա-
,, գոյն միջոց ժխմի պահանջել: Թող զի, զինչ մեղ էին
,, յայդմ, եթէ զորս միանգամ ի բաց որոշեալ էր նր
,, ի հալորդութէ եկեղեցւոյ, յետ ընդունելոյ ինոցանէ
,, զվճարութիւն ապաշխարութէ՝ անդրէն կացուցեալ էին
,, ի տեղիս իւրեանց ||:

Ճարտար խոհեմութէ ուղղագրէ բոլլանդ զերկդիմու-
թէ բանից սրբոյն եպիփանու. զի մի հարկեսցի ասել,
թէ և եպիփան փորր մի հովացեալ էր խրատու հերո-
նիմեանց կամ պաւլինեանց ի մելիտեանց. որոյ պատուղ
էր և յետոյ գժտիլն նր ընդ սակեբերանի: Նոյնպէս չա-
փով և եթէ մեղադիր լինիմք բոլլանդ հերոնիմոսի, զի մի
սոխպեսցի ասել, թէ նա ելեւ էջիք իրաք պատճառ խռո-
վութէց արևելեսցց, էլ զի կամելով թեկին ածել պաւ-
լինոսի ընդեմ մելիտոսի, և էլ զի եպիփանու և թէոփի-
լոսի ընդեմ կողմանն սակեբերանի, եթէ ոչ ուղղակի,
գոնէ անուղղակի: Արդարև առիւծ էր սրբն հերոնի-
մոս ի պատառել զհերետիկոսս և զորոգինեանս, բայց
ճիրանք նր մխեցան և յարս արդարս և սրբս. զի սուր
գրչին հերոնիմեան յաջ և յահեակ գիտէ խոցոտել. թող
զի ի մահ վիրաւորել զսրբն յովհան հայրապետ Երմի,

զոր-

զսակեբերանն անգամ կծանել կամեցաւ խորին առա-
ծելմա, թէ բառնաբաս անգամ խոնարհեցաւ ինձ կեղ-
ծաւորութեն. և ոչ գիտէ՝ թէ պօղոս ոչ կշտամբի ի պօ-
ղոսէ. զի արդարև միւս պօղոս էր Ոսակեբերան :
Զայս յայն սակս նշանակեցաք, զի մի ոք գայթակղե-
ցի ընդ մարդկօրէն գայթակղութեն հերոնիմոսի, որ և
զբուն գովութեն սրբոյն մելիտոսի ի պարսաւ շրջէ անգի-
տութե՝ պատրել ի չարախօսաց նր. մինչև չկարել տանել
և ջատագովացն հերոնիմոսի. վա՛ զի նաև վա՛ պանծալի
Ժողովոյն անտիոքայ եղելոց առ յովհաննոսիէ, յորում ըս-
տեմ եկեղեցական մատենագրաց ժամանակին՝ սրբն մելի-
տոս իբրև գլուխ ուղղափառաց հաստատեաց զնիկիա-
կան դաւանութեն և զձայնդ համագոյիւդ, և հարկեցոյց
զհակառակորդս անգամ ձեռն դնել այնմ ուղղափառ
խոստովանութե, սեռանեմբ ի քրոնիկոնն հերոնիմոսի
օտարաձայն բամբասանս. զոր ոչ կամիմ յառաջ բերել,
ոչ և ոչ զպատ ի պատ մեկնուել բարոնիոսի, զոր ուղ-
ղագրե բոլլանդ. չյա՛ս է մեզ ասել ստուգութե և անա-
չառութե ըստ քալքին բոլլանդոյ. * Զոր ինչ ընթեռնուիք
,, զայսմ Ժողովոյ ի քրոնիկոնն սրբոյն հերոնիմոսի, զայնս
,, կամ ինքն ոչ գրեաց, և կա՛մ ի համախոհից պաւլինո-
,, սի էառ, և կարի դիւրահաւան եղեալ հաւատաց ||:

* Ասելի ինչ քան զայս ասել աւելորդ է :

# ՎԱՐՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Աբեղն Արինասայ եգիպտացւոյ։

Ա. Նոյեմբ. 10։ Յ. Ա. Նոյ. 11։ Ա՛ստ-ղնպ. Գ. ստ-ճղէ = ստ-ճղը. Նոյ. 11։ Ա՛եպափը. ստ ստ-բէոսէ. Հպտ. Ը. երէս. 250 = 258։ (1)

ԱՐՋԱԿՈՒՄԸՆ Ի վկայս՝ նշանագործ ոմն զհամանուն իւր՝ քաջ և անարատ զօրականն քրիստոնեայ Արինաս՝ էր ազգաւ եգիպտացի, ծնեալ յեգիպտոս կիր՝ի սահմանս նը, և հաւատով քրիստոնեայ, այր գովելի ամ մասամբք հոգւոյ և մարմնոյ, առաքինի և հզօր և գեղեցիկ։ Նա էր զինուորեալ՝ի զօրս Թագաւորացդիոկղետիանոսի և մաքսիմիանոսի՝ ընդ ձեռամբ վիրմիլիանոսի կիր փիռմիանոսի զօրագլխի. վերակացու անուանի գտեալ՝ի գնդին՝ որ կոչիւր ղուտիլիակունայ կամ ռուտիլիակաց, ՚ի վուիւգիա գաւառի՝ ՚ի մայրաքաղաքն կուտիա (որ ռամկօրէն քեօթահիա ասի)։ Եւ փայլէր իբրև աստղ լուսաւոր՝ ՚ի մէջ հեթանոսաց՝ պայծառ և երևելի հանդիսացեալ առաքինաւքն։

Նա եղև յաւուրսն յայնոսիկ յարեաւ հալածումն

ծուծն սաստիկ ընդեմ հաւատացեալոցն քրի. և եհաս նաև ի կուտիա հրամանն արքունի հրովարտակին, որ ունէր օրինակ զայս. Անագաւորք յաղթօղք՝ որք զնշան յաղթուէն զգեցեալք, դիոկղետիանոս և մաքսիմիանոս, ամենեցուն՝ որ ընդ մեր օրէնս էք՝ ողջոյն. քանզի լուաք և տեղեկացաք ձեզ յանծոցն տալ. վասն լաւ համարեցաք մեք զպաշտօն նոցա փուճով կատարել անխափան՝ ի բագինս նոցա. և ամենեքեան յամ տեղիս իշխանք և քաղաքապետք այսու օրինակաւ՝ ի պաշտօն անծոցն զանձինս յօրինեսջիք՝ ամենեքումբք հանդերձ. յամ տեղիս արամբք և կանամբք և որդւովք զպատիւ և զզոհ անծոցն անխափան կատարեցէք. և որ ոք դիմադարձ մերոց հրամանացս լինիցի, հրամայէ մեր քանջուածիս ամ տանջանօք և չարչարանօք՝ ի կենացս բառնալ։

Եւ այսպէս հրամանն ընդ ամ տեղիս քարոզեալ լինէր. և՝ ի քաղուամ խռովուածէն և՝ ի սաստիկ ահէն տագնապեալ հաւատացեալոց՝ այսր անդր փախչէին, ոմն ուրեք զանձինս կարիցեն ապրեցուցանել, և ևս քազմագոյնք՝ ի ձեռս անկանէին հալածչաց՝ արբանեկաց չարին. որք քազում խոշտանգանօք և տանջանօք նեղէին զնա առնել զկամն ինքնակալացդ. այլ քաջքն և առաքինիքն վկայէին՝ առ ոչինչ համարելով զտանջանս և զմահ. իսկ թոյլքն և երկմիտքն՝ արտաքոյ նորին հանդիսին լինէին։

Օ՛ ինչ և ինաս. իբրև լսեր՝ ի հազարապետն

տէն զանօրէն պէրամեան Թագաւորացն՝ խորհեցաւ ՚ի բաց կալ ՚ի զինուորութենէն. ընկեր նոյր լռելեայն զկամար զօրականուէ, և անձամբ զանձն արտաստհման արարեալ՝ ելաներ ՚ի կուտիայ քաղաքէ, և ընթանայր յաջնապատ տեղիս, լաւ համարեալ քնակակից լինել գազանաց վայրի՝ քան կցորդ ամպարշտուէ կռապաշտից։ Այս ոչ միայնակեաց առանձնացեալ՝ անդադար փառաբանութիւք օրհնէր զաստ զցայգ և զցերեկ, հանդերձ խոտաբուտ կենօք և պահօք և խարազնազգեցութիւք. և մաքրեալ հոգւով՝ արժանի լինէր ձայնին լուսաւորութեան։

Իբրև անցին ամք երեք, և տակաւին ՚ի միտ առնոյր՝ եթէ տեսեն հալածանք քրիստոնէից, և անթիւք ՚ի սքոց պսակին մարտիրոսութիւք, վառեցաւ բորբոքեցաւ սիրտ նր ՚ի նահատակութիւն՝ արժանի իւրումն առաքինի քաջուէ։ Այս զօրութիւք շնորհացն քրի յարուցեալ ինքանէ անդրէն ՚ի քաղաքն կուտիայ. և ոչ գտեալ զիւր զօրապետն առաջին՝ յաւուր միում հանդիպի եմուտ ՚ի տեսարանն (ոյր արար զկին և սքեն գորդիոս հարիւրապետն), ուր պիւռոս արքեպիսկոս դատաւոր քաղաքին ՚ի պատիժ կռոց տայր ոճն կատարել ուրախութենէ, և ձիրնթացս առնել. և յանդիմանեաց զմոլուին հեթանոսաց, յայտնելով զքրիստոնէութիւն իւր և զերբեմն զօրականութիւն։

Ապա եղև բանս այս յականջս գատաւորին, և՝ առ օրէն հրաման տուեալ դնել զնա ՚ի

գիսպահոջ, ապա ՚ի վայրիճ անդր կոչեր զնա յատեան, և հարցաներ՝ եթէ զիարդ լիցեն ցեր մտանել ՚ի մէջ քաղմուճ, և համարձակ քրիստոնեայ զանձն անուանել։ Իսկ սքէն մինաս լցեալ հոգւով՝ պարծէր ՚ի նոր վասն այնպիսի համարձակուճ, ասելով ցդատաւորն. այսպէս պարտ է խոստովան լինել զՅԾ Ձիմարիտ. վ՚ր զի լոյս է, և խաւար ՚ի նմա ոչ գոյ. և առաքեալն նորա այսպէս մեզ ուսոյց, սրտիճ հաւատալ յարդարուճ, և բերանով խոստովանել ՚ի փրկուճի։

Ասէ պիւռոս. մի կորուսաներ ոչ մինաս զքաղցը կենցաղս, և մի փոխեր զլոյն կենաց՝ որ ցանկալին է ամենեցուն, ըստ վաղահաս մահու դառնուճե. այլ անսա իմուսն խրատու, հաւատալուճց ըստ մեզ ՚ի պաշտօն դից ըստ հրամանի ինքնակալաց, և երկես յառաջին պատիճ քո, և առաւել շքոյ և բարձի հասցես։ Պատեցաւ քաջ նահատակն ըստ աղայական խոստմունս դատաւորին, և ասէ. ոչ գոյ կշռուճ ըստ երկնաւոր և ըստ երկրաւոր քաղիս. և ոչ ՚ն համօրէն ՚ի կշիռ գոյ ըստ միւս հոգւոյ. այլ դու եթէ չնորհ ինձ կամիս առնել, փորձեա զիս տանջանօք՝ որք առնեն ինձ զՁիմարիտ փառս և զերանուճի։

Յայնժամ բարկացեալ իշխանն՝ հրամայեաց պրկել զնա և հարկանել արջառաջլօք սաստիկ յոյժ. մինչև սրբուճն ոտոգաներ զերկիրն. և սքէն գոհանայր զՏՆէ, և խնդրեր ժուժկալուճի համբերել առնջանացն. և ապաստաւորք բռնաւորին ասիպէին ղսքէն հա-

ւանել կամաց դատաւորին . ընդ որս և ոմն յիշխանաւորաց պեգասիոս անուն՝ ասէ ցմիւնաս . տեսանես այր դու զինաս անլսողութե . արդ մինչև են մաշել՝ամ մարմինք քո, յանձն առ զոհել ըս առաջիկայս ժամանակի պատշաձից . զի Թերևս և՝ածն քո տեսանելով զանտանելի ցաւս՝ներեսցէ քեզ վ՛ի հարկէ հնազանդութեդ :

Ա. յս բանք անարժանութե առաւել դառնակսկիծ ցաւ տային սբյն քան զհարուճածս գանից . վ՛ոյ խոժոռ դիմօք հայեցեալ առ ջսր խրատատուս՝ ասէ . ՛ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ ոյք գործէք զանօրէնութի . քանզի ես ՚ոյ իմոյ զոհեցի և զոհեցից պատարագ օրհնութե . որ տայ ինձ ՛ի փափկութի համարել զչարչարանս . ունիմ ես օգնական զ՚ած՝ որ կարօղ է զիս զօրացուցանել ՛ի տանջանս, և զիշխանն ձեօք հանդերձ յաւօթ առնել . որ ստիպէք զծառայն ՚ոյ հեռանալ յ՚ոյ , և կորստեան ձանապարհին ուղևորս լինել ըս ձեզ , որ տանի ՛ի տանջանս յաւիտենից :

Ա. սէ իշխանն . եթէ արդարև ո՞չ զգայեր այդպիսի դառն և անողորմ հարուճածոց : Ա՛ինաս ասէ . մի՛ ակն ունիր ՛ի ձեռն դառն տանջանաց յաղթել իմոց իմաստուն խորհրդոց . զի այժ և զօրուի մեծի Թագաւորին մերձ է առ իս : Յայնժամ հրամայեաց իշխանն կախել զսբյն զփայտէ , և քերել յերկար . և քարոզն աղաղակեր և ասէր . մի՛ Թագաւոր զայլ ոք խոստովանիր հակառակ մերոց Թշ՚րացն : Ա. սէ երանելին մինաս . մի՛ հայ-

հայհոյեք ղերկնաւոր և զանմահ թագն՝ ընդ մահկանացուսդ հաւասարեալ. նա է թագը մեծ՝ի վեր ամէնկրի՝ ածխ, որ ունի իշխանուն՝ի վեր իշխանութեց։ Իշխանն ասէ. որ է ածխ մեծ՝ զոր ասես, թէ նա ետ զիշխանուն թագաւորաց, և նա է՝ որ զամէնս ընդ իշխանութեն ունի։ Ասէ երանելին մինաս. ամէն մեր յաքն՝ որդին ամ կենդանւոյ, որ առաքեցաւ՝ի հօրէ և՝ի հոգւոյ, և ետ մեզ աւետիս բարեաց. որումծուն կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց, և ամ աղգ խոստովան լիցի՝ եթէ տէր է յաքն՝ի փառս ամ հօր և սքն հոգւոյն։

Ասէ իշխանն ասէ. չգիտեմ զինչ խօսիս վ՛ն աներևութից և երևելեացս անհասանելի. բայց զայս գիտեմ, զի թէ ոչ հնազանդիս, հրամանք թագաւորացն անողորմ բարկութք զքեզ՝ի կենացս բառնան։ Ասէ երանելին. զայդ դաւիթ յառաջագոյն մարգարէանայ՝ ասելով. Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք. որ նստի՝ի քերովբէս, սասանեցաւ երկիր։ Ա՛ւ այսոքիկ վ՛ն տնօրէնութենն են ասացեալքս. զոր ոչ կարես իմանալ խաւարեալդ մտօք. զի չառ սքյ աւետարանին կորուսեալդ չիմարութի է. իսկ մեզ փրկեալոցս նորոգուի կենաց՝ի կեանս. վ՛ն և ամէն համբերեմք. քանզի ոմ մեկնեսցէ զմեզ՝ի սիրոյն քնի ընդ պօղոսի, նեղութի՞, թէ անձկութի, թէ հալածանք, թէ սով, թէ մուր, և որ այլ ինչ վտանգք և պէսպէս տանջանք ոչ յաղթեսցեն ծառայից ամ։

Յայնժամ իշխանն հրամայեաց աղ ցանել՝ի վր վիրաց նր, և մաղելէն քրձիւ շփել։ Ասէ աբէն ամ զմիտսն առ ածծ ունելով, և ցանկութիւք բարեպաշտուէն անպարտելի լեալ՝ օրհներ զածծ։ Ասէ՝ի զարմանալ ամենեցուն ընդ ժուժկալութիւն աբէյ վկային՝ ասէ իշխանն. զիարդ այդպէս յամառել և անդել կաս՝ի տանջանս անզգայաբար։ Ասէ երանելին Մինաս. Թագն իմ և ածծ՝ նա տայ ինձ այժ և զբուն յաղթել քոց ամենաչար հնարիցդ. զի արժանի եղէց անառուտ խոստմանց, զոր ակն ոչ եառես, և ունկն ոչ լուաւ, և՝ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց ածծ սիրելեաց իւրոց։

Ասէ առաւել բարկացեալ իշխանն՝ հրամայեաց հրով խանձողել զծառայն ածծ. և այնպէս այրեցին և խորովեցին կայծակամբք և ջահիւք զմարմին աբէյն։ Ասէ աբէն ոչ ինչ տայր պինախ. այլ իմանալեօքն՝ի սրտի աղաչէր զածծ զօրացուցանել զնա. և կայր զուարթ դիմօք՝ յոչինչ գրեալ զցաւսն։ Իշխանն ասէ. ո՛վ թշուառական և վայրենաբարոյ՝ զի՞նչ ուրնիս քնուլի արտաքոյ մարդկային քնուես։ Ասէ երանելին Մինաս. ածծ է, որ զօրացուցանէ զիս, և կատարէ զսաստկեալն մարգարէին. Թէ անցանիցես ընդ հուր, մի այրեսցիս. և քոց նր զքեզ մի կիզցէ։ Ասէ չէ ինչ շինջանուտ հուրս առ անշէջ հրոյն. նմին իրի ասէ Տէրն մեր. մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմինն, և զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք յայնմանէ՝ որ կարող

Եյեւ սպանանելոյն արկանել՛ի հուրն յաւիտենական, զոր պատրաստեալ է սատանայի եւ համարարաց նր։

Այլ զարմացեալ իշխանին ընդ իմաստուն եւ զբաւոր պինատուճութիս սքյն ասէ. ուստի՞ եղեւ քեզ ուսանել զայդպիսի բանս՛ի զինուճորութենէ գոլով կարգի եւ՛ի բանակի, եւ ոչ՛ի հրահանգս դպրոցայ։ Ա՛ինաս ասէ. քո՞ի են եւ բանքս, եթէ ես տայց ձեզ իմաստուի՝ խօսել զարժանն առաջի դատաւորաց եւ թագաւորաց։ Ա՛սէ իշխանն. եւ մի՞թէ գիտէր քո՞ն ձեր, եթէ այդ անդք անցանելոց իցեն ընդ ձեզ։ Ա՛ինաս ասէ. եւ կարի իսկ քաջ քանզի ոճ է ամենագէտ։

Իբրեւ ետես իշխանն, եթէ ոչ կարէ տալ պինի սքյն, եւ կամ զարհուրեցուցանել տանջանօք, դարձեալ՛ի հրապոյրս մատչէր մեքենայից. ասէ. կամի՞ս, զի թողից զքեզ աւուրս ինչ. ոյզ զի խորհելով զվարս կենցաղոյս՝ եկեսցես՛ի լաւուի, եւ փոխեսցիս յայդպիսի կամացդ, եւ արասցես զհրամանս թագաւորացն։ Ա՛սէ երանելին. խորհեցայ բազում անգամ եւ ծանեայ զձիւարտուիին՝ պաշտել զոճ կենդանի եւ գնալ՛ի Ճանապարհս նր. եւ ոչ պաշտօն մատուցանել դիւոց, եւ կամ հաւանել հրամանաց թագաւորացն՝ որք մերժեն յոյ կենդանւոյ։

Այլ սրտմտեալ իշխանն՝ հրամայեաց բրօք հարկանել սաստիկ, եւ ջաղխել զպարանոց նր եւ զծնօտս. եւ տանել արկանել կապանօք՛ի բանտ։ Այլ յետ աւուրց դրձեալ հարցփորձ

արարեալ և հաստատուն գտեալ զերանելին
՚ի քո , հրամանս եւ արկանել՚ի վր գետնոյ
տատասկ երկաթի , և շրջշրջել զվկայն ՚ի
վր նր . մինչև արիւնն ոռոգաներ զերկիրն
ամ : Սակ սքն ոչինչ տայր պինի , այլ գոհա-
նայր և օրհներ զաձ , ոպ թէ շրջելով՚ի վր
փափուկ ծաղկանց դաշտի :

Յայնմ վայրի եղիոդորոս ոմն դեսպանա-
պետ ասէ ցիշխանն պիւռոս . ոչ գիտես՝ եթէ
հպարտ է ազգ քրիստոնէից . և քաղցր է նոցա
մահ՝ որ վասն այն իւրեանց՝ քան զկեանս .
տուր սմա այսուհետև վճիռ ըստ փոխելուն
դորա , և սպան զդա սրով ոպ զմահապարտ,
զի արհամարհեաց զաջծան և զերիցն : Սակ
իշխանն վերստին ողջախոհական բանիւք հրա-
պուրեր զսքն այ , որպս թէ մի կորիցէ այրն
քաջ . և խոստանայր նմա պարգևս և պա-
տիւս : Այնոսա ասէ . ես փութամ՚ի պա-
տիւն անանց երիցուին յաւիտենից քոի , զոր
խոստացաւ սքց իւրոց . քանզի այս պատիւս
անցաւոր է , իսկ այն՝ յաւիտենական , զի ա-
նանց լուսոյն և կենացն յաւիտենից ժառան-
գորդս զմեզ կացուցանէ ըստ այմ՝ սքս :

Տեսեալ իշխանին զանշարժ հաւատս նր՝ որ
՚ի քո , և զանփոփոխ միտսն , հրամայեաց զե-
րանելին սրով սպանանել : Սակ սքն զուարթ
երեսօք և հաստատուն մտօք ընկալաւ զզ-
վճիռն . զի ցանկայր ելանել՚ի մարմնոյս , և
մտանել առ աձ՝ առ որ անձկացեալն էր : Այս
իբրև տարան զնա ՚ի տեղի կատարման , սմ
բարձեալ զաչս իւր յերկինս , և տարածեալ

զզ-

զձեռս իւր՝ ասէ. Կոհանամ զքէն Տէր, որ արժանի արարեր զիս մեռանել վասն անուանդ քո սրբոյ. և ոչ թողեր զիս զծառայ քո ի զօրութենէ քումմէ. և ոչ հեռացաւ յինէն պարգեւք ընորհաց քոց. այլ ետուր ժուժկալութիւն պնդութենէ ի պէսպէս տանջանս, զոր ածին ի վերայ իմ. և հաստատուն և անշարժ պահեցեր զմիտս իմ և զխորհուրդս ի սէր ածութենդ քո։ Այս արդ Տէր մի թողուր ի զօրութենէ քումմէ և ի ընորհաց, զի կատարեցից զընթացս իմ քաջութեամբ և ձշմարիտ խոստովանութեամբ. և արժանի եղեց ընկալս զվկայս քո ժառանգել զանապատումն զկեանսդ, և փառաւորել զՀայր և զորդի և զսուրբ զոգիդ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Այս խոնարհեցուցեալ ծունր՝ մատոյց զպարանոց իւր սրոյ. և վաղվաղակի հատին զգլուխ երանելւոյն ընկալաւորին հրամանի քրնաւորին. և այսպէս կատարեցաւ սքն մինաս եգիպտացի յամենայնն նոյեմբերի ժե. յամի Տեն իբր 303. ի փառս և ի գովութիւն Այ։ Այս հրամայեաց անօրէնն իշխանն այրել զմարմինն սքեայն. այլ զմնացեալ նշխարսն ի հրոյն ժողովեալ հաւատացեալոցն՝ ի ծածուկ տեղւոջ պատսպարեցին անմոռաց յիշատակաւ. մինչև դադարեաց հալածումն, և շինեցաւ վկայարան յանուն սքեայ վկային. յորում տեղւոջ կայտարին բժշկութիւնք բարեխօսութեամբ սքեայն։

Այսպէս գրէ Ձառընտիրն, յուցանելով զտապան սքեայն լինել անդ ի կուտիա. իսկ Մետափրաստէս ասէ, թէ ըստ յառաջագոյն

պատուիրեալոյ սէյն միանապայ՝ նշխարք նո՛ր տա-
րեալ եղեն ՚ի Հայրենիս իւրում Եգիպտոս . ո-
րով Թուխի ցուցանել՝ Թէ սա ինքն է երևելին
և մեծն միանս , որոյ տաճարն կայր յաղեք-
սանդրիա փայլեալ նշանագործութիւք . ոմն և
սուրիոս աստանօր գնէ զպատմութիւն հրաշից
սէյն միանապայ . զոր մեք ըստ Ճառընտրաց և
յայսմանուրայ ունիմք գնել զկնի վարուց
միւս միանապայ ընկերին երմոգինեայ : Այլ
սակայն նշխարք ինչ երկոցունց ևս անխտիր
երևին լինել յաղեքսանդրիա և ՚ի բիւզան-
դիա , և երկոքին միօրինակ երևելի ցուցեալ
՚ի նշանագործութեն . ըստ որոյ և յայսմ վայրի
գրէ յայսմանուրքն զմինապայ եգիպտացւոյ ,
Թէ *յետոյ տարան զգլուխն ՚ի կոստանդի-
նուպաւլիս . և առնէ անդ մեծամեծ աքանչե-
լիս ՚ի հիւանդս և յալեկոծեալս ՚ի ծովուս , ՚ի
փառս քրիստոսի մերոյ ։

xxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxxx

## Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք ։

(1) Ոչ՝ սէր օրինակ առ յոյնս՝ անուանք երկոցունց հա-
մանուն սէյ կոչին յունգլկան Մինաս , և ՚ի սեռա-
կանն՝ մինայ , նոյնպէս և ՚ի ուղ՝ լինի մինաս , մինասայ ,
և և մինայ կամ մինայի . զոր լատինք գրեն՝ Մենաս , մե-
նէ կամ Մենայէ : Այլ առ ՚ի ցուցանել՝ Թէ ըստ
անուան չիք զանազանութիւն լեզուաին սէյս . յորմէ և ըստ
ճանաչուանս ձեզ՝ չիոնթուէնէ ծագեցաւ . զի ՚ի Ճառըն-
տիրս մեր և ՚ի շաբաթնոցի , որպես և ՚ի Ճառընտիրս յու-
նաց , և առ սուրիոսի գեկտ. 10. ընկերն երմոգինեայ
կոչի միայն Մինաս . ըստ որում երևելի էր բազմիք զի-
գիպտացին . և նշանագործութիւն իսկ նա առաւել ան-
ուանի , ոչ սեպի ՚ի վարս նո՛ր գրեալ ՚ի սէյն աճառա-
ան

սէ և յաշակերտէ նը՛ ի տիմոթէոսէ. այլ քանզի մեծա-
փրաստէս՝ ձէ վայ կոչէ և զեգիպտացին, նմա կամե-
ցաւ ընծայել և զնշանագործուածին սուրիոս։ Ա՛յլ
մէք՝ որ ի ձեռագիրս մատենից գրաստան սէյն մարկոսի
տեսաք զյուշական բնագիրս վկայաբանուածէն Ա՛ննասայ
եգիպտացւոյ՝ զորոյ զլատին թարգմանուածն բերէ սու-
րիոս, ոչ տեսաք առընթեր զպատմուածն սքանչելեացն,
զոր պատուհասեալ ատտանօր սուրիոս ՛ի Նոյեմբ. 11. վա՛յ
համարիմք՝ թէ չիտնեցաք այսր փոխադրեալ իցէ ՛ի
պատմուէ միւս Ա՛ննասայ. ոա՛ ասացուք անգանօր։
Ա՛յսպէս թէ այս չիտնեցին երևի ՛ի վաղուց մտեալ,
վա՛յ և գժուարին ՛ի փարատել. ըստ որում երկոքին իսկ
սքանչէն երևէլն և նշանագործ. քանզի տեսի ես ինք-
նին ՛ի գրաստան սիրակուսայ քաղաքի սիկիլիացւոց զհին
պատկեր սէյն Ա՛ննասայ (որպէս կարծիւր) եգիպտացւոյ.
յորոյ ՛ի մի կողմն նկարեալ էին չարչարանք նորա, և ՛ի
միւս կողմն հրաշագործուածիք. որք թէև չկան նոյն
աքանչելիք՝ որք գրին և զՔածէն Ա՛ննասայ (զի ոչ կիշեմ
որոշակի), սակաւին մեծ ապացոյց են, թէ երկոքին
սքանչ ծանուցեալ էին իբրև նշանագործ և երապահաս
վկայ. և մէք ՛ի նոյն միտս ունիմք ձնալ։
Ա՛յս չէ ինչ. այլ այն է զարմանալի, զի վարք Ա՛ննա-
սայ եգիպտացւոյ՝ որ գտանի ՛ի Ճառընտիրն մեր Գ,
ունի զհատուածս երևելի ՛ի վարուց սէյն գորգիոսի հա-
րիւրապետի. իմա զայնչափ բանս՝ զորս տեսանես գրեալ
՛ի մէնէջ ըստ Ա՛. Ճառընտրի ՛ի վկայաբանուածէ գորգիոսի.
հատ. Ա՛. երես. 425. մինչև ՛ի սկիզբն 429 երեսի։ Ուր
գիւրին էր մեզ ասել, թէ գրիչն մեր չփոթուածք իւիք
փոխանցեալ իցէ զայն բանս ՛ի վարուց գորգիոսի ՛ի
վարս Ա՛ննասայ. բայց տեսանելմք՝ զի և մեծափրաստէս
զնոյն բանից քաղուածն երկրորդէ աստ ՛ի վարս Ա՛ննա-
սայ, գնելով և զայն վկայուն ՛ի բերան սէյն՝ զոր մեծն
քարսեղ և Ճառընտրին Ա՛. պատմեն ասացեալ ՛ի սէյն
գորգիոսէ. *յայտնի եղէ այնոցիկ՝ որ զինէն ոչ հար-
ցանէին, գտայ այնոցիկ՝ որ զիս ոչ խնդրէին ||, այ-
լովքն հանդերձ։ Ուրեմն և այս չփոթուածն ՛ի վարուց
է մտեալ ՛ի վկայաբանուածն Ա՛ննասայ եգիպտացւոյ՝ վա՛
նմանուէ ինչ գործոց նը՛ ըստ գորգիոսի։ Ա՛յն իրի հարկ
եղև մեզ այնպէս ընթանալ ՛ի կարգի վկայաբանուածս,
զի մի թողցուք հետս չփոթուածք։
Ա՛ւ այս ընտրեցաք առնուլ ինչ ինչ ՛ի Ճառընտրէն և ինչ
ինչ ՛ի մեծափրաստիսէ, որք ՛ի միոյ ալբերէ են առեալ,

այլ

այլ ոչ հաւատար հետևողութեաբ. որ ի ճ. կոյ օրինակ կայսերական հրովարտակի, զորոյ ղիմաստան ևեթ ի մէջ բերէ մետափր. և ըստ հկեհին առ մետափրատեան կային հատուածք ինչ բանից՝ որք պակասէին ի ճ. Թող զձև առեննախօսուածց և նկարագրութեց առնչանաց, որք ոչ տարբերին ըստ իրին, այլ միայն ըստ ոճոյն. Թէպետև ուրեք ուրեք ըստ բառից անգամ միաբանին։

Օրինակի վե գիցուք զսկզբնաւորուն երկացունց օրինակաց. զի ճ. սկսանի այսպէս. * Վկայուն մինասայ ,, եգիպտացւոյ. ի նոյեմբեր. ժե։ Յաւս թագաւորին ,, դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի էր հալածուին սաստիկ հաւատացելոց ի հրամանայ նոց յամ ծա և ի գաւառս ըստ իւրեանց իշխանուբ ||. ևն։ Եւ մետափր. այսպէս. * Վկայութին որ և փառաւոր մեծի վկային քրիստոսի մինասայ եգիպտացւոյ, որ մարտիրոսացաւ ի կուիս տիա։ ի թագաւորել դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի՝ ,, պատերազմողաց և թշնամեաց ճշմարիտ թագին, հրովարտակք ըստ ամ հասանէին տեղեաց՝ զամպարիշտ նոցա ,, հրամայեալ պաշտել զկռօն ||, ևն։ Զայսոսիկ եգեալ՝ ըստնիմք աստանօր այլ բան կարևոր ի ծանուցումն. եթէ մնայ այլ ինչ դիտելի, տեսցի ի վարս մինասայ ընկերին երմոգինեայ։

# ՎԱՐՔ ՆՈՒ ՎԱՌԱՅՈՒԹՈՒՆ

Այլն մեղեայ կամ մեղեսի եպիսկ, որ և կոչի միւս Աելիտոս [1]. և երկու աշակերտաց նոր Բուրայ քահանային, և Շ լինու սարկաւագին:

Ա. Ո. Ի. Ն. Ո. Ն. Ս. Ո. Ի. Ն. Ն. Ի. Ն. Ո. Ի. Ն. Ն. Ի. Ն. Ո. Ի. Ն. Ն. Ի. Ն

Նա ապա հրաժարեր յածային կոչմամբ ի զինուորութենէ, և յամս ծաղկաց կենցաղոյս, և զիանձնական վարս ողջուներ. յանապատս քնակեր պահօք և աղօթիւք, տքնութեամբ և արտասուօք, և գետնախշտի անկողնօք, առաջելով զյածծ ի տուէ և ի գիշերի վտ փրկութենէ անձին իւրոյ։ Յետ այնորիկ լցեալ Հոգւով Սրբով՝ եղև ի սրտին ելանել և քարոզել անհաւատից զբանն Աստուծոյ. վասն որոյ եկն ի մեղեսոլիս կամ մելապօլիս, որ և մեղիկերտ կամ մեղկանա քաղաք կոչի. այն է վրգան ըստ Ճառընտրաց յՀին պարսից, ուր գանիել մարգարէ զտեսիլն ետես. նմին իրի այլք ասեն, եանց՝ի քաղաքէն լապետայ յեղամ. յոր մերձ է ամուրն շուշան կամ Հոչ քաղաք պարսից յիշատակէ՝ի գիրս գանիէլի. և անդ՝ի բնակչաց երկրին Հարկաւորեալ՝ ձեռնադրեցաւ յեպիսկոպետէն լապետայ կամ բիլթզաբադայ քաղաքի, ի Թէզն գադիաբայ (որ յետոյ եղև խոստովանող և վկայ) յեպսուէի քաղաքին բիլթզաղակայ կամ բիլթրազակայ։ (4)

Ա.յլ իբրև գնաց անդ, և սկսաւ քարոզել զբանն Ճշմարտութեան, ոչ ընկալան զնա քաղաքացիքն այն. քանզի հրոյ և արեգականն սպաս տանէին. և արարէ ամն երիս՝ ոչինչ շահեցաւ ըստ տենչանաց սրտի իւրոյ՝ Հանդերձ բազմապատիկ տառապանօք. մինչ զի բազում անգամ դանիւք խոշտանգեալ լինէր յանօրինաց, և ձգձգեալ ընդ փողոցս՝ կիսամահ արկեալ լինէր արտաքոյ քաղաքին. բայց երանելին անդրէն դառնայր, և քարոզէր՝

ի զի ումանց ումանց առանձինն, և ի զի հրաշ
պարակաւ։

Ա՛յլ՝ի վերջնումն նուճագի՝ի հալածիլ իւրումն անտի իսպառ՝ անկծ զքաղաքն զայն, ո՛չ վա՛ հալածանաց անձին իւրոյ, այլ վա՛ ոչ հաւանելոյն՝ աւետարանական քարոզութե՛ն նր և հաւատոյն քո՛ի. ասէ. արդ որովհետև Թշուա՛ռականդ՝ի քաղաքս՝ յետին վատթարութե՛ անարգեցեր զառիթն բարեբախտութե՛ քո, և ղչնորհս կատարեալ երախտեացն այ աւքեզ, ահաւասիկ հուպ ընդ հուպ հասցէ քեզ Թշուա՛ռաբար կորուստ անկարծելի յետ բեաց անողորմ Թշնամւոյ, և կործանուածն քարձրաբերձ շինուա՛ծոց քոց, և ցրուածն փախստեան ամբարհաւաճ քնակչացդ՝ի վայրս անգիտելիս։ Այս ահա յետ ամսոց երից քարկացեալ Թագն պարսից՝ի վե՛ր քաղաքացեացն վա՛ խորհրդոց ապստամբութե՛՝ առաքեաց զօրս երեք հարիւր փղովք, հրաման տուեալ այրել զքաղաքն՝ և յատակել՝ի հիմանց. մինչև յայնմհետէ արօրադիր ետ առնել զտեղին, և ցանել՝ի ներքս մանանեխ։

Ասակ երանելի եպն մեղս գնաց յեկեմ. և անտի իջեալ յաղեքսանդրիա քաղաք՝ շրջեցաւ յեգիպտոս. և յայց ելեալ միայնակեցաց անապատին՝ի սկիւթ և՝ի Թեբայիդ՝ետես և զմեծն անտոնիոս զանապատականն, և զերևելին յաշակերտս նր զհայրն ամմն (5)։ Այս ոչինչ բարձեալ էր մեղսի ընդ ինքեան, բայց միայն աւետարան մի, և գաւազան. և հրամինաւ անտոնի երանելոյ դարձաւ միւսան-

Նա՛ ի ձանապարհի մինդեռ գնայր յանա֊
պատ ուրեմն՝ եհաս նմա Թէոբեվան առնել յայ֊
րի միում, յորում կայր քնակեալ միայնակեաց
մի անապատաւոր ։ և եր անդ վիշապ մի որ֊
ջացեալ ։ իսկ երանելին եպն եկաց յաղօթս ,
ղի սատակեսցէ որ զգազանն զայն ։ և վաղ֊
վաղակի նոյնժամայն հերձաւ վիշապն ։
Յայնժամ ասէ անապատական միայնա֊
կեացն ։ բազումժամանակ է , զի՛ ի միտկն
քնակեաք ես և գազանդ յայրի աստ ։ և ոչինչ
ինասեաց ինձ ։ Նմա ցնա երանելին մեղս ։
Թէնամութիւն եդ ածծ՛ի մէջ նր և մարդոյն ։
նացաւ ՚ի քարանձաւ մի՝ զօղեալ ՚ի տեսուչ մարդկան. ուր եկաց զամս երկու. և մեծաւ մասամբ հատեալ զբուն՝ քաղեր ՚ի բերան ըզկտակարանն քոյ, զի մի տգիտուն տիրեսցէ։ Այս քանզի զայն երկեամ աւուրս՝ ոչ զտիւ և ոչ զգիշեր ընկողմանեցաւ (ասէ պալադիոս), վասն նր միջոցին հանդերձ ոսկի թէ մեռաւ, և զօրութեն ցանկուէ բեկաւ խոպաւ յերեսաց ցրտութեն։ Այլ թէ ուրախի անձաւ պարգեւօք հոգւոյն և հոգեւոր ուրախութեք անցոյց զժամանակն զայն միայնակեցութեն, նոյ միայն կ գիտեալ՝ որոյ զձաշակն առեալ էր այնպիսում հանդարտութեն ըստ օրինակի Եբոյ հարցն եգիպտացւոց. յայտ կ քաղմօք և ՚ի քանից անտի յովհաննու, ուր ուրեք յիշէ ՚ի գիրս իւր զվարս միայնակեցաց երկրին աստրւոց՝ լիաբերան և անյագ գովութեք ըստ գլխոց գլխոց ցանկալի կենաց նոյ։

Ընդ այն ժամանակս ՚ի մեռանիլ վաղենտիանոսի կայսեր՝ յորժամ ինքնիշխանաբար սկսաւ վարել զթագրուհին վաղես արիոսեան յամի ՌՆ 375, հրամանն եհան անօրէն, զի ամ միայնակեացք եկեղեցին ՚ի բնակութեց իւրեանց, և գրեսցին ՚ի զինուորութի. և եղև հալածումն մեծ, զի այրեցան ՚ի քաղաքս և յանապատս բազում վանորայք և խուցք միայնակեցաց. և ոչ սակաւք ընկալան զմահ ՚ի սեր կրօնաւորութե։ Օ՜ այն իբրև լուաւ յովհան, ոչ կարէր ասել հաւատալ. և իբրև ստուգեցի՝ ասեմ յոգւոց հանելով. Այս անցոյց զայնոքիւք՝ որ զտաճարն այրեցին. և

ոյք

ոյք լցեն՝ որ զայս առնեն, և կրկին աղագաւ քարընկէց լինին՝ ի բարձունս և նետաձիգ յերկինս, և ահ ընդ եմ մարտնչին. ուր Թագաւորք պարսից անհաւատից Թողացուցին զերդ սերով, զիարդ Թագաւորք քրիստոնէից հրապարակաւ բառնան. և ասէի առ ահ արտասուօք. աւռ զոգի իմ յինէն, զի մի տեսից, և մի լուայց զայս չարիս։

Յորհուրդ եւս նմա ոմն բարեկամ գրել գիրս վասն սոցին իրաց, զի Թերևս լինի յօգուտ. եւ տարայց ասէ զգիրս քո անձամբ, զի կան իմ ծանօԹք՝ ի մէջ հալածչաց. և գիտեմ զի շահիմ զնա գրովք։ Յայնժամ յօրինեաց յովհան հրաշալի գրչաւ իւրով գիրս՝ ի գովուԹիւն և՝ ի ջատագովուԹիւն միակեցական վարուց. Թող զայլ ձառս և զմատեանս՝ զորս շարաք գրեաց՝ ի վեցամեայ հանգարտուԹիւն անապատի։

Պատմէ աստանօր գէորգ աղեքսանդրացի և տեսիլս և սքանչելիս յառանձնուԹեան յովհաննու, զորովք զանց առնեն այլք. զի Թէ երևեցան նմա Տէր առաքեալքն պետրոս և յովհաննէս. պետրոս տայր փականս՝ ի ձեռս նր՝ և՝ ի նշանակ հանդերձեալ քահանայուԹեանն և եպիսկոպոսուԹեանն, և յովհաննէս զմատեան՝ ի նշան լինելոյ նր կատարել Թարգման գրոց Տեառն. և Թէ ոմն յանտիոքացւոց բժշկեցաւ ազօԹիւք սքանչելովք յանբուժելի ցաւոց գլխոյ և աչաց. և այլ ոմն՝ ի բորոտուԹենէ. և որ սոցին նման. և ոչինչ են զարմանք. զի սքանչելն ի Տէր Տեառն իւր։

Բայց

Նայց տեսչութեանն այ՝ որ կարգեալ էր գլուխ հան լոյս ծի լինել, և լուսափայլ վիպ կաթողիկէ եկեղեցւոյ, հարկեցոյց զնա քնաւորանս Թողուլ զանապատ և դառնալ յանտիոք. վն զի՝ ի խիստ ձգնութենէ անկեալ՝ ի ծանր տկարութի՝ յակամայ կամ էջ՝ ի քաղաքն. և գտեալ զբժն մելիտոս դարձեալ յաքսորանաց յետ մահուն վաղեսի հրամանաւ մեծին Թէոդոսի բարեպաշտի, ուրախ եղև յոյժ: Նա յետ սակաւուց հաստատեալ յառաջնում իւրում՝ բռնադատեցաւ՝ ի սքյն մելիտոսէ, և ձեռնադրեցաւ՝ ի նմանէ՝ ի սարկաւագութի յամի տն 380. զոր և հրեշտակօրէն պաշտեաց զամս հինգ. բայց հանդերձ նեղութիք բազմաւ. զի ոչ միայն զրկեցաւ՝ ի հանդարտուէ միայնակեցուէ, այլև մատնեցաւ՝ ի հոգս եկեղեցւոյ՝ առաւել՝ ի պատճառս երկպառակութե մելիտեանց և պաւլինեանց:

Վն զի յետ վախճանելոյ սքյն մելիտոսի՝ ի ժողովն կոստանդինուպօլսոյ՝ միաբանգամ բաժանեցան անտիոքացիք յերկուս. կէսք՝ ընդ մելիտեանք՝ ընտրեցին իւրեանց պատրիարգ՝ ի տեղի մելիտոսի զփլաբիանոս զայր սրբակրօն. և կէսք՝ ընդ պաւլինեանք՝ կրկին և աս հաստատեցին՝ ի պատրիարգուէ զպաւլինոս ծերունի բարի զձեռնադրեցն յարևմտեայց: Ընդ ոչ փոքր վիշտ եր յովհաննու այս երկպառակութի հին և արմատացեալ, անգիտացեալ՝ յո՞ յարեսցի, կամ զո՞ հաւանեցուսցէ՝ ի մի կողմն. վայ առաւել զառանձնութիւն

ընտրեալ, և հեռանալոյ յամբոխէն՝ հանդարտեալ՝ի տան, կամ՝ի վերձակայ վիճակի։

Այլ ոմն ինքն յովհան կայսր առնէ, ոչ յերկարեայ այս խռովութիւն. քանզի վիլաբիանոս հաստատեցաւ յաթոռն անտիոքայ, և ցուցաւ հովիւ քաջ և արժանաւոր յաջորդ մեծի տոհմի. նմին իրի և սիրտ յովհաննու հանդարտեցաւ, և յարեցաւ՝ի վիլաբիանոս, և եղև նոր ընտանի յոյժ՝ սիրելեալ յաչս նոր մեծապէս, ոմն և յաչս ամ ուխտի եկեղեցւոյն և ժողովրդեան. Թուղ զբազմապատիկ վաստակս նոր գրաւորս՝ի հնգամեայ սարկաւագութենէ իւրում, յորում ժամանակի եգիտ առանձնութիւն ոչ սակաւ։

Այլ իբրև երթալով երթայր (ասէ պալադիոս), և պայծառանայր աջողակութիւն յովհաննու՝ի վիճակութենէ բանից և գրով, և ժողովուրդն՝ի գառնուէ կենցաղոյս քաղցրանայր կենցաղավարութիւնք նորա, փլաբիանոս հայրապետն ձեռնադրեաց զյովհաննէս՝ի քահանայ՝ յամի իբր 386։ Եւ այն ոչ առանց աքանչելեաց՝ ըստ գրելոյ գէորգեայ աղեքսանդրացւոյ և լևոնի իմաստասիրի և այլոց բազմաց. քանզի՝ի պաշտել հայրապետին զպաշտօն գիշերային՝ երևեցաւ նմա հրեշտակ տէր, և պատուիրեաց քահանայացուցանել զյովհան. և յովհաննու երևեալ՝ պատուիրեր հրեշտակն մի կալ ընդդէմ. զի այս են ասէ կամքն տեր։ Նոյնժամայն՝ի պահու ձեռնադրութենէ եկն էջ հոգին սուրբ աղաւնակերպ տեսլեամբ՝ի վէր գլխոյն յովհաննու. զոր խոնարհ լուծ

թէ յուշ առնել կամեցաւ յովհաննէս յառաջ քան զմահասացուն իւրում զկնի քահանայուն, յասել անդ՝ թէ ոչ մարդկային խորհրդով, այլ յածայինն տնտեսուէ օծաւ ի քահանայ. և ըզն նեղոս աշակերտ յովհաննու ասէ, թէ յածայինն ընորհք առանձինն յայտնի եղեն ի վերնէ։

Այս ո՞կարէ պատմել զուրախութեն ժողովրդեան և զչինութեն եկեղեցւոյ՝ ի հանդիսանալ յովհաննու քահանայի յատեան քահանայապետութեն. քանզի հոգեշունչ և հոգեբուղխ վէպսն նորա՝ ըստ ոսկեբերան արտասանութեն, եռանդն հոգւոյն ըստ սքանչելի համեստութեն, պերճ ատենախօսութեն՝ ըստ դիւրիմաց պարզութեն, քաղցրութեն ըստ զօրաւորութեն, բարձրութեն ըստ խոնարհութեն, և ամ ձիրք ընորհաց հոգւոյն՝ արտափայլեալ ի բանս և ի գործս երանելոյն՝ յինքն ձգեր զամ տեսանելիս և զլսելիս. նոր ձայն բարբառոյ յովհաննէս, և կիւինքնին պօղոս երևեր յարուցեալ՝ փողն տարսոնեան. մանաւանդ թէ զոճարթուն ոք երկնառաք ի մարմնի երևեալ ցուցաւ. զի եթէ գործք նորա գրաւոր ցարդ ևս այնպիսի գոլ վկայեն զնմանէ, զի՞նչպիսի էր արդեօք բանաւորն կենդանի՝ կենդանի բարբառով։

Արդ՝ այն, որ յառաջն շարադրեալ էր ոչ սակաւ առանձին ձեռս և տրամախօսութիւս և գիրս ողջունի առ զանազանս՝ ամ իմաստիւք հոգւոյն լի, յաւուրս քահանայութենն բոլորովին գոգեաց հոգիացեալ՝ շարադրեաց քաց

յայ-

յայլոց բանից անբաւութիւն՝ զհրաշալի մեկնուն հին և նոր կտակարանաց բազում մասամբ, մի քան զմի աքանչելի ի ձև քարոզի։ Այնչափ ոչ է երկբայելի իմաստնոց՝ գրելն յընդարձակ վարս ծըլին, թէ ինքնին ըբ առաքեալն պօղոս երևեալ լինէր թելադրել յոնկն յովհաննու զանվրէպ մեկնուն թըղթոց իւրոց (7)։ զնոյն իմա և զայլոց մեկնութեց՝ զորս գրեաց լուսաւոր բանիւ յազգմանէ շնորհաց հոգւոյն։ Այլ և նովին հոգւով զնոյնս երկրորդեր ի քարոզութիւն։ քանզի և առաւելագոյն մասամբ քարոզ նորա էր մեկնութիւն ածաշունչ տառից։ ըստ որում և ձառք նորա՝ որ յաղագս այս ինչ կամ այն ինչ կարգաց առաքինութիւն, են տիրապէս մեկնութիւք գրոց սրբոց։

Այս որ ասծն է, զի որպէս ձշմարիտ աշակերտ ձշմարիտ վարպետին իւրոյ քոյ՝ առնէր և ուսուցանէր։ մինչև յուսուցանել անդ և զառաքինի վարս՝ զայմ առաքինութիւն յանձին բարձեալ բերէր։ առաւել զխորին խոնարհութեն և զհուր սիրոյն ոյ, և զփափաք չարչարակցութիւն փրկչին ըստ նմանութիւն առաքելոց։ ըստ նմին և զսէր մերձաւորին՝ պատրաստ լինել լսել դնել և զկեանս ի վեր եղբօր։ և այն առանց շահասիրութիւն, առանց աչառանաց և մարդահաճութիւն, օտար ի փառասիրութիւն և յայմ մոռածութիւնց ըստ ծի։ ոչ յայտ է՝ որոց դեգերին փոքր ի շատէ յոսկեմատեանս նը։ Այս քանզի ըստ ոն օրինակի և մկրտչին յովհաննու՝ առաւելապէս զապաշխարութիւն և

ղողորմածութեն հնչեցուցաներ քանիւ և արդեամբք, նմին իրի կ՚ զի ապաշխարութեե, և կ՚ զի ողորմածութե՛ արդեօք վէպ ձայնեին զնա ժողովուրդն, ըստ որում և մատենագիրք վերաձայնեն։ Ա. յլ առաւել և առ աղնուական փայլ և անգին և անարատ առեննախօսուե՝ ԷԵրեան ոսկէ, կամ ոսկէ ԷԵրեան սկսաւ կոչիլ յաւուրց անտի իւրոց. յորմէ եղև առասական անուն նորա յունարէն խառնօսպօմօս, որ թարգմանի Ոսկէբերան։ (8)

Ոմն զմեծագործութե՛ն նորա՝ քաջ հովիւն քաջավայելուչս անդամին՝ ի քահանայուէ. վն զի ըստ իւրաքանչիւր խնդրոյ և հակառակութե՛ց, երկպառակուե՛ց և ապստամբուե՛ց յուզելոց՝ ի մէջ անտիոքացւոց, հոգեւոր առնե՛ և անպարտելի առաքինութե՛ն՝ դեղ և դարման գտաներ. զոմն խրատեր, զոմն աղաչեր. կր զի յանդիմաներ, և կր զի մխիթարեր՝ առ ամեն և հրապարակաւ. և՛ս առաւել յատեան քարոզութեան առ ամենասեն. ոչ աչառելով մեծի և փոքու, այլ զամենեսեան ըստ կարի շահելով, և յանշահիցն ոչինչ զանգիտելով. որպէս և զԵրեմիկոսա ժամանակին քաջ յաղթահարելով։ Ա՚ ոոյ և պտղաբեր և աձեցուն լինել բան քարոզութե՛ն նր տոհմականօք լե. և համբաւ սրբուե՛ և վէպուե՛ նր ընթանալ ըստ տիեզերս։ Ա՚ այսպէս զամն երկոտասան՝ ասե պատմիոս՝ փայլեաց յովհաննէս քահանայ յեկեղեցւոջ անտիոքացւոց, և անարատ քաղաքավարուե՛ պայծառացոյց զուխտ եկեղեցւոյն, իմաստու-

տուեալ աղիւ համեմեալ զայն, վէպուվէր լուսաւորեալ, և վտակօք սը հոգւոյն ողողեալ։

Ընդ այն ժամանակս յամի տն 397. ի 27. սեպտեմբերի, վախճանեցաւ պատրիարգ Թագաւորեալ քաղաքին Կոստանդինուպօլսոյ. և քաղցումբ այն էին՝ որք այնմ աթոռոյ Թեկն ածէին անձամբ կամ յայլոցն առաջարկուէ. այլ ժողովուրդն ամ հանդերձ ուխտիւն փափաքէին զյովհաննէս զանտիոքայ քահանայն Ճաքարոզ՝ հովիւ և առաջնորդ իւրեանց ունել։ Ալ ոչ և կայսրն արկածեաս որդի մեծին Թէոդոսի, քանզի լուեալ և ես զսքանչելւոյն յովհաննու զպուղութիս յականատես վկայից, և առաւելապէս յերանելոյն Ներքինապետէ՝ որ շրջեցաւ երբեմն վ սրքունի գործոց ի կողմանս արևելից, հրովարտակ առաքեաց առ աստերիոս կոմն արևելեան, զի լրիկ միջնիկ առանց աղմկելոյ զանտիոքացիս՝ յղեսցէ զյովհաննէս ի կոստանդինուպօլիս։ Ուր կոմն փութապէս ազդեալ յովհաննու գալ արտաքոյ քաղաքին մինչև ի վկայարանս՝ որ առ դրանն կոչեցեալոյ ռոմանեան, ոչ Թէ ունի ինչ հարցանել ի նմանէ, եհան զնա ընդ իւր ի կառս արքունի, և խաղացոյց մինչև ի տեղին անուանեալ պագրաս. և անդ յանձն արար զնա տանել ներքինւոյն եկելոյ ի դրանէ հանդերձ մագիստրոսիւ զօրականին։

Ալ մինչև հասեալ էր յովհաննու ի կոստանդինուպօլիս, ժողովեալ էին անդր եպիս-

կոպոսունք յերևելի քաղաքաց հրամանաւ
Թէոփիլին՝ ի ձեռնադրել զյովհաննէս : Նա կէր
էր և Թէոփիլոս՝ մեծն կոչեցեալ՝ աղեքսան-
դրու հայրապետ՝ երևելին ի պատրիարգս .
որոյ եղեալ էր ի մոլի՝ կարդել յաթոռ կոս-
տանդնուպօլսոյ պլսիդորոս քահանայ զաշա-
կերտ իւր՝ զվերակացու աղքատանոցաց և
օտարանոցաց աղեքսանդրիոյ . պլ Թեոփես ար-
ժանաւոր զնա Ճանաչէր՝ իբրև զայր հոգե-
ւոր և կիրթ ի պարկեշտ վարս ի մէջ սակ-
տացի միայնակեցաց , միանգամայն և առան-
ձին երախտաւոր իւր քաղմօք . Թող պլ և
պարծանք էր ինքեան և յօգուտ , պլ աշա-
կերտ իւր լինի պատրիարգ Թէոփրակեան քա-
ղաքին :

Ա՛ոյ իբրև եկն յովհաննէս , և պատրաստուէր
լինէր ձեռնադրուելոյ նէ , պէսպէս պատճա-
ռանօք յապաղումն ի վր բերէր Թէոփիլոս ,
և գուն գործէր խափանել . մանաւանդ յետ
տեսանելոյ զյովհաննէս , և լսելոյ զզօրաւոր
քանս ոսկեղէն բերանոյն՝ ոչ ախորժէր զայն
պիսի հզօրագոյն ոք քան զինքն հանել յայն
պատիւ : Նա իբրև պղտորումն անկանէր ի
մէջ ժողովոյ եպիսկոպոսաց և աւագանւոյն և ժո-
ղովրդեան , որոց աչք առ հասարակ ի յով-
հաննէս էին , ասէ եւտրոպիոս ներքինապետ՝
որ և սենեկապետ ինքնակալին՝ ցԹէոփիլոս .
ընտրեա՛ քեզ զնի յերկուց աստի բանից . կամ
միաբանեա՛ ընդ այլ եպիսկոպոսս , և ձեռնադրեա՛
մեզ զյովհաննէս , և կիր պատրաստ լեր տալ
պինդ ամբաստանութեց՝ որ զքէն . զի ահա

’ի ձեռս իմ հասեալ կան նամականի ամբաս-
տանութենէ , զորս հանել յատեան եպատաց
յանձն եղև ինձ ։

Օ այս լուծել Թէոփիլոսի՝ երկեաւ . և ձեռ-
նադրեաց զյովհաննէս միաբանութիւն ժողո-
վոյն . և այս եղև յամի տեառն 398 . ’ի փետրվա-
րի . 26 . այն է ’ի չորս կաղանդացն մարտի՝
ըստ սոկրատայ ։ Եւ վաղվաղակի սկսաւ հո-
վիւն քաջ խնամարկել հօտին , և ծաւալել
զհոսանս հոգեբուղխ վիճակութենէ իւրոյ յալ-
բուամն ոգւոց ծարաւեաց՝ անդստին յօրէ ան-
ա՛ի ձեռնադրութենէ իւրոյ յեպիսկոպոսութի , ուղ-
ղեալ զնա՛մ բանս իւր ’ի ցլուամն մոլորութենց
և անկարգութենց ժամանակին , և ’ի ծաղ-
կեցուցանել զնա՛մ կարգ ուղղուե ’ի Թագա-
ւորեալ քաղաքի . ուր հեշտեաւ հաւաքէին
յոգնապիմի վնասակարութիւնք , և անտուստ
տարածանէին վնասք քազում ընդ ամ՛ենեսին ։
Ա՛յլ Թէ քանի՞ հոգեւոր ձարտարութիւք և
հայրապետութի սիրով որսայր յուսկան աւե-
տարանին զուսկնգիրս իւր , առցես օրինակ
յերկրորդ քարոզէ անտի՝ զոր խօսեցաւ ’ի
կոստանդինուպօլիս , սկիզբն առնելով օրի-
նակ զայս . * Օ ո՛ի ընդ ձեզ խօսեցայ օր . և
յօրէ անտի յայնմանէ այնպէս զձեզ սիրե-
ցի , ոչ՝ անդստին ’ի սկզբանէ սննդակից ձեզ
լինել լով . այնպէս ընդ ձեզ շաղկապեցայ սի-
րոյն կապանօք , որպէս քազում ժամանակօք
’ի քաղցր ձեր վայելեալ կենակցուե . և այս
եղև՝ ոչ ոչ Թէ սիրոյն ոք ես իցեմ և սիրե-
լի , այլ զի ցանկալիք և տենչալիք առաւել

քան զամենեսեան եք դուք : Օ՜ի ո՞ւ չէ ձերդ
սիրասցի և զարմասցի հրացեալ նախանձա-
ւորուն , ըստ անկեղծաւոր սէր , ըստ առ վէպս
բարեմտուն , ըստ միմեանս համամտուն ,
որք առհասարակ բաւական գտանին և զքա-
ղեղնն յիւրեանս ձգել զոգի : Ա՜ռ և մեք
ոչ պակաս զձեզ սիրեմք՝ զի զեկեղեցին զայն ,
յորում՝ ծնաք և սնաք և դաստիարակեցաք.
զի քոյր ներ սա . և դուք գործովք զազգակ-
ցութիւնս յայտնի կացուցէք : Օ՜ի և Թէպէտ
և նա երիցագոյն ըստ ժամանակին , բայց
ջերմագոյն ըստ հաւատոյն սա . առաւել անդ
հանդէս և պայծառագոյն տեսարան ( Թէա-
տրոնի ) , այլ մեծագոյն աստանօր համբե-
րութիւն , և առաւելագոյն՝ արութիւն քաջուե
ցուցակութիւն : Պայլք ամենուստեք զոչխա-
րօքն յածին , և փարախն ոչ նուազի . բուք
և ձմեռն և մրրիկ պատեալ պաշարեալ են զայս
ըստ նաւակ հանստապաղտդ . և որք նաւարկենն՝
չընկղմին . քոյ հերեսիոմտական յամ կոչ-
մանց բոլորեալ , այլ որ՝ի մէջ հնոցին՝ ցո-
ղովն հոգևորականաւ զոհարթանան ‖ :

Ա. յսպիսի հրաշարուեստ քանիւք յառաջ խա-
ղացեալ՝ի վէպուիթե բերանն ոսկի առաջի
համագումար բազմութե քաղաքին յեկեղեց-
ւոջ հայրապետանոցի՝ սկսաւ իսկևիսկ յաղ-
թահարել յաւետնի զմոլորութիս անոմեանց
և այլոց աղանդաւորաց զոյդ ընդ հրէից , և
զժողովուրդն վառել յունկնդրութի բանին
Ա՜յ : Ի սա ամին օրինակի և յայլ նուազս հետ
զնետ զամ փուշս ընտանակարս խլեալ յեկե-
ղեց-

ղեցւոյ՝ զսերմն գեղեցիկ բանին Աստ ցանէր և
անկապուրծեր յոգիս լսողաց ժիր մշակն ա-
ռանց ամօթոյ։

Այլ յառաջնումամի անդ կրեաց երանելին
զևօթնուելին՝ յերեսաց ծանր աշխատուե՛ , որ
՛ի վէպուելե՛ և յառաջնորդուելե՛ թզրական
քաղաքին . գուշէ և յօդոցն փոփոխուելե՛ .
և առաւել ՛ի տքնուելե՛ և ՛ի սովորական
ձգնուելեց անձինն ըստ այնչափ զբաղանաց .
բայց անդրէն յառողջուելե՛ ածեալ՝ իակաւիսկ
դառնայր ՛ի գործ վէպուելե։

Այս քանզի փոյթ մեծ էր երանելւոյն առա-
ւել զուխտ եկեղեցւոյ կրթել ՛ի բարեկար-
գուե՛ , յորմէ և Տիկք դիւրաւ ամօքէին յու-
ղուելե՛ , առաւել օրինակաւ քան բանիւ քա-
րոզէր ժառանգաւորաց՝ արժանի գնալ կոչ-
մանն յոր կոչեցան։ Այլ նախ կանոն եդ ան-
ձին հանապազօր առանձինն ձաշակել . ոչ
յայլոյ սեղան երթալ , և ոչ զոք յիւր սեղան
հրաւիրել . որով փակին բազում անկարգու-
թեանց ձանապարհք , և դրունք բանին Աստ
բարեաց . զորս յերկար թուէ պալադիոս .
թէպէտև անհաձոյ եղև ասէ այս սովորուե՛
Տեյն յաչս ումանց ՛ի մեծամեծաց և յեկեղե-
ցականաց , որք մարդկօրէն և՛ե՛ թ խորհէին։
Այս դարձեալ՝ չընդունէր երբեք բաժին ան-
ձին իւրում՛ ՛ի հասից եկեղեցւոյ , այլ հրա-
մայէր զնոսա ՛ի պէտս եկեղեցւոյ և աղքա-
տաց ծախել . և զինեաւ զհաշիւ կոնտմոսին՝
ՏՐ անտեսի եկեղեցւոյն իւրոյ , որ ինչ ա՛ե-
լորդ ծախս տեսանէր՝ ՛ի քաց հատանէր .

նոյն-

նոյնպէս և զծախս Հայրապետանոցին կար-
ձել՝ ի գանձանակ աղքատաց և հիւանդաց
տալը յաւելուլ. որով ետ շինել և հիւանդա-
նոցս ։ Ապա ինքն զօր ըստ օրէ սակաւապետ
կերակուր իւր ընդներ ի բերան ողորմուն ի մար-
գասիրուէ սքանչելի այրոյն ողորմիագայ ,
որ էր կին նոր և աղքատասէր՝ ծանուցեալ ի
քաղաքին . և զայս յանձն առնոյր առ առա-
ւել աղատ կացուցանել զՀայրապետանոցն
յարտաքին զբաղանաց ։ Ասէ զի ինքն նո
Հայրապետն քաղցամ անդամ մոռանայր առ-
նուլ կերակուր մինչև ցերեկոյ . Ե զի ի հոգս
եկեղեցոյն պարապեալ , և Ե զի ի հոգևոր
տեսութիւն և ի գրութիւն ընկղմեալ ։

Ընդ այսպիսի օրինակօք անձին , միանգա-
մայն և ի քարոզս իւր կշտամբելով զագա-
հութիւն և զորկրամոլուէն , եթարձ զբազում
անկարգութիւս մածեալս յՀասէր և յունայ-
նասէր եկեղեցականս . գրեաց և պիտառնուս
թիւս ընդհմ անարժան սովորութիւն ոմանց ի
քահանայից , որք պահէին ի տան ի պետս
սպասաւորութիւն զբոյր կոչեցեալ կուսանս .
ոմ և ընդհմ այլոց ստերիւրելոց ի չաւղաց
զգաստութիւն ։

Պետպ խօսէր երանելին և յորդորական քանս
մ՚ առանձնական և հասարակաց աղօթից ,
պատուհիրելով մի ումեք զանց առնել զկան-
խել յեկեղեցիս , և զկատարումն տունջնջ-
նային և գիշերային աղօթից՝ գնել ի սենե-
կի իւրում ։ Այս ինքն ոսկերերանն կարգա-
ւորեաց և զձայնաւոր սաղմոսերգութիւնս և
զերգս

զերդս հոգևորս եկեղեցւոյ. և այնչափ ա-
ռաւել՝ որչափ դի (ըստ պատմելոյ սոզոմենո-
սի) արիանոսք մնացեալք արտաքոյ պարսպաց
կոստանդնուպօլսոյ՝ սկսեալ էին երգել բանս
ինն պաշտամանց մօտաւոր յաւելուածովք՝ ի
նախատինս ուղղափառաց, շրջելով տեղւոջէ
՝ի տեղի՝ առաւել՝ ի շաբաթու և՝ ի միաշա-
բաթու, և փոխս առ փոխս կարդալով։ Ա՝ոյ ե-
րանելին յովհաննէս կարգեաց ընդեմ նոսո-
րումբ նոյ՝ արծաթի խաչիւք և մոմեղինօք
Թափորապէս կատարել՝ ի քաղաքի զերդս
եկեղեցւոյ։ Ընդ որ զչարեալ արիանոսաց՝
հանին խռովութի՝ ի քաղաքի, մինչև մեռա-
նիլ ոմանց յերկուց կողմանց. ըստ որս և զբրի-
սոն սենեկապան Թագուհոյն Հարին արիա-
նոսք քարամբ՝ ի ձակատն։ Որին վճռ խաչփա-
նեաց կայսրն խապաւ զհամարձակութիւն և
զսովորութի արիանոսաց. այլ զոր կարգեացն
յովհաննէս եկեղեցւոյ ուղղափառաց՝ մնաց
հաստատուն։

Կարգաւորեաց ևս հայրապետն յովհան և
զպատարագամատոյց յուսնաց, ոմն արարեալ
էր և ևքեն քարսղի՝ ի կապադովկիա. զերկու
ցունց խակ միանգամայն յիշատակէ ևքն պրոկղ
աշակերտ ոսկեբերանի. քանզի յետ յիշելոյ
զաւանդելն՝ ի սքեն կղեմայ հռովմայ հայ-
րապետէ, և՝ ի սքեն յակոբայ եղբօրէ տեն
յաւաջին եպսկն երկի, ՝ի վերայ բերէ՝ ընդ
բարսեղ և ոսկեբերան վերածին զերան՝ ի
համառօտն. զի մի յերկարութէ խորշեալ ո-
մանոյ՝ յօտար կարգ պաշտամանց ձեռն արկ-
ցեն,

ցեն, և խոտորեացին յառաքելական սահմանից։

Պատմէ սատանայ սոզոմենոս զհաւատոր լինն աքանչելիս. այր ոմն յաղանդոյ մակեդոնեանց հոգեմարտից շարժեալ՝ ի վիպութիւնէ երանելոյն յովհաննու հայրապետի՝ յաւելաւ յեկեղեցի ուղղափառաց. և՝ ի նոյն յորդորեր նաև զկին իւր. իսկ նոր առ երկիւղն հաւանի ցուցեալ զանձն, և պատրել կամելով զայր իւր, բանս եդ ընդ աղախնոյ իւրում, և ել գնաց յեկեղեցի. ուր՝ ի ժամ հաղորդութեան ժպրհեցաւ մատչիլ և առնուլ՝ ի նոր խորհրդոյն. բայց ոչ ձաշակեաց, այլ ցածուցեալ զգլուխն՝ ոտն լեզ յաղօթս, պահեաց և եբեր զայն՝ ի տուն, և անդ կամեցաւ փորձել. և ահա ընդ ծասկելն՝ պնդացաւ խորհուրդն իբրև զքար։ Յայնժամ զահի հարաւ կինն, եթէ պատուհաս ինչ կրեսցէ՝ ի վերուստ. և փութացեալ գնաց անկաւ արտասուօք առոտս նոր հայրապետին. և պատմեալ զայնցանս իւր՝ եղոյց և զքարն, յորում կային նիշք ատամանց. և խրատուք սրբոյն դարձաւ՝ ի հաւատս ուղղափառութեանէ։ Այս եթէ որ անհաւատ լինիցի բանից՝ ասէ պատմաբանն, վկայ է քարն այն՝ որ պահի ցարդ՝ ի գանձս եկեղեցւոյն կոստանդնուպոլսոյ. և տեսանի որպէս նիւթ անգիտելի, և անսովոր ըստ բնութեան։

Այլ՝ ի հանապազորդել յովհաննու՝ ի քարոզս իւր, և՝ ի յանդիմանել զանկարգութիւնս մեծի և փոքու, որչափ շինութիւն լինէր հա-

ւա-

ւատացելոց, նոյնչափ և յառնելը ընդեմ նը
ատելուն՝ ի խաւնակեցից և՝ ի չարաբարոյից
և յաղանդաւորաց. բայց նը յանձին կալեը
մինչև՝ ի մահ ձգնիլ՝ ի վը ուղղուլնե և ձըշ-
մարտուե, յորժամ լսեր զբամբասանս այն
պիսեաց, զլօղոսին երկրորդեր նորին հոգ-
ւով. * եթե տակաւին մարդկան հաձոյ լի-
նեի, ապա քրիստոս ծառայ ոչ էի ‖. և ևս քան
զևս համարձակ կշտամբեը նոն բանիւ ղան-
ուղղայ ընթացս չարաց՝ առանց անուշան ու-
րուք՝ ի նոցանե։ Ոչ՝ զի զերկուս՝ ի սար-
կաւագաց հրապարակաւ դտեալս՝ ի ծանր
յանցանս արտաքսեաց յեկեղեցւոյ, զմին վը
շնուլնե, և զմիւսն վը մարդասպանուլնե.
որպես և զոմանս յանարժան քահանայից ար-
գել՝ ի խորհրդոյն։

Ընդ նեպետև այսպես անսչառ եր և խիստ
ընդդէմ անզեղջից, այլքաղցրահայեաց և
բարեգործուվ առ ղղջացեալս և առ ամ բարե-
սէրս. մխիթար վշտացնելոց, ապաւէն նե-
ղելոց. յուսադիր լքելոց, յանձանձիչ կարօ-
տելոց, և ձեռնտու ամեն յամենայն՝ ի կա-
րիս հոգւոյ և մարմնոյ. և այս ոչ միայն առ
ներձաւորս, այլև առ հեռաւորս. զորոց մի
առ մի ձառել՝ երկայն կարօտանամք բանիւ.
մեք յերևելն գործս անդրէն դարձցուք։

Որ նեոդորետոս, նե տեսեր յովհաննու
զսկիւնեացիս, նման զգօնեացիս՝ բնակեալս
՝ի կոստանդինուպօլիս կմյարուձարձանս նը,
զի ծրդեալ էին՝ ի մօտորուելնե արիանոսաց,
այսպիսի հնարիւք դարձոյց զնե յուղղափա-

ռու-

առուէ . ձեռնադրեաց զոմանս ՚ի գլխաց ուղղափառաց՝ քահանայս և սարկաւագունս և դրակարդաց . զորս եդ յառանձին եկեղեցի ըստ լեզուի իւրեանց . ուր գայր և ինքն անձամբ , և թարգմանաւ խօսէր զբանն ՚ի ժողովեկին անդր ՚ի լուր քարոզի և գուխք այլափառք , և օր յօրէ դառնային յեկեղեցի ՚ի սոյն սովին օրինակի որսաց յուռկան աւետարբանին և զայլս յօտարաց ՚ի թիւրակաց քաղաքի և արտաքոյ՝ առաքելով եպիսկոպոսս և քահանայս ազգային և լեզուագէտս առ զանազան լեզուս : Գտարձեալ ձեռնտու եղև. և այլոց եպիսկոպոսաց եղելոց ՚ի սահմանս հեթանոսաց , որ ինչ պէտք էին ՚ի ծաւալել զհաւատոյ քոյ ընդ ամ տեղիս՝ ուր և հասանէր պարտիզ հոգևոյ մայեցւոց . և զմեհեանն կռապաշտից՝ որ ՚ի գաղա պաղեստինու , ետ փակել արքունի հրամանաւ :

Ընդոյց և զմնացորդս խռովուեն անտիոքացւոց վ՚ն երկպառակութեն աթոռոյն . քանզի էարկ հաշտութեն ընդ այլ եպիսկոպոսս և ընդ փլաքիանոս հայրապետ անտիոքայ , և ընդունելի արար վնա առաջի եկեղեցւոյն հռովմայ . որով բարձաւ կրձիմն՝ որ կայր ՚ի բազում ամաց հետէ :

Պոյթ կալաւ երանելին յովհաննէս և վանն պայծառութեն եկեղեցեաց և վկայարանաց . և ժողովէր քան ի նշխարս սրբոց՝ ամփոփեաց ՚ի վայելուչ դիր հանգստարանի . յորս յանուանէ յիշատակին նշխարք սրբոյն փոկասու , զոր եւս բերել ՚ի պոնտոսէ : Եւ եղև ՚ի փո-

խա-

խաղրել նը հանդիսական թաւիորով զսատ-
ուճական նշխարս ինչ ի մեծ եկեղեցւոյ քա-
ղաքի ի նորաշէն տաճար սբոյն Թովմայի՝ որ
յարուճարձանս, ինն նշանաւ հեռի ի կոստան-
դնուպօլսոյ ընդ ծովեզրն՝ մօտ ի սէնոն (այն
է ըսդենիա), ի տեղին կոչեցեալ դրիւպիա
(որ է դարասիա), յառաջնում աւուր եր
անձամբ ի հանդիսի եկեղեցւոյն և եւդոք-
սիա Թագուհի կինն արկադեոսի կայսեր.
և յերկրորդ աւուր ինքնին արկադեոս Թիք-
վոյ և ծք հայրապետն բազում գովուխս խօ-
սեցաւ զբարեպաշտուէ Թիքրին և Թագուհ-
ւոյն ի Քառան, զոր ասաց յաւուրսն յայնոսիկ։
Այլ եղև եւտրոպիոսի ներքինապետի և սե-
նեկապետի արքային սունուլ զպատիւ հիւ-
պատոսութեանն յամի տն 399. և ըստ մեծանալոյ
օր քան զօր՝ յաւել մեծամտիլ, և արտաքոյ ե-
լանել հրամանաց եկեղեցւոյ և Թիքրին։ Ա-
ռնել բարեկամ ծք հայրապետին անդստին ի
սկզբանէ՝ բազմօք խրատեցաւ ի նմանէ սի-
րով. քայց ոչ լուաւ, այլ առաւել յանդըզ-
նեալ՝ օրէնս իմն կարգեաց ընդդէմ ազատուե
եկեղեցւոյ, զի մի ոք ի պարտաւորաց ասպա-
ւինելոց յեկեղեցին՝ ազատ լինի, այլ բունի
ձգեալ արտաքս՝ պատժեսցի։

Այս ահա յետ սակաւուց ինքն գտաւ կարօտ
եկեղեցւոյ. քանզի ըմբռնեալ ի քրէական
յանցանս՝ մերկացաւ յամ պատուոյն, և
ել հրամանի յարքայէ՝ զի աքսորեսցի ի կիպ-
րոս։ Այնչ այս մինչ այն՝ գաղտագնաց լեալ
նը ի պալատին՝ անկաւ ի մեծ եկեղեցին,

և

և ապաստան եղև ՚ի գլխուն հայրապետին. որ և մարդասիրութիք ընկալաւ զնա ՚ի դէմս եկեղեցւոյն. բայց յանդիմանեաց համ ժողովրդեան խօսեցաւ ձնռա խրատական ՚ի վէրնէր, սկսանելով այսպէս. * Պաքէն միշտ, այլ առաւել այժմ դէպ ժամանակ է ասել. Ընայնութի՛ ունայնութեց, համ ինչ ընդունայն է: Որ այժմ պայծառ պատմուճան հիւպատոսութե. որ լուսափայլ զահքն. որ ծափք և պարք, և խնջոյք և ամենաժողով ժօնք... այն համ տեղի ետ. և հողմն հնչեալ ուժգին՝ զտերևան Թօթափեաց, և մերկ մեզ զծառն եցոյց, և յարմատոց անտի գլխովին երերուն: Ցուշ արար ՚ի կարգին և զայն, Թէ որ են ըստ ՚ի բարեկամք, զի լքին զքեզ. ուր * եկեղեցին առ ՚ի քէն պատերազմեալ՝ զդիրկն տարածեաց և ընկալաւ զքեզ: Նա ապա մխիթար բանիւք քաջալերեաց զնա, զի Թէ ՚ուրն ողորմի՝ և ինքնակալն ողորմեսցի կենաց նր. որպէս և արդեամբք զդէմ կալաւ նր հայրապետն, յորժամ սպասաւորքն արքունի կամէին բռնանալ և հանել զնա յեկեղեցւոյ:

Նայց եւտրոպիոս իբրև անձամբ հնարեցաւ փախչիլ եկեղեցւոյ յայլ տեղի, մատնեցաւ ըմբռնեցաւ և աքսորեցաւ. վասն որոյ նր հայրապետն ՚ի միւսում ձառի. * Ա՛ի ասեր, Թէ եկեղեցւոյ մատնեցաւ մատնեչն. Թէ չէր նր Թողեալ զեկեղեցին, ոչ արդեօք մատնեալ լինէր... Ա՛յ եկեղեցին զնա ելոյզ, այլ նա զեկեղեցի ելոյզ. ո՛չ ՚ի ներքուստ մատ-

մատնեցաւ , այլ արտաքուստ ։

Նմին տարուոջ ի կաւտարած քառասնորդաց տեղաց յորդ անձրեւ ի կոստանդինուպոլիս , մինչեւ ողոզել և ապականել ցամ անդաստանս . վայ հրամայեաց որ Հայրապետն ժողովել ամենեցուն ի տաճար սրբոց առաքելոց յաւուր աւագ չորեքշաբաթու , և միաբան աղօթիւք խնդրել զողորմութիւն ի նմին քահանայութեանն զոր առեալ էր , պօղոսի և տիմոթէի ։ Նոյն իսկ պարզեցաւ օդն , ի նմին իսկ աւագ ուրբաթու եղեն կրկիսական խաղք հեթանոսաց , և յաւուրն երկրորդի թատրոնական տեսանք խաղալկաց , ուր գնացին և ամենք ոմանք ի քրիստոնէից ։ Ընդ որ չհանդուրժեալ որ Հայրապետին , ի քարոզի զատկին խստիւ յանդիմանեաց զայնպիսիս , և սպառնացաւ ընդ բանիւ առնել զորս միանգամ իշխիցեն յայլ նուագ զնոյն գործել . և ոչ ստակաւ օգտեաց բան նր . ոմն նշանակէ ի յաջորդ քարոզի ։

Յաւուրն յայնմիկ եկին ժողովեցան ի Թադաւորել քաղաքն եպսունք ասիացւոց՝ Թըւով քսան և երկու . և եղեն ամբաստան առաջի Հայրապետին յովհաննու զրով և բանիւ զանտունինոսէ եպսկն եփեսացւոց՝ ըստ հօՀն գլխոց ծանր ծանր յանցանաց ։ Իսկ որ Հայրապետն խրատեաց զեւսեբիոս զեպիսկոպոսն վաղենտինուպօլսոյ՝ որ բերանն եր դատախազից , մի արդեօք մարդկային ինչ կրիւք ատելուբ վարեսցի , ոմն երևեր ի

նշանացն. և բազմօք քննել զերան՝ ոչ եգիտ
վկայս ստուգուե: Այս քանզի մեռաւ՝ ինոյն
աւուրս ամբաստանեալն, յարեաւ ոսկեբե-
րան, և անձամբ նաւեաց ընդ ժողովոյ եպիսկո-
պոսաց յերեսս. ուր գումարեցան և այլք՝
ընդ ամ ենպսունք եօթանասուն. զի կային և
այլ պեսպես խնդիրք և հակառակութիք՝ ի
մէջ առաջնորդաց. վասն յերկարելոյն իրքն.
մինչև միաբանութիք ժողովոյն կարգեաց ոս-
կեբերանն յեպսուէի երեսացւոց գհերակ-
ղիպես. և գվեց եպսունս ըմբռնեալս՝ ի սի-
մոնականուե ընկեց յաթոռոյ, և զայլս կա-
ցոյց՝ ի տեղի նոց:

Այնպես և ընդ ամ տեղիս՝ ընդ որ էանց, փո-
խեաց զանարժանս և զայլասիսառս, և եդ՝ ի
նոցա տեղի զարժանաւորս և զուղղափառս.
և վեկ օրընօրէ բազմացան թիւնամիք սբոյն.
զի ամ՝ որ զչար գործէ,ատեայ զլոյս. այլ
որ չար ևս եղև, այսպիսի չարք լինքեանս
սրկին և ջոմանս՝ ի բարեաց ընդեմ ոսկեբե-
րանի. մինչև պղտորել զմիտս և ոմանց՝ ի ներ
եպսաց, և զթագաւորին և զթագուհւոյն
գլխովին:

Ելոյծ՝ ի դառնալ ոսկեբերանին՝ թէպետև
ուրախութիք մեծաւ ընկալաւ զինա ամ քա-
ղաքն թագաւորաւն հանդերձ, բայց ծագե-
ցաւ գժտութիւն լինն յեկեղեցւոջ. քանզի՝ ի
մեկնիլ հայրապետին՝ ընդ յանձնելոյ նը ու-
ներ իրը, տեղապահութիք զկնոփ եկեղեցւոյն
սևերիանոս՝ որ և սեբերիանոս եպս գաբա-
ղացւոց, այր զօրաւոր բանիւ և գրով. որ և

՝ի

'ի ձեռն ոսկեբերանի ընտրեալցեալ էր և սի-
րելի լեալ յաչս Թագաւորին և Թագու-
ւոյն . և 'ի բացականուե Հայրապետին ընդդ
զաեզի նր քարոզուԹե ։ Այլ իբրև դարձաւ
Հայրապետն յաԹոռ իւր , բանք յածէին 'ի
մէջ ամբոխին ( որոց երևէին հաւատս ընծայ-
էլ սոկրատ և սոզոմենոս ) , Թէ նախանձ լինի
ըն մէջ անկեալ էցէ ոսկեբերանի և սեբերիա-
նոսի . որ չէ հաւատոի , և ոչ արժանահա-
ւատ բան . այլ 'ի մէջ եմուտ այլ պատճառ
բանակռուՀուԹե ըն սեբերիանոս և ըն սրա-
պիոն սարկաւագն ոսկեբերանի ։

Վանզի սրապիոն պանծացեալ 'ի վերպ իւր'
զոր ամ ոչուով պաշտեր , և յանձնապաստան
եղեալ՝ ոչ ետ երբեմն զարժանին պատիւ
սեբերիանոսի ենպէս , և ոչ յարեաւ յոտս՝ 'ի
գալն առնա . ըն որ դժուարեէ սեբերիա-
նոս չարաչար կրիւք բարբառեցաւ զայս ան-
վայելուչ բան . ԵԹէ սրապիոն քրիստոնեայ
կիրկղերիկոս մեռանիցի , ապա քո ոչ մարդա-
ցաւ ։ Զրդ զայս բան ներ հասոյց սրապիոն
յուսկն ոսկեբերանի . և այլք 'ի չարալեզ-
ուՀաց Թողեալ զառաջին հատուՀած բանին՝
պնդէին ասուԹե , Թէ սեբերիանոս ասաց .
քո ոչ մարդացաւ ։

Լսեալ երանելի ոսկեբերանն Թէպէտև սաս-
տեաց յաւելուՀածով չարախօսելեացն , այլ
կոչեաց առաջի իւր զսեբերիանոս , և խրա-
տեաց զնա , Թէ չէր արժան իմնաստուԹեան
քումմ զայնպիսի բան հանել ընդ բերան . զի
Թէև կիրկղերիկոս մեռանիցի սրապիոն , ոչ վնաս

ստի մարդանալն քնի ։ Յայնժամ զամօթի
հարեալ սեբեբլիանոսի՝ եւ յերեսաց ոսկե-
բերանին . և ոչ ևս կամեցաւ կալ՝ի քաղա-
քին , այլ էանց՝ի քաղկեդոն բիւթանաց-
ւոց՝ գնալ՝ի տեղի իւր . զոր իմայեալ ամբո-
խին՝ համբաւեցին , թէ հայրապետն աքսոր-
եաց զնա ։

Օ այն իբրև լուաւ եւդոքսիա թագուհի ,
առաքեաց փութապէս և յետս դարձոյց զսե-
բեբլիանոս . և ( ըստ պատմելոյ սոկրատայ և
սոզոմենոսի՝ի լրոյ՝ ) ՝ի տաճարի առաքելոցն
եդեալ յոտս ոսկեբերանին գնորածին ար-
քայորդին զթէոդոս ( որ փոքրն կոչեցաւ ),
աղաչեաց երդմամբ զհայրապետն՝ ընդունել
սիրով զսեբեբլիանոս . այլք ասեն , թէ ար-
կադեոս ինքնին միջնորդ եղև . և ոսկեբե-
րանն ամ սիրով ընկալաւ զսեբեբլիանոս . և
ելեալ յատեան՝ խօսեցաւ զքարոզ խաղա-
ղութե . և եղև խաղաղութի ։

Ի նոյն աւուրս եղև արդեօք և մկրտութի
թէոդոսի փոքու ՝ի ձեռն ոսկեբերանի . այլ
քանզի սկզբնաւորեալ էր ատելուի եւդոք-
սեայ թագուհւոյն ընդդէմ սբ հայրապե-
տին , ՝ի կարծիս եղեն ոմանք՝ թէ չկամ տը-
ւեալ նմա մկրտել զորդի իւր . որ և օտար՝ի
ձգմարտութե , ուր ոսկեբերանն ինքնին ասէ
՝ի բանն՝ որ առ թագուհին , թէ զաւակք քո
յիմ ձեռս կնքեցան . զոր ոչ միայն զդատե-
րացն է իմանալ , այլ առաւել ևս զթէոդո-
սէ արքայորդւոյ՝ որ ժառանգն էր թագրուե ։
Նոյ պատճառք ատելութե եւդոքսիայ թա-

գուհ-

գուհւոյն Ընդեմ ոսկեբերանի պէսպէս մար-
թին լինել ըզ բանախնդրացդ . այլ իբրև ար-
մատ ամի պատմի՝ (յորոց գրեցինն ղլիակա-
տար վարս սրբոյն , ոմն և յականատես վկայէ
՚ի մարկոսէ սարկաւագէ՝ թէյն պորփիւրոսի
եպսին գազայ , ) անդքն այրուին՝ զորոց պայ-
գին բռնութիւբ յաւիշտակեաց եւդոքսիա . այր
վ՚ը զառաջինն քաղցրութիբ խրատեաց զնա
հայրապետն , և սպա յանդիմանեաց (9) .
զնոյն իմա և վ՚ը զրկանաց եղելոց առ միւս
այրն կաւլիտորոպէ անուն աղեքսանդրացի .
Թէոդ զի եւդոքսիա խնդրել էր փոխ ՚ի Թէո-
դորիկոսէ Ձոխ պատրկէ , և սա միջնորդ կա-
լել զոսկեբերանն՝ հրաժարեաց ՚ի տալոյն .
և սակայն յետոյ ետ ինչս ոսկեբերանի ՚ի
պէտս օտարանոցին : Այլ յաղթեաց այսմ
ամի աղմուկն Թէոփիլեանց՝ յորս յարեցաւ
Թագուհին . ուր ոչ միայն ինքն եւդոքսիա
յանցեաւ չարաչար, այլև յանցոյց զբազումս.
յորս եղեն և երևելի եպսունք գիտնաւորք
և առաքինիք՝ մարդկօրէն գթեալք , կամ
ըմբռնեալք ՚ի ծուղակս Թագուհւոյն :
Վասն ոսոխաց և հալածչաց ոսկեբերանի
եղև Թէոփիլոս աղեքսանդրու հայրապետ .
որ Թէպէտև էր այր մեծանուն , և այլով մա-
սամբ գովելի ցուցեալ ՚ի հարանց վարս և
՚ի Թուղթս Հերոնիմոսի , այլ յոխորտ բա-
րուք , և յանչափս դիմակաց ընդիմակաց ե-
րևելոց անձին իւրում : Այդ՝ սա , որ ըստ
նախագրելոցս՝ ակամայ ձեռնադրեալ էր
զոսկեբերանն , երբ ինքն կամէր դնել փո-

խան նը զԻսիդորոս քահանայ զԻւր սիրելի
կնոմոան , յետ քանի մի ամաց կալաւ գրժ-
տուԹիւն ընդ նմին Իսիդորոսի ՚ի պատճառս
դրամոյ , զորս առանց հրամանի նը ծախեալ
էր Իսիդորոս ՚ի պետս աղքատաց ըստ խնդրոյ
ուխտաւոր ընծայաբերին . վնաս և Իսիդորոս
՚ի ծերուԹիւն իւրում խոյս ետ յանապատ , և
ծառայէր նը միայնակեցացն սկիտացւոց :
Ա.յլ այնչափ առաւելաւ ընդդմնը բարկուԹ
Թէոփիլոսի , մինչև հալածել ՚ի պատճառս
նը և զմիայնակեացս , առիԹ առեալ զայն՝
Թէ գտանին ՚ի նա մոլորեալք զհետ որոգի-
նի . որ չէր սուտ , բայց և ոչ ստոյգ ՚ի վէր
ամենեցունն՝ զորս հալածէր . ոմն և ՚ի ժողո-
վի իւրում՝ որ ընդդմ որոգինեանց , գատաշ
պարտեաց զերիս կամ զչորս ՚ի նոցանէ յան-
ուանէ , և արտաքսեաց յեկեղեցւոյ՝ առանց
հաւաստի քննուԹեան : Ա.ւ քանզի ՚ոչն հերո-
նիմոս էր յայնժամ յարևելս՝ պնդագոյն յաղ-
Թահարիչ որոգինեանց , լուեալ զայսպիսի
նախանձաւորուԹիւն Թէոփիլոսի՝ ոչ գիտելով
զհանգամանս նախանձայուզուԹեանն , գրեաց
առ նա գիր ուրախակցուԹեան , և առաւել ևս
վառեաց ՚ի նոյն գործ : Ա.յն միտս էր և
՚ոչն եպիփան եպս կիպրոսի՝ աջակից հերո-
նիմոսի :

Ա.յլ Թէոփիլոս ղայնպիսի արս անուանիս և
սքանչելիս համամիտ իւր տեսանելով՝ հանդ
ըստ չափ , և զանմեղս ըստ մեղաւորս հալածէր
անխտիր : Ա՝ինչ զի ոչ կարացեալ ժուժել
միայնակեացն՝ ոչ սակաւք ՚ի նոցանէ եկին և
ան-

անկան՝ ի կոստանդինուպօլիս առ ոսկեբե-
րան հայրապետն . և նա մարդասիրութ ըն-
կալաւ զնա ոչ ինչ հարս , և ջանայր հաշտե-
ցուցանել զնա ընդ Թէոփիլէ պատրիարգի ի-
րեանց : Իսայն Թէ ընդ պատմելոյ սոցումե-
նոսի՝ Թէպէտ և ոչ արդեւ զնա յաղօթելոյ
յեկեղեցւոջ , բայց զգուշացաւ հաղորդիլ
ընդ՝ի՞նչ խորհուրդն , մինչև իմասցի զպատ-
ճառս ժողովոյն Թէոփիլեայ ընդդէմ նոյ : Այ-
ինքն՝ ոմն ասէ պալադիոս , գրեաց առ Թէո-
փիլոս այսպէս . * Ընդ՞որ՞ս ինձ արա՛ յայտ
մասին իբրև որդւոյ և եղբօր , և ընկա՛լ ի
սէր զարս զայսոսիկ ‖ . ապա եթէ գժուարին
Թուի ասէ քեզ այդ , ծանիր , զի տառա-
պեալքս այսոքիկ սահիկին ի մէջ առնուլ
զքէն գիր ամբաստանութե . ոմն և մատու-
ցեալ իսկ էր նոյ առ ոսկեբերանն :
Յայնժամ՝ Թէոփիլոս խոստի՛ արար պինդ .
* Կարծեմ ( ասէ ) ոչ անգիտանալ քեզ ըզ-
վձիռս նիկիական կանոնաց , Թէ մի՛ ոք յե-
պիսկոպոսաց գաւառացդ վրէձ արտաքոյ սահ-
մանաց իւրոց . և եթէ անգիտանաս , ուսի՛ր .
և՝ի քոյ կաց՝ի մուրհակաց ամբաստանու-
Թե հակառակ իմ գրելոց . զի Թէ պարտ էր
ինձ դատիլ , յեպիսցն եգիպտացւոց ունէի
դատիլ . և ոչ՝ի քէն՝որ եօթանասնուն և հինգ
աւուրց ձանապարհաւ՝ի քաղեայ ես՝ի տեղ-
ւոջէս ‖ :
Տեսեալ ոսկեբերանի՝ Թէ ոչ ուղիղ մտօք
ծանուցաւ առաջարկ իւր , յետս եկաց՝ի
հաշտեցուցանելոյ զսկիւտացիս ընդ պատրիար-

գին իբրեւանց , այլ արձակեաց զնա խաղաղութեամբ , զի ինքնին հաշտեսցին , և մի լեզին խափան կարեւոր պաշտամանն իւրում՝ի վերայ սեպհական հօտին : Այլ ( ըստ գրելոյ սովրատայ) բանասարկուք համբաւ ատութեան տարան առ Թէոփիլոս , Թէ նա զառ՝ի քէն քաղնագրեալսն ընկալաւ՝ի ձեռն՝ի գործ արկեալ լինել նոցա՝ի Թիկոնս . վասն և Թէոփիլոս զամս զյաստուծին իւր զարձոյց՝ի վէր ոսկեբերանի , և խորհէր ընկենուլ զնա յաթոռոյ . Թող զայլ անցս՝ որք անկին ընդ միայնակեացս :

Ոսկ ոչն եպիփան՝ որ անտեղեակ էր խորհրդոց Թէոփիլեի , շարժեաց յօրինակ նոր՝ արգել և ինքն ժողովով զդիրս արդելիի . և գրեաց առ ոսկեբերանն՝ զնոյն առնել . ոչ գրեաց առ նա և Թէոփիլէ : Այլ զի ոսկեբերանն զգաղեալ՝ի հոգս եկեղեցւոյ իւրոյ՝ յորում՝ չգոյր որոգինեան խնդիր , անհոգաւնալ Թոմէրյօտարին քանս , և ուշ ունէր միայն հանապազորդեան քարոզութեանն՝ ոչ , յարեաւ եպիփան անձամբ գալ՝ի կոստանդինուպոլիս , և բերան՝ի բերան խօսել ընդ ոսկեբերանին . Թերևս և արգալացուցանել միանգամայն զԹէոփիլէ :

Նոյն աւուրս և Թշնամիք ոսկեբերանին՝ի կոստանդինուպոլիս՝ եթէ յիշխանաց և եթէ յեկեղեցականաց , գրեալ էին առ բազումս , ոմն և առ Թէոփիլոս՝ գալ՝ի Թագաւորեալ քաղաքն , և ժողովով ընկենուլ զոսկեբերանն . և նա պատուէր տուեալ եղեալ

եդիպտացւոց վ՚ը սոցին իրաց՝ կամէր և ինքն անկանիլ՚ի Ճնդրհ ։ Եւ ահա հրովարտակ հասանէր առ նա յինքնակալէն արկադիոսէ՝ ուչ վ՚ը բանին յուվհաննու, այլ վ՚ը անսկիցն սկիտացւոց և այլոց իրաց՝ գալ՚ի դուռն, և տալ պինի ամբաստանուեց եղելոց ընմանէ ։ Ընդ Թեոփիլոս եւ՚ի Ճանապարհ երկմիտ խորհրդով. իսկ ենպսունք նր վաղագոյն ուղևորեալ էին. յորոց և ոմանք յառաջ հասեալ քան զեպիփան՚ի կոստանդինուպօլիս՝ ՚ի գալ նր լցին զմիտս նորա պէսպէս պղտոր բանիւք ընդէմ ոսկեբերանի ։ Այնի իրի յորժամ եւ ոսկեբերանն ընդառաջ եպիփանու սիրով, և հրաւիրեաց իջևանիլ՚ի հայրապետանոցի, նա ոչ էառ յանձն. յորմէ՚ի միտ էառ ոսկեբերան, թէ բանսարկուք կան՚ի միջի ։

Ընպա Թեոփիլեանք Թելադիր եղեն եպիփանու, զի առանց ընդ բանս ինչ ածելոյ ստիպեսցէ զյուվհաննէս՚ի դատապարտել զնմ գիրս որոգինի. բայց ընդէմ եկաց այսմ Թեոդիմոս եպս սկիւթացւոց՝ այր սքր, ասելով. զի՞նչ հարկ՚ի վր կայ յայժմուս զիրացդ. Թո՛ղ զի Թէպետև մոլորուիք որոգինի յայտնի են իմաստնոց, այլ կան և բազում քանք ընտիրք և պիտանիք՚ի գիրս նր ։ Եւ յոսկեբերանէ իսկ զայս պինի ընկալաւ եպիփան, Թէ գործդ այդ պէտս ունի երկար ժամանակի և քննուե ։ Եւ զի եկեալ էին միւսանգամ սկիտացիք՚ի կոստանդինուպօլիս՝ ամբաստան լինել զԹեոփիլեայ, և արդարացու-

ցա-

ցանել զանձինս , ոսկեբերան յղեաց զնոսա առ եպիփան՝ տեսանել թէ զի՞նչ ասիցէ ։ Եւ հարց ցնո՛ն եպիփան , և ասէ . ո՞ եք դուք , և զի՞նչ խնդրէք ։ Եւ նոքա ասեն . ՚ի հարցն սկիւթաց եմք , և իբրեւ լուաւ խնդրեմք վասն յանիրաւի հալածելոյ զմեզ թէոփիլէ պատրիարգին . մանաւանդ զի լուա՛ք՝ թէ և դու ՚ի նմ՛ բանի ես . մի՛թէ տեսեա՞լ է քո զաչս կերտս մեր անկե՛ր ՚ի հերձուած , կա՛մ ընթերցեա՞լ իցէ քո զգիրս ինչ մոլորութե՛ն զմեր ։ Եւ նա եպիփան . չի՛ք իմ տեսեա՛լ , այլ՝ լուե՛ալ ։ Ա՛կնատես ասեն . մե՛ք զՀակառակն ասացաք . զի տեսաք զաշակերտս քո , և գրոյց ևս քոյ հանդիպեցաք , զորոց չարախօսին այլք . բայց մե՛ք ըստ կարի մերում արդարացուցաք զքո զգուշի ։ Յայնժամ արձակեաց զնո՛ն եպիփան յիւրմ՛ . և տեսեալ՝ թէ ո՛չ ՚ի լաւ անդր բերին այս անցք , փութայր մեկնել ՚ի տեղւոջէն , և գառնալ յաթոռ իւր ։ Յայնմ՛ ժամ՛ ելոյր հասեալ թէոփիլէայ ՚ի քաղաքէդն՝ յինքն ձգեալ զբնդն յեղացց . թո՛ղ զնա՛ իբրեւ . և գտեալ զկիւբրինոս քաղկեդնէի եղբն ևս յիւր կողմն՝ քանզի եգիպտացի էր ազգաւ , ուրախ եղև յոյժ ։ Ա՛ւրանօր պատմեն սոզոմենոս և սոկրատ , թէ ՚ի սկսանիլ կիւբրինոսի չարախօսել զսոկեբերանե՛ , իսկ և իսկ խրատեցաւ ՚ի վերուստ . քանզի յաւուրսն յայնոսիկ անդր եկեալ էր սբն մարութա եղբն նիփկերտոյ՝ անցանել ՚ի Թէզրական քաղաքն վ՛ն իրացն արևելեայց . և ՚ի հանդիպելն կիւբրինոսի ՚ի խուան կոխեաց զտապն ։

յոր-

յորմէ ցաւագնեալ՝ ոչ կարաց անցանել ընդ Թէոփիլեայ ի քիւրզանդիա. և կրեաց զայն ցաւ ոտից մինչև ցմահ իւր։

Նոյնպէս Թէոփիլոս միաբանութեամբ ոսոխացոյց ոսկեբերանի, յորս անսահմանի էին ակակիոս, անտիոքոս և սևերիանոս եպիսկոպոսք, կոչեաց զոսկեբերան ի ժողով եպիսկոպոսաց որպէս գատելի։ Պիտի արար ոսկեբերան. նախ եկեսցէ Թէոփիլոս, և տացէ պինակ չարախօսացն իւրոց. և ապա գնաց կոչեսցի ի գատ. Թող զի ասէր, եկցէ Թէոփիլոս ի ժողովոյ այսր, և այլ ոք լինցի գատաւոր անաչառ. և յայնժամ գամ ի ժողովդ. զի Թէոնասիւեն Թէոփիլոսի ընդդէմ անձին իմոյ վկայ ունիմ զբանս նոր ասացեալս զինէն յաղեքսանդրիա և ի լիկիա, Թէ ի ժողով երթամ, զի ընկերից յաթոռոյ ընդյովհաննէս։

Տեսեալ Թէոփիլոսի Թէ ոչինչ վնաս ի քաղկեդոն, յարուցեալ էանց ի կոստանդինուպաւլիս՝ գիտելով զթագուհին յիւր կողմն. այլ ի մտանելն նր ի թագաւորեալ քաղաքն՝ ոչ ոք յուիտէ եկեղեցւոյն եւ ընդ առաջ նր. զի աներեսքին գիտէին՝ Թէ նա հակառակ է հայրապետին իւրեանց. բայց միայն նաւապետքն և նաւագք աղեքսանդրացւոց գտեալք ի քաղաքին՝ ուրախութեամբ և պատուով ընկալան զԹէոփիլոս. վասն և ինքն Թէոփիլոս ոչ հանդիպեցաւ յողջոյն եկեղեցւոյն, այլ գեպուղիղ գնաց ի պալատն արքունի ըստ կոչմանն եւդոքսիայ թագուհւոյն՝ որ ժամ ի ժամէ ճնայր գալատեան նորա. զի Թէպիտև ոսկեբե-

քերան ՚ը կարգի անոխակալուե հրաւիրեաց զԹէոփիլոս ՚ի հիւրանոց իւր , բայց նա չեառ
յանձն ։

Յայնվայր Թէոն արկադեաս ՚ի կողմն եր ոս-
կեբերանին . վասն հրաման ետ նմա , զի ե-
կեալ ՚ի պալատն՝ հատցէ զդատ Թէոփիլո-
սի և ոսոխաց նր . բայց ոսկեբերան ՚ի բաց
հրաժարեաց՝ ասելով . Թող դատեսցի յա-
տենի եղեսց իւրոց յերկրի իւրում , և ոչ ՚ի
մէնջ յաթոռ մեր ։

Լսեկ Թէոփիլոս զերիս եօթնեակս մեբե-
նայեր ՚ը համախմբեաց իւր և ընդ եւդոքսիայ
Թագուհւոյն՝ քակտել զսուրբ եկեղեցւոյն
՚ի յովհաննէ , և գամանել իրաւունս առ ըն-
կենուլ զնա յաթոռոյ . և արդարև ձգեցին
զոմանս յոսխտն ՚ի կողմն իւրեանց , մնաց-
եանդ գյանցաւորս . և գոհն բանս ամբաս-
տանուե՝ զբարի բարի գործս նր ՚ի չարն խե-
զաթիւրելով ՚ը Թեզագրուե ատելութե , ՚ի
Թէ յովհաննէս նորաձևուեաս մուծանել յեկե-
ղեցին , զի ինքնին առնել և այլոց ուսուցա-
նել՝ յետ հալոցելոյ զբ խորհրդոյն առնուլ
ոսկւ մի ջուր ՚ի բերան , կամ ծասկել ինչ ,
զի մի մեռցի մեռցուհած ՚ի խորհրդոյն ՚ի բե-
րանի . սոյնպէս և այլ ինչ բազում : Այլ ա-
ռաւել Թագուհին եւդոքսիա պատճառեր ,
Թէ ոչ բազում անգամ ՚ի քարոզի ընդ վայր
հարկանեի զկանայս՝ զիս կամելով Թշնամա-
նել , նոյնպես և յաւուրս յայսոսիկ խոստա-
գոյնս բարբառեալ է ընդէմ անձին իմոյ . և
արդարև խօսեցեալքն սէյն , բայց ոչ ընդէմ
Թա-

Թագուհւոյն, այլ ընդեմ անկարգուհեց եղե-
լոց ՚ի մէջ կանանց ազգի։ Եւ ահա առաւե-
լապէս այսոհիկ կանայի պատճառանօք շըր-
ջեաց եւդոքսիա և զմիտս անարի կայսեր ար-
կադիոսի. և ստիպեր օր մի յառաջ ընկե-
նուլ յաթոռոյ զյովհաննէս։
Ասէաց եւդոքսիա և զսէն եպիփան, և
բռնադատեր զնա միաբանիլ յանկումն յով-
հաննու. և յոչ հաւանիլ սէյն առնել զայն
անպատճառ, ասաց ասեն եւդոքսիա մոլեգ-
նուԹէ. եԹէ ոչ ընկենուք զյովհաննէս,
տամ բանալ զտաճարս կռոց։ Յայնժամ սէն
եպիփան ել յատենէ անտի՝ ասելով, ան-
պարտ եմ ես առաջի նոյ. և փուԹացաւ մտա-
նել ՚ի նաւ, և գնալ յաթոռ իւր ՚ի կիպրոս։
Պատմեն աստանօր միաբան սոկրատ և սոզո-
մենոս ընդ այլ ամ գրիչս վարուց ոսկեբերանի,
Թէ յայսմ վայրի մարգարէացան երկոքին
սէքն՝ եպիփան և ոսկեբերան զլինելոցան
միմեանց. զոր այսպէս առաջի առնէ ձառըն-
տիրն մեր։ Յրամանաւ Թագուհւոյն զգա-
ցուցին (ասէ) յովհաննու, եԹէ եպիփան
գրեաց ձեռնարկուԹ իւրով ընդ Թէոփիլեանս
վէճ անկման քո և արտաքսմանուէ. ընդ որ
արտմէնէ յովհաննու՝ գրէ առ եպիփան այս-
պէս. Ա՛վաքանչելիդ եպիփան՝ որ յօժարե-
ցար յանկումն իմ, մի՛ հասցես դու յաթոռն
քո. մանաւանդ զի և արտաքոյ առաքելա-
կան սահմանադրուենն և կանոնելոյ գործե-
ցեր՝ առնելով զձեռնադրուի յիմումէ վիճա-
կին. և զկապեալսն բանիւ իմով՝ արձակե-

ցեր

յեր բանիւ բերանոյ քո՝ առանց քննութեան և հարցանելոյ զպատճառս և զգործ իրին։ Այլեաց և եպիփան առ յովհաննէս այսպէս. Ա վձնասուր քոյ երկայս երանեալդ յաղթեա- յես և յաղթեացես. և որպէս ես ոչ հասից յա- ԹՈՒՈՆ իմ՝ ըստ բանի քումմ, սոյնպէս և դու ոչ հասցես ի տեղի արտասահմանուն [10]։ Այլ եթէ ինաւեկն եպիփանու ի կիպրոս՝ եհաս նմա վախճան ի նաւարկութեն ձգնհին իբրոյ. նոյնպէս և երանելին յովհաննէս յերկրորդ նոճադի աքսորանաց իւրոց ոչ ժամանեաց ի սահմանեալ տեղի արտասահմանուն։ Այժմ մեք դարձցուք ի կարգ պատմութեան՝ որ յա- ղագս նախկին նոճագի աքսորանաց։

Ա.րդ իբրև ետես թէոփիլոս՝ թէ կամք Թա- գաւորին է ընկենուլ զյովհաննէս յաԹո- ռոյ, զոր և ինքն կամէր, խորհեցաւ իբրև օրինաւոր ժողովով զնորն վճարել արտաքոյ պալատան. ամենագամայն և արտաքոյ Թա- գաւորական քաղաքին, քանզի երկեցեր ի ժողովրդենէ։ Ա՛ր գնաց անդրէն ի քաղաք- դն, և անդ ի տեղին կոչեցեալ կաղնիք կի- արուճարձան Հռուփինոսի՝ արար ժողով ե- պիսկոպոսաց՝ երեսուն կի քառասուն և հինգ Թուով։ Որ նախ ընկալաւ Թէոփիլոս ի սեր և ի հաղորդութի զմիաչանկեացս սկիտոյ, զի մի խոտիան լինիցին առաջարկուել իւրում- և այնուհետև ըստ յառաջագոյն պատրաստե- լոյ յառաջ բերան մուրհակք ամբաստանու- Թե զոսկեբերանէ՝ կէս մի ի վը ընկնի և անց- տի իրաց, և կէս մի ծանուցանք՝ սասյոդ քաղ-

քաղ-

բաղալիւք ։

Ա՛սպա կոչեաց Ժողովակն զուխտ եկեղեցւոյն կոստանդնուպօլսոյ, և Տարկեցուացաներ միաբանիլ Յանկուցիւն Յովհաննու. մինչ զի որ ոչն հնազանդի, անկցի ի պաշտամանեն. յայնժամ գան ոմանք ի քահանայից՝ որք միաբանեցան ընդ նմա, և էին երևելիքն արսակիոս աւագերէց (որ եղև յաջորդ ոսկեբերանի), և ատտիկոս և ելպիտիոս և ակակիոս երիցունք ։

Ժողովեցեալն և ի կոստանդնուպօլիս այլ եպսունք քառասուն ի կողմն ոսկեբերանի. յորոց մի էր և պալադիոս, որ պատմէ զայսոսիկ. արդ մինչդեռ նստեաք ասէ ի Հայրապետանոցի, երանելին Յովհան լցեալ Հոգւովն՝ ասէ ցմեզ. Ա՛ղջիկս արարեք եղբարք վե՛ր իմ. և եթէ սիրեք զքո՛, մի՛ որ ի պատճառս իմ լքցէք զեկեղեցի իւր. զի իմ ժամանակ լցեալ է ընդ պօղոսի, և սպասս կարծեմ՝ Թողից զնի ատառասպանօք կեանս իմ. քանզի գիտացի զգաւաճանուԹիւն բանսարկուին, որ ոչն կարաց ժուժել ծանրուե բանից իմոց ընդդէմն ։ Իսկ եպսացն յարտասուս Հարեալ՝ համբուրէին զնա գլուխ նր և զչորհալի բերանն ոսկի. և ոչ կարացեալ տանել ողորմ դիպուածոյն, զի բռնուԹ Թագուհւոյն կայր ի վր, կէաք կամէին ի բաց գնալ, և կէաք ոչ մեղուք զիեԹակաւն տատանէին ։

Ա՛սէ յովհաննէս. նստարո՛ւք աղաչեմ՝ ի տեղիս ձեր. դադարեցէք ի լալոյ, և մի՛ ձմլեցուցանէք զսիրտ իմ. զի ինձ կեանք քո՛ է, և

և մեռանել շահ . չիշեցէք զոր միշտն ասէի ձեզ , թէ Ջանապարհ է կենցաղս . որոյ ուրախալիք իւր և տրտմալիք միօրինակ անցանեն . և շահավաճառ է Ցս , գնեմք և վաճառեմք , և՛ի բաց չուեմք . միթէ լաւ ինչ լեմք քան զնահապետս և զմարգարէս և զառաքեալս , զի անմահ մնասցուք յաստիս : Այլ յասել ինձ , թէ որք մնամք՝ի քէն , և եկեղեցիք մնայ այրի , ետ պիտի . ոչ լինէն սկիզբն էառ պաշտօն քարոզուէ , և ոչ լիս դադարեսցէ . ոչ մովսեսի յաջորդեաց յեսու , սամուէլի դաւիթ , երեմիայ բարուք , եղիայի եղիսէ . պօղոսի տիմոթէոս և տիտոս և ապողոս և այլք անթիւք :

Յայնժամ ասէ եւղիւսիոս եպս ասլամիոյ բիւթանացւոյ . եթէ կամիցիմք մնալ յեկեղեցիս մեր՝ ոչ պատուիրես , հարկ լինի մեզ հաղորդիլ հակառակորդս , և ձեռն գնել՝ի մուրհակս ամբաստանուէ նոցա զքէն : Ասէ սբն . հաղորդիլ հաղորդեցարուք , զի մի պատառիցիք զեկեղեցին . այլ մի ձեռնագրիք . զի ես ոչինչ գիտեմ զանձին իմոյ չարութիւն , որ վասն արժան իցէ ինձ անկանիլ յանդուռս :

Յայնմ պահու հասին նուիրակք Թէոփիլեանոյ՝ երկու նորընծայ եպսունք՝ դիոսկորոս և պօղոս , և մատուցին առ ոսկեբերան նամակ այսպիսի . Աք ժողովս՝ որ՝ի կաղնիս , յուվհաննու . Մուրհակս ընկալաք զքէն՝ անբաւ յանցանօք լի . արդ եկ այսր , քերել ընդ քեզ և զսրապիոն և զտիգրիոս երիցունս

և զպօղոս վերծանօղ. զի պիտոյ են։
Ա. ու այս պինդ եւտուն ենպատնք՝ որ ըն ասկե-
քերանի. Ասացիք ցԹեոփիլոս ենպս (որ և
ոչ ենպս կոչեայ զյովհաննէս). մի խանգա-
րեր և մի պատառեր զեկեղեցի, որ վ՚ն ա՚ծ
երևեցաւ՚ի մարմնի. յո՛չ լուցին քեզ կանոնք
նիկիոյ. և դու անց՚ի Թէոդորեան քաղաքս.
և մի՛ կոչեր՚ի դաշտ՝ ոտ կայէն զհաբէլ. զի
մեք նախ լուիցուք զդատ քո. քանզի կան առ
մեզ մուրհակք ամբաստանութե՛ն վ՚ն քո յԵօ-
Թանասուն գլուխս ծանր ծանր բաներոյ. և
մեք ժողովեալքս՚ի խաղաղութե՛ն եկեղեցւոյ
հնորհօքն աստ՝ բազումք եմք քան զքոյսդ. զի
դու երեսնեւորդ վեցերորդ Ես՚ի միոյ նա-
հանգէ. իսկ մեք քառասուն Թո՛ւով յայլև
այլ գաւառաց, յորս են և եօԹն մետրապո-
լիտք։

Նակ ոսկեբերանն ասէ ցԻւբան. դուք զոր գի-
տէք՝ ասացէ՛ք. այլ ինձ պէտք են պինդ աս-
նել զբոյն. և դրեաց երանելին, Թէ Ես Թէ
պետև ոչինչ գիտեմ զանձին, բայց գամ՚ի
ժողովդ, եԹէ հանջիք նախ արտաքս զյայտ-
նի Թշնամիս անձին իմոյ. արդ սո՛ք են՝ զորս
որոշեմ. Թէոփիլոս, ակակիոս, անտիոքոս
և սևերիանոս. որք ոչ կարեն լինել դատա-
ւոր իմ. ապա եԹէ դատախազք իցեն, զրո՛յց
ինձ արարէ՛ք. զի գիտացից պատրաստ լինել՝
արդեօք իբրև ընդդէմ ոսոխաց, եԹէ իբրև
ընդդէմ դատաւորաց։ Ա՚ւ արդ արև եկից յայն-
ժամ՝ ոչ միայն առ սէրդ ձեր, այլև առ նմ
ժողով չորից ծագաց տի. և արդ գիտասջի՛ք,

զի Թէկլա քիւրէնացս առաքեալքէ առ իս, ոչինչ աւելի ունիք լսել յինէն։ Ո՛նոյն պահուն ա-րար ի գալ պատգամաւորաց երիցս և չորիցս։ Ելոյն եղև պահուն սքանչն և առնուիրակն եկեալ ի դրանէ յանուն եւդոքսիայ Թագուհւոյն և արկադիոսի կայսեր։

Յայսմ վայրի գրեցան այլևայլ նամականի յոսկեբերանէ և ի Թէոփիլեանց առ գահն հռովմայ և առ այլ աթոռակալս տեղեաց տեղեաց. բայց մինչ չև եկեալ էր պահնի ի նոցունց, փութացոյց եւդոքսիա զԹէոփիլոս՝ ընկենուլ զյովհաննէս, որ բողոքեր առ ժողով ընդհանուր. վայ և ժողովականն Թէոփիլեանց գրեաց ընդդէմ յովհաննու զվճիռ անկման յաթոռոյ. և յղեաց զպատճէնն առ Թագաւորն արկադիոս՝ յաւելուածով յայտնի չարախօսուէ, ոյր Թէ գործեալ էցէ յովհաննու և քրէական յանցանս ընդդէմ Թագուհւոյն, և յեզաբել անուանեալ զԹագուհին։

Այս ահա եկին յարքունուստ զօրականք, և կոմն մի ընդ նոսա հանել զերանելին յովհաննէս յեկեղեցւոյն և ի հայրապետանոցէ. և նա յօժարութիւք կամէր գնալ ընդ նոսա. զի և հասեալ իսկ էր ասեն յականջս նոր չար սպառնալիք Թագուհւոյն, Թէ ի կալ մնալ յովհաննու՝ բանակ զմեհեանս։ Այլ ժողովուրդ քաղաքին խմացեալ յերեկոյէ զկիրակն՝ զպիշերն ամ հակին զեկեղեցեաւ չթողուլ տանել զհայրապետն ի բաց։ Իսկ երանելին յառաւօտին քարոզի յետ գովելոյ զառաքինի փոյթ հօտին իւրոյ ի վր հովուին՝ յորդորեաց զնոս

խաչ

խաղաղիլ, և մի լինել խոչընդոտին աքսորա-
նաց իւրոց. զի ահա ես ասեմ երկիր լռիւ իւրով.
այլ ես և՛ ի մահ պատրաստ եմ վասն անուանն
տեառն. և դուք հաստատուն կացէք՛ ի ձեր ամ-
բիծ հաւատով և անարատ վարուք. զի այս
է ինձ պսակ պարծանաց, և մխիթարուիմ և
օծուիմ և կեանք և անմահութիւն։

Լայց տեսեալ՝ թէ ոչ թողուն զնա ժողո-
վուրդն, և լինի աղմուկ և արիւնհեղութիւն,
զայն օր դեգերեցաւ՛ ի հայրապետանոցի. և
յաւուրն երրորդի զմիջաւուրը ետ զանձն՝ ի
ծածուկ՛ ի ձեռս արքունի սպասաւորաց, զի
մի երևեսցի հակառակ կալ թիւրական իշ-
խանութեանն. և յայնմ երեկոյի եղին զերանե-
լին՛ ի նաւ, և գիշերային առաքեցին՛ ի պռե-
նեստոն բիւթանիոյ, որ և Հերոն կոչի։ Այս
ի կարկ պատմել աստանօր զբողոք և զյաւլիւն
ժողովրդեան՝ հանդերձ անիծաբանութիւք ե-
դեմ Թէոփիլեանց։

Լսակ Թէոփիլեանք ոմն Թէ յաղթանակ կանգ-
նեալ՝ եկին՛ ի Թագաւորեալ քաղաքն. և
առ ամենեսին չարախօսէին զյովհաննէ. և
կամէին դնել զայլ ոք յաթոռ կոստանդնու-
պօլսոյ. յորմէ առաւել ևս դղրդեցաւ քա-
ղաքն ընդդեմ Թշնամեաց յովհաննու։ Այս
քանզի իշխեաց սևերիանոս ասել՛ ի քարոզի
զայն, զոր և ակակիոս էր ասացեալ՛ ի ժողո-
վակի անդ իւրեանց, Թէ Թէև աղատ լինիցի
յովհաննէս յայմ յանցաւորուէ, դատապար-
տելի էր վա՛ հպարտութեանէ իւրոյ. զի ո՛ր՝ որ
Թողու զնա մեռս, ամբարտաւանից հակա-

ռակ կայ, ը այս չՀանդուրժեալ ժողովըրդեան՝ ամբոխ արարին յեկեղեցւոջ, և՝ի դուրս վազեալ՝ դիմեցին բազմութ՝ի դուռն արքունի, և ձայն բարձեր ալաղակէին գոչեալով և կոծելով. յ՛ետս կոչեցի սբ հայրապետն մեր յովՀաննէս։

Յայնմ վայրի Թէոփիլոս բանայեալ արքունի զօրականօք՝ կալաւ զերևելի եկեղեցիս քաղաքին, տալով Հարկանել զամբոխն սուսերօք և բրօք. մինչև լինել արիւնՀեղութիւնք և այլ ևս գործոց բռնակալուն։ Ա.ՀԱՅԱՂԹեաց բռնաւորուն գոչումն աղօթից բովանդակ քաղաքին առ Աստ. մինչև մեղմանալ և սրտի եւդոքսիայ Թագուհւոյն՝ի բոլորքմանէն Հասարակաց։ Ա.այց ևր զարձոյց զսիրտ Թագուհւոյն և յայտնի սքանչելեօք. քանզի՝ի գիշերին յայնմիկ՝ ասէ Թէոդորիտոս, երևաւ ահագին շարժումն երկրի. և ահ մեծ անկաւ՝ի վէր եւդոքսիայ. կիրճ ասելոյ սոկրատայ՝՝ի վաղնջ անդր եղև պատուհաս իմն յորքունի սենեկի անդ. և կիրճ պալատիոսի՝ արհաւիրք անկան՝ի ներ՝ի վէր Թագուհւոյն։ (11)

Սորին վՀ յերկրորդ աւուր անդ ստիպեաց ինքնին եւդոքսիա զարկադիոս՝ յղել պատուիրակս, և դարձուցանել զյովՀաննէս յաԹոռ իւր։ Յայնժամ գրեաց Թիգրն Թուղթ խոնարՀական առ սբն, Թէ ես չէի կցորդ չարախօսաց և դատաձանողաց անձին քո. և Թէ յարգեմ զքեզ ոպէ քահանայ Աստուծոյ և հայր հոգևոր. և յղեաց վաղվաղակի՝՝ի ձեռն բրնաս

սոնի հաւատարիմներքինւոյն և բարեկամին յովհաննու, զի դարձուսցէ զնոր հայրապետն ի տեղւոջէ աքսորանացն ի բիւթանիոյ (այն է մուտանիա)։

Վրեաւ էր և եւդոքսիա չքմեղուքի զանձնէ այսպիսի (ըստ յառաջ բերելոյ նորուն ոսկեբերանի ի Ճառս իւր՝ որ զկնի դարձին)։ * Ար՛ի համարեսցի սրբուի՛ քո՝ գիտակ լինել ինձ իրացն գործեցելոց. անպարտ եմ ես յարենէ քումմէ. չար և անզգամ մարդիկ զայդ մեքենայեցին. այլ իմոցս արտասուաց ո՜ծ վկայ, ուր մատուցանեմ պատարագս ... յիշեմ, զի զաւակք իմ՛ի ձեռս քո կնքեցան ||, այլովքն հանդերձ։

Ընդ ի գալ կոչողին ի պրենետոն բիւթանիոյ՝ որ է յանդիման նիկոմիդեայ, ոչ կամեցաւ յովհաննէս իսկ և իսկ դառնալ ի թագաւորական քաղաքն. այլ զտեղի հաւ ի գիւղն մարիանայ. մինչև յայտնի լիցի ասէ իրաւացի քննութիւնք ժողովոյ անմեղութիւն գարձելոյն։ Ապայ քանզի մի զհետ միոյ ընթանային պատուիրակք, մինչև բռնկմանալ յոյժ նաւաց և նաւակաց ի վերայ ծովուն, հարկեցաւ սբ հայրապետն յետ քանի մի աւուրց գալ անցանել ի կոստանդինուպոլիս. այլ իբրև էլ ի կալուածս թագուհւոյն՝ անդրապետն ասացեալ, գարձեալ սպասեր, զի նախ արդարացուսցեն զինքն էպիսկոպոսունք, և ապա մտցէ յեկեղեցին։ Իսկ ժողովուրդն իմացեալ զայն՝ վերստին վառեցաւ բորբոքեցաւ ընդ մեծաց. նմին իրի և ոսկեբե-

րանն անդանդաղ ելին եմուտ յեկեղեցին ։
Յայսմ վայրկի խոյս տուեալ փախչէին թաք-
չէին հակառակորդք յովհաննու՝ որ յեպիսց
և ՚ի քահանայից . և Թէոփիլոս ինքնին վա-
ղագոյն քան զամենեսեան ածապարեալ էանց
յասիակողմն . և անդ կամէր դատ առնել ՚ի
վր հերակղիտոսի եպիսն ՚ի բացակայութե
նր . այլ ՚ի լինել աղմկաց ՚ի մէջ կոստանդ-
նուպօլսեցւոց և աղեքսանդրացւոց մինչև
ցհեղուն արեան , գաղտագնաց եղև և ան-
կաւ յերկիր իւր՝ իւրովքն հանդերձ ։
Իսկ երանելին յովհաննէս ընդ մտանելն յե-
կեղեցի իւր՝ առ օրին խօսեցաւ սակաւուք
բանս մխիթարութե առ ժողովուրդն . և ՚ի
վաղիւն անդր ձոխաբար ՚ի կիր արկեալ զոս-
կիաբուղխ վէպութիւնն՝ աքանչացոյց զամենե-
սին ընդ անսխակալ և ընդ անայլայլելի առաքի-
նուն անձինն , ընդ սէրն՝ զոր ունէր ՚ի վր հօ-
տին , և ընդ զուարթութե հոգւոյն՝ որով գո-
հանայր զնա ՚ի վր անցից անցելոց ։
Զդէպ այս ամ խառնուիք՝ որ ընդէմ օսկեբե-
րանի , եղեն յամի տն 403 և 404 . իսկ ար-
տասահմանութեին տևեաց օր մի և եթ . զի
յերկրորդ աւուր յետս կոչեցաւ . և յաւուր
երրորդի կամ չորրորդի եմուտ ՚ի քաղաքն ։
Յայնժամ ժողովեցան եպսունք իւր վաթ-
սուն . և հաստատեցին զանմեղութի քաջ հով-
ուին , և ՚ի դերև հանին զնա զրպարտութիա
ժողովակին Թէոփիլեանց . և եղև առ ժամն
խաղաղութի ՚ի Թէրսական քաղաքի ։
Այլ յետ անցանելոյ երկու ամսոց՝ միւսան-
գամ

գամ արծարծեցաւ ՚ի միջոցի չարին Թշնա-
մուԹի եւ դոքսիայ Թագուհւոյն ընդդեմ ոսկե-
բերանի . զանգի ՚ի խրատել հայրապետին
զեւդոքսիա ՚ի քայ քառնալ զարձան իւր՝ զոր
կանգնեալ էր ՚ի վեր սեան յանդիման եկե-
ղեցւոյ սքնչն սոփիայ , ուր և հեԹանոսական
խաղք լինէին , ըմբռնստացաւ Թագուհին , և
խորհեր չարիս ՚ի վեր յովհաննու ։ Այս նա ՚ի
քարոզս իւր ըստ սովորական համարձակախո-
սուԹենն խօսեր բանս աղդուս ՚ի կշտամբուԹ
անկարգուԹեց մեծի և փոքու . իսկ եւդոքսիա
համարեր՝ ԹԷ զինքն կծանէ նա յայմ բանս
իւր ։ Ելոյզ զի գտանի և ձառ յանուն ոսկե-
բերանի յաւուրց անտի նր ՚ի մէջ յունաց .
որոյ սկիզբն է . * Դարձեալ հերովդիադա
մոլի . դարձեալ խռովի , դարձեալ կաքաւէ .
դրձել զյովհաննու զգլուխ ՚ի վեր սկտեղ առ-
նուլ ցանկանայ ։

Ամացեալ հակառակորդաց ոսկեբերանին զգ-
ծանրացաստումն լինել Թագուհւոյն ՚ի վեր նր,
գրեցին վաղվաղակի առ Թէոփիլոս , զի կամ
անձամբ վերստին եկեսցէ , և կամ առաքեսցէ
զոմանս յիւրոցն առ ՚ի միւսանգամ հանել
յաԹոռոյ զյովհաննէս . և նա առ ահին ոչ
եկն , այլ յղեաց միայն զերիս եպսունս . ե-
կին և այլ առաջնորդք յաստուոց , ՚ի պոնտաց-
ւոց , ՚ի փռիւգացւոց և ՚ի կապադովկացւոց .
զորս արկադէոս Թուէր կոչել ՚ի կողմն ոսկե-
բերանի , և եւդոքսիա ընդդեմ նր . ոմն և ար-
դեամբք պատրակտեցան ՚ի մէջ իւրեանց . զի
ամանք յեկեղեցւոյ անտի հաղորդեցան ընդ ոսկե-

բերանի, և այլք՝ ի բաց կացին՝ ի հաղորդու-
թէ նը. և զթագաւորն զկնովին յետս նա-
հանջեցին, զի մի երթայցէ յաւուր տօնի
հրաշափառ ծննդեան նոյն յեկեղեցի նը: Եւ
նորանոր պատճառանս կուտեալ՝ ի ժողովի
իւրեանց ընդէմ երանելւոյն, թէ դարձ նը
չեղև օրինաց, ոչ գրեալ էր և թէոփիլոս,
շրջեցին զմիտս թագրին. մինչև ետուն նմա
առաքել պատուիրակս առ յովհաննէս, զի
ելցէ յեկեղեցւոյ:

Յայնժամ ոսկեբերանն արար պինակ՝ ըստ գրե-
լոյ պաւղիոսի. * Ես յայր փրկչէն ընկալայ
զայս եկեղեցի՝ հոգ տանել փրկուե ժողովր-
դեան. և ոչ կարեմ թողուլ զայն. ապա ե-
թէ քեզ այդպէս կամք իցեն, քանզի ըստ քո
իշխանութե ես քաղաքս, բռնութե արտաքսեա՛
զիս. զի իշխանութի քո ինձ լինիցի անմեղադ-
րուի թողլոյ զիմ կարգ: Ապա եկին ոմանք
յարքունի դրանէ, և զգուշութե առեալ տա-
րան զնա յեկեղեցւոյ՝ ի հայրապետանոցն.
և անդ թողին գնա:

Նոկ՝ ի ձրագալուցի զատկին՝ յորում ինքնին
մտեալ էր կիր կամէր մատանել ոսկեբերան յե-
կեղեցին ըստ նախանձելոյ ուխտին և ժողո-
վրդեան, հասին՝ ի վե՛ր զօրք արքունի, և հա-
րին սրոճեցին զամ՛ ամբոխն քահանայիւք
հանդերձ՝ ի տաճարէ անտի. և՝ ի փախչիլ
նոցն ըստ երեկս յընարձակ մկրտարանն՝ կոստան-
դիանոսի կոչեցեալ, ՝ի մէջ դիշերի եկին զօ-
րականք, և անտի ևս հանին վարեցին զնա
՝ի բաց. ըստ նմին օրինակի հալածեցին զին-

ոճորք

ուխտիք յաւուր զատկի զբազմութենէ նորահաւատ-
նումնք ժողովրդեան՝ որք շրջէին արտաքոյ
քաղաքին ՚ի հանդերձս սպիտակս, զարս և
զկանայս. մինչև զոմանս ՚ի բանտ արկանել
և ՚ի կապանս։

Վտառ և ոմն յարբանեկաց չարին, որ դիւա-
հար ձևացեալ՝ գողեալ ուներ զսուսերն, զի
պատահել սքեմ հայրապետին՝ սպանցէ զնա.
այլ ըմբռնել ՚ի սպասաւորաց տաճարի՝ ածաւ
առ քաղաքապետն. զոր լուեալ սքանչելոյն
յովհաննու՝ փութապէս առաքեաց զոմն յե-
պիսկոպոսաց իւրոց, և ազատեաց ՚ի պատժա-
պարտուէ զչաւադիրն կենաց իւրոց։ Ի մթա-
նեցաւ և ծառայն ելպիդիոսի երիցու, այն՝
որ յարձակէր սուսերամերկ ՚ի հայրապե-
տանոցն, և ոչ կարացեալ առնել ինչ յովհան-
նու՝ զոմանս ՚ի ժողովրդենէն կարեվէր խո-
ցեալ էր. ուստի և կուսակիցք յովհաննու
պահ եդեալ զգուշութիւն պահէին զհայրա-
պետանոցն զցայգ և զցերեկ։

Ասկ զկնի պենտեկոստէին ՚ի յունիսի. 20.
յամի տն 404. եկն առ նա հայրապետն պատ-
րիկիոս արքունի նօտար բանիւ արկածո-
ղի կայսեր, և ասէ. ակակիոս, անտիոքոս,
սեւերիանոս և կիւրինոս եպիսկոպոսունք ասացին
ցիս, թէ ՚ի մեր գլուխ եղիցի անկումն յով-
հաննու. արդ յանձն արարեալ զքէզ այ՝ եւ
յեկեղեցւոյ և ՚ի քաղաքէս։ Ո՛ այս պատ-
գամ արքայի լուեալ երանելի հայրապետն՝
գոհացաւ ցայ. և յարուցեալ ողջոյն ետ ե-
պիսկոպոսաց և քահանայից եղելոց առ նմա,

և

և հրաժարեաց ՚ի նոցանէ արտասուօք . և արք դրանն յափշտակեցին զնա , և եդին կապանօք ՚ի նաւակ մի փոքր՝ հանդերձ երկու ընկերօք կիրակոսիւ և եւղիւսիոսիւ , պատուիրեր տումէք փութանակի անցուցանել զնա ՚ի Նիկիա բիւթանացւոց , և անտի փութացուցանել ՚ի սահմանել տեղւոյ աքսորանաց , ուր անյոյս մնասցէ ժողովուրդն ՚ի միւսանգամ դարձէ անտի նմա :

Եւ եղև առ օրին պատուհաս ՚ի ձանէ ՚ի քաղաքին . զի ՚ի նմին աւուր յանկարծակի հուր անկաւ յեկեղեցին , և յետ հրդեհելոյ զայն՝ էանց ՚ի պալատն , և այրեաց զընդարձակ ապարանս սինկղիտոսին՝ որ փողոցաւ զատեալ կայր հանդէպ նր ընդ հարաւակողմն . զորոյ զպատճառն ( ասէ սոզոմենոս ) այր ՚ի վերայ եղբօր իւրոյ արկանէր . զի Թշնամիք յուշկանոյ ասէին ցբարեկամն նր , Թէ դուք արարիք զայդ հրձգութի՛ . իսկ նոքա , Թէ դուք կամիք և զմեզ այրել ընդ եկեղեցւոյն , և տակաւին այդպէս խօսիք :

Ա.յլ ստուգագոյնս գրէ պալադիոս , Թէ ՚ի նշանակ ցասմանն ՚ոյ բոցն եւ յանկարծակի յաՀոռոյ անտի՝ ուր նստեր ՚որ հայրապետն . և ՚ի վրէժխնդրութի՛ Աշմարիտ քարոզի բանին ՚ոյ՝ զորոյ ոչ ծանեան զյարգ , ծախեաց զեկեղեցին . և անցեալ ընդ օդս՝ կալաւ զապարանս ծերակուտին . և յերիս ժամս յաՀիւն դարձոյց զբազմամեայ գործս :

Ա.յլ որ զարմանալին է , ընդ հասանել ոսկեբերանի ՚ի բիւթանիա՝ ժամաներ զկնի նորա

լուր

լուր հրդեհին եղելոյ ի Թափաւորական քա-
ղաքին, ոմն Թէ նա և ընկերք նր՝ որ ընդ
իցեն պատճառք այնմ. այր վն սպառնային
ընդն զօրականք. և զընկերս նր կապեալս
յետս դարձուցին՝ գատել ի կոստանդնուն-
պօլիս. զորս և անպարտ գտեալ արձակե-
ցին: Նոյն ասկեբերանն գրեաց առ ոսոխս
իւր զայս ինչ. Թէպէտև այլով մասամբ չե-
տուք ինձ ասել տեղի զանձն արդարացուցա-
նելոյ՝ ոմն օրէնն եր, գէթ յիրս եկեղեցւոյ
եղեց լսել. և յայնժամ ծանիջիք, արդեօք
պատճառ իցեմ ես հրդեհին, ոմն ասէքդ:
Նայց զինուորքն՝ որք տանէին զնա, ոչ Թո-
ղացուցին դնել զոր կամէր. այլ կարձեալ
զբանս ընդն՝ խաղացուցանէին զնա զցայգ և
զցերեկ՝ տանել ի սահմանեալ տեղին հե-
ռաւոր, այն է կուկիսոն փոքրուն Հայոց:
Յայսմ միջոցի եհաս լուր ամ եղելոցս յա-
կանջս եկեղեցւոյն Հռովմայ, և ընորհեսի
կայսեր՝ որ նստէր ի Հռովմ. ուստի եկին
նամակք յինոկենտիոսէ պապէն առ ուխտ
եկեղեցւոյն կոստանդնուպօլսոյ, և յոնո-
րիոսէ առ եղբայր իւր արկադիոս՝ լի մեղա-
դրուԹեբ ընդէմ վնասակարացն յովհաննու,
և արդարացուցիչք առն նմա: Գրեաց և ընդն
նեղոս աբբայ աշակերտ ոսկեբերանի առ ար-
կադիոս՝ յայտ առնելով, Թէ այս ամ պա-
տուհաս ժամանակիս են նշանակք բարկու-
Թենն նոյ ի վր ձեր: Այլ յայտնագոյն պա-
տուհաս ծանուցաւ ամենեցուն, զի ի նմին
տարւոջ ի վերջին աւուր սեպտեմբերի տե-

ղաց

զաց կարկուտ սաստիկ՝ երևելի մեծութիւն ի կոստանդինուպոլիս և ի սահմանս նր . և յաւուրն չորրորդի եւդոքսիա թագուհին վճարեցաւ ի կենաց :

Իսկ երբ հայրապետն յովհան յարտասահմանութիւնէ իւրում ուրախութիւն ընդանայր զճանապարհ իւր . և ուր և իջևաներ՝ ոչ դադարէր ի քարոզելոյ զբանն աստ , և ի գրելոյ թուղթս զօրաւորս առ բազումս . յորս յայտառնէ զսքանչելի համբերուն իւր յամս տառապանս և զկատարեալ ներողամտութիւն . մինչև գովութիւն խօսել և զարանց՝ որք տանէին զնա յաքսորս . գրեաց և բանս մխիթարութիւն առ եպիսկոպոսս և առ քահանայս՝ որք ի պատճառս իւր բանտարկեալ էին ի կոստանդինուպոլիս :

Պատմէ ի թուղթս անդ և զվիշտս երկարութիւն ձանապարհին , զոր արար յաւուրս եօթանասուն . քանզի էանց ի նիկիոյ ընդ պաղատացւոց և կապադովկացւոց . մինչև հիւանդացեալ ի ձանապարհի , և հանապազօրեայ տենդիւ տապայեալ՝ հազիւ եհաս ի կեսարիա : Այն անդ գտեալ կալաւ փոքր մի . և յայնմհետէ քնակիչք հեռաւոր տեղեաց՝ կարեկից մեզ առ լինէին . զի ուր ի կոզմանս յունաց ընդ ակամբ հայէին ի մեզ , ի հեռագոյն սահմանս * որք միանգամ ընդառաջ լինէին մեզ՝ կէս մի յարևելից , կէս մի ի հայոց ձէն , և որ ի կոզմանց կոզմանց , աղբիւրս հեղուն արտասուաց՝ ընդ հայելն ի մեր վէր , և յոգւոց հանեն . և ընդ ամ ձանապարհն

պարկն կոծելով և աշխարելով զհետ մեր ընթանան։ Եւ այսոքիկ ՚ի այն յիշատակեցան ՚ի մէնջ (ասէ ՚ի Ղուկիանոս. ըստ պէմպտա), ոչ զի ծանիցես՝ թէ բազումք են առ մեզ, որք ՚ի նոյն ցաւակցուէ դեգերին ոչ զձեզ։

Եւ այս ոչ սակաւ բերէ մխիթարութիւն։ Զի ՚ի բազում թուղթս իւր և զայլ ազգի ազգի նեղուեց՝ զորս կրեաց հանդերձ ներքին և անպատում մխիթարութիւնք հոգւոյն։ Այլ յորժամ հասաք ասէ ՚ի կոկիսոն, (որ էղև յԵլս օգոստոսի,) անդ զերծաք ՚ի տենդէ և յամ տառապանաց, ոչ և յերկիւղէ բարբարոսաց. զի ՚ի կեսարիոյ մինչև ՚ի կոկիսոն երկիւղ մեծ էր ՚ի սիկարեանց խաւրացոյց։ Որ ՚ի կարգի բանիցն յերուս զայն բան. * Ծառք ոյ յաղագս ամի. զի յամի՝ որ ընդ իս անցանեն, ոչ դադարեցայց զայս բան երկրորդել։ Ուստի ասէ առեալ այն մաղթանք եկեղեցւոյ. * Ծառք քեզ տէր, փառք քեզ. յաղագս ամի տէր փառք քեզ։ Եւ եղև ՚ի հանդարտիլ սքին ՚ի կոկիսոն՝ գրեաց անտի և՛ս բազմագոյն թուղթս ՚ի զանազան տեղիս։ Ակին անդր առ նա և ոմանք ՚ի բարեկամաց իւրոց. և հնարէին միջնորդել առ պահապանս նր՝ ոչ թէ ՚ի լաւ և՛ս տեղի փոխեսցեն զնա յանշուք և յաղքատին աւանէ անտի. բայց երբեմն հաձեալ էր ընդ այն տեղի, և ոչ կամէր ուրեք երթալ. մանաւանդ զի և հայք բնակիչք տեղւոյն սիրով մեծաւ կապեցան ընդ նա՝ հանդերձ եպիսկոպոսաւ իւրեանց՝ որում անուն էր եղբայր, ընդ յու-

նաց

նաց ատելիսս, որ էր ասպնջական սքէն։ Ան-
և այլ ոմն վիճակ հայոց և եպս գիսակորոս ա-
նուն՝ ի պարթևական ցեղէ՝ որ լուսաւորչին
սիրելի և ընտանի եղև յոյժ սքէն. և՝ ի խըն-
դրոյ սորա՝ որպս և ժողովրդեան՝ խոսեցաւ
ոսկեբերանն միանգամ և երկիցս ձառ ներ-
ղական գովեստի՝ ի պատիւ նոցն գրիգորի
հայաստանեայցս լուսաւորչի, և ուրախ ա-
րար զորդիս նր՝ ի քս՝ յաւուր ծննդ նր։ (12)
Ի հասանել ձմերայնոյ՝ ի մուտս ամի ՇՆ
405. խօթացաւ երանելին. այլ՝ ի հասա-
նել գարնանոյ գարձաւ յառաջուԹիւն, և
գարձեալ սկսաւ պարապիլ՝ ի գրուԹի և՝ ի
քարոզուի բանին նոյ. վՀՅ ասէ պալադիոս.
* երանելին յովհաննէս զտարի մի (և զա-
միսս իբր չորս) կացեալ՝ ի կուկիսոն՝ զբազում
աղքատս կերակրեաց՝ ի հայս, ոչ այնչափ
հայիւք, որչափ բանիւք ։ Ի մացեալ Թշնա-
մեացն յովհաննու՝ Թէ նա հաստատեցաւ յա-
ռաջուԹե, և հանդիստ իւր եդիտ՝ ի կուկի-
սոն, եւտուն փոխել զնա՝ ի տեղւոջէն, և
տանել բռնի տաւտապանօք յամայի ամուրն
արսաքիսոն՝ ի սկիզբն յաջորդ ամի 406. ոչ
դէպ ուղիղ հաստացանելով՝ ի դղեակ անդր,
այլ աստ անդ շրջեցուցանելով՝ ի լերինս և
յանտառս յաւուրս ձմերայնոյ. որով նորո-
գեր հիւանդուԹի նր. ոմն յայտ է՝ ի ԹղԹոց
Թզին, յորս յիշէ զանհնարին վիշտս իւր յերե-
սաց խօԹուԹե, աղքատուԹե, և աւազա-
կաց. մինչև եկին յարտաքիսոն։ Ընդ գրեաց
գրիչն ոսկի զբանչելի զայն գիրսն՝ ի ձև նա-

մակ

մակի՝ մակապրեալ ։ * Որ ոչն միասէ անձին իւրում , ոչ ոք կարէ զնա միասել ‖ . Թո՛ղ զայլ Թուղթս ուղղեալս՝ ի կոստանդինուպօլիս , ՚ի հռովմ , և առ առաջնորդս տեղեաց տեղեաց ։

Ասացք քանզի ոմն ՚ի կոկիսոն , նոյնպէս և յաբաբիսոն փառաւոր արար ահա զոր ոսկեբերանն , տալովն ի՛ջնորհս առաջի ամենեցուն՝ քանիւ և վճռպուք և պէսպէս նշանօք , զայս լուեալ ոսոխաց նո՛ր՝ ոչ կարացին տանել . վայ դարձեալ հրաման հանին ՚ի դրանէ , զի վաղեսցի ՚ի կողմանցն հայոց ՚ի սահմանս պոնտոսի մինչև ՚ի գիւղն կուչեցեալ պիդիւսոն յերկրին Ձենաց յեզր սեաւ ծովուն ՚ի մէջ բարբարոսաց . և զինուո՛րքն՝ որք փութային ցանկին զնոքն ՚ի Ճանապարհի , ասէին ցնա . եթէ մեռցիս զՃանապարհայն , մեծամեծ պարգևք կան ինան մեզ ՚ի դրանէ . և վասն իսկ յաճեցուցին զնա ընդ անկոխ տեղիս զամիսս երիս ։

Իբրև մերձեցան ՚ի սահմանեալ տեղին , ոչ կարաց նոքն յառաջ երթալ առ տկարութենէ . քանզի և հետի ընթացուցանէին զՃգնաւոր նահատակն քո՛ . վայ իբրև ժամանեցին ՚ի կոմանա քաղաք պոնտոսի ( զոր սոզոմենոս կոչէ կոմանա հայոց ) , կամեցան հանգչիլ առ վայր մի . և անցեալ ընդ դուռն քաղաքին իբրև մղոնս հինգ կամ վեց , օձեցան արտաքոյ պարսպաց ՚ի վկայարանի սո՛ին բասիլիսկոսի ։ Ի նմին գիշերի երևեցաւ վկայն քո՛ի երանելոյն յովհաննու , և ասէ . զօրացի՛ր , և

քա՛ջ

քաջ լեր եղբայր յովհաննէս , զի վաղիւն ի միասին լինիցիմք : Յարևեալ եր նա վկայն և երից ու վկայարանին , և ասացեալ . պատրաստեա տեղի եղբօր մերում յովհաննու , զի գայ :

† Օ օրացաւ նա ոսկեբերանն ի տեսլենէ անտի և միխիթարեցաւ յոյժ . և ի վաղիւ անդր աղաչէր զվինուճորան ծնալ նմա մինչև ի հինգերորդ ժամ աւուրն . բայց նոքա ոչ լուան նմա , այլ առեալ զնա գնացին . այլ յետ երթալոյ իբրև ասպարէզս երեսուն՝ իբրև տեսին , թէ մեռանի , ըստ աղաչելոյ նորին դարձուցին զնա անդրէն ի վկայարանն՝ ուստի ելեալ էին . և գտին անդ զբազմութի՛ն հաւատացելոց :

Յայնժամ հանեալ նորին զհանդերձս ձանապարհին՝ ետ որոց անդն կային . և ինքն իբրև յաւուր ուրախութե՛ զգեցաւ զնորն մինչև ի կօշիկս ոտից . և հաղորդեալ նոր խորհրդոյն՝ արար զվերջին աղօթս իւր ի վկայարանի անդ . և ասպա երկրորդեալ զսովորականն զիւր բարբառ , փառք ա՛յ յաղագս ամի , և ասացեալ զամէնն , տարածեաց զնոր ոտս իւր , և աւանդեաց զոգ՛արթուն՛ զհոգին ի ձեռս ա՛յ :

Այլ որ աքանչելին է , ըստ ասելոյ պաղատիոսի՝ յայնմ ժամու այնչափ բազմութի՛ ժողովեցեր անդ միանձանց և կուսանաց և այլոց գիտակ եղելոց սրբութե՛ երանելոյն յովհաննու՝ յԵփէս պոնտացւոց , հայոց , ասորւոց և կիլիկեցւոց , մինչև բազմաց կարծել՝ թէ



ի

'ի վերին ազգմանէ եկեալ Հասեալ ինչ նոյ
անդր ։ Ա.պա ամ պատուհասով և շքով ի թագաւոր-
դեալ զնոք մատնին , և մեծարել տօնախըմ-
բութիւք՝ հանդերձ քահանայիւք և եպիսկո-
պոսաւ տեղւոյն , Թաղեցին զայրն այ որպէս
յաղթօղ նահատակ առ դերեզմանի սբոյն
բասիլիսկոսի 'ի նմին վկայարանի ։ Ա.ւ եղև
վախճան սբոյն՝ ըստ տոկրատոսի 'ի ժը կաղան-
դայն հոկտեմբերի , այն է 'ի ժդ սեպտեմ-
բերի , յամի տն 407 ։ Յետ նոքա վեցամեայ
հայրապետութիւնէ , և եռամեայ և եռամսեայ
արտաստահմանութիւնէ ։ այս է յինեներորդ ամի
ենթսութիւնէ իւրոյ , 'ի հաստակի նոքա վաթսուն
կիր եօթանասուն ամաց ։ ըստ ոմանց հինգ ։
Ա.ռ ձեռն պատրաստ են մեծամեծ գովութիք
սբոյն առ ամ հին և նոր մատենագիրս ։ և ա-
ռաւել պանծալի ներբողեանն յորինեալ 'ի
սբոյն պրոկղէ և 'ի սբոյն նեղոսէ՝ յերկոցունց
ձեռաւսուն աշակերտաց նր ։ ոմն և միւս աշա-
կերտ նորուն սբոյն յովհաննէս կասիանոս վան-
եցուչս գրեաց զնմանէ այլովքն հանդերձ ։
Ա.յլ անղուգական գովութի տիեզերալոյս
վիճակիս է յոսկեբերանն գիրս նր , զորս ամբա-
րեաց 'ի գանձարան եկեղեցւոյ՝ 'ի փառս և
'ի գովեսս այ , և 'ի շինուածի հաւատացե-
լոց , յորոց փառաւորեալն է ըստ ամ տիեզերս ։
Ա.ւ արար ած բազում սքանչելիս 'ի ձեռն
երանելի ոսկեբերանին առ կենդանութ նր
և յետ մահուն ։ ոմն է տեսանել 'ի լինակա-
տար պատմութիւնէ նր [13] ։ Ա.ոյց եկից 'ի տե-
սիլս և 'ի յայտնութիս , զորս 'ի բերանոյ վար-

դապետին Իւրոյ լուծեալ յիշատակէ՝ որ ա-
բան նեղոս՝ ի Թուղթն առ անաստաս եպս.
ուր ասէ այսպէս. * Խուզանդացւոց մեծի
եկեղեցւոյն, մանաւանդ թէ հաւօրէն տիե-
զերաց լոյսն, յովհաննէս սքանչելի քահա-
նայ՝ կորովատես աչօք, բազում անգամ հայ-
եցեալ ետես՝ գրեթէ յամ ժամս զհրոյնին
(այ զտաճարն այ) շրջափակել պահպանութ
հրեշտակաց, և ոչ երբեք լքեալ՝ ի նոցանէ,
առաւել՝ ի ժամ որ և անարիւն պատարա-
գին։ Օ որ նա ինքն՝ զարմացմամբ և ուրա-
խութիւ լցեալ՝ պատմեաց հարսզատ և հո-
գեկցորդ բարեկամաց Իւրոց՝ մեկուսի յամ-
բոխէ։ Խանզի ասէր նա, թէ ըստ սկսանիլ
քահանայի մատուցանել զնոր ընծայն՝ յան-
կարծակի բազմութիւք յերանելի իշխանու-
թենէ իջեալ՝ ի յերկնից, և պայծառատիպայլ
ինն զգեստուք շուրջ պատեալ, բոկ ոտիւք,
և անթարթափ աչօք, և խոնարհ երեսօք
պարառեալ զսեղանովն, պատկառանօք մե-
ծարանաց և բազում հանդարտուք և լռու-
թիւք յանդիման լինին մինչև ցկատարումն ահա
ւոր խորհրդոյն. և ապա ելեալ յամ կող-
մանց զպատուական հրոյնեացն՝ ոմն ի՝ ինո-
ցանէ սպասաւորէն, օդնեն, և զօրացուցիչ
լինին անդ եղելոց ե՛պսաց և քահանայից և
իւրաքանչիւր սարկաւագաց, որք բաշխեն
այլոց զմարմինն և զարիւնն պատուական ||։
Այսմիկ ե իմանալ ըստ նեղոսի և զայլ տեսու-
թիւնս և զհրեշտակային քաղաքավարուն՝ որ
ոսկեբերանին։

Յաւատարիմ եւ ի տեսիլ՝ որք առ այլս եղեն վասն, այն՝ որ եղև յետ փոխմանն՝ առ առեւլիոս ՚ի եղբայր ենպս ՚ի կոկիսոն. զի սա յետ լինելոյ ասպնջական ոսկեբերանի ՚ի տան իւրում՝ յորժամ լուաւ զկատարումն նորա ՚ի կոմանա, կարօտեր տեսանել զնա, թէ յո՞ր փառս իցէ հասեալ. և տեսեալ հոգւով զնոբ հայրապետս և զվէրպս յարքունիս երկնից՝ այն ինչ նայեր տեսանել ՚ի մէջ նոցա զոսկեբերանն յովհան, և հարցանէր՝ թէ ո՞ւր իցէ, լուաւ՝ զի ասէր ցնա հրեշտակն. զյովհաննէ՞ս խնդրես զապաշխարութեան վէրպն. զնա ոչ ոք կարէ տեսանել՝ ի մահկանացու մարմնի. վասն զի նա անդ է՝ ուր աթոռն է նոյ: Այս այս է՝ զոր նուիագէ եկեղեցի ՚ի պանծալի գովեստ սբոյն ՚ի շարականոցի. * Որ յանձառելին մերձեալ ՚ի լոյս հուպ երկրորդութեանդ՝ ով երանելի՝ ոգի վէրպ. այսօր տօնէ եկեղեցի զհանգստեան քո՝ որ զվիշատակս մաղթեաւ փրկողին զթողութիւն մեղաց մերոց ‖: (14)

Պատմէ եթէ յովհան դամասկացի և զայս կարևոր հրաշս՝ ՚ի ձեռն պապէրոյ: * Որ ՚ի ղաւ (ասէ) թէոփիլոս, զոսկեբերանն զյովհան զրպարտեալ առ եւդոքսիայ թագուհուոյն ... արդ վասն այդց մեղաց թէոփիլոս չկալ երբեր տալ զհոգին (՚ի ժամ վախճանին, որ եղև յամի տն 412). մինչև բերաւ առ նա պատկեր ոսկեբերանին. որում իբրև երկիր եպագ, արձակեաց զոգին ‖. և զայս աւանդե ասէ իսիդորոս սարկաւագ՚ի ՚ձմկագրութե

թւրումն։ Այլ՝ի նշանակ ղղջման Թէոփիլոսի քերեն ոմանք ասել նմա՝ի ժամ հոգեվարի և զայն բան, որ գրեալ է՝ի վարս հարցանց. * երանի՛ քեզ աբբայ արսենիէ, զի ցանգ վե այսր ժամու հոգայիր ‖, կամ զայս ժամ միշտ յիշելիր։ Այս Թէոփիլոս կաթողիկոս Աղուանից և ազգական՝ մեծն կիւրեղ աղեքսանդրացի, զնո՛ր կողմն ունելով զառաջինն՝ ըստ ակամբ հայերս յոսկեբերան առ ժամանակ մի և յետ մահու նո՛ր, քայց յետոյ՝ի միտ եառ զյարգ նո՛ր ըստ արժանւոյն՝ հաւատարմացեալ և յերկնաւոր տեսլենէ. ոմն ասացաւ՝ի վարս նո՛ր։

Յետ վախճանելոյ և թաղելոյ սրբոյ ոսկեբերանին՝ի կոմանա՝ իսկ իսկ սկսաւ հոչակիլ անուն սրբոյ Թէ՛ ըստ՝ առաւել քան՝ի կենդանութեն։ մինչև համարձակ ասել զրոյն պլուկղի զնմանէ. * ՚ի պոնտոս անկեր դնի, և ընդ ոլորտս տիեզերաց գովի ‖. վասն սկսան՝ի զանազան եկեղեցիս ոչ լոկ յիշատակել զնա ոմն զոմն՝ի ննջեցելոց եպսկոպոսաց, այլ առանց ըստ բանս ինչ ածելոյ տօնել իւրեւ զկենդանի զնո՛՝ի սեպտեմբերի 26. զի Թէոպհտև կատարումն նո՛ր եղև՝ի սեպտեմբերի ԻԹ, քայց վե տօնի խաչավերացին քանի մի աւուրս քայեալ ձգեցին զտօն զրոյն։ Ասկ յետ ժամանակաց հաստատեցաւ մեծ տօնախրմբ լինել՝ի նոյեմբերի 13. զոր ոմանք դուշակեն լինել օր արտասահմանութե՛ն նո՛ր. որ չէ յարմար. և ոմանք օր փոխադրութե՛ մարմնոյն՝ի պոնտոսէ, որ և յարմարագոյն.

զի

զի ՚ի կոստանդնուպօլիս եհաս ՚ի յունվար-
ի ։ որ վա ուրոյն օր ևս սահմանեցաւ առ
յոյնս ։ Արկեղինոս կոմս զառաջինն հաս-
տատուեալ ծովահմբուռ ոսկեբերանին զնդ
լինել յաղի ՚ին 428 ։ այն և տասն ամօք յա-
ռաջ քան զփոխադրուելն նշխարացն ։ Թէզ
զի բազմօք յառաջ երանելին Ներսիսկեանոս
հռովմայ հայրապետ ՚ի Թուղթս իւր ան-
ուանէր զնա որ , ոչ և մեծն օգոստինոս ։
Ասէ փոխադրուելն մարմնոյ ոսկեբերանին
եղեւ ՚ի լուսաւորչէ Թէոդոսի փոքու
ոդւոյ արկադեայ , և ՚ի պատրիարգուԹե
նէյն պրոկղի ՚ի կոստանդնուպօլիս ։ զի քե-
րել պատուով ՚ի կոմանայ պոնտոսի ՚ի Թա-
գաւորեալ քաղաքն՝ հանգուցին մեծաշուք
փառօք ՚ի տաճար որ առաքելոցն , ՚ի 27 յուն-
վարի , յաղի ՚ին 438 ։ Ասկ Թէ ոչխի ուրա-
խուԹի և ոչխի տօնախմբուԹի եղեւ յա-
ւուրսն յայնոսիկ հանդերձ բազմապատիկ
աքանչելի հանգամանօք՝ զրեալ է յընդար-
ձակ պատմուԹիւնն նր ։ մեզ շատ լիցի ասել
Թէոդորետոսի ։ * Յետ ժամանակաց լինչ
փոխադրեցան նշխարք մեծի վՀպին ՚ի Թա-
գաւորէ քաղաքն ։ և դարձէ ( ոչ երբեմն
՚ի դարձի նոյն յաքսորանաց ) հաւատացեալ
ժողովուրդն հաւատարիմ զծուխն ցամաք ա-
րարեալ առ բազմուԹիւն նաւակաց՝ ջահազ-
դեալ յօրինեաց զղուռն վոսփորոսի մինչև
՚ի կողմն պրոպոնտոսի ։ Այս զայս գանձ հո-
գևոր ընծայաբերեաց Թէզրական քաղաքի
այն՝ որ այժմ զինքնակալուԹենն ունի , որ

և զանուն հաւուն յանձին բերէ, և զճշմարտութիւն նոր անթերի և անարատ պահէ։ Արդ սա զայս և զձեռնատն մերձեցուցեալ ի տապանակ անդր (մարմնոյ ծբյն), աղերս մաղթանաց արկ առաջի վեհ ծնողացդ իւրոց, խնդրելով թողուն շնորհել մեզայն անգիտութե։ Յետ դարուց բազմաց մարմին ծբյ ոսկեբերանին ասի փոխաբերել ի նորոյն Հռովմայ ի կոստանդինուպօլսոյ ի հինն Հռովմ, և եդեալ ի վատիկան ի տիեզերահռչակ տաճարի ծբյն պետրոսի, ընդ առանձին խորանաւ. և ապա տեղափոխել յայլ խորան կիր յեկեղեցի։ Նայց զգլուխ ծբյն առ իւրեանս ունել ասեն մեռսինացիք ի սիկիլիա, գաղղիացիք ի փարիզ, իտալացիք ի փլորենտիա, և գերմանացիք ի մոգունտիա. յայտ ե թէ կամ զհամանուն սքս յովհաննէս կոչմամբ յոսկեբերանն տանելով, և կամ զմասն մասն գլխոյն՝ բոլորական անուամբ գլխաձև տփոյն գլուխ կոչելով։

Նոյնից ասել զայլևայլ մասանց ծբ նշխարացն, որ գտանին սփռեալ ընդ ամ տեղիս. յորս երկոքին անգին մատունք ծբ աջոյ նր՝ գրչակալք, ի քոյթն և ցուցամատն՝ անարատ և անապական պահին ի վենետիկ. ո՞րում ականատես եղաք և արժանի գտաք համբուրելոյ յամի տն 1801. ընդ մարմնոյ ծբյն աթանասի՝ ի թաղն կոչեցեալ աստծուէքա. իսկ յաւուր յայսմիկ՝ յամի 1812. պահին ի մէջ քաղաքին վենետկոյ ի հոյակապ տաճարի ծբյն զաքարիայ։

Ո. Վ.

423
XXXX

րիարգ յունաց, և ժամանակն նորա անդիտանալ ասէ
զանձնէ. որ է նշանակ հնութեն յոյժ. բայց սրգիք որո-
շեն լինել յեօթնեերորդ դարու՝ անստոյգ կարծեաք, զի
ի կարգս պատրիարգաց աղեքսանդրու յայնմ գարու
ևեթ կայ գէորգ անուն. այլ ո՞ գիտէ՝ թէ սա այն իցէ,
կամ թէ այլ պատրիարգ իցէ. զնաւարդ և իցէ՝ այսպէս
եգեալ. լինի երկու դարուք յետոյ քան զսոկեբերան:
Յետ գէորգեայ յիշի պատմիչ վարուց սոկեբերանի (մա-
նաւանդ Ճառօրէն) սոփրոնիոս պատրիարգ եէմի ի է
դարու. յովհան դամասկացի ի ը դարու. լևոն կայսր
իմաստասէր ի թ դարու. թէոդ և զանազանն հելլինակն
ի ժ դարու, և զորս զկնի. ոմն և զանուանիս, այլ ան-
գիտեմս՝ թէ կայցեն այժմ գրուածք նոցա զսոկեբերանէ.
ոչ մարտիրոս պատրիարգ եէմի, և եւագր Ճգնաւոր:
Իսկ ի մէջ արդի կիր յետին կրկնասաց, որք քննուբ և
ընտրանաւ հանին զվարս սբոյն իբրև ի բուն աղբերաց
քան ի վտակաց, և զոր կամէինն ընտրեցին՝ միաբան-
կիր անմիաբան կարծեաք, բայց ի բազմաց այլոց՝ երիւ-
ք եղեն չորեքին ազգս. հերմանու, տիլլեմոնտ, մոնտ-
փոկոն, և ատիլտինգ. յորոց վերջինն է քննիչ և առաջ-
նոցն. ուստի և մեզ միայ քննել զբանս նոր. ոմն և այլոց
զմեզն: Արդ առ ի տալ զձաշակ լինչ անաչառ քննուբ
ատիլտինգայ՝ լուր զառաջնիկայս հատուածս:

Գիտեմք ասէ ատիլտինգ, զի երեքեքն քննիչք՝ սուիլլիոս,
պեռաուիոս, հերմանու, տիլլեմոնտ և մոնտփոկոն ընդ
վայր հարկանեն զգէորգ ալեքսանդրացի զհելլինակ լինա-
կատար պատմուԹէ վարուց սոկեբերանի. և մեք ևս
չեմք հաւան նմա ըստ ամ բանի. բայց քանզի վճիռ եհատ
մոնտփոկոն զգէորգեայ այսպէս, * սա ցածուն և ան-
ՙ շուք ոճով անհամար առասպելս պատմէ, ի բաց ա-
ՙ ռեալ զայնս՝ զորս ի փոխ հան ի պալադիոսէ և ի
ՙ սոկրատայ ||, իրաւամբք ի վէր բերէ ատիլտինգ, և
ՙ ասէ.

* Ի բաց առնուլ արժան է և զայն բանս, զորս կարօղեղև
ՙ նա քաղել ի Թէոդորետոսէ, ի սոզոմենոսէ և յայլոց
ՙ ճմկակից մասենագրաց, որք ըստ մասին ծանօԹ են մեզ,
ՙ և ըստ մասին անծանօԹ: Ապա ուրեմն ի պատմել զվարս
ՙ սբոյն՝ չունիմք զայլ ծանրակշիռ Թիկունս օգնակա-
ՙ նուԹէ՝ բաց ի գրուածոց անտի սբոյն, և ի տրամա-
ՙ խօսուԹէ պալադիոսի, և ի գրեալսն Թէոդորետեայ,
ՙ սոկրատայ և սոզոմենայ, և ի սակաւ բանից այլոց
ՙ քանի մի ճմկակից արանց նախայիշատակելոց: Եւ
ՙ սա

սակայն որովհետև հարկ պաշտամանն մերոյ է ոչ միայն
ղՃմարիտն հաստատել՝ որչափ կարօղ եմք, այլ և
զսուտս և զանհաւանելիս մերժել, զննեացուք գոնէ
'ի կարճոյ ղգործս գէորգեայ աղեքսանդրացւոյ, և այլ
ևս գրեաց վարուցս։ Վ՚ր զի յոլովք 'ի մատենագրաց
ոչ սակաւ բանս առեալ 'ի վարուց նմանի՝ պատմեցին
զոսկեբերանէ. և նոյն իսկ հեղինակք՝ որք մեծապէս
հակառակ են գէորգեայ (զ՚ր են կրիտիք), առնմին՝
նոքին իսկ հեղինակուբ՚ վարեցան. քանզի և բազում
ինչ սուտ գրեաց։ Ապաքէն մարթ եղև գէորգ
գեայ ինչ ինչ առնուլ 'ի յիշատակարանաց յայժմուս
անծանօթ եղելոց, զորովք զանց արարեալ էր պա-
տմագիսն և այլոց. վասն ոչ վաղվաղակի մերժելի են
ասն առ 'ինմանէ գրեալք, թէև չգտանիցին առ պա-
տմագիսն և առ այլ ճշմարիտս։ Վ՚ր զի տկար լինի
արդարև, եթէ ոք ղգէորգ այսու ևեթ պատճառաւ
ստգտանել կամիցի, իբր զի պատմէ ինչ ինչ՝ որ ոչն
գտանին առ պալադիոսի. ուր 'ինքին իսկ 'ի տրա-
մախօսուէ յայտնի է, թէ պալադիոս ոչ բուռն եհաք
զնմ ինչ պատմել, այլ ճաւեաց գոգցես միայն զհա-
տագրեալ որպէս և է զգէորգ աղեքսանդրացի՝ ընդ-
դէմ գատաւկնքոյն սահիլիոսի սուղ բանիւք տարամերժ
ժողի զնմ հրաչս, որք ընծային ոսկեբերանի։ Եւ արդ
դարձ զոր ինչ միանգամ ուռնիմք յատաջ բերել 'ի սքնի
նեզոսէ աշակերտէն ոսկեբերանի, զորս և սողոմենոս
և այլ ճշմարիտք պատմեն, ըստ բաւականին ցուցանեն,
թէ երբեմն և ինչ ինչ իրք գերազոյնք քան զբնաւո-
րական կարգ հանդիպեալ էցեն ոսկեբերանի։ Բայց
չէն ինձ կամք պնդել, թէ իբրև ճշմարիտ ըստունելի
էցեն ամն, կամ յոլովագոյնք ընծայեն ոսկեբերանի ||։

և այլք յետնագոյնք ընծայեն ոսկեբերանի։
Կարի խնամատուբ լսօղ ստիլպինգ, և ցորչափ նա 'ի սոյն
միտս կայ ինձ՝ ըստունելի է մեզ. բայց քանզի և ոչ ինքն
պահէ զկատարեալ անաչառութիւնն՝ զոր խոստացանէաց,
կամ է ինձ յիշեցուցանել զպատճառն չկարելոյ կրկին
ասց կալ 'ի բանս իւրեանց։ Հինն արկանեն, թէ պարս
է զհետ երթալ այս և այն հին հեղինակաց միայն. և
սակայն ոչ առնուն 'ի միտ՝ թէ անհնար է այդմ լինել.
զի եթէ ոք ասիցէ ըստ նորոգանդից, թէ պարտ է ջատա-
նալ 'ի հաւատոյս սբ գրովք, և արտաքոյ նոր չէ պարտ
խնդրել զաւանդութիւն. որ է հակառական. զի և ստու-

գու-

գուԹի սբ գրոց հաստատեալ է յաւանդուԹե. ըստ այսմ և վարք սբց ոչ պահին լոկ այսու կամ այնու հելլինակաւ, այլև աւանդուԹիք պիտին. միայն Թէ չնցէ աւանդուԹին հակառակ գրոյն կամ հելլինակուԹե, այլ միաբան ընդ այնմ, և ի հաւատարիմ աւանդապահայ յառաջ բերեալ։ Դարձեալ հիմն այլ գնեն, Թէ հրաշք կամ սակաւ լինի, և կամ բնաւ ոչ. վասն զոյն հելլինակ առաւել պաշտեն, առ որում պակասին հրաշք. և ոչ քննեն զպատճառն գրելոյ միոյն, և զանց առնելոյ միւսոյն։ Ախոյեից ասել զայն, Թէ անպաճոյճ գրչաց ունչս առնեն, և սեԹևեԹ բանիւք խօսելեաց ակն ածեն. և այսպէս ակամայ կամաք սխալեն ի քննուԹէ և յընարուԹէ արուեստ անգամ։

Ապա Թէ ոչ՝ անաչառուԹէ ասելի է ոմն կրիտիս առ կրիտիաս. գէորգ ալեքսանդրացի յայսմ մասին է ըստգտանելի, զի ծայրէ ի ծայր վարէ զձև ճարտասանական նկարագրուԹէ չափազանցուԹէ հանդերձ. մինչզի զհրաշս հրեչաբար ստորագրէ, և ոչ եԹէ յանձնէ յօդէ. ոմն յայտ է յորոց և այլքն գրեն. նոյնպէս ըզյանցաւորս իբրև զգաստապարտեալ ոգիս առաջի առնէ, զոսոխս ասեմ ոսկեբերանին. զորս այլք ևս մեղադրեն, բայց չափով. ըստ այսմ իմն և զայլ ամ բանից. որք եԹէ ի ձև վայելչական մուծցին, կարծեմ Թէ իբրև պիտանի վաճառք վաճառին և գնին յիմաստնոց գլխովին։ Բայց Թէ ասիցեն կրիտիք, մեք ոչինչ գնեմք ի նմանէ, ահա ստիլպինդ վկայեաց՝ Թէ գնեցին և գնեն. զոր և մեք յայնի կացուսացուք այլովք պատճառօք։ Դարձ՝ ի բուն գրուճածոց ոսկեբերանի յայնժամ քալիւր վարք նր, եԹէ ոմն ածաբանն գրիգոր՝ գրեալ էր զվարս իւր ըստ կարգի, կամ ոմն օգոստինոս. բայց քննիչք ապաստան լինին ի ԹուղԹս նր և ի վիպական գործս. յորոց բարք նր արտափայլէ, և ոչ վարք, բաց ի քանի մի մանաւանդ դիպուճածոց. իսկ հրաշք և այլ գործք սրբուԹէ՝ որ խնդրելին է գրչաց վարուց, կամաւ քոզասուղին ի սբց. ոմն և յայտ է։

Երկդ՝ ի պալադիոսէ ոչ է ակն ունել բազում իրաց խնդրելեաց. զի ահա և ստիլպինդ հաստատեաց, Թէ չէին նորա կանք գրել զվարս ոսկեբերանի, այլ միայն զհալածանս նր։ Որ Թուղց զայն, զի եԹէ սա լիցէ հայրն պալատի, հաւանական է՝ Թէ ուրոյն գրեաց և զայլ բանս զոսկեբերանէ ոմն զմիոյ ի հարանց սբց աքանչելեաց. և յայնմ գրուճածոյ արդեօք քալեաց գէորգ

բա-

բաղում լինչ։

Երկարդ՝ ի սակրատայ և ի սոզոմենեայ չէ մարթ ասել
սեր լսել զճշմարիտ վարս և զբանչելիս ասկեբերանին.
զի գիտեն և կրկին զառաս լինել ի գնդէ նովատիա-
նոսաց, զորս հալածէր ասկեբերան. վայ և հեղինակիդ
առ հարկի գրեն զերևելի լինչ գործս սբին. և ի զի
կծանեն և յայտնի և ի ծածուկ. ոչ յայտ է գիտնա-
ւորաց։ Թողից զԹէոդորետոս, որ ըստմանեայ բանս
գրեաց զասկեբերանէ, և ոչ գոնէ զմանն վարուց. և
վկայուէ իսկ նորա չանցանէր շատ առաջի Թէոփիլէանց,
յետոյ և կիւրեղեանց՝ վ[ա]ր պէսպէս պատճառաց, որք
յայտնի են իմաստնոց. Թէև կրկին հաւատարիմ հա-
մարիցին զնա քան զմեզ։

Զինչ ասա. ոչ ի սոցանէ ընտրանօք պարտ է քաղել,
նոյնպէս և յայլոց զպակասուածն սոցա լնուլ. ապա Թէ
ոչ՝ առանց գէորգեայ ալեքսանդրացւոյ և լևոնի իմաս-
տասիրի և այլ ևս անանուն կամ անուճանաւոր հեղինա-
կաց վարուց, ոչ բովանդակի վարք ասկեբերանի տիրա-
պէս։ Եւ որպէս կարծեմ, զայս ամ կամէր յայտնել և
քաջն ատիլտինդ ի նախագրեալ բանս իւր ձարտարս։
Ա[ռ] այժմ այսքան. տեսցուք և զբանի մի առանձին դի-
տելս։

(2) Ծնունդ ասկեբերանի՝ ըստ բարոնիոսի դնի յամի տ[ն]
362. ուր այլք ի քննչաց կամին դնել Ժէ ամաք յառաջ,
որ ի 347. ատիլտինդ յետ բազում բանից՝ վերածէ ի
344. և պարզաբար առաւել մօտ ի 340, քան ի 350։
(3) Ծնօղք ասկեբերանի՝ ըստ գէորգեայ և հետևողաց
նր կարծին լինել յառաջագոյն հերձանոս, և յետ մկըր-
տուԹե նր մկրտեալ. այլ զայս ոչ ոք ըստուն ի քննչաց.
և խնդիր անստոյգ։ Ոչ և տեղի ուսման ասկեբերանի
չհիշէ յառաջնոց. գէորգ և որք գկնի նր՝ յաԹէնս ասեն.
կրկին յերկրի իւրում յանախուք առդնեն։

(4) Յանուանէ յիշեցաք զպալադիոս, զի հաւատան նմ
քննչաք. բայց քանզի արտաքոյ կարծեաց խօսի ասա,
հնարին մԹագնել զպարզ բանս նր, պատճառելով ԹԷ
զնարդ մանուկ ժը ամաց կատարեալ լնցի յարտաքին գի-
տուԹս. վայ չանայ ատիլտինդ ցուցանել, ԹԷ ոչ յառաջ
ք զքսաներրորդ չորրորդ աճն հասակի հրաժարեալ լցէ
սբն յարտաքին դպրոցաց։ Ա[յր] զի ոչ հաւանին գէորգ
գեայ և յայսպիսի բանս առեալս ի պալադիոսէ. ուր-
բեմն զմմ լինչ ըստ մմի կշռեն, և ոչ ը նախնեացն ա-
նդից։

(5)

(5) Ընծանք ինքնակալացս անյայտ են, ոչ և տեղին առենախօսուել անդիտելի. յաթէնս գնեն ոմանք, այլք այլուր։ Ինքնակալքն եթէ առաջնիկայ էին, կարծին լինել վաղենտիանոս և գահակիցք իւր։

(6) Երկար վիճեն քննիչք, արդեօք երկոքին Թուղթք ևս առ Թէոդորոս՝ որք կան յանուն ոսկեբերանի, նոքա՞ եղեն, եթէ մին միայն. այլ մեզ չէ անկ խօսել զայսպիսի խնդրոց։

(7) Սոխլինգ պնդէ, Թէ * այս առնիլ յոմանց ստոյգ ,, և յոմանց անստոյգ դատեալ, ոչ ուղիղ դիմախօսեալ ,, լինի ի սուխլիսոսէ ||. և ինքն առանց ըստ բանս ինչ ա- ծելոյ՝ յառաջ բերէ զբանս լևոնի իմաստասիրի՝ յար և նման գրելոցն ի գէորգեայ. և յարէ. * Գերապատիւ ,, կարդինալ բարոնիոս ոչինչ երկբայութիւն հանէ ի վր ,, առնելեանս. այլ կարծիս իմն (ըստ ժամանակին) յիւր ,, մէ յաւելու՝ ոչ այնչափ ըստ ունելի. յասելն. ,, չէ մեր- ,, ժելի կարծիք՝ ասել, Թէ առնիլն այն հանգիպեալ էր ,, յայնժամ՝ յորժամ գրէր զմեկնութիւն Թղթոյն պօղո- ,, սի առ գալատացիս. ուր առանի գեր ի վերոյ լի- ,, նել քան զանձն իւր՝՝ ||. բայց ասէ սոխլինգ, Թէ այս առնիլ ի կոստանդնուպօլիս պատմի. իսկ ղԹուղթն գալատացւոց յանտիոք մեկնեաց ոսկեբերանն։

(8) Աքէն պրոկղ աշակերտ սքէն յայտնապէս ասէ զնմանէ, * լեղոճով ոսկեղէնն յովհաննէս ||. իսկ ի գործս ժողովոյն քաղկեդոնի և մատենագրացն այնը գտրուս պատճառ զապէս նշանակի այսպէս. * սքէն յովհաննէս ոսկեբե- ,, րան ||. կամ * յովհան բերանն ոսկի ||. յայտնի են և բանք խորենացւոյն մերոյ և այլոց։ Ալ յայտնէ չգիտեմ զիարդ ոմանք ի յեռանոյ ի կարծիս եղեն՝ Թէ յետ մահուան նր առնեալ իցէ նմա այս կոչումն. ուր ժողովուրդն ետ սքէն զայս անուն առ կենդանւոքն նր՝ կամ յանտիոք և կամ ի կոստանդինուպօլիս։ Զայս յայտ առնէ և չասելն՝ ոսկի գրիչ, կամ ոսկիաբան, զոր անկ էր ասել յետանոց վերծանողացն զդիւրս նր, այլ ոսկեբերան. զոր անկ է ասել լսողացն զբանս բերանոյ նր։

(9) Քանզի ոչ անգիտանայ սոխլինգ զվկայութիւն ակա- նատես և ականջալուր վկայի, ըստ մարկոսի ստրկապետի, որ ըստ եւսեբի էրուսի պօրփիւրոսի եկն ի նոյն ա- ւուրս ի կոստանդնուպօլիս, և բերան ի բերան խօ- սեցաւ ըստ ոսկեբերանի, ի զուր է միաձայնիլ նր այնու- հետեւ ըստ այլ կրնայիս առ ի ընդ վայր հարկանել զայս անցս այրուցն, զնիշատակեալն ասեմ ի մարկոսէ առ

նմին

նմին սահմանեալ ի համարն • 754 • էրէս • 552 ։ Եւ եթէ
տարագիպ Թուղի արգելաց այս վճռիմնդրուն սակեբե-
րանի ոմն անհոգեմութեն, մեղմով զայս ասեմ. քազում
ինչ ի դէպ գայր այնց դարուց՝ որք ոչ ճահաւորին գիրք
և փափուկ դարուց մերոց ։ Ի՞նչ եթէ կարօղ է՝ արասցէ
ոք յեպիսոց ժխկիս և զվճռիմնդրութեն սէրն ամբոսխ-
ակ ընդդէմ Թէոդոսի մեծի ։ Զօրագոյն ևս ասացից •
եթէ նախանիք զայժմու ընթացս վարկին ըմ ծխ խոհե-
մութեք, ոչ լինիցին այնպիսի սէրք, որպիսիք ոմանք եղեն
ըմ ոմ իմաստութեք ։

(10) Զգիտեմ, զինարդ սահմանք չանայ մերժել զայս
պարագայ պատմութե իբրև անվայել եպիփանու և յով-
հաննու • և այն զի այս է, որ արդարացուցանէ զերկո-
սին կողմանս իբրև նշանակ հաշտութեք, և մանաւանդ
զեպիփան՝ որ կարօտն էր արդարանալոյ • ապա թէ ոչ՝
խնթալի է մեզ ասելն սահմանդայ խորհրդաւոր մեծու-
թեք, թէ եպիփան * ուրպիսի և է օրինակաւ խաղաղեալ
,, գարձաւ ի տուն իւր ։ և զհարդ խաղաղեր ոչ գի-
տեմ՝ առանց գոնէ այսպիսի հաշտ բանից պատգամաւո-
րութեք ըմ յովհաննու ։

(11) Ընդհ ունիմք սահմանդայ, զի առ բարեկամութե
իւրոյ ըմ ստուգաբան կարծեցեալ Թէոդորեատի (Թէ-
պէտև ոչ նա ձրի պաշտէ զսակեբերան, գուցէ և ոչ
պալադիոս՝ եթէ ևցէ հայրն պալատի), ըմունի և հաս-
տատէ զայս հրաշս՝ այնպիսի ձևով բանից, որ միշտ պէ-
տոյ լինի ընթերցողաց • ասէ • * Զարժումն երկրի ոչ
,, յիշատակեն սոզոմենոս և սոկրատ • բայց սակայն հե-
,, դնակութեն Թէոդորեատոսի պարսի ծանրակշիռ գրիչ
,, քան զնոսութեն դոցա ։ Թող զի սոկրատ ոչ նոճազ սո-
,, վոր է ըմ նոսութեք արկանել զնշանս և զաքանչելիս ե-
,, ղեալս ի շնորհս ուղղափառաց, քան կեղծել զհրաշս
,, նովատիանոսաց ։ Իսկ սոզոմենոս՝ որ յայնժամ ոչ
,, Թուի լինել ի կաստանդինուպոլիս, գիւրաւ կարաց
,, անգիտանալ զերկադ ։ Բայց գիտէ և ինքն սահմանդ,
Թէ սոկրատ ոչ լուէ իսպառ զատատանօք հրաշս՝ յատենն •
* կետ միոյ աւուր արատատհմանութե՝ պատուհաս իմն
,, հանդիպի յայրբունի սեռնկի • յորմէ զահի հարեալ ևն։

(12) Երկայնմատութեք լուծիցուք զտարապարա վէճ կրի-
տիաց, որք արկանեն մանդալ յայլոյ ոճ, ըմ ի ներբո-
զեան ոսկեբերանին ի վեր աբ լուսաւորչին մերոյ ։ Եւ
քանզի սահմանդ ոչ բարի օրինակ առեալ ի մինափո-
հոնէ՝ ատատանգեալ երևի, գիցուք զամբողջ բանս միոյն-

ոք

որ բերէ և զասացուածս միւսոյն: Արդ այս բանք են
սահմանիգայ ասաս. համար. 1335. երես. 663. * Մանուել
,, կան (կամ Մենդ ֆաւգոն). հատ. ԺԲ. գործոց ոսկեր-
,, կչ. 822. ի լոյս հած լսանելիսն զԳրիգոր աբեղ գրէ-
,, գրի հայոց լուսաւորչի՝ ի բերէն յունականէ ոսկերերանէ ասա-
,, ցեալ": Վկայէ, թէ գտանի այն յերկիս հայերէն ձա-
,, ռընտիրս ալբուրնի գրատան փարեզու. և խորագիրն
,, եգեալ յերկրորդ ձեռագիրն հնագոյն քան զայլս՝ ու-
,, նի այսպէս. " Երանելոյն յովհաննու ոսկերերանի ասացեալ
,, ներբողեան պսակաճերաբար յաղագս վարուց և նահապետիցն
,, մեծ հայրապետին և վկային աբեղ գրիգորի հայոց լուսաւորչի,
,, ասացեալ ի կոկիսոն՝ որ է փաղաք հայոց, յորժամ յաւետս էր,
,, ի խնդրոյ ուրուն վերպ հայոց եպսի և ապգաւոր աբեղ գրի-
,, գորի՝ դէսպորս կոչեցեալ, և այլ բազմաբոլոր առիսց, խնդ-
,, բելովի նմանէ յիշատակել զլուսաւորչին արևելեանց ազգաբնին
,, յաւուր փոխի իւրոյ": Նոյն վերնագիրս է գրեթէ և ի
,, միւս ձեռագրին: Զայս ներբողեան՝ ըստ վկայելոյ մենա-
,, փոկոնի՝ ի հայկ ի լատին բարբառ յիշեալ է որ ասէ
,, վիլլէֆրօա քահանայն՝ ներհուն արևելեան լեզուիցս:
,, Արդ՝ ըստ վերնագրիդ ըստ այգմիկ՝ ոչ միայն յոսկեբե-
,, րանէ է գրեալ ներբողեանն այն, այլև՝ ինձանէ իւր-
,, րև քարոզ ասացեալ՝ ի կուկուս (ըստ լս), որ և գոյզն
,, տարբերուածք կոկիսոն ասի (ըստ հյ), ուր աւելի քան
,, զտարի մի մնաց սբն յաքսորս: Արդ՝ ի քննութիւն ա-
,, ռեալ մենափոկոնի, արդեօք այս ներբողեան համա-
,, րելի իցէ ոսկեբերանի գոլ, զիւր կարծիս բացածա-
,, նուցանէ բանիւքս այսոքիւք:

* Սկզբնաւորութիւնն արդարև ոչինչ ունի օտար յոսկե-
* բերանէ. բայց յընթացս այնչափ բազում իրք ըստ առաջ
* եկանեն օտարաձայնք՝ ի սովորութիւն և յոճոյ ոսկեբե-
* րանի, մինչ զի ոչ ոք համարձակի ընծայել զայն այլ
* պիտուի վերպ. որ վիրապն և գուբն խօսօղ լեալ, օձք
* և վիշապք աղերսարկուք, արգասաւորքայ՝ ի կինձ փո-
* խեալ, և այլ այսպիսի հրեշք. միայն թէ նոյն բանք
* գտանին և՝ ի վարս սբն գրիգորի լուսաւորչի, զորոյ
* վերկուս ձեռագիրս օրինակս տեսեալ է իմ. զմին յար-
* քունի գրատան, և զմիւսն՝ ի կոյիսլինեան: Մարթ
* է արգեօք ասել, թէ ոսկեբերանն ասացեալ իցէ
* զքարոզ՝ ի պատիւ սբն գրիգորի լուսաւորչի. բայց
* զայն այնպէս այլափոխեալ են հայք, մինչ զի յայժ-
* մուս անդանօր գրեթէ բնաւ չերևիլ ոճոյ ոսկեբե-
* րանի:

,, Ցայս

„ Ցայս վայր են բանք մենափոկանի. որում կամակար
„ ձայնակից լինիմ (ասէ սոխլոմնդ), թէ այնպիսի ա-
„ ռաքելախառն նեբրոպեան չմարթի խոհեմութիւն ըն-
„ ծայիլ ոսկեբերանի. մանաւանդ թէ հաւատամ, թէ
„ ոսկեբերանն սչինչ քարոզ խօսեցեալ լիցէ երբեք՝ ի կո-
„ կիսան. նախ՝ զի ոչ ոք ՚ի նախնեաց ասէ զայդ. և
„ երկրորդ՝ զի թէ արդարև սրարեալ էր նոր զայդ,
„ թշնամիք նոր կարէին յայդմանէ զինոր առիթ զրպար-
„ տուելոյ ՚ի ձեռս առնուլ ||:

Ցայս վայր և սոխլոմնդ բարեկամին մեր կարծեցեալ. բայց ոչ կարէ լինել բարեկամ, ցորչափ ըստ սկամբ հայի ՚ի պատմուածի լուսաւորչին մերոյ: Ալ թէ զրաբանէ եւեթ յայսմ մասին միայն, և ոչ ձշմարտաբանէ՝ այլ ան-լուր մասամբ գիանաւորս և երևելի, այլ յարևելեան իրս հետևակ, տես զհանդէս քննուածոյ նոր ՚ի ծանօթութիւնս պատմուածք հայոց: Իսկ ասա ժամ է յառաջիկայս հան-դէս բանից նոր ակնարկել, տեսանելով նախ զվէճ նոր՝ զոր յարուցանէ ընդ մենափոկանի, դրելով զկնի նախա-դրեալ բանից նորոյ՝ այսպէս.

* Բայց մենափոկան ասէ (բանիւ ոսկեբերանին), թէ
„ էպան կոլիսանի կամեցաւ գալ ինչ պէտս աստուա-
„ ձամէլ եմաւ՝ ու դէտրաւ հնազանդեցաւ: ՚ի բանից առաքե-
„ ալ կարծեմ, յայն միտս եղև (մենափոկան), թէ ա-
„ կեբերանն գուցէ քարոզ ասացեալ լիցէ ՚ի կոկիսան:
„ Ալ սակայն այդ իսկ՝ զոր հաստատէ զեպանէն կո-
„ կիսանի, պակասի ՚իյարմարաւոր հիմանէ. վասն զի
„ այդ բան դրեալ կայ ՚ի Թուղթն ՃԼԵ. զոր յո-
„ գեալ գոլ և իւիք իրիք տարադէպ բանիւք ապաւա-
„ զեալ՝ ցուցի ՚ի յօդ. 69: Գովէ սէն զեպան կոկիսա-
„ նի ՚ի Թուղթն ժէ առ ողիմպիադա՝ իբրև բարեսէր
„ առ լինքն. բայց վն առաջարկելոյ նոր զեպատութիւն իւր՝
„ լինքեան, ոչ անդ և ոչ այլուր ասէ ինչ. այն՝ որ զայդ-
„ պիսի բանս դիւրաւ յայտնէր ողիմպիադայ. այլ թէ-
„ բևս նաև այս Թուղթ իցէ ստայօդ՝ ոչինչ ընդհատ յայ-
„ տից ոմանց Թղթոց նոր ||:

Ո՛վ գիւրին գիւտիս. ժխտեալ զամ. զի մի ընդունիցի՝ զոր ոչն կամի. և զի՞նչ ուրն առնել՝ եթէ ժխտեացէ ոք և զայն Թուղթս ոսկեբերանի, յորս կայ գովութիւն զարև-մտեայց. զի՞նչ եթէ և մեք ժխտեացուք՝ թէ այդ բանք ոչ են սոխլոմնգայ. զի ոչ է խոհեմութիւն նոր անկ այս-պէս անհիմն բանիւք յայլ և յայնհակ խոստովել. ապա թէ ոչ՝ լսելիցէ և ինքն երկայնմտութիւն զմտածութիւն մեր:

Ալ

Ա՚ԲԴ ձեռնարկին մէջ նախ այսպէս . Քան մնափոխանի է ՚ի սակաւինդպ քաջ քաջի պատահէլոց՝ միաբան ՚ըունել լի է, թէ սկիզբն ներթոյլին լուսաւորչին՝ զորմէ մեր բանս է , ոչ է սաար յոմոյ ոսկերբեանին . իսկ արդ՝ այդ իսկ է խնդրելին , և ոչ այլ ինչ՝ առ ասպացոյանել, թէ ոսկերբեանի է այդ ձառ՝ որ կրէ զանուն նորա . ապա ևն : Վ՚ը զի ոսկերբեանն ՚ը որում ձառաբան և ՚նեը բազասաց՝ ուՀէր զԱբր ոգին երևեցուցանել . իսկ ըստ որում պատմեաց՝ զաւանդութեն ազգին սատրագրել . մինչ զի եթէ և մնափոխն կիմ սակայնևայ լինելին քարոզ ատաս յՅեին հայոց յաւուր ծնի լուսաւորչին , թէ կա միցեն և ԹԷ չկամիցին՝ զագաթանգեղոս ունելին քաղել, և ոչ իբրև նմին դիմախօսել . ապա թէ ոչ քարկոծ լիներ : Բայց մի կարծիցեն , թէ ոսկերբեանն կէզձաա րեր իբրև զինքեանս , կամ անգէս գոլով աւանդիցն առաւգութեն՝ առ մարգահաՀանել հետևեր հայոց , և խոսեր զՀարաչէաց՝ զորս կամէին լսել . զի ոչ միայն օտար է յոսկերբեանէ ոգի արգեաց՝ որք մարգելուլել գնաեն , կի ոչ գիտեն տանել Տրաչից , այլև մերձաւոր գոլով ՀԱփաս և յաբևելս՝ իրագէտ էր պատմութեն ագաւ ՀանգեՀոսի . և ոս առաւել և առ ոսս սէրն մեՀասոսի հայազգի հայրապետի ուսեալ՝ ոչ կարէր անտգեակ լինել

Ձնմարտութեն անցից ՚ը՚ը լուսաւորչին հայաստանեայց :

Երկրորդ՝ չորեքզ ձեռնարկին կրկնադագ ՚ի վ՚ը նոցս . ապաքեն ինքեանք ենԹագրեն զերկմամբ սկիզբան՝ Թէ ոսկերբեանն ոչ Հաւատոյր ագաւՀանգեղոսի , նմին իրի և չ՚ ասեն Հաւատալի՝ Թէ երկրորդիցէ զպատմութեն ՚նը . ապա և մեք ՚ի գործ անգր հայեցեալ՝ և ոչ ՚ը մոխ ձեռնարկեալ՝ իրաւամբք պնդեմք, Թէ որովհետև երկ րորդէ ոսկերբեան զպատմեն ագաւՀանգեղոսի , ապա ասոյգ համարեր զայն : Եւ այնչափ առաւել , զի բանք կրկնեսաց ՚ը օգս ցնդէ լինք՝ ոչ կարեն եղծանել զգիրն , որ կայ և միայ առ յոյնս ՚ի սկզբանէ հետէ . զոր նոքին իսկ յոյնք հայերէնագէտք Թարգմանեցին , և միայն ըզհայկազանութեն հարեԹեայ չնորՀալին . վայ առա զըզ պարտութեՀ իսօսի մնափոխն , Թէ հայք այլափոխեալ իցեն զբանս ոսկերբեանի :

Երրորդ՝ ազգ առնելոք խմաստուն կրկիսաց մերոց , Թէ ոչ է խոՀեմութեն կրկիսական՝ զնոՀեմութեն ժամանակս Տնան մերձեցուցանել ՚ի խոՀեմութն առաջին գաբուց՝ մանաւանգ եկեղեցական և ՀԱմարտ արանց : ԸնդհոՀեմութեն է ասել՝ ասել , Թէ վ՚ը զի այս ինչ ան-

խոհեմ երևի կամ դժուարահաւանելի համառանոց ՚ի
յայժմու ՃՀկի. մինչ զի եթէ ոք հաւատասցէ այս ինչ բա-
նի, կամ արասցէ և ասասցէ զայն ինչ յայժմուս, ծաղր լի-
նի. ապա ուրեմն ոչ են հաւատացեալ այնպիսի իրաց և
նախնիք, կամ չեն արարեալ և ասացեալ զայնպիսի ինչ։
Եւ ահա այս անխոհեմուն՝ խոհեմուն կարծեցեալ ոմանց
յարգեաց՝ ասյ նոյ ըմպել և ըստ կամի ըմբռնել կամ չըն-
դունել անպատճառ զայս և զայն գործ և զգրուճած ա-
ռաջնոց. այլ չատ է անվիաբանուն նոյ ՚ի սահել զտեղեան
՚ի նոցանէ.

Թողեալ զանթիւր օրինակ՝ թէ սբ հարք հաւատային
այնց պատմուճեց և հրաշից, որոց ոչնչա առնեն արդիք,
ա՛ւ քեզ ասպացոյց ՚ի վարուց սահ ոսկեբերանին. զի
ահա սբն յովհան դամասկացի իբրև ասյգ ենթադրե-
լով զբանս գրեալս յընթարձակ վարս ոսկեբերանի՝ բա-
զում ինչ քակղ անսի ՚ի ներքսգետեանն իւր ՚ի վր ոսկեբե-
րանի. վայ և քննիչք մեզագիր լինին նմին. և չունելով
այլ ինչ պատճառել՝ ասեն, թէ մատենագիրք միջին դա-
րուց քանի մի դարուք դկնի ոսկեբերանին՝ հաւատասցին
այսպիսի բանից. և զիարդ ինքեանք յերկկեան դարուս
անհաւատանան. յայտ է թէ ըստ ածային հաւատոց և
մարդկային հաւաստք նուճարեալ են յՅհ. զի զամն և
քան ոն, իսկ որդի մարդոյ եկեալ՝ գտանիցէ արդեօք
հաւատս յերկրի։

Զորրորդ՝ յիշեցուցանեմք սահլինգայ զբանս սալա-
գիոսի անժխտելիս, զորս առանց ըստ բանս ինչ ածելոյ՝
բերէ ինքն իսկ ատտանօր ՚ի համարն. 1339. էրէս. 663. և
664։ Առ. * Վա այդր բանի, (ըստ՝ ոգ մեկնէ և ինքն
„ սահլինգ, վա քարեհամբաւուե ոսկեբերանի ՚ի կո-
„ կիան) նախանձեալ ըստ նա եղբայրասպանից՝ փոխե-
„ յին զնա յարաբիոն, (և անսի կամքին վարել ՚ի
„ պոնտոս) ... Վա զի (քաջ միտ գիր) տեսանէին զանձ
„ սիոքայ եկեղեցին ՚ի հայաստան փոխադրեալ, և ան-
„ ա՛ի գաւթեալ յանտիոք քարոզեալ զամենահրաշ լման
„ տառիրութիւն յովհաննու ||. ևն։ Տեսանեք, որպէս
հինն ՚ի վեր տապալին ենթադրութիւնք սահլինգեան վա
չնսեալոյ սբն քարոզչին հայոց. և որպէս բացայայտ
ցուցանին, թէ ոսկեբերան նաև ՚ի մէջ հայոց ցուցաւ
ոսկեբերան. և արդարև բերանն ոսկի միայն կարէ խո-
սել և զայն պանծալի գովեստ ՚ի վր լուսաւորչին, և
ոչ այլ ոք։

Եւ ըստնի ոք ասել, թէ յո՛ր ետղու քարոզէր սբն ՚ի հայս.

զի հայք կողմանցն այնոցիկ քաջ գիտեին և զյունարէնն. Թէպէտ զի եթէ ի կոստանդինուպօլիս անդամ Թարգմանեաւ քարոզեր երանելին առ այլազգսն, զի՞նչ զարմանք են՝ եթէ և զնոյն արարեալ իցէ յՅունս հեռաւորս. զի ոչ կարծեմք՝ Թէ գիտակ իցէ հայերէն լեզուի, եթէ ոչ՝ գուցէ ուսեալ իցէ ըստ լսելոյ ի սբ ն մեկնուածսն. Թէպէտ զառաւելեալ կարծիս ունիմք յարևմտեայսդ, որք համարեցան զսակեբերան գիտակ լինել գրոց հայոց, չիսնԹեղով ըստ սբ ն մեկնուածոյ ժամակից նորուն:

(13) Ընդդէմ ոմանց համարձակախօս զբաբանից՝ որք կամին ժխտել զհրաշից լինելոյն Թէ առ սակեբերանի, շատ լիցի վկայուԹիւն սբ ն ի մէնն. սաղմ. ճԺ. զի ի վերայ բանին, *յիշատակ արար սքանչելեաց իւրոց ||, այսպէս իսկ. * Մի՛Թէ լռեաց սքանչելիս առնել. քանզի այս ,, է՝ յիշատակն արար, ոչ դադարեաց, ոչ կատեցոյց ազ- ,, գաց յազգս առնել սքանչելիս, և հրաշալեօք զար- ,, Թուցանել զԹանձրամիտս... Որ և լինին մինչև յօրս ,, յայս... զյոլով մաքրԹ է տեառնել յերեսէ սքանչե- ,, լեաց, որ առանձինն և որ ի տան և որ ի քաղաքս ||. տե՛ս և զոր ի կարգին:

Դարձեալ ի ճառն ւբ, յամ լԹ. ի մարկ. ասէ զերկերեց- ւոյ. * Աստանօր գանձեալ են մեծամեծ սաացուճածք ,, մեր, ասա է՞մ յոյս մեր. զի զի՞նչ յայսմ վայրի ,, կայցէ՝ որ չէ մեծ և ահաւոր. վա՛ զի սերևնս այս կա- ,, րի պատուճականագոյն է և համեղագոյն քան զքոյդ, ,, և ճրագս քան զճրագ քո. և այսմ գիտակ են՝ որք ,, միանգամ հաւատովք օծեալք ձկԹովն՝ անդէն աղա- ,, տեցան յախտից ||:

Ապա տխմարաբար ասէ սաւիղևոս կրխոխ՝ յասելն. * սակեբերանն ի վեց հարիւր տեղիս վկայէ, եԹէ ընդհակ ,, բժշկուԹեց և՛ յաւուրս իւր և՛ քանի մի դարուք յա- ,, ռաջ դադարել էին ||: Զոր դերեզմիկ հեգնէ սաիլսինէ՛ ասելով. * Ա՛յլ կամի, Թէ ի վեց հարիւր տեղեաց ,, անտի դէԹ զմին յառաջ բերեալ էր սաւիղևոսի. որով ,, մարԹ լինէր մեզ քաջասաւս լինել, Թէ սրպխոի տրա- ,, մաբանուԹ բերի ընծայել սակեբերանի զայդ խմաստ: ,, Վասն զի ոչ ուրեք գտանեմ՛ ի գործս սակեբերանի, ,, Թէ ոչինչ հրաշք լեալ իցեն՛ ի ժամանակի իւրում... ,, այլ մանաւանդ զնորին հակառակն... նոՀաղել ասէ ,, զքնորհս սքանչելեաց, և ոչ եԹէ բարձեալ.... Յստակ ,, գրէ սբն, Թէ ոմանք բժշկեցան ձկԹով ճրագի (եկե- ,, ղեցւոյն) ոչ բնաւորապէս, այլ սքանչելիօք. զի ասէ,

,, որք

,, որք միանգամ հաւատովք եմք։ Ասյոքիկ ցուցանեն,
,, թէ ոսկեբերանն ոչ միայն հաւատայր՝ թէ հրաշք լի-
,, նէին յեկեղեցւոջ յաւուրս իւր, այլև ճշմարտանման
,, առնեն՝ թէ նորին իսկ օծութիւն առողջանային հի-
,, ւանդք։ Վայ ոչ երևի ժխտելի գոլ ոսկեբերանի շը-
,, նորհք սքանչելեաց. զի և ոչ լռութիւն պալադիոսի,
,, ոսկրատայ, ոսղոմենոսի և այլոց ժամակցաց մեծապէս
,, ստիպէ, ուր ոչ ոք ի նոցանէ պատմեաց կամ ձեռն
,, էարկ պատմել զգործս սրբին զայմ, և կիճնաև զբազումն
,, ի գործոցն ||։ Յորմէ ունիս իմանալ՝ թէ այլ է ըզ-
գործս ինչ ուրուք գրել ի կարգի պատմութեանէ, որպէս
և առնեն հասարակօրէն պատմաբանք այսպիսիք, և այլ
է զամբողջ վարս շարադրել. զի յայնժամ ի մի հաւա-
քին գրեալքն յամենեցունց՝ հանդերձ պէսպէս գրա-
ւոր և անգիր յիշատակօք. ոմն և որ ինչ այսօր գործի
երևելի յերևելի արանց՝ ոչ յայմ մարդոյ լսելիս հասա-
նէ. բայց որ հաւաքէ ի բազմաց՝ մատենիւք չափ նիւթ
գտանէ. զայս է՝ թէ չիցէ հակառակ այլոց ժամանա-
կակից գրչաց, թէև պակասեացի ինչ ինչ առ նոսա. ոմն
և յայտ է։

(14) Զայս տեսիլ ևս, զոր բաց յայլոց պատմէ և հա-
րանց վարք յունաց բանիւ յովհաննու մոսքոսի ի Ֆ դա-
րու, առ հռոսուֆեայ. էջ։ 901. Թէպէտև ոմանք կա-
մեցան ընդ անստոյգս դասել. բայց բազմք պնդեն ստիլ-
տինոպ յէջ։ 689. և 690, թէ չիք ինչ զօրաւոր պատ-
ճառ ի սուտ հանելոյ զայդ։

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Աբգ Աարտիրոսայ՝ Դուբիասայ, Սամոնա-
սայ, և Աբիբայ սարկաւագին։

Ի. Յ. Լ. Նոյեմբ. 15։ Ասաքնա. Ա. մեր.
և գ. հիւ։ Հա հ Ի. յե. վե աբէբայ։ Ա՛ե-
պաէր. առ սուբ։ Ա՛սաէման սիմոն. հապ. ա. էջ.
329։ Հակ. սրճ. ի Նէրբոզ աբգա առ ասաէմ։ Ա՛րբ-
նաս կէսարացի ի Նէրբոզն՝ առ սուրբոսէ. հապ. ձ.
էրէս. 366։ (1)

ԵՐԿՈՒՔՆ ՆԲԱՆԱԿԱՆ՝

երէքին սոքա փառաւոր վկայք
եղեսացիք՝ ի միասին ծնանա-
խմբին. այլ առաջինն երկուքն
փոքր մի յառաջ կատարեցան, իսկ երրորդն՝
այն է աբիբաս՝ իբր հնգետասան ամօք զկնի.
վ՚ոյ և ուրոյն ուրոյն գրին կրկին վկայաբա-
նութիւնք նոցա՝ ի Ճառընտիրս, ասանդեալք՝ ի
մի և՝ ինոյն ականատես վկայաբանէ՝ ի Թէո-
փիլոսէ դարձելոյ՝ ի հեթանոսուէ, ըստ օրի-
նակիս ըստ այսմիկ։

## Ա. Կայսրէ սէջն Կոստիանոսի և Սամոէից։

Ի ժամանակս դիոկղետիանոսի Թագաւորի՝ այր ոմն էր Կոստիոս անուն, յերկրէն եգեսացւոց, որ է ուռհայ՝ ի միջագետս, ի գեղջէ որ կոչի սարկիդիմայ, երկիւղած յայ և ամ առաքինութիւք զարդարեալ, ունելով զոմն համաշունչ իւրոյ բարեպաշտութենն ի նոյն գեղջէ կիր՝ի գանադայ [2], որում անուն Սամնաս կիր սամանաս կոչէին, երկոքեանն իսկ ամենևին վարժք և հմուտք պատուիրանացն ամ։ որք ոչ դադարէին հանապազ սերմանել զբանն կենաց, և զգուշացուցանել զհաւատացեալսն՝ որ՝ի քո՝ի մոլորութենէ կուռցն, և ամի զարհուրել և երկնչել յերկիւղէ մահու և սպառնալեաց բռնաւորաց։

Օ այս լուեալ բռնաւորին՝ որոյ հրաման աւեալ էր՝ի Թագաւորէ տանջել զքրիստոնեայս կողմանցն այնոցիկ, և անուն նոր անդոն կամ անտոնիոս՝ դատաւոր եգեսիոյ [3], առաքեաց դասս զինուորաց՝ բերել զնոսա վըկայն. և ածեալ լինէին հանդերձ այլ եւս բազմութիւք քրիստոնէից, և հրամայեաց արկանել՝ի բանտ, և պահել զգուշութիւք, մինչև պարապով քննեսցէ զնոսա։ Ի՛ս յետ աւուրցն այնոցիկ եկ հրաման՝ի Թագաւորէն կիր՝ի դատաւորէն, զի արձակեսցեն զամենեսեան՝ զանչշան և զաղքատ մարդիկն յիւրաքանչիւր տեղիս և՝ի գեօղս. իսկ զնոքա

գուրիաս և զսամոնաս ոչ արձակեցին . այլ արգել դատաւորն զնո միայն 'ի բանտին . և նոքա ուրախ եղեն յոյժ , զի ունկ յաղագս բազմաց լուան՝ որք յաւուրսն յայնոսիկ վկայեցին 'ի քո , ակն ունէին և ինքեանք նոյնպէս կատարիլ ըստ ջերմ փափաքանաց իւրեանց :

Յայնժամ անտոն դատաւորն նստեալ յեդեսացւոց քաղաքին՝ հրամայեաց ածել զքրիստոս գառաջեաւ , և ասէ . զայս գիտասջիք , զի պարտ է ձեզ լսել քաջի արանց ինքնակալին հրամանաց , և զոհել ըստ օրէն , և լինել կարգօք և կրօնիւք հելլենացւոց իբրև զմեզ , և 'ի քաց կալ 'ի սնոտի պաշտամանց , և փրկիլ յառաջիկայ տանջանաց՝ զոր կրեալոց էք : Նոքա ասացին . որ քեզ սնոտի պաշտօն կարծի , և ունայնուն Յուդի խաւարելոյդ հոգւով՝ լոյսն ճշմարտութեանն , զի ոչ կարես հայել և նկատել , մեզ այն՝ կեանք են յաւիտենական , և տուօղ կենդանութեան . վասն և 'ի տանջանացդ՝ զոր սպառնաս , մեք ոչ երկնչիմք , և լսել քեզ երբեք ոչ կամիմք :

Դատաւորն ասէ . ամ իրօք գիտէք զհրամանն ինքնակալին , որ հրամայէ ձեզ քրիստոնէից կամ զոհել , կամ մեռանել . արդ յառաջ քան զտանջանսն փութասջիք կատարել զհրամայեալսն ձեզ : Նոքա ասացին . մեք զապականացու ղէդերն զհրամանս անօրէնս ոչ կատարեմք , մանաւանդ՝ որ զտարերս ածս համարի . այլ զանմահ Թագաւորին փութամք պահել զպատուիրանն՝ որ ասէ , Թէ որ ուրասցի զիս առաջի մարդկան , ուրացայց զնա ա-

առաջի հօրն իմոյ՝ որ յերկինս է։ Ուշիանն
ասէ. արդ ոչ կամիք առնել զկամս Թագաւո-
րին։ Քէքն ասէն. ոչ։ Ուշիանն ասէ. վա՛ռ
յամառութեանդ երդոյ քոյում տանջանարանս
պատրաստեմ ձեզ։ Քէքն ասացին. Թէպէտ
և՛ ի տանջանաց մեռանիմք զառաջամանա-
կեայ մահս, այլ անստուերին հասանեմք
լուսոյ յաւիտենական և անվախճան կենացն,
զոր խոստացաւ մեզ սիրելեաց իւրոց։ Յայն-
ժամ բարկացեալ դատաւորն՝ հրամայեաց
սրկանել զնոսա՛ ի բանտ։

Ա՛յլ յետ աւուրց՝ յորժամ եկն յերեսիա մու-
սոնիոս դատաւոր անտիոքայ, դարձեալ ածին
զքեզան յատեան. և ասէ ցնոսա դատաւորն.
քազում ներողութիւն իմ և երկայնմտութիւն
ոչ ածին զձեզ՛ ի հաւանութիւն. արդ այսու-
հետև յաձախեմ՛ ի վե՛ր ձեր նեղութիւնս. և
մատնեմ՛ ի չարաչար տանջանս՝ ոյք արժանի
էք, ՛ի քանզումն քերանաց կողից ձերոց, և
՛ի կիզումն մարմնոյ հրով, և կախիլ՛ ի ձե-
ռաց, և այլ զանազան տեսիլ տանջանաց
կուտելոց՛ ի վե՛ր ձեր։

Քէքն ասացին. գրեալ է, մի երկնչիք յայն-
մանէ՝ որ զմարմին սպանանէ, և զոգի ոչ կա-
րէ սպանանել. արդ ոչ եմք հաւանելոց ձեր
խաւարասէր կրօնիցդ՝ առ՛ի մատնիլ անշէջ
հրոյն տանջանաց. այլ՝ պատրա՛ստ է մեզ չարչա-
րիլ, ոյք ունիմ մեր վե՛ր մեր չարչարեցաւ. զի
փառաց նո՛ր լինիցիմք հաղորդք։ Ո՛վ դատա-
ւոր. մի շաղակրատիք, այլ զոհեցէ՛ք և եր-
թիջիք յիւրաքանչիւր տունս ձեր։ Քէքն ա-
սեն.

սեն . մեք ունիմք տուն՝ տաճար առանց ձե-
ռագործի յերկինս , զոր դու ոչ տեսանես :
Իսկ դատաւորն իբրև եառնս զանշարժ հա-
ւատս նոցա , ասէ ցգահՃապետան անվինոս և
ցդահիՃանն . կախեցէք զդոսա զվիզ ձեռա-
նէ , և յոտս դոցա կախեցէք քարինս ատՃարս
և մեծամեծս : Եւ այնպէս կային ՚ի կախաղա-
նին յերրորդ ժամէ աւուրն մինչև յուԹե-
րորդ ժամն (4) . և ոչ եԼ ՚ի բերանոյ նոցն հե-
ծուի կիրքան աղաչանաց . այլ այնպէս կային
ժուժկալուԹիՆ , ոՊՀԵ օտար մարմնով կրե-
ցին զցաւս տանջանացն : Իսկ դատաւորն
ցմի ոմն . մատիր առ ԹշՆամականդ այդո-
սիկ , և Հարց , եԹէ արդեօք հաւանեցա՞ք
առնել կնոմն ինքնակալին , եԹէ ոչ : Իսկ
ամենագով նոր վկայքն բանիւ ոչ կարացին
տալ պնդին , այլ ձեռամբ նշանացն ցուցանել-
ին ոչ հաւանել : Եւ ապա հրամայեաց ի-
ջուցանել , և դնել ՚ի խաւարչին բանտի ,
և զոսա նոՅ պնդել ՚ի կոձիղս :

Եւ յետ երից աւուրց դարձան Հարցանել
զնոսա վա՛ղ ղՀեղյ ասեցոյն . և յոլ հաւանել նո՞
ԹողնԻ զնոսա այնպէս ՚ի դառն նեղուԹենէ բան-
տի յօգ ոստոս ամսոյ մինչև ցնոյեմբեր ամիս :
Եւ ապա հրամայեաց բռնաւորն զառաջեաւ
ածել զվկայսն , և ասէ . հաւանեցա՞ք յայսմ
հետէ ԹագաւորաՅ մերոյ : Իքն ասացին .
ոՊՀ անփոփոխելի են կիՆքեան հաւատք մեր
աւանդեալ մեզ յայ , նոյնպէս անփոփոխելի
և անշարժ է հաւատք մեր խոստովանուԹե-
առ քո : Յայնժամ հրաման ետ կախել զնո-

զա-

Գ. Ա. Ա. Ա

պարձեալ խօսել սկսաւ դատաւորն, և ա-
սէ. լուարուք ինձ և գոհեցէք ածոցն, և
մի զրկիք ի քաղցր լուսոյ արեգականս, և
զչարագործսդ մահ մեռանիք. արձակեցա-
րուք ի կապանացդ, և գնասջիք ի տունս
ձեր. նաև ի վեր այդր ամի ընունիցիք պար-
գևս յարքունուստ. և այդ լինիցի, եթէ
առնիցէք զհրամայեալն ձեզ. ապա եթէ
ընդիմանայք հրամանաց Թագրին, այլ ոչ տե-
սանէք զլոյս արեգականս զամենեցունց Թա-
գաւորի: Ոչիծաղեցան սիքքն և ասեն. զնա-
խաստեղծն յորժամ արար ածն նախ զամ
ծնունդս նոր, զարեգակն ստեղծեալ էր ի
ծառայուն նոցա, որ յարևելից մինչև ի մուտս
արևու ընթացեալ՝ ծառայակից մեր է. և
արդ որպէս կոչէք զնա ամենեցունց Թագա-
ւոր. բայց և զի՞նչ պէտք են քննութենէ, զի
մեք պատրաստ եմք ի մեռանել վասն անուանն
նորա մերոյ յիսուսի:

Ոչխանն ասէ. և դեռևս՝ թէ կամիք, շահիք
զկամս Թագրին, և քաղցրամ փառաց արժա-
նասուրիք: Սիքքն ասացին. յառաջ զտան-
ջել մարմնոյ մերոյ ոչ լուաք քեզ. իսկ յոր-
ժամ ժամանակ է մշակութենէ մերոյ առնուլ
զվարձս հատուցմանց անդ երանութեցն, արդ
մոլորեցուցանել զմեզ կամիս ոմն ածամարտ:
Ոռնաւորն ասէ. մերձեալ է ժամանակ յայ-
սմհետէ զվճիռ մահու սրով ընունել ձեզ:

Այս լուեալ զայս սիքքն՝ գոհացան զնմա:
Իսկ պատաւորն իբրև ետես զհաստատուն
հաւատսն և զյօժարութիւն նոց ի մահ, զար-

մա-

մայեալ և զձեռս ՚ի վէր աչաց եդեալ՝ բա-
զում ժամս լռեալ կայր. ապա ասէ. երդ-
ուիեալ ՚ի փառս անմահից ածոցն, զի ոչ էր
իմ կամ չարչարել ձեզ ՚ի ձեռաց իմոց. բայց
զկեանս ձեր դուք ոչ կամեցայք. ես զհրա-
մանս Թէոդիոն առ ոտն հարկանել ոչ կարեմ.
Այլ հրամայեաց դահճացն ՚ի գիշերի հանել
զնա ՚ի քաղաքէն ՚ի տեղի մի, և անդ գլխա-
տել։

Այլ հանին զնոսա սայլիւք և զամբարօք ընդ
դուռն Ռոմանայ գիշերային, մինչդեռ ՚ի քուն
կայր քաղաքն ամ, ՚ի հիւսիսակողմն ՚ի լեառն
վիթխարիկդոս կամ բեթէլաբիկլայ. և եր-
թային սքանչելագործք։ Այլ իբրև հասին ՚ի
տեղին, դարձան յարևելս՝ ծունր եդին կոշ-
կոճեալ մարմնով, և տարածեալ զձեռս իւր-
եանց՝ ասեն արտասուօք ուրախութեամբ. Տէր
ամենակալ՝ յո՛ք քո ամ ձշմարիտ, որ վա
մեր զմահ ձաշակեցեր, ընկալ զհոգիս մեր
՚ի հոտ անուշից ածութեդ քոյ, և զոսկերս
մեր պահեա քո ամրաձաձուկ աջովդ. և ե-
թէ նեղեալ ոք իցէ ՚ի վշտաց վտանգից նե-
ղութեց կամ յայսոց չարաց, և մեօք աղաչես
ցեն զքեզ, լո՛ր յերկնից ՚ի սրբութենէ քումմ
մէ, և զերծո՛ յիւրաքանչիւր վտանգից։
Այլ կատարեալ զաղօթան՝ խոնարհեցուցին
զգլուխս իւրեանց. և դահիճն ձգեալ զզ-
սուրն՝ եհատ զպարանոց սքանչ։ Այսպէս
կատարեցան սքանչ յամենայն նոյեմբերի,
որ օր ժէ էր, յամի Թուականութե եդեսաց-
ւոց՝ որ կոչի աղեքսանդրի, և սելևկիացւոց,

600.

600. այն է ամ ՈՀՆ 289, և վեցերորդ ամ դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի (5)։ Այս՝ ի վայրկեան եկեալ հաւատացելոցն հանդերձ գաւերքն սամոնայ՝ առին զմարմինս երջ վըկայիցն, և պատեալ անոյշ իւղովք և խնկօք՝ եդին ի տապանի, ի փառս և ի պատիւ անուանն ՏՐՈՅ յիքն. որոյ փառք յաւիտեանս, ամէն։

## Ա Հայոցն երջ սուրբ առաքեալ Բարթողիմէոսի։

Յետ կատարմանն երջն գուրիասայ և սամոնայ՝ յաւն վեցհարիւրերորդի թագաւորութենն աղեքսանդրի մակեդոնացւոյ, յեպտութենն եգիպտացւոյ կոնոսի կամ կոզնատիոսի, և ի պետորութենէ աւգարու որդւոյ զոհարայ, լըրև անցին ամք իբր հնգետասան, ի հիւպատոսն լիկիանոսի և կոստանդնի, ի զօրավարութենն յուլիանոսի և վառվառիկոսի, (որ յաւն ՈՀՆ 303 կամ 304), հալածուածն մեծ յարոյց եկեղեցւոյն այ լիկիանէս, կամ գործակալն յեգիպտիա լիւսանիաս՝ հրամանաւ անօրէնն Թագրին դիոկղետիանոսի. և բազմաց արիական հանդիսիւ ընդիմամարտեալ պահակեցան ի քեզ։

Բարթողիմէոս կամ՝ աբիբոս ոմն սարկաւագ վայլեր ի ժամանակին յեգիպտիա, ի գեղջէն՝ որ կոչի Թլսե կամ Թելսէա, այր երջ և ամ առաքինութ զարդարեալ, հմուտ ուծայկին պատուիրանացն. սա զցայգ և զցերեկ ոչ դադարեր

րեր յուսուցանելոյ զբանն կենաց, և զբա-
զումն ի կռապաշտուէ դարձուցանէր յածգի-
տութիւն։ Ո այս լուեալ դատաւորին եղե-
ասցուց՝ գրէ առ թագն, թէ աբիբաս ոմն
գհրաման թագրուէ քո արհամարհէ, և զբա-
զումս յածոյն պաշտաւնանէ դարձուցանէ առ
նազովքեցւոյն պաշտօնն։ Յայնժամ հրա-
մայեաց բռնաւորն դատաւորին, թէ զաբի-
բաս՝ զորմէ ասացեր, և զաշակերտեալսն
առ ի նմանէ՝ ընդ խաշտանպանօք արկցես բա-
զում տանջանօք. և եթէ ոչ հաւանեսցի,
հրոյ մատնեսցես։

Եւ դատաւորին առաքեալ սպասաւորս ի
խնդիր սնձին ի գեօղ նորա, և ոչ գտին զնա
անդ. զի երթեալ էր շուրջ ի շինս աշակեր-
տել զնա. յայնժամ ըմբռնեալ զմայրն երա-
նելոյն և զայրս յազգականացն, և կապեալ
երկաթեղէն կապանօք՝ ածին առ դատա-
ւորն. և նա հրամայեաց ի բանտ արկանել։
Ասէ ցնձին աբիբաս լուեալ՝ եթէ խնդրեն զնա,
ասէ ցմիտս իւր. և զինչ օգուտ է անուն
քրիստոնէութեան առանց գործոյ. կամ ընդէր
ոչ երթեալ ազատեցից զանձնսիկ՝ որ վճռ իմ
արդեալք են ի բանտի և ի կապանս նե-
ղութեան։ Եւ յարուցեալ վազվազակի գայր
ի տուն դահճապետին կամ զօրապետի գըն-
դին յեղեսիա քաղաք, որում անուն էր թէո-
տեկնոս կամ թէոդոկոնոս. և ասաց նմա զբ-
պատճառս գալստեան իւրոյ։

Ասէ նա ասէ. ետես ոք զքեզ ի մտանել
այսր ի տուն իմ. և ասէ, ոչ. յայնժամ ա-

ասէ

սէ զահձապետն . արի գնա ուր կիրն . և վա
մօր քո և ազգականացն մի ինչ հոգար , զի
յետ սակաւ աւուրց սղատեմ զնա . այլ վա
քո հրաման առեալ կ 'ի թագրէն՝ հրոյ մատ
նել . և եթէ յամէս աստ , քաւեալ եմ ես
յարենդ քումմէ : Այն ասէ . տէր իմ, ինձ
ոչ կ փոյթ մայրն իմ կամ ազգատոհմն , այլ
միայն զի ապրեցայց 'ի յաւիտենական տան
ջանացն . քանզի եղբայր ոչ փրկէ , և ոչ փրկէ
մարդ . և զարձեալ փրկիչն իմ քո ասաց ,
թէ որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան
զիս , ոչ կ ինձ արժանի . և յոյժ տրտում կ
անձն իմ , զի յորժամ խնդրեցին զիս զին
ուորք բռնաւորին , ոչ գտայ ես 'ի շինին ի
մում . և դու այսուհետև եթէ ոչ տանիս
զիս առ իշխանն , ես ինձէն երթայց :
Օ այս իբրև լուաւ Թէոտեկնոսն՝ հրամայ
եաց ծառայից իւրոց կապել զնա . և ինքնին
առեալ աճ զնա առ իշխանն , և ասէ . տէր
իմ, զոր խնդրէիրն՝ աւանիկ կայ առաջի քո :
Բռնաւորն լիւսանիաս ասէ . ով աճ զդա ,
կամ որով օրինակաւ եկն այսր : Թէոտեկնոս
ասէ . ինքնակամ յօժարուբ առանց ուրուք
բռնադատելոյ եկն դա այսր , և հարկեաց
զիս բերել առաջի քո : Օ այս իբրև լուաւ
իշխանն , զարմացաւ յոյժ , և իբրև զառիւծ
մրմռեալ՝ կրճտեաց զատամունս իւր , և ա
սէ . ոչ կ դա արժանի մարդասիրութեբ կամ
քննուճե ինչ , այլ՝ փուքով վաղվաղակի բառ
նալոյ 'ի կենացս . զի խրատ լիցի բազմաց
տեսողացն , զի մի իշխեսցեն ըմ դմին օրինա

կի

կի արհամարհել զփառս և զզօրուն ՅԾծոյն ,
և առ ոչինչ համարել զհրամանս ինքնակա-
լաց մերոց Թագրացն ։ Այլ որք անդն կային՝
ամենք գովէին զինքնակամ գալուստ նորա ,
իսկ այլք դատովէին , Թէ վն է՛ր ինքնայոր-
դոր յօժարութիւն դիմեաց ՚ի մահ ։

Ասէ բռնաւորն ցվկայն . զի՞նչ անուն է քո ։
Աբէն ասէ . անուն իմ քրիստոնեայ է . և ՚ի
ծնողաց իմոց աբխազաց կոչեցայ , արժանաւո-
րեալ սարկաւագութեան աստիճանի , ՚ի գե՛ղ-
ջէն՝ որ Թլսէն կոչի ։ Բռնաւորն ասէ . ընդ՛ր
արհամարհես զհրամանն ինքնակալին , և ո՛չ
զոհես . այլև զբազումս ևս մոլորեցուցա-
նես սնոտի առասպելաբանութիւք քով , և հե-
ռացուցանես ՚ի պաշտամանէ դիցն ։ Աբէն ա-
սէ . վն զի մեք քրիստոնեայքս ո՛չ առաք հրա-
ման երկրպագել գործոց ձեռաց մարդկան ։
Բռնաւորն ասէ . վն հայհոյելոյ քո զՅծծան՝
այսուհետև մի՛ ակնկալեիս դու կենաց . այլ
վաղվաղակի ընդ հրամանի Թագրին զվախճան
մահու ընկալեիս ։ Աբէն ասէ . ո՛չ միայն ար-
համարհեմ , այլև Թքալից ևս առնեմ զՅ-
ծծան . և ծիծաղիմ զանմտութիւք և զմոլո-
րութիւք ձերով . զի Յծք՝ որ զերկինս և զեր-
կիր ո՛չ արարին , կորնչե՛ն ՚ի ներքոյ երկնից ։
Բռնաւորն ասէ . եթէ ոչ անկեալ առաջի
մեծին աստուծոյն արամազդայ՝ Թողութիւն
խնդրեսցես վն հայհոյելոյ քո զնա , և ՚ի
խորհրդական զոհից ձաշակեսցես՝ որպէս և
մեք ամենեքեան , չարաչար և դառն տանջա-
նաց մատնեսցիս ։ Աբէն ասէ . ոչ աւեր հրա-

ման ՚ի Թագաւորացն գահեալոյ՝ տանջեա զնս. և վաղվաղակի առաքեա զիս առ այն՝ որում ցանկացեալ եմ. և վարձս ունիցիս (գոնէ ՚ի Թագաւորաց քոց) . զի ոչ եմ լսելոց քեզ։ (6)

Ասէ բռնաւորն. կախեցէք զդա զմիոյ ձեռանէն վերամբարձ, մինչև հաւանեսցի ինձ։ Նա կախեցին, և եկաց ՚ի կախաղանի անդ մինչև ցվեց ժամ. մինչև մերկացան մորթքն ՚ի մարմնոյն, և հատան ջիղք ձեռացն. և հարցանէին՝ որ մօտն կային. հաւանեսցի՞ արքեր, և զոհեսցի։ Ասէն ասէ. արդ յորժամ մոռ ՚ի վաստակս աշխատութեանդ այգուոյս ետն իմոյ, ոչ դադարեմ՝ մինչև առիցս զվարձն։ Նշխանն ասէ. այդ դեռևս սակաւ ինչ ձաշակ է առաջնակայ տանջանացն, զոր կրեցն հանդերձեալ ես։ Ասէն ասէ. մի կարծեր ոմն բռնաւոր, թէ երկնչիմ ՚ի քոյոց տանջանացդ. քայց դու թէ չես հակառակ հրամանի Թագաւորացն քոց, ընդ ոչ առնես զհրամանսն նոցա, զոր վասն իմ գրեալք են առ քեզ։ Նռնաւորն ասէ. վասն զի ոչ կամիմ փութով զրաւառնել քեզ ՚ի կենաց աստի, այլ մեղմով առ փոքր փոքր տանջել զքեզ. զի Թերևս մոռմոռքեալ ՚ի տանջանացն՝ հաւանեսցիս արքունի հրամանաց։

Ասէն ասէ. ամ տանջանք քո չեն արժանի հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոցն է ՚ի մեզ, որոց ես սպասեալ ակն ունիմ։ Նռնաւորն ասէ. և վասն միոյ մեռանել մարդոյ այդչափ չարչարանս կրել զինչ օգուտ է։ Ասէն ասէ. ոչ

որպես դու կարծես՝ թէ մարդապաշտ իցեմք մեք. զի գրեալ է, թէ անիծեալ ամ մարդ՝ որ դնէ զյոյս իւր ի մարդ. և մեք ոչ եթէ ի մարդ մահկանացու յուսացեալ եմք, այլ յԱծն՝ որ արար զերկինս և զերկիր. որ գԹագեաւ ի մեզ՝ խոնարհեցաւ և եկն առ զմարմինս մեր, և ետ մեզ իշխանութիւն կոխել զպորտիկն հոգւոյն քումմ սատանայի։ (7)

Այս բարկացեալ գառնաւորն հրամայեաց սաստկագոյն տանջել զնա. և ասէ. ի քէնէն ձերմակ ուսայք արհամարհել զտանջանս, և մարմնոյ ձերոյ խնամ ոչ տանել։ Նէքն ասէ. գրեալ է, թէ որ կորուսցէ զանձն իւր վնասիմ, գըտցէ զնա։ Իսկ դատաւորն յայնմհետէ ծանուցեալ զանպարտելի վճռաւորդ նէ զհամբերութիւնն, և զի ոչ խոստութիւն և ոչ ողբանօք արար վկայն Թէքլին, վճիռ մահու եհատնման՝ գրել զայսօրինակ. Օ աբիւսաս անարգօղ և ուրացօղ մեծ աստուծոյն, և արհամարհիչ քրիստոնէականին հրամանին, հրամայեցաք կենդանւոյն հրոյ մատնել։ Իսկ զմայր նէյն և զազգատոհմն հրաման ետ արձակել ի բանտէ, զի տեսցեն զայրումն նէր։

Այս հրամայեաց փոկով պատել զբերան նէր. քանզի այսպէս էր սովորութիւն առնել մահապարտացն, զորս կամէին սպանանել (հրով)։ Այս առեալ հանին զնոքն ընդ դուռն քաղաքին ի հարաւակողմ տեղին (ընդ այլ օրինակաց՝ ի հիւսիսակողմն). յորում տեղւոջ էին հանգստարանք նէյ եպիսկոպոսին կոդնատիոսի, և գերեզման որդւոյն աբգարու Թէքլին եղեսեայ. և

և եւ բազմութեանն քաղաքին զկնի սէյն . ընդ նոսին և մայրն նորին երթայր՝ յուղարկել զերանելին հանդերձ ամ աղգատոհմիւն իւրով, ամենեքեան զգեցեալք հանդերձս նորս և սպիտակս . և ապա համբուրեալ զնա վկայն ՚ի համբոյր սրբութեան՝ յանձն արարին նմին : Յայնժամ սպասաւորք բռնաւորին կանգնեցին զնա կապանօքն յասպարիսի անդ . և բերին փայտ բազում և դիպեցին զերանելեաւն , և լուցին զփայտն . և ելեալ բարձրացաւ բոց հրոյն , և ծաւալեր շուրջ զերանելեաւն : Նա գոչեաց մեծաձայն առ նա , և ասէ . Տէր յն ընկալ զոգի ծառայիդս աբիբայ . և առաքեաց զոգին ՚ի ձեռս նոյ . ոյ և գրեալ է , թէ հոգիք արդարոց ՚ի ձեռս նոյ են : (8)

Ապա առեալ զնա և զմաքուր մարմին վկայն , և պատեալ պաստառակապաւ , և անոյշ իւղովք և խնկօք օծեալ՝ եդին ՚ի տապանակի , և թաղեցին մերձ առ նշխարս երանելեացն գուրիասայ և սամոնասայ : Նա իբրև կատարեցին զպաշտօն հոգևոր երգոյն , առին զհանդերձս սէյն , և բաժանեցին յօրհնութի . և իւրաքանչիւրքն ցրուեցան և գնացին ՚ի բնակութիս իւրեանց : Նա մինչև ցայսօր ժամանակի ( ասէ վկայաբանն ականատես ) կան նշխարք նր ոսկերաց նր յեդեսացւոց քաղաքին՝ որ է ուռհայ , ՚ի տեղւոջն կոչեցեալ լուսաւորչական :

Ասէ ես նոճաստս Թէոփիլոս , որ ուրացայ զպաշտօնն հելլենացւոց և աշակերտեցայ Ջնմար

մարտուն՝ , մերձ կալով սրբոյն՝ գրեցի և յո-
բինեցի զՀգնուն սրբոյն գուրիասայ և սամո-
նայ և աբիբայ . ոմն զի և զիս արժանի արաս-
ցէ քո ոճծ՝ մանն ողորմութեանդ տանել ըզ սո-
վկայս իւր . և փառաւորել զհայր և զորդի
և զսբ հոգին այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից , ամէն ։

Ես եղև՝ ի դադարել Հալածանացն , և՝ ի փայ-
լել քրիստոնէութեան առ մեծն կոստանդիանո-
սիւ , շինեցաւ եկեղեցի հոյակապ յեպեսաց-
ւոց՝ ի վերջ գերեզմանին սրբոյ երեցունց , և
կոչեցաւ նոր վկայարան . ոմն ե տեսանել՝ ի
յիշատակագիրս եդեսացւոց . այլ զկնի դա-
րուց՝ յորժամ տիրեցին հագարացիք , արա-
րին զայն մզկիթ ։ Այլց ցորչափ կայր եկե-
ղեցին այն՝ ի ձեռս հաւատացելոց , էր ուխ-
տատեղի երևելի , և բազում աքանչելիք լի-
նէին՝ ի տապանէ սրբոց . և մեծ էր զօրութի
վկայիցս՝ ի հասանել ամպիտոյից քրիստո-
նէից . և երդումն տուեալ՝ ի տաճարի նո՝
յայտնի կացուցանէր զանմեղն և զմեղա-
պարտն երևելի ցուցակութիւբ . յորում տակի
հանդիսացեալ ե առ ամենեսին առաջնակայս
հրաշք եղեալ՝ ի նմին չորրորդ դարու , յամի
տեր 385 կամ 395 ։

Ես եղև՝ զի առաքեցան՝ ի Թիֆրէն յունաց
զօրականք՝ ի պահպանութիւն քաղաքին եգե-
սիոյ յերեսաց արշաւանաց հոնաց հեփթա-
ղեանց՝ նիզակակցացն պարսից . և էր անդ
աստղի կին մի այրի՝ անուն սոփիա . և ունէր
դուստր մի կոյս և գեղեցիկ յոյժ՝ եւփիմէ

անուն . զոր տեսեալ բարբարոսի ուրումն յօտարազգի զօրականաց եկելոց , զոր գոտ-
Թոս կոչէին ( որպես Թէ ըստ սմանց՝ գոթացի , զի գտանէին և գուԹք ՚ի զօրուն յունաց ) , խնդրեաց զաղջիկն՝ իբր ՚ի կնուէ . և մայրն սոփիա ոչ հաւաներ վՀ օտար և հեռաբնակ առնն . և գոտԹոս բազում սիրելլիս և բարեկամն՝ միջնորդս և խնամիխօսս յուղարկեր առ մայր աղջկանն . և երդմամբ հաստատեր, Թէ ոչ ունիցի այլ կին յերկրի իւրում, և պահասուԹի ինչ ոչ արասցէ աղջկանն . այլ հաւասար աչաց իւրոց տեսցէ զնա , և պահեսցէ զնա սէր տիկին ծառայիւք և աղախնօք : Առով բանիւ հաւանեցան , և արարին զհարսանիսն : Եւ փեսայն գոտԹոս ոսկւով և դիպակով զարդարեաց զեւփիմէ . և էին ՚ի միասին զաւուրս բազումս :

Եւ եղև գալ այլ զօրականաց ՚ի քաղաքն , և փոխել զառաջինն զօրականն . և պատրաստեաց գոտԹոս երիվարս , զի տարցէ ըզկին իւր յերկիր իւր : Եւ առեալ սոփիայ ըզգուստս իւր՝ տարաւ ՚ի տապան ՚ոջցն գուբիաստայ , սամնաստայ և աբիբայ . և գոտԹոս եւ զնբան երաշխաւոր՝ եդեալ զձեռն իւր ՚ի վր տապանին . և ապա տուեալ զաղջիկն՝ եւ ՚ի ձանապարհ :

Եղև իբրև մերձեցաւ յերկիր իւր և ՚ի տուն իւր , ասէ ցեւփիմէ . գիտացիր այդ աղջիկ , զի ես կին ունիմ և որդիս . և պատրաստեա զքեզ՝ զի ասասցես , Թէ աղախին եմ . ապա Թէ ոչ՝ չարաչար մեռանիս ՚ի կնոջէն իմմէ .

և

և հանել զՀանդերձն Եւփիմեայ՝ զգեցոյց
նմա չուխայս հինս և պատառատունս , և աճ
ապել նմ խոշոր կանեփիս , և բոկ ոտամբ
տարաւ ի տուն իւր . և ասէ ցկինն . քեզ
քեզ ասորի աղախին մի :

Եւ տեսեալ կնոջն զգեղեցկութի անձինն
և զերեսայն Եւփիմեայ , և գիտացեալ՝ զի
յղի է , նախանձեցաւ ընդ նմա . և զամ ծանր
և դժուարին գործս նմա տայր առնել , և
հանապազ տառապեցուցանէր զնա սովով և
մերկութե : Եւ յոյժ նեղացեալ աղջիկն՝ յի-
շեր զխոստովանիլ նահատակն զգուրիաս ,
զսամոնաս և զաբիբաս , և յոգւոյ հաներ :
Եւ եղև նմա ծննանել արու մանուկ՝ նման
ամենևին գոտեայ . և այն ոչ սկսաք եմուտ
ի սիրտ կնոջն . և կամէր սպանանել զմայրն
և զմանուկն . և յաւուր միում առաքեաց
զԵւփիմ ի ծառայութի , և արարեալ դէղ
մահու՝ արբոյց տղային , և առժամայն մե-
ռաւ :

Եւ յորժամ դարձաւ Եւփիմ , ետես զտը-
ղայն մեռեալ , և դէղն ոչ փրփուր ելանէր
ի շրթանցն . և առեալ Եւփիմեայ բուրդ՝
արբեաց զփրփուրն և պահեաց գաղտ առան-
ձինն . և տարեալ Թաղեաց զտղայն մեծաւ
հեծեծանօք : Եւ իբրև դարձաւ ի տուն ,
ասէ ընդ կինն իւր . փորձեցից և տեսից , եթէ
զտղայս տիկինս եսպան դեղով . և առեալ
զշաղախէ բուրդն՝ տրոբեաց ի բաժակ տիկ-
նոջն գինւով . և ետ նմա ըմպել . և առ ժա-
մայն մեռաւ :

Այր եղև խռովուն և աղմուկ յազգականաց կնոջն . և դատապարտեցին զեւփիմէ թա- ղել կենդանւոյն ընդ տիկնոջն իւրում . զոր և արարին իսկ , և փակեցին ՚ի միում տապա- նի : Այր յետ երկու աւուր սկսաւ մեռեալն հոտիլ . և ձայն արկեալ եւփիմեայ առ ած և առ ընթ վկայն՝ ասէր . դուք երաշխաւորե- ցիք և ետուք զիս յանուածն գոտեթոս . և արդ եկայք տեսէք թէ զնաւրդ կամ , և ուր իցեմ . և դուք ուր յուղարկեցիք զիս . և այլ բա- զում ողբս ողբայր . և էր ՚ի մեծ վտանգի : Այր առ ժամայն երևեցան երեքեան սքանչ ձառագայթեալ լուսով և ձիով սպիտակօք . և ասեն յաղջկին . քաջալերեաց կին դու , ահա եկաք օգնել քեզ , և ազատել ՚ի վտան- գէդ . և իսկոյն բուրեաց հոտ անոյշ , և ան- կաւ զնուաւ քուն : Այր ընթ վկայքն արարին աներևութաբար մեծ սքանչելիս , և առեալ տարան զաղջկին յօտար ձեռ անտի , և կա- ցուցին յեկեղեցին առաջի տապանին իւր- բեանց ՚ի նմին գիշերի՝ յուրհայ քաղաքի . և ասեն յեւփիմէ . ահա կատարեցաք զերաշ- խաւորութիւն մեր , և բերաք զքեզ ՚ի տեղին՝ ուստի առաք . և զայս ասացեալ սքանչ՝ ան , յայտ եղեն : Այր գնացեալ մայրն և քաղա- քացիքն՝ տեսին զաղջկին . և լուեալ զեղելն զործն առ նա՝ փառս ետուն ած , և գոհացան

զԱստուածածնողացն քրի :

Այր յետ տարւոյ միոյ գնաց գոտեթոս ՚ի քա- ղաքն ուրհայ . և խնդութիւն եմուտ առ զո- քանչն , և ողջոյն մատուցանէր նմա ՚ի դրա-

տե-

տերէն և ՚ի Յոռնէն . և սուիա կոչեաց ըզ-
պատուհականս քաղաքին . և հանեալ ըզ-
դուստրն իւր առաջի ամենայն՝ ետ պատմել ՚ի
լուր նոցա զնմ կարգաւ , զոր ինչ արարն ընդ
նմա անուածն գոտեթոս : Այլ սարսաեալ
քաղաքին եհատ զգլուխն գոտեթոսի . և կա-
մէր այրել զմարմինն . և ետուն ( զոր ոմանք
եւլոժիոս կոչեն , և այլք կիւրոս ) ոչ եթող
այրել : Այլ մեծաւթիս փառաւորեցան ընդ խոս-
տովանող վկայքն քրիստոսի , սամոնաս ,
և աբիբաս սարկաւագն ՚ի փառս քրիստոսի :

Այսպէս ուղիղ համառօտիկ յայտնաւորքն
մեր՝ ընդ ընարձակ բանից այլոց . զնոյն ՚ի մէջ
բերէ ՚ի կարճոյ իբրև քաջայայտ ամենեցուն՝
արեթաս արքեպս կեսարացի ՚ի ներբողա-
կան ձառն իւր ՚ի վերայ սրբոց գուրիասանց . ոպ
և երևելին յակոբ սրձեցի առաջին՝ ունի այլ
ձառ ՚ի վերայ գուրիասայ և սամանասայ , և
այլ ՚ի վերայ աբիբասայ , քաղելով զայս ըզ-
գրեալքս :

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք :

(1) Առաջնորդ մեզ գեղեցիկ վկայաբանութեցս՝ ձա-
ուընակերն առաջին ըն երկրորդին , ուրոյն գրելով նախ
զգուրիասայ և զսամանասայ , և ապա զարիբայ առան-
ձինն , վն ընկերեցոյ ժամանակի նահատակուե վերջնոցն
յառաջնոցն . թէպետև միոյ ականատես վկայի՝ թէովփիլ
լոսի ասեմ՝ գործ է բովանդակն . վըշ և մատիրատես
պատաջաբանութեն երկրորդ վկայաբանութեն ՚ի սկիզբն
առաջնոյն փոխագրեալ՝ մի վկայաբանութեն է ձեռացու-
ցեալ , զհետ երթալով միակ ձառի արեթասայ կեսա-

բացուց. ուր ըստ հինէն յակոբ սրձեցի պահելով զկարգ ճառընտրին մերոյ՝ երկուս այլևայլ ճառս յօրինեաց: Սովմէ իմանաս՝ թէ մեր օրինակ է աղբիւր, և մեզ տարփառասիրին՝ վտակ. թող զընդարձակ ոմն ներ ճառոցն, որ և ոչ սակաւ բանս յարեւթասոյ ընդլուցանէ ի կարգ պատմութեան իւրոյ. իսկ մերս անպաճոյճ ձգելոցս տաբանուբ յօրինեալ. յորմէ և հատուածք ըստ իմաստից յառաջ քերին ի սրձեցւոյն: Սա է յակոբ սրձեցի առաջինն և երևելին՝ եթէ բառնայ ի միջագիտս ի սկիզբն ի դարուս. զոր և ասեմանն սիմոն յովսէփ՝ սբ գաւազնի առ որոշելոյ յայլմէ ծանօթալիկ սրձեցւոյ: Քաղուածք է գրելոցն ի ճառընտրի՝ և պատմութիւ յայտնութեաց իւրաքանչիւր ազգաց. յորս լաւ ևս է օրինակ եր իչլի. Վայ թէպետև մեք գրեթէ բառ առ բառ զճառընտիրն օրինակեցաք, այլ ի մերին տեղիս առաք օժանդակուիւ և յօրինակէն մեռափրատեսի և յայլևայլ յայսմաւուրս:

Ճանիր և զայն, զի ոմանք ի իւտին հերձնակաց քահանայս համարեցան ղգուրիաս և զսամնաս. զոր ոչ ոք ի նահանի վկայաբանից կամ ի ճառաբանից նշանակէ. պատճառք չիոնթուրթ երևին, նախ՝ զի գուրիաս ծեր կոչի. որ թերևս հոմանձայն առեալ է յոմանց իյուանական՝ ոչ երէց. երկրդ՝ զի զորիբաս սարկաւագ տեսանելով՝ զնախընթացս նր կարծեալ են գոլ երիցուն. և երրդ՝ չիոնի իմաստ արդեօք հանեալ են ի վերնաբանութեանն արեւթասոյ, ուր ասի՝ թէ վարձք սըգ զանազանեալ են ըստ հինն և նոր օրինաց, և գարձեալ ի նորումն պատկ վկայից, միանձանց, քահանայից, սարկաւագաց և ժողովրդոց: Ոչ օգտէ այդմ կարծեաց հասանել որ իչլի. * էին պաշտօնեայք այ գուրիաս և ,, սամնաս յաւուրս գոգնաւոյ սրբասնեալ եղեսին. և ,, ոչ քրիստոնեայ տարան առաջի անդունեայ դքսին ||. զի պաշտնեայ այ ասին վ կատարեալ ծածկաշուշե:

(2) Ճառընտիրն ի ինոյն գեղջ սարկիպիսկոպոս առէ զգուրիաս և զսամնաս. իսկ մեռափրատեսիս գրէ, գուրիաս ի գեղջէ սարկիպիսկոպոսէ, և սամնաս ի գեղջէ գանգրայ. եթէ ուղիղ իցէ, վրիպակաւ գրչի անկեալ է բառ ինչ յօրինակ մերմէ: Թող զատուգաբանուն մեռափրատեսի զի զանունս ղոբիա թոռի հանել ի լատին ձայնէս գոռա, յաւէրն՝ թէ ի փուեթոյն ընկալաւ զմականուն. իսկ արեթաս ասէ, թէ մականուն եղև նմա զգաստ կամ ժուժկալ. զոր և ալևոր դնէ, և զսամնաս՝ այր զօրաւոր:

(3)

(3) Ճ. զանց առնէ զանուճամբ դատաւորին եգեսիոյ, ոյզ և ոչ լուէ զդատաւորն եկեսաստիոքայ. վնաս յայլոց ի փոխ առաք։ Բայց ոչ կամեցաք առնուլ ինչ ի ձոխաբանութենէ մեծափր. որ զատենախօսսն սբց իբրև ի միոջէ բերանոյ՝ ուրոյն ուրոյն ձևացուցանէ, զհետ երթալով ճառաբանութեանն արեթասայ։

(4) Մեծափր. ըստ Ճ. ուղեորդ ժամ. ուր ոչ ինչ ներորդ գրէ։ Ծոյլ գրչագայ նկարագրութենս տանջանաց. յորս թէպետև միաձայնի ըստ մեզ մեծափր. ըստ իւրում, բայց իւիք իւիք տարբերութիք. զորս աւելորդ է նշանակել։

(5) Ջամանակ կատարման գուբիասայ և սամանասայ առնուամբ ի սկզբնաւորուէ վկայաբանութենէ աբէբասայ. ուր ըստ Ճ. և ըստ մեծափր. միօրինակ գրի վեցհարիւրերորդ աճն աղեքսանդրեան, որում պիննէ ամ ոն. 289. որ է ըստ Ճիմագրաց՝ վեցերորդ ամ դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի. թէպետև մեծափր՝՝ ասէ լինել իններորդ ամ դիոկղ. և վեցերորդ հիւպատութեն մաքսիմ։ Իսկ զոր յարէ Ճ. վն հիւպատութէ լիկիանոսի և կոստանդնի ևն, թէպետև պակասի առ մեծափր, սպարտի հայել ի Ճիմ կատարման աբէբասայ. և ըստ այսմ լինի այն յամի 303 կամ 304, որ է Ճիմ մեծ հալածանաց դիոկղետիանոսի. ոյզ և ասէ իսկ Ճ. թէ լիկիանէս հրամանաւ դիոկղ. հալածեաց յայնժամ և զեղեսացիս. որոյ փոխան մեծափր. դնէ զլիւսանիաս դատաւոր առաքէ՚ի լիկիանեայ կայսր եղեալ. և յայնժամ աւելի և յետոյ դնելի է Ճիմ կատարման աբէբասայ. բայր առ այս պիտէր այլուստ ստուգել՝ թէ ո՞ր ընթերցուածծ իցէ ուղիղ։ Ասեմն թէ պէտև կամի պահել զկարծիս մեծափր, բայց ընթերնլով վեցհարիւր հնգետասաներորդ ամ աղեքսանդրի վասն գուբիասայ և սամանասայ. այլ մեք հարկիմք պահել վեցհարիւրերորդ ամ վն նց, և զհնգետասաներորդն յաւելուլ վն աբէբասայ, ապա թէ ոչ՝ երեսներորդ պիտէր առնել և զհնգետասաներորդն։

Կարէր լուծանել զկնճիռն անուն եպսինեգեսիոյ, եթէ չլինէր և այն չիսթ. զի զոր Ճ. և մեծափր. միօրինակ կոպնատոս կամ գոգնատոս կոչեն, և ասորիք կոնոս, պատմութեն ճառընտրաց ցուցանէ վախճանեալ յառաջ զկատարումն սբյն աբէբասայ. իսկ Ճիմագրութեն եգեսացւոց ասէ, թէ կոնոս եպս հինն էարկ զառաջինն ստաձարի սբց երեցունց յամի ոն 313. որ հաճոյ էր մեզ ըստ հաշուի մերում, բայց ասսեման չընդունի. զի կամի

գնել

գնել զնահատակութեի աբրհասայ յամի 323. յորում գա-
գարեաց հալածումն լինկիանէայ, որում յաղթեաց կոս-
ատնդիանոս յամի 324. ապա ինայ ինդկին Ի վէ տար-
քեւրէ իբր տասնամեայ միջոցի, որ միշտ կրէ զգժուա-
րութեի Ի պատմութեիս չորրորդ գլուխ ։

(6) Կրկին տարբերութիւք են առ առ մեատիր. Նախ՝
զի նա զառաքելեայս բան աբրհասայ գրէ կանխաւ Ի բե-
րանոյ գերբհասայ և տամնասայ այսպէս. * եթէ այն
• չափ բարեբարեացեւս մեզ, մինչև ազատել յաղագաւոր
• կենացս, և փոխել չանդ եքսուսութիեն, սրբափ է Ի
• մեր ձեռս՝ հատուսցի քեզ վարձ Ի դնդանել, որ զմեր
• իրս տնօրինէ առ օգտակարն ։ Եւ երկդ զառաքելեայ
տանդանս աբրհասայ զաղօրնեակ առորագրէ. * երա-
• մեծաց զատաւորն կոպել զբազուկս նր չուանոք, և
• ամբառնալ Ի կախաղան փայտի, և երկաթի ենդածմբք
• հերձուել. և էր կախուեն կարի բռնագոն՝ քան քե-
• րանքն. զի վանդակալ էր, գուցէ քայքայեցի, երբ
• բուռն ձիամարիչ խախտելի բազուկքն ։

(7) Ասի առեալ է Տաւուձածն այն սրձեցոյն Ի ներք-
ոյզ աբրհասայ. * Ինձնամանեն զնա իբրև մարգապատա-
• լակ նա ասէ. ոչ մարգոյ երկիրպագանեմ, այլ ձոյ՝
• որ էառ զմարմին և մարգ եղև, երկիրպագանեմ. վա
• զի ձեռ է ըբուեն ծնողին ։ Ցծոյ զի յաւելուս սքր-
ձեցին. * Ա՛րգաս հաւատաց, թէ ձեռ է ձեռորգին, և
• երանուել քնկալաւ ըս ուղիղ հաւատոց խբոց և սար-
• բէլ վկայ ծնունդ հզեւացուցս (զորմէ սեւս Ի վարս
• բարսաւմոյ եպսէ) առէր. միաք իմ յոյժ մարդացեալ
• վերբերին ։ Ա՛յլև աբրհասս վկայս՝ որ և սա յհզեալա
• պահակալ, զնոյն գաւանեալ՝ ասէ. մարմին էառ և
• մարդացաւս ։ Ի՛ւր մեատիր. կարձէ խապատ զառե-
նահասուսքին աբրհասայ ։

(8) Յայլ սրձեբ. աբրհայ. * Օգն պղծեալ ծխովք
• զոհից մարբեցաւ ասեամբ ըս վկայիս. գարբ հոտ քուս-
• բեր հաստատուն ոգնակիզբ կոտց, զհաճահոտուեին
• Ի բաց վանեաց հոտ անոյշ վկայիս. քանզի արդարև
• այնուհետև գադարեցին սատկդք, և խաղաղուն սե-
• բեալ յեկեղեցիս և. բերան սրոյ բեձեցաւ առ Ի չվե-
• րաբերել այլ ևս զբրխառնեայս ։ Ի՛ սարբեալ ըս-
• կիզբն կալաւ, և յարբիսս վախճան էառ յերկրի մե-
• բամ. զի ըս չկնանիլ սրսա բոցով՝ այլ ոչ ոք զայրաս-
• ցաւ. վ՛ր զի Թէրեաց մեծայաղեն կոստանդիանոս ։
ևն. զնոյն իմասա գասանես և Ի ձառն արեւելայ ։

ՎԱՍՅ.

# ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սքէն Ոսմանեան սարկաւագի, կիր Ոսմանեան միայնակեցի, և Մանկանն խոստովանողի։ (1)

Յ. Հոյեմբ։ 14։ Ի=Յ. Նոյ. 19։ Յ. Լ. Նոյ. 18։ Լսաեբ. յղ. Վէ. պաղեսպ. Գլ. 2. Ե՛ի ճառ Ը. յար. և համբարձ. Ներբող սոմանոսի։ Պահեբերան. Ներբ. սոմ. ա և Ը. Հապ. Ձ. Էջ. 611 = 622։ Լսաեբեոս եմեսացի կմ գաղղեացի. Ներբ. սոմ։ Պսուսենդեոս. պաղ. ծ. յղ. պսակայ։ Յոհաննարպ. երես. 310 = 321։ (2)

ՈՄԱՆՈՍ, ԿԱՄ Ոսմանոս՝ սքանչելին ի վըկայս, միայնակեաց անուանեալ ի ժողովրդեան մեր, և աբեղայ կիր ձգնաւոր կոչեցեալ ի յայսմաւուրս, եր ըստ եւսեբի կեսարացւոյ՝ սարկաւագ և երդեցողիչ ի վիճակին կեսարեայ պաղեստին. Նու. քանզի և պաղեստինացի իսկ եր, այլ առաքինի վարուք և լի հոգւով ըստ՝ նախանձաւոր կրօնից ծածպաշտուե. այլ որ ըստ ներքնոյն զհոգի մովսեսի եր զգեցեալ, արտաքուստ ըստ նորայումն քնաւորութե եր նրբաձայն և ծանրալեզու։

Պահպ

Դ՚ԿԵՊ եղև նմա գնալ երբեմն յանտիոք մայրաքաղաք ասորւոց՝ յառաջին ամի մեծի հալածանաց դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի, այն է յամի տեառն 303 · յորում ժամանակի անդր եւ Թէոդոր · զի Թէպետև կայսրն դիոկղետիանոս յայնժամ՚ի նիկոմիդիա էր , այլ ՚ի դիմաց նը եկեալ էր յանտիոք գաղերիոս կեսար՝ անօրէնեալն արմենտարիոս մաքսիմիանոս՝ սկզբնապատճառն այսց հալածանաց ։

Ա՚ՐԴ տեսանէր և լսէր Թէն ոմանոս , զի բազումք ՚ի քրիստոնէից անտիոքացւոց քաջութեբ նահատակէը վկայք եղեն քրի · և շատը եւս անկեալ գտանին ՚ի հաւատոց · իսկ մեծ ցեալքն՝ յահ և յերկիւղ ըմբռնեալ , լքեէ և կթուցեալ · քանզի մեծ կործանուամն ՚ի վը կայր եկեղեցեացն ՚ի ։ Այսսա սյնու հետև շրջիլ ՚ի քաղաքին , և քաջալերել և սրտապնդել զմի մի ՚ի հաւատացելոց զօրաւոր բանիւք , ոչ միայն հաստատուն կալ ՚ի հաւատս Ձմարտութեբ , այլև արութեբ մեռանիլ ՚ի նմանէն քրի , յուշ առնելով նոյ զանցաւոր կենացս զիոքրկուի , և զհանդերձեալոցն զմեծուի , և հանդէպ դնելով վաստակոց զվարձս , զպսակն եը տանջանաց , զբրաբիոնն եը վիրաց · և այսպէս զօրացուցանէր և սպառազինէր զամենեսին իբրև ըզքաջ զինուորս քրի ։

Յաւուրն յայնոսիկ ասկղեպիադես եպարքոս՝ դատաւոր քաղաքին անտիոքայ՝ մեծահանդէս փառօք տօն կատարէր դիցն հեթանո.

նոսաց յերևելի մեհենի՝ ի պատիւ Թագա-
ւորին. և յանցանել սքոյն ռոմանոսի ընդուն
տաճարի կռոց՝ ետես զբազմութիւն յարանց և
՝ի կանանց և ՝ի մանկանց խառն ընդ ուրացե-
լոցն խուռն մատուցեալս ՝ի զոհ չար ծոցն. և
անբերելի դատեալ զայն տեսիլ անօրինուե՝
յառաջ մատեաւ (ընդ գրելոյ եւսեբի) նա-
խանձու ածպաշտութենէ, և մեծաբարբառ
գոչմամբ ընդ կարի նրբաձայնութենէ իւրոյ՝ հա-
մարձակ յանդիմանեաց զնա, և զդատաւորն
գլխովին ոչ զառաջնորդ ամպարշտութենէ.
որում և յառաջագոյն ընդդէմ կացեալ էր նըմն
(ընդ պատմելոյ ոսկեբերանի և պռուտենդիու-
սի), չթողացուցեալ նմա կիմ սպասաւորաց
նր մտանել յեկեղեցի այ և աւարել և աւե-
րել: (3)

Այլ յայսմ նուճագ զոհիցդ առաւել խստագոյն
խօսեցաւ ընդդէմ դատաւորին. զի տեսեալ
զնա և նովաւ զգեան ուրախ վճռ անկելոցն ՝ի
հաւատոյ, որք ՝ի զոհի անդ գտան գործա-
կից, ասաց ցնա յելան ՝ի մեհենէ անտի. մի՛
գնայցես ուրախ վճռ այնոցիկ՝ որոց յաղթե-
ցեր. զի գոն այ զինուորք անպարտելիք:
Յայնժամ բարկացեալ դատաւորն եհար լինք-
նին զնըն ՝ի բերանն. և հրաման ետ իւրոցն
ունել զնա և բերել զկնի իւր:

Նա իբրև նստաւ եպարքոսն յատեան դատա-
ւորութենէ, կոչեաց զռոմանոս զառաջեաւ,
և սկսաւ ահ արկանել նմա սպառնալեօք.
զի կարծէր զնա իբրև զմի ՝ի տկարաց. խո-
ժոռ նայեր աչօք, զատամունս կրճտէր, և առ

բար-

բարկութենն յանժուժ իսկ անտի իւրմէ շար-
ժէր. և զձեռան՝ի ձեռս կոյս դահճացն կար-
կառեալ՝ զամ ազգ տանջանաց հրամայէր
կուտել՝ի վէր նր. և նախ՝ հարցին ասէ Թէ
կունք դորա չարաչար գանիւք կապարեայ
գնտիւ։ Ա աստակեցան տանջօղք նորա, և
քաջ նահատակն կայր անմուունչ և հաստա-
տուն իբրև զվէմ,

Ապա հրամանն ետ բռնաւորն քանցել զմար-
մինն նր անողորմ քերանօք. յայնժամ հանին
գնա՝ի կախաղան, և սկսան պէսպէս օրինա-
կաւ քերել և գղզել զերանելին։ Ստրակ-
սատ ոմն անօրէն դահիճ երկաթի գրիչս ա-
ռեալ՝ սկսաւ հերձոտել և խանգարել խո-
պառ զերկոսին ծնօտս երբն մինչև՝ի կզակն,
և արեամբ ներկել զդէմս վկային. այլք՝ի
դահճաց առեալ ձանկս և քերիչս երկաթիս՝
պատեցան որպս գազանք ժանեաւորք վկաղիւք
առաքինւոյն, և վերս եդին անհնարին. մին-
չև վտակաց արեան ոռոգանել զերկիր։ Նմա-
ցաւ երկաթին (ասէ եւսեբիոս), այլ ոչ չըր-
ջեցան միտք առաքինւոյն. որ ուրախութեբ
յաղօթս կայր՝ի ժամ տանջանացն։

Ան ինչ զմտաւ ածէր դատաւորն, Թէ որ
այլ տանջանօք մարթասցի յաղթել նմա,
կամեցեալ զօրականն քՀի յայտ առնել զհաս-
տատուն՝ի իւրքն՝ բարբառեցաւ և ասէ. վի՛
այսուհետև ոչ դադարես ոմ բռնաւոր՝ի մե-
քենայելոյ. ոչ տեսեր, զի տանջանք քո ոչ
խախտեն զհաւատս Քրմարտութեան. և ոչ
լուար, զի խոստովան եղէ և քերանով՝ զոր

հա-

հաւատամն սրտիւ, նոյն ձշմարիտ թիզը ե քո
ածն իմ: Այս եթէ իմոց բանից ոչ լինիս ունկ-
նդիր, աղէ տուր քեզ և մանուկ մի տղայ
ի քրիստոնէից, և հարց ի բերանոյ նը. և
տես զի զնոյն դաւանէ ձշմարտութեան ընդէմ
սուտ ածոց քոց և ինքնակալիդ:

Այս յանդարձել դատաւորին՝ չոքան սպասա-
ւորք ատենի, և կալեալ մանուկ մի փոքրիկ
ի հրապարակէ՝ բարուխա (կիմնազիոդուլոս)
անուն՝ բերին կացուցին ի մէջ ատենին:
Յայնժամ ե հարց զնա Տէն ոսմանոս, և ա-
սէ. ասա ծրդեակ, որ արժան իցէ. միոյն
այ ձշմարտի երկիրպագանել, եթէ կռոց՝
զորս դոքա ածս անուանեն: Պուլթացաւ և
ինքն եպարքոսն զնոյն հարցանել՝ որպս թէ
այլով օրինակաւ, եթէ զոր ածդ պարտ է պաշ-
տել: Յոստովան եղև մանուկն համարձակ,
և ասէ. զերկնից ածն պարտ է պաշտել, որ
արար զերկինս և զերկիր. այն է՝ որում մեք
քրիստոնեայքս երկիրպագանեմք հօր և որդ-
ւոյ և հոգւոյն սրբոյ:

Վարկացաւ բռնաւորն, ետ հարկանել զնա
և ասէ. որ ետ քեզ խրատ՝ ասել զայդ: Այ-
նա ասաց. մայրն իմ յեկեղեցին և ի տան
մերում յամէն ժամ ասէր և ուսուցանէր, մի ե
ածն՝ հայր և որդի և սբ հոգի. և մի սր յ-
քն՝ հարազատ որդի հօրն երկնաւորին: Այ-
ածին զմայր մանկանն. և առաջի նը տան-
ջէին զմանուկն գանիւք և բերանօք հանդէպ
սբոյն ոսմանոսի: Այ յետ քաղցմ տանջա-

սէ մայրն. մի՛ արբցես ջուր սրդեակ, այլ երթիջի՛ր ՚ի կենդանի ջուրն: Եւ նոյնժամայն հատին զգլուխ խոստովանօղ եր. մանկանն. և ընթացաւ մայրն մեծաւ խնդութիւք, առ զգլուխ և զմարմին տղային, և գնացեալ առ քրիստոնեայն՝ աւետիս տայր նմ ուրախութիւք, եթէ եղէ մայր մարտիրոսի: Այլ զգեղեցիկ նկարագրութիւն այսր ամի տեսցես ՚ի կարգի ծանօթութենէ ՚ի պատուհենդիոսէ քերթողէ:

Ոսկ զոր ոմանոս կամեցաւ քննաւորն ՚ի հուր մատնել հրապարակաւ յանդիմանն Թագաւորին, ոպ այն թէ ցուցանել կամեցեալ՝ եթէ ոչքան ե վրէժխնդիր դից նր, և ոչպես կորուսանէ զայնոսիկ՝ որք հակառակ կան արքունի հրամանաց. և թէ առաւելայն վրէժ կամի առնուլ ՚ի ոմանոսէ, զի զքո Թագաւոր ձանաչելով՝ հակառակ ի կայսեր. և ոչ գիտէր՝ թէ պսակ ՚ի պսակս յաւելու սէյն: Ա՝ինչդեռ նք յայս խորհուրդս կային, պարսպ առեալ սէյն ոմանոսի՝ որ շաղախեալ կայր յարիւն իւր ընկեցիկ ՚ի գետնի, խնդրեաց ՚ի դահճաց քարտէզ, և գրեաց առեամբ իւրով ՚ի մխիթարութենէ քրիստոնէից այսպէս. Երանի՛ այնոցիկ՝ որ ՚ի բ. են սրտիւք. երանի՛ որ ունին աչեր անկեղծ. երանի՛ որք զՅԾ պաշտեն անյերկոճանալի. երանի՛ այնոցիկ՝ որ վ՚ա ՚ի հրաժարեն յՅԽս, զի վարձս բազում առցեն. երանի՛ որք ոչ ուրանան զքՅԾ, զի զնս խոստովանի առաջի հօր իւրոյ և հրեշտակաց ՚ի՛ր: Եւ գրեալ զայս՝ ետ ՚ի նէ,

որ մօտն կային առ նմ՝ի հաւատացելոց եղբարց:

Ընդ յորժամ վձիռ եհատ դատաւորն ընդդէմ ռոմանոսի զկրօվ մահ, նա զոճարթ դիմօք և քաջալաւ պատրաստութիւք ախորժ կամաց ողջագուրեալ զդատակնիքն՝ ձեպեր՝ի նահատակութիւն. և քանզի ոչ կարէր անձամբ գնալ՝ բարձեալ տանէին զնա՝ի տեղի կատարման սպասաւորք ատենին: Էլաներ գայր ռոմանոս (ասէ եւսեբիոս) խրախամիտ՝ ախորեամբ պատկեալ, զնշանակս՝ի կողն ունելով՝ որով նահատակեցաւ վա՛ձ ձշմարտութիւն, խաչազգեաց անձամբ՝ ոչ ուսով զխաչն բարձեալ, և՝ի ձակատուն զարքունի զնշանն կերեալ:

Երբև կապեցին դահիձք ըզ սուլորուէ զնբն՝ի ցից մի՝ ժողովէին և այլ պաշտօնեայք ատենին նիւթս և խուրձս՝ի փայտից և յեղեգանց առ արագ արագ և դիւրաւտառ զկուրն բորբոքելոյ. ապա եղաւ կենդանի ղոհն՝ի լինել ողջակէզ: Ի լինել այսոցիկ՝ ոչ հեռի էր և քաղաքն ամ, զի վկայեսցէ ձշմարտութեամ՝ թէ որպէս հանդիսացաւ քաջ նահատակն յայրուձին հրոյ, և որպէս աքանչելիք այ եղեն՝ի վերն նմ: Ո՛չ թերևս զառաջինն ռոմանոս՝ի հրեից անդ եղելոց կամ այլք՝ի հեթանոսաց ասէին, որը կ ամծ նոյ. և դրձել հրեայք յուշ ածեալ զանցս երից մանկանց՝ ասէին արդեօք, թէ առ մեօք փրկուէր լինէին արդարքն՝ի բոցոյ հնոցին բորբոքելոյ. իսկ

Յե ահա այն ինչ հանդերձեալ էին բորբո-
քել զՀուդն, և սպասին հրամանի Թէրին
առաջնկայ եղելոյ, ոՀր ինձ հուր՝ գոչէր
վկայն. և դատաւորն ակնարկեր իբրև ՚ի դէ
մոց արքային՝ արագ արագ զգործն վճարել:
Յայնմ վայրի երկնից ՚որն հրամանն տայ ամէ
պոց պահաձև պատեալ զերկնաւ, և լցեալ
զդոգս ամպոց կարկտով և սաստիկ անձրևով
՚ի վէր եած և զՀողմն՝ առ փութով տեղալ
ուժգնապէս. և ոչ Թողացոյց զՀրոյն բորբո-
քուիլ, գերագ ոյն քան զոր ՚ի բարերն՝ յոյ-
ցեալ սաստիկօր ՚ծածկրաչ զօրուԹիւն. վ՚որ զի
անդ զերիս մանկունսն ապրեցոյց, իսկ սաս
ոչ եՀող և բոցոյն վառիլ:

Յայնմ պահու ամպրոպաց՝ Թէրն դատաւո-
րաւն Հանդերձ կողակոր ելանէին զնային ՚ի
տեսարանէն, և ՚ամ՚ամբոխն ՚ի բաց ցրուէր.
և լիներ աղմուկ շփոԹի ոչ սակաւ. մինչև
յետոյ ուրեմն եկեալ սպասաւորաց՝ ասէին
յայտ յանդիման բռնաւորին, եԹէ ը մատ-
նել ձեր գայրն Հրոյ՝ երկինք բարկացան.
քանզի երկնից Թագաւորն վերակացու է ա-
սեն իբրոյն նաև ՚ի վէր երկրի: Յե դատա-
ւորն խորհուրդ Հարցանէր Թէրին, Թէ զինչ
արասցէ, զի մի ասլրեսցի ոմանս. քանզի
և լուծար իսկ ասէ, զի յերեսս իսկ քո անար-
գեաց զքեզ համարձակ լեզուաւ իբրով՝ ՚ի
խնդրել զՀուր, ոմի յոչինչ գրեալ զառ ՚ի
քէն պատուհասն: Վկագաւորն ասէ. մի տար
ինձ կռիւ յարուցանել ընդեմ ՚ոյ. այլ զոր
՚ոծ ազատեաց, պարտ է և մեզ Թողուլ յա-
զա-

զատուի . եւ այսպէս անանիան մեր ( ասէ եւսեբի ) իբրեւ ՚ի հրոյ արձակեալ լիներ ։ Այսպէս զատաւորն անօրէն եւ անաճ կամելով զմիաս հաձել թագաւորին տարօրինակ մոլորելոյզ ՚ի թէ , եգիտ նոր հնարս հայհոյութեանց ընդդէմ աստի , յաւելել ՚ի հրաշս ՚ի հրաշս հակառակ կամաց իւրոց ։ Հրամայեաց ած ել զվկան առաջի թէրին , եւ զլեզուն՝ որ բարբառեցաւ ընդդէմ մարդոյ , զի ոչ ուրացաւ զԱստ , ՚ի բաց հատանել ։ Այս ոմն զի նախատինս արասցէ քրիստոնէից , կոչեաց անօրէնն զվիրահատ զոմն բժիշկ , որ առ տկարութեամբ անկեալ էր ՚ի հաւատոյ , արիստոնէս անուն , եւ կայր ՚ի հանդես վկայութեան ՚ի մէջ թարուէ կործանման իւրոյ ։ արդ սմա հրամայեր , զի մատուցեալ հատցէ զլեզու առմանոսի ։ զի զո կան ասէ եւ գործիք առ ձեռն պատրաստ ։ Այս նա թէպէտեւ ոչ կամէր , այլ առ ահի բռնաւորին չկրնայեաց ՚ի բաց հրաժարել ։

Ռմանոս՝ երբ զնորահնար տանջանսն՝ ոչ դարձոյց զերեսս , եւ ոչ կինձեաց զձակատն , այլ ինքնին յառաջ մատոյց զլեզուն , եւ յօժարութեամբ երկայնեաց զայն առ հատանող անդր ։ եւ այնպէս արուեր քաջուեր տարեալ հատանն՝ գործոյք եղոյց առնել ցուն , թէ ածային զօրութիւն առնելոյ եր կայ որոց համբերելոյն գիտասարեց ամի վերբեպաշտուեր ։ Ռդ հատանել եհատ բժիշկն զլեզուն՝ երբ , բայց ոչ ՚ի բաց ընկէց զհատեալ լեզուն , այլ անձին իւրում պահեաց զայն

զայն նչխար իբրև գանձ պատուական, պատ-
ճառեալ՝ թէ պիտոյ է ինքեան վճռ դեղոյ.
ոչ և տարեալ պահեաց՝ ի տան իւրում զգու-
շութ՝ ի դեղ մեղաց ուրացութեանն իւրոյ:
Ընդ քեզ և այս մնհատուիմ տանջանք հատ-
ման լեզուի ոչինչ ազդեցին՝ զոր ասդուրեան
՝ի վերբերեւսեբիոս՝ ի ներքոյ ճառն
իւր այսպես. Պատմ իսկ էր ասէ և յերկրորդ
մնհոճանէս ապրիլ վկային քրիս. զի ուր զե-
րիս մանկունս մեզ՝ ի դէմն աճեն հրէայք,
մեք՝ ի միում զերիս յառաջ բերցուք հրաշա-
լիս. ապրեցաւ՝ ի բոցոյն, ոչ մեռաւ՝ ի հատ-
մանէ լեզուին. լուր զերրորդն՝ ի սքանչե-
լեաց՝ ևս մեծագոյն: Երամեան ետ դատա-
ւորն քանտարգել առնել զռոմանոս՝ առ ա-
ռաւել նաճոյ լինել սովաւ յաչս թագաւորին. և
երթայր վկայն՝ ի բանտ զուրկ՝ ի մարմնե-
ղէն լեզուէ, այլ ոչ՝ ի մարդկեղէն բարբա-
ռոյ՝ լաւ և աս քան զառաջինն:
Ընթերցեալ է մեր, թէ հոգին յառաքեն
լեզուս իբրև՝ ի հրոյ բաժանեաց և պար-
գևեաց. զայդ ոչ տեսաք, այլ լուաք և հա-
ւատամք. իսկ զոր ասելոյս եմ, բազում են
ականատես վկայք, որք երեսօք ծանեան
զնոր վկայն: Որքա՞ն ինքեանք պատմեն, թէ
երանելին ռոմանոս մինչդեռ ունէր զայս լե-
զու մարմնեղէն, հանգոյն մովսեսի խօսէր
նրբաձայն և ծանրալեզու. արդ մինչդեռ
ողջ էր լեզուն՝ ի տեղւոջ իւրում, թոթովէր.
իսկ յորժամ անլեզու՝ ի բանտ մտանէր, հար-
ցանէք զնա բանտապետն, թէ զի՞նչ անուն

ինչ նորա։ Այլ յայտ իսկ է, թէ տառդ Ա՝ նաև այնոցիկ՝ որք յաջողակք իցեն ամիւ յուղղախօսուի, կ՝ դժուարախօսելի։ Իսկ այժմ ռոմանոս՝ և հատեալ լեզուաւ, զոր մինչ ուներ՝ ոչ կարէր ուղղախօսել, հոգւով լեզուին խօսի, և կարի գեղեցիկ ուղղախօսէ, և ասէ. Ա՝ռոմանոս կոչիմ։ Օ՝ այսոսիկ եւսեբիոս. պանծալի և՛ս են բանք ոսկեբերանին ընդալմակք վ՛ս այսր ածելոյն հրաշիցս՝ ի վե՛ր լեզուի սքէն ռոմանոսի (4). այլ մեք կարդի պատմութեան միտ դիցուք ընթերցուածոյ։

Ա՝զգ առնեն զայս դատաւորին և թիւրին միանգամայն. դարձեալ յայլ միտս զառածանի դատաւորն՝ չարախօսել զհատանօղ բժշկէն. ոչ աւանիկ ասէ և նա քրիստոնեայ էր յառաջագոյն. գուցէ՝ ի նոյն միտս քրիստոնեուե կայ, և վ՛ս այնորիկ խնայեաց յեղբայր իւր, և ոչ՝ ի գլուխ տարաւ զհրամանս մեր՝ ոչ արժանն էր. ուր նո՛ր չարաչար հատեալ էր զայն՝ անյոյս լինելով՝ ի կենաց սքէն, և այն առաջի աչաց դատաւորին և թիւրին և նմ բազմուե։

Կալան զբժիշկն, և կացուցեալ յատենի՝ հարցանէին. վկա՞րդ խօսի դա, զորոյ զլեզուն հատեր. զի ոչ եթէ միանգամ խօսեցաւ և լռեաց, այլ յորչափ եկաց՝ ի բանտին զաւուրս բազումս, խօսեր առ ամենեսին զբանն կենաց։ Յայնժամ զօրացեալ բժշկին՝ եցոյց հանդարձակութիւն զպատուղ առողջութեանն հաւատոց իւրոց՝ զօրութիւն կենաց դեղոյն, որ՝ ի լեզուէն սքէն. վ՛ս զի տեսեալ զգաստութիւն և

զսպառնալիս դատաւորին , զի ասեր , արդ իսկ սպանանեմ զքեզ՝ զի խնայեցեր ի ռոմանոս , եւ պիտի բժիշկն և ասէ . Ես առա նիկ առ իս պահի լեզուն՝ զոր հատի . արդ ածցի այլ ոք ի ձէջ այր օտար ի ձէմարտէն այ , և ես չափու լեզուին ռոմանոսի լինէն հատեալ՝ հատցի և լեզու նր ի ձեռն որ և է ձարտար բժշկի . և եթէ ապրեսցի , ի՛մ պատրանքն , և ոչ պահպանուի առ կայ ։ Յայնժամ բերին զնմն ի մահապարտից հեթանոսաց . և ձգիւճ զբաժ առեալ զհատեալ լեզուին ռոմանոսի՝ նովին չափով եւտուն հատանել և զլեզու չարագործին . և ահա ընդ հատանիլ լեզուին՝ մեռաւ և այրն . և յամօթ եղեալ դատաւորն՝ ցրուեաց զամբոխին յիւրմէ ։ Այլ առ չարուեն սրտի իւրոյ ընդհակ քաջ նահատակին քրիստ՝ եթող զռոմանոս կալ միալ ի կապանս բանտի չարաչար լկանօք զամիսս բազումս , պնդեալ ի կոձղս երկոցունց ոտից ի հինգ տեղեաց ։ Ա՛ւ եղև յորժամ ի վեր եհաս քանեմեակն դիոկղետիանոսի , քանզի հարկ էր ես օրինի թիւրական ձրից տալ ազատուի համ կապելոց համ ուրեք , ի նմին իսկ գիշերի ետ անօրէնին ասկղեպիադես խեղդամահ առնել զերանելին պարանաւ . զորոյ զպատուհական նշխարս յետոյ առին աղք երկիւղածք , և թաղեցին ի տեղի նշանաւոր ։ Ա՛ւ այնպէս՝ ոմն և ցանկացեալն էր սքէն ռոմանոս , վկայութիւք զարդարեցաւ , ասէ եւսեբիոս ի պատմութեան վկայեցն պաղեստինացւոց . և ի վերայ բերէ

զպատ-

զպատճառս անդանօր գրելոյն. ասէ.

* Այլ սա Թէպետև արտաքոյ իւրոյն սահմանաց (յանտիոք կատարեցաւ), միանգամայն պաղեստինացի գոլով՝ ի պաղեստինացւոցն արժանի եղև վկայիլ՝ ի լիւր համարոյ անցանել։ Այդ այսոքիկ զայսօրինակ գործեցան յառաջնումամի (մեծի հալածանաց), մինչդեռ ընդդէմ նախագահիչ միայն եկեղեցւոյ էր յարուցեալ հալածումն ‖. այն ի ամս ՅՁ, կամ՝ ըստ ոմանց 304։ Իսկ զօր կատարման սքանչելի գրէ լինել՝ ի ժէ դիւոսի ամսոյ, որ է ասէ յառաջ քան զժէ կաղանդացն դեկտեմբերի. որ է ասել՝ ի կէսն կամ՝ ի 16. նոյեմբերի. ըստ որոյ՝ ի մեզ դնի՝ ինոյեմբերի 14. այլք եդին, 18, կամ 16։

Յետ ամաց ինչ շինեցաւ եկեղեցի՝ ի վերայ տապանի սքանչելի. զոր զկնի դարուց նորոգեցաւ վասիլ կայսր արշակունի, ըստ պատմելոյ կեդրենոսի։ (5)

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ։

(1) Նախեւ գրի՝ ի մեզ ոսմանոս՝ համաձայն այլոց աղբեաց, և ոսմանոս՝ առաւել ըստ ազգային սովորութեան. ոմն և սամանաս՝ փիլիպ ասելոյ սամոնաս. և է։ Իսկ այն՝ զի միայնակեաց ասի՝ ի ծնացոյցս, որպես և առ ոսր իջևի՝ ձգնաւորս կամ միայնակեաց, և՝ ի Հ. աբեղայ, ոչ ընդդէմ եւանէ գոլոյ նր սարկաւագ. միայն այն է վրիպական՝ ի բազում ծնացոյցս, զի վե ծնակից գոլոյն ըստ գուրիա-սանց՝ նաև զսա գնեն յուդայ կատարեալ. որ ըստ ոմանց յանտիոք վկայեաց։ Իսկ անուն մանկանն խոստովանողն հասարակօրէն չլիշի. բայց ոմանք՝ ի վկայագրաց

բարուրս կոչեն, որ Թարգմանի որդի ուշասայ, որդի զորւեցե, ածորդի. իսկ ի տոլետեան ժամադիրս ըստ նշանակելոյ բարոնիոսի եդեալ է Թէոդուլոս՝ ի՞ ոչ ծառայ:

(2) Երկուս անհրաժեշտ և վաւերական հեղինակս ունիմք ի ձեռին վո առաջինս հրապարակեալ վկայաբանեալ. ի՞ են Եւսեբիոս կեսարացի Քրիստոսից և գաւառակից աշին ռոմանոսի, որ էր պատերազմացի, և ոսկեբերան՝ որ էր ի՞ քաղաքէ անտի անտիոքայ, ուր աշին կատարեցաւ. Թող և զայլս ի՞ նահատակաց և ի՞ խոստովանողաց նոցին ձայնակիցս, ոչ և զայսմանաւոր խրաքանչիւր ազգաց՝ ի՞ նոյն ազբերաց յառաջագոյնս:

Մեք ի բովանդակ ընթացս պատմութեան քոյնեցաք՝ գրել զի պահմամբ շարագրուեն. իսկ ըստ երկուց գրուածոց ևս նոր. քանզի նախ պատմէ զնաշատակսն աշին ռոմանոսի ի գիրն, որ յառաջս վկայից պատերազմոյ, գէ. այն է ըստ մեջ ը. Ե է. գրոյ պատմ. Եւսեբ զոր ոմանք այս պէս նշանակեն ըստ սուրիոսի. Եւսեբ. պատմ. Եկեղ ը. 12: Իսկ Եկդ զնոյն ձառօրէն նկարագրէ՝ ինքնըստ աշին ռոմանոսի՝ յընթացս ը. Ձառն յարուցեալ և հատարձման քրիստ: Մինչ զի եթէ ինչ մի զանց առնեն ի միոջեն, ի միւսումն ասրիթ է լնուլ. Թէպէ զի զռոմանոսէ և եթէ խոսեալ վերոյգրեալ մանկանէն. զորմէ խոսին ոսկեբերան, պռոսեեդիոս. և այլք:

Կիրկին են և ներբողական ձառք ոսկեբերանի ի գովեստ միևնոյն աշին ռոմանոսի. բայց քանզի այլ և այլ են ոճով, համի իրի առնի քննիչք, Թէ ա՞ ձառն է նր. և ը՞ ձառն Թերևս միայ՝ ի պատճառակցաց նր՝ որք քարոզելին յաշուրս նր յանախք. որ ոչնիչ ինասէ մեզ. զի ի հատատուեցեալ հնուեցե պատմական սուտ գուեցե չատ է մեզ և այն: Ա՞ զաքլին ձառն մեծաս մուսաքս հայի ի նկարագրել զհատուած լեզուի աշին ռոմանոսի, ազգի ազգի գեղեցկի խորհրդածութեք և բարոյական խրատուք. զորս արժան է ընդհետնուել: Իսկ երկրորդն է ի վր բովանդակ պատմուե աշին, սկսեալ ի խաֆանելոյ նր զաղաքսակումն հեթանոսաց կեկեղեցի, նկարագրելով զանց խոստովանող մանկան, յիշելով զբերանս աշին և զբանսարկուն լեզուին. այլ ապաւել ձևոագրին սորոգելով զհատուածն լեզուին. և վերջին ներբողելով զքաջութե աշին ի կալ ըզեմ գաւառսրին՝ որ կամէր ապաւել կռապեւրել զեկեղեցին. ոչ և կրկին ձառելով զհատուածնեք լեզուին. մինչև ապաւել զքարոզն ըհատուե, զի և հատ

ասէ ժամքաքողչէղոյ հայրապետին, ՚ի փլաքիանոսի պա-
տրիարգին անտիոքայ :

Այլ որ զարմանալին է, բարոնիոս ը ժամագրոց յու-
նաց՝ ո՛չ բարւոք դիտելով զկրկին դրութիւն եւսեբի և
ոսկեբերանի, զմի ոմանոս յերկուս արօհել կամեցաւ՝
արտաքոյ աւանդութե ամենեցուն. ուր և Յ. բս. զմի
ոմանոս ճանաչէ : Ըստ լեգի առ այս՝ գրեալն յենրիք
կոսէ վաղեսիոսէ ՚ի ծանօթութիւն եւսեբի՝ ՚ի զանազան
հատուածս, սկսեալ յէէս. 359. զի ասէ. * Յոյնք ՚ի
,, ժամագիրս՝ երկու ոմանոս վկայս որոշեն. մին յասկ-
,, ղեպիտեայ գաւառէրէ գաւառակնքեալ յանտիոք առ
,, գալերիոսիէ, և միւսն սարկաւագ կեսարացի՝ զորմէ
,, ասա եւսեբիոս խօսի. զոր և առ գիոկղետիանոսիէ
,, ասեն նահատակեալ : Այլ քանզի զերկաքանչիւրն
,, խակ ՚ի մի և ՚ի նոյն աւուր կատարեալ խոստովանին,
,, և նոյնպիսի տանջանօք վճարեալս, (քանզի ասեն՝ թէ
զէզրուան հատին սորա և նր, և երիզքին ևս խօսեցան
յետ հատման յեզրէն, և՚ի վախճանի ՚ի բանտի խեղդա-
մահ եղեն), ո՞ ոչ տեսանէ՝ թէ ՚ի զուր որոշեն երկու
,, ոմանոս : Այլ զարմանամ, թէ այս կարծիք հաճոյ
,, լեալ է բարոնիոսի ՚ի ծանօթ. վկ : Ընդէ արդարև եր-
,, կու հատանուն վկայք եղեն ոմանոսք, և երիզքին
,, և ա՛ինմին աւուր մարտիրոսացան յանտիոք, զի՞ է՝ զի
,, եւսեբիոս ասէն զմին և եթ յիշեաց : Ասիցէ ոք թէ-
,, րևս. եւսեբիոս խորհեր յայս դերս խօսել զվկայից
,, պաղեստինու և եթ. վասն զոմանոս սարկաւագ միայն
,, յիշատակեաց, զի էր պաղեստինացի : Բայց սակայն
,, եւսեբիոս նաև այլուր յիշէ զայս վկայ, ՚ի յերկրորդ
,, գերս՝ որ յաղագս յարուցե և համբարձման քրի. ուր
,, զոմանոսի վկայութիւնն ճնխատգոյն և ճառօրէն սաո-
,, րապէ.... և մի ոմանոս ճանաչէ, որ մարտիրոսա-
,, ցաւ յանտիոք ||

(3) Կարօղ էր ոք կարծել, թէ համաձայնութիւն բառիս
տաճար, որ ասի ը տեղւոյն զեկեղեցւոյ այ, և ը տեղ-
ւոյն զմեհենէ կռոց, չիսնդութիւն ինչ լեալ էցէ պատմու-
թեց. բայց վկայութիւնք նախնեաց կրկնակի անցս ցու-
ցանեն : Առաջինն է այն՝ որ գրի ՚ի Հ. թէ դատաւորն
ասիզեպիադես * կամէր մատնել յեկեղեցին այ որ յան-
,, տիոք. և նր ասեցին ոմանոս ը դեմ եկաց, և ոչ
,, տայր թոյլ մատնել. քանզի ասէր, որ զկենդանի ածն
,, պաշտեն, նոյ է արժան մատնել աստ, և ո՛չ քեզ որ
,, զմեռելոսի կուռսն պաշտես || : Ջայսնկարագրեն ճո-
խա-

խագոյն ոսկեբերանն և պռուսաենդիոս: Երկրորդն է
այն, որ գրի՛ ի Յ. քս. Թէ սբէն ռոմանոս * զՀանա
,, պարհայն հանդիպեալ ասկղեպիագիսի եպարքոսի՝
,, որ երթայր ի տաճար կռոց, նախանձայոյզ լեալ՝ հնա
,, րի արգելուլ զնա, ասելով. Թէ ոչ են կուռքն ձեր
,, այլ մի ևս՝ որ քրիստոնէիցն է || : Եւ այս է, զոր
պատմէ եւսեբիոս. և մեզ հարկ եղև զերկոսին իսկ նշա
նակել: Զսոյն կրկին անգս հաստատ կալաւ և մինետ
փոկոն քննիչ ոսկեբերանի, և հռուֆինոսիա քննիչ վկայա
բանուհեց, զհետ երթալով փրոնտոնի տուկէսի, որ այս
պէս խօսի՛ ի լուծումն կարծեաց բարոնիոսի՝ ի ծանօթ.
ներբ. ոսկեբ. ի սբէն ռոմանոս.

* Եւ ոչինչ տեսանեմ ընդիմուրթի, եթէ ասասցուք՝ Թէ
,, երկաքանչիւր անցք ևս անցեալ իցէն.... Վասն զի
,, բազում անգամ դէպ լինի ի պատմել երկուց պատ
,, մագրաց զնոյն բան, միոյն զմասունս ինչ նր յիշատա
,, կել, զորովք զանց առնէ միւսն... որ եւսեբիոս ասէ,
,, Թէ ռոմանոս յետ կապեալ գոլոյն ի ցից՝ ի կուտա
,, կել անդ զփայտս, կոչեցաւ և ածաւ առ կայսրն.
,, իսկ պռուսաենդիոս զպատճառն առաջի դնէ այսպէս
,, (զոր յայլում ճառի գրեալ էր եւսեբիոս), Թէ վասն
,, զի յորդ անձրև գետոցն զեղեալ չնչոյց զհուրն:
,, Նոյնպէս չեն զարմանք, Թէ եւսեբիոս լռուբ անցա
,, նէ զսքանչելեօք մանկանն խօսոյն (եթէ՛ ի պատմ. և
,, եթէ՛ ի ճառն). ոչ և զմիւս հրաշս խօսելոյ ռոմա
,, նոսի անլեզու. (զոր ոչ յիշէ ի պատմ. այլ միայն ի
,, ճառն յար. և համբարձ). զորս ոսկեբերան և պռու
,, գենսիոս պատմեն || : Յայսցանէ բազում ինչ ուն
խմաստասիրել բանասէրք, Թէ որպէս պարտ է միաբա
նել ոչ միայն զնոյն հեղինակ ընկերան, այլև զհեղինակ
ընդ հեղինակի. երանի Թէ զայս ոճ վարէին քննիչք մեր
և յայլ տեղիս. զորոց չէ ժամանակս խօսելոյ:

(4) Կամեաք բազում ինչ քաղել՛ ի ս ճառէն ոսկեբ. այլ
քանզի յերկարել ունիմք զայլ բանս, յուշ արասցուք
զայս մի հատուած. * Ջմրօրինակ հրաշալին է առանց
,, արմատոյ ծառ տեսանել, և առանց աղբեր գետ,
,, սոյնպէս և առանց լեզուի բարբառ: Ա՛րդ որք են՝
,, որ ոչն հաւատան մարմնոյն յարուԹե. ահա ձայնն
,, և՛ մեռաւ և՛ յարեաւ. և ի մի վայրկեան ձգի երկո
,, քին սոքա եղեն || . առաւել է ասէ այս քան զհրաշս
յարուԹե. ևն:

(5) ժամէ՝ ի հաստատուն վկայաբանուԹեա և ի ջեր
մե

մեռանդն վերծանութեն նորին, խուն մի ձաշակ տալոյ
քերթողական՝ 'ի բանից հին և երևելի առն աբեղիո-
սի պռուսեենդիոսի կղեմայ, որ եղև պարծանք քերթո-
ղաց քրիստոնէից՝ ազգաւ սպանիացի 'ի Գ դարու, և
աւագուբ շքեղ 'ի մէջ հռովմայեցւոց. արդ սա 'ի տաս-
ներորդ տալն լուր՝ որ մակագրի յաղափ պոռնոյ, և ե
գիրք ամբողջ 'ի վր վկայաբանութե սբյն ռոմանոսի 'ի
ռձին տողս բովանդակեր, յետ նկարագրելոյ զտանջանս
և զքերանս վկային, և զառեներևոյթն նորա առաջի
ասկղեպիադես դատաւորի՝ դաւանելով զքն ձծ, այս-
պես սկսանի նոճապել 'ի փղն ոճ. 'ի բերանոյ ռոմանոսի
առ դատաւորն:

* Ա՜յլ զի անմարթ՝ բանիբ խորին,
,, Ը քեզ վիճել. տեսցուք զդիւրին.
,, հարցցի կարծիք՝ անարուճեստին՝
,, զգայութե՝ պարզ և մեկին.
,, տուր զոք բերել՝ անկեղծ յանձին,
,, գոլ դատաւոր՝ մերում դատին:
,, Ա՛ծ եօթնամեայ մանուկ զմին,
,, կամ փոքրագոյն՝ ըստ հասակին.
,, իբրև մատեան՝ նպաստեցին,
,, ոչ ատեցող՝ զոք բնաւին.
,, և ոչ լուիք՝ մատց նորին,
,, տեղի կայցէ՝ մեզ խոթալին:
,, Զփորձ առցուք՝ նոր մատաղին,
,, թէ զի՞նչ ասէ՝ հետևեցին.
,, կամ զոր իմաստ՝ ունի յանձին,
,, նորաբողբոջ՝ ընձուղեցին:
,, Զայս նա զձայն՝ ըստ վկային,
,, յօժարամիտ՝ առեալ յանձին,
,, կալչէք ասէ՝ անդ յերամին՝
,, մանկանց, ըզփոքր՝ 'ի մանկտին.
,, չև ուծացեալ՝ 'ի ատեանց կաթին,
,, առէք ածէք յատեան բեմին:
,, Արդ՝ հարց, ասէ, ըզնդրեցին,
,, ընտրել զնորհուրդ՝ գերգ տղային:
,, Ռոմանոսի՝ վառէր ոգին,
,, փորձել զանմեղ՝ կաթնկերին՝
,, հանճար: Ո՛րդեակ, ասէր նմին,
,, ասա զտոյգն՝ ընդ պատշաճին.
,, Մի՛ մեզ քն ե պաշտեցին,
,, և հայր՝ որ էն նոյն քնին,

,, Թէ

՝՝ Թէ մանկեւէլն՝ առ բնաբարձին,
՝՝ որ ազդոց տէրակից ասին։
՝՝ Ֆարպին եբեսք՝ եբեսայեն,
՝՝ տայ անդանդաղ զպատասխանին.
՝՝ Որ ինչ և է՝ կայն անդրին,
՝՝ Աջ ձախակա՝ մարգկան աղին,
՝՝ Մի պարտ է գոլ ամենեւին,
՝՝ միայն է անկ՝ նոյնպէս առ մին.
՝՝ և զի՞ է այն առ մին,
՝՝ ոճ է նա՝ ըստ ասոյգ բանին.
՝՝ Իսկ զձոյց զբազմութիւն՝
՝՝ և ոչ ազդեալ՝ պարտ վարկանին։
՝՝ Յատուկ կրնեալ՝ բանաւորին,
՝՝ յամօթ ծիբր՝ ալեաց ծովին.
՝՝ ոչ բուռն առնել՝ ըստ օրինին՝
՝՝ լիներ անմիջ՝ գիրգ հասակին.
՝՝ և ոչ ինայել՝ զայն խօսոցն՝
՝՝ նեբեր զայրոյթ՝ իւր մտեգին։
՝՝ Ահա. ո՞ է՝ քէզ այդ ձայնին՝
՝՝ ուսուցչապետ՝ նախ առաքին։
՝՝ Պատասխանեալ՝ մանկան, Մ՝այր իմ,
՝՝ և մօրն իմոյ՝ ոճ ինքնին.
՝՝ Նա՝ ի հոգւոյն՝ ըստ ծնողին,
՝՝ ուսեալ էաբ՝ զիմաստ նեբերին.
՝՝ որով և զնա՝ ի ինանձաբերն,
՝՝ նեբակոլեբէր՝ ի ճարակին.
՝՝ Էս՝ ի կրկին՝ ի սաեանց նորին՝
՝՝ ընդ կանձնաբուխն՝ աղբեբանին,
՝՝ ուր գիեցի կանձն, ընդ նմին՝
՝՝ հաւասս արբի՝ ըզքնին։
՝՝ Ինձ եկեսցէ մայրն ասա ինքնին,
՝՝ ասկղեպագէս՝ գոչէր կրկին.
՝՝ այն ամպարիշտ՝ բաբուհուհին՝
՝՝ սեսցէ զսխուբ՝ էլս իւր գասին.
՝՝ Թող ասնչէսցի արդ յօրհասին՝
՝՝ Հարաշրահանգ՝ իւր գաւակին.
՝՝ և ոզբասցէ արասարագին՝
՝՝ զապականեալն յիւրմէ զորգին։
՝՝ ոչ ասց խանձիլ՝ Ջատուկն այն կին՝
՝՝ պաշտօնէից մեր առեղին.
՝՝ քանի՞ ինչ ցաւ՝ զսուղ մարմին՝
՝՝ Լուէ, ումմանէ՝ օգնէ ինքնին.

՝՝ այլ

„ այլ խաւագոյն՝ աչք ծընողին՝
„ 'ի սոյն հանդէս չարչարեացին,
„ քան թէ քանցել՝ զանդամս նորին՝
„ արիւնազանգ ճանկօք քերչին։
„ Ջայս ասացեալ՝ զոյգ ընդ նմին՝
„ վան մանկան պատուհէրք լինին,
„ վերամբառնալ, և հարկանել՝
„ գան՝ յերաստանս անդ սղային.
„ ապա մերկեալ՝ զհանդերձս նորին,
„ գաւազանել՝ զնա ուժգին.
„ մինչ հերձուեալ՝ զթիկունս փափկին,
„ չատ քան զարիւն՝ հոսիլ կաթին։
„ Որ ապառաժ խաստասրտին՝
„ տանէր սիրտ՝ այն տեսարանին.
„ ո՞ խակ ժուժէր՝ ձայնի ձաղկչին,
„ պղնձաղի, կամ երկաթին։
